Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

Сигизмунд КРЖИЖАНОВСКИЙ

ВОСПОМИНАНИЯ О БУДУЩЕМ

С русского перевел на армянский язык
Нерсес Атабекян

Sigismund KRZHIZHANOVSKY

MEMORY OF THE FUTURE

Translated from Russian into Armenian
by Nerses Atabekyan

Vogi-Nairi, Stepanakert

Սիգիզմունդ ԿՐԺԻԺԱՆՈՎՍԿԻ

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱԳԱՅԻ ՄԱՍԻՆ

երեք վիպակ

Ռուսերենից թարգմանեց
Ներսես ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

Ստեփանակերտ 2022

ՀՏԴ 821.161.1-31 Կրժիժանովսկի
ԳՄԴ 84(2=411.2)-44
Կ 842

«Գեղարm» հանդեսի մատենաշար

Սիգիզմունդ ԿՐԺԻԺԱՆՈՎՍԿԻ
Կ 842 **Հիշողություններ ապագայի մասին/Սիգիզմունդ Կրժիժանովսկի**
Թարգմ. ռուսերենից՝ Ներսես ԱԹԱԲԵԿՅԱՆ:
Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հրատ., 2022, 304 էջ:

Լեհական ծագմամբ ռուս գրող Սիգիզմունդ Կրժիժանովսկու (1887-1950) արձակը ընթերցողների լայն շրջանակների սեփականությունն է դարձել միայն վերջին տարիներին՝ սկզբնավորվելով Սվիֆթից ու Պոյից, Հոֆմանից ու Շամիսոյից, Մեյրինքից ու Պերուցից, իսկ ռուս գրականության մեջ՝ Ն.Գոգոլի «Պետերբուրգյան վիպակներից», Վ.Օդոևսկուց և Ֆ.Դոստոևսկու որոշ գործերից: Գրականագետները Ս.Կրժիժանովսկուն բնորոշում են որպես գրողի, ում «ներկայությունը» պատիվ կբերի աշխարհի ցանկացած գրականության:

Հրատարակությունն իրականացվել է Միխայիլ Պրոխորովի հիմնադրամի՝ ռուս գրականության թարգմանությանն աջակցող TRANSCRIPT ծրագրի մասնակցությամբ

ՀՏԴ 821.161.1-31 Կրժիժանովսկի
ISBN 978-9939-1-1481-1 ԳՄԴ 84(2=411.2)-44

© Сигизмунд Кржижановский
© «Ոգի-Նաիրի» (թարգմանության համար), 2022

ՄՅՈՒԽՀԱՈՒՋԵՆԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Գլուխ I
Ամեն բարոն իր երեւակայությունն ունի

Անցորդը կտրեց Ալեքսանդեր-պլացն ու ձեռքը տարավ շքամուտքի նիստավոր փեղկերին: Բայց այդ պահին՝ աստղածեւ փախչող փողոցներից՝ թերթավաճառ տղաների ճչացող բերանները.

- Ապստամբությո՛ւն Կրոնշտադտում:

- Վե՛րջ բոլշեւիկներին:

Անցորդը, գարնանային ցրտից ուսերը կծկելով, ձեռքը խցկեց գրպանը. մատները՝ կարից կար, գրողը տանի՝ ոչ մի փֆեննինգ: Եվ անցորդը թափով բացեց դուռը:

Հիմա նա բարձրանում էր հատակին փռած երկար ուղյակով. ետեւից, աստիճանից աստիճան ցատկելով՝ կեղտոտ ոտնահետքը:

Սանդուղքի շրջադարձին.

- Ի՞նչ զեկուցեմ:

- Բարոնին ասեք՝ պոետ Ունդինգը:

Սպասավորը՝ հայացքն այցելուի մաշված կոշիկներից մինչեւ նրբաթաղիքե շեկ ու փափուկ գագաթը սահեցնելով՝ կրկին հարցրեց.

- Ինչպե՞ս:

- Էռնստ Ունդինգ:

- Մի րոպե:

Քայլերը հեռացան, ապա վերադարձան, ու սպասավորը՝ անկեղծ զարմանքով.

- Բարոնը աշխատասենյակում ձեզ է սպասում: Համեցե՛ք:

- Հա՛, Ունդի՛նգ:

- Մյունխհաուզե՛ն:

Ձեռքերի ափերը հանդիպեցին:

- Ահա այսպես: Մոտեցեք բուխարուն:

Որ կողմից նայես՝ հյուրն ու տանտերը քիչ էին նմանվում իրար. կողք կողքի,- կոշկատակերը՝ բուխարուն,- կիսակոշիկների անթերի, լաքած

նավակներն ու մեզ արդեն ծանոթ կեղտոտ սապոգները՝ հարեւանությամբ,- բազկաթոռների գոթական թիկնակներին հենված,- ծանր կոպերով, երկարուկ, քթի ազնվազարմ, նուրբ կռճիկով՝ մանրակրկիտ սափրած դեմք ու մազերի փնթի փերթերի տակ, քթի կարմիր կոճակով ու թարթիչներով ծանրացած մի զույգ բիբերով լայնոսկր դեմք:

Երկուսը մի րոպեի չափ լուռ նայում էին բուխարու կապույտ ու վառ կարմիր կայծերի պարին:

- Սիգարները սեղանիկին են,- վերջապես ասաց տանտերը: Հյուրը պարզեց ձեռքը, ետեւից սողաց մաշվելուց գույնզգույն շերտատված թեզանիքը, թխկաց սիգարատուփի կափարիչը, հետո չոր տերեւի շրշյուն՝ փոքրիկ գիլյոտինի տակ, հետո՝ բուրավետ թեթեւ ծուխ:

Տանտերը շեղ նայեց թույլ թրթռացող կրակին:

- Մենք՝ գերմանացիներս, նույնիսկ ծխի հետ վարվելու ձեւն ենք գտել: Կուլ ենք տալիս գարեջրի փրփուրի պես՝ չթողնելով, որ շատ փրփրի ու տարածվի ծխափողի մեջ: Կարճլիկ սիգարն ատամների արանքում մարդու երեւակայությունն էլ կարճլիկ է: Թույլ կտա՞ք...

Բարոնը վեր կացավ, մոտեցավ պատի տակ դրված հնամենի պահարանին, փոքրիկ բանալին կտրուկ խրեց անցքը, քանդականախշ ծանր փեղկերը բացվեցին, եւ հյուրը գլուխն ու սիգարի կրակը նրան դարձնելով՝ բարոնի երկար ու նիհար թիկունքից այն կողմ տեսավ. պահարանի փայտե կեռիկներից կախ՝ մի հին, մաշված կամզոլ, ինչպիսիք չեն կրում արդեն հարյուր տարի, երեսած պատյանով մի երկար սուսեր, մարգարտակար ծածկոցով մի կոր ծխամորճ եւ, վերջապես, մի բարակ ծամիկ՝ հատվածքով ներքեւ, ժապավենակապով կեռիկից կախ:

Բարոնը վերցրեց ծխամորճը եւ ուշադիր զննելով՝ վերադարձավ իր տեղը: Մի րոպեից ադամախնձորը դուրս թռավ օձիքի տակից, իսկ այտերը ներս քաշվեցին՝ ծխափողից քթանցքները ձգվող ծխին ընդառաջ:

- Ավելի քիչ ենք հասկանում մառախուղներից,- ծուխը ներս քաշելու արանքում շարունակեց բարոնը,- սկսած, թեկուզ, մետաֆիզիկական մառախուղներից: Ի դեպ, Ունդի՛նգ, լավ է, որ այսօր եկաք. վաղը պատրաստվում եմ այցելել Լոնդոնի մառախուղներին: Միաժամանակ եւ՝ նրանց մեջ ապրողներին: Այո՛, Թեմզայից բարձրացող ճերմակ շղարշը գիտի ուրվագերծել ուրվագծերը, սքողել բնապատկերներն ու աշխարհայեցումները, ստվերանշել փաստերը եւ... մի խոսքով, մեկնում եմ Լոնդոն:

Ունդինգը վեր քաշեց ուսերը:

- Անարդար եք Բեռլինի հանդեպ, բարո՛ն: Մենք էլ ենք վարժվել որոշ

բաների. օրինակ՝ փոխնյութերին ու պատրանքային բնազանցությանը:

Բայց Մյունհաուզենն ընդհատեց.

- Չվերսկսենք հին վեճը: Ի դեպ, ավելի հին, քան կարծում եք. հիշում եմ՝ հարյուր տարի առաջ Թիկի հետ մի ամբողջ գիշեր վիճեցինք այս թեմայով, ճիշտ է, այլ եզրույթներով, բայց մի՞թե էությունը դրանից փոխվում է: Նա նստած էր, ինչպես դուք հիմա, ինձնից աջ, ու ծխամորճը թխկթխկացնելով՝ սպառնում էր երազներով խփել ու ցրել իրականությունը: Բայց ես նրան հիշեցրի, որ խանութպաններն էլ են երազներ տեսնում, իսկ պարանը լուսնալույսի տակ թեկուզ եւ նման է օձի, բայց կծել չգիտի: Ֆիխտեի հետ, օրինակ, ավելի քիչ էինք վիճում: «Դոկտո՛ր,- ասացի փիլիսոփային,- այն օրվանից, որ «ոչ ես»-ը դուրս ցատկեց «ես»-ից, պիտի ավելի հաճախ փնտրի իր «որտեղից»-ը: Հերր Յոհանն ի պատասխան քաղաքավարի ժպտաց:

- Ինձ թույլ տվեք այդքան քաղաքավարի չժպտալ, բարո՛ն: Դա քննադատությանն ավելի չի դիմակայում, քան խատուտիկը՝ քամուն: Իմ «ես»-ը չի սպասում, թե «ոչ ես»-ը երբ կնայի իրեն, այլ ինքն է երես դարձնում ամեն կարգի «ոչ»-երից: Ինչ արած, այդպես է դաստիարակվել: Իմ հիշողությանը հարյուրամյակներ տրված չեն,- խոնարհվեց նա զրուցակցի կողմը,- բայց մեր առաջին հանդիպումը, հինգ շաբաթ առաջ, հիշում ու տեսնում եմ այսօրվա պես: Սեղանիկի երեսը՝ մարմարի ոճավորումով, երկու գավաթների ու երկու զույգ աչքերի պատահական հարեւանությունը: Ես՝ կում առ կում, իսկ դուք շուրթերով չէիք դիպչում ապակուն ու միայն երբեմն,- ձեր գլխի շարժումով,- քելները չխմածի փոխարեն նորն էր բերում, որը նույնպես չխմած էր մնում: Երբ գինովությունը փոքր-ինչ մշուշեց գլուխս, հարցրի՝ ձեր ինչի՞ն են պետք գավաթն ու գարեջուրը, եթե չեք խմում: «Ինձ հետաքրքրում են պայթող պղպջակները,- պատասխանեցիք դուք,- ու երբ բոլորը պայթում են, ստիպված փրփուրի նոր բաժին եմ պատվիրում»: Դե ինչ, ամեն մարդ յուրովի է զվարճանում, ինձ ահա այս խյուսի շինծու լինելը, կեղծությունն է դուր գալիս: Ուսերը թոթվելով՝ դուք այնպես նայեցիք ինձ,- հիշեցնում եմ, Մյունխհա՛ուզեն,- ասես ես էլ պղպջակ լինեի՝ կպած ձեր գավաթի պռնկին...

- Դուք հիշաչար եք:

- Պարզապես լավ հիշողություն ունեմ. մինչ օրս դեռ իմ ուղեղում պտտվում է այնտեղ, երկու իրար մոտեցրած գավաթների շուրջը թափ առած խայտաբղետ կարուսելը: Մենք կտրում էինք ծովերն ու մայրցամաքները երկրի պտույտին գերազանցող արագությամբ: Եվ երբ ես, երկ-

րից երկիր, անցյալից ապագա ու կրկին անցյալ մղովող գնդակի նման, պատահմամբ դուրս ընկա խաղից, հարցրի. «Ո՞վ եք դուք, եւ ինչպե՞ս կարող էր ձեր կյանքը բավականացնել այդքան դեգերումներին», դուք,- հարգալիր խոնարհումով,- տվեցիք ձեր անունը: Կեղծ գարեջրի հարբածությունն էլ կեղծ է ու մոլորեցնող, իրականությունները պայթում են պղպջակների պես, իսկ ֆանտազմները խցկվում են նրանց տեղը: Հեգնանքով գլո՞ւխ եք օրորում: Բայց գիտե՞ք, Մյունհա՛ուզեն, մեր մեջ ասած, որպես պոետ պատրաստ եմ հավատալ, որ դուք դուք եք, բայց որպես ողջամիտ մարդ...

Խոսակցության մեջ խուժեց հեռախոսի զանգը: Մյունհաուզենը երկարամատ, մատնեմատին լուսնաքար կրող ձեռքը պարզեց հեռախոսին.

- Այո՛: Ո՞վ է խոսում: Հա՛, դո՞ւք եք, պարոն դեսպա՛ն: Այո՛, այո՛: Կլինեմ. մի ժամից:

Ու խոսափողն իջավ երկաթե երկժանու վրա:

- Գիտե՞ք ինչ, սիրելի Ունդի՛նգ, խիստ շոյված եմ, որ պոետն ընդունում է իմ գոյությունը: Բայց եթե նույնիսկ դադարեք էլ հավատալ ինձ՝ Հիերոնիմ ֆոն Մյունխհաուզենին, ապա դիվանագետները երբեք չեն դադարի: Դուք զարմացած վեր եք քաշում հոնքերը. ինչո՞ւ: Որովհետեւ ես պետք եմ նրանց: Ընդամենը: Դե-յուրե կյանքը, նրանց տեսանկյունից, ոչնչով վատ չէ դե-ֆակտո կյանքից: Ինչպես տեսնում եք, դիվանագիտական պայմանագրերում ավելի շատ պոեզիա կա, քան ձեր բոլոր ոտանավորներում:

- Կատակում եք:

- Բոլորովին. կյանքը, ինչպես որ ցանկացած ապրանք, իր պահանջարկն ու առաջարկն ունի: Մի՞թե թերթերն ու պատերազմը դա ձեզ չեն սովորեցրել: Եվ քաղաքական բորսայի վիճակն այնպիսին է, որ ես կարող եմ ոչ միայն կյանք, այլեւ փթթուն առողջություն հուսալ: Մի շտապեք, բարեկա՛մս, ինձ ուրվականների մեջ գրանցել ու դնել գրադարանի դարակին: Այո՛, այո՛:

- Դե ինչ,- քմծիծաղեց պոետն ու ուշադիր նայեց զրուցակցի երկարուկ, արմունկները բազկաթոռի արմնկակալներին հենած կերպարանքին,- եթե մյունխհաուզենապատման բաժնետոմսերն աճում են, ես, թերեւս, պատրաստ եմ խաղալ բարձրացման վրա, ներառյալ՝ կեցության աստիճանը: Բայց ինձ հետաքրքրում է՝ կոնկրետ ինչպե՞ս: Իհարկե, ես ընդունում եմ լինելության ու չլինելության, «ես» իրականության ու «ոչ ես» իրականության որոշակի փոխներթափանցումը, բայց եւ այնպես, ինչ-

պե՞ս կարող էր պատահել, որ ահա նստել ու զրուցում ենք առանց լսողական ու տեսողական զգայախաբության: Դա ինձ համար կարեւոր է իմանալ: Եթե «բարեկամ» բառի մեջ, որ ինձ շնորհեցիք, թեկուզ դույզն-ինչ իմաստ կա, ապա...

Մյունխհաուզենը կարծես տատանվում էր.

- Խոստովանությո՞ւն: Դա ավելի շուտ երանելի Ավգուստինի ոճով է, քան բարոն Մյունխհաուզենի: Բայց եթե պահանջում եք... միայն թե թույլ տվեք գոնե երբեմն, ես այլ կերպ չեմ կարող, ճշմարտության տիղմից՝ դեպի ազատ ֆանտազմ: Եվ այսպես, սկսում եմ: Պատկերացրեք դարերի մի այսպիսի հսկա թվատախտակ. նրա սեւ սլաքի սուր ծայրը,- բաժանումից՝ բաժանում,- տարեթվերի հերթագայության վրայով. սլաքի ծայրին նստած՝ կարելի է տեսնել ներքեւում անցնող՝ 1789 - 1830 - 1848 - 1871 եւ էլի՛, էլի՛. աչքերս հիմա էլ դեռ շաղվում են տարիների վազքից: Հիմա պատկերացրեք, սիրելի բարեկա՛մ, ձեր խոնարհ ծառան տարիների (եւ նրանց մեջ եղած ամեն ինչի) հերթափոխության գլխին կախված ահա այդ սլաքը ծնկներով գրկած՝ պտտվում է ժամանակի թվատախտակով: Ի դեպ, այս պահարանի կախիչները, որ մոռացել եմ փակել, ձեզ կօգնեն պարզորոշ ու մանրակրկիտ տեսնել այն ժամանակվա ինձ՝ ծամիկը, կամզոլը, սուսերը,- թվատախտակի վրա կախված՝ ճոճվում եմ հարվածներից: Իսկ թվերին իջնող հարվածներն ավելի ու ավելի են ուժեղանում. 1789-ի վրա ավելի ամուր եմ սեղմում ծնկներս, 1871-ի վրա ստիպված եմ եւ՛ ձեռքերով, եւ՛ ոտքերով կառչել սլաքի ծայրից, բայց 1914 թվականից թվերի ցնցումն անտանելի է դառնում, խփվելով 1917-ին ու 1918-ին՝ կորցնում եմ հավասարակշռությունս ու, գիտե՞ք, կրունկներս շողացնելով՝ ներքեւ:

Սկզբում ընդառաջ են գալիս աղոտ, հետո օդի մեջ հստակվող՝ ծովերի ու մայրցամաքների բծերը: Պարզում եմ ձեռքս՝ հենարան փնտրելով. միայն օդ եւ ոչինչ՝ օդից բացի: Հանկարծ՝ հարված ափերիս, սեղմում եմ մատներս,- ձեռքերիս մեջ գագաթնածող է, պատկերացրեք, սովորական, ինչպես ասեղը՝ մատնոցի վրա, գմբեթի գագաթնածող: Գլխավերեւս, երկու երեք ֆուտ բարձրության վրա՝ հողմացույց: Մկաններս պրկած՝ ձգվում եմ: Թեթեւ քամին շուռումուռ է տալիս հողմացույցը, ու ես կարող եմ հանգիստ դիտել՝ ինչ կա ոտքերիս տակ, ներքեւում, երկու-երեք տասնյակ մետրի վրա փռված գետինը՝ ճառագայթաձեւ գծագրված ուղյակներ, մարմարե սանդղահարթակներ, ծառերի խուզած տողաններ, շատրվանաշիթերի հիպերբոլներ. այդ ամենը կարծես ծանոթ է, առաջին անգամ

չեմ տեսնում: Գագաթնածողով սահում եմ ցած ու ծխնելույզին նստելով՝ ուշադիր զննում տարածքը. դե իհա՛րկե, Վերսալն է: Վերսալն է, ու ես՝ Տրիանոնի գլխին: Բայց ինչպե՞ս իջնեմ: Մեջքովս սահող ծխի պիրկ քուլաները պարզ ու դյուրին միջոց են հուշում: Հիշեցնեմ. եթե ես հիմա, այսպես ասած, աճել ու որոշ կշիռ եմ ստացել, ապա այդ առաջնախաղի օրը դեռ մի քիչ էի ծանր ծխից. եւ ահա սուզվում եմ ծխի հոսքի մեջ, ինչպես սուզակը՝ ջրում, ու սահուն իջնելով՝ արդեն հատակին, մետաֆորները նետելով բուխարու մեջ, ահա այսպիսի բուխարու (պատմողի լաքած կիսակոշիկի քիթը խփվում է թուջե ճաղավանդակին, որից այն կողմ ածուխներն արդեն հասցրել են մարել): Նայեցի՝ մարդ չկա: Դուրս եկա: Բուխարին,- գրքերով ու թղթապանակներով ծանրացած երկար, անընդմեջ գրադարակներից դատելով,- պալատի գրադարանում էր: Ականջ դրեցի. պատից այն կողմ՝ տեղաշարժվող բազկաթոռների աղմուկ, հետո լռություն՝ ընդգծված միայն ճոճանակի կոտորակված տկտկոցով, հետո՝ պատով խլացած՝ ինչ-որ մեկի ձայնը, որ համաչափ քստքստում էր, ինչպես կոշիկները՝ հատակին: Ինձ՝ սլաքից թվատախտակի վրա ընկածին, իհարկե, հայտնի չէր, որ այդ պահին Վերսալի կոնֆերանսի նիստերից մեկն է: Գրադարանի սեղանին՝ քարտարան, թերթերի թարմ համարներ ու արձանագրություններով թղթապանակներ: Անհապաղ թաղվեցի ընթերցանության մեջ եւ արագ հասկացա քաղաքական պահը, բայց հանկարծ պատից այն կողմ տեղաշարժվող աթոռների աղմուկ լսվեց, աղոտ ձայներ եւ ինչ-որ մեկի քայլքը դեպի գրադարանի շեմը: Եվ այստեղ ես... ո՛չ, ըստ երեւույթին պետք է մի անգամ էլ այցելել հին պահարանին:

Եվ Էռնստ Ունդինգը, ողջ մարմնով այդ պատմությանն ընդառաջ ձգվելով՝ անհամբեր աչքերով սկսեց հետեւել, թե բարոնն ինչպես է, պատմությունն ընդհատելով, անշտապ մոտենում պահարանի խորքից դուրս ցցված կախիչներին ու ձեռքը տանում հնամենի կամզոլի փքված գրպանը:

- Ահա՛,- Մյունխհաուզենը վերջապես շրջվեց հյուրի կողմը: Պարզած ափի մեջ կարմրին էր տալիս մի ոչ մեծ սեկե, կաշվե անկյունակապերով, ոսկեզր ին-օկտավո:- Ահա մի բան, որից հազվադեպ եմ բաժանվում: Խնդրեմ. լոնդոնյան առաջին հրատարակությունը, դեռեւս հազար յոթ հարյուր ութսուներեք թվականի:

Նա շրջեց հնաբույր, մաշված կազմը: Ունդինգի աչքերը տիտղոսաթերթին թռչելով՝ սահեցին տառերի վրայով. «Բարոն Հիերոնիմուս ֆոն Մյունխհաուզենի պատմությունները Ռուսաստանում զարմանահրաշ ար-

կածների ու պատերազմների մասին»: Կազմը փակվեց, ու գիրքը տեղավորվեց պատմողի կողքին՝ բազկաթոռի լայնաթաթ արմնկակալի վրա:

- Վախենալով, որ ինձ լրտեսի տեղ կդնեն, որը հայտնի չէ որտեղից գաղտագողի մոտեցել է դիվանագիտական գաղտնիքներին,- կրկին կոշկատակերով բուխարու ճաղավանդակը գտնելով՝ շարունակեց Մյունխհաուզենը,- շտապեցի թաքնվել. բացելով գիրքս,- այ այսպես,- որքան կարող էի կծկվեցի, ծնկներս հենեցի կզակիս, գլուխս թաղեցի ուսերիս մեջ ու թռա էջերի արանքը՝ անմիջապես փակելով կազմը, ինչպես դուք եք ձեր ետեւից փակում հեռախոսախցիկի դուռը: Այդ պահին քայլերը հատեցին շեմն ու մոտեցան սեղանին, որի վրա ես էի տափակել վաթսունութերորդ ու վաթսունիններորդ էջերի արանքում:

- Պետք է ընդհատեմ ձեզ,- բազկաթոռից վեր թռավ Ունդինգը:- Ինչպե՞ս կարող էիք փոքրանալ այս գրքույկի չափսին: Սա առաջինը, իսկ...

- Իսկ երկրորդը,- ձեռքը սեկե կազմին խփեց բարոնը,- տանել չեմ կարող, երբ ինձ ընդհատում են... Եվ երրորդ, դուք վատ պոետ եք, ծխամորճովս եմ երդվում, եթե չգիտեք, որ գրքերը, եթե միայն դրանք գրքեր են, երբեմն համաչափելի են, բայց երբեք համաչափ չեն իրականությանը:

- Ընդունենք,- քրթմնջաց Ունդինգը: Ու պատմությունը շարունակվեց:

- Դիպվածին հաճո էր, որպեսզի մարդը, որը քիչ էր մնացել հանկարծակիի բերի ինձ (ի դեպ, դա դիվանագիտական խաղաթղթերի մաշված կապուկի հաղթաթղթերից էր) նոր իրարանցման մեջ գցեց եւ՛ ինձ, եւ՛ իրեն. դիվանագիտական տուզի մատները, որ ինչ-որ տեղեկանք փնտրելով՝ մի գրքի կազմից մյուսն էին անցնում, ակամա դիպան իմ ապաստարանի սեկե դռանը, էջերը բացվեցին, ու ես, խոստովանեմ՝ բավական շփոթված, մեկ եռաչափվելով, մեկ նորից եռափակվելով, չգիտեի ինչ անեմ: Տուզը բերանից գցեց սիգարը, ձեռքերը հետ քաշեց եւ չռված աչքերն ինձնից չկտրելով՝ թաղվեց բազկաթոռի մեջ: Ճար չկար. դուրս եկա գրքից, խցկեցի թեւատակս, ու մոտ քաշելով դիվանագետի դիմացի բազկաթոռը՝ ծունկ ծնկի նստեցի նրա հետ: «Պատմաբանները կգրեն,- հավանությամբ գլխով անելով՝ ասացի ես,- որ դուք եք հայտնագործել ինձ»: Բառեր փնտրելով՝ նա վերջապես հարցրեց. «Ո՞ւմ հետ պատիվ ունեմ»: Ես ձեռքս տարա գրպանս ու լուռումունջ նրան պարզեցի այ սա:

Բազկաթոռի թիկնակին հետ ընկած Ունդինգի աչքի առաջ քառանկյունացավ այցեքարտը՝ գոթական տառատեսակով, ամուր խավաթղթի վրա.

Սիգիզմունդ ԿՐԺԻԺԱՆՈՎՍԿԻ

Բարոն
ՀԻԵՐՈՆԻՄՈՒՍ ֆոն ՄՅՈՒՆԽՀԱՈՒԶԵՆ
Ֆանտազմների եւ սենսացիաների մատակարարում:
Չեմ քաշվում համաշխարհային ծավալներից:
Ֆիրման գոյություն ունի 1720 թվականից:

Հինգ տող, որոշ ժամանակ կախված մնալով օդում, գլուխկոնձի տվեցին բարոնի երկար մատների արանքում ու չքացան: Պատի ժամացույցի ճոճանակը չէր հասցրել տասն անգամ էլ ճոճվել, երբ պատմությունը վերսկսվեց:

- Սրանից երկար չտեւած դադարի ընթացքում հասցրեցի նկատել, որ դիվանագիտական անձի դեմքի արտահայտությունը փոխվում է իմ օգտին: Քանի դեռ նրա մտքերը մեծից փոքրն էին հղվում, ես պատրաստակամորեն առաջադրեցի եզրակացությունը. «Ինձնից օգտակար մարդ չեք գտնի: Հավատացեք բարոն ֆոն Մյունհխաուզենի ազնիվ խոսքին: Չնայած...»,- ու ես բացեցի իմ ին-օկտավոն՝ պատրաստվելով, այսպես ասած, աշխարհից աշխարհ փոխվել, բայց դիվանագետն արագ բռնեց արմունկս. «Աստծու սիրուն, խնդրում եմ»: Դե ինչ, մտածեցի ես ու որոշեցի մնալ: Եվ իմ հին տեղը, ուր տնավորվել էի, այ այստեղ՝ վաթսունութ ու վաթսունինը էջերի արանքում, կհաճե՞ք նայել,- պարպվեց. կարծում եմ՝ տեւական ժամանակով, գուցե եւ ընդմիշտ:

Ունդինգը նայեց. հետ ծալված էջի վրա, բացազատված պարբերությունների արանքում տպագրական բարակ գծերով կազմած երկարուկ շրջանակ էր, բայց շրջանակում՝ միայն գրքի էջի սպիտակ մակերեսը. պատկերազարդումն անհետացել էր:

- Ահա, ուրեմն: Իմ կարիերան, ինչպես, երեւի, ձեզ հայտնի է, սկսվեց քարտուղարի համեստ պաշտոնից՝ դեսպանություններից մեկում: Իսկ հետո... ասենք, որպեի սլաքը բաժանում է մեզ, թանկագին Ունդի՛նգ: Ժամանակն է:

Բարոնը սեղմեց կոճակը: Դռան շրջանակը խցկվեցին սպասավորի այտմորուսները:

- Զգե՛ստս:

Այտմորուսները՝ դռնից ներս: Ցանտերը վեր կացավ: Հյուրը՝ նույնպես:

- Այո՛,- ծոր տվեց Մյունհաուզենը,- նրանք հանեցին իմ կամզոլն ու կտրեցին հյուսքս: Թող որ այդպես: Բայց հիշեք, բարեկա՛մս, կգա օրը, երբ

ահա այս հնոտին (երկար մատը, լուսնալույսի տակ շողալով, մարգարեաբար ուղղվեց բաց պահարանին), ահա այս փտությունը, կախիչներից իջեցնելով, դիպակե բարձիկների վրա, հանդիսավոր թափորով, որպես սուրբ մասունքներ կտեղափոխեն Վեսթմինսթրյան աբբայություն:

Բայց Էռնստ Ունդինգը փախցրեց հայացքը.

- Դուք շրջասեցիք ինքներդ ձեզ: Արժանին եմ մատուցում որպես պոետ:

Լուսնաքարն իջավ: Հյուրի համար անսպասելի՝ տանտիրոջ դեմքը փոխվեց՝ բազմաթիվ ծիծաղկոտ ծալքեր տալով ու միանգամից մի տեսակ հարյուրամյակներով ծերանալով, աչքերը կկոցվեցին՝ վերածվելով նեղ խորամանկ ճեղքերի, իսկ բարակ շրթունքները բացվելով մերկացրին երկար դեղին ատամները.

- Այո՛, այո՛: Դեռ այն ժամանակներում, երբ Ռուսաստանում էի կենում, նրանք իմ մասին ասացվածք էին հորինել. «Ամեն բարոն իր երեւակայությունն ունի»: «Ամենը» հետո է ավելացվել. անունները, ինչպես որ մնացած ամեն ինչ, ժամանակի ընթացքում կորչում են: Ամեն դեպքում, մխիթարում եմ ինձ հույսով, որ այլ բարոններից լայնորեն ու լավ եմ օգտագործել երեւակայության իմ իրավունքը: Ծնորհակալ եմ ձեզ, եւ նույնպես, ինչպես պոետը պոետին,- չոր ու կառչուն ափը սեղմեց Ունդինգի մատները:- Եվ ինչպես կուզեք, բարեկա՛մ. կարող եք հավատալ կամ չհավատալ Մյունխհաուզենին ու... Մյունխհաուզենին, բայց եթե կասկածեք իմ ձեռքսեղմումին, շատ կնեղացնեք ծերուկիս: Մնաք բարով: Ու նաեւ, մի փոքրիկ խորհուրդ. աչքերով մի շաղափեք բոլորին ու ամեն ինչ. չէ՞ որ տակառը ծակելու դեպքում գինին կթափվի, եւ օղակապերի տակ կմնա միայն տխմար ու արձագանքող դատարկությունը:

Ունդինգը ժպտաց դռան շեմից ու դուրս եկավ: Բարոնի հագուստը բերեցին: Քաղաքավար քարտուղարը աննկատ մտնելով սենյակ՝ խոնարհումով պատրոնին տվեց ծանր պայուսակը: Ֆրակի դարձածալը ձգելով՝ Մյունխհաուզենը ձախ ձեռքի բութ մատն ու ցուցամատը տարավ պայուսակից դուրս ցցված թղթապանակների եզրով: Իրար ետեւից անցնում էին Ազգերի լիգայի արձանագրությունները, Բրեստի հաշտության բնագիր փաստաթղթերը, Ամստերդամի կոնֆերանսի նիստերի սղագրությունները, Վաշինգտոնի, Վերսալի, Սեւրի եւ այլ ու այլ պայմանագրերն ու արձանագրությունները:

Քամահրանքով կկոցվելով՝ բարոն Մյունխհաուզենը ներքեւի երկու անկյուններից բռնած բարձրացրեց պորտֆելն ու պարունակությունը

թափեց հատակին: Եվ մինչ քարտուղարն ու ծառան հավաքում էին թղթի տրցակները, բարոնը մոտեցավ բազկաթոռի արմնկակալի վրա համբերատար սպասող սեկե հատորիկին, որը սահեց ազատված պորտֆելի մեջ, ու կողպեքը զնգուն շխկոցով փակվեց նրա ետեւից:

Գլուխ II
Ծուխը աղմուկ է անում

Ունդինգի ոտքերի տակով նախ վազեցին սանդուղքի աստիճանները, հետո խոնավ թափանցելով մաշված կոշկատակերով՝ մայթի ասֆալտը: Թիկունքում գվվաց բարոնի ավտոն ու ցեխ շպրտելով անցորդների վրա՝ զույգ դեղին աչքերով սուրաց գարնանային մշուշոտ աղջամուղջի միջով:

Ունդինգը, վերարկուի օձիքը բարձրացնելով, անցավ գվվացող կամարի տակով, օդում կախված չորս զուգահեռ ռելսերի տակով ու քայլեց նախկին Թագավորի փողոցի լայն ուղղագծով: Աջից ուրվագծվում էին պալատի խորանարդները, աղեղներրն ու ծածկերը: Անիվների տակ ասֆալտի տրորված ապակենման լորձունքի վրայով մանուշակագույն ուլունքաշարով ձգվում էին փողոցային լապտերների արտացոլումները: Ելուստավոր պալատը պատած մթնշաղի սեւաքողի մեջ կախվել էին անձրեւից թրջված հեղափոխության դրոշները: Հետո, աջ ու ձախից, հայացքի կողքով՝ Ունտեր-դեն-Լինդենի թուջե նստարանները, եւ ընդառաջ՝ բրոնզե սմբակներով օդը տրորող Բրանդենբուրգյան դարպասների սեւ քառաձի մարտակառքը:

Երկար էր գնալու: Ձգվող Տիրհարտենով, հետո՝ Բիսմարկշտրասսեով, տասնյակ խաչմերուկներով՝ դեպի Շառլոտենբուրգի արվարձանային գիծը: Խոնավ ու ծխացող օդը օդի էժանագին ու անարվեստ նմանակում էր թվում. ասես փողոցային լապտերների չռված ապակիներն ուր որ է փրփուրի թեթեւ պղպջակների պես բարձրանալու էին վեր, իսկ խավարը անձայն փլուզումով ընկնելու էր տանիքներին ու մայթերին: Քայլերին զուգահեռ առկայծող Տիրհարտենի մերկացած ծառերը անցորդին հիշեցնում էին արկերից քրքրված անտառակները, հետո զուգորդումներն աչքերին մոտեցրին եւ էլի՝ գանգատուփի ներսը մղեցին ֆանտաստիկ խրամատային փողոցների խաչաձեւումը: Անցորդը կանգ առավ եւ, ականջ դնելով, մտածեց, որ քաղաքի արձագանքը,- այնտեղ՝ Տիրհարտենից այն կողմ,- նման է հրետանային մարտի նահանջող դղրդոցին: Աջ

ձեռքի բութ մատի ու ցուցամատի տակ, որ դեռ հիշում էին Մյունհաուզենի մատների վերջին հպումը, հանկարծ հստակ, համարյա մաշկը այրելով զգացվեց հրացանի փակաղակի՝ կրակոցներից շիկացած պողպատը:

- Ֆանտասմագորիա,- աստղերին, լապտերներին, ծառերին ու ծառուղիների փռվածքին նայելով՝ քրթմնջաց Ունդինգը:

Ինչ-որ մեկի մրսող ստվերը, ասես անվանական կանչել էին, անհամարձակ մոտեցավ պոետին: Գլխարկի թրջված կմախքի տակ՝ սովից ու դիմաներկից ընդգծված այտոսկրեր. պոռնիկ: Ունդինգը փախցրեց հայացքն ու քայլեց առաջ: Սկզբում փորձեց նրա անվան փաղաքշականով ֆանտասմագորիա հորինել: Բայց ոչ «հեյնը», ոչ «լեյնը» չէին կպչում: Եվ այդ ժամանակ, ականջ դնելով իր ոտնաձայների ռիթմին, սովոր հոգեբանական ջանքով սկսեց ասոնանսներ ու ռիթմեր պտտել, արտաքին աշխարհը փոքրացավ նրա գլխարկի եզրերից, եւ բառերի համր ստեղնաշարը շարժեց իր ստեղները:

Ուսով ինչ-որ մեկի ուսին խփվելուց բանաստեղծության տունը փլվեց: Պոետը բարձրացրեց աչքերն ու շուրջը նայեց: Պարզվեց՝ իր շքամուտքն անցել է: Հանկարծ ծնկների մեջ,- կշռաքարերի պես,- ծանրություն զգաց՝ հոգնածություն: Ունդինգը մտքում դառնացած հաշվեց՝ երկու անգամ երկու հարյուր, արդյունքում՝ չորս հարյուր քայլի մաքուր վնաս. ահա եւ ամբողջ հոնորարը:

Էռնստ Ունդինգը ամեն երեկո չէր թերթ կարդում: Ճիշտ է, Մյունխհաուզենի հետ հրաժեշտի զրույցից հետո երեք տողանոց մի գրառում հանդիպեց դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչ բարոն ֆոն Մ.-ի մասին, որն ինչ-ինչ գործերով,- որ ենթակա չէին հրապարակման,- ճեպընթացով մեկնել էր Լոնդոն: Եվս մի շաբաթից թերթը շտապ հաղորդագրության խոշոր տառատեսակով հայտնեց, որ ֆոն Մ.-ն բարեհաջող ներկայացել է Լոնդոնի ազդեցիկ շրջանակներին: Անվան մնացած տառերն ասես անհետացել էին Լոնդոնի մառախուղներում: Ունդինգը ժպտալով մի կողմ դրեց թերթը: Հաջորդող տեղեկությունները նրա կողքով անցան. Ունդինգը մրսել էր եւ անկողին ընկավ՝ հինգ, թե վեց շաբաթ դուրս մնալով բոլոր իրադարձություններից: Երբ հիվանդն այնքան կազդուրվեց, որ կարող էր մոտենալ պատուհանին ու բացել փեղկերը, դրսից խփեց արեւոտ գարնանային օդը: Ներքեւից, պատից հետ թռչելով՝ թերթավաճառների՝ իրար ընդհատող ձայները: Լուսամուտագոգի վրայով կախվելով՝ Ունդինգը լսեց նախ՝ բղավոցի վերջը, հետո՝ սկիզբը, հետո՝ ամբողջը.

- Սենսա՛ցիա: Բարոն Մյունխհաուզենը Կառլ Մարքսի մասի՞ն:

- Մյունխհաուզե՛նը...

Քամի էր բարձրանում: Ապաքինվողը փակեց պատուհանը ու դժվար շնչելով ընկավ աթոռին: Անձայն շարժվող շրթունքները արտաբերեցին.

- Սկսվո՛ւմ է:

Այդ ընթացքում բարոն Մյունխհաուզենը, բարեհաջող ժամանելով Լոնդոն, իր խոսքով, արտակարգ սիրալիր ընդունելություն գտավ տեղիս մառախուղների կողմից: Մառախուղները հնազանդ ու հավատարիմ ծառայում էին նրան: Նա կարողանում էր գլուխները ծայրեծայր լցնել մառախուղով, առավել ճարպկությամբ, քան իրենց ապրանքը բիդոնները լցնող կաթնավաճառ կանայք:

- Ձիերն ու ընտրողները,- ընկերական նեղ շրջապատում ասում էր բարոնը,- եթե ակնապանակներ չհագցնես, ձեզ անպայման կգլորեն առուն, իսկ ես միշտ Տենիրսի տեխնիկայի կողմնակիցն եմ եղել, որը սեւին թույլ է տալիս սպիտակ դառնալ, իսկ սպիտակին՝ գորշի միջոցով մերձենալ սեւին: Չեզոք երանգներ գեղանկարչության մեջ, չեզոքություն քաղաքականության մեջ, եւ թող Ջոնները, Միխելիներն ու Ժանները որքան ուզում են աչքերը չռած նայեն մառախուղին. ինչ է այնտեղ՝ լուսի՞ն, թե՞ լապտերասյուն:

Ասենք, այդ պարադոքսները հազվադեպ էին հատում Բեյսվոթեր-ռոդի եռահարկ քոթեջի շեմը, որտեղ բնակություն էր հաստատել բարոնը: Տունը դիտմամբ էր դղրդացող ու մարդկանց մարդկանցով փոխանակող Չերինգ-Քրոսից հեռու ընտրվել: Քոթեջի ետեւում՝ Փադդինգթոնի լայնահուն ու ոչ այնքան աղմկոտ փողոցները, իսկ վերնահարկի պատուհաններից,- ցանկապատի երկար գալարագծից այն կողմ,- Քեսինգթոնի զբոսայգու լռակյաց ծառուղիները. ձմռանը նրա ծառերի վրա բամբակի փերթերի պես ձյունն էր նստում, ամռանը՝ ստվերների թանաքաբծերով պատած ծառերի տակ՝ ուղյակների քրքումե ավազը:

Այդտեղ բնակություն հաստատելով՝ բարոն Մյունհաուզենը նախեւառաջ կարգադրեց ամբողջովին փորել փոքրիկ պարտեզը, որն իր ծաղկագորգի ու խուզած խոտի զարդանկարով սեղմվել էր տան կարմիր աղյուսներին, եւ անձամբ թուրքական բակլայի սերմեր ցանեց, որ հնամենի տուփով հատուկ բերել էր իր ուղեպայուսակում: Երկու-երեք անգամ ջրելուց հետո բակլան զարմանալի արագությամբ պարուրաձեւ տարածվեց պատն ի վեր: Դեռ կեսօրին առաջին հարկի մակարդակին էր, իսկ երեկոյան, երբ պղտոր լուսինը դուրս եկավ թխադարչնագույն մառախուղից, կանաչ ոլորքների բարակ բեղիկները հասան երրորդ հարկում գտնվող

առանձնասենյակի պատուհանին. տանտերն այդ պահին աշխատում էր այնտեղ՝ մարգարտաշար տառերով ինչ-որ նոթատետրեր դրած լամպի կանաչ թասակի տակ: Բակլայի պարույրները շարժում էին բեղիկների բարակ թելերը՝ ակնհայտորեն նշան բռնելով լուսնի մանգաղին: Բայց Մյունխհաուզենը խիստ նայեց նրանց ու սպառնաց մատով.

- Էլի՞:

Եվ զարմացած անցորդներն առավոտյան գլուխներն օրորելով նայում էին փարթամացած ընձյուղներին, որ պտույտ տալով հասել էին ընդհուպ տանիքին, ու կանաչ պարույրներով հանկարծ վերադարձել հետ ու իջել գետին: Այդ օրվանից Բեյսվոթեր-ռոդի տունը սկսեցին կոչել «Խելագար բակլայի քոթեջ»:

Բարոն Մյունհաուզենի օրակարգը հաստատում էր նորածեւ ամերիկացի գրողի խոսքը. «Մարդկության հոգեւոր առաջնորդներն աշխատում են օրական երկու ժամից ոչ ավելի, ընդ որում, ամեն օր չէ, որ աշխատում են»: Սովորաբար, անկողնուց վեր կենալուց հետո բարոնը, մի գավաթ մէր-վայե սուրճ խմելով ու ծխամորճ ծխելով՝ նայում էր թերթերը, գիշերային ոտնամանները փոխում սուրքիթ կիսակոշիկներով: Հետո սկսվում էր զբոսանքը: Բարոնն առաջին մասը կատարում էր ոտքով. կտրում էր կանաչախիտ Քեսինգթոնը՝ հյուսիսային դարպասներից մինչեւ արեւմտյան դարպասները: Նրան դուր էր գալիս տեսնել ուղյակների վրա թռչկոտող բազմաբղետ ճառագայթները, փոքրիկ շերեփուկները, որոնց համար տարեց, միսիս չդարձած միսսերը հեքիաթներ էին կարդում խոշորատառ, պատկերազարդ գրքերից: Ձախից իր գորշ թեփուկներն էր ճկում Օձ գետը: Աջից,- քայլերին ընդառաջ,- ճյուղերի ոստայնի միջով՝ չգո Պիտեր Փէնի հուշարձանը: Վարորդ Ջոնին բացում է դուռը, եւ բարոնը, շխկոցի հետ՝ անփոփոխ.

- Դեպի ամենաչգոն:

Ջոնին՝ «Լսում եմ»: Եվ լիմուզինը, շրջանցելով Քեսսինգթոնի ու Հայդպարկի ցանկապատերը, ղեկի աջ դարձով եւս չորս անիվ է գումարում ապակի ու քար հագած Պիկադիլիի երկարությամբ անցնող հազարավոր անիվներին: Իսկ հետո՝ ափով,- եւ աջից՝ մառախուղին հյուսված տանիքների կողերից վեր,- Թամփլի աշտարակներն ու Սբ. Պողոսի կլոր գմբեթը: Տաճարի սանդուղքի տակ Ջոնին կրկին բացում է դուռը. Հասա՛նք:

Բարոնը ողորմություն է տալիս մուրացկաններին ու մտնում տաճար: Առավել հաճախ նա այցելում է Ծշուկի սրահը, որը կարող է հարյուրավոր ոտնաքայլեր տեղափոխել ամենաթույլ շրշյունը կամ հազիվ լսվող բառե-

որը. բայց երբեմն էլ ուղղվում է դեպի Վելլինգթոնի դամբարանի վեհատեսիլ մարմարները: Այդտեղ միշտ զբոսաշրջիկներ են խմբված, որոնց աչքերը վազում են խոյակների տերեւազարդ ոլորագծերի, ամպհովանու ծոպերի ու քարին փորագրված տառերի վրայով: Բայց Մյունխհաուզենին ուրիշ բան է հետաքրքրում: Ծառայողին կանչելով՝ նա մատը տնկում է տապանաքարի տարրերի մեջ կորած այլաբանական կերպարների վրա.

- Ի՞նչ է սա:

- Ճշմարտության եւ Ստի իրական պատկերը, սը՛ր:

- Իսկ դրանցից ո՞րն է Ճշմարտությունը,- աչքերն է կկոցում Մյունխհաուզենը:

- Ձեր թույլտվությամբ, այ սա:

- Անցած անգամ, հիշում եմ, սրան Սուտ կոչեցիք,- աչքով է անում բարոնը, եւ աջ հոնքը կեռվում է: Այստեղ ծառայողը, որն արդեն վարժել է այցելուների տարօրինակություններին, գիտի, որ վրա է հասել պահը, երբ ոչ Ճշմարտությանը պիտի նայի, ոչ էլ Ստին, այլ հարուստ այցելուի մատների արանքում շողացող արծաթե շիլլինգին, ապա երախտապարտ խոնարհվի ու չքվի: Մյունխհաուզենը տաճարից դուրս է գալիս խաղաղ, համարյա պայծառացած դեմքով ու ոտքը ավտոյի ոտնակին դնելով՝ անփոփոխ ասում.

- Երբ էլ գաս Աստծու մոտ, տանը չի: Մյուսներին փորձենք:

Հնչում է հասցեն, եւ Ջոնին կամ ղեկը աջ է դարձնում՝ դեպի Պատերնոստեր-սթրիթ, կամ ձախ՝ դեպի երկրագնդով մեկ տառեր ցփնող Ֆլիթսթրիթի իրարանցումը, որտեղից արդեն Լոնդոնի տասներկուվերստանոց շառավղագծերն են ձգվում լիմուզինի անիվների շրշյունի տակ:

Երկու-երեք այց կատարելով՝ բարոնը գլխով է անում վարորդին՝ տո՛ւն: Վերադառնում են ավելի հաճախ Իսթ-Էնդի աղքատ թաղամասերով: Կեղտոտ պատերով տները նման են մամլած մառախուղի, բայց լիմուզինի կաշվե բարձերին թիկնած մարդը մտածում է, որ միայն մի բան աշխարհում հնարավոր չէ ցրել ու քշել քամիներով՝ աղքատությունը:

«Խելագար բակլայի քոթեջում» արդեն սպասում են լրագրողները: Նրանց մատիտները սկսում են շարժվել: Մյունխհաուզենը համբերատար ու սիրալիր պատասխանում է բոլոր հարցերին:

- Իմ կարծիքը պառլամենտարիզմի մասի՞ն: Խնդրեմ. հենց երեկ ավարտեցի բոլոր հռետորների լեզուները բարձրացնելու եւ իջեցնելու վրա ծախսվող մկանային ջանքերի հաշվարկը: Անգլիայում. մի զեկուցողին երեք ընդդիմախոսի հաշվարկով, եթե վերցնենք ստորին ու վերին

պալատները, տարեկան նիստերը բազմապատկելով տարիների թվով, հազար երկու հարյուր վաթսունհինգ թվից մինչեւ հազար ինը հարյուր քսան թիվը հաշված, գումարելով խմբակցությունները, հանձնաժողովներն ու ենթահանձնաժողովները, եւ այդ ամենը վերածելով փութ-ֆուտերի ու ձիաուժերի՝ կստանանք,- պատկերացրե՛ք միայն,- մի ուժային լիցք, որը կհերիքի երկու Քեոփսի բուրգ կառուցելուն: Ինչպիսի՛ փառահեղ նվաճում: Իսկ սոցիալիստներն այդ ամենից հետո պնդում են, թե մենք չգիտենք ինչ է ֆիզիկական աշխատանքը:

- Պայքարի իմ մարտավարությո՞ւնը: Սոցիալակա՞ն առումով: Չափազանց պարզ է: Պարզունակության աստիճանի: Նույնիսկ աֆրիկյան վայրենիներն են այն կարողացել ձեւակերպել: Այո՛, այո՛. նրանք Վիկտորիա լճում մի ջրվեժ ունեն. մոտենալիս,- արդեն բազում կիլոմետրերի վրա,- լսվում է աղմուկը, մոտենալով՝ տեսնում ես ջրափոշու հսկա ամպը՝ երկնքից գետին: Վայրենիներն այն անվանել են Մոզի-սա-Տունյա, որ նշանակում է՝ ծուխն աղմուկ է անում: Ահա այսպես:

- Դուք այնտեղ եղե՞լ եք, սը՛ր,- հետաքրքրվում է լրագրողը:

- Ես եղել եմ չեղածի մեջ. դա շատ ավելի հեռվում է: Եվ ընդհանրապես, ես գտնում եմ,- գրո՞ւմ եք,- որ իրական են միայն երկու ուժ՝ աղմուկն ու խելքը: Եթե նրանք երբեւէ միանային... Ասենք, եկեք սրանով ավարտենք:

Բարոնը վեր է կենում, լրագրողները պահում են նոթատետրերն ու հրաժեշտ տալիս:

Դրանից հետո ծառան զեկուցում է՝ ճաշը մատուցված է: Մյունխհաուզենն իջնում է ճաշասենյակ: Մշտապես կերակրացանկում են նաեւ նրա սիրած տապակած բադերը: Կշտանալով՝ բարոնն անցնում է աշխատասենյակ ու տեղավորվում փափուկ բազկաթոռի մեջ. մինչ ծառան նրա մեկնած ոտքերից հանում է կոշիկներն ու փոխարինում աղվափետրե ոտնամաններով, բարոնը, աչքերը բարեհոգի կկոցելով, կուշտ հայեցողականությամբ հետեւում է, թե լոնդոնյան անձրեւն ինչպես է պատուհանից այն կողմ ստվերագծում զբոսայգու կանաչ բնապատկերը: Վրա է հասնում այն ժամը, որը «Խելագար բակլայի քոթեջում» ընդունված է կոչել հետճաշյա աֆորիզմի ժամ: Շեմին անշշուկ քայլերով հայտնվում է բարեվայելուչ միսսը եւ, անկյունում առաջ քաշելով գրամեքենայով սեղանիկը, մատները դնում ստեղնաշարին: Մյունխհաուզենը միանգամից չի անցնում թելադրությանը. նախ երկար ծծում է իր ծխամորճը՝ բերանի մի անկյունից մյուսը մղելով, ասես ընտրելով, թե որ անկյունով ծխի: Ջար-

մանալի է ծխում բարոնը. սկզբում՝ գորշաճերմակ պտտվող գնդակերպեր, հետո դրանց շուրջը, թափանցիկ սատուռնական օղակներով,- մեկը աջ պտտվող, մյուսը՝ ձախ,- դանդաղասահ ծխի ոլորքներ:

- Գրե՛ք: Հին լիմբուրգյան պանիրը ոչ մեկին չի խղճում, բայց համենայնդեպս լալիս է:

- Մինչ ոստրեն կհասցնի կարծիք կազմել լիմոնի հոտի մասին, արդեն կերված կլինի:

Միսսի ականջները թաքնված են շեկ խոպոպների տակ, նա աֆորիզմներին կիսադարձ է նստել, աչքերը՝ անձրեւի շեղ տողերին, բայց մատները կտկտում են ստեղներին, անձրեւը կտկտում է ապակուն,- ու թելադրությունը շարունակվում է, մինչեւ բարոնը, ծխամորճի մոխիրը թափ տալով, չասի.

- Շնորհակալ եմ: Վաղը՝ սովորականի պես:

Նա փորձում է վեր կենալ, բայց նիրհը ծանրացրել է մարմինը, մշուշել մտքերը, եւ իրականությունը, շիկահեր միսսի հետ, անշշուկ քայլերով դուրս է գալիս սենյակից:

Իսկ ծանրացած կոպերի տակ՝ տեսիլքների հերթագայություն. երազի ավտոմոբիլը Մյունխհաուզենին տանում է երազի փողոցներով. դրանք տարօրինակ կերպով ամայի ու համր են, եւ ոչ մի անգամ շչակի փողակը չսեղմելով՝ Ջոնին անիվների շրշյունը կանգնեցնում է Սբ. Պողոսի սյունաշարի տակ: Մյունխհաուզենն արդեն իջեցրել է ոտքը աստիճանին ընդառաջ, երբ տաճարը սկսում է շարժվել, գլուխը, հսկայական-կլոր գլխարկի տակ, խոնարհվում է՝ խաչով օդը պոգահարելով, երկթեք մեջքը կորացել է, ու հրեշը, իր բոլոր զանգալեզուները շարժելով՝ բղավում է. «Սը՛ր, ինչպե՞ս հասնել Սավուղի փողոց, ուղի՞ղ, թե՞ թեքվենք»: Ճարպիկ Ջոնին արագ գոռծի է գցում շարժիչն ու ղեկի կտրուկ պտույտով՝ հետ. բայց հրեշը, իր տասներկու հսկա սյուների քայլերով ու քարշ տալով քարե իրանը՝ նրանց ետեւից: Արագությունների փոխանցման տուփը կրճտոցով սլաքը նետում է առավելագույնի վրա: Բայց հրեշը սյունավոր թաթերը ճարպիկ շարժելով՝ ավելի ու ավելի մոտ: Մեքենան ողջ թափով շրջադարձ անում ու մտնում է Իսթ-Էնդի նեղ փողոցներից մեկը: Տաճարը փորձում է հասնել ետեւից՝ քարե ուսի ուղղանկյունը խցկելով փողոցի ճեղքը: Եվ այստեղ Մյունխհաուզենը նստիքի վրա վեր թռչելով՝ գոռում է աջից ու ձախից ծգվող հարյուրավոր քառակուսի աչքերին. «Հե՛յ, ի՞նչ եք չռվել, կանգնեցրեք սրան»: Եվ տներն առաջին իսկ կանչին փակում են տաճարի ճամփան: Բարոնը թեթեւացած շունչ քաշելով ընկնում է բարձե-

րին, բայց այդ պահին տեսնում է իրեն դարձած Ֆոնիի մահացու գունատ դեմքը. «Այս ի՞նչ արեցիք: Կործանվում ենք»: Եվ իսկապես, բարոնը միայն հիմա է տեսնում, որ չքավոր Իսթ-Էնդի տները միջնատարածքներ չունեն, զոդված են իրար, աղյուսը աղյուսին՝ կազմելով մեկ, միայն համարանիշերով մասնատված զանգված. եւ հենց թիկունքում մոտենում են իրար, առջեւի աղյուսե տուփերն էլ ստիպված են նույնը անել, ու փողոցը դանդաղ առաջ է մղում պատերը՝ սպառնալով ճզմել եւ՛ սլացող ավտոմոբիլը, եւ՛ նրա մեջ գտնվողներին: Մեքենայի սռնիները,- ո՛չ, ո՛չ,- շխկում են պատերին, արագ՝ առջեւում հրապարակի բացվածքն է, բայց ուշ է, հսկա գլանիչը անզոր բզզացող ավտոն արդեն սեղմել է բազմահարկ տուփերի մամլակում, պողպատե անվաթեւերն ու թափքը խշրտում են, հողի ու ներբանի արանքն ընկած միջատի թեւիկների պես: Մյունխհաուզենը ոտքի հարվածով տեղահան է անում աջից վրան եկող պատուհանի շրջանակն ու նետվում ներս: Բայց խեղճ Ֆոնիի բախտը չի բերում,- երկու պատուհանների արանքում է,- փողոցը սեղմել է աղյուսն աղյուսին,- կարճ ճիչ, որ կորչում է վիթխարիների բախման մեջ,- ամեն ինչ խաղաղվեց: Ու հանկարծ՝ ետեւից. «Ապակեգործին դուք եք վճարելու, սը՛ր»: Մյունխհաուզենը շրջվում է. աղքատիկ, բայց կոկիկ կահավորված ինչ-որ սենյակում է, մեջտեղը՝ խոհանոցի սեղան, սեղանի շուրջը՝ գոլորշի արձակող թասերի գլխին՝ մի տարեց մարդ, առանց պիջակի, մի չորչորուկ կին՝ այտերի հիվանդոտ վարդագույնով, ու երկու տղա երեխա. ոտքերը նստարանից կախ, գդալները բերաններում սառած՝ երեխաները հիացած զննում են եկվորին: «Պետք է ձեզ զգուշացնեմ, որ ապակին թանկացել է,- թասի պարունակությունը խառնելով՝ շարունակում է տղամարդը:- Թո՛մ, աթոռ տուր պարոնին, թող նստի»:

Բայց Մյունխհաուզենի մտքով իսկ չի անցնում նստել. «Ինչպե՞ս կարող եք նստել այստեղ, երբ Սավուղը Պողոսում է, փողոցներ չկան, եւ ընդհանրապես ոչինչ չկա»: Տղամարդը, ի զարմանս բարոնի, զարմացած չէ. «Եթե ոչնչին ոչինչ գումարենք, մեկ է ոչինչ ենք ստանալու: Եվ գնալու տեղ չունեցողի ինչի՞ն է պետք փողոցը, մի՛սթր: Կերեք, երեխանե՛ր, սառչում է»:

Բարոնը, ասես մի նոր պատ է շարժվել վրան, սիրալիր առաջարկված աթոռը շուռ տալով, հետ-հետ է գնում դեպի դուռը եւ աստիճաններով՝ ներքեւ. տան խորանարդը՝ չորս պատերի արանքում: «Իսկ եթե սրա՞նք էլ»: Արագ՝ դեպի ցածր դարպասատակը. նորից խորանարդը՝ չորս կախված պատերի արանքում, դարպասներն՝ ավելի ու ավելի ներքեւ, ու նորից խորանարդը՝ ավելի սեղմված պատերի արանքում: «Անիծյալ շախ-

մատիստուհի»,- մրմնջում է վախեցած Մյունխհաուզենը ու անմիջապես էլ տեսնում. խորաանարդի կենտրոնում՝ հսկա կլոր ոտքի վրա, սեւ լաքած բաշը խռիվ՝ շախմատային ձին: Ոչ մի վայրկյան չհապաղելով՝ Մյունխհաուզենը թռչում է ձիու ուժեղ վզին. ձին թափ է տալիս փայտե ականջները, եւ ծնկներով սայթաքուն լաքը սեղմած՝ Մյունխհաուզենը զգում է՝ շախմատային միոտանին, կռանալով, ցատկում է առաջ, էլի առաջ ու՝ կողք, նորից առաջ, առաջ ու կողք. գետինը մեկ տապալվում է ցած, մեկ, գագաթնաձողերն ու տանիքները թափահարելով, խփվում ձիու կլոր սմբակին. բայց սմբակին,- Մյունխհաուզենը դա լավ է հիշում,- փափուկ մահուդ է սոսնձված,- կատաղի վարգը շարունակվում է, առկայծում են նախ հրապարակները, հետո դաշտերի քառանկյուններն ու քաղաքների վանդակները,- էլի եւ էլի,- առաջ, առաջ ու՝ կողք եւ առաջ. կլոր սմբակը խփվում է մեկ խոտի, մեկ քարի, մեկ սեւ հողին: Հետո ականջներում սուլող քամին հանդարտվում է, ձիու ցատկերը՝ ավելի կարճ ու դանդաղ - նրանց տակ հարթ ձյունաձածկ դաշտ է, ձնակույտերից ցուրտ է փչում, ձին, սեւ երախը բացած, մի ցատկ էլ է անում ու կանգնում սարսռեցնող դաշտի կենտրոնում. մահուդապատ ոտքը սառել-կպել է ձյանը: Ի՞նչ անել: Մյունխհաուզենը փորձում է առաջ մղել ձիուն. «Դեպի g8-f6; f6-d5, գրո՛ղը տանի, d5-b6»,- գոռում է նա՝ հիշելով «Ալեխինի պաշտպանության» զիգզագը: Ապարդյո՛ւն: Ձին իրենը վարգել է. փայտե յաբուն հոգի է տալիս: Մյունխհաուզենը զայրույթից ու սրտնեղությունից լաց է լինում, բայց արցունքները սառչում են թարթիչներին, ցրտից անհնար է թեկուզ մի վայրկյան տեղում մնալ եւ ականջները տրորելով՝ նա քայլում է,- առաջ, առաջ ու՝ կողք, փնտրելով գոնե մի բիծ ձյունաճերմակ սփռոցի վրա, որ կոկիկ, առանց մի ծալքի ծածկել է հսկայական կլոր, միայն հորիզոնով եզրագծված սեղանը: Ու հանկարծ տեսնում է՝ այնտեղ, առջեւում, թեթեւ ստվերի պես սահելով, ինչ-որ երկար, սրանկյուն գոթական տառերից կազմված փշոտ ու ճկուն բազմոտանի: Մյունխհաուզենը աչքերով որսում է տառերի սեւ շարանն ու կարդում. իր անունն է: Զարմանքն անշարժացնում է Մյունխհաուզենին: Այդ ընթացքում տասնութտառանի ԲԱՐՈՆ ֆոն ՄՅՈՒՆԽՀԱՈՒԶԵՆԸ ժամանակ չի կորցնում՝ վանկերը կորացնելով սողում է դեպի գետնից անսպասելի դուրս պրծած սահմանասյունը. սյան վրա տախտակ է, տախտակին՝ նշաններ: Մյունխհաուզենը, սառած ներբանները դժվարությամբ գետնից կտրելով՝ փախչող անվան ետեւից: Բայց անունն արդեն հասել է սյանը եւ կարմիր ու սպիտակ շերտերը հարթավայրի վրա կախած արգելափակոցին ու շրջվում է, որ նայի՝ հետապն-

դողը հեռո՞ւ է: Այդ ժամանակ,- Մյունխհաուզենը պարզ տեսնում է,- արգելափակոցն արագ իջնում է. կարմիր-սպիտակ շերտերը խփում են ութերորդ տառին, եւ անունը, դանակով հատված օձի պես, տառապագին ճկում է բաժան-բաժան վանկերը. ՄՅՈՒՆԽՀԱՈՒԶԵՆԸ՝ սյան մի կողմը, ԲԱՐՈՆՖՈՆԸ՝ այս: Թանաքահոսող Ն-ի վրա հենված՝ խեղճ ԲԱՐՈՆՖՈՆԸ դեսուդեն է նետվում՝ չիմանալով ինչ անի: Մյունխհաուզենի աչքերը՝ տառից տառ՝ ձյան վրայով՝ դեպի սահմանասյան նշանները. ԽՍՀՄ: Մի վայրկյան կանգնում է բերանը բաց, հետո հայտնվում է միտքը՝ թողնել անունն ու փախչել: Բայց կոշկատակերն արդեն սառել-կպել են ձյանը: Նա բարձրացնում է աջ ոտքը, հետո՝ ձախը, ու հանկարծ սահմանային քառատառությունը սկսում է շարժվել: Սարսափած Մյունխհաուզենը դուրս է թռչում կոշիկներից ու միայն գուլպաներով՝ սառցակեղեւի երեսով. ցուրտը կառչում է ներբաններից, նա հուսահատ այս ու այն կողմ է նետվում եւ... արթնանում է:

Աջ կոշիկն ընկել է ոտքից, ու ներբանի տակ մանրահատակի սառը մոմած քառակուսին է: Անձրեւը մանրահատիկ ծեծում է պատուհանը, բայց գիշերը պատել է նրա շիթերի բարակ ստվերագծերը: Կկուն բուխարու վրա կանչում է յոթ անգամ: Բարոն ֆոն Մյունխհաուզենը ձեռքը պարզում է զանգակին:

«Խելագար բակլայի քոթեջը» վառում է լույսերը ու պատրաստվում ընդունելու երեկոյան հյուրերին: Ներքեւում,- նորից ու նորից,- կաղնեփայտե դռանն է խփվում մուրճիկը. սկզբում հայտնվում է բորսայի արքան, մի որոպեից՝ դիվանագիտական տուզը: Հետո՝ իրեն ոգեհարցության նվիրած ծեր լեդին, ու երբ վերջապես շեմին երեւում են բանվորական կուսակցության առաջնորդի վիատ կախված բեղերը, Մյունխհաուզենը սիրալիր վեր է կենում ու գնում ընդառաջ՝ հաջողակ խաղացողի տեսքով գոչելով.

- Խնդրեմ մեզ մոտ՝ խաղի: Միայն ձեզ էինք սպասում:

Բայց սպասվածներից բացի ժամանում է նաեւ նախկին անպորտֆել մինիստրը, որին հարմարավետ քոթեջը, ի դեպ ասած, նույնքան ջերմ ու հյուրընկալ է դիմավորում:

Նորություններ են փոխանակում՝ չշրջանցելով ոչ անկողինները, ոչ խորհրդարանը, փորձում են գուշակել առաջիկա նշանակումները, Չինաստանի իրադարձությունները. անպորտֆել մինիստրի հետ բարոնը զրուցում է մի անմինիստր պորտֆելի մասին, իսկ հոգեհարցուկ տիկինը պատմում է.

- Երեկ Պիտշլեյների մոտ էինք, կանչեցինք Լի-Հունգ-Չանգի ոգին. «Եթե այստեղ ես մի անգամ թխկացրի, եթե ոչ՝ երկու անգամ», ու պատկերացրեք՝ Չանգը երկու անգամ թխկացրեց:

Այդ պահին ներքեւից՝ կրկնակի հարված դռանը:

- Մի՞թե Լին է,- վեր է թռչում տանտերը՝ պատրաստ սիրալիր ընդունելու ուրվականին: Բայց շեմին ծառան է.

- Նորին սրբազնություն եպիսկոպոս Նորթումբերլենդերցին:

Եվ մի րոպե անց մատանեկիր ձեռքը օրհնում է ներկաներին:

Զրույցը շարունակվում է: Ծառան յուղահաց է բերում, թեյ՝ ճենապակե գավաթներով ու կյումելով՝ բարակոտն ըմպանակներ: Որոշ ժամանակ բառերը բերանից բերան են անցնում, հետո սրբազնությունը, թեյի գավաթը հետ մղելով՝ տանտիրոջը խնդրում է որեւէ բան պատմել: Տիկնոջ թույլտվությամբ բարոն Սյունխհաուզենը ձեռքն է առնում ծխամորճն ու, ժամանակ առ ժամանակ ծխափողը խռխռացնելով, սկսում է պատմել: Եվ անմիջապես էլ լսողների ուշադիր սրված ականջները սկսում են թառամել, սկզբում՝ եզրերից, հետո՝ ականջախեցու կոճիկով ներս ու ներս, եւ աշնան տերեւների պես ոլորվելով, ականջ ականջի ետեւից, առանց շշուկ ու շրշյունի, թափվում են հատակին: Բայց կարգապահ ծառան ավելով ու գոգաթիով հայտնվելով հյուրերի թիկունքում՝ անձայն հավաքում է ականջներն ու դուրս տանում դռնից:

- Այս դեպքը պատահել է, երբ վերջին անգամ այցելել էի Հռոմ,- ծխի քուլաներն է շարժում պատմողի ձայնը:- Աշնանային թարմ առավոտ էր, երբ սուրբ Պետրոսի մայր տաճարի աստիճաններով իջնելով՝ կտրեցի Բեռնինիի սյունաշարով շրջանակված հրապարակը ու շրջվեցի ձախ՝ Բորգո Սան Անջելո նեղ փողոցը: Եթե ձեզ վիճակվել է լինել այնտեղ, երեւի հիշում եք antichita-ի *[Անտիկ, հնություն - իտ.]* փոշոտ պատուհաններն ու յուրատեսակ կրպակները առեւտրական միջնորդների, որոնք ձեզնից իրն ու մի քանի սոլդի ստանալով՝ պարտավորվում են մի շաբաթից այն վերադարձնել առանց սոլդիի, բայց պապական օրհնությամբ: Քանի որ օրհնությունն այդ իրի մեջ անտեսանելի է ներկա, պատվերներն արագ ու միշտ ժամանակին են կատարվում: Այդտեղ միշտ կարելի է բերել որեւէ էժանագին հմայիլ, ջերմատենդը բուժող օձի ատամ, չար աչքը խափանող մարջանե եղջյուրիկներ, մասունքների ամբողջական հավաքածու՝ սուրբ Ֆրանցիսկոսից մինչեւ սուրբ Յանուարիուսը ներառյալ, կոկիկ տեղավորած դեղատնային տոպրակներում: Մտա այդպիսի մի կրպակ ու խնդրեցի սուրբ Ոչոքի մասունքը: Կրպակատերը մատը սահեց-

րեց թղթե տոպրակների վրայով. «Գուցե սինյորը բավարարվի սուրբ Ուրսուլայո՞վ»: Ես բացասաբար գլխով արեցի: «Կարող եմ սինյորին օգտակար լինել սուրբ Պաչեկոյով. արտակարգ հազվագյուտ մասունք է»: Ես կրկնեցի իմը՝ "Der heilige Niemand" [*Սուրբ Ոչոք - գերմ.]:* Կրպակատերն ըստ երեւույթին ազնիվ մարդ էր, տարածեց ձեռքերն ու տխրությամբ խոստովանեց, որ պահանջվածն իր կրպակում չկա: Արդեն պատրաստվում էի շրջվել դեպի դուռը, երբ հանկարծ ուշադրությունս գրավեց անկյունում, դարակին դրված մի առարկա. պստլիկ սեւ տուփ էր, որ կիսաբաց կափարիչի տակից դուրս էին ցցվել խծուծի խառնշտած գզուզները: «Սա ի՞նչ է»,- շրջվեցի վաճառասեղանի կողմը, եւ աճյունավաճառի հաճկատար մատները անմիջապես մոտեցրին ապրանքը: Պարզվեց՝ կիսախանձ խծուծի կտոր է, որ մասնակցել էր Պիոս Տասներորդի առաքելացման ծեսին: Ինչպես բոլորին հայտնի է, պապ օծելիս ընտրյալի տոնզուրայի վրա խծուծ են վառում՝ արտասանելով "sic transit gloria mundi" *[Այսպես է անցնում երկրային փառքը - լատ.]* ծիսական բառերը: Եվ ահա, ինչպես երդվում էր կրպակատերը, որին չհավատալու հիմք չունեի, Պիոսի վրա արվող այդ ծեսի ժամանակ, հենց նվիրական բառերն արտասանելու պահին անսպասելի քամին քշում է խծուծի կտորը, որն էլ նրան՝ հազվագյուտ իրեր հավաքողին հաջողվել էր ձեռք բերել որոշ գումարով. «Սինյորը կարող է անձամբ համոզվել,- աճյունավաճառը բացեց տուփը,- որ խծուծը վառված է եզրերից ու այրվածահոտ է գալիս»: Իրոք այդպես էր: Ես հարցրի գինը: Նա մի կլորիկ գումար ուզեց: Ես կես գցեցի: Նա իջեցրեց, ես ավելացրի. արդյունքում՝ պապական խծուծով տուփը հայտնվեց իմ գրպանում, իսկ ես,- երկու ժամ անց,- Հռոմ-Ճենովա գնացքում: Չէի ուզում բաց թողնել քրիստոնյա-սոցիալիստների հերթական կոնֆերանսը, որի նիստերը նշանակված էին հենց այդ ժամանակ, Ճենովայի Palazzo Rosso-ում *[Կարմիր պալատ - իտ.]:* Անհնարինությունների սիրահարի համար, որոնց թվին ինձ թույլ եմ տալիս դասել, այցելությունն այդ կարգի հավաքույթներին երբեմն ուսանելի է լինում: Վագոնի պատուհանները բաց էին. Ծովի խոնավ օդը, հետո, Ճենովային մոտիկ՝ թունելների շարքը, հեղձուկի փոխարինվելը միջանցաքամով՝ ցուրտ առա, եւ արդեն քրիստոնյա-սոցիալիստների առաջին նիստի կեսին տկարություն զգացի: Պետք էր բուժական միջոցներ ձեռնարկել: Ձեռքս գրպանս տանելով՝ շոշափեցի տուփն ու հիշեցի, որ ականջները խցկած բամբակը, իսկ դրա բացակայության դեպքում՝ խծուխը, արմատական միջոց է մրսածության դեմ: Բացեցի սեւ կափարիչը եւ աջ ու ձախ ականջներս խց-

կեցի պապական բամբակի փերթերը: Եվ անմիջապես... Օ՛, եթե իմանայիք ինչ կատարվեց: Հռետորները խոսում էին, ինչպես որ խծուծից առաջ, բերանները շարժվում էին՝ արտաբերելով ճառերը, բայց ոչ մի հնչյուն, բացի իմ ժամացույցի թիկ-թակից, թմբկաթաղանթներիս չէր հասնում: Ոչինչ չէի հասկանում. եթե խլացել եմ, ապա ինչպես եմ բառերը չլսելով՝ լսում ճոճանակի տկտկոցը. եթե ականջներս խցանած խծուծը խլացնում է ձայները, թուլացնում լսողությունը, ապա ինչպես են բարձր ձայները ժամացույցի համարյա անլսելի ընթացքից ցածր լսվում: Անտրամադիր՝ լքեցի ժողովը, անցա անձայն խոսող բերանների մոտով եւ հաճելիորեն զարմացած էի, երբ, հայտնվելով փողոցում, դեռ սանդուղքի վերջին աստիճանից չիջած, հանկարծ խծուծի միջով լսեցի. «Mancia» *[Այստեղ՝ ողորմություն - իտ.]:* Մի ծեր մուրացկան կին էր ասողը: Պարզ էր՝ խծուծը դադարեցրել էր իր արգելակող ազդեցությունը: Կեղտոտ քրջերի միջից՝ պառավի ափն ինձ ընդառաջ, բայց շտապելով ստուգել եզրակացությունս՝ ես նետվեցի հետ՝ նիստերի դահլիճ: Ճեպացի ներս, բայց եզրակացությունս ավելի հապճեպ էր. նորից աչքիս առաջ՝ շարժվող բերաններ, սակայն բերաններից՝ ոչինչ, բացի արտաբերվող լռությունից: Սա ի՛նչ սատանայություն է,- ներեցեք, ծե՛րդ սրբազնություն, սատանային հետ եմ վերցնում,- սա ի՞նչ կարող է նշանակել: Հիպոթեզ հիպոթեզի ետեւից եմ կառուցում ու հանկարծ հիշեցի, որ ականջներիցս դուրս ցցված խծուծն առանձնահատուկ է, նվիրական, ծխի հետ նաեւ ամբողջ gloria mundi-ն վանող, եւ դրա միջով երկրային փառքի ծարավի, անցավոր ոչինչ չի կարող անցնել: Անկասկած այդպես էր: Գնածիս համար Բորգո Սան Անջելոյի աճյունավաճառին շատ թանկ չէի վճարել. բայց քրիստոնեական սոցիալիզմի ադեպտների ճառերն ինչո՞ւ են թաղվում իմ բամբակի մեջ ու չեն հասնում լսողությանս:

Ծանր մտորումների մեջ՝ վերադարձա հյուրանոցի համարս: Որոշել էի մինչեւ հաջորդ նիստը կատարելագործել իմ զտիչը, որը քրիստոնյաներին զատում է մերձքրիստոնյաներից եւ իր ծակոտիներով ներս չի թողնում ոչ մի ունայնություն: Այսպես էի մտածում. եթե ոչ մի մեղսական բառ ի զորու չէ խցկվել օձյալ խծուծի միջով ու թաղվում է նրա թելերի խիտ հյուսվածքում, ապա ինչ կկատարվի, եթե խծուծի չոր ու կոշտ թելիկներին որոշակի ողորկություն տրվի: Պետք է կատարվի, եւ դա միանգամայն բնական է, հետեւյալը. բառերը դանդաղաշարժության ու կոպտության պատճառով (համենայնդեպս, օդեղեն են) առաջվա պես կշարունակեն թաղվել նաեւ ողորկ խծուծի մեջ, սակայն բառերում պահված մտքերին,

եթերայնության ու նրբության շնորհիվ, հավանաբար կհաջողվի համենայնդեպս սահել ողորկ թելիկների արանքով ու թռչել լսողության մեջ: Խծուծն ականջներիցս հանելով՝ ուշադիր զննեցի այդ երկու փերթերը. երեսին կեղտոտ նստվածք կար: Ըստ երեւույթին՝ զեկուցումների հետքը: Մաքրելով այդ, այսպես ասած, սղագրությունը, աջ ու ձախ ականջներս դնելուց առաջ խծուծը իջեցրի մոմի վրա տաքացրած սովորական սագի յուղով գդալի մեջ: Ժամացույցս հիշեցրեց, որ մի քանի րոպեից կոնգրեսը կվերսկսվի: Կողասրահներով անցնելիս ինչ-որ աղոտ ձայներ էի լսում դահլիճից. ուրեմն արդեն սկսվել է: Դուռը կիսաբաց անելով՝ խծուծած ականջներս խցկեցի դահլիճ. կոնգրեսն առկա էր. ամբիոնին կանգնած էր մի վայելչատես մարդ՝ զուսպ, մինչեւ վերջ կոճկած սերթուկով, ու քաղցր-մեղցր ժպտալով՝ փողոցային հայհոյանքներ էր տեղում: Տարակուսած նայեցի շարքերին, որոնց ուղղված էին հայհոյանքները. դահլիճն ակնածանքով ունկնդրում էր, եւ հարյուրավոր գլուխներ հավանություն տալով օրորվում էին այդ նույն գլուխներին թափվող վիրավորանքներին համընթաց: Միայն երբեմն ճառն ընդհատվում էր ծափահարություններով ու հռետորին բղավում էին. «ապուշ», «շողոքորթ», «հողմացույց», «սրիկա»,- հռետորն ի պատասխան ձեռքը տանում էր սրտին ու երախտապարտ խոնարհվում: Այլեւս ուժ չունենալով դիմանալու, փակեցի ականջներս... այսինքն հենց հակառակը՝ բացեցի. հռետորը խոսում էր դասակարգային պայքարի դեմ պայքարում համագումարի վաստակի մասին, բոլոր կողմերից լսվում էր՝ «բռավո», «ձեր շրթունքներով ճշմարտությունն է», «որքան դիպուկ ու նուրբ»: Միայն հիմա սկսեցի հասկանալ, որ իմ տուփի մեջ մամլված մի քանի գրամ խծուծը մի ամբողջ փիլիսոփայական մեթոդ արժեր: Ու որոշեցի իմ փառազերծող խծուծով զտել ամբողջ աշխարհը: Սեւագրելով փորձերի պլանը՝ հենց նույն գիշեր ճեպընթացով մեկնեցի՝ ուղղվելով դեպի...

Եվ պատմությունը շարունակվում է: Կկուն կանչում է տասնմեկ եւ տասներկու: Եվ միայն կեսգիշերից շատ անց Մյունխհաուզենի ծխամորճը թափ է տալիս մոխիրը, իսկ տանտերը, պատմությունն ավարտելով, հյուրերին ուղեկցում է նախասրահ: Աշխատանքային օրն ավարտվեց: Եվ «Խելագար բակլայի քոթեջի» շուրջը, ամեն երեկո իրենց գծերի տարածքն ընդլայնելով, ոլորվում են նորանոր պարույրներ. նրանց բարակ բեղիկներն արդեն Լա Մանշից այն կողմ են՝ սպառնալով երկարել մինչեւ երկրագնդի ամենահեռավոր միջօրեականները: Բարոնի աֆորիզմները,- նա գիտի դա,- երկու պալատների գրակալներին են՝ սղագրության եւ

օրակարգի հարեւանությամբ. ծխամորճի կապտասահ ծխի հետ սկսված պատմություններն ու հնավանդ զրույցները ծխամշուշներով պատում են «Խելագար բակլայի քոթեջը» եւ լեզվից լեզու ու չլսող ականջներ անցնելով՝ կուտակվում բոլոր առաստաղների տակ: Եվ ոտնամանները դեպի տաք անկողին քստքստացնելով՝ բարոնն անորոշ ժպտում ու քրթմնջում է.

- Սյունխհաուզենը քնած է, բայց նրա գործը աչք չի կպցնում:

Գլուխ III
Կանտի տարեկիցը

Չնայած բարոն Սյունխհաուզենը տնային ոտնամանները գերադասում էր կիսակոշիկներից եւ ժամանցը՝ աշխատանքից, բայց շուտով ստիպված էր հրաժեշտ տալ հետճաշյա քնին ու տնակայցությանը: Հեշտ էր ձեռքի շարժումով ցրել հին ծխամորճի ծուխը, բայց ծխի «սարքած» աղմուկը շարունակում էր աճել օվկիանոսային ալեբախության տարերայնությամբ: Հեռախոսի ականջը, որ առաջ բարոնի առանձնասենյակում անվրդով կախված էր պողպատե կեռիկներից, հիմա անընդհատ ցատկոտում էր տակդիրի վրա: Դռան մուրճիկն անհոգնել ծեծում էր կաղնեփայտե փեղկը, հեռագրերն ու նամակները թափվում էին բոլոր կողմերից՝ իրենց կլոր դրոշմակնիքները չռելով Սյունխհաուզենի վրա: Բարոնի սահող աչքերը դրանց մեջ մի անգամ մի վայելչագիր տպագրությամբ ծանուցագիր նկատեցին՝ հինավուրց տառատեսակով՝ խավաթղթի վրա. մեծարգո բարոնի երկրպագուների խումբը բարոն Հիերոնիմուս ֆոն Սյունխհաուզենին խնդրում է այցելել հարգարժան բարոնի գործունեության երկուհարյուրամյակին նվիրված հավաքույթին: Հոբելյանական կոմիտե: Սփլենդիդ-հոթել: Օր եւ ժամ:

Սփլենդիդ-հոթելի հանդիսասրահը ոսկուն էր տալիս բազում էլեկտրական լույսերից: Ճքամուտքի հայելադուռը, անաղմուկ պտտվելով, ներս էր թողնում նորանոր հյուրերի: Կենտրոնական կլոր սրահում՝ Սյունխհաուզենի զարդանախշ զինանշանը. վահանի անկյունագծով՝ հինգ հերալդիկ բաղերը,- կտուց, պոչ, կտուց, պոչ, կտուց,- թռչում էին թելին շարված. վերջինի պոչի տակից՝ լատինատառ՝ mendace veritas *[Այստեղ՝ ստի ճշմարտությունը - լատ.]:*

Երկար, հին սլավոնական «Ս»-ի ձեւով դասավորված սեղանների եր-

կայնքով՝ ֆրակներ ու դեկոլտեներ: Դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ, նշանավոր հրապարակախոսներ, ֆիլանտրոպներ ու բորսային գործարարներ: Արդեն բազում անգամներ իրար զարկվելով զնգացել էին գավաթներն ու ցնծագին «հիփ»-ը խցանների ետեւից թռել էր առաստաղին, երբ վեր կացավ հոբելյարը: Խոսքը նրանն էր.

- Տիկնա՛յք եւ պարոնա՛յք,- լռած սեղանները հայելով՝ սկսեց Մյունխհաուզենը,- Ավետարանում ասված է. «Ի սկզբանե էր Բանը»: Դա նշանակում է՝ ամեն գործ պետք է սկսել բառերով: Ես դա ասել եմ խաղաղության վերջին միջազգային կոնֆերանսին եւ ինձ թույլ կտամ կրկնել նաեւ այս հավաքում: Մենք՝ Մյունխհաուզենները, միշտ հավատարիմ ծառայել ենք պատրանքին. իմ նախապապ Գեյնոն Ֆրիդրիխ Երկրորդի հետ մասնակցել է խաչակրաց արշավանքին, իսկ իմ ժառանգներից մեկը լիբերալ կուսակցության անդամ էր: Ի՞նչ առարկություն կարող է լինել սրան: Նույն պատմական տարեթիվն է աշխարհ բերել մեզ՝ ինձ ու Կանտին: Ինչպես, հավանաբար, հայտնի է արգո հավաքույթին, ես ու Կանտը համարյա հասակակից ենք, եւ անարդար կլիներ ինձ համար տոնական այս օրը չհիշել նաեւ նրա մասին: Իհարկե, մենք ինչ-ինչ հարցերում տարակարծություններ ունենք «Բանականության քննադատության» հեղինակի հետ. այսպես, Կանտի «Ճանաչում եմ այն, ինչ իմ փորձի մեջ եմ առնում» դրույթը ես՝ Մյունխհաուզենս, մեկնաբանում եմ այսպես. առնում եմ, իսկ մյուսները թող փորձեն ճանաչել իմ կողմից առնվածը, եթե նրանց փորձը դրան կբավականացնի: Բայց հիմնականում մեր մտքերը մեկ անգամ չէ, որ հանդիպել են. այսպես, տեսնելով, թե վերսալցիների դասակն ինչպես է հրացանները բարձրացնելով նշան բռնում անզեն կոմունարներին (Պեր Լաշեզի պատերի տակ էր), չէի կարող չհիշել Քյոնիգսբերգյան իմաստունի աֆորիզմներից մեկը. «Մարդը մարդու համար նպատակ է, եւ նպատակից բացի ուրիշ ոչինչ չպիտի լինի»: Միսթր Շոուն,- ծաղիկներով ու գավաթներով ծանրացած սեղանի ծայրին դարձավ հռետորը,- իր տաղանդավոր պիեսներից մեկում պնդում է, որ մենք հարատեւ չենք միայն այն պատճառով, որ չենք կարողանում ցանկանալ մեր անմահությունը: Բայց ես, թող ների ինձ միսթր Բեռնարդը, շատ ավելի հեռուն եմ գնում անմահության որոնումների մեջ. պետք չէ անձամբ խնդրել սեփական կյանքի երկարաձգում մինչեւ անսահմանություն, բավական է միայն, որ ուրիշները ինձ՝ Մյունխհաուզենիս, երկար կյանք ցանկանան, եւ ահա ես (հռետորի ձայնը դողաց) ձեր ցանկությունների կամոք ոտք եմ դնում Մաթուսաղայի ճանապարհին: Այո՛, այո՛, մի առարկեք, տիկնա՛յք եւ պարո-

նա՛յք, ինձ ընդառաջ պարզած ձեր ձեռքերում միայն գավաթներ չեն. դուք ինձ համար գոյության ընթացիկ հաշիվ բացեցիք: Այսօր ես հաշվից դուրս եմ գրում երկու հարյուր: Հետո՝ ինչպես կուզեք. հաստատեք հաշիվը կամ փակեք: Ըստ էության, բավական է ինձ թափ տաք ձեր բիբերից, եւ ես աղքատ եմ, ինչպես ինքը՝ ոչինչը:

Սակայն վերջին բառերը խլացան ծափահարությունների աղմուկով, բյուրեղապակին զնգաց բյուրեղապակուն, տասնյակ ձեռքեր փնտրում էին հոբելյարի ձեռքը, նա հազիվ էր հասցնում փոխել ժպիտները, խոնարհվել ու շնորհակալություն հայտնել: Հետո սեղանները՝ պատերի տակ, ջութակներն ու չխկչխկանները ֆոքստրոտ նվագեցին, իսկ հոբելյարը, մի քանի գոլորշի արձակող ճաղատների ուղեկցությամբ, պարող զույգերի մոտով անցավ ծխարան: Այդ սենյակում բազկաթոռները սեղմ շրջան էին կազմել, եւ ինչ-որ դիվանագիտական դեմք, հոբելյարի ականջին կռանալով, գաղտնի առաջարկ արեց: Դա, ինչպես հետագայում կտեսնեք, նշանակալի պահ էր: Ի պատասխան առաջարկի՝ Մյունխհաուզենի հոնքերը սողացին վեր, իսկ լուսնաքարով ցուցամատը սահեց ականջի եզրով, ասես փորձելով շոշափել բառերը: Այդ ժամանակ դեմքը, ավելի մոտենալով, մի թիվ ասաց: Մյունխհաուզենը տատանվում էր: Դեմքը մի զրո ավելացրեց թվին: Մյունխհաուզենը դեռ տատանվում էր: Վերջապես, մտորումներից դուրս գալով, նա կկոցած աչքերով նայեց լուսնաքարի առկայծող ծվածիրին եւ ասաց.- Ես մեկուկես հարյուրամյակ առաջ արդեն եղել եմ այդ լայնություններում եւ, ճիշտն ասած, չգիտեմ... դուք հրեցիք ճոճանակը. այն կարծես այո-ի ու ոչ-ի արանքում է: Իհարկե, ես այնպիսի մարդ չեմ, որին կարելի է վախեցնել եւ, այսպես ասած, գցել թամբից, եւ նույնիսկ իմ առաջին ճամփորդության փորձը բարբարոսների երկիր, որի անունը հենց նոր այստեղ հնչեց, սը՛ր, բավականաչափ նյութ է տալիս եւ՛ նրանց, եւ՛ իմ մասին դատելու համար: Ի դեպ, եթե չհաշվենք որոշ մանր հրապարակումներ, այդ նյութը մինչ օրս չհրապարակված է մնում: Իմ ծանոթությունը Ռուսաստանի հետ տեղի է ունեցել դեռեւս իմ հանգուցյալ բարեկամ Եկատերինա Երկրորդի օրոք: Ասենք, շեղվում եմ ուղղակի դրված հարցից:

Բայց դիվանագիտական դեմքը, ճիշտ հաշվարկելով հնարավորությունները, նշան արեց հարեւաններին, եւ նրանք դեմքերին հանդիսավոր ուշադրություն արտահայտեցին.

- Խնդրում ենք:

- Խիստ հետաքրքիր կլիներ իմանալ...

- Ես համակ ուշադրություն եմ:

- Լսում ենք:

Անվաստակներից մեկը, ֆրակի ճեղված պոչը թափ տալով, վազեց դռան մոտ ու ձեռքով արեց պարողներին. ֆոքստրոտը քաշվեց ավելի հեռու սրահ: Բարոնը սկսեց.

- Երբ մեր դիլիժանսը հասավ այդ զարմանալի երկրի սահմանին, բնապատկերը կտրուկ փոխվեց: Սահմանասյան այս կողմը հուռթի ծաղկել էին ծառերը, հակառակ կողմում տարածվում էին ձյունածածկ դաշտեր: Մինչ փոխում էին ձիերը, մենք թեթեւ ճամփորդական թիկնոցները փոխարինեցինք մորթե մուշտակներով: Ուղեփակոցը բարձրացավ եւ... բայց ես չեմ պատմի մեր կառապանի եղջերափողի մեջ սառած երգի մասին, զանգակատնից կախված ձիու դեպքը եւ բազմաթիվ այ դեպքեր,- ցանկացած կիրթ մարդ դրանք ավելի վատ չգիտի, քան իր դրամապանակի պարունակությունը կամ, ասենք, Հայր մերը,- կանգնեցնենք դիլիժանսի անիվները հյուսիսային բարբարոսների մայրաքաղաքի, այն ժամանակվա Պետերբուրգի մուտքի մոտ:

Ձեզ պետք է ասեմ, որ կարծես թե նախորդ դիլիժանսով սուրբ Պետրոսի քաղաք էր ժամանել իր ժամանակին ոչ անհայտ փիլիսոփա ոմն Դենի Դիդրո. նա, իմ կարծիքով, անտանելիագույն ֆիլոսոֆեմաներ թխող էր, դուսպրծուկ՝ քաղքենիներից, ու դրա հետ միասին՝ ակնհայտ մատերիալիստական թեքումով: Ես, ինչպես ձեզ հայտնի է, տանել չէի կարող ու չեմ կարողանում մատերիալիստներին, մարդկանց, որ սիրում են հիշեցնել,- տեղին ու անտեղի,- որ անուշաբույր համպարն իրականում կաշալոտի կղանք է, իսկ ծաղկեփունջը, որի մեջ դեմքն է թաքցնում սքանչելի աղջիկը, իրականում ընդամենը բույսերի պոկոտած սեռական օրգանների խուրձ է: Իսկապես, ո՞ւմ է պետք այս իրականում-ը: Չեմ հասկանում: Բայց՝ ի գործ: Երկուսս էլ՝ Դիդրոն ու ես, ընդունելության արժանացանք պալատում: Չթաքցնեմ. կայսրուհին սկզբում կարծես բարեհաճ էր, պատկերացրեք միայն, այդ անդաստիարակ դուրսպրծուկի հանդեպ. Դիդրոն կարող էր, ուզածդ պահի վարվելակարգը խախտելով, հետուառաջ անել ուղիղ թագակիր զրուցակցի քթի տակ, ընդհատել նրան եւ նույնիսկ վեճով տարված՝ թփթփացնել ծնկին: Եկատերինան բարեգութ ժպիտով լսում էր նրա անհեթեթագույն ծրագրերը՝ Ռուսաստանում հարբեցողությունը վերացնելու, կաշառակերության դեմ պայքարի, մանուֆակտուրաների եւ առեւտրի բարեփոխման ու Սպիտակ ծովի ձկնարդյունահանումը կատարելագործելու մասին: Ես, հետ քաշված, հանգիստ

սպասում էի իմ հնարավորությանն ու ժամին: Ու հենց ամբողջովին թանաքաբծերով պատված այդ մրոտողը թագուհու թույլտվությամբ անցավ ձկնորսության ընդլայնմանը, ես էլ մտադրություններից անցա գործի. թակարդն ընկած մի քանի աղվես առա տեղի որսորդներից եւ իմ կալվածատան հետնաբակի խուլ ու բարձր պատերի ներսում սկսեցի,- հիշո՞ւմ եք, դրանք արդեն հպանցիկ նկարագրել եմ իմ հուշերում,- աղվեսներին իրենց մորթիներից հարկադիր վտարելու փորձերը: Ամեն ինչ ավելի քան լավ էր գնում, ընդ որում՝ գաղտնիքը լիովին պահպանելով: Ու մինչ Դիդրոն փորձում էր ձուկ որսալ, ես, ներկայանալով թագուհուն, որն արդեն հասցրել էր մի քանի անգամ հիասթափվել իր սիրեցյալից, ամենայն հարգանոք խնդրեցի ներկա լինել ցուցադրական փորձերից մեկին, որը կարող էր հեղաշրջում անել մուշտակամորթու արդյունահանման մեջ: Նշանակված օրը եւ ժամին թագուհին ու նրա արքունիքը ժամանեցին ինձ մոտ՝ հետնաբակ. չորս ջլապինդ հայդուկներ ու պոչը սյանը կապած աղվեսը արդեն պատրաստ էին նրանց այցին: Իմ նշանով մտրակները վերուվար արեցին, ու կենդանին, մի երկու անգամ ձիգ տալով, դուրս թռավ իր կաշվից եւ անմիջապես ընկավ հինգերորդ հայդուկի ձեռքը, որը հենց դրան էլ սպասում էր: Ով կարդացել է Դարվինին, ջենթլմեննե՛ր, գիտի միջավայրին կենդանիների զարմանալի հարմարվողականության մասին: Սառնամանիքի մեջ հայտնվելով՝ մերկ աղվեսը անմիջապես սկսեց պատվել մորթու բարակ շերտերով, շերտերը մեր աջքի առաջ վերածվեցին ամբողջական մորթու, եւ շուտով, նոր մուշտակով պատված, խեղճը դադարեց դողալ, բայց ավաղ, զուտ որպեսզի քիչ անց կրկին հայտնվի մտրակների տակ: Եվ այդպես,- պատկերացնո՞ւմ եք,- յոթ մորթի, մինչեւ կենդանին, այսպես ասած, կյանքից էլ դուրս թռավ: Հրամայելով հեռացնել լեշը՝ ես յոթ մորթիները շարեցի ձյան վրա ու խոնարհվելով՝ ասացի. «Յոթ հարյուր տոկոս մաքուր եկամուտ»: Կայսրուհին երկար ծիծաղում էր, եւ ինձ թույլատրվեց համբուրել ձեռքը: Հետո ինձ առաջարկվեց գրավոր զեկույց պատրաստել մորթու արդյունահանման եղանակների ու հեռանկարների մասին, ինչը եւ անհապաղ արվեց: Զեկույցի վրա մակագրելով «հնարամիտ է»՝ նորին մեծությունն իր ձեռամբ բոլոր տեղերում ջնջելով «աղվեսներ, աղվեսների, աղվեսներին» բառերը, կարգադրեց փոխարենը գրել «Մարդ, մարդիկ, մարդկանց» եւ «ուղղմանը հավատալ: Եկատերինա»: Ինքնատիպ մտածողություն է, այնպես չէ՞:

Պատմողի հայացքը սահեց ժպիտների շրջանակով, եւ նա շարունակեց.

- Դրանից հետո պարոն Դիդրոյի քիթը երկարեց, ասես հաճելիագույն պտղունցից մի վայրկյան առաջ մնացած լիներ քթախոտի տուփի կափարիչի տակ՝: Փարիզցի իմաստունին, որ վարժվել էր մտերմավարության եւ՛ ճշմարտության, եւ՛ թագուհու հետ, մնաց միայն ճշմարտությունը: Այդ կարգի նորելուկին միանգամայն հարմար հասարակություն, հա՛-հա՛: Խեղճը նույնիսկ տուն կորչելու հնար չուներ՝ ստիպված էր ինչ-որ հարյուր լիվրով վաճառել գրադարանը, որը գնեց կայսրուհին: Հաջորդ իսկ օրը, ներկայանալով ընդունելության, ես նորին մեծությանը մատուցեցի իմ ճամփորդությունների եւ արկածների նկարագրությունն ամփոփող տետրը: Կարդալով՝ նա ասաց. «Սա գրադարաններ արժի»: Ինձ կալվածքներ ու հարյուր հազար հոգի շնորհվեց: Ցանկանալով կտրվել պալատական քծնանքից եւ ավելի նրբանկատ որոշ հանգամանքներից, որոնց մասին կլռեմ, նկատելով միայն, որ ինձ այնքան էլ դուր չեն գալիս գեր կանայք, մեկնեցի տեսնելու իմ նոր տիրույթները: Տարօրինակ է, ասեմ ձեզ, ռուսական բնապատկերը. դաշտի մեջտեղը, ինչպես սնկերը՝ գլխիկների տակ, կիսատ-պռատ ծածկերով ինչ-որ հավաբների կուտակ, խրճիթ ներսուդուրս են անում ծխնելույզով, ծխի հետ. ջրհորների գլխին, անհասկանալի է՝ ինչի համար, երկար ուղեփակոցներ, ընդ որում, հաճախ ճանապարհներից հեռու. բաղնիքներն, ի տարբերություն փոքրիկ հյուղակների, յոթնահարկ են, ու հարկերը նրանց մոտ կոչվում են դարակներ: Օտար հեռուներում հաճախ էի հիշում իմ հարազատ Բաղենվերդերը. նրա կղմինդրե տանիքների սրածայր ակսան-սիրկոնֆլեքսները, կրածածկ պատերին սեւին տվող նշանաբանների հինավուրց, կիսամաշ տառերը: Կարոտախտն ինձ ստիպում էր, միայն թե ժամանակ սպանեի, հրացանն ուսիս անհանգիստ դեգերել ճահիճների ճիմաթմբերով ու եղեգնուտներով, որսի տոպրակս երբեք դատարկ չէր լինում, եւ շուտով որսորդի իմ փառքը,- որոշ բաներ հայտնվել են իմ հուշերում, բայց չարժի կրկնել այն, ինչն անգիր գիտի ցանկացած աշակերտ,- Սպիտակ ջրերից հասավ Սեւ ջրեր: Բայց շուտով կտցարներին ու կաքավներին փոխարինելու եկան թուրքերը: Այո՛, այո՛, թուրքերի հետ պատերազմ հայտարարվեց, ու ես ստիպված էի, որսորդական շտուցերս պատից կախելով՝ ահա այս ձեռքն առնել, պատկերավոր ասած, երկու հարյուր հազար հրացան, չհաշված ֆելդմարշալի մականը, որից, նկատի ունենալով մեր նախկին հարաբերությունները թագուհու հետ, հնարավոր չհամարեցի հրաժարվել: Առաջին իսկ ճակատամարտից հետո մենք ուրիշ ոչինչ չէինք տեսնում թշնամու թիկունքից բացի: Դունայի ճակատամարտում ես հազար,

ո՛չ, երկու հազար թնդանոթ գրավեցի, այնքան թնդանոթ, որ չգիտեինք ինչ անենք. մարտադաշտերին դրանցից կրակում էինք ճնճղուկների վրա: Այդպիսի դաշտերից մեկի ժամանակ ինձ կանչեցին մայրաքաղաք՝ գլխավոր ռազմական, որտեղ պետք է պարգեւատրեին Վասիլի Երանելու շքանշանով՝ տասնչորս ադամանդակուռ ոսկե խաչ: Ուղեսյուներն առկայծում էին աչքիս առաջ, ավելի արագ, քան երկանվիս անվաճաղերը, որոնց երբեմն կռանում ու նայում էի: Ծխացող սռնիներով մտնելով մայրաքաղաք՝ կարգադրեցի դանդաղեցնել ձիերի վազքն ու եռանկյունի գլխարկս բարձրացնելով՝ ինձ ընդառաջ ելած բազմությունների միջով շարժվեցի դեպի պալատ: Աջ ու ձախ ողջունելիս նկատեցի, որ բոլոր ռուսներն առանց գլխարկի են. սկզբում դա ինձ հաղթողի հանդեպ զգացումների բնական արտահայտություն թվաց, բայց հետո էլ, երբ ընդունելության ու մեծարանքի արարողությունն ավարտվեց, այդ մարդիկ, չնայած ծովից փչող սառը քամուն, շարունակում էին գլխաբաց մնալ: Դա ինձ մի փոքր տարօրինակ թվաց, բայց հարցուփորձի ժամանակ չկար, նորից սկսեցին առկայծել վերստերը, եւ շուտով տեսա իմ բանակների կանոնավոր շարասյուները, որ զգաստ կանգնել էին առաջնորդին դիմավորելու համար: Ավելի մոտենալով՝ նկատեցի, որ նրանք էլ են անգլխարկ: «Գլխարկ դնել»,- հրամայեցի ես, եւ, հազա՛ր սատանա, հրամանը չկատարվեց: «Սա ի՞նչ է նշանակում»,- կատաղած նայեցի համհարզիս: «Սա նշանակում է,- դողացող մատները բաց գլխին տարավ նա,- գլխարկահար ենք արել թշնամուն, ձե՛րդ գերազան...»:

Հենց նույն գիշեր անսպասելի միտքն արթնացրեց ինձ ֆելդմարշալական վրանի փեշի տակ: Ես վեր կացա, հագնվեցի եւ համհարզներիս չարթնացնելով՝ դուրս եկա առաջնագծի պահակետերը. երկու կարճ բառ՝ նշանաբան ու պատասխան, ինձ համար ճանապարհ բացեցին դեպի թուրքական ճամբար: Թուրքերը դեռ չէին հասցրել դուրս գալ իրենց ծածկած գլխարկների տակից, եւ ես անարգել հասա Կոստանդնուպոլսի դարպասներին, բայց այդտեղ էլ, քանի որ գլխարկներից շատերը նշանակետից հեռուն էին թռել, ողջ քաղաքը մինչեւ առմուտքերը թաղված էր գլխարկների կարկտի տակ: Հասնելով սուլթանի պալատ՝ անունս տվի եւ անմիջպես էլ ունկնդրություն ստացա: Պլանս շատ պարզ էր. գնել զորքերը, բնակիչներին, փողոցներն ու ճանապարհները ծածկած բոլոր գլխարկները: Սուլթան Մահմուդն ինքն էլ չգիտեր ինչպես ազատվի ձյան պես գլխին թափված գլխարկներից, եւ ինձ հաջողվեց ջրի գնով առնել դրանք: Այդ ժամանակ աշունն արդեն ձմեռ էր դարձել, եւ Ռուսաստանի

բնակչությունը, անգլխարկ մնալով, սառչում էր, մրսում, տրտնջում՝ սպառնալով խռովություններով ու նոր խառնակ ժամանակներով: Կառավարությունը չէր կարող հենվել նաեւ ազնվականության վրա. սենատորների ճաղատ գլուխները սառչում էին առաջին հերթին, եւ գահի հանդեպ ջերմ սերը ակհայտորեն օրեցօր պաղում էր: Այդ ժամանակ ես իմ գլխարկները բարձեցի նավերն ու քարավանները եւ չեզոք երկրներով ուղարկեցի բյուրագլուխ Ռուսաստան. ապրանքը շատ արագ էր վաճառվում, եւ որքան իջնում էր ջերմաչափերի սնդիկը, այնքան բարձրանում գինը: Ծուտով միլիոնավոր գլխարկներ վերադարձան իրենց գլուխներին, եւ ես ամենահարուստ մարդը դարձա պատերազմից ու ռազմատուգանքներից սնանկացած Թուրքիայում: Այդ ընթացքում հասցրել էի մտերմանալ սուլթան Մահմուդի հետ ու որոշեցի կապիտալներս ներդնել երկրի վերականգնման գործում: Սակայն պալատական խարդավանքները սուլթանին ստիպեցին ինձ ու հարեմի հետ փոխել նստավայրը. մենք տեղափոխվեցինք Բաղդադ՝ հարստացած եթե ոչ ոսկով ու արծաթով, ապա հեքիաթներով ու ավանդություններով: Ու ես նորից կարոտեցի իմ հեռավոր, թող որ խեղճ, բայց սրտիս հարազատ Բաղենվերդերը: Երբ թագակիր բարեկամիս խնդրեցի ինձ հայրենիք թողնել, սուլթանը, արցունք թափելով մորուքի մեջ, ասաց, որ չի դիմանա բաժանմանը: Այդ ժամանակ, ցանկանալով հնարավորինս կրճատել առաջիկա բաժանման ժամանակը, որովհետեւ այլեւս չէի կարող ապրել առանց գոնե երբեմն այցելելու պապերիս ու նախապապերիս տոհմական բույնը, որոշեցի Բաղենվերդերն ու Բաղդադը իրար կպել ռելսերի պողպատե զուգահեռներով: Այդպես ծնվեց Բաղդադի երկաթուղու նախագիծը, որը, ավաղ, երկար էր սպասելու իր իրագործմանը: Համարյա սկսել էինք աշխատանքը, բայց...

Բարոնը հանկարծ ընդհատեց պատմությունն ու լռեց՝ հայացքն աջ ցուցամատի լուսնաքարի թրթռացող աչքին:

- Բայց ինչո՞ւ կանգնեցիք կեսճանապարհին,- պոկվեց ինչ-որ մեկի շրթունքներից:

- Որովհետեւ,- ձայնի կողմը դարձավ Մյունխհաուզենը,- այդ ժամանակ երկաթուղին դեռ չէր հայտնագործվել: Ընդամենը:

Թեթեւ ծիծաղ անցավ ներկաների շրջանով: Սակայն բարոնը պահպանեց լրջությունը: Կռանալով դիվանագիտական դեմքի կողմը՝ ծնկով հրեց դեմքին եւ ասաց.

- Տրվեցինք հուշերին: Համաձայն եմ: Գնում եմ: Ինչպես է ասում նրանց առաՀՁը. «Երբ ռուսը մահամերձ է, գերմանացին իրեն միանգա-

մայն լավ է զգում»: Հա՛-հա՛...,- եւ դառնալով բոլոր կողմերից ընդառաջ ձգված ականջներին՝ ավելացրեց:- Օ՛, մեր հերալդիկ բաղը երբեք չի ծալել թեւերը:

Հետո հաջորդեցին ձեռքսեղմումները, ոտքերի քստքստոցը, իսկ հաջորդ պահին բարապանը Սփլենդիդ-հոթելի պտտվող հայելիների մոտ գոչում էր.

- Ավտո բարոն ֆոն Մյունխհուզենին:

Շիկացին դռները, շչակը պատռեց օդը, եւ կաշվե բարձերը, մեղմ ճոճվելով, լողացին հանդիսավոր, աստղերով ու փողոցային լապտերներով լուսավորված գիշերվա հեռուն:

Գլուխ IV
In partes infidelium

Օֆերտան ու ակցեպտան գործնական ձեւակերպում ստացան: Բարոնը մեկնում էր Խորհուրդների երկիր որպես թղթակից երկու-երեք առավել հայտնի թերթերի, որոնք յոթանիշ օրինակներով քաղաքական հավատամք էին մատակարարում Միացյալ Կայսրության ամենահեռավոր միջօրեականները: Ակցեպտան հնարավորինս խիստ ինկոգնիտո էր պահանջում, ինչի հետեւանքով բարոն ֆոն Մյունխհաուզենին տրամադրված վագոնի պատուհանների տակ սեւին տվող ցիլինդրների քանակը առավելագույնս սահմանափակ էր, իսկ կողակներն ու լրագրողները ընդհանրապես չեղարկվել էին: Մեկնելու ազդանշանից մեկ րոպե առաջ բարոնը հայտնվեց վագոնի հարթակին. գլխին կլոր, մաշված, մոխրագույն կեպին, լայնափեշ վերարկուի տակից պսպղում էր կաշվե բաճկոնը, ոտքերին՝ ծալքավոր սապոգներ: Ձգեստը ցիլինդրների հավանության ճոճք հարուցեց, եւ միայն Նորթումբերլենդի եպիսկոպոսը, որ եկել էր գուցե վերջին անգամ բարոնին տեսնելու, հառաչեց եւ ասաց. «In partes infidelium cum Deo. Amen» *[Աստուծով՝ դեպի օտար ափեր: Ամեն - լատ.]:*

Դիվանագիտական դեմքը, բարձրանալով վագոնի աստիճանին, նշան արեց մեկնողին. նա կռացավ:

- Թանկագին բարո՛ն, մի կատակեք նամակների գրաքննության հետ, plague don't *[Մի ծանծրացրեք - անգլ.]:* Ուրիշի անունով ստորագրեք, ասենք...

Բարոնը գլխով արեց.

- Հասկանում եմ: Ձինովեւ կամ...

Բայց գնացքը, թափարգելները կրճտացնելով, շարժվեց: Դիվանագիտական դեմքին գրկեցին թեւատակերից, գլխարկները գլուխներից վեր բարձրացան, փակվեց վարագույրը հեռուն լողացող պատուհանի հետ, եւ չասված բառերը չասողի հետ էլ մեկնեցին:

Դուվր: Լա-Մանշ: Եվ կրկին գոց վարագույրը՝ գվվացող կառամատույցների մոտով՝ հաշվելով կիլոմետրը կիլոմետրի ետեւից:

Ողջ մայրցամաքում միայն մի մարդ գիտեր օրն ու ժամը, երբ Մյունխհաուզենը անցնելու էր Բեռլինով: Դա Էռնստ Ունդինգն էր: Բայց Լոնդոնից նրան ուղարկված նամակը միանգամից չգտավ հասցեատիրոջը: Սոնետների պսակը, որ այդ ժամանակ գրում էր պոետը, փշեպսակի նման խրվել էր ուղեղն ու վճարում էր ոչ թե փֆենինգներով, այլ անքնությամբ: Եվ Ունդինգը, քաղցի հետ երկար վիճելուց հետո ստիպված էր ընդունել «Վերիտաս» կոսմետիկական ֆիրմայի առաջարկը՝ որպես ֆիրմայի գործակալ շրջել Գերմանիայի քաղաքներով ու ավաններով: Նամակը մի քանի օր հետապնդում էր նրան՝ ծանրանալով դրոշմակնիքներով, մինչեւ որ հասցեատիրոջը հասավ Ինստերբուրգ քաղաքում՝ Քյոնիգսբերգ - Էյտկունեն գծի վրա, սահմանից երեսուն կիլոմետրից մի քիչ ավելի: Նամակը ճիշտ ժամանակին էր հասել: Ուղեցույցի թվերը համադրելով նամակի տվյալներին՝ Ունդինգը հեշտությամբ հաշվարկեց, որ Բեռլինի գնացքը, որով պետք է ժամաներ Մյունխհաուզենը, այդ օրը երեկոյան 9:30-ին անցնելու է Ինստերբուրգով: Գրպանի ժամացույցը ցույց էր տալիս 8:50: Վախենալով, որ կուշանա հանդիպումից, Ունդինգը արագ հագնվեց: Նշանակված ժամին բեռլինյան ճեպընթացը մոտեցավ կառամատույցին: Ունդինգն արագ քայլեց գնացքի երկայնքով՝ լոկոմոտիվից դեպի պոչը ու հետ՝ բոլոր պատուհաններից նայելով ներս. Մյունխհաուզենը չկար: Մի րոպեից գնացքը ազատեց գծերը: Տարակուսած Ունդինգը գնաց կայարանի բյուրո. իր սպասա՞ծ գնացքն էր ու ե՞րբ է հաջորդը: Բյուրոն պատասխանեց. մյուսը, հաջորդ հեռընթաց գնացքը դեպի սահման՝ երկու ժամ ու մի քանի րոպեից է: Ունդինգը տատանվում էր. գործերը ստիպում էին ժամը տասի գնացքով մեկնել Քյոնիգսբերգ, տոմսն արդեն գրպանում էր: Մատների արանքում պտտելով խավաթղթե քառակուսին՝ դակել տվեց տոմսարկղում ու կայարանի շենքում նստելով նստարանին, սկսեց աչքերով հետեւել պատի ժամացույցի ժամի սլաքի պտույտին: Հստակ պատկերացնում էր մոտեցող հանդիպումը: Վագոնի պատուհանը

կիջնի, վրայից՝ Սյունխհաուզենի պարզած ձեռքը՝ երկար ոսկրոտ մատները՝ ցուցամատի լուսնաքարի ցոլքով, ափերը կհանդիպեն, եւ նա՝ Ունդինգը կասի, որ եթե աշխարհում չլիներ էլ մի ուրիշ իրականություն, ահա այս ձեռքսեղմումից բացի, ապա... Պատից այն կողմ դղրդոց լսվեց. ճեպընթացը: Ունդինգը, մտքերը թափ տալով, նետվեց դեպի կառամատույցի մուտքը. գնացքի մոտեցող լույսեր, արգելակների ֆշշոց, ու կրկին՝ վագոնների երկայնքով, մինչեւ վերջին վագոնի վերջին պատից կարմիր նռնաքարի պես ցցված լապտերը. պատուհաններից ոչ մեկը չիջավ, ոչ մեկի ձայնը չկանչեց, ոչ մեկի ձեռքը չպարզվեց նրա ձեռքին ընդառաջ: Պղինձը խփվեց պղնձին, ու նորից՝ մերկ գծեր: Պոետ Ունդինգը երկար կանգնել էր գիշերային կառամատույցին ու մտարկում էր իրավիճակը. միանգամայն պարզ էր՝ Սյունխհաուզենը փոխել է երթուղին:

Առավոտյան, Քյոնիգսբերգի հյուրանոցներից մեկի էժանագին համարում նստած Ունդինգը բանաստեղծություններ էր սեւագրում, ուր խոսվում էր կյանքով բեռնված երկար, քառասուն-հիսուն կյանք-վագոնով գնացքի մասին. տարիները, կրճտոցով իրար քսվելով, հաղթահարում են կտրուկ վերելքներն ու շրջադարձերը. անտարբեր ուղեսլաքները փոխում են ուղիները, հորոսկոպների արյունոտ ու զմրուխտյա աստղերը կործանում ու հաջողություն են գուշակում, մինչեւ որ աղետը, տարիների բոլոր կցվածքները պայթեցնելով, դեսուդեն չնետի նրանց իրարից, բզկտելով ու իմաստազրկելով՝ հողաթմբով ներքեւ:

Դրանից հետո, եթե օգտվելու լինենք Ունդինգի պատկերներից, պտտվեցին տարվա օրերը՝ թափարգելները կրճտացնելով, սկսեց մոտենալ հաջորդը, կնքված դռան վրա օրացուցային նշումով՝ «1923», երբ աշխարհի բոլոր թերթերի սյունակներից անհետացած Սյունխհաուզենի անունը կրկին հայտնվեց Անգլիայի եւ Ամերիկայի պաշտոնաթերթերի առաջին էջերից: Դրանից նրանց հսկայական տպաքանակներն ահռելիացան: Ասենք, ոչ միայն տպաքանակները. բարոն Սյունխհաուզենի թղթակցությունները գնող մարդկանց աչքերն էլ մշտապես լայնանում էին, ասես այդ լուրերում ատրոպին լիներ: Եվ միայն մի զույգ աչքեր, թարթիչների փշերը ցցած, կոպերի կարմիր եզրագծերի արանքում, հանդիպելով Սյունխհաուզենի ստորագրությանը՝ կծկում էին բիբերն ու ցնցում հոնքը: Ավելորդ է ասել, թե ումն էին այդ երկու կասկածող աչքերը:

Գլուխ V
Սատանան՝ կառքով

Այդ ընթացքում մյունխհաուզենապատման տողերը, ինչպես բորակի թելերը կրակն են տանում, բոցկլտացող անունը նորից ու նորից մի մոմից նետում էին մյուսին, եւ շուտով համաշխարհային մամուլը փայլփլուն դրասանգների խառնիխուռն արծաթաթելով փաթաթված ծնունդյան տոնածառի պես դեղին լեզվակներ հագավ: Էլի մի շաբաթ, եւս մեկը, ամիս՝ եւ թերթերի էջերը սկսեցին նեղ գալ բարոնի անվան համար. թղթե շրջանակներից դուրս թռչելով՝ այն տարածվեց ազդագրերի սյուների վրա եւ ճոճվում էր լուսային գովազդի տառերով՝ ասֆալտին, աղյուսե պատերին եւ ամպերի հարթ հատակներին: Ազդագրերն ազդարարում էին. հենց նոր Խորհուրդների երկրից վերադարձած բարոն ֆոն Մյունխհաուզենը իր ուղեւորության մասին հաշվետվություն կներկայացնի Լոնդոնի Թագավորական ընկերության մեծ դահլիճում: Բազմություններ էին պաշարում տոմսարկղերը, բայց Պիկադիլիի հինավուրց շենքի ներսում հայտնվեցին միայն ընտրյալները:

Ազդագրերի խոստացած ժամին Մյունխհաուզենը հայտնվեց ամբիոնի վրա. բերանը դեռ անվրդով սեղմված էր, բայց սուր ադամախնձորը, օսլայած օձիքի երկու անկյունակների արանքում, թեթեւակի շարժվում էր՝ շամպայնի ճնշումը դժվարությամբ զսպող խցանի պես: Լեփ-լեցուն դահլիճի ծափերի տեւական որոտը բանախոսին ստիպեց կախել գլուխն ու սպասել: Վերջապես ծափերը լռեցին: Բանախոսը հայեց շրջանակը. աջից՝ բաժակ ու ջրով գրաֆին, ձախից՝ էկրան կախարդական լապտերի համար, էկրանին հենած լաքապատ ցուցափայտ, որը չափից դուրս երկարած մարշալական մական էր հիշեցնում: Եվ բոլոր կողմերից՝ աջից, ձախից ու դիմացից բառերին ընդառաջ՝ հարյուր հարյուրավոր ականջախեցիներ մղվեցին. նույնիսկ մարմարե Նյուտոնն ու Կուկը, իրենց խորշերից դուրս նայելով, կարծես նույնպես պատրաստվում էին լսել զեկուցումը: Հենց նրանց էլ բարոն Հիերոնիմուս ֆոն Մյունխհաուզենն ուղղեց իր առաջին բառերը:

1

- Եթե ժամանակին նավապետ Կուկը, որը ուղեւորվել էր հայտնագործելու վայրենիներին, կեր դարձավ նրանց, ապա, ակնհայտորեն, իմ առագաստներն ավելի ողորմած քամիների տակ ընկան. ինչպես տեսնում եք,

տիկնա՛յք եւ պարոնա՛յք, ես ողջ եւ առողջ եմ (թեթեւ շարժում դահլիճում): Մեծ բրիտանացի մաթեմատիկոսը,- ձեռքը պարզեց Նյուտոնով խորշին,- հետեւելով ճյուղից պոկված խնձորի անկմանը՝ հաշվարկեց «երկիր» կոչվող գնդակերպի շարժումը, այդ ահռելի խնձորի, որը նույնպես ժամանակին պոկվել էր արեւից: Մոսկվայի գիշերային խաչմերուկներում լսելով բոլորի ու յուրաքանչյուրի երգած հեղափոխական երգը «խնձորիկի» մասին՝ ես ամեն անգամ փորձում էի հասկանալ, թե, ի վերջո, այն ուր է գլորվելու. Ճշտեմ. ի վերջո գլորվեց:

Բայց դառնանք փաստերին: Ուղեւորվելով մի երկիր, որտեղ բոլորը՝ ժողկոմից մինչեւ խոհարարուհի, երկիր են կառավարում, ես որոշեցի ոչ մի կերպ չհանդիպել ռուսական մաքսատան հետ. ոչ միայն գլխիս մեջ, այլեւ բաճկոնիս գրպանում տանում էի բառեր, որոնք նախատեսված չէին զննության համար: Մինչեւ Էյտկունեն ոչինչ չձեռնարկեցի: Բայց երբ իմ վագոնն անցնելով սահմանակից փոքրիկ պետությունիկը՝ պատրաստվում էր թափարգելվել ՌԽՖՍՀ-ի սահմանին, որոշեցի ուղեգծերից տեղափոխվել հետագծեր: Ինչպես ձեզ հավանաբար հայտնի է, տիկնա՛յք եւ պարոնա՛յք, երիտասարդ տարիքում ես կարողանում էի ոչ միայն վայրի ձիերին, այլեւ՝ հրետագնդեր սանձել: Գրպաններիս պարունակությունը չհաշված՝ ոչ մի ուղեբեռ չունեի, եւ արագ հասա իր փողաբերանները Հանրապետությունների միությանն ուղղած սահմանային ամրոցներից մեկը. «պշտշ»-ով սկսվող ազգանունով սիրալիր պարետը թղթերից տեղեկանալով, թե ես ով եմ, համաձայնեց լիովին իմ տրամադրության տակ դնել տասնութ դյույմանոց պողպատե ճամպրուկը: Մենք ուղղվեցինք դեպի բետոնապատ հարթակը, որտեղ իր երկար, ուղղաձիգ կնճիթն էր վեր հառել պողպատե հրեշը: Պարետի հրամանով հրետանային համարները սկսեցին ինձ պատրաստել ճանապարհվելու. հրետանային փակաղակը բացվեց, մոտ գլորվեց կոնաձեւ ճամպրուկով սայլակը, պողպատը զնգաց պողպատին, եւ պարետը պատվի առավ. «Ուղեբեռը բարձված է, ուղեւորին խնդրում ենք զբաղեցնել իր տեղը»: Հրանոթն իջեցրեց կնճիթը, փղի պես, որին երեխաները վանդակի ճաղերի արանքից թխվածք են տալիս, ես թռա ծայրին՝ ուշադիր նայելով փողի մեջ. հանկարծ բաց չթողնեմ անհրաժեշտ պահը: Հետո երկաթով լցված անցքը նորից սողաց վեր, ու Պշտշն հրամայեց. «Փողակը՝ զրո-զրո-զրո, ՌԽՖՍՀ-ի վրա՝ պարոն բարոնով... կրա՛կ»: Եվ... աչքերս փակելով՝ թռա: Մի՞թե արդեն: Սակայն, բացելով աչքերս, տեսա, որ նստած եմ երկաթե փղի տակ, իսկ շուրջս Պշտշների նույն ժպտացող մռութներն են: Այո՛, միանգամից պետք է խոստո-

վանեմ, որ տեխնիկային չես գերազանցի. նույնիսկ ֆանտազմները չեն անցնի նրան. ժամանակակից հրետագունդը սանձելն այնքան էլ հեշտ չէ, որքան առաջվա ծանրաշարժ թուջե ռումբը: Եվ միայն երկու, խոստովանում եմ, անհաջող փորձից հետո ինձ վերջապես հաջողվեց սանձել գվացող պողպատը: Տասը վայրկյանի չափ օդը սուլում էր ականջներիս մեջ՝ փորձելով ինձ ցած նետել արկից. բայց ես փորձված հեծելակ եմ ու բաց չէի թողնում ծնկներիս արանքում սեղմված նրա շիկացած կլոր կողերը, մինչեւ որ գետնին խփվելը չդադարեցրեց թռիչքը: Շուրջս նայելով՝ տեսա, որ թռիչքը հետագծի ծայրով բարեբախտաբար խփվել է ճահճում կանգնած խոտի դեզին. ճիշտ է, խոտը վերածվել էր մամլած փերթերի, բայց փերթերը զսպակների պես մեղմել էին հարվածը՝ ինձ պահպանելով ոչ միայն կործանումից, այլեւ վնասվածքներից:

Եվ այսպես, սահմանը ետեւում է: Վեր թռչելով՝ հայացքս պտտեցի հորիզոնով: Հարթ, խոպան դաշտ: Ամպերի ցածր առաստաղ՝ միայն հեռվում հենված տասնյակ ծխաքուլաների վրա: «Գյուղ է»,- մտածեցի ես եւ ուղղվեցի ծխի կողմը: Շուտով գետնից դուրս պրծան նաեւ տները: Մարդու ձայնի տարածության մոտենալով՝ գյուղի ծայրին տնից տուն անցնող մարդկային կերպարանքներ տեսա, բայց չփորձեցի կանչել: Արեւն ինձ նման իր հետագիծն անելով՝ ընկավ գետնին. խուլ գյուղակում լույսեր վառվեցին, խանձված մսի հոտ եկավ, ինձ ընդառաջ սողացին սեւ երկար ստվերներ, ու ես, ակամա դանդաղեցնելով քայլս, հարցրի ինձ՝ պե՞տք է, որ կերակուրը շտապի ընթրիքի: Դժվար վիճակ էր. չկա մեկը, որ հարց տաս, մեկը, որի հետ խորհրդակցես: Մեկ ուրիշն իմ տեղում կշփոթվեր. բայց ես խորհրդի ետեւից չէի եկել Խորհուրդների երկիր եւ մի րոպե մտորելուց հետո արդեն գիտեի՝ ինչ անեմ:

Բանն այն է, որ սապոգներս կարել էին հին որսորդական սապոգներից, որոնք որոշ առանձնահատկություններ ունեին: Շատ տարիներ առաջ, երբ կորցրի իմ սիրելի շանը, ինչի մասին մի անգամ պատմել եմ իմ հուշերում, որոշեցի սիրտս չծանրացնել նոր կապվածություններով, որոնք կորստի նոր ցավ են բերում, ու սկսեցի առանց շան որս անել: Չէ՞ որ շանը հաջողությամբ կարող են փոխարինել լավ վարժեցված սապոգները, այո՛, այո՛,- ու քանի որ վախճանված շան մասին հուշերի ունայնությանը գումարվել էր նաեւ հին հոդացավը, որը խանգարում էր քայլել ճահիճներով, ապա ես, համբերատար համառությամբ, որ հատուկ է Մյունխհաուզենների տոհմի բոլոր ներկայացուցիչներին, ձեռնամուխ եղա որսորդական սապոգներիս վարժեցմանը: Ի վերջո, ինձ հաջողվեց հասնել

բարեհաջող արդյունքների, եւ իմ միայնակ զբոսանքները՝ հրացանն ուսիս, սովորաբար այսպես էին կատարվում. հասնելով ճահճուտին, որտեղ որս կար, հանում էի սապոգներս ու քթերն անհրաժեշտ ուղղությամբ դնելով՝ հրամայում. «Շե՛րշ: Շե՛րշ»: Ու սապոգներս, ճիմաթմբից ճիմաթումբ, քայլում էին՝ կաշին շրշյունով եղեգներին քսելով, ու վախեցնում թռչուններին: Ինձ մնում էր միայն մի չոր տեղ նստած՝ քաշել հրահանները: Որսն ընկնում էր ճտքի մեջ: Դրանից հետո՝ կարճ «ապորտ», ու վարժեցված սապոգները վերադառնում էին, որպեսզի կաշվե փողքերը հնազանդ դնեն տիրոջ ոտքերի տակ:

Այդպես էլ հիմա. սապոգները ոտքիցս քաշելով՝ քթերով դրեցի դեպի գյուղը, ու՝ շե՛րշ: Սապոգները, որ վագոնում գտնվելու մի քանի օրվա ընթացքում մի քիչ հետ էին սովորել, արագ քայլեցին լույսերին ընդառաջ: Քայլում էին՝ հանգուցավոր ականջները բարձրացրած՝ փորձառու ու զգույշ լրտեսների պես մեկ ձգվելով, մեկ տապելով իրենց ծալքերի վրա: Ես նրանց հայացքով ուղեկցեցի մինչեւ գյուղ: Բայց այստեղ կատարվեց անկանխատեսելին. մի խումբ մարդիկ, իրենց վրա եկող սապոգները տեսնելով, սարսափած ճչալով ցիրուցան եղան: Անսպասելի միտք անցավ գլխովս. չէ՞ որ սնապաշտների ու անգետների երկրում եմ, իսկ եթե սապոգներին հաջողվի սարսա՞փ տարածել այս գյուղում եւ մյուսում, եւ մյուսում, որ դրանից հետո էլ,- ու մենք անցնենք,- մի զույգ սապոգ ու ես,- մեր առջեւից քշելով մութ գեղջուկների՝ սարսափով բռնված ամբոխները, որոնք, ճանապարհին սրբելով քաղաքները, հին քիմերական սարսափով վարակելով զանգվածներն ու բազում բազմություններ, մաքրելով խրճիթներն ու պալատները՝ հորդեն Ուրալից այն կողմ: Այդ ժամանակ, ներբանների հանգուցավոր ականջները կրունկներիս քաշելով, որեւէ Կրասնոկոկշայսկից՝ ռադիոգիր կհղեմ. «Վերցրի Ռուսաստանը մերկ ոտքերով: Օժանդակ ուժեր պետք չեն»: Եվ, հաջողությունը զարգացնելով, վեր կացա տեղից՝ պատրաստ ռազմական հնարքը տանել մինչեւ վերջ, թեկուզեւ կրունկներիս կոշտուկների գնով: Բայց իրավիճակը հանկարծ կտրուկ փոխվեց. նահանջող գյուղը անսպասելիորեն փշաքաղվելով եղաններով ու ցցափայտերով, վայրի, հռնդացող հորդայով հակահարձակման անցավ սապոգներիս դեմ: Նրանք այն է ուզում էին քթերը հետ շրջել, բայց արդեն ուշ էր: Մռնչացող հորդան, հարյուրավոր ձեռքերը խաչած ու եղանները թափահարելով, փակեց շրջանը: Հետո ամեն ինչ լռեց, եւ ես չկարողացա տեսնել, թե ինչ է կատարվում մարդկային շրջանի ներսում: Հնարավորինս մոտենալով գերի ընկած սապոգներիս՝ մի քանի վի-

ճող ձայներ լսեցի, որոնք, սակայն, շուտով տեղի զիջեցին ինչ-որ ծորուն, ծերունական խոսքի: Ականջ դնելով՝ բոլորը ցրվեցին՝ դեպքի վայրում թողնելով միայն ծերունուն, որը, տրեխները հանելով, անշտապ ոտքերին քաշեց իմ սապոգները: Սպասելով ծերունին հագնի, բարձր խոտերի մեջ պահ մտած՝ նախ կամացուկ սուլեցի (սապոգներս, ձայնս լսելով, դարձան իմ կողմը), հետո գոչեցի «ապորտ»: Ծերունին ուզում էր քթերը դարձնել դեպի խրճիթը, բայց ի՛նչ դարձնել, նրա զառամ ոտքերը բռնելով՝ սապոգներս քայլեցին հակառակ ուղղությամբ: Ծերունին, թուփ ու խոտերից կառչելով, ապարդյուն փորձում էր կանգնեցնել նրանց. բայց իմ հավատարիմ սապոգները շարունակում էին իրենց հագած ծերունու հետ քայլել իրենց տիրոջ մոտ: Խեղճը տեսնելով, որ անկարող է հաղթել շատ ուժեղ թշնամուն, փորձեց մեջքով ընկնել գետին, բայց սապոգները, նրա ծնկները ծալելով, շարունակում էին մարմինը քաշել գետնի վրայով, մինչեւ որ հափշտակիչը հայտնվեց իմ առաջ: Եվ ես հավատում եմ, տիկնա՛յք եւ պարոնա՛յք, որ վաղ թե ուշ ողջ ազգայնացվածը կվերադառնա իր տերերին, ինչպես իմ սապոգները վերադարձան: Սա անմիջապես ասացի նաեւ պարտված ծերուկին՝ ավելացնելով, որ ամոթ է ճերմակած մարդուն՝ Աստծուն փոխանակել սոցիալիզմով: Սրբազան սարսափով բռնված ծերունին դուրս պրծավ սապոգներից ու փաթաթանները կորցնելով՝ վազեց գյուղ: Շուտով գյուղի ողջ բնակչությունը, մինչեւ գետին խոնարհվելով, եկեղեցու զանգահարության ներքո, խաչերթով, աղ ու հացով դուրս եկավ ինձ ընդառաջ: Ես ընդունեցի բարի գեղջուկների հրավերն ու գիշերակացի մնացի նրանց գյուղում: Քանի դեռ քնած էի, լուրն իմ մասին, առանց աչք կպցնելու, շրջում էր հարակից գյուղերով: Առավոտյան պատուհանիս տակ բողոքավորների ու խնդրարկուների մի հսկա ամբոխ էր հավաքվել: Ես լսեցի բոլորի խնդրանքներն ու ոչ մեկին չմերժեցի: Օրինակ, մի գյուղակի բնակիչները դիմել էին ինձ՝ լուծելու իրենց հին վեճը, որ գյուղը բաժանել էր երկու թշնամի կողմի: Բանն այն է, որ գյուղի մի կեսը սայլապանություն էր անում, մյուսը՝ զբաղվում երկրագործությամբ: Բայց քաղաքացիական պատերազմը կրճատել էր ձիերի թիվը: Ձիերը սայլերին լծես՝ դու ես գութան քաշելու, կապես գութաններին՝ սայլերը դու ես ձգելու: Հիշողություններն օգնեցին ինձ լուծելու այդ դժվար հանգույցը. հրամայեցի սղոց բերել, ու ձիերն իրար ետեւից սղոցվեցին երկու մասի, ինչի շնորհիվ նրանց թիվը կրկնապատկվեց: Առջեւի ոտքերը լծեցին սայլերին, ետեւի ոտքերը՝ գութաններին, ու գործը տեղից շարժվեց: Այդպես էի պայքարում անձիության դեմ, եւ եթե Խորհուրդների կառա-

վարությունը ժողովրդական տնտեսության ինչպես այս, այնպես էլ այլ ոլորտներում ընդուներ իմ տեսակետը, կխուսափեր երկար տարիների քայքայումից ու աղքատացումից:

(Դահլիճով՝ ծափահարությունների շրշյուն):

Գյուղացիները չգիտեին ինչպես շնորհակալ լինեն: Նրանք ինձ նվիրեցին երկոտանի ձիերից մեկը, ես թամբեցի ու շարունակեցի ճամփաս՝ ուղղվելով դեպի մոտակա երկաթուղային կայարան:

2

Գյուղացիներն ինձ զգուշացրել էին, որ երկաթգծի շուրջը անհանգիստ է, ու մթին գիշերներին կարելի է հեշտությամբ ընկնել ավազակների ձեռքը: Եթե չմոլորվեի ռուսական ուղեխափանքում, մինչեւ մթնշաղը կհասնեի կայարան: Բայց խճճված սայլուղիներն ինձ պտտեցին մինչեւ գիշեր: Հոգնատանջ կիսածին մի կերպ էր շարժում զույգ սմբակները, երբ բազմաթիվ ձիերի մոտեցող դոփյուն լսեցի: Ավազակախումբ էր: Արդեն ուզում էի ուժ տալ խթաններիս, բայց երկոտանիով չորքոտանիներից չես փախչի: Ծուտով հեծյալները շուրջս փակեցին օղակը. ձեռքս պարզեցի երախակալին, բայց հիշեցի, որ սուսերս մնացել է Բեռլինում, Ալեքսանդեր-պլացի պահարանում: Ավազակները սեղմեցին օղակը. ես ձեռքս տարա գլխիս՝ որոշելով հյուսքս բռնած՝ ինձ դուրս քաշել անհարմար ընկերախմբից (ինչպես ժամանակին այդպես դուրս էի քաշել ճահճից), բայց, հազա՛ր անեծք, մատներս դիպան խուզած ծոծրակիս. ավաղ, ստիպված էի հանձնվել: Եվ ես հանձնվեցի: Ասենք, ավազակներն ինձ ոչ մի վնաս չպատճառեցին եւ ընդհանրապես բարեկամաբար էին վերաբերվում, համարյա որպես յուրայինի, եւ նույն գիշեր ատաման ընտրեցին: Ու քանի որ այդ ամենը կատարվում էր գիշերով, անթափանց խավարում, ապա չգիտեմ՝ ինչն էր առաջնորդում այդ մարդկանց. գուցե բնա՞զդը:

Ինձ սիրտ տալով՝ ստիպված էի ենթարկվել. մարդիկ բարի են, քանի դեռ չես հակառակվում: Օրինակ, իմ ու ձեր հարաբերությունները, տիկնա՛յք եւ պարոնա՛յք, կառուցված են նրա վրա, որ ես չեմ հակառակվում ձեզ. դուք ասում եք, որ ես կամ, լա՛վ, չենք վիճում, բայց եթե ասեք... չնայած, վերադառնանք դեպքերին: Ես փառասեր չեմ, եւ ատամանի տիտղոսը ինձ քիչ էր հուզում. համարյա ամեն օր նրանց առաջարկում էի տապալել ինձ, անցնել կառավարման հանրապետական կարգի եւ աքսորել ինձ, թեկուզ, Մոսկվա: Ավազակախումբն, ի վերջո, համաձայնեց բաց թողնել, բայց պայմանով, որ փրկագին վճարեմ՝ փողով կամ բարի

խորհրդով, ինչով կուզեմ: Դե ինչ: Մի րոպե մտածելով՝ ես ավազակային գործի արդյունավետության բարձրացման պլան կազմեցի: Բոլորի համար պարզ է, որ քայքայված երկրում «կաղնե ասեղի» աշխատավորի վիճակը (նրանց երկրում ընդունված եզրույթով) խիստ աննախանձելի ու հոգսաշատ է: Ցերեկները ստիպված է թաքնվել անտառներում՝ վախենալով կարմիրբանակային հրացանների հետ հանդիպումից, եւ միայն անլուսին գիշերներն են նրան թույլ տալիս զբաղվել, այսպես ասած, արժեքների տեղափոխությամբ, իր գրպանով որսալ փախչող մետաղադրամները, ինչպես միջատաբանն է իր ցանցով որսում փախչող թիթեռներին: Այսպիսով, դրամին դուրս պրծնելու հնարավորություն տվող լուսնյակ գիշերներն անշահավետ էին դառնում: Ահա մի այդպիսի լուսնարծաթով ողողված գիշեր ես ավազակախումբը հանեցի անտառի եզրը, հրամայեցի շարք կազմել ու երեք տասնյակ բերաններով փչել երկնային լուսատուի վրա: Այդ մարդիկ նախանձելի թոքեր ունեին (ռուս ժողովուրդը թոքերը զարգացնում է իրենց ինքնաեռները փչելով). համերաշխ արտաշնչման քամու տակ լուսինը թարթեց, ծգեց իր կանաչ լեզուներն ու հանգավ: Լուսնազրկումից հանկարծակիի եկած գումակներն ու ճամփորդները ընկան մեր ձեռքը:

Եվս մի քանի կրկնողական վարժություն՝ եւ ավազակախումբն այլեւս հրահանգչի կարիք չուներ: Դա հանգեցրեց վերջին տարիների մի շարք խավարումներին եւ ընդհանրապես երկնակամարի ոչ այնքան ճշգրիտ բացատրված, առեղծվածային երեւույթների. պատճառը, համարձակվում եմ հայտարարել այստեղ՝ գիտության կաճառում, Ռուսաստանի սահմանամերձ անտառներից մեկում է: Իմ բարեկամ Ալբերտ Էյնշտեյնը, որին մոռացել էի նախօրոք զգուշացնել, մի փոքր շտապեց՝ այդ երկնային անոմալիաներից անելով իր վերջին եզրակացությունները. այն, ինչ կարելի է բացատրել տնտեսական օրենքներով, եւ դրանում Մարքսն իրավացի է, աստղագիտական հաշվարկների կարիք չունի. պատճառներ գտնելու համար կարիք չկա փորփրել աստղերը, երբ դրանք կարող են հայտնաբերվել այ այստեղ, մեր ոտքի տակ, երկրի վրա: Եվ եթե հետո գտնվի մի մարդ, որը, ասվածին հակառակ, կցանկանա գրել «չմարած լուսնի» մասին, թող զգուշանա ինձ՝ Մյունխհաուզենիս հետ հանդիպումից. ես կմերկացնեմ նրան ստի մեջ:

Հռետորը, մի վայրկյան խոսքն ընդհատելով, գրաֆինի բյուրեղապակին խոնարհեց բաժակի վրա. դահլիճում այնպիսի լռություն էր, որ նույնիսկ վերջին շարքերից լսելի էր ջրի կլկլոցը գրաֆինի կոկորդում:

3

Երեսուն հրացան հրաժեշտի համազարկով ողջունեցին ինձ բաժանման ժամին: Անտառն իմ թիկունքում թողնելով՝ ուղղություն վերցրի դեպի շոգեքարշերի շչակները, որոնք ժամանակ առ ժամանակ ինձ ճանապարհ էին ցույց տալիս սայլուղիների խճճված կծիկում: Վերջապես հասա հարթավայրում կորած մի կիսակայարան ու սպասեցի Մոսկվայի գնացքին: Կառամատույցը թաղված էր պարկերի ու կապոցների տակ, որոնց կողքին ու վրա նստած ու պառկած էին ինձ նման գնացքին սպասող մարդիկ: Սպասումը երկար ու հոգնեցուցիչ էր: Կողքիս, դատարկ (ինչպես ինձ թվաց առաջին հայացքից), բայց երեք հանգույցով բերանը կապած պարկի վրա նստած հարեւանիս անմորուք դեմքը արդեն հասցրել էր պատվել շեկ ստեւով, երբ հորիզոնին վերջապես երեւաց երկար սպասված ծխաքուլան: Գնացքը սողում էր անձրեւորդի արագությամբ, ու սկսեցի վախենալ, որ կարող է որդի պես թաղվել հողում, դատարկ գծերի վրա թողնելով միայն ծխի գորշ ոլորքը:

Դահլիճում գտնվողներից շատերին գուցե տարօրինակ թվա իմ այս զգացողությունը, բայց ինձ՝ սանգվինիկիս, դանդաղընթաց, չափավոր ու ծորուն ամեն ինչ միշտ կարծեցյալ ու անիրական է թվացել, եւ գուցե այդ պատճառով փոքր արագություններին ու վայրկյանաչափի սլաքներից ժամի սլաքներին դարձած Ռուսաստանը ինձ ցնորական ու պատրանքաձին զգացողությունների մի ամբողջ համալիր պարգեւեց: Մեկնելու ազդանշանին սպասող վագոնում հարեւանս նույն շեկ ստեւով ու դատարկ պարկը ուսին մարդն էր: Ճիշտ է, այդ դատարկությունն անսպասելի զնգաց՝ վագոնի դարակին խփվելով:

- Ի՞նչ եք տանում,- չէի կարող չհետաքրքրվել ես:

- Բիզ է՝ պարկի մեջ,- պատասխանեց ստեւը:

- Կարծում եք կվաճառե՞ք:

- Իհարկե: Մոսկվայում սա պահանջարկ ունի:

Ես ուրախացա: Չէ՞ որ իմ ապրանքն էլ մոտավորապես նույն տեսականուց էր: Այդ ընթացքում գնացքը շարժվեց, ինչը ավելի բարձրացրեց տրամադրությունս: Բայց ոչ երկար: Անիծված որդը կանգառ էր անում ամեն փայտակոճի վրա, ասես փայտակոճը կայարան լիներ: Բայց ուղեւորները որեւէ զարմանք չէին արտահայտում, կարծես ամեն ինչ հենց այդպես էլ պիտի լիներ: Երեկոյան կողմ սողալով հասանք հաջորդ կիսակայարան: Ոտքերիս թմրությունը հանելու համար գնացքի երկարությամբ քայլեցի դեպի շոգեքարշի ծխնելույզը, որ բուռ-բուռ կարմիր սերմեր էր

նետում հողի պես սեւ գիշերվա մեջ. դրանց լույսի տակ տեսա, որ տենդերում ոչ քարածուխ է, ոչ էլ փայտ, այլ գրքերի կույտեր: Գրադարանային գործի այդպիսի զարմանալի դրվածքից ապշած ու սպասելով, մինչեւ շարժվող գնացքի ցնցումը կարթնացնի հարեւանիս՝ նոր հարցերով դիմեցի նրան: Մեր խոսակցությանը խառնվեցին նաեւ այլ ուղեւորներ, ու շուտով շատ բան պարզ դարձավ ինձ համար, այդ թվում եւ մեր՝ բաբախումներով, փայտակոճից փայտակոճ շարժման պատճառը:

- Գիտե՞ք ինչ,- բացատրեցին ինձ բոլոր կողմերից,- մեր մեքենավարը պրոֆեսորներից է, շատ գիտուն մարդ, ոչ մի գիրք բաց չի թողնի, մինչեւ ծայրից ծայր չկարդա, հնոցը չի նետում, ո՛չ, ահա եւ գնում ենք ծղանծղան, այսինքն գիրք գրքի ետեւից, մինչեւ...

- Բայց թույլ տվեք,- բորբոքվեցի ես,- մենք կբողոքենք, թող նրան հանեն եւ ուրիշ մեքենավար բերեն:

- Ուրի՞շ,- բոլոր քնադարակներից ձգվեցին անհանգստացած վզերը:- Բայց դեռ հայտնի չի ձեր ուրիշն ով կլինի. այ հարեւան ճյուղում մի մեքենավար կա, բացի «Անտի-Դյուրինգից» ոչինչ ու ոչ մեկին չի ընդունում, բոլոր գրքերը՝ հնոցը, խրձերով, մինչեւ շիկանալը, ու՝ ողջ ընթացքով, բայց եթե, Աստված չանի, «Անտի-Դյուրինգ» հանդիպեց, էլ աչքը չի կտրում... դե, էստեղ աղետն էլ հեռու չի: Չէ՛, մեզ ոչ մի ուրիշ էլ պետք չի. սա, էյլե-միտ-վեյլե, թեկուզ օրը մի թիզ, բայց ձգում է, իսկ «ուրիշը» կարող է էնքան ուրիշ լինել, որ բոլորիս անտիդյուրինգ անի հողաթմբից՝ անիվները վեր, ու Մոսկվայի փոխարեն՝ երկնային արքայություն:

Չվիճեցի, բայց նոթատետրում պահված նոտաբեռներին մեկն էլ ավելացավ: Մոսկվա հասնելով՝ կփորձեմ պարզել՝ դեռ երկա՞ր կբավականացնեն ռուս գրականության պաշարները:

4

Երբ մոտենում էինք մոսկովյան կայարանին, եւ արդեն ձեռքս տարել էի դռան բռնակին, սլաքավարը բացեց խորհրդային կարմիր դրոշը, ինչը նրանց մոտ նշանակում է «ճանապարհը փակ է»: Եվ ի տես հազարավոր զանգակատներ երկինք նետած Մոսկվայի՝ ստիպված էի ուղիղ մի ժամ սպասել, մինչեւ ուղեսլաքը թույլ տվեց գնացքը մոտենա կառամատույցին:

Առաջինը, որ աչքիս ընկավ, կայարանի պատին փակցրած հայտարարությունն էր, որով առողջժողկոմ Սեմաշկոն, չգիտես ինչու, խնդրում էր իրեն չչրթել: Հոնքերս թռան ճակատս եւ այդպես էլ չիջան Մոսկվայում

գտնվելուս ողջ ընթացքում: Արտասովորությունների պատրաստ, դողացող սրտով մտա արյան ու գաղտնիքների վրա կառուցված այդ քաղաքը:

Մեր եվրոպական ասեկոսեները Հանրապետությունների Միության մայրաքաղաքի մասին, որոնք այն շրջոնքված քաղաք են ներկայացնում, որտեղ տները կառուցում են տանիքից դեպի հիմքը, քայլում են՝ կոշկատակերն ամպերում, խաչակնքում ծախ ծեռքով, որտեղ առաջինները միշտ վերջին են (օրինակ, հերթերում), որտեղ պաշտոնական ճիշտը «Պրավդան» է, քանզի հակառակն է, եւ այլն, եւ այլն,- ամեն ինչ չես հիշի,- այդ ամենը ճիշտ չէ. Մոսկվայում տները տանիքից հիմքը չեն կառուցում (եւ հիմքից տանիք նույնպես չեն կառուցում), ոչ ծախով են խաչակնքում, ոչ աջով, իսկ ինչ վերաբերում է նրան՝ գետի՞նը, թե՞ երկինքն է կոշկատակերին՝ չգիտեմ. մոսկվացիներն, ըստ էության, առանց կոշկատակերի են շրջում: Ընդհանրապես, սովն ու աղքատությունը բոլոր կողմերից պարզում են իրենց հազարավոր ափերը: Ամեն ինչ կերված է, մինչեւ եկեղեցիների սոխածեւ գմբեթները ներառյալ. որոշ ժամանակ փորձել էին սնվել ոսպնյակային ոսպով, որից, ասում են, անորսալի-թափանցիկ ապուր էր ստացվում: Սննդի կրպակների դռներն իմ այցելության ժամանակ արդեն մեխած էին, եւ միայն ապխտած ազդրերի, նրբերշիկների դրասանգերի ու ամսաբողկի պոչերի զարդանախշերի կամ էլ ոլորաբլիթների ու խոզի գլուխների ոսկեքանդակ պատկերներով ցուցափեղկերի առաջ իրար գլխի էին հավաքվել մարդկային բազմություններ ու նայովի սնվում էին: Ավելի բարեկեցիկ տներում, որտեղ կարող էին վճարել նկարչի աշխատանքի դիմաց, ճաշում էին առաջվա պես պահպանելով խոհարարական ավանդույթները: Սեղանին առաջինը մատուցում էին հոլանդական դպրոցի նատյուրմորտ՝ տարատեսակ ուտելեղենի պատկերով, երրորդին՝ տոնածառի մրգեր՝ պապյե-մաշեից: Սրան գումարվել էր նաեւ ապրանքային սովը. խանութների դարակներին փոշուց բացի ոչինչ չկար: Ծիծաղելի է ասել, երբ ծեռնափայտի կարիք եղավ, սովորական մահակի (մայթերն այնտեղ ամբողջովին խոչ ու խութ էին), խանութներում երկու ծայրով մահակ չճարվեց. ստիպված էի բավարարվել մեկծայրանի մահակով: Կամ էլ մի այսպիսի օրինակ. երբ ապրանքազրկությունից հուսահատության հասած մի մոսկվացի փորձել էր կախվել, պարզվել էր՝ պարանը հյուսված է ավազից. մահվան փոխարեն ստիպված էր բավարարվել վնասվածքներով: Այլանդակությո՛ւն:

Ներքին տարածայնությունները մայրաքաղաքում գտնվելուս ընթացքում ավելի էին խորացնում քայքայումն ու աղքատությունը: Այսպես, մի

անգամ գորշ, սարդոստայնի գույնի տների մոտով անցնելիս հաճույքով կանգ առա մի առանձնատան մոտ, որն աչքի էր ընկնում ներկի թարմ փայլով ու ապակեպատ պատուհանների շարքով: Բայց հաջորդ իսկ օրը, երբ դիպվածին հաճո էր եղել, որ կրկին հայտնվեմ այդ տան մոտ, տեսա, որ պատերը խունացել ու ծռվել են, իսկ փողոցը՝ ճակտոնի մասում պատված է թափված ծեփով ու փշրված ապակիներով:

- Ի՞նչ է պատահել այս տանը,- դիմեցի մի անցորդի, որ զգույշ խուսանավում էր՝ ջանալով բոբիկ կրունկները պաշտպանել ծակծկվելուց:

- Բանավեճ:

- Իսկ հետո՞:

- Իսկ հետո ընդդիմության առաջնորդը հեռանալիս շխկացրել է դուռը: Այսքանը:

- Անհեթեթությո՛ւն,- մեր ձայների վրա շրջվեց դիմացից եկողը,- հեռանալիս մատը դռան տակ է մնացել: Իսկ բանն այն է, որ...

- Ինձ համար,- անսպասելիորեն կաղին տալով՝ մռայլ կտրեց առաջինը,- բանն այն է, որ ձեր հարցուփորձի պատճառով վնասեցի ոտքս:

Երկու թիկունքներ բաժանվեցին՝ ձախ եւ աջ, ինձ թողնելով կատարյալ տարակուսանքի մեջ...

Հոետորը սեղմեց կոճակը: Լույսը փոխարինվեց մթությամբ, եւ էկրանի փայլատ քառակուսու վրա թրթռացին, անշարժացան ու հստակվեցին մինչ ու հետո նկարված տան կրկնապատկեր ուրվագծերը:

Որոշ գլուխներով արդեն անցնում էր զուգորդումը մարտինիկյան երկրաշարժի հին, կիսամոռացված լուսանկարների հետ, բայց մինչ հիշողությունը կգիտակցեր, կոճակը փակեց շղթան, եւ հոետորը շարունակեց՝ թույլ չտալով, որ ուշադրությունները շեղվեն:

5

- Եթե Մոսկվային նայեք թռչնաթռիչքի բարձրությունից, կտեսնեք՝ կենտրոնում քարե սարդ՝ Կրեմլը, որ չորս լայն բացված դարպասներով նայում է իր հյուսած փողոցների ոստայնին. նրանց գորշ թելերը, ինչպես որ ցանկացած սարդոստայնինը, ճառագայթաձեւ հեռանում էին իրարից՝ ամրակցվելով հեռավոր քաղաքամուտքերին. շառավիղներին զուգահեռ, բազմաթիվ կարճ կապերով՝ նրբանցքները. դրանք այսուայնտեղ երկար աղեղներ են կապում՝ կազմելով այգիների ու հողապատնեշների օղակը, որոշ տեղերում սարդոստայնի թելերը կտրվել են քամուց. դրանք փակուղիներն են. իսկ սարդոստայնի միջով, կորացնելով կոտրտված

մարմինը, կամուրջների երկթաթերի արանքում սեղմված կապույտ թրթուր՝ գետը: Բայց թռչունին թույլ տվեք իջնել մոսկովյան տանիքներից որեւէ մեկի վրա, իսկ ինձ՝ կառք նստել:

- Ո՞ւր,- հարցնում է իմ հպումից արթնացած կառապանը:

- Տաբաչիխինյան նրբանցք:

- Միլիարդ՝ ձերդ ողորմածությունից:

Կառապանը մտրակում է կիսամեռ ձիուկին, թեթեւ կառքը՝ սալաքարից սալաքար, եւ կամրջի կուզն անցնելով՝ մտնում ենք անդրմոսկովյան նրբանցքների սարդոստայնը. դրանցից մեկում՝ շեղաչք պատուհաններով, ճռճռացող առմուտքով տնակ.

- Պրոֆեսոր Կորոբկինը տա՞նն է:

- Համեցե՛ք...

Մտնում եմ: Մեծավաստակ գիտնականն ինձ ընդառաջ է շլում ակնոցի ապակիները: Բացատրում եմ այցիս նպատակը. օտարերկրացի եմ, ցանկանում եմ ծանոթանալ նյութական պայմաններին, որոնց մեջ դրվել է ռուսական գիտությունը: Պրոֆեսորը ներողություն է խնդրում, որ չի կարող սեղմել ձեռքս: Իսկապես. մատները փաթաթված են թանզիֆով ու ծգված վիրակապով: Մտահոգ հետաքրքրվում եմ: Պարզվում է՝ զրկված լինելով ամենաանհրաժեշտ գիտական պիտույքներից, օրինակ, գրատախտակից, գիտնականները ստիպված են կավիճը ձեռքին դեգերել՝ իրենց հաշվարկների, գծագրերի ու բանաձեւերի համար գրատախտակ հիշեցնող որեւէ բան փնտրելով: Եվ այսպես, պրոֆեսոր Կորոբկինին տառացիորեն նախորդ օրը հաջողվել էր կառեթի մի ոչ վատ սեւ թիկնակ գտնել իր տնից ոչ հեռու, շքամուտքերից մեկի մոտ: Պրոֆեսորը կավիճը ձեռքին մոտեցել էր, եւ հանրահաշվական նշաններն արդեն ճռճռում էին ինքնաշեն գրատախտակին, երբ հանկարծ այն, անիվները պտտելով սկսեց հեռանալ՝ իր հետ տանելով կիսաբացահայտած հայտնագործությունը: Բնականաբար, խեղճ գիտնականը վազել էր փախչող բանաձեւի ետեւից, սակայն բանաձեւը, անվաճաղերը շողացնելով՝ կտրուկ շրջվել էր նրբանցքը, առեղն՝ ընդառաջ, հարված՝ եւ ահա թանզիֆով փաթաթած վերջույթների անբարբառ ապացույցը: Ծուտով, մանգաղով ու մուրճով նիշված շքամուտքերից մեկի մոտով անցնելիս արագ աստիճաններին մոտեցող մի ավտոմոբիլ տեսա. հետնապատին, սեւ բրեզենտի վրա սպիտակով արված կիսատ գծագիր կար: Նայելով այն ուղղությամբ, որտեղից եկել էր գծագիրը, շուտով աչքերով գտա նաեւ գծագրողին. փողոցի երկար հեռապատկերից, ասթմատիկ շնչելով ու ճաղատով օդը պոզա-

հարելով, մի մարդ էր վազում. պարզած ափի մեջ ճերմակին էր տալիս կավիճի կտորը: Ձուտ մարզական սովորությունն ինձ ստիպեց հանել ժամանակաչափն ու զսպանակը սեղմելով՝ սլաքն ուղարկել վայրկյաններով ու ութերորդականներով պտտվելու: Բայց այդ ժամանակ ավտոմոբիլի դուռը շխկաց. մի մարդ, աչքերը գլխարկի շքոցի տակ թաքցրած, պորտֆելը արմունկի ուղիղ անկյան տակ, դուրս գալով մեքենայից՝ ընդհատեց իմ դիտարկումները.

- Օտարերկրացի՞ եք:

- Այո՛:

- Հետաքրքրվո՞ւմ եք:

- Այո՛:

- Այսպես ուրեմն,- մատը պարզվեց վազքով մոտեցող ճաղատի կողմը,- ձերոնց ասեք՝ կարմիր գիտությունը առաջ է գնում:

Ու շրջվելով դեպի շքամուտքի դուռը՝ ձեռքով հրավիրելու նշան արեց: Մենք աստիճաններով բարձրացանք նրա աշխատասենյակը, որտեղ տասներեք հեռախոս էր դրված: Ինչպես հմուտ սրնգահարն է շրթունքներով հպվում եղեգնափողի անցքերին, մարդը շրթունքներն արագ սահեցրեց մեմբրանների վրայով, ապա ցույց տվեց բազկաթոռն ու նստեց իմ դիմաց: Անհարմար էի զգում հարցնել, բայց միանգամից երեւաց, որ խոսակցություն է սպասվում հայտնի ու նշանակալի մարդու հետ: Ձրուցակիցս հատու էր խոսում, հարցական նշանը գերադասում էր մնացած բոլորին, առանց ներածականների ու ստորադասականների. հարցերը դնում էր, ինչպես դույլերն ու լագաններն են մոտեցող անձրեւից առաջ դնում առաստաղի անցքի տակ, ու սպասում էր: Ճար չկար. սկսեցի խոսել աղքատության, անսնդության, հացազրկության, ապրանքազրկության տպավորությունների մասին, որոնցից Արեւմուտքից եկած մարդը բացարձակապես աչքերը թաքցնելու տեղ չունի: Սկզբում զսպում էի ինձ, պահում բառերի հաշիվը, բայց հետո վերջին տպավորությունները տիրեցին ինձ, եւ ազատություն տվեցի փաստերին, ու դրանք հեղեղի պես թափվեցին նրա լագանը: Ոչինչ չմոռացա՝ ընդհուպ միծայրանի մահակը:

Մինչեւ վերջ լսելով՝ մարդը հանեց հովարով գլխարկը, եւ ես տեսա աչքերն ու ճակատը, որոնք քաջ ծանոթ են բոլոր նրանց, ովքեր թեկուզ երբեմն նայում են պատկերազարդ Յիրբուքը. անհնար էր չճանաչել.

- Այո՛, մենք աղքատ ենք,- բիբերով բիբերս որսաց նա,- մեզ մոտ՝ ինչպես ցուցահանդեսում՝ ամեն ինչից մեկական օրինակ է, ոչ ավելի: (Դրանից չէ՞, որ այդքան սիրում ենք ցուցահանդեսները): Ես կռահեցի ձեր

միտքը, այնպես չէ՞: Ճիշտ է. մեր մահակները մի ծայր ունեն, մեր երկիրը՝ մի կուսակցություն, մեր սոցիալիզմը՝ մի երկիր, բայց պետք չէ մոռանալ նաեւ մեկծայրանի մահակի առավելությունների մասին՝ գոնե գիտես որ ծայրով խփել: Խփել՝ ընտրություն չանելով մեկի ու մյուսի միջեւ: Մենք աղքատ ենք եւ ավելի ենք աղքատանալու: Բայց եւ այնպես, վաղ, թե ուշ, խրճիթների երկիրը կդառնա պալատների երկիր:

Մի րոպեի չափ լսում էի, թե նրա մատներն ինչպես են թմբկահարում սեղանի երեսին: Հետո.

- Ինչո՞ւ չեք հարցնում գրականության մասին:

Խոստովանեմ՝ ցնցվեցի. կկոցված աչքերն ակնհայտորեն թափանցել էին բաճկոնիս դարձածալի տակ ու տիրություն էին անում նոթատետրիս մեջ:

- Դուք կռահեցիք միտքս:

- Անունը նույնպես,- ծիծաղը բացեց բերանի բացվածքը, ինչպես դիաֆրագման լուսանկարման կարճ պահին,- չէ՞ որ գրական կերպարի համար բնական է հետաքրքրվել գրականությամբ: «Ի՞նչ հոտ ունի կյանքը»: Տպագրական ներկի՝ գրքերում ապրող կամ այնտեղ վտարանդված մարդկանց համար: Այսպես ուրեմն. բոլոր գրիչներին մեզ մոտ տրված է ընտրել՝ պահակետ կամ պահք: Մեկին՝ անփոփոխ իր պահակետը, մյուսին՝ գրական պահեցողություն:

- Բայց այդ դեպքում,- շփոթմունքից մի քիչ ուշքի գալով՝ առարկեցի ես,- շոգեքարշի հնոցով սկսածը դուք ուզում եք ավարտել...

Նա վեր կացավ: Ես՝ նույնպես:

- Հստակության համար՝ այս հասցեով,- թանաքե տողը նոթատետրից կտրելով՝ մոտեցավ ինձ:- Գիտական ճաղատը կարծես ավարտել է գծագիրը: Իմ ժամանակը սպառվեց: Կարող էի ձեզ հետ ուղարկել, եւ ոչ ծխնելույզով, ինչպես ընդունված էր միջին դարերում. բավական է ահա այդ հեռախոսափողն ու գումարած երեք տառ՝ էկզորցիզմի փոխարեն, ու փոշեհատիկի պես կքշվեիք քամուց: Բայց իմանալով nomen-ը *[անուն - լատ.]*, գուշակում եմ նաեւ ձեր omen-ը *[Նշան, սիմվոլիկա - լատ.]*. Թող այդպես լինի: Օտարերկրացիություն արեք:

Մենք ժպիտներ փոխանակեցինք: Բայց ոչ ձեռքսեղմում: Ես դուրս եկա: Աստիճանները ստեղների պես դուրս էին պրծնում ոտքերիս տակից: Միայն փողոցի պաղ օդը վերադարձրեց հանգստությունս:

6

Նոթատետրի թերթիկին գրած հասցեն ինձ հասցրեց ազնվականական առանձնատան սյունաշարին՝ մոսկովյան խաղաղ փողոցներից մեկում՝ հեռու բեռնասայլերի դղրդոցից ու տրամվայների զանգահարությունից: Նոթատետրի նույն թերթիկը բացեց աշխատանքային սենյակի դուռը, որտեղ, ինչպես ասաց սպասավորը, այդ պահին գտնվում էր տանտերը: Շեմը հատելով՝ տեսա մի հսկա, անկյունները լայն տարածած սրահ, զուրկ կահավորման որեւէ նշանից: Սրահի հատակը, պատից պատ, ծածկված էր կոճգամերով ամրացված սպիտակ թղթի հսկա թերթով: Հայացքով սահելով բազմասաժեն էջի վրայով՝ հեռավոր ծայրին տեսա մի չորեքթաթ մարդու, որը ձախից աջ էր գնում՝ տեղափոխվելով անտեսանելի տողագծերով: Ավելի ուշադիր նայելով՝ նկատեցի, որ ոտքերի ու ձեռքերի մատների արանքից դուրս են պրծել հավատարիմ գրիչների ծայրերը, որոնք արագ սահում էին թղթե հարթավայրով: Աշխատելով հմուտ հատակ փայլեցնողի արագությամբ՝ նա, չորս գրիչները ճռռացնելով, պատից պատ թանաքի չորս ակոս բացեց՝ ավելի ու ավելի մոտենալով ինձ: Հիմա արդեն, աչքերս լարելով կարողացա տեսնել, որ վերին տողով ձգվում էր ողբերգություն, մի ֆուտ ներքեւ՝ տրակտատ գեներալ-բասի ու ձայնակարգության խիստ ձեւերի մասին. ձախ ոտքի տակից տողաշարվում էին ակնարկներ երկրի տնտեսական դրության վերաբերյալ, իսկ աջից՝ քառյակներով վոդեվիլ էր ճռճռում:

- Այդ ի՞նչ եք անում,- այլեւս չկարողանալով հարցս զսպել՝ քայլ արեցի փայլեցնողի կողմը:

- Գրականություն:

Ես դուրս եկա ոտքերիս ծայրերին՝ վախենալով, որ կխանգարեմ ծնդաբերությանը:

Դրանով իմ ծանոթությունը Մոսկվայի գիտական ու գեղարվեստական աշխարհի հետ չավարտվեց. այցելեցի «Լռելու լիակատար բառարանի» հեղինակին, եղա հայտնի աշխարհագետի մոտ, որը գտել էր Թեթեւամիտ ծովախորշը, այցելեցի խոռոչների մի համեստ հավաքորդի, ներկա եղա Հերվա Ձյան Ուսումնասիրության ասոցիացիայի հանդիսավոր նիստին: Այլ խոսքով, մտա այն հուզող հարցերի շրջանակը, որոնց իր աշխատություններն էր նվիրել կարմիր գիտությունը: Ժամանակի սակավությունը թույլ չի տալիս ինձ, որքան էլ գայթակղիչ լինի թեման, ավելի երկար կանգ առնել դրա վրա:

7

Դեգերելով մտածողությունից մտածողություն, խփվելով բոլոր գիտուն վիթխարիներին՝ չէի նկատել մի արշին ներքեւում կատարվողը. ռուսական ասացվածքն այն մասին, որ սովը մտավ կատվի փորը, շտկման կարիք ունի. բոլոր կատուները վաղուց արդեն կերված էին, իսկ երբ փորձեցին սովի մասին հարցը ջնջել, արդեն զայրացած գռմռում էր բոլոր փորերից՝ սպառնալով, որ եթե հաց չտան, կխժռի հեղափոխությունը: Ես բնույթով ֆիլանտրոպ եմ, Հովարդի ու Հաագի անուններից աչքերս արցունքով են լցվում, ու որոշեցի կարելվույն չափ օգնել հրդեհներից ու արեւից խարկված երկրին. գաղտնագրված հեռագիր ուղարկեցի, եւ շուտով Եվրոպայից ատամմաքրիչներով բարձված մի քանի գնացք եկավ: Պատկերացնո՞ւմ եք, տիկնա՛յք եւ պարոնա՛յք, թե սովահար գավառների բնակչությունն ինչպիսի զգացումներով դիմավորեց այդ գնացքները: Առաջին հաջողությունը կրկնապատկեց իմ ուժերը. Խորհուրդների կառավարության կազմակերպած սննդի կետերը չէին կարող պայքարել սովի տարերքի դեմ. ուտելին հատիկ-հատիկ էին բաժանում մարդկանց, որպեսզի ոչ ոք չկարողանար ասել, որ բերանը հատիկ չի դրել. դա կանխում էր բողոքը, բայց դատարկ էր թողնում ստամոքսները: Ես առաջարկեցի դիմել առնետահմաների օգնությանը: Հավաքեցին բոլոր հմայախոսներին: Ամեն սննդի կետ մեկական շվիավոր ստացավ, որը տնից տուն շրջելով՝ գետնահարկերից ու նկուղներից նվագով դուրս էր կանչում թաքնված առնետներին, ու երկար շարանով,- քիթը պոչին, պոչը քթին,- ուտելիքն ինքն էր գնում դեպի խոհանոցային տաքարներն ու կաթսաները:

Գործի դրվեցին նաեւ հիպնոսող-բժիշկները. սովյալին նստեցնում էին բազկաթոռի մեջ եւ հիպնոսացնող շարժումներ անելով՝ ասում. «Սա ոչ թե ծխուկներով մոխրաման է, այլ խմորագնդիկներով ապուր: Կերե՛ք: Այ այդպես: Հիմա դուք կուշտ եք: Սրբվեք անձեռոցիկով: Հաջո՛ղը»:

Բայց առանձնակի տարածում էին ստացել հատկապես, այսպես կոչված, մյունխսնունդները, որ բացվել էին իմ առաջարկով (ստիպված էի հղվել գրական աղբյուրին՝ հասկանալի է, չբացահայտելով իմ ինկոգնիտոն). մյունխսնունդի ոչ բարդ սարքավորումը բաղկացած էր երկար թոկից, իսկ մթերային պաշարը՝ ճարպի մի պստլիկ կտոր, որը բավականացնում էր անորոշ մեծ թվով... կուվերտների, ասեմ ձեզ, քանզի ճաշը մատուցվում էր փոքր-ինչ a couvert *[Այստեղ. հեգնական. բաժնեչափերով - Ֆր.]*. Ճաշի ժամին մարդիկ հերթ էին կանգնում՝ դեմքով դեպի բաժանողը. բաժանողը, ճարպի կտորը կապելով թոկից, գցում էր առաջին բերանը՝ կուլ

տալու, իսկ հետո, հիշո՞ւմ եք իմ բաղերին, ահա, եթե հերթը աճում էր, լրացուցիչ թոկ էին կապում եղածի ծայրին, եթե պետք էր լինում՝ էլի մի թոկ, եւ այլն: Հետաքրքրվողներին հղում եմ մյունխսսնդի կառուցվածքի գործնական ուղեցույցին, որ լույս է տեսել հարյուր հազարավոր օրինակներով՝ «Չմորքուր» վերնագրով: Ի դեպ, այդ կերպով ճաշող մարդիկ միանգամից չէին կարող բաժանվել իրարից. առաջինին հետեւում էր երկրորդը, երկրորդին.- volens nolens *[կամա, թե ակամա - լատ.]*,- երրորդը: Այդպես ավանդույթ դարձան հանդիսավոր երթերը, որոնք ներկայումս, նաեւ սովից հետո, այնքան լայն տարածում ունեն այնտեղ. նույնիսկ առօրեական արտահայտությունները, ինչպես «ամրապնդել կապը», «միասնական թել», «առանցք» եւ այլն, իմ կարծիքով, մյունխսսնդի շրջանի արձագանքն են:

Մինչ դիտում էի, ճամփորդում իմաստներով՝ դրանք բեռնելով իմ նոթատետրերը, առաջ էի մղում հանրությանն ու պայքարում սովի կատակլիզմի դեմ, ժամանակը ձգում էր իր թոկը՝ օրերը կապելով օրերին եւ ամիսները ամիսներին: Նմանակելով իր թերթիկների քառանկյունները թափող օրացույցին՝ ծառերն էլ մոսկովյան զբոսայգիներում սկսեցին թափել իրենց տերեւները: «Մարմնական քաղցը հագեցնելը,- մտածում էի ես,- գործի կեսն է: Հոգեւոր քաղց արթնացնել. ահա երկրորդ կեսը»: Ես ծեր անուղղելի իդեալիստ եմ, իմ երկարարտեւ զրույցները Հեգելի հետ անհետեւանք չեն անցել ոչ ինձ համար, ոչ էլ, կարծում եմ, նրա. ազատություն - անմահություն - աստված. ահա իմ բազկաթոռի երեք ոտքերը, որոնց վրա ես հանգիստ նստ... կներեք, ուզում եմ ասել, որ մատերիալիստներն էլ հաղթում են այնքանով, որքանով իրենց մատերիալիզմի... իդեալիստներն են: Հեղափոխության տխրահռչակ ցախավելը, որն ավելի շատ փոշի է հանում, քան ավլում, փորձեց իդեալիստներին էլ, ինչպես աղբը՝ տնից, բայց, հիարկե, մտածում էի ես, նրանցից շատ ու շատերը կառչել էին շեմից - եւ որքան գրվան, նույնքան էլ՝ ոգու ճրագ: Արժեր նայել գրվանի տակ: Դիպվածն օգնեց ինձ. մի անգամ շուկայով անցնելիս, որտեղ մուրացկաններն ու վաճառականները փոխնիփոխ պարզում են ափերն ու ապրանքը, տեսա պատկառելի մի տիկնոջ, որը բուխարու ունելի էր առաջարկում. եւ՛ ունելին, եւ՛ տիկինը կանգնել էին պատին հենված, ըստ երեւույթին երկար ու հոգնած սպասել էին գնորդի: Ես մոտեցա ու բարձրացրի գլխարկս.

- Իմ բուխարու ածուխներին հասնելու համար, տիկի՛ն, հազար կիլոմետր երկարությամբ ունելի է պետք: Վախենամ ձերը հարմար չլինի:

- Բայց դրանով կարելի է մուկ սպանել,- իրար անցավ կինը:

Չվիճելով՝ վճարեցի պահաջված գումարն ու ուսելին խցկեցի թեւիս տակ. թեւատակիցս ցցված փայտե բռնակին կոմսական զինանշան էր դաջված: Ծրջվեցի, որ հեռանամ, բայց կոմսուհին կանգնեցրեց ինձ.

- Ինձ տանջում է միտքը, որ իմ ուսելին ամեն դեպքում որոշ չափով կարճ է ձեր փնտրածից:

- Այո՛, 999,999 կիլոմետրով:

- Շատ ափսոս: Բայց գուցե կարողանայի պակասը փոխհատուցել՝ ձեզ ծանոթացնելով մի մարդու հետ, որը հազար վերստ ու հազար տարի առաջ է տեսնում:

Ես պատրաստակամություն հայտնեցի, եւ շուտով գրվաններից մեկը բացվեց: Այսինքն, կիսաբաց եղավ տնակի ճռռացող դուռը, որտեղ պաստառի զարդանախշի փոխարեն խոնավության ու փայտոջիլի բծեր էին, իսկ վառարանի բաց բերանից՝ տոհմածառի ածխացած ցցունքներ: Մռայլ մարդը, որին սիրալիր տանտիրուհին ներկայացրեց ինձ՝ տալով Ռուսաստանի ապագայի մասին գրքերից բավական հայտնի անունը, երկար ու լուռ նստել էր՝ բիբերը հառած իր սապոգների քթերին: Տանտիրուհին, տեսնելով իմ անհամբերությունը, փորձեց պայծառատեսի հայացքը սապոգների ծայրից դարձնել տիեզերքի ծայրին: Մարդը ծամածռեց շրթունքները, բայց ոչ մի բառ չասաց: Հայացքներ փոխանակելով ինձ հետ՝ տանտիրուհին փոխեց թեման.

- Նկատե՞լ եք, որ Տվերսկոյի ագռավները «կռա»-ի փոխարեն սկսել են «ուռա» կռռալ: Տեսնես՝ ինչի՞:

- Ոչնչի,- մռթմռթաց մարգարեն, ու բիբերը ոտնածայրերից դարձան վառարանի ցցունքներին: Կոմսուհին նշան արեց ինձ. հիմա կսկսվի: Եվ իսկապես.

- Տարեգրություններում ասված է՝ «Ծխացող քաղաք»: Ու նաեւ. «Մոսկվայի վրա արեւն արյունոտ ծխից անդին ելաներ»: Իսկ Դոմոստրոյում. «Ինչպես մեղուներ, ծխից, հրեշտակներ թռչեն»: Եվ երբ մենք անհրեշտակ դարձանք, ծխերը տարածություններից բարձրացան ժամանակներ, ու վրա հասավ անհստակը, ասես ծխի միջով, «խառնակ ժամանակը»: Եվ ժամանակն ինքը խառնակ դարձավ, խառնվեցին դարերը, տասներեքերորդը՝ քսանի տեղը. inde *[դրա հետեւանքով - լատ.]* - հեղափոխություն: Մեր մեծերից մեկը վաղուց արդեն այն խորագրել է «Ծուխ»: Մեկ ուրիշը, շատ ավելի վաղ, գրել է «Հայրենյաց ծխի» մասին, որ «անուշ ու հաճելի է» մեզ: Եվ ծխակերները, ծուխ ճաշակելու սիրահարները,

խանձահոտ ու նեխում համտեսողները բազմանում ու բազմանում էին, մինչեւ որ հայրենիքը, նվազելով ու նվազելով, ծխի հետ հեռանալով, վերածվեց ծխի՝ այնքան անուշ ու հաճելի նրանց համար: Նայեք փողոցային ժամացույցների սկավառակներին. մի՞թե դրանց սլաքները չեն ցնցվում նողկումից՝ իրենց վրայից թափ տալով վայրկյանների այրուքն ու մուրը. մի՞թե ձեր աչքերը չեն արցունքոտվում ժամանակների ծխից, մի՞թե... ի դեպ, կոմսուհի՛, ձեր վառարանը մի քիչ ծխում է: Տվեք, խնդրում եմ, ուսելին:

Ես ու տանտիրուհին նայեցինք իրար. հանկարծ ու մարգարեն կռահի, որ ծխի մասին իր գուշակություններն ունելու հետ միասին վաճառվել են ինձ: Ցանկանալով կոծկել անհարմարությունը՝ իմ հերթին զրուցակիցներիս ուշադրությունը հրավիրեցի Արեւմուտքից բերած նորությունների մի ամբողջ հավաքածուի վրա: Մարգարեն նստել էր՝ գլուխը ափերին հակած, եւ կախ-կախ մազափնջերն ինձնից թաքցնում էին դեմքի արտահայտությունը: Բայց կոմսուհին ակնհայտորեն շողշողում էր հաճույքից եւ խնդրում՝ էլի ու էլի: Ես խոսում էի եվրոպական կենտրոնների ջրվեժային դղրդոցների, էլեկտրական ցերեկվա վերածված գիշերների, ավտոմոբիլների գետի, դիվանագիտական ընդունելությունների, հոգեհարցման սեանսների, նորաձեւ կանացի հանդերձների, Ամստերդամի Ինտերնացիոնալի նիստերի եւ անգլիական թագավորի այցելությունների, բոստոնյան մոդայիկ կրոնի եւ մյուզիք-հոլլերի ծագող աստղերի, Չերչիլի ու Չապլինի մասին... Իմ հայացքին ընդառաջ կապույտ մշուշի միջով (վառարանն իսկապես չարություն էր անում) առկայծեց կոմսուհու՝ հիացմունքից հալվող դեմքը, բայց ես, հետեւանքները կանխատեսելով, շարունակեցի. հասնելով իմ ընդունելությանը ռուսաց կայսեր մոտ, բարձրացրի աչքերս... ու չտեսա կոմսուհուն. նրա բազկաթոռը դատարկ էր: Տարակուսած դարձա պայծառատեսին: Նա վեր կացավ ու հառաչելով ասաց.

- Այո՛, ո՛չ ունելի, ո՛չ կոմսուհի. հալվեց: Եվ մարդասպանը դուք եք:

Եվ փողքերը քշտելով՝ անցավ փոքրիկ լճակի վրայով, որ բոլորովին վերջերս կոմսուհին էր: Ինձ մնում էր նույնպես անցնել: Գաղտնիքով իրար կապված՝ մենք դուրս եկանք՝ ետեւից ամուր փակելով դուռը:

Ծուռումուռ փողոց, աղոտ լապտերներ, որ ապարդյուն փորձում էին ճառագայթներով հասնել իրար: Մենք լուռ գնում էինք մերկ պատերի արանքով. հանկարծ դրանցից մեկի վրա՝ թարմ ներկով՝ չորս նշան՝ ԽՍՀՄ: Ուղեկիցս ձեռքը պարզեց տառերին.

- Կարդացե՛ք:

Ես կարդացի՝ վերծանելով նշանները: Նա զայրույթով ցնցեց մազերը.

- Սո՛ւտ: Լսե՛ք. ես ձեզ կբացեմ գաղտնագիրը, որ կռահել են ընտրյալները. ԽՍՀՄ - SSSR - Sancta, Sancta, Sancta Russia - երիցս սրբազան Ռուսաստան: Լսելով տառերը, լսելով ինչպես են նրանք շնչում՝ դուք նկատում եք միայն նրանց արտաշնչումները, իսկ ինձ լսելի են նաեւ շնչառումները. ճշմարիտ, ճշմարիտ ասում են նրանք երիցս սուրբ ու միասնականի մասին. Աստվածակերպի:

Եվ ծուռումուռ փողոցը մեզ տարավ առաջ: Հասնելով խաչմերուկին՝ ուղեկիցս հանկարծ կտրուկ կանգ առավ.

- Այլեւս գալ չեմ կարող:

- Ինչո՞ւ:

- Այստեղից սկսվում է գլաքարե սալահատակը,- խուլ նետեց մարգարեն,- իմ մասնագիտության մարդիկ ավելի լավ է հեռու մնան քարերից:

Ուղեկցիս անշարժ կերպարանքը թողնելով ասֆալտե ժապավենի եզրին՝ ես քայլեցի գլաքարերի վրայով. Մյունխհաուզենների ցեղում, փառք Աստծո, մարգարեներ չկան:

Ինձ հետ քայլում էր մի միտք. երկու միլիոն մեջք, գրվաններ, կյանք՝ մասնատված մատնագրերի եւ արտակարգությունների վախով, աչքերդ գցես աչքերին, դիմացից՝ հրափողը, համատարած dos a dos: Եվ փորձը հաստատեց իմ միտքն իր ողջ մռայլությամբ. տեսնելով շենքից արագ հեռացող մի մարդու, ես հարցով կանգնեցրի նրան.

- Ո՞ւր:

Ի պատասխան լսեցի.

- Ինձ քամուն տամ:

Դառը քնարականությամբ լի այդ բառերը ցմահ դաջվեցին իմ հիշողության մեջ. «Խեղճ, միայնակ մարդ,- մտածեցի ես մեկուսացողի ետեւից,- ոչ ընկեր ունի, ոչ սիրեցյալ, որի առաջ կկարողանար սիրտը բացել, մնացել է միայն՝ ազատ քամուն»: Երկու միլիոն մեջք. գրվաններ-գրվաններ-գրվաններ:

8

Բանախոսը դադար տվեց. ադամախնձորը սուզվեց օձիքի ճեղքն ու հանգստանում էր: Փոխարենը զանգի կոճակը շարժվեց, մեկ, երկու անգամ սեղմվեց, ու բռնկվեց էկրանը: Դահլիճով, ասես քամուց վախեցած «ախ» անցավ, ու տասնյակ մարդիկ, մթության մեջ իրար բախվելով, նետվեցին դեպի դուռը:

- Լո՛ւյս,- գոչեց բանախոսը, ու երբ կրկին վառվեցին լամպիոնները:- Զբաղեցրեք ձեր տեղերը, ես շարունակում եմ:

Դիապոզիտիվը, որ այդպես վախեցրեց ձեզ, տիկնա՛յք եւ... պարոնա՛յք, ինձ թվում է, արժանի է այլ հույզերի. մեր առջեւ բռնկվեց ու մարեց ակնթարթային կյանքը մի արարածի, որը մարմնավորում է սոցիալական արդարության իդեալը, որի մարմնի յուրաքանչյուր մաս խստորեն համապատասխանում է իր արժեքի մեծությանը: Այլ խոսքով, դուք տեսաք, այսպես կոչված, «վիճակագրական մարդուն», որի պատկերն արդեն հայտնի է նրանց, ովքեր գործ են ունեցել բանվորների ապահովագրման հետ: Վիճակագրական մարդու մարմնակազմությունն այսպիսին է. յուրաքանչյուր օրգան արժեքով ուղիղ համեմատական է այն գումարի չափին, որն այդ օրգանը կորցնելու դեպքում վճարվում է ապահովագրվածին. այսպիսով, վիճակագրական մարդու աչքերը, ինչպես հավանաբար հասցրիք նկատել (օրգան, որը մեզ մոտ զգալիորեն փոքր է, ասենք, հետույքից, ինչն անարդար է, որովհետեւ նրա աշխատանքային արժեքը շատ ավելի մեծ է), նրա աչքերը հսկա գնդակների պես դուրս են պրծնում ձգված կոպերի տակից, ձախ ձեռքը հազիվ է հասնում ազդրերին, իսկ աջի մատները քարշ են գալիս գետնին, եւ այլն, եւ այլն: Խոստովանում եմ, որ երբ առաջին անգամ բիբերս հանդիպեցին արդարամարմնակազմյալի ակնախնձորներին, մոտ էի նրան, որ զարմանամ: Սակայն, Հորացիոսի «Ոչնչից մի զարմացիր» մաքսիմից բացի, ես սեփական արտադրության մի կանոն էլ ունեմ՝ «Զարմացրու ոչնչով»: Եվ այսպես, արդարամարմնակազմյալի հետ հանդիպեցինք մոսկովյան զբոսայգու նստարաններից մեկին: Մեր կողքով վազվզում էին լպստած կոնֆետներով երեխաները: Սապոգ մաքրողները հետապնդում էին կեղտոտ ճտքերին: Նստարանի պատահական հարեւանիս դեմքը թաքնվել էր թերթի տակ: Հայացքս սահեցնելով թղթե վարագույրի վրայով՝ ասացի.

- Իսկ ռեֆորմիստները նորից աջ գնացին:

- Զրոները, եթե ուզում են որեւէ բան նշանակել, ճանապարհը մեկն է՝ դեպի աջ:

Թերթը ծալեց իր էջերը, եւ այստեղ իմ հարցնող հայացքին ուղեծրերից ընդառաջ ելան հսկայացած աչքերը: Ակամա հետ քաշվեցի, բայց սաժենանոց ձեռքը ձգվեց իմ ետեւից. մնացած երեքի հաշվին սերտաճած բութն ու ցուցամատն այն նմանեցնում էին չանչի: Նստարանի ամենաձայրին բռնելով ինձ՝ չանչը սեղմեց մատներս.

- Ծանոթանանք. Դիտողական պիտույք: Իսկ դո՞ւք: Ձեզնից էլ, կար-

ծես,- հոտոտեց նա փքված քթանցքներով,- գրքի հոտ է գալիս:

- Այո՛, իսկապես անհնար է չընդունել ձեր դիտողականությունը,- հարցը չընդունեցի ես:

- Այնքան,- տարատրամաչափ ատամները բացեց չանչավորը,- որ ոչ ոք այն «դիտարժան» չի անվանի:

- Ինչ իմանաս,- համարձակվեցի երկչոտ հաճոյախոսություն անել ես,- գեղեցկությունն աշխարհում քիչ է, վատ ճաշակը՝ շատ:

- Այո՛, որքան վատ, այնքան լավ. առաջ դա կոչում էին «նախասահմանված ներդաշնակություն», harmonia predestinata: բայց եթե ուզում եք ձեռնարկ լինեմ ձեզ համար, հարցրեք: Բոլոր թվերը՝ զրոյից մինչեւ անվերջություն, ձեր տնօրինության տակ են:

Ես հանեցի նոթատետրս.

- Քանի ինքնասպանություն է եղել քաղաքացիական պատերազմի ընթացքում:

- Զրո դեպք:

- Ինչպե՞ս:

- Հենց այդպես. մինչ դու կհասցնես՝ քեզ, ուրիշներն արդեն՝ քեզ:

9

Այդ ընթացքում հոկտեմբերի քամին պոկեց փողոցային ծառերի վերջին տերեւները, եւ՛ սնդիկը ջերմաչափի մեջ, եւ՛ օրերը կարճացան, հող ու տանիք ծածկվեցին ձյունով: Ես սովորաբար տաքանում էի արագ քայլքով: Մի անգամ, շրջանցելով սառած գծերին կրճտալով սողացող տրամվայների շարանը, նկատեցի, որ բոլորի առջեւի հարթակին, վագոնավարի կողքին ծալովի աթոռակին նստած է մեկական ծերունի՝ տարիների տարիքից կքած, ձյունի փերթերը գդակի տակից դուրս պրծած: Ես կանգնեցի ու բաց թողեցի տրամվայների երկար շարքը. ամենուր վագոնավարների լծակների կողքին՝ զառամյալ ծերունիների դեմքեր: Տարակուսանքով դիմեցի մի անցորդի.

- Ովքե՞ր են:

- Բուքսեր,- մոթմոթաց նա եւ անցավ առաջ:

Անմիջապես գնացի Պատմության թանգարանի գրադարան: Տասնյակ ազնվականորեն կեռվախ քթեր ու նույնքան էլ ցցված ստորին շրթունքներ եւս մի անգամ անցան իմ երեւակայության միջով: Ես խնդրեցի «Թավշյա գիրքը» ու սկսեցի թերթել տոհմաբանությունները. Բերսեր կան, Բրյուսներ կան, Բուքսեր չկան:

Սա ի՞նչ կարող է նշանակել: Մտորելով գրքերում անհետացած հինավուրց Բուքսերի տոհմի մասին՝ նորից դուրս եկա փողոց, եւ այդտեղ շուտով ամեն ինչ պարզվեց. իջնելով յոթ բլուրներից մեկի լանջով, որոնց վրա տարածվել է Մոսկվան, մի վագոն էլ տեսա, որը երկաթը երկաթին կրճտացնելով՝ ապարդյուն փորձում էր հաղթահարել վերելքը: Այդ ժամանակ վագոնավարի նշանով զառամյալ բուքսն իջավ հարթակից ու վագոնի առջեւից կաղին տվեց գծերի երկայնքով. ծերունու ամեն քայլի հետ նրանից ավազ էր թափվում, եւ տրամվայը, նույնպես ծերունավարի տնքալով ու ծլնգալով, ավազապատ գծեր ով սկսեց սողալ վերեւ:

Այսպիսի համակարգով տեղիս տրամվայները հարմար են միայն դրա շնորհիվ աշխատանքից ուշացող աստիճանավորներին: Ես միայն մի անգամ վստահեցի այդ երկաթե կրիաներին, բայց պետք է խոստովանեմ, որ քիչ էր մնում ինձ... չափազանց հեռուն տանեին: Բանն այն է, որ, խառնելով կանգառները, տասնմեկ կոպեկանոց տոմսի փոխարեն ութկոպեկանոց էի վերցրել: Հսկիչը մերկացրեց ինձ: Զանցանքն արձանագրվեց, գործն ուղարկվեց հետաքննության, ապա եւ՛ գործը, եւ՛ ես՝ դատարան: Երեք կոպեկ թերավճարելու գործը լսվում էր Գերագույն դատարանում. ինձ, երկու մերկ սրերի ներքո, հասցրին մեղադրյալի աթոռին: Դահլիճը լեփ-լեցուն էր հետաքրքրասերների հսկա բազմությամբ: «Պատժի առավելագույն չափ» եւ «մահապատիժ» բառերը բերանից բերան էին անցնում:

Ես պաշտպանությունն այսպես կառուցեցի. քանի որ զանցանքս, որ հանցանք է դիտվում, պայմանական ռեֆլեքսների համալիրի հետեւանք է, ուրեմն թող պատիժն էլ պայմանական լինի: Դատարանը, խորհրդակցելով, որոշեց. մեղավոր ճանաչելով՝ ինձ գնդակահարել... թրխկաններով:

Մահապատժի համար նշանակված առավոտյան ինձ կանգնեցրին պատի տակ՝ մի դյուժին հրափողերի դիմաց, եւ աչքս էլ չհասցրի թարթել, երբ թնդաց համազարկն ու ինձ գնդակահարեցին: Գլխարկս հանելով՝ ներողություն խնդրեցի անհանգստության համար ու դուրս եկա. հիմա պայմանական դիակի վիճակում էի:

Քանի որ սովորաբար լուսաբացին են գնդակահարում, փողոցները դեռ դատարկ էին՝ գերեզմանատան կածանների պես. բացի այդ, օրը կիրակի էր, երբ կյանքը մի քիչ ուշ է արթնանում: Փոքր-ինչ գրգռված էի՝ դեռեւս վրաս զգալով սեւեռուն հրափողերը: Քաղաքը կամաց-կամաց արթնանում էր: Բացվում էին պանդոկներն ու գարեջրատները: Կոկորդս չորացել էր: Հրեցի դռներից մեկը՝ դեղնականաչ ցուցանակի տակ. ընդա-

ռաջ՝ գարեջրի հոտն ու ձայների ժխորը: Նստելով սեղանի մոտ՝ նայեցի գավաթներին ու դեմքերին, եւ ինձ տարօրինակ թվաց, որ քթերը գավաթների մեջ խցկած այցելուներից ոչ մեկը ոչ մեկի հետ չէր խոսում, բայց բոլորն անընդհատ խոսում էին: Ականջ դնելով՝ սկսեցի տարբերել բառերը, դրանք խոսողներից քիչ էին. բոլոր այցելուները, միայն փոքր-ինչ ձեւափոխելով, կրկնում էին նույն ազգային հայհոյանքը: Գավաթներում գարեջրի պակասելուն զուգահեռ արնակոխ աչքերով կարմիր դեմքերն ավելի ու ավելի կատաղի էին դառնում, ու թվում էր օդի բոլոր ծակոտիները լցված են ընտրովի հայհոյանքով: Բոլոր դեմքերը, բոլոր աչքերը՝ իրարից վրիպած, ոչ ոք ոչ մեկից նեղացած չի, եւ միայն արհեստական արմավենին է չդադարող հայհոյանքի կարկուտի տակ դողացնում սուր տերեւները: Ոչինչ չհասկանալով՝ մատի շարժումով մոտ կանչեցի մատուցողին ու խնդրեցի պարզաբանել տեղի ունեցողի իմաստը: Նա ծույլ ժպտալով պարզաբանեց.

- Առեւտրականներ են:

- Եվ ի՞նչ:

- Հայտնի է, որ. գնորդը վեց օր շարունակ ինչ լափ ասես թափում է գլխիդ, հանգիստ չունեն ո՛չ ապրանքը, ո՛չ մարդիկ. տնտղում են, շոշափում, հարցնում ու նորից հարցնում, բայց էլի էնպես չի ու էն չի, ցույց տուր, տեղը դիր, չափիր, մի հատ էլ չափիր ու լռիր. եւ ահա վեց օր լռում են, իսկ յոթերորդին...

Եվ սրբիչով սիսեռի թեփը թափելով սեղանից՝ մատուցողը վերադարձավ վաճառասեղանի մոտ:

Ես ժպտացի. ուրեմն այս մարդիկ, աշխատանքի տոնական դադարից օգտվելով, վերադարձնում էին այն ամենը, որ աչքերով ու ականջներով ներս էին քաշել երկար աշխատանքային շաբաթվա ընթացքում:

Այո՛, ես ժպտում էի, բայց, իհարկե, ոչ կոպիտ հայհոյանքներին, որ լսվում էին շուրջս, այլ դրանց արթնացրած աղոտ հիշողությանը. ես հիշեցի,- երեւի դուք էլ չեք մոռացել,- փոստատարի զարմանալի եղջերափողը, որի մեջ, ինչպես խեցում, թաքնվել էր սառած երգը, որպեսզի իր պահին դայլայլի ջերմությանն ու գարնանն ընդառաջ: Բայց հայհոյանքի բախտն ընդհանրապես ավելի է բերում, քան երգինը. ավաղ, պոետի օրացույցում կիրակիներ չկան, եւ եթե նրան երբեմն հաջողվում է չսառչել ճանապարհին, ապա, համենայնդեպս, սառնամանիքը վառում է սիրտը: Այսպես էի ես՝ պայմանական դիակս, գարեջրատանը նստած խորհում պայմանական ռեֆլեքսների մասին:

10

Դահլիճի հետին շարքերից դեպի առջեւիններին, սուզվելով ու դուրս թռչելով ուսերի ետեւից, մոտենում էր թղթի մի քառածալ պատառիկ. հասնելով ամբիոնի մոտ՝ այն մի պահ ընդհատեց բանախոսին:

- Ես գրություն եմ ստացել,- թերթիկը թափահարելով՝ ժպտաց ելույթ ունեցողը,- ինչ-որ մեկի կանացի ձեռագիրը հարցնում է Խորհրդային Միությունում կնոջ հասարակական դրության եւ սիրո ու ամուսնության իրավունքների մասին: Չէի մտածում անդրադառնալ այդ հարցերին, բայց եթե լսարանը պահանջում է, խնդրեմ՝ երկու բառով. կնոջ հանդեպ հին Ռուսաստանում եղած վերաբերմունքը արմատապես բարելավվել է. «մազը երկար, խելքը՝ կարճ» անսերդաշնակ արարածը վերջապես հասել է նրան, որ մազն էլ կարճ լինի:

Ինչ վերաբերում է սիրո եւ ընտանիքի հարցի գործնական ուսումնասիրությանը, ապա իմ երկու հարյուր տարիները ինձ մասամբ ազատում են այդ կետով հաշվետու լինելու պատասխանատվությունից: Ճիշտ է, ցանկանալով բարեխիղճ լինել մինչեւ վերջ ու հիշելով, որ հետաքրքրասիրությունը կարող են կրքի տեղ դնել, փորձեցի թեթեւ սիրախաղ անել մի զույգ սքանչելի աչքերի հետ: Ծանոթացանք այսպես. քայլում եմ փողոցով, առջեւից՝ մի բարեկազմ աղջիկ՝ պստլիկ տղայի ձեռքը բռնած: «Հավանաբար դաստիարակչուհի է»,- մտածում եմ ես ու հասնելով ետեւից՝ նայում գլխարկի տակ: Անծանոթուհին ամաչկոտ շրջվում է, եւ այդ պահին փուչիկը, մանկական կարմիր փուչիկը, թելը նրա մատների արանքից քաշելով՝ պատուհանների մոտով բարձրանում ու լողում է տանիքների թեքության վրայով: Անմիջապես ոտքերով ու ձեռքերով փաթաթվում եմ ջրհորդանին ու՝ գունավոր պղպջակի ետեւից: Վազում եմ դղրդացող թիթեղի վրայով, բայց քամու անսպասելի պոռթկումը փուչիկը նետում է հարեւան տանիքին: Ծալում եմ ծնկներս ու շենքից շենք ցատկում. թելը ձեռքիս է: Հրվում եմ տանիքի ցցունքից ու մանկական փուչիկին նստած՝ սահուն իջնում ապշած անծանոթուհու ու բերանը բացած տղեկի առաջ: Հետո ամեն ինչ, բնականաբար, իր բնական ընթացքով. աչուկներն ինձ ժամադրություն նշանակեցին, եւ արդեն ներքուստ ցնծում էի, բայց հիմար պատահականությունն ամեն ինչ փչացրեց: Ցանկանալով ավելի հաջողացնել հաջողությունը՝ աչքերի ճանապարհին մտա խանութ: Մոսկվայում նույն ցուցափեղկի տակ վաճառում են՝ կենդանի ծաղիկներ ու ձիու միս, արնաձուծ տզրուկներ ու մսի պահածոներ եւ այլն, եւ այլն: Թիթեղյա ուղղանկյան վրա սեւով կապույտին գրված էր. «Հրուշակե-

ղեն եւ Դագաղներ»: Խնդրեցի հնարավորինս մեծ մի տուփ կոնֆետ տալ, բայց, ըստ երեւույթին, մատս սխալ կողմ էի ուղղել: Ինձ մի մեծ, երկարավուն, թղթով շքեղ փաթեթավորված ու վարդագույն ժապավենով կապած տուփ հանձնեցին: Թպրտացող սրտով թակեցի գեղուհու դուռը: Նվերը տեսնելով՝ աչուկները փայլեցին,- ամեն ինչ հրաշալի էր դասավորվում,- ինձ հայացքներից համբույրների ճանապարհի կեսին զգալով՝ արձակեցի տուփի ժապավենը, աղջիկը քաղցրասերի ժպիտով բացեց թուղթը, ու երկուսս էլ հետ ընկանք բազմոցի թիկնակին. թղթի կույտից հառնել էր մի փոքրիկ, կապույտ, սպիտակ եզերագծով մանկական դագաղ: Երջանկության գնացքը սուլեց ու անցավ իմ կողքով: Օ՛, ինչ կտրուկ ու նեղ են այդ անիծյալ մոսկովյան սանդուղքները:

Այո՛, չեմ վախենում անկեղծ լինելուց եւ կասեմ, որ երեւակայություն ունեցող մարդիկ ընդհանրապես անելիք չունեն սիրո մեջ. չէ՞ որ իսկական շախմատիստը կարող է առանց տախտակին նայելու խաղալ, եւ եթե սիրել, ապա ավելի լավ է, առանց կնոջը նայելու: Մտածե՛ք հապա: Ո՞վ է հաջողություն վայելում կանանց շրջանում: Մինչ օրս չեմ կարողանում մոռանալ Հանովերից մի արխիվարիուսի պզուկոտ դեմքը, որը ողջ կյանքում գործ ունենալով միայն արխիվային թղթապանակների երիզների հետ, սովորել էր այնքան արագ կապել դրանք, որ կիրառելով մատնային տեխնիկան, իր հավաստմամբ, անդիմադրելի էր դարձել: «Մինչեւ ինձ կհասցնեն ասել «այո» կամ «ոչ», բոլոր երիզներն արդեն արձակված են լինում»,- պարծենում էր արխիվարիուսը, եւ ես հակված եմ մտածելու, որ նրա ասածի մեջ ամեն ինչ չէր պարծենկոտություն:

Այսպես, թե այնպես, հետագայում հրաժարվելով գործնական քայլերից, ես որոշեցի սահմանափակվել պրոբլեմի հետ տեսական ծանոթությամբ: Խորհրդային վիպագրության տրցակներն ինձ բերեցին չափազանց ուրախալի եզրակացությունների ու կանխատեսման. մինչ թերթերը պնդում են դասակարգերի անհաշտ ատելության մասին, նրանց վիպագրությունը չի ընդունում այլ սեր, բացի սքանչելի սպիտակգվարդիականուհու հանդեպ չեկիստի սիրուց, կարմիր պարտիզանուհու՝ սպիտակ սպայի, բանվորի՝ ազնվականուհու եւ տիտղոսազերծ իշխանի կամ կոմսի՝ հասարակ սեւահողային գեղջկուհու հանդեպ սիրուց: Այսպիսով, վստահելով ռուսական վեպի հին ռեալիստական ավանդույթներին՝ կարող ենք համարձակ սպասել, որ մուրճով խփված ամեն ինչ կհատվի լուսնի... մանգաղով. վաղ թե ուշ սոխակը կհաղթի գործարանային շչակին: Այդպես եղել է եւ այդպես կլինի. հակաթեզերը միշտ թեզերի ետեւից են ընկ-

նելու, բայց հերիք է ամուսնանան, եւ անմիջապես կհայտնվի ընտանիքի բարեկամ սինթեզը:

Ներկայումս այդ հարցին վերաբերող կարծիքները մի տեսակ առկախված վիճակում են եւ դեռ չեն հասցրել նստվածք տալ ու ամրանալ. ոմանք պահանջում են սիրո համար էլ կիրառել «բոլորը դեպի փողոց» կարգախոսը, մյուսները մարտնչում են հանուն ընտանեկան օջախի անհանգչելիության: Տիցիանի Amor profana եւ Amor celeste-ն *[Սեր երկրային եւ Սեր երկնային - իտ.],* որոնք պատկերված են ջրհորի երկու կողմում հաշտուխաղաղ նստած, կառչել են իրար մազերից ու մեկը մյուսին փորձում է գցել ջրհորը:

Ենթադրությունների դաշտ չմտնելով՝ ամեն դեպքում պետք է փաստենք մեծ սկիզբը սիրո վերակառուցման գործում, «մուտքը թանկ է փողից»՝ ինչպես ասել է հինգ որպե առաջ կույս մի աղջիկ, երբ պայմանավորված փողը չէին տվել: Ես չեմ հավատում, որ իրավաբանների հորինած օրենքները կարողանան պայքարել բնության օրենքների դեմ: Դեռեւս մեծն մեթոդաբան Ֆրենսիս Բեկոնն է գիտափորձը սահմանել այսպես. «Մենք միայն մեծացնում կամ փոքրացնում ենք մարմինների միջեւ տարածությունը. մնացածը անում է բնությունը»: Եթե ուշադրության առնենք, որ բնակարանային պայմաններն այն երկրում, որտեղից ես վերադարձել եմ, թույլ չի տալիս տարածության հետագա նվազեցում, ապա... թույլ տվեք վերադառնալ զեկույցիս:

11

ԽՍՀՄ տնտեսության վերականգումը դանդաղ սկսվեց, աննշան բաներից, ասես նմանակելով իրենց հյուսիսային գարնանը, որը բողբոջները դժվարությամբ դուրս է մղում ճյուղերի սառցակալած կեղեւի միջով: Եթե հիշողությունս չի դավաճանում, ամեն ինչ սկսվեց գերաններից, որ մարդիկ հանում էին միմյանց աչքերից: Առաջ նրանք նույնիսկ աչքի շյուղը չէին ուզում նկատել, բայց կարիքը մեզ սրատես է դարձնում. շուտով բիբերից դուրս քաշած գերաններն արդեն բավական էին շինարարություն սկսելու համար. քաղաքի արվարձաններում, այսուայնտեղ ոչ մեծ գերանակապ տնակներ հայտնվեցին, հիմնվեցին բնակարանային կոոպերատիվներ, մի խոսքով, կյանքը սկսեց կարգի ընկնել:

Ձեռնարկեցին զբոսայգիներում ծառեր տնկելուն (նախկիններից միայն բներն էին ցցվել). ընդ որում, կիրառվում էր արագ աճեցման պարզ, բայց սրամիտ եղանակ. հողի մեջ թաղված տնկուն թոկ էին կապում, նե-

տում ճախարակի վրայով ու ծառը ձգում վեր, մինչեւ հասներ թույլատրված բարձրության: Այդպիսով, երկու-երեք շաբաթում տկլոր այգիները ծածկվեցին ստվերախիտ ծառերով, որոնք փողոցներին վերադարձրին նախկին բարեկարգ տեսքը:

Բոլոր պատերին ու ցանկապատերին փակցված բազմաթիվ պաստառները գործնական խորհուրդներ էին տալիս անցորդներին, օրինակ. «Քանի որ ձուկը գլխից է հոտում, ուրեմն պոչից կեր» կամ «Եթե ուզում ես խնայել կոշկատակերդ, ձեռքերի վրա քայլիր»: Բոլորը չես հիշի: Պաստառների հետ մրցում էին թատերական ազդագրերը, որոնք ազդարարում էին վիթխարի ներկայացումներ ու ժողովրդական հանդեսներ: Այդ ալիքով տարված՝ ես չէի կարող անտարբեր հանդիսատես մնալ եւ որոշ նախագծեր ու սխեմաներ առաջարկեցի. այսպես, խորհրդակցելով մի մոսկովյան ռեժիսորի հետ, առաջարկեցի բեմադրել Գոգոլի «Ռեվիզորը», այսպես ասած, իմ մասշտաբներով, մյունխհաուզենաբար, ամեն ինչ գլխիվայր ծառս արած՝ սկսած վերնագրից: Պիեսը, ինչպես մենք ծրագրել էինք, պետք է կոչվեր «Երեսուն հազար թղթատարներ». գործողության կենտրոնը տեղաշարժվում էր անհատից դեպի զանգվածները. պիեսի հերոս էին դառնում 30000 աղքատ աշխատավորներ, որոնք թղթատար են ծառայում պերտերբուրգցի բարձրաստիճան պաշտոնյա Խլեստակովի՝ դաժան շահագործողի մոտ, որն ուժասպառ էր անում նրանց. ծրարներն անձրեւի պես թափվում են թղթատարների վրա, մինչեւ որ նրանք, ինքնակազմակերպվելով, չեն որոշում գործադուլ անել ու այլեւս չտանել ծրարները: Այդ ընթացքում սկսվում է Խլեստակովի սիրավեպը մի գեղեցիկ... չեմ հիշում ինչպես էր նրանց մոտ, քաղաքապետուհու, թե բանջարապետուհու հետ. մի խոսքով, Խլեստակովը նրան նամակ է ուղարկում առաջին թղթատարի հետ՝ երեկոյան ժամադրություն նշանակելով բանջարանոցում (ռուսների մոտ դա ընդունված է), բայց գործադուլավոր թղթատարը նամակը հասցեով չի տանում. Խլեստակովը, ամբողջ գիշեր բանջարանոցում սպասելով, վերադառնում է դեպարտամենտ եւ նույն բովանդակությամբ երկրորդ նամակը նույն հասցեով ուղարկում երկրորդ թղթատարի հետ. արդյունքը նույնն է. եւ՛ երկրորդը, եւ՛ երրորդը, եւ՛ հազարերորդը, եւ՛ հազարմեկերորդը չեն կատարում հանձնարարությունը: Խլեստակովը երեք տարի շարունակ գիշերներն ապարդյուն գնում է բանջարանոց՝ դեռեւս չկորցնելով անմատչելի գեղեցկուհու սիրտը նվաճելու հույսը. արդեն ծերացել է, նիհարել, բայց դեռ նորանոր թղթատարներ է ուղարկում. 1450-րդը, 1451-րդը, 2000-րդը: Դրվագը հաջորդում է դրվա-

գին: Փորձառու տարփածուն քաշքշուկ չի հանդուրժում սիրո մեջ: Նա թողել է բոլոր գործերն ու օրական արդեն ոչ թե մեկ, այլ տասը, քսան, հարյուր նամակ է գրում, չիմանալով, որ բոլորը տանում են գործադուլային կոմիտե: Այդ ընթացքում բանջարապետուհին, որը բնավ անմատչելի չէ, տարիներ շարունակ գոնե մի տող է սպասում ընտրյալից. նրա բանջարանոցը թոշնել ու ծածկվել է մոլախոտով: Եվ ահա գործադուլավորների մեջ գտնվում է մի շտրեյկբրեխեր,- դա հենց վերջինն է, 30000-րդը,- որը, չդիմանալով գործադուլի լարվածությանը, նամակը տանում է հասցեատիրոջը:

Դրանից հետո իրադարձությունները զարգանում են աղետի մեջ նետված քարի արագությամբ: Խլեստակովը շտապում է բանջարապետուհու մոտ. վերջապե՛ս: Բայց գործադուլային կոմիտեն էլ քնած չէ. շտրեյկբրեխերին գտնում են, բայց 30000-րդ նամակն արդեն դուրս է պրծել գործադուլավորների ձեռքից: Այդ ժամանակ նրանք բացում են 29999 տեղ չհասածները: Պատկերացնո՞ւմ եք այդ տեսարանը, երբ 30000 պատռված ծրարներ թռչում են օդում՝ սպիտակ քառանկյունիներով տեղալով հանդիսատեսների գլխին: Զայրալից ծայների երգչախումբը,- այստեղ դիմել էինք կոլեկտիվ արտասանության,- կարդում է 30000 համարյա նույնական տեքստ, դահլիճով մեկ, պատերն ու առաստաղը ճոճելով՝ դղրդում է. «Արի՛ բանջարանոց»: Իսկ երեսուն հազար ապստամբները կառուցիկ շարքերով դիմում են բանջարանոց, որ հաշվեհարդար տեսնեն բարձրաստիճան գայթակղիչի հետ: Ցանկապատի մոտ քչփչացող զույգը փորձում է փախչել, բայց բոլոր կողմերից թղթատարնե՛ր են, թղթատարնե՛ր, թղթատարնե՛ր: Գիշերը ցերեկվա պես ճերմակել է պաշտոնյայի աչքերին պարզած 30000 ճերմակ թերթիկներից: Նրա կյանքը մազից է կախված: Անձնազոհ բանջարապետուհին գոչում է, որ պատրաստ է տրվել բոլոր 30000-ին, միայն թե փրկի միակին: Թղթատարները շփոթված են, պատրաստ են թաքնվել իրենց ծրարներում: Այդ ժամանակ զղջացող Խլեստակովը հրապարակավ խոստովանում է, որ բոլորովին էլ բարձրաստիճան պաշտոնյա չէ, այլ ընդամենը խորհրդական, նույնպիսի աշխատավոր մարդ, ինչպես բոլորը: Հաշտություն: 30000-ի ձեռքերին՝ բահեր: «Ամեն բանջարին՝ իր ժամանակը» ժողովրդական երգի հնչյունների տակ բահերը զրնգում են գետնին՝ փխրեցնելով մոլախոտով պատած բանջարանոցը: Արշալույսի ալ ճաճանչներ: Աշխատավորական քրտինքը ճակատից սրբելով՝ Խլեստակովը ձեռքը պարզում է գալիք օրվան ընդառաջ. «Քողն ընկավ իմ աչքերից»: Քողի ետեւից ընկնում է նաեւ վարագույրը: Ինչպե՞ս է: Հը՞:

Արդեն փորձերը սկսվել էին, բայց այստեղ բախվեցինք մի անսպասելի խոչընդոտի. 30000-ի դերի համար հրավիրվել էր երկու դիվիզիա՝ Մոսկվայի մոտակա օկրուգներից, բայց իշխանությունները, ըստ երեւույթին վախենալով ռազմական հեղաշրջումից, ընդդիմացան մայրաքաղաք այդ քանակի զորք մտցնելուն: Ծուտով ես մեկնեցի՝ ռեժիսորին խնդրելով, որ եթե բեմադրությունը երբեւէ հաջողվի, ազդագրի վրա չբացվի իմ ինկոգնիտոն: Կարծում եմ, որ նա չի խախտի խոստումը:

Մոսկվայում գտնվելուս օրերին ջանում էի ոչ մի գիտական դասախոսություն բաց չթողնել: Ընդհանուր տնտեսական աշխուժացումը խիստ բարենպաստ էր ազդել նաեւ գիտական աշխատանքի ու հետազոտությունների տեմպի վրա: Ձեր թույլտվությամբ, տիկնա՛յք եւ պարոնա՛յք, ինձ թույլ կտամ ամփոփել երկու վերջին դասախոսությունների բովանդակությունը, որոնց ինձ հաջողվել էր ներկա լինել:

Առաջինը նվիրված էր նախահանգի հարցին. բանախոսը՝ մի հարգարժան ակադեմիկոս, որն իրեն նվիրել էր սլավոնական արմատական բառերի ուսումնասիրությանը, հարցադրում էր անում հին ռուսերենով հնչած առաջին հանգի վերաբերյալ: Բազմամյա աշխատանքը նրան հասցրել էր մեր թվարկության իններորդ դար. պարզվում է, որ հանգը հայտնագործել է Սուրբ Վլադիմիրը, որը հանգավորել է «ապրել» ու «խմել» բառերը: Այդ նախահանգից էլ, ապացուցում էր պերճախոս զեկուցողը, սկսվել է, աստիճանաբար բարդանալով, ռուսական ողջ տաղաչափությունը, բայց հանեք նրանից «խմել»-ը, այլեւս ոչինչ չի մնա «ապրել»-ը հանգավորելու համար, թուլացած հիմքը երերուն կդարձնի եւ՛ բոլոր վերնակառույցները, եւ՛ գրքերից շինած տնակը, որ ավելի հաստատուն չէ, քան խավաթղթից կառուցածը: Եզրափակելով՝ բանախոսն առաջարկում էր թարմացնել եզրաբանությունը՝ պոեզիան դասակարգելով ոչ թե քնարականի եւ էպիկականի, ինչպես առաջ էին անում, այլ ինքնաթորի եւ կրկնաթորի:

Երկրորդ դասախոսությունը, որ Հոգեկերտվածքների համահարթման Ինստիտուտի կազմակերպած ընթերցումների շարքից էր, ինձ գրավեց արդեն իր անվանումով. «Մազաբաժանի երկու կողմում»: Վաստակաշատ բանախոսը ներկայացնում էր մտածողության էլեկտրիֆիկացման բնագավառում համահարթման վերաբերյալ Ինստիտուտի աշխատանքները: Պարզվում է՝ Ինստիտուտի մի խումբ գիտական գործիչների հաջողվել էր ապացուցել, որ ուղեղում ծագող նյարդային հոսանքները, էլեկտրական հոսանքի նմանությամբ, տարածվում են միայն ուղեղի կիսագնդերի մակե-

րեւույթով, որոնք էլեկտրամտածողության բեւեռներն են: Հետո արդեն զուտ տեխնիկական ջանքերի խնդիր էր՝ եւս երկու-երեք սանտիմետր բարձրացնել մտածողությունը՝ տեղայնացնելով գանգատուփի մակերեւույթին. ճակատից ծոծրակ բացված մազաբաժանը մտածական գործընթացները սանրում է ձախ եւ աջ՝ հաջողությամբ նմանակելով գնդաձեւ մակերեւույթին արտապատկերված ուղեղի կիսագնդերը: Իհարկե, հարկ չկա մանրամասն բացատրել, որ այդ համարձակ գիտափորձում մազերը փոխարինում էին լարերին, որոնցով միտքը հաղորդվում է տարածության մեջ:

Սեղմ տեսական մասից հետո գիտնականն անցավ ցուցադրությանը. հարթակ բարձրացրին մի մարդու, որ մինչեւ ականջները արույրե թասակ էր կրում գլխին: Թասակը հանեցին, եւ բոլորս տեսանք կոկիկ ուղիղ մազաբաժանն ու հարթ, ասես գանգի մեջ արդուկած,- աջից ձախ ու ձախից աջ,- մազերը: Փորձարարը ձեռքն առավ ապակե ցուցածողն ու ուղղեց փորձարկվողի ձախ կիսագնդին.

- Տվյալ սուբյեկտի համար «Պետություն» գաղափարը տեղայնացված է ահա այստեղ, մազաբաժանից ձախ մազի ծայրին: Կետը նշված է կարմիր բծով. կարճատեսներին խնդրում եմ մոտենալ ու համոզվել: Հիմա՝ ուշադրությո՛ւն. սեղմում եմ «պետությունը»:

Ապակյա ծայրակալը դիպավ բծին, մազաբաժանի վրայով, աջից ձախ, կայծ անցավ, եւ օբյեկտի ծնոտները, բացվելով, արտաբերեցին. «Պետությունը կազմակերպված բռնություն է...»: Ապակյա ձողիկով ձեռքը հետ քաշվեց. ծնոտները, ատամն ատամին կրճտացնելով, փակվեցին: Գիտնականը նշան արեց օգնականին.

- Մազաբաժանը ձախ սանրեք: Այ այդպես. հիմա տեսնում եք, որ կարմիր կետը տեղափոխվել է մազաբաժանի աջ կողմը: Միացո՛ւմ:

Եվ նորից ապակե ցուցածողով՝ կետին, կայծը՝ ձախից աջ, ծնոտները բացվում են, եւ՝ «Պետությունն անհրաժեշտ փուլ է դեպի...»:

- Մնացածը թողնենք ատամների ետեւում,- ձողիկը թափահարեց փորձարարը: Ծնոտները փակվեցին, եւ փորձարկվողի փոխարեն բերեցին մեկ ուրիշին: Սա զզզված ու անհնազանդ տեսք ուներ. ինստիտուտի չորս պահակներ նրան դժվարությամբ բարձրացրին հարթակ, բիզբիզ մազերից չոր ճթթոցով թափվում էին կայծերը, բայց ջղաձգորեն պրկված բերանը փակված էր գելոցով:

- Միացրե՛ք բառերը,- կարգադրեց փորձարարը: Գելոցը հանեցին, եւ հորդեցին բառերն ու կամացուկ արձագանքվեցին բազմագլուխ լսարա-

նից. «հակահեղափոխություն», «սպիտակ գաղափարախոսություն», «հարյուրտոկոսանոց բուրժույ», «հեղափոխությունը վտանգված է», իսկ ինչ-որ մեկը տեղից վեր թռչելով՝ բղավում էր. «Սրա համար՝ գնդակահարել»:

Բայց գիտնականը, իրարանցումը զսպելով, պարզեց ձեռքերը:

- Քաղաքացիներ՛, կարգի եմ հրավիրում: Խնդրում եմ չընդհատել փորձը: Համար զրո մեքենան:

Օգնականը նետվեց գործիքների կողմը, եւ սովորական վարսավիրական մեքենան (միայն մի քիչ երկարացված ապակեպատյան բռնակներով) սահեց մազերի վրայով՝ արագ խուզելով փորձարկվողի մտածողությունը: Եվ որքան ավելի էին երկաթե ատամները մերկացնում գանգը՝ նորից ու նորից անցնելով գագաթի վրայով, հակահեղափոխականի խոսքն այնքան կորցնում էր բառերը, խունանում ու խճճվում էր: Մեքենան ավարտեց իր գործը, ու պահակն ավլեց խուզած աշխարհայեցողությունը: Փորձարկվողի ձեռքերը կախվեցին մտրակների պես, բայց լեզուն հուլորեն, կովի վզից կախ փայտե թակիչի նման շարունակում էր թխկթխկալ՝ նորից ու նորից կրկնելով ընդամենը երկու բառ. «խոսքի ազատություն - խոսք ազատություն - ազատության խոսք - ազա...»:

Փորձարարը մտահոգ տեսքով մոտեցավ օբյեկտին ու սկսեց ուշադիր զննել մերկացած գանգը: Գիտնականի դեմքը հանկարծ պայծառացավ, եւ նա լայն թաթը պարզեց փորձարկվողի գագաթին.

- Այստեղ էլի երկու մազ կա,- լայնաբերան ժպտաց լսարանին, եւ երկու քառակուսի եղունգները սեղմելով անտեսանելի ինչ-որ բանի, քաշեց:- Հիմա մաքուր է: Ոչ մի ծպտուն:

Գիտնականը փչեց մատներին ու վերադարձավ ամբիոնի մոտ: Պահակը ավլեց-վերջացրեց ու պատրաստվում էր դուրս տանել հոգեբանական աղբը: Այդ պահին ինչ-որ խուլ ձայն լսվեց վերջին շարքերից. հորանջ, թե խուլ ջղակծկում: Գիտնականը, երկար դադար տալով, ակնոցը խստորեն պտտեց սսկված շարքերի վրայով եւ ասաց.

- Հանգստությո՛ւն: Հիշենք ռուսական ասացվածքը. «Գլուխը կորցրածը, մազերի համար լաց չի լինի»:

12

Ով Մոսկվայում ներկա չի եղել մայիսմեկյան շքերթին, չգիտի ինչ է ժողովրդական տոնախմբությունը: Մայիսին ընդառաջ բաց են բոլոր պա-

տուհանների փեղկերը, գարնանային ջրափոսերում, ճերմակ ամպերի արտացոլմանը խառնված, թրթռում են դրոշների կարմիր ցոլքերը. փողոցից փողոց զարկում են թմբուկները, լսվում է շարասյուների հաստատուն երթը, միլիոնատոք հեղեղները հորդում են Կարմիր հրապարակ, որպեսզի իբրեւ մարդկային ջրվեժ թափվեն ներքեւ՝ դեպի սառույցից ազատագրված, նույնքան գարնանայնորեն սրընթաց, ափերից դուրս եկած Մոսկվա գետը: Ծեփորների փողերն օդ են նետում «Ինտերնացիոնալը», կարմիր դրոշները աքաղաղի հսկա կատարների պես փողփողում են քամուց, իսկ վեր ցցված սվինների եռանիստ կտուցները ծփում են տրիբունաների տակ: Խցկված ամբոխի մեջ՝ երկար հետեւում էի իր մարտակոչերը բղավող, դրոշների ու ժապավենների ալ փետրափնջերը ծածանող, երկնքի բոլոր աստղերը մանրածավարի պես կտցելու, ապա այնտեղ բուռ-բուռ ալ հնգաթեւեր շպրտելու պատրաստ եռանիստ հսկա կտուցներով, մեծագույն զայրույթով առլեցուն, բեւեռից բեւեռ բացած թեւերով թռիչքի ուղարկող այդ Տոնին, որն անսպասելիորեն մի լեգենդ էր արթնացրել իմ մեջ, որ մի քանի օր առաջ գտել էի մոսկովյան գրապահոցներից մեկում, բայց անմիջապես էլ մոռացել օրերի ու գործերի արագ հերթափոխման մեջ: Լեգենդը, սկսեցի հիշել, մի ֆրանսիացու մասին էր, որը դեռեւս 1761 թվականին ժամանելով Մոսկվա, այնուհետեւ, որպեսզի... բայց այդ ժամանակ պղնձե փողերը հազարերորդ անգամ ճչացին «Ինտերնացիոնալը», ամբոխը ճոճվեց, ինչ-որ մեկը տրորեց կոշտուկս, ու ես կորցրի թելը:

Միայն երեկոյան կողմ տոնախմբությունը սկսեց թոշնել, ինչպես գարնանային ծաղիկը՝ քամու տակ: Պատերին դեռ վառվում էին լույսերի զիգզագները, բայց ամբոխները նոսրացել էին. հետո պատուհանները փակեցին ապակե կոպերը, լույսերը մարեցին, ու միայն ես էի քայլում ամայի փողոցով՝ փորձելով հիշել կիսով մոռացված լեգենդի մանրամասները. հիշողությունս աստիճանաբար վերականգնեց ամեն ինչ, ընդհուպ մինչեւ տիտղոսաթերթը՝ հստակ վերտառությամբ. «Սատանան՝ կառքով»:

1761 թվականին, պատմում էր լեգենդը, ոմն ֆրանսիացի հեռուներից Մոսկվա է գալիս գտնելու իրեն խիստ անհրաժեշտ մի մարդու, որին կորցրել էր ճանապարհին եւ միայն աղոտ հիշում էր, որ փնտրվող անձը ապրում է Նիկոլա Փոքրի մոտ, Աքլորի ոտերի փողոցում: Ժամանելով Մոսկվա՝ ֆրանսիացին կառք վարձեց ու պատվիրեց գնալ Նիկոլայի մոտ, Աքլորի ոտեր: Կառապանը գլուխն օրորելով պատասխանեց, որ այդպիսի տեղ չգիտի. կա Նիկոլա Թրջված, Միկոլա Կարմիր զանգ, Նիկոլա Երեք

սարի վրա, բայց Աքլորի ոտերի Նիկոլա... Այդ ժամանակ եկվորը նրան կարգադրեց կառքը խաչմերուկից խաչմերուկ քշել՝ որոշելով հարցուփորձ անել անցորդներին: Կառապանը թափ տվեց մտրակն, ու շարժվեցին: Հանդիպած անցորդները հիշում էին. մեկը՝ Նիկոլա Ծոմապահին, մյուսը՝ Պըժիի Նիկոլային, ոմանք Նիկոլային՝ Հավի ոտերի փողոցից կամ Նիկոլային՝ Ատաղձագործների փողոցում: Բայց Աքլորի ոտերի Նիկոլային ոչ ոք չգիտեր: Եվ անիվները գլորվում էին՝ փնտրելով կորած տաճարը: Վրա հասավ գիշերը, հոգնել էին եւ՛ ձին, եւ՛ կառապանը, եւ՛ մտրակը, բայց համառ ֆրանսիացին ասաց, որ չի իջնի նստիքից, մինչեւ Աքլորի ոտերը չգտնեն: Կառապանը թափ տվեց սանձը, եւ ծանր ուղեկառքի անվագոտիները նորից թխկթխկացին Մոսկվայի գիշերային փողոցներում: Այդ ժամանակ քաղաքը շուտ էր քնում, ու միայն երկու-երեք քաղաքացիներ, որոնց կանգնեցնում էր խավարից ելած ձայնը, շտապում էին պատասխանել՝ «չգիտեմ» ու արագ թաքնվում էին տներում: Վառվեց արեւը, մարեց, նորից բռնկվեց ու կրկին թաղվեց խավարի մեջ, իսկ որոնումները շարունակվում էին: Հոգնած յաբուն, սայթաքելով, մի կերպ քաշում էր ծանր կառքը, կառապանը քնկոտ օրորվում էր նստիքին, բայց համառ եկվորը, իրեն օտար բառերը աղավաղելով, պահանջում էր՝ առա՛ջ, առա՛ջ: Հիմա արդեն կանգ էին առնում ամեն եկեղեցու մոտ, եւ եթե գիշեր էր, կառապանը գնում ու ծեծում էր հարեւան տների պատուհանները: Արթնացած մարդիկ դուրս էին նայում Աքլորի ոտերի Նիկոլայի մասին հարցին ընդառաջ. բայց պատուհաններն անմիջապես էլ փակվում էին՝ կարճ «ոչ» նետելով: Մի անգամ Միկոլա Փոքրի եկեղեցու պահակը,- իսկ եկեղեցին որ Հավի ոտերի փողոցում էր՝ խաչերը բարձրացրած երկու Մոլչանովկաներով հատվող նրբանցքների խառնաշփոթում,- ոսկրոտ մատների թակոց լսեց պահատնակի լուսամուտին: Սահճակից վեր կենալով՝ նա տեսավ (լուսնյակ գիշեր էր) դրսից ապակուն ծեփված, մազախռիվ մի դեմք: «Ո՞վ է,- ձայն տվեց պահակը,- ի՞նչ եք ուզում», եւ ինչոր ձայն դռան ետեւից աղճատված, բայց պարզորոշ պատասխանեց. «Պտի Նիկոլա Աքլորի ոտ»: Պահակը խաչակնքվեց՝ վախեցած աղոթք մրմնջալով, իսկ համբերատար ֆրանսիացին, վերադառնալով իր կառքը, շարունակեց որոնումները: Ծուտով սկսեց լեգենդ հյուսվել տարօրինակ եկվորի շուրջը. մարդիկ, որոնց հանդիպել էր խորհրդավոր ուղեւորը, պատմում էին սատանայի մասին, որ կառքով պտտվում է Մոսկվայի գիշերային փողոցներում՝ փնտրելով սատանայի ստորերկրյա տաճարը, իսկ նրա ձախ կրունկը, ինչպես հայտնի է, աքլորի է:

Հիմա արդեն անցորդները, խորհրդավոր կառքի թխկոցը լսելով, նետվում էին կողային նրբանցքները՝ չսպասելով հանդիպման ու հարցի: Եվ կառքով սատանան ապարդյուն անցնում էր խաչմերուկից խաչմերուկ՝ ոչ մի տեղ կենդանի շունչ չգտնելով:

Հին լեգենդի պատկերներին տրված՝ անցնում էի լռած փողոցներով, ոտք դնելով ստվերների ու լուսնաբծերի վրա, մինչեւ որ դիպվածը մտցրեց մի նեղ ու երկար փակուղի: Ծրջվեցի, որ դուրս գամ քարե պարկից, բայց այդ ժամանակ անկյունադարձից հանկարծ անիվների ցածր, բայց հստակ թխկոց լսվեց: Փորձելով առաջ անցնել՝ արագացրի քայլս: Ո՛չ, արդեն ուշ էր. զառամյալ ուղեկառքը փակել էր ելքը: Այո՛, նրանք էին. հալից ընկած յաբուն, որի վերուվար անող կողոսկրերի միջով լուսնի շողերը ստվերների կմախքային հյուսվածք էին նետում սալարկին. ոսկրոտ ձեռքերով սանձը բռնած կառապանն ու փողոցների հեռուն ուշադիր զննող ուղեւորի աղոտ ուրվապատկերը: Ես սեղմվեցի պատին՝ փորձելով թաքնվել տան ելուստի ետեւը: Բայց ինձ արդեն նկատել էին. ցածրակող ճամփորդական ցիլինդրը, որպիսիք վաղուց արդեն չեն կրում, բարձրացավ ուղեւորի գլխից, ու մեռյալ շրթունքները շարժվեցին: Բայց ես, հարցը կանխելով, աղոտ պատկերին նետեցի թլվատ պատասխանը.

- Լսե՛ք, դո՛ւք, տեսի՛ք, ո՞ւր է ձեր տեսիլը: Լեգե՞նդ ենք խաղալու: Դուք փնտրում եք Աքլորի ոտերի տաճարը: Բայց դրանք այստեղ հազարներով են. թակեք ցանկացած դուռ, եւ այն ներս կթողնի ձեզ: Մի՞թե չեն փողփողում նրանց կարմիր աքաղաղի կատարները նրանց տների տանիքներին, մի՞թե չշողացին երկինք հառած նրանց պողպատյա կտուցները: Ամեն տուն (եթե հավատանք նրանց հեքիաթներին), ամեն գաղափար (եթե հավատանք նրանց գրքերին) աքլորի ոտերի վրա է: Փորձեք. ձեռք տվեք, եւ այդ ամենը, փետուրները ցցած, կնետվի մեզ վրա ու կկտցի, մեր բոլոր Կրուպներով հանդերձ: Իսկ ձեր կառապանին խորհուրդ կտայի անհապաղ դիմել արհմիություն. թող այս ամենի համար հարյուր հիսուներկու տարվա հարկ գանձեն ձեզնից: Ծահագործող, հետն էլ՝ սատանա:

Եվ զայրացած, առանց ձեւականությունների քայլ արեցի ու անցա ուղիղ ուրվականի միջով: Օրվա իրադարձություններն անսահման հոգնեցրել էին: Քունը վաղուց արդեն սպասում էր իմ վերադարձին: Առավոտյան դժվարությամբ քանդեցի իրականության, քնի ու լեգենդների կծիկը:

13

Սակայն այստեղ հարգարժան հավաքույթին հայտնածս դատարկ բան է, ընդամենը մի քանի մանր փենևի՝ թափված ինչպես լիքը լցված գանձատուփի բերանից: Ողջ Ռուսաստանն ահա այստեղ է, այս գագաթի տակ: Եվ ինձ առնվազն մի դյուժին հատոր պետք կլինի, որպեսզի տեղավորեմ Խորհուրդների երկիր կատարած ուղեւորության ողջ փորձը:

Այսպես, թե այնպես, զգալով, որ գանձատուփը լիքն է, որոշեցի, որ պետք է մտածել վերադառնալու մասին: Քչերին է հաջողվում արտասահմանյան անձնագիր ստանալ ԽՍՀՄ-ում: Առաջին իսկ պաշտոնյան, որին դիմեցի, պատասխանեց Դանտեի Դժոխքի մուտքին գրածի տոնով.

- Ոչ մի կենդանի շունչ:

Բայց ես ինձ չկորցրի.

- Կներեք, ի՞նչ կենդանի շունչ, երբ ինձ պայմանական գնդակահարել են:

Եվ հայթայթելով անհրաժեշտ վկայագրերը՝ գործը շարժեցի մեռյալ կետից: Մի քանի շաբաթվա չարչարանքից հետո տոմսն ու անցաթուղթը գրպանումս էին:

Եկավ վերջին օրը: Գնացքս մեկնում էր վեցից մի քանի րոպե անց: Երկնքում շողում էր հուլիսյան կեսօրվա արեւը. իմ տրամադրության տակ մի քանի ժամ կար, ու որոշեցի դրանք տալ Մոսկվայի հետ հրաժեշտին: Անշտապ քայլելով հասա գետի վրայով ձգված կամուրջներից մեկին, ու ոտքերս ճաղաշարից կախ՝ վերջին անգամ նայում էի ալիքներին ու փրփուրին, որ քշում էր ժամանակի պես արագ հոսանքը: Տղմոտ ափերից հասնում էր գորտերի երկարուձիգ կռկռոցը՝ վերջին անգամ հիշեցնելով ավանդությունն այն մասին, թե ինչպես է կառուցվել այդ զարմանալի քաղաքը (ավանդույթի սկիզբը կարող եք կարդալ նշանավոր ռուս պատմաբան Զաբելինի մոտ) հեռու անցյալում, երբ տների փոխարեն այստեղ ճիմաթմբեր էին, հրապարակների փոխարեն՝ տղմածածկ ճահիճներ, մարդկանց փոխարեն՝ գորտեր, չգիտես որտեղից եկավ արքայազն Մոսն ու չգիտես ինչու կնության ուզեց Կվա արքայադստերը: Ճահիճների ու խրուտների արանքում ամուսնական ապարանք կառուցեցին ու տոնեցին հարսանիքը: Բայց հենց Մոսն ու Կվան մնացին մենակ, Կվան լսեց, որ ինչ-որ մեկը իր անունն է տալիս: «Գնա՛,- ասում է ամուսնուն, որը, կարծես, կնոջ մոտ պիտի գար, ոչ թե գնար,- տես ով է կանչում ինձ»: Սրտնեղեց Մոսը, բայց դուրս եկավ, նայեց՝ ճիմաթմբին նստած են դոդոշն ու ձկնկուլը: Մոսը քշեց դոդոշին, բայց հենց վերադարձավ կնոջ մոտ, նորից

մեկը նրա անունն է կանչում: Ու կինը՝ նորից. «Գնա տես»: Բարկացավ Մոսն ու հրամայեց ուրիշ տեղ կառուցել ամուսնական ապարանքը: Բայց այնտեղ էլ, հենց մենակ մնաց ջահել կնոջ հետ, բոլոր կողմերից ու բոլոր ճիմաթմբերից Կվա թագուհու անունն են կանչում, կտրում ամուսնուց: Լաց եղավ Կվա թագուհին ու խնդրեց մի երրորդ տեղ տուն շինել: Իսկ հետո չորրորդ, հինգերորդ ու երեսուներեքերորդ տեղը: Թխկում են կացինները, բարձրանում՝ տունը տան ետեւից, տունը տանը կից. եւ որտեղ ճիմաթմբեր էին, այնտեղ արդեն տանիք է, որտեղ լճեր՝ հրապարակներ են, որտեղ կռկռացող գորտերով խրուտներ ու ճահիճներ՝ մեծ քաղաք է՝ մաքրագույն ռուսաց լեզվի մաքուր այասող բարբառով խոսող մարդկանցով: Եվ հիմա արդեն ոչ ոք չէր կարող խանգարել նրան, որ Մոսն ու Կվան վերջապես միանային նույնիսկ անուններով՝ «Մոսկվա»:

Ճաղաշարից կտրվելով՝ ես նույն անշտապ ընթացքով ուղղվեցի ծանոթ փողոցների կողմը: Ահա քամին շուռ տվեց մարմելադ ծախող տղեկի վաճառատախտակը. տղան սողեսող է անում գետնին, հավաքում թափված մարմելադներն ու թաթախելով մոտակա ջրափոսում՝ կոկիկ շարում տախտակին: Քայլում եմ առաջ: Կողքովս՝ ծանոթ ցանկապատի տախտակները. վերեւում, շիկավուն տառերը արեւին տված, ծգվել են բառերը. «Թքով է կպցրած»: Մի վայրկյան կանգնում եմ՝ փորձելով պատկերացնել գրածի իմաստը: Ու նորից, ճակատագրին հլու, կողքով ու՝ հեռուն:

Ահա՝ մեջքը ազդագրերի սյանը տված, հարմոնիկը՝ թռչկոտող արմունկների արանքում, հարբած. «Ա՛խ, խնձորի՛կ իմ,- երգում է,- կողքից՝ տերեւներ, կսիրեի քեզ, բայց փոսը կընկնեմ», սակայն ազդագրերի սյունը հանկարծ շրջվում է՝ տապալելով եւ՛ երգը, եւ՛ երգչին: Առա՛ջ:

Ընդառաջ է լողում հսկա հրապարակը. հրապարակի կենտրոնում՝ իր հինգ խաչերը երկինք նետած տաճարը. ահռելի տաճարի կողքին՝ ակնհայտորեն հեղափոխության տապալած հուշարձանի բարձր մարմարե պատվանդանը: Պետք է խոստովանեմ, որ երբեք չեմ կարողացել անտարբեր անցնել դատարկ պատվանդանների կողքով: Անկատարությունը, անավարտությունը միշտ զայրացրել է ինձ: Այդպես էլ հիմա. արագ մագլցեցի պատվանդանի մարմարին եւ անխռով, արժանապատվությամբ ու վիթխարակերտությամբ առլեցուն կեցվածք ընդունեցի: Ներքեւով անցնում էր փողոցային լուսանկարիչը: Բավական էր մի արծաթադրամ, եւ նրա գլուխն անմիջապես սուզվեց սեւ մահուդի տակ: Կանգնել էի՝ ձեռքս ընկնող արեւին պարզած, եւ կարող էի տեսնել ինչպես է աստիճանաբար հավաքվում ամբոխը՝ հավանության աղաղակներով հե-

տեւելով տպավորիչ լուսանկարահանմանը: Ասենք, էկրանն ավելի կարճ ու համոզիչ կպատմի: Ահա...

Ծափահարությունների որոտը ողջունեց կախարդական լապտերից էկրանին թռած պատկերը: Ձեկուցողը, խոնարհվելով, ձեռքի շարժումով լռություն խնդրեց:

- Տիկնա՛յք եւ պարոնա՛յք, չէի ցանկանա, որ սա ակնարկ դիտվեր: Սակայն, վերադառնալով պատմությանս, պետք է հայտնեմ, որ հուշարձանի շուրջը հրապարակը հեղեղած մոսկվացիներն ինձ վերաբերվում էին, ինչպես այս դահլիճը հեղեղածները. ծափերը, «վերադարձեք», «ցտեսություն» եւ «ում եք թողնում մեզ» գոչյունները երկար ժամանակ չէին թողնում իջնել պատվանդանից. եթե դրան գումարենք նաեւ այն հանգամանքը, որ լուսանկարիչը շատ երկար էր դադար պահում, ապա ձեզ զարմանալի չի թվա, որ ուշացա գնացքից. մեկնեց հենց քթիս տակից՝ ինձ տոմսը ձեռքիս թողնելով դատարկ կառամատույցին:

Վիճակը շատ լուրջ էր: Բանն այն է, որ գնացքները Մոսկվայից արտասահման մեկնում են (ավելի ճիշտ, մեկնում էին այն ժամանակ, որի մասին պատմում եմ) ոչ ավելի հաճախ, քան ամիսը մեկ անգամ: Դա խախտում էր իմ բոլոր պլանները, ավելին, ինձ զրկում էր Արեւմուտքում կոնտրագենտներին տված խոստումս պահելու հնարավորությունից, ինձ՝ բարոն Մյունխհաուզենիս (տարօրինակ է նունիսկ մտածելն ու արտաբերելը) դարձնելով ստախոս ու խաբեբա, որը դավաճանում է իր խոսքին:

Բայց ուրիշ ելք չկար: Վերադարձա քաղաք եւ ամբողջ գիշեր Ստրաստնոյ բուլվարի նստարաններից մեկին նստած՝ մտածում էի ինչ անեմ: Իսկ այդ ընթացքում ժամանակը վայրկյանները դարձնում էր րոպեներ, րոպեները՝ ժամեր. իմ տոմսի վրա նշված օրը երեկ դարձավ, ու հանկարծ՝ միտք. իսկ չփորձե՞մ, արդյոք, փնտրել երեկվա օրը:

Անմիջապես գնացի թերթի խմբագրություն եւ հայտարարություններն ընդունողի պատուհանից ներս խցկեցի այս տեքստը. «ԿՈՐԵԼ Է երեկվա օրը: Գտնողին խնդրվում է՝ լուրջ պարգեւավճարով...»: Եվ այլն, եւ այլն:

- Լա՛վ, երկու օրից կտպենք:

- Սպասե՛ք,- տաքացա ես,- բայց երկու օրից դա արդեն երեկվա չի լինի, այլ... ինչպես եք ասո՞ւմ:

- Երեքվա,- պատասխանեցին պատուհանիկի հակառակ կողմից, իսկ ինձնից հետո հերթում կանգնածը խորհուրդ տվեց.

- Չորեքվա՛, թող գրեն չորեքվա, ավելի ճիշտ կլինի՝ մի քանի օրվա հաշվարկով, դրանից շուտ չեն տպի:

- Բայց ինչպե՞ս,- պատեպատ խփվեցի երկու խորհուրդների արանքում:- Ինձ ոչ երեքվա է պետք, ոչ չորեքվա, այլ երեկվա օրը, մաքուր ռուսերենով ասում եմ ձեզ...

- Իսկ եթե ձեզ անպայման երեկվանն է պետք,- առարկեց պատուհանիկը,- երրորդ օրը պիտի հայտարարություն տայիք, կարգը չգիտեք:

- Բայց ինչպե՞ս,- ուզում էի վրա պրծնել ես, բայց հասկանալով, որ ընդամենը ժամանակ եմ վատնում, որոշեցի այլ կերպ գործել: Մտքումս վերուդիր անելով այն հաստատություններն ու անձանց, որոնց կարող էի դիմել, հիշեցի Հերվա ձյան հետազոտության ասոցիացիան: Հեռախոսազանգ, կարճ խոսակցություն, եւ կառապանն ինձ տանում է Ասոցիացիայի արխիվ: Կառքն անկյունագծով կտրում է քաղաքը, մենք անցնում ենք քաղաքադուռը, քաղաքից դուրս, ամառային փոշոտ խճուղուց անդին Արխիվի կարմիր տանիքն է՝ կիսով թաքնված խուլ քարե պարսպի բարձր շրջագծի ետեւում: Մոտենում ենք դարպասին: Քաշում եմ զանգի ժանգոտած օղակը: Ի պատասխան՝ երկար մեռյալ լռություն: Մի անգամ էլ՝ օղակը: Խուլ պատից այն կողմ՝ դանդաղ մոտեցող քայլեր, եւ տարօրինակ է՝ հողը ոտքերի տակ խշխշում ու ճռռում է (սա ի՞նչ բան է): Վերջապես՝ բանալու ժանգոտ ձայն, եւ պղնձակոփ դռնակը բացվում է: Ես ապշած եմ. հուլիսյան ձյուն: Այո՛, այո՛, պարսպից այն կողմ, բարձր պատի շրջագծի ներսում՝ մի քանի ամսով ուշացած ձմեռ. մերկ ճյուղերին՝ սառցալուլաներ, եւ ամենուր՝ Արխիվի խարխուլ շենքը շրջապատող ծերացած այգու ածուների վրա՝ ձնաթմբեր ու փխրուն ճերմակ ձյուն: Ծառան, մի կորաքամակ կնճռապատ ծերուկ, ոտքերը դանդաղ շարժելով՝ ինձ ծառուղով առաջնորդում է դեպի առմուտքը, իսկ օդում փափուկ սպիտակ փաթիլներ են, որ անձայն թափվում են հողին: Ես չեմ հարցնում, ես գիտեմ. դա հերվա ձյունն է տեղում:

Երեկվա օրերի բաժնի վարիչը, մի ճաղատ, կապույտ ապակիներով կարկատած աչքերով պարոն, զգուշացված էր այցիս մասին ու շատ սիրալիր դիմավորեց:

- Պատահո՛ւմ է, պատահո՛ւմ է,- ժպտաց նա ինձ,- մեկը մի ակնթարթ է ձեռքից բաց թողնում, մյուսը՝ ամբողջ կյանքը: Իսկ եթե նաեւ diem perdidi *[Ես կորցրի օրը - լատ.):* Այստեղ՝ կորսված օր], ապա մենք՝ մանգաղի թափած հասկերը հավաքող աստվածաշնչյան Հռութի պես հավաքում ենք հնձածն ու ապրածը: Ու ոչինչ չի կորչի. ոչ մի անցած ակնթարթ: Հռութը հավաքում է Ռուսիան, հը՛մ: Ահա. ստացեք ձեր երեկվա օրը:

Եվ ինձ պարզվեց սարդոստայնի գույնի մի կոկիկ, համարակալած

տուփ: Բացեցի կափարիչը. նրա տակ, բամբակով փաթաթած, վայրկյանաչափի թրթռացող սլաքների փշերը ցցած, քնկոտ շուռումուռ էր գալիս իմ երեկվա օրը: Չգիտեի ինչպես շնորհակալ լինեմ:

Կապույտ ակնոցն ինձ առաջարկեց նայել Հռութ-Ռուսիայի արխիվը, բայց ես, վախենալով, որ նորից կկորցնեմ կորցրածը, ներողություն խնդրեցի ու քայլեցի դեպի ելքը: Հերվա ձյան փաթիլներն ինձ ուղեկցեցին մինչեւ դռնակը: Ամբողջովին ճերմակած դուրս եկա պարսպի շրջագծից, եւ ամառային արեւը ակնթարթորեն հալեցրեց ձյան նստվածքն ու չորացրեց հագուստս: Ես ցատկեցի կառքի մեջ:

- Կայարա՛ն:

Կառապանը թափ տվեց սանձն ու մենք շարժվեցինք: Բայց մի տեսակ չէի հավատում այդ ամենի իրական լինելուն, ու չնայած ժամանակն անտեսանելի է, աչքերս ապացույցներ էին փնտրում: Ու հանկարծ, նայելով փողոցի ժամացույցին, տեսա, որ սլաքը հակառակ է պտտվում. վեցից՝ հինգ, հինգից՝ չորս եւ այլն: Ընդառաջ վազեց թերթավաճառը:

- Արտակարգ թողարկո՛ւմ: Վերջին լուրե՛ր:

Թփթփացնելով կառապանի մեջքին՝ կանգնեցրի կառքը, որ հինգ կոպեկանոցը փոխանակեմ թերթով: Տրոփող սրտով բացեցի քառածալ թուղթը. փա՛ռք Աստծո, գլխագրի տակ հստակ դրոշմված էր երեկվա ամսաթիվը: Ու մենք շարժվեցինք առաջ:

Հիմա արդեն հանգիստ զննում էի անիվների տակից հետ փախչող փողոցը: Ահա երեւաց երեկվա տղեկը. երեկվա քամին շուռ տվեց նրա մարմելադներով վաճառատախտակը, ու խեղճը նորից, մարմելադները ջրափոսում լվանալով, շարում է տախտակին: Ահա եւ մեջքը ազդագրերի սյանը տված հարբեցողը՝ արմունկների արանքում թռչկոտող հարմոնիկով. «Ա՛խ, խնձորի՛կ իմ, կողքից՝ տերեւներ...», ու գիտեմ, որ ազդագրերի սյունը հիմա շուռ կգա եւ երգն ու երգչին կգցի ցեխի մեջ: Ու ես շրջվում եմ. ըստ էության, «հավերժ վերադարձը», որի մասին տեսաբանում էր Նիցշեն, եթե նույնիսկ արժանի չէ քննադատության, բայց եւ չի արժանացել ծանձրույթի:

Վերջապես հասանք կայարան: Ես դարձյալ կառամատույցին եմ: Մատուցում են գնացքը, որ հետեւանց դանդաղ սողում է կայարան: Ինձ, որպես պայմանական դիակի՝ հատուկ վագոն. ապրանքատար է, կարմիր տախտակներով կազմած վանդակ՝ չորս անիվի վրա, դռան վրա՝ կավիճով. «ար. փչ. քաղ. համ.», դռան գլխին՝ փշատերեւ կանաչ ճյուղ: Մի քիչ մռայլ է, բայց ինչ արած. թույլ եմ տալիս ինձ բարձեն: Դուռը ծխնիների

վրայով գլորվելով՝ փակվում է: Կատարյալ խավարում նստած՝ լսում եմ, թե ինչպես են դրսից կնիքում վագոնը:

Հետո... հետո երկու օր ճանապարհին, մութ վանդակում. բավականաչափ ժամանակ է, ամբողջ տեսածն ու լսածը մտարկելու, մղեղը ցորենից զատելու եւ վերջին եզրահանգումներն անելու համար: Բայց ձեր թույլտվությամբ, տիկնա՛յք եւ պարոնա՛յք, այդ ամենի կնիքն առայժմ չենք հանի: Ես ավարտեցի:

Բարոն Մյունխհաուզենը խոնարհվեց հասարակությանն ու քայլ արեց ամբիոնից ներքեւ տանող աստիճաններով: Բայց այստեղ նրա ետեւից հասավ օվացիան: Լոնդոնի Թագավորական ընկերության պատերը դեռ երբեք այդպիսի դղրդոց ու մռնչյուն չէին լսել. հազարավոր ափեր խփվում էին իրար ու բոլոր բերանները մի անուն էին բղավում. Մյունխհաուզեն:

Գլուխ VI
Անհավանականությունների տեսություն

Բարոնը բավականաչափ վարժ էր փառքին. քանի որ փառքը կազմված է բառերից, նա կարողանում էր կիսալսել դրանք՝ իրեն հնազանդորեն դնելով օբյեկտիվների ապակե աչքերի տակ, կիսաժպտալով կիսապատասխանում, պարզում մեկ երեք, մեկ չորս, մեկ երկու մատը՝ թույլ չտալով, որ ձեռքն ուռչի ձեռքսեղմումներից: «Խելագար բակլայի քոթեջի» ծառան գիտեր, որ ամեն երկու ժամը մեկ պետք է փոխի պատռած թղթերով զամբյուղը, քանզի նամակները, հեռա եւ ռադիոգրերը տեղում էին լոնդոնյան անձրեւի համառությամբ:

Բայց նույնիսկ փառքի հետ վարվելու՝ տեւական փորձով մշակված ունակությունը այս անգամ բարոն Մյունխհաուզենին չօգնեց ազատվել հոգնածության ու հագեցման որոշակի զգացումից: Նա ամեն օր թղթակից անդամի, փիլիսոփայության դոկտորի եւ այլ դիպլոմներ էր ստանում բոլոր հնարավոր ակադեմիաներից ու համալսարաններից. ժուռնալիստների ամերիկյան կազմակերպությունը նրան շեֆ ընտրեց. բարոնի, ի դեպ, բավական երկար, մարմնին արդեն տեղ չկար շքանշանների համար, եւ դրանք ստիպված էր կախել կարգի որոշակի շեղումով: Իսպանիայի թագավորը նրան ոսկուց գեղարվեստորեն պատրաստված լեզու ուղարկեց՝ վրան ադամանդե պզուկներ, իսկ ռուսական ինքնակալներից

մեկը՝ բրոնզե մեդալ՝ «Կործանվողներին փրկելու համար» մակագրությամբ:

Ընտրվեց Հիերոնիմ Մյունխհաուզենի հուշարձանի կառուցման նվիրատվությունների կոմիտե. դրամները բոլոր կողմերից գլորվում էին Կոմիտեի հիմնադրամ, եւ շուտով Լոնդոնի հրապարակներից մեկում կատարվեց հանդիսավոր հիմնարկեքը:

Բարոնին հազվադեպ էր հաջողվում մենակ մնալ իր հին ծխամորճի հետ, գրամեքենան իզուր էր ստեղներն առաջարկում հետճաշյա աֆորիզմներին. Մյունխհաուզենը զբաղված էր ավելի կարեւոր ու պատասխանատու գործով. նրա դասախոսությունը, որ խլխլել էին աշխարհի բոլոր թերթերը, օր օրի դառնում էր գիրք, որը գրում էր՝ հաճախ հրաժարվելով քնից ու ճաշից: Ճիշտ է, համարյա թե բանալու անցքից ներս սողոսկած որեւէ լրագրողի երբեմն հաջողվում էր կանգնեցնել Մյունխհաուզենի գրիչը: Եվ քաղաքավարությամբ ներկայացած մարդուն միշտ ընդառաջ էր գնում նրա զայրացած դեմքը.

- Տասը վայրկյան: Ժամանակը գնաց: Սպասում եմ. մեկ... երկու...

Ապշահար լրագրողը նետում էր առաջին պատահած նախադասությունը, ասենք.

- Ի՞նչ բաժիններ պիտի ունենա ծանրակշիռ թերթը:

Եվ վայրկյանի վեցերորդ տասնորդականին հնչում էր պատասխանը.

- Երկու. պաշտոնական եւ ոչ պաշտոնական: Ութ... ինը... տասը: Պատիվ ունեմ:

Լրագրողը շեմին նորից ու նորից կարդում էր մատիտագիր տողը՝ չիմանալով ինչպես վարվել դրա հետ:

Ընդհանրապես, ինչպես նկատել էին «Խելագար բակլայի քոթեջի» մշտայցելուները, բարոնի բնավորությունը սկսում էր փչանալ: Ավելին. նրա պահվածքում ի հայտ էին եկել տարօրինակություններ, որոնք առաջ ոչ ոք չէր նկատել:

Առաջին տարօրինակությունն իրեն զգալ տվեց Լոնդոնի համար հիշարժան այն օրը, երբ մայրաքաղաքի գլխավոր փողոցներով, նվագախմբերի ղրդոցի ու կղերի երգեցողության տակ, հանդիսավոր դիպակե բարձիկների վրա անցկացրին հաղթահերոսի հին եռանկյունի գլխարկը, մաշված կամզոլը, սուսերն ու հյուսքը: Քաղաքապետարանի շենքից սկսված երթը պետք է անցներ Մյունխհաուզենի տան մոտով, ապա շրջվեր դեպի Վեսթմինստերյան աբբայություն, որի կամարների ներքո, հին Անգլիայի սրբազան մասունքների կողքին անմահություն ու պատվավոր

հանգիստ էր սպասում Մյունխհաուզենի սուսերին, կամզոլին ու եռանկյունուն:

Բարեկամների ջանքերով հաջողվեց Մյունխհաուզենից թաքցնել տոնախմբության բոլոր նախապատրաստությունները: Բարեկամները (այդ թվում եպիսկոպոս Նորթուբերլենդցին) կանխավայելում էին այն տպավորությունը, որ այդ վիթխարի անակնկալը թողնելու էր խիստ պատրաստակամ ու բարեկիրթ բարոնի վրա: Բայց նրանց դաժան հիասթափություն էր սպասում. մոտեցող թափորի աղմուկն ու կղերի երգեցողությունը լսելով՝ բարոն Մյունխհաուզենը ոտնամանները շփշփացնելով՝ մոտեցավ պատուհանին ու նայեց դուրս՝ փորձելով հասկանալ ինչ է կատարվում: Ներքեւում, ծփացող ամբոխի մեջ դանդաղ լողում էին դիպակե բարձիկները, իսկ բարձիկների վրա,- սա ի՞նչ սատանայություն է,- Մյունխհաուզենի կամզոլը, հյուսքը, սուսերն ու եռանկյունի գլխարկը: Ամբոխի ցնծագին ոռնոցը ընդառաջ եկավ բարոնին, բայց նա, մի քայլ հետ քաշվելով, շրջվեց ու տեսավ անձայն սենյակ մտած Նորթումբերլենդի եպիսկոպոսին:

- Ո՞ւր,- խռպոտ հարցրեց բարոնը:

- Վեսթմինսթերի մասունքների մոտ: Հիրավի, ոչ ամեն թագավոր...

Բայց այստեղ անսպասելի, անպատշաճ ու ծիսակարգով չնախատեսված բան կատարվեց: Կտրուկ շառագունելով՝ Մյունխհաուզենը հանեց աջ ոտնամանն ու շպրտեց ցնծացող ամբոխի մեջ. ոտնամանը շրջան գծելով շմփաց խաչվառների ու պսպղան դիպակի արանքում՝ պայթած արկի պես մի լայն փոս բացելով հետ քաշվող ամբոխի մեջ:

- Գուցե ձեզ իմ գիշերանոթն է՞լ է պետք,- պատուհանագոգի վրայով կռանալով՝ սսկված ամբոխի վրա գոռաց բարոնը:

Հազարավոր վախեցած դեմքեր դարձան դեպի բաց պատուհանը, զուտ որպեսզի տեսնեն, թե ինչպես է շխկոցով փակվում: Ծփոթահար եպիսկոպոսը նահանջեց դռան ետեւը: Կարգադրիչներն ուժասպառ եղան՝ վերականգնելով խանգարված կարգը, ու քանզի թափորի պոչը, որ դեռ անկյունադարձից այն կողմ էր, սեղմում էր գլխին, երթը ինքնաբերաբար շարունակում էր շարժվել, բայց երգչախումբը անսերդաշնակ ու կեղծ էր երգում, խաչվառներն անկանոն դեսուդեն էին ճոճվում, տոնախմբությունը խամրել ու թթվել էր:

Երեկոյան թերթերն իրադարձությունները շարադրեցին խուսանավող լեզվով՝ զգուշորեն շրջանցելով կամ լռելով չնախատեսված անկանխատեսելին: Սակայն բարոն Մյունխհաուզենը նոր էր սկսում տարօրինակու-

թյունների շարքը, որը լոնդոնցիների հոգիներին ստիպեց անցնել զգացումների ողջ գամմայով. տոնիկա - ցնծություն, մեդիանտա - տարակուսանք, օկտավա - զայրույթ:

Թափորն անցավ, ու Բեյսվոթեր-ռոդը դատարկվեց, իսկ հազարավոր գլուխներից ցնծությունը վռնդած մարդը դեռ անկյունից անկյուն էր քայլում՝ զայրացած ինչ-որ բան քրթմնջալով քթի տակ, ապա նստեց սեղանի մոտ եւ սկսեց ամբողջական պարբերություններ ու էջեր ջնջել իր սեւագրերից: Միայն փոքր-ինչ հանդարտվելուց հետո նա անցավ երկրորդ տարօրինակությանը. մասունքները Վեսթմինստեր տեղափոխելուց երկու ժամ անց աբբայության գլխավոր պահապանը արագ փոստով նամակ ստացավ: Մյունխհաուզենների զինանշանով նամակը կտրուկ ու հակիրճ բառերով պահանջում էր աբբայության յուրացրած կամզոլն անհապաղ վերադարձնել տիրոջը: «Հույս ունեմ,- ավարտվում էր ուղերձը,- որ Մեծ Բրիտանիայի եւ Երկու Հնդկաստանների Միացյալ Թագավորությունը չի ցանկանա հարստանալ՝ խեղճ մարդուց խլելով իր ամենօրյա հագուստը»:

Խիստ մտահոգված պահապանը խորհրդի գնաց առաջնորդական տեղապահի մոտ, տեղապահը պատմեց հայր գանձապետին, գանձապետը... մի խոսքով, Լոնդոնը դեռ չէր հասցրել վառել իր լույսերը, երբ անախորժ բառերը, աբբայության ատամնավոր պարսպի վրայով ցատկելով, սահեցին հեռախոսալարերով ու շրշացին մեմբրաններում՝ պատրաստվելով սուզվել անդրատլանտյան մալուխի փաթույթի մեջ: Մթնոլորտը լարվում էր: Կեսգիշերից մի քիչ առաջ հրապարակվեց գերագույն հրամանը. «Համաձայն օտարերկրյա հպատակ Մյունխհաուզենի հայտարարության, մասունքը (հետեւում էր թիվը), զրկելով սրբություններին շնորհված բոլոր իրավունքներից ու արտոնություններից, վերադարձնել հիշյալ օտարերկրացուն»:

Առավոտյան ոչ մի լրագրող չհամարձակվեց մոտենալ Բեյսվոթեր-ռոդի քոթեջի շեմին, եթե չհաշվենք Ֆիմ Չիլչերին՝ երրորդական մի թերթուկի աշխատակցին, որի համար ընդհանրապես բոլոր շեմերը անանցանելիության աստիճանի բարձր էին: Չիլչերն ավտոբուսի փող չուներ, դրա համար էլ իր առավոտյան երթուղին Օքսֆորդ-սթրիթից մինչեւ Մոսքոու-ռոդ մյուսներից վաղ էր սկսում եւ անցնում էր ոտքով. այդ օրը, ինչպես միշտ, նա քայլում էր Բեյսվոթեր-ռոդի երկար աղեղի երկայնքով՝ աչքերը սահեցնելով Քենսինգթոնյան այգու ցանկապատի վրայով: Առավոտվա ցրտից գլուխն ուսերի մեջ քաշած գլուխը մաթեմատիկական խնդիր էր

լուծում. եթե ամեն օր ավտոբուսի վրա խնայած փենսերից հանես քրքված կոշիկների նորոգումը, ապա օրերի ինչ թվով է պետք բազմապատկել այդ տարբերությունը, որպեսզի ստացվի տասներկու շիլլինգ ու հիսուն փենս արժողությամբ ստեղծագործություն, որն անհրաժեշտ է մի զույգ նոր կոշիկ գնելու համար: Ստացվում էր Նյուտոնի՝ մարգագետնում արածող կովերի հայտնի խնդրի պես մի բան,- կովերն անընդհատ խժռում են խոտը, բայց խոտն այդ ընթացքում աճում է,- եւ Չիլչերն այնպես խորացավ բարդ գլուխկոտրուկի լուծման մեջ, որ անմիջապես չսթափվեց, երբ ինչ-որ մեկը բռնեց նրա վերարկուի աջ թեւքը՝ կանգնեցնելով քայլերն ու թվերը: Ասենք՝ ինչ-որ մեկը չէր. ուսի վրայից հետ նայելով՝ Չիլչերը ոչ մեկին չտեսավ, բայց եւ այնպես ինչ-որ մեկի կառչուն մատները բաց չէին թողնում դաստակից քիչ վեր կարված կոճակները: Չիլչերը քաշեց ձեռքը, ու ձեռքի ետեւից ձգվեց երկար կանաչ զսպանակը, որն այդպես էլ իր ճկուն օղակներից բաց չէր թողնում ասես թակարդն ընկած ձեռքը: Լրագրողը նայեց վեր, տեսավ ամբողջովին կանաչ օղակներով ծածկված պատը ու հասկացավ, որ կանգնած է «Խելագար բակլայի քոթեջի» մոտ: Այդ նույն պահին քոթեջի դուռը բացվեց, ու ծեր սպասավորը, դուրս նայելով, սիրալիր հարցրեց.

- Դուք լրագրո՞ղ եք:

- Այո՛, այո՛... Ձեր բակլան...

- Բարոնը ներս է հրավիրում,- դուռն ավելի բացելով՝ խոնարհվեց ծառան:

Ջիմ Չիլչերն այնպես ցնցված էր հրավերից, որ չնկատեց էլ, թե խելագար բակլային ինչը ստիպեց բացել իր օղակները: Ծալվող ոտքերը նրան աստիճաններով բարձրացրին նախասրահ, բայց ծառան արդեն բացել էր բարոնի աշխատասենյակի դուռը, ու տանտերը բարեհամբույր վեր էր կացել շփոթված լրագրողին ընդառաջ: Թիկունքից հաճկատար առաջ մղված բազկաթոռը ծալեց Չիլչերի ոտքերը՝ ստիպելով, որ նստի, իսկ դիմահար հարցը լրագրողի մատներին ստիպեց գրպանից գրպան թռչել՝ թուղթ ու մատիտ փնտրելով:

- Նոթատե՞տրն եք մոռացել,- ժպտաց բարոնը:- Մի անհանգստացեք. ահա այս նոթատետրը կփոխարինի նրան: Ծնորհակալության կարիք չկա: Մատի՞տ: Այն արդեն արել է իր գործը. հարցեր է տվել ու պատասխանել հարցերին: Չէ՞ որ ձեզ հետաքրքրում է... կներեք, ձեր անունը... շատ հաճելի է... ձեզ հետաքրքրում է, մի՛սթր Չիլչեր, թե Մյունխհաուզենի ինչին էր պետք կամզոլը: Ճի՞շտ է: Ձեր ձեռքին է ինքնագիր ապացույցը

նրա, որ կամզոլն ինձ չի պետք: Դուք հավանաբար շտապում եք: Ես նույնպես:

Ֆիմ Չիլչերը շվարած դուրս թռչելով փողոց՝ չնկատեց, թե առավոտվա քամու տակ ինչպես չարաճճի շարժվեցին բարալիկ օձերի պես քոթեջին փաթաթված բակլայի երկար բեղիկները:

Չիլչերի ստորակարգ թերթուկի արտակարգ թողարկումը առավոտվա ժամը տասին արժեր հինգ փենս, կեսօրին նրա համար շիլինգ էին վճարում, ժամը երկուսին համարն անհնար էր գտնել նույնիսկ կես ֆունտով: Թերթուկն իրազեկում էր սրբության մասին, եւ դա բավական էր, որպեսզի միլիոնավոր աչքեր ծգվեին դեպի սենսացիոն հարցազրույցը, որը կամզոլի հարցը շրջոնքել էր, այսպես ասած, աստառը դուրս: Պարզվեց, որ Սյունխհաուզենի գրիչը վարել էր ոչ թե բրիտանական առյուծին խայթելու, այլ հնգաթեւ փշոտ աստղին մեծահոգության դաս տալու ցանկությունը. պայմանական դիակը երախտագիտության բավական աշխույժ զգացում էր դրսեւորում՝ իր երկուհարյուրամյա կամզոլը զոհաբերելով հոգուտ ԽՍՀՄ գիտնականների կեցության բարելավման հանձնաժողովի: «Կարծում եմ ԱՐԱ-ն,- հարցազրույցն ավարտում էր բարոնը,- չի հրաժարվի իմ textile-ն ուղարկել՝ հանձնելու ռուս երիտասարդ գիտնականներից ամենաչքավորին»:

Քայլն այնքան վեհանձն ու քրիստոնական էր, այդ բառի լավագույն իմաստով, որ որոշ թերթեր հրաժարվում էին հավատալ հաղորդագրությանը: Բայց Չիլչերի թերթուկի տրամադրության տակ էր ինքնագիրը, որի լուսանկարը՝ բարոնի շեղակի ձեռագրով, ցրեց վերջին կասկածները: Փառքի կապիտալը, որ բարոնը կարծես ցանկանում էր վատնել, անսպասելիորեն աճեց՝ հավաքելով բազմաթիվ կլորիկ արցունքակաթիլներ, որոնք կպչում էին թարթիչներին, ինչպես փոքրիկ զրոները՝ տոկոսների շեղ գծին: «Դեյլի մեյլը» հիացած էր չծերացող սրտով, որն իր բոլոր՝ որոպեում յոթանասուներկու զարկերը տալիս է մարդկությանը: «Թայմը» գրում էր, որ ամենագութ բարոն Սյունխհաուզենը վերածնում է դիքքենսյան խենթի կերպարը, որը կարողանում էր բարի գործերում էլ արտառոց լինել, Սենթ-Ֆեմսի պալատական քարոզիչը խոսք ասաց այրի կնոջ լումայի մասին, իսկ հանդիսավոր «Փել մելը», որն, ինչպես հայտնի է, տանում է դեպի Բուքինհեմյան պալատ, ասֆալտե ուղյակ դարձավ Սյունխհաուզենի ոտքերի տակ. կարճ ասած, նրան ընդունելություն նշանակվեց թագավորի մոտ: Բայց այստեղ եկավ երրորդ տարօրինակության հերթը, որը... բայց՝ ամեն ինչ հերթով:

Բարոն Մյունխհաուզենն ու միսթր Ուիլքի Դոուլին, իրար մոտեցնելով բազկաթոռները, զրուցում էին Բեյսվոթեր-ռոդի աշխատասենյակում: Պատուհաններից այն կողմ շողշողում էր մշուշների քաղաքի համար հազվագյուտ արեւոտ օրը, եւ նույնիսկ ծերունազարդ գիտնականի՝ պրոֆեսոր Դոուլիի ականջից ցցված լսողական սարքը ուրախ ցոլքեր էր արձակում:

- Մի ժամից պետք է ընդունելություն գտնեք...,- եւ Դոուլին փորձեց իրարից հեռացնել բազկաթոռները: Բայց բարոնի մատները բաց չթողեցին արմնկակալները.

- Ժամը երեք հազար վեց հարյուր անգամ ճոճված ճոճանակ է: Թույլ կտա՞ք, միսթր Ուի՛լքի, ձեզ, որպես մաթեմատիկական բնագավառի անառարկելի հեղինակության հետ կիսել իմ մի կասկածը, միտք, որ ճոճվում է երկու թվերի արանքում:

Լսողական սարքը լսելու պատրաստակամություն հայտնելով՝ մոտեցավ բարոնին: Ռոպեական դադարից հետո Մյունխհաուզենը շարունակեց.

- Ես, իհարկե, դիլետանտ եմ մաթեմատիկայում: Բայց ինձ միշտ խիստ հետաքրքրել են այսպես կոչված հավանականությունների տեսության մշակումն ու գործնական եզրակացությունները, ինչին նվիրված են ձեր խոր ու հանգամանալի տրակտատներից շատերը, հարգարժան միսթր Ուի՛լքի: Առաջին հարցս. հավանականությունների տեսությունը հանգեցնո՞ւմ է մեզ, արդյոք, այսպես կոչված սխալների տեսությանը:

Լսափողը գլխով արեց. այո՛:

- Հարցս. իսկ եթե հավանականությունների վերաբերմամբ կիրառված սխալների տեսությունն այն սխա՞լ համարի: Ուզում եմ ասել, չէ՞ որ խորհրդանշական օձը, որ կծում է իր պոչը, կարող է այդ պոչով էլ խեղդվել, ճիշտ չէ՞, եւ այդ ժամանակ հիմքը կսպանվի հետեւանքից, իսկ հավանականությունների տեսությունը, կպարզվի, անհավանական է, եթե միայն սխալների տեսությունը սխալ դուրս չգա:

Միսթր Դոուլիի ճակատով, ինչպես ջրի երեսով, ուր քար են նետել, կնճիռներ վազեցին:

- Բայց թույլ տվեք: Բեռնուլիի թեորեմը...

- Այ հենց դրա մասին էլ ուզում եմ խոսել: Չէ՞ որ Բեռնուլիի միտքը կարելի է ձեւակերպել նաեւ այսպես. փորձերի թվի աճի հետ աճում է նաեւ հավանականությունների հաշվարկման ճշգրտությունը, m/n-ը տարբերությունը անորոշ փոքր է դառնում, այսինքն, որքան հաշվարկվող իրա-

դարձությունների թիվն ավելի ու ավելի է գերազանցում մեկը, թվերի ճոճանակի տատանումը կրճատվում է, ենթադրյալը փոխարկվում է հավաստիի, եւ հավանականությունների տեսությունը մաթեմատիկական հաստատուն ուրվագիծ ու գործնական կյանք է ստանում. այլապես՝ թվերն ու փաստերը համընկնում են: Ճի՞շտ շարադրեցի մեծ թվերի օրենքը:

Միսթեր Դոուլին ծամծմում էր շրթունքները.

- Եթե մի կողմ թողնենք ձեր եզրաբանության որոշակի տարօրինակությունը, ապա չէի առարկի:

- Հրաշալի է: Եվ այսպես, բավական է իրադարձությունների կամ փորձերի թիվը անցնի մեկից, հայտնվում է Բեռնուլլին, գործողության մեջ են դրվում մեծ թվերի ճճի եւ հավանականության տեսությունների թեորեմները: Սակայն բավական է նույն իրադարձությունների թիվը մի փոքր իջնի, դառնա մեկից փոքր, նույնպիսի անհրաժեշտությամբ հայտնվում են Մյունխհաուզենը, հակաթեորեմը, չիրականացած իրադարձությունների եւ չկայացած սպասումների օրենքը, անիվները պտտվում են հակառակ ուղղությամբ - անհավանականությունների տեսությունը՝ ողջ ընթացքով: Գցեցիք ձեր ծխամորճը, սը՛ր, խնդրեմ:

Բայց ձեր մաթեմատիկոսն արդեն իր երկար ու սեւ ականջահավելվածով խփում էր բազկաթոռի արմնկակալին, ինչպես բառերով՝ անհեթեթությանը.

- Բայց հաշվի առե՞լ եք, հարգարժան միսթր Մյունխհաուզեն, որ հավանականությունների տեսությունը ամբողջական թվեր է օգտագործում՝ յուրաքանչյուր իրադարձություն ընդունելով որպես միավոր: Դուք, ինչպես բոլոր դիլետանտները, պայքարելով մաթեմատիկական սիմվոլների համար, վերավերացարկում եք դրանք, ցանկանում եք մաթեմատիկոսներից մաթեմատիկոս լինել. իրական իրականությունը բաղկացած է գործողություններից,- իմ, ձեր, ում կուզեք,- եւ, բնականաբար, մեկից փոքր իրադարձություններ չի ընդունում: Մենք իրական մարդիկ ենք՝ իրական աշխարհում, կամ գործում ենք, կամ չենք գործում, իրադարձությունները կամ կատարվում են, կամ չեն կատարվում: Ընդգծում եմ. հավանականությունների հաշվարկումն օգտագործում է միայն ամբողջական թվեր՝ բազմապատկած միավորով:

- Այդ դեպքում,- կտրեց Մյունխհաուզենը՝ հասցնելով մոտենալ զրուցակցի ականջին,- այդ դեպքում փաստերի ու թվերի ճանապարհները տարբեր են, նրանց մնում է հրաժեշտ տալ իրար ու բաժանվել: Դուք ասում եք. «Իրադարձությունները կամ կատարվում են, կամ չեն կատար-

վում»: Ես պնդում եմ. իրադարձությունները միշտ կիսակատարվում են: Դուք ինձ առաջարկում եք ձեր ամբողջական թվերը: Բայց եթե ամբողջական թվեր են, ապա «մարդ» կոչվող ոչ ամբողջական արարածի ինչի՞ն են պետք: Մարդիկ կոտորակներ են, որ միավոր են ներկայանում՝ իրենց աճեցնելով բառերով: Բայց ոտքերի ծայրերին ձգված կոտորակն ամեն դեպքում ամբողջական թիվ չէ, միավոր չէ, եւ կոտորակի բոլոր արարքները կոտորակային են, ոչ ամբողջականների բոլոր իրադարձությունները ոչ ամբողջական են: Ամբողջական են միայն կիսատների նպատակները, որոնք միշտ, նկատեք, կիսատ են մնում, որովհետեւ ձեր հավանականությունների տեսությունը, ինչ-որ բան քրթմնջալով կատարվածի հետ կատարվելիքի համընկնման մասին, անպիտան է անհավանականությունների ձեր աշխարհի համար, որտեղ սպասվողը երբեք չի կատարվում, որտեղ երդումները մի բանի, իսկ փաստերը մեկ այլ բանի մասին են, որտեղ կյանքը խոստանում է սկսվել հավերժական վաղը: Մաթեմատիկոսները, որոնք իրականացումը նշում են p-ով, իսկ չիրականացածը q-ով, իրենց իսկ նշաններից ավելի վատ են գլուխ հանում, քան հիմար կկուն, որ միշտ ու բոլորին գուշակում է միայն մեկ բան. q = q:

Ծերունազարդ մաթեմատիկոսը, լսասարքը բառերից չկտրելով, վաղուց արդեն ֆսֆսացնում էր քիթն ու բարկացած շխկացնում դնովի ծնոտները:

- Բայց թույլ տվեք, մի՛սթր, մեր թվերի հետ դուք դուրս կշպրտեք նաեւ աշխարհը: Ոչ ավել, ոչ պակաս: Ձեր... ը՛-ը՛... մետաֆիզիկան, եթե տարածում ստանա, կվերածվի ինտելեկտուալ աղետի: Դուք ջնջում եք բոլոր թվերը, բացի զրոյից: Իսկ ես ասում եմ. առավել լոյալություն գոյի հանդեպ: Ցանկացած ջենթլմեն պարտավոր է իրական ընդունել իրականությունը, հակառակ դեպքում այն... չգիտեմ, ինչպես ասել... չէ՞ որ այս պատերը, Լոնդոնը, հողը, աշխարհը՝ մոխիր չէ, որն ահա այսպես թափում եմ մատի մեկ շարժումով. սա շատ ավելի լուրջ է, ու ես զարմանում եմ, սը՛ր...

- Ես էլ եմ զարմանում, թե ինչպես կարող եք մեղադրել ինձ ձեր տների ու պատերի հանդեպ անհարգալից վերաբերմունքի մեջ. չէ՞ որ միայն բնաձին քաղաքավարությունն է ինձ ստիպում անցնել ոչ թե նրանց միջով, այլ կողքով, չնայած ձեր բոլոր փողոցներն ինձ համար դաշտի ճանապարհ են, իսկ պալատներն ու տաճարները՝ խոտ, որի վրայով կարող էի քայլել, եթե չհարգեի աշխարհը լոնդոնացրած օրենքը. «Ավանդույթներ չթափել, գաղափարներ չբերել, սրբություններ չտրորել»: Եվ ասացեք ինձ, հարգարժան միսթր Դո՛ուլի, ի՞նչ իմաստ ունի ոտքեր չունեցողի հա-

մար ինձնից իմ յոթմղոնանոց սապոգները գնելու փորձը: Ավելի պարզ ու էժան չէ՞ր լինի տեղից ոչ մի քայլ չանելով՝ խորհել քայլերի մասին:

Մի պահ լռություն տարածվեց զրույցի վրա, հետո ծեր պրոֆեսորն ասաց.

- Այդ ամենը զուրկ չէ հետաքրքրությունից: Բայց ընդամենը այդքան: Պատերը կանգնած են, որտեղ կանգնած էին, փաստերը՝ նույնպես: Եվ նույնիսկ իմ սիգարի մոխիրը չի անհետացել, ահա այստեղ է՝ մոխրամանում: Եվ դուք էլ, հարգարժան միսթր Սյունխհա՛ուզեն, դիտմամբ ընդարձակ սխեմաներ եք օգտագործում, որպեսզի խուսափեք նեղ ու նեղվածք, այսպես ասած, փաստերից, որոնց մեջ ձեր անհավանականությունների տեսությունը ոչ մի կերպ չի տեղավորվում. Սանդրիլյոնիի կոշիկները իխտիոզավրի ոտքերին, հա՛-հա՛, համաձայնեք, շատ նեղ են: Ձեր անհավանականությունների տեսությունը, ներեցեք ինձ, մետաֆորներն է կառուցում, իսկ մեր հավանականությունների տեսությունը խիստ կոնկրետ նյութի մշակման արդյունք է: Գոնե մի կենդանի օրինակ բերեք, եւ ես պատրաստ եմ...

- Խնդրեմ, հենց ձեր աշխատությունից, միսթր Դո՛ուլի: Դուք գրում եք. «Եթե արկղից, որտեղ սեւ ու սպիտակ գնդեր են պահվում, հանենք դրանցից մեկը, ապա որոշ հավանականությամբ կարելի է կանխատեսել, որ այն, ասենք, սպիտակ կլինի, եւ կատարյալ հավաստիությամբ՝ որ կարմիր չի լինի»: Բայց, մի՛սթր Դոուլի, մի՞թե մեր կյանքերով չի հաստատված այն կազուսը, երբ արկղում միայն սեւ ու սպիտակ գնդեր են եղել, իսկ պատմության ձեռքը,- ի զարմանս բոլորի,- հանել է... կարմիրը:

- Դարձյալ մետաֆորներ,- առարկեց պրոֆեսորը,- բայց խոսքով ընկանք, իսկ ընդունելության ժամը մոտենում է: Վախենամ, որ չեք հասցնի ինձ որեւէ անհավանականության կոնկրետ օրինակ տալ՝ բավարարվելով զուտ դրանց տեսությամբ:

- Ինչ իմանաս,- ձգված ծնկներն ուղղող հյուրի ետեւից վեր կացավ Սյունխհաուզենը:

Ներքեւից, պատի հաստության միջով լսվեց առմուտքին մոտեցած մեքենայի աղմուկը: Իսկ աստիճաններով մոտենում էին ծառայի քայլերը, որը գալիս էր զեկուցելու, որ մեկնելու ժամանակն է:

- Ինչ իմանաս,- ուրախ աչքերը զրուցակցի վրա կկոցելով՝ կրկնեց Սյունխհաուզենը,- ասացեք, ինչպիսի՞ արարքը մարդու, որին քսան որոպեից ընդունելություն է սպասում թագավորի մոտ, կհամաձայնեիք կոչել առավել անհավանական:

- Եթե այդ մարդը...,- սկսեց Ուիլքի Դոուլին, բայց ծառան հայտնվեց շեմին:

- Լա՛վ, Ջոնիին ասեք՝ հիմա գալիս եմ: Գնացե՛ք: Համակ ուշադրություն եմ, միսթր Դո՛ուլի: Դուք ասացիք՝ եթե այդ մարդը...

- Այո՛, այո՛... եթե այդ մարդը,- դուք, իհարկե, ձեր մասին եք խոսում, մի՛սթր,- թագավորի հետ նշանակված հանդիպման ժամին, կամ ավելի ստույգ՝ որպեհն, թագավորին դառնա... մեջքով...

- Մի՛սթր Դոուլի,- ուղիղ լսափողի վրա կռացավ Մյունխհաուզենը,- ջենթլմենի խոսք տալի՞ս եք ոչ մեկին չասել նրա մասին, ինչ հիմա կհանեմ ժիլետիս գրպանից:

- Կարող եք հանգիստ լինել: Ոչ մի շունչ չի իմանա:

Բարոնի մատի լուսնաքարը սուզվեց ժիլետի գրպանը եւ անմիջապես էլ հետ շողաց. ցուցամատի ու բութ մատի արանքում, մոտենալով Դոուլիի վախեցած աչքերին, դեղնին էր տալիս երկաթուղային տոմսի դեղին խավաթուղթը:

- Խնդրում եմ ստուգել նշումները. գնացքը՝ չորս տասնիններին, ընդունելությունը՝ չորս քսանին: Ի դեպ, դուք ավելի լավ գիտեք Լոնդոնը, ասացեք՝ կարելի՞ է Չերինգ-Քրոսի կառամատույց բարձրանալ՝ մեջքով չդառնալով Բուքինհեմյան պալատին:

- Բայց չէ՞ որ սա ան...

- Անհավանական է, ուզում եք ասել: Օ՛, պատվարժան միսթր Դո՛ուլի, եւս մեկ պլանի իրականացման համար անհրաժեշտ է եւս մեկ անհավանականություն, որը հաստատ հավանական եմ համարում: Մոտ բերեք լսափողը... այ այսպես: Եվ այդ անհավանականությունն այն է, որ խոսք տված մարդը պահի խոսքը: Այդպես չէ՞, սը՛ր:

Այդպիսին էր բարոն Մյունխհաուզենի երրորդ տարօրինակությունը. հաջողվեց խույս տալ բրիտանական առյուծի ծանր թաթի հարվածից: Լոնդոնից Դուվր ընդամենը երկու ժամվա ճանապարհ է: Ընդ որում, հինգ ճառագայթների արանքով սպրդող մարդու համար դժվա՞ր էր խույս տալ հինգ ճանկից:

Գլուխ VII
Բաղենվերդերյան մենակյացը

4.22-ին թագավորը կիտեց հոնքերը: 4.23-ին արքունական արարողապետը նետվեց դեպի հեռախոսը ու սկսեց զանգել Բեյսվոթեր-ռոդ. «Խելագար բակլայի քոթեջից» պատասխանում էին, որ բարոնը դուրս է եկել: Արարողապետը կարգադրեց հինգ րոպե հետ տալ ժամացույցի սլաքներն ու բացել ներքին հարկաբաժիններից ընդունելությունների սրահ տանող դռները: 4.30-ին թագավորը զայրացած վեր քաշեց ուսն ու պտտվեց կրունկների վրա, իսկ արարողապետը, ինքնակալի հայացքը որսալով, պալատական աստիճանավորներին հայտարարեց, որ ընդունելությունը չեղարկվում է:

Բայց արդեն ուշ էր. թագավորին ստիպել էին սպասե՛լ: Եթե ճշտապահությունը թագավորների քաղաքավարությունն է, ապա թագավորների հանդեպ ճշտապահությունը սրբազան պարտք է: Պատմության տասը դարեր գահավիժեցին տասը րոպեում. թագավորը սպասում էր: Նույնիսկ անգլիական թագավորներին գլխատած դահիճները չէին համարձակվում վայրկյան իսկ ուշանալ, եւ սուրն իջնում էր Թաուերի հին ժամացույցի զանգի զարկի հետ, ու հանկարծ... ինչ-որ դրսեկ դատարկախոս: Գերմանական լրտես, որ քարշ էր եկել մոսկովյան բոլշեւիկների շրջապատում: Տասը դարեր ծանր բարձրացնում էին գերեզմանաքարերը հարվածի համար, բայց տասը րոպեները, ոտքերը ժամի սլաքից կախ, ուրախ թիկթակում էին. սպասեց-սպասեց-սպասեց-սպասեց...

Քոթեջից պալատ ճանապարհին կոմունիստների ավազակախմբի կողմից Սյունխհաուզենի առեւանգվելու վարկածը դիմացավ ընդամենը մի քանի ժամ: Վարորդ Ջոնին ցուցմունք տվեց, որ անձամբ է բարոնին կայարան հասցրել 4.19-ի գնացքին: Բարոնի տանը խուզարկություն կատարվեց, բայց ոչինչ, իր զույգից բաժանված ձախ կոշիկից բացի, չհայտնաբերվեց: Հարգարժան Ուիլքի Դոուլին, որը զրույց էր ունեցել բարոնի հետ՝ նորին մեծությանը վիրավորանք հասցնելուց կես ժամ առաջ (ծառայի ցուցմունքը), նույնպես հարցաքննության ենթարկվեց, ընդ որում, իրեն հանցակցի պես էր պահում. հարցերին՝ գիտի, թե ոչ, անփոփոխ պատասխանում էր. «Ես խոսք եմ տվել, այլեւս ոչ մի խոսք»,- եւ անհավանականությունների տեսությունը, ասես հաղթանակ տոնելով, բանտ դրեց անմեղ գիտնականին, որտեղ էլ նա շուտով մահացավ՝ ծերությունից, թե վշտից:

Բարոն Հիերոնիմուս ֆոն Սյունխհաուզենի հուշարձանի աշխատանք-

ները, բնականաբար, անմիջապես դադարեցվեցին, եւ Լոնդոնի ընդարձակ հրապարակներից մեկի կենտրոնում, շրջապատված անիվների պտույտով ու ավտոմոբիլների շչակների ծղրտոցով, դեռ երկար հառնել էր դատարկ պատվանդանը՝ ոմանց հիշեցնելով Մյունխհաուզենի պատմությունը իր վերջին մոսկովյան օրվա մասին:

Բրիտանական մամուլը եռանդուն արձագանքեց, բայց առանց շատախոսության, իր բոլոր գրական լագաններից կեղտաջուր թափելով թիակները ցույց տված թագավորական թիկունքին, ինչից հետո լագաններն իրենց տրամադրեցին նոր օրերի նոր հրատապություններին: Ֆիմ Չիլչերը հասցրեց նոր կոշիկներ գնել, բայց միայն այդքանը, կարիերան անհուսալիորեն տանուլ էր տրված, եւ Նյուտոնի կովերը հանրահաշվական խոտի հետ խժռել էին նրա հույսերի բոլոր ծաղիկները:

Այդ ընթացքում բարոն Մյունխհաուզենը, հասնելով մայրցամաք, պտտվում էր երկաթուղային թելերի հյուսակներով, ինչպես սարդը, որի ոստայնը պատռել են: Ֆրիդրիխշտրասսեի եւ Ունտեր-դեն-Լինդենի անկյունում գիշերային հերթափոխի կանգնած շուցմանը տեսավ Ալեքսանդեր-պլացի ուղղությամբ սլացող բարոնի մեքենան: Բայց կեսօրին, երբ բարոնի անսպասելի ժամանման լուրը տարածվեց քաղաքում, Ալեքսանդեր-պլացի տան բարապանը բոլոր հեռախոսազանգերին պատասխանում էր.

- Եղել ու ելել է:

Մինիստրությունում հերթապահող պաշտոնյան նույն առավոտ մի ծրար ստացավ, որի հասցեն գրված էր ծանոթ մյունխհաուզենյան ձեռագրով: Պաշտոնյան ծրարը հանձնեց իր շեֆին: Պաշտոնյան բացբերաններից չէր, բայց եւ այնպես չդիմացավ ու մի երկու-երեք հոգու պատմեց ծրարի աջ անկյունում արված տարօրինակ գրառման մասին. Ք. Ամենուր, Ութսարիետեւի փողոց, յոթ սարից այն կողմի տուն:

Մեկ օր անց բարոնի բեռլինյան ծանոթներից մեկը, Հաննովերից վերադառնալով մայրաքաղաք, միջանկյալ կայարաններից մեկում, հանդիպակաց, մեկնելու սպասող գնացքի պատուհանում տեսավ, ինչպես նրան թվաց, Մյունխհաուզենի դեմքը: Բեռլինցին բարձրացրեց գլխարկը, բայց վագոնի պատուհանները լողացին վագոնի պատուհանների կողքով, իսկ գլխարկը, պատասխան չստանալով, տարակուսած զիգզագով վերադարձավ ու սեղմեց քունքերը:

Անցավ մի քանի ամիս: Դաշտերը կարճ խուզված էին: Անձրեւներն ամառային փոշին ծեփել էին գետնին: Վաղո՞ւց էր, որ կռունկի երամները

անկյունածեւ բումերանգներով հատում էին երկինքը հարավից հյուսիս, որպեսզի հիմա,- շրջանը փակելով,- վերադառնան հարավ: Անհետ չքացած Մյունխհաուզենի անունը սկզբում աղմկում էր, հետո՝ չափավոր, իսկ հետո լռեց: Փառքը՝ լեռները նետված հնչյուն. շարքով արձագանք, զատվող դադարներ, վերջին հեռավոր ու աղոտ հնչում,- եւ կրկին քարե լռություն՝ կիրճերի հսկա ականջները պարզած նոր հնչյուններին: Մյունխհաուզենի երկրպագուներն ու մեծարողները շարունակում էին երկրպագել ու մեծարել ուրիշին: Բարեկամները... բայց մի՞թե մեծն Ստագիրիտոսը *[Ստագիրիտոս - Մակեդոնիայի Ստագիր քաղաքի ծնունդ. այստեղ՝ Արիստոտելը]* մի առիթով չի ասել. «Բարեկամնե՛րս, բայց չէ՞ որ աշխարհում բարեկամություն չկա»: Ուշագրավ է, որ այդ հանգամանքից ստիպված էին բողոքել համենայնդեպս... բարեկամները: Այդ հոգեբանական անտինոմիան այստեղ առաջադրվում է զուտ, որպեսզի ընթերցողը չզարմանա, երբ նրան ասեն, որ մի աշնանային առավոտ պոետ Էռնստ Ունդինգը նամակ ստացավ «Մյունխհաուզեն» ստորագրությամբ:

Ունդինգի մատները թեթեւակի դողում էին նեղ ու փակ ծրարի բերած ժլատ տողերը կարդալիս: Բարոնը խնդրում էր չմերժել «վերջին հանդիպումը վերջին մարդու հետ»: Հետեւում էր հասցեն, որը առաջարկվում էր մտապահել ու գրությունը ոչնչացնել:

Ունդինգը կարող էր անվստահությամբ վերաբերվել նեղ ծրարի բերած բառերին. դեռ լավ էր հիշում ամայի կառամատույցն ու կողքով անցնող գնացքները: Բայց այնպես պատահեց, որ «Վերիտաս» ֆիրմայում վաստակած մարկերը հաշվելով՝ նույն երեկոյան մեկնեց Բեռլին-Հաննովեր գծով:

Կատարելով նամակի կամքը՝ Ունդինգը, որ ամբողջ գիշեր անհանգիստ շուռումուռ էր եկել վագոնի չոր նստարանին, մի երկու-երեք կայարան Հաննովեր չհասած՝ իջավ գնացքից: Երկաթուղային ավանին կից գյուղակը դեռ քնած էր, եւ միայն աքաղաղներն էին իրար հերթ չտալով կանչում լուսաբացը: Հասնելով վերջին տան մոտ,- այդպես էր պահանջում նամակը,- պետք էր թակել դուռն ու հարցնել Միխել Հեյնցին: Դռան թակոցի վրա դուրս ցցվեց ինչ-որ մեկի գլուխը եւ նույնը լսելով, առանց հարցուփորձի, ասաց.

- Լա՛վ: Հիմա՛:

Հետո բակում՝ սմբակների եւ անիվների աղմուկ, քիչ անց՝ բացվող դարպասի ճռնչոց, ու գյուղական սայլը, դուրս գալով փողոց՝ իր երկաթե ոտնակը դեմ արեց եկվորին:

Այդ ժամանակ հորիզոնին կարմրեց այգաբացի գիծը: Միխելը առաջ մղեց ձիերին. անիվները ջրափոսերի միջով պտտվեցին դեպի արշալույսը: Ունդինգը ձեռքը տարավ գրպանը ու ծրարի ծակող անկյունների հետ շոշափեց երկտակ ծալված տետրը: Ժպտաց՝ ամաչկոտ, բայց հպարտ, ինպես ժպտում են պոետները, երբ խնդրում են կարդալ իրենց բանաստեղծությունները: Ճանապարհը ձգվում էր մերկացած դաշտերով: Հետո՝ բլրի վրայով. բարձրացող արեւը խփում էր աչքերին. ձախ շրջվելով՝ Ունդինգը տեսավ քառաթեւ հողմաղացների շարքը, որ հյուրընկալ ձեռքով էին անում սայլին ընդառաջ, բայց Միխելը սանձը ձգեց ձախ, ու սայլը ետեւի անիվներով դառնալով հողմաղացներին, կողային ճանապարհով գլորվեց դեպի լճակի կապտագորշ բռնկումը: Անիվներից փախչելով՝ դղրդաց կամուրջը, ճանապարհի երկայնքով շարված բաղերը կռկռացին, եւ Միխելը, երկար մտրակը պարզելով դեպի երկու-երեք կղմինդրածածկ տանիքները, որ դեղնին էին տալիս ծառերի կրկնաշարքի ու քարե պարսպի ետեւից, ասաց.

- Բաղենվերդեր:

Լայն բացված դարպասները սպասում էին հյուրին: Ջբոսայգու ծառուղով, ձեռնափայտը բարձրացրած ու ոտքը քարշ տալով, ընդառաջ էր գալիս կորամեջք ծառայապետը: Ցածր խոնարհում անելով՝ նա հյուրին հրավիրեց տուն:

- Բարոնն անառողջ է: Ձեզ սպասում է գրադարանում:

Ունդինգն անհամբերությունը հաղթահարելով՝ մի կերպ զսպում է իրեն, որ համաքայլ լինի ծերունու դանդաղ քստքստոցին: Նրանք անցան ճյուղերի ֆանտաստիկ հյուսվածքի տակով: Ծառերը խիտ էին կանգնած, եւ առավոտվա երկար ստվերները սեւ գորգի պես փռվել էին ծառուղու վրա: Հասան տուն բարձրացնող քարե աստիճաններին: Մինչ ծառայապետը բանալիներն էր փնտրում, Ունդինգը հասցրեց հայացքը սահեցնել մաշված, տեղ-տեղ ճաքած ու նստած պատի վրայով. դռան աջից ու ձախից, անձրեւներից կիսով թափված ծեփի վրա երեւում էին նշանաբանների գոթական տառերը: Աջից՝ «Կարմիր ու սպիտակ մի գնեք, ո՛չ «այո» ասեք, ոչ էլ «ոչ»»: Ձախից՝ «Նա, ով ինձ կառուցել է, ողջ չէ. նրան, ով ապրում է իմ մեջ, սպասում են մեռածները»:

Հատակը, ոտքերի տակ ճռռալով, նրան տարավ եղջերուների եղջյուրների զարմանահրաշ անտառի մոտով, որ ճյուղավորվող հորիզոնականներով աճել էր պատերից: Գորգերի խճճված արաբեսկների վրայով ծառան ու հյուրը անցան նեղ պատուհաններից ժլատ լուսավորվող սեւացած

նկարների շարքի մոտով: Վերջապես ոլորուն սանդուղքն արագ պտտեց քայլերը, վերեւից գրքերի խոնավահոտ եկավ, եւ Ունդինգն իրեն գտավ երկարուկ կիսախավար սրահում, որի խորքում երեւում էր սլաքաձեւ պատուհանը: Պատերի երկայնքով սերտ կանգնած պահարաններ ու դարակներ. թվում էր բավական է հանես առաստաղին հենած գրքերի տրցակները, եւ դրանք, հենարանից զրկվելով, կփլվեն՝ ճանապարհին ճզմելով աշխատանքային սեղանը, բազկաթոռներն ու այդ բազկաթոռների մեջ նստածներին:

Բայց հիմա բազկաթոռները դատարկ էին. Մյունխհաուզենը, պպզած, ինչ-որ սպիտակ քառանկյուններ էր դասավորում հատակին: Իր գործի մեջ խորացած՝ չէր լսել Ունդինգի քայլերը: Պոետը մոտեցավ.

- Ինչո՞վ եք զբաղված, թանկագին բարո՛ն:

Մյունխհաուզենը արագ վեր կացավ՝ ծնկներից թափ տալով քառանկյունները, ձեռքերը հանդիպեցին ամուր ու երկար ձեռքսեղմման մեջ:

- Ահա՛, վերջապե՛ս: Հարցնում եք՝ ինչո՞վ եմ զբաղված: Հրաժեշտ եմ տալիս այբուբենին: Ժամանակն է:

Ունդինգը միայն հիմա նկատեց, որ գորգի զարդանախշին թափված քառանկյունները սովորական հավաքովի այբուբեն են, խավաթղթի կտորներ, յուրաքանչյուրի վրա՝ հունական այբուբենի մեկական տառ: Դրանցից մեկը դեռ բարոնի մատների արանքում էր:

- Չե՞ք կարծում, սիրելի Ունդի՛նգ, որ օմեգան գծագրությամբ տարօրինակ կերպով բադաթաթերի վրա կանգնած պղպջակ է հիշեցնում: Ահա, նայե՛ք,- քառանկյունը հյուրին մոտեցրեց նա,- այն դեպքում, երբ, որքան էլ տխուր է, սա միակն է, որ ինձ մնացել է ողջ այբուբենից: Ես վիրավորել էի տառերին, ու նրանք հեռացան, ինչպես մկներն են լքում անմարդաբնակ տունը: Այո՛, այո՛: Ցանկացած դպրոցական, ահա այս նշանները շարելով, կարող է համակցել աշխարհներն աշխարհին: Բայց ինձ համար նշանները կորցրել են իրենց արժեքը: Պետք է սեղմել ատամներն ու սպասել, թե ահա այս բադի թաթերով լպրծուն պղպջակը երբ անլսելի կմոտենա թիկունքից ու...

Բարոնը օմեգան նետեց սեղանին ու լռեց: Ունդինգը, որն այդպիսի նախաբանի չէր սպասում, տագնապով նայեց Մյունխհաուզենի դեմքին. չսափրած այտերը ներս էին ընկել, ադամախնձորը սուր եռանկյունով հատում էր պարանոցի գիծը, հոնքերի լարված գծի տակից նայում էին ակնախոռոչների հատակն ընկած հարյուրամյակները, սուր ծունկը բռնած ձեռքը ոսկրերակ ցանց հագած չոր տերեւի պես դուրս էր ընկել տնային

խալաթի թեզանիքից. մատի լուսնաքարը կորցրել էր խաղը ու մարել:

Մի րոպեի չափ ձգվեց լռությունը: Հետո պատի տակ ինչ-որ զսպանակ խրթխրթաց: Հյուրն ու տանտերը գլուխները դարձրին ձայնի կողմը. բրոնզե կկուն դուրս նայեց թվատախտակից եւ ինն անգամ կանչեց: Մյունխհաուզենի ադամախնձորը շարժվեց:

- Հիմար թռչունը խղճում է ինձ: Հետաքրքիր է, չէ՞: Առաջարկում է իմ օմեգային գումարել իր «կու»-ն. տառ, որով մաթեմատիկոսները նշում են տրված ու տվյալ մեծությունների չհամընկնելը, անհաջողությունը: Բայց ինձ պետք չէ այդ թռչնային նվերը. ես վաղուց եմ ետեւում թողել այն մանր աշխարհը, որտեղ անհաջողությունն է հաջողությունից առաջ, տառապանքի մեջ՝ ուրախությունը եւ հարությունը՝ բուն մահվան մեջ: Քեզ պահիր քո «կուկու»-ն, կկո՛ւ, չէ՞ որ դա քո միակ ամենինչն է, եթե չհաշվենք զսպանակը, որ փոխարինում է հոգուդ: Ո՛չ, բարեկամդ իմ Ունդի՛նգ, իր երկու ճաղերով պտտվող թվատախտակի անիվը վաղ թե ուշ անվակալով կխփվի քարին ու - վերջ:

- Ահա եւ,- տեղից վեր կացավ պոետը,- մեր կերպարները խաչվեցին, ու եթե թույլ կտաք...

Ունդինգի ձեռքը մտավ պիջակի գրպանը: Բայց Մյունխհաուզենի աչքերն անտարբեր նայում էին կողքով, բերանի շուրջը փնթփնթան ծալքեր էին դողում: Եվ տետրի թերթերը, մատների տակ խշրտալով, այդպես էլ չլքեցին իրենց թաքստոցը: Միայն հիմա Ունդինգի համար պարզ դարձավ, որ ոտանավորներ ու իմաստներ կազմելու համար կցվող այդ բոլոր տառերը այբուբենին հրաժեշտ տված մարդու համար ունայն եւ ուշացած էին: Հյուրի ձեռքը վերադարձավ բազկաթոռի արմնկակալին, եւ նա հասկացավ, որ լսելուց բացի իրենից այլ արվեստ չեն պահանջում:

Քամին ճոճում էր դեղին տերեւները՝ ժամանակ առ ժամանակ ճյուղը պատուհանին խփելով, լռած կկվի տակ համաչափ չխկչխկում էր ճոճանակը: Բարոնը բարձրացրեց գլուխը.

- Գուցե հոգնե՞լ եք ճանապարհից:

- Բոլորովին:

- Իսկ ես ահա հոգնել եմ: Չնայած ոչ մի ճանապարհ էլ չկար, բացի Բեռլին - Լոնդոն -Բեռլին - Բադենվերդեր - Լոնդոն - Բեռլին ճամփան տրորելուց: Այսքանը: Ձեզ գուցե զարմացնո՞ւմ է երթուղուց Մոսկվան դուրս թողնելը:

- Ո՛չ, չի զարմացնում:

- Հրաշալի է, գիտեի, որ ինձ կես խոսքից կհասկանաք: Չէ՞ որ ինչքան

էլ տարբեր լինեն պոետիկայի վերաբերյալ մեր հայացքները, երկուսս էլ չենք կարող չհասկանալ՝ անհնար է դեմքով դառնալ սեփական «ես»-ին՝ թիկունք չդարձնելով մեր «ոչ-ես»-ին: Եվ, իհարկե, ես Մյունխհաուզենը չէի լինի, եթե որոշեի Մոսկվան փնտրել... Մոսկվայում: Մարդկանց համար իմաստը որոշակի ստացվածք է, ուր կարելի է մտնել ու դուրս գալ՝ բանալին թողնելով բարապանի մոտ: Ես միշտ գիտեի միայն ստեղծվածքի մասին, եւ որ մինչեւ տուն մտնելը, այն պետք է կառուցել: Պարզ է, որ ընդունելով «ԽՍՀՄ» ստեղծվածքը՝ դրանով իսկ բարոյական մուտքի թույլտվություն ստացա աշխարհի բոլոր երկրները, բացի ԽՍՀՄ-ից: Ու ես վերադարձա իմ հին, խաղաղ Բադենվերդերը, այ այստեղ, դեպի լռությունն ու գրադարակները, որտեղ կարող էի հանգիստ խորհել ու կառուցել իմ ԽՍՀՄ-ը: Բոլոր աչքերից դուրս սահելով՝ ես ինձ մտցրի խուլ ու նեղ կոկոնի մեջ, որպեսզի հետո, երբ գար իմ ժամը, պատռեի այն եւ օդ նետեի գույնզգույն ծաղկափոշին՝ երկրի գորշ փոշու վրա: Բայց եթե ճշտենք մետաֆորը՝ չղջիկի թեւերը երեւակայությանն ավելի լավ են հարմարվում, քան թիթեռի թեւիկները: Ձեզ, իհարկե, հայտնի է այս փորձը. մութ սենյակում պատից պատ թելեր են ձգում՝ յուրաքանչյուրից զանգակ կախելով, ու չղջիկին թողնում են ներս. եւ որքան էլ նա պտտվում է սենյակում, խավարը թեւերով հատելով, ոչ մի զանգակ չի զնգում. թելը միշտ անցնում է թելի կողքով, իմաստուն բնազդը թռիչքի պարույրը տանում է խոչընդոտների խառնաշփոթի միջով՝ թեւերը պաշտպանելով չօդի հետ բախումներից:

Եվ ես երեւակայությունս նետեցի մթին ու ինձ համար թափուր քառատառության՝ ԽՍՀՄ-ի մեջ: Այն պտտվում էր նշանից նշան, եւ ինձ թվաց՝ թեւերը ոչ մի անգամ չկառչեցին իրականությունից, ֆանտազմները սահում էին փաստերի կողքով, մինչեւ որ սկսեց ուրվագծվել մի չտեսնված երկիր, աշխարհ՝ հանված իմ՝ Մյունխհաուզենիս աչքերից, որը, իմ կարծիքով, բնավ վատ ու դժգույն չէր այն աշխարհից, որ դրսից բռնությամբ խուժում է մեր աչքերի մեջ:

Ես ոգեւորությամբ էի աշխատում՝ կանխավայելելով այն պահը, երբ իրար վրա դիզված մտահղացումների կառույցը կփլվի ունկնդիրներիս եւ ընթերցողներիս գլխին: Օ՛, ինչպես էին կախվելու իմ բակլայի կանաչ պարույրների վրա աչքերը չռած լոնդոնյան անբանների ծնոտները, երբ նրանց մտքերը հյուսեի ֆանտազմների բազմաբղետ պարույրներին:

Միայն մի հանգամանք էր խառնում պատկերներն ու աղքատացնում կոմպոզիցիան. հիմա, ինչպես միշտ, պատրաստվելով օտար ուղեղներում դրոշմել իմ ֆանտասմագորիզմները, պետք է գտնեի թեքությունն ու

թեքվածքը՝ բարձր ստից դեպի գռեհիկ ստախոսություն, միակը, որ հասու է ակնակալներով աչքերին, տասնվեց մոմանոց պղտոր մտածողությանն ու երեւակայության կարճ շառավղին: Ստիպված էի, ինչպես միշտ, խունացնել գույները, բթացնել սրությունը, հյուսվածքի հիմք ընդունել մարդկանց համար սովորական թերթերի ամենօրյա զառանցանքը՝ ինձ թողնելով միայն բադերը: Այսպես, թե այնպես, երբ Ռուսաստանն արդեն վերակազմված էր, ահա այս պարուրածեւ սանդուղքն ինձ վերադարձրեց մարդկանց: Իմ ելույթների արդյունքը ձեզ հայտնի է:

Կրկին հայտնվեցի ինձ վրա չռված աչքերի, ամեն բառիս սրված ականջների, ձեռքսեղմման, ողորմության կամ ինքնագրի պարզված ափերի շրջանակում: Արվեստագետի վաղեմի զայրույթը, որը երկու հարյուր տարի շարունակ ստիպված այլ կերպարում էր եղել, այս անգամ առանձնապես ուժեղ խոսեց իմ մեջ: Ե՞րբ են վերջապես հասկանալու շուրջս պտտվող այս անձնավորությունները, մտածում էի ես, որ իմ կյանքն ընդամենը սովորական քաղաքավարություն է: Ե՞րբ կտեսնեն եւ կտեսնե՞ն երբեւէ, որ իմ զտարյուն հորինվածքներն աշխարհ են գալիս զարմանքի ու ժպիտների, ոչ թե կեղտի եւ արյան համար: Եվ միշտ էլ այդպես է ձեր երկրի վրա, իմ Ունդի՛նգ. մանր միստիֆիկատորները, այդ բոլոր Մաքֆերսոնները, Մերիմեներն ու Չատտերթոնները, որ գինուն ջուր են խառնում, անհիրականությունն՝ իրականություն, հանճար են կարգվել, իսկ ես՝ մաքուր, անխառն ֆանտազմի վարպետս, լքված եմ որպես փուչ ստախոս ու դատարկաբան: Այո՛, այո՛, մի առարկեք, ես գիտեմ՝ միայն մանկական սենյակներում են դեռ հավատում ծեր հիմար Մյունխհաուզենին: Բայց չէ՞ որ Քրիստոսին էլ միայն երեխաներն էին հավատում: Ինչո՞ւ եք լռում, թե՞ վայել չեք համարում վիճել իր խճճման մեջ խճճված խճճողի հետ: Ահա, սա է երկրի դառը վարձքը բյուր բյուրավոր բառերի համար՝ լռություն:

Ունդինգը աչքերով գտավ ու կամացուկ շոյեց Մյունխհաուզենի չորչորուկ ձեռքերը. կեռված մատի լուսնաքարի մեջ հանկարծ նորից աղոտ ու թույլ առկայծում հայտնվեց: Մյունխհաուզենը շունչը տեղը բերեց ու շարունակեց.

- Ներեցեք ծերուկիս: Մաղձն է: Ասենք, հիմա ձեզ համար ավելի հեշտ կլինի հասկանալ իմ այն ժամանակվա զայրույթն ու նյարդերի լարվածությունը: Բավական էր մի փոքրիկ խթան, ու խթանը չստիպեց երկար սպասել: Հիշո՞ւմ եք մեր բեռլինյան զրույցը, երբ իմ պահարանի կախիչները ցույց տալով...

- Կանխատեսեցիք,- շարունակեց Ունդինգը,- որ վաղ թե ուշ ձեր կամզոլը, հյուսքն ու սուսերը դիպակե բարձիկների վրա կգնան Վեսթմինսթերյան աբբայություն:

- Ճիշտ այդպես: Եվ կարո՞ղ եք պատկերացնել իմ զարմանքը, երբ մի անիծյալ առավոտ, բացելով պատուհանը՝ տեսա, որ այդ ամբողջ հնոտին կախիչներից պոկվելով ու հայտնվելով դիպակի վրա՝ ամբոխի գլխավերեւում լողում է ուղիղ Վեսմինսթեր: Երկու հարյուր տարվա ընթացքում առաջին անգամ ճշմարտությունն էի ասել: Ամոթի կարմիրը խփեց այտերիս, եւ ականջներս էլ զնգում էին, այնպես, ասես չղջիկի թեւը դիպած լիներ զանգակի թելին: Հը՛մ: Ֆանտազմը խփվել էր փաստին: Ցնցումն այնքան անսպասելի եւ ուժեղ էր, որ միանգամից չկարողացա տիրապետել ինձ: Պատուհանի տակ աղմկող այդ հիմարները, բնականաբար, ոչինչ չհասկացան: Զարմանում եմ, թե նրանց տերտերներն ինչպես չսրբադասեցին իմ կոշիկները՝ ընդգրկելով իրենց մասունքների մեջ:

Օրվա ողջ մնացած մասն անցկացրի ԽՍՀՄ-ին նվիրված գրքի ձեռագրերը նայելով: Հիմա արդեն ինձ թվում էր, որ այս կամ այն պարբերությունը մեղանչում է ճշմարտության դեմ. բազմաթիվ տողեր ընկան գրչի տակ ու ջնջվեցին. բայց մեկ անգամ կասկածելով իմ ճշմարտացիությանը,- հասկանո՞ւմ եք,- ես այլեւս չէի կարող կանգ առնել, եւ ամեն բառիս մեջ սողոսկած ճշմարտություն էի տեսնում: Երեկոյան կողմ մի կողմ դրեցի բզկտված ձեռագիրն, ու ծանր մտքերը պաշարեցին ինձ. մի՞թե հիվանդացել եմ ճշմարտությամբ, մի՞թե այս սարսափելի եւ ամոթալի veritatis-ը *[ճշմարտության հիվանդություն - լատ.]*, որ բարդանում է՝ դառնալով նահատակություն կամ խելագարություն, թափանցել է ուղեղս: Թող որ նոպան կարճատեւ էր եւ ոչ ուժեղ, բայց չէ՞ որ այդ բոլոր Պասկալները, Բրունոները, Նյուտոնները նույնպես սկսել են չնչին բաներից, իսկ հետո,- բըռ՛ռ՛ռ՛,- ... սուր ու տեւական, hipotesas non fingo *[Հիպոթեզներ չեմ կառուցում - լատ.]*:

Երկու-երեք օր տատանվելուց հետո հասկացա ու որոշեցի մի կողմ դնելով ենթադրություններն ու կասկածները՝ դիմանկարը համեմատել բնօրինակի, իմ գրչի ճեղվածքից ելած երկիրը՝ իսկական, իր սահմաններում սեղմված երկրի հետ: Լքելով Լոնդոնը՝ ես վերադարձա այստեղ՝ իմ մենությանը: Ձանապարհին միայն մի քանի ժամով կանգ առա Բեռլինում. պետք էր լուծարել իմ դիվանագիտությունը եւ անդորր ու չեզոքություն ապահովել ինձ համար: Ես վերադարձրի նրանց բոլոր լիազորությունները՝ նամակ կցելով, որով հայտարարում էի, որ կեցավայրիս

գաղտնիքը բացելու առաջին իսկ փորձին կպատասխանեմ իրենց գաղտնիքները բացահայտելով: Հիմա կարող էի հանգիստ լինել. հետախուզությունը թույլ չի տա ինձ հետախուզել, ասենք, հետաքրքրասերների թիվն էլ օրեցօր նվազում է. փառքը, Մյունխհաուզենի բադի պես, ծալել է թեւերն ու այլեւս երբեք չի բացի:

Պետք էր լսել ձեռագիրն ու ձեռնամուխ լինել նրա բուժմանը: Երկուերեք դրածո անձանց միջոցով նամակագրություն սկսեցի Մոսկվայի հետ, հաջողվեց ձեռք բերել նրանց գրքերն ու թերթերը, համեմատական մեթոդից օգտվելով՝ համադրել ներսահմանային Ռուսաստանի ուսումնասիրությունն արտասահմանյանի հետ, որի մամուլն ու գրականությունը արդեն բոլորիս ձեռքի տակ են: Ձեռնարկելով ձեռագրի սրբագրումը՝ հաստատ որոշել էի՝ որտեղ պատումն ու իրականությունը զուգահեռվում են, վարվել նոտաները կարդալուն զուգահեռ դադարներ գտած երաժշտի նման:

Նյութն աստիճանաբար սկսեց հոսել ու կուտակվել. հեռուն հարյուրավոր ծրարներ էր նետում այ այստեղ,- Մյունխհաուզենը ցույց տվեց գրադարանի ստվերված անկյունը, որտեղ թիկնակով գրքի կազմերին հենված, ասես ծանր բեռան տակ ոտքերը ճկած, կանգնած էր հնամենի բյուվարը,- այո՛, հարյուրավոր ծրարներով, եւ դրանցից յուրաքանչյուրը, հենց պատռում էր բերանը, սկսում էր այնպիսի բաներ ասել, որ... բայց գուցե կարծում եք չափազանցո՞ւմ եմ. Ավա՛ղ, հիվանդությունն ինձնից նույնիսկ այդ ուրախությունն է խլել: Ինքներդ նայեք: Ահա՛:

Ունդինգին առաջնորդելով՝ Մյունխհաուզենը մոտեցավ բյուվարին ու հետ գցեց կափարիչը, որի տակ ճերմակին էր տալիս բացված ծրարների կույտը. դրանց վրա փակցված դրոշմանիշների գույնզգույն պատուհաններից նայում էին կարմիրբանակայինի սաղավարտներով ու բանվորական բլուզներով փոքրիկ մարդուկներ: Մյունխհաուզենի մատները, կույտը քրքրելով, բախտաբերի դուրս քաշեցին թերթիկներից մեկը: Հետո էլի մեկը ու երրորդը: Էլի ու էլի: Ունդինգի աչքի առաջ առկայծեցին թանաքագիր տողերը: Մյունխհաուզենի երկար եղունգը, թերթիկից թերթիկ ցատկելով, իր ետեւից տանում էր կարդացողի ուշադրությունը.

- Դե, ահա, թեկուզ այս մեկը. «Գենոսսե Մյունխհա՛ուզեն, շտապեմ հանգստացնել ձեզ հետաքրքրող Պովոլժիեի սովի հարցով. ձեր դասախոսության ժամանակ ներկայացված տեղեկությունները ոչ այնքան անստույգ են, որքան՝ թերի: Իրականությունը, թույլ տամ ինձ այսպես ասել, փոքր-ինչ գերազ...»: Ինչպե՞ս է: Կամ, ահա, այս մեկը. «Հարգելի գործընկեր

կե՞ր, ես չգիտեի, որ չմարած լուսնի մասին մարված պատմվածքը արձագանքն է այն փաստի, որ ձեզ հետ կատարվել է սահմանից Մոսկվա ճանապարհին: Հիմա ինձ համար պարզ է, որ մարած լուսնի մասին պատմվածքի հեղինակը ժամանակին միստիֆիկացրել է ընթերցողին աղբյուրի հարցում, իսկ ողջ ճշմարտությունը,- առաջին բառից մինչեւ վերջինը,- պատկանում է ձեզ եւ միայն ձեզ.. Թույլ տվեք ինձ, ինչպես գրողը գրողին...»: Ինչպիսի՛ ֆանտաստիկ հիմարություն. ես երբեք այդպիսին չէի կարող հորինել: Կամ այս մեկը. «...իսկ ինչ վերաբերում է դատարկ պատվանդանին, ապա այդպիսին կա: Միայն թե ոչ մի Մյունխհաուզեն, թույլ տվեք զեկուցել, դրա վրա չի կանգնել, այլ նստել է,- երեք թե չորս օր,- պապյե-մաշեից պատրաստած Ալեքսանդր ցարը, որին էլ, ասենք, պարաններով քաշեցին ցած, եւ որտեղ դատարկ էր, այնտեղ հիմա էլ դատարկ է, իսկ որեւէ այլ բան կլինի՞, մենք չգիտենք: Եվ թքով կպցնելու մասին մակագրությունն էլ է եղել, ինքս եմ տեսել, միայն թե հիմա, քանի որ մեզ մոտ շինարարություն է գնում, պատել են ներկով: Իսկ եթե ձեզ կասկածելի է թվում...»: Եվ այլն, եւ այլն: Ավելի լավ է այս մեկը,- եղունգը վազեց տողերով,- կարդացի՞ք: Եվ ահա այստեղ: Կարո՞ղ էիք այսպիսի բան պատկերացնել: Ո՛չ, ասեք՝ սա ի՞նչ է, ե՞ս եմ խելագարվել, թե՞...

Ունդինգը հազիվ հասցրեց հետ քաշել մատները,- բյուվարի կափարիչը շխկոցով փակվեց, ու տնային ոտնամանների կրունկները բյուվարից զայրացած շփշփացին դեպի բազկաթոռը: Ունդինգը շրջվելով տեսավ, որ Մյունխհաուզենը նստել է՝ գլուխն ափերի մեջ առած: Ու երկար դադար եղավ, մինչեւ կրկին կվերադառնային բառերին:

- Ինձ վերջնականապես սպանեցին նրանց վտարանդիների գրքերը: Մոսկովյան գրվանների ու մարգարեի մասին պատմությունը հորինելիս չգիտեի, որ կգտնվեն մարդիկ, որոնք այդքան հեշտ կգերազանցեն իմ երեւակայությունն ու կծիծաղեն չափն անցած հորինողի վրա: Ես չեմ նախանձում, բայց տխուր է, ինչպես կարող է տխուր լինել ծեր, տերեւազուրկ ծառի համար, որ մեռնում է՝ բոլոր կողմերից խեղդող փարթամ մատղաշ շիվերի արանքում:

Բայց՝ եկեք առանց լիրիկայի: Գուցե կարելի լիներ շարունակել վերաքննությունը, բայց ինձ համար այդքանն էլ բավական էր: Ես տեսնում էի, որ փաստերը հիմնական ուրվագծերով դարձել են ֆանտազմներ, իսկ ֆանտազմները՝ փաստեր, եւ խավարը չոջիկի շուրջը զնգում էր հազարավոր զանգակներով. թեւի յուրաքանչյուր հարված թելին, յուրաքանչյուր բառ, յուրաքանչյուր փետուրի շարժում պարուրված էր ծիծաղող օդի

զանգահարությամբ: Ես հիմա էլ դա լսում եմ: Ե՛վ արթմնի, եւ՛ քնի մեջ: Ո՛չ, ո՛չ: Բավակա՛ն է: Թող բացեն խավարն ու դուրս թողնեն թռչունին. ինչո՞ւ տանջել նրան, եթե փորձը տապալված է:

Դուք երեւի նեղանում եք ինձնից, բարեկա՛մս, մտածում եք՝ ինչո՞ւ է կանչել, հարյուրավոր կիլոմետրերի հեռվից այս փնթփնթանը, որը ոչ ինձ է պետք, ոչ իրեն, ինչո՞ւ...

- Եթե իմանայիք, թե որքան միակն եք ինձ համար, այդպես չէիք խոսի, ուսուցի՛չ:

Մյունխհաուզենը շտկեց չորչորուկ մատից սահած մատանին եւ ասես ժպտում էր ինչ-որ հուշերի.

- Ճիշտն ասած, ոչ թե ես, այլ հիվանդությունն է կանչել ձեզ: Կարո՞ղ էի մտածել, որ երբեւէ ինքս ինձ կխոստովանեմ, կպատմեմ ողջ ճշմարտությունը, ինչպես ծերացած պոռնիկը՝ խոստովանախցի ճաղավանդակին: Չէ՞ որ գիտեք, դեռ մանուկ օրերիս իմ ամենասիրած գիրքը հրաշքների ու լեգենդների ձեր գերմանական ժողովածուն է եղել, որը միջնադարը վերագրում էր ոմն սուրբ Ոչոքի: Իմաստուն ու բարեգութ der heilige Niemand-ը առաջին սուրբն էր, որին ուղղել եմ իմ մանկական աղոթքները: Գոյություն չունեցողի մասին նրա խայտաբղետ պատմություններում ամեն ինչ ուրիշ էր, այլ կերպ, եւ երբ ես, այն ժամանակ դեռ տասնամյա տղեկ, այլակերպում էի նրա Այլկերպը, փորձում էի չգոյությունների խորհրդավոր աշխարհը տանել խաղընկերներիս ու դպրոցական ընկերներիս, նրանք ինձ սուտլիկ էին կոչում, եւ մի անգամ չէ, որ մարտնչելով հանուն սուրբ Ոչոքի, բախվել եմ ոչ միայն քմծիծաղի, այլեւ բռունցքների: Բայց der heilige Niemand-ը հարյուրապատիկը հատուցեց. մի աշխարհը խլելով՝ ինձ տվեց հարյուր հարյուրները: Չէ՞ որ մարդիկ այնպես աշխարհազուրկ են, որը այն նրանց տրվում է ընդամենը մեկ օրինակով՝ բոլորի համար, ու խեղճերը՝ բոլորը եւ միշտ, ծվարում են իրենց մեն-միակի մեջ, իսկ ինձ արդեն պատանության տարիներին ընծայվել են բազում տիեզերքներ, ընդ որում՝ միայն ինձ համար: Իմ աշխարհներում ժամանակն ավելի արագ էր շարժվում ու տարածությունն ավելի տարածուն էր: Դեռեւս Լուկրեցիոս Կարոսն էր հարցնում. եթե աշխարհի ծայրին կանգնած պարսատիկավորը նետի իր քարը, ո՞ւր կընկնի՝ սահմանագծի՞ն, թե՞ գծից այն կողմ: Ես հազար անգամ պատասխանել եմ, որովհետեւ իմ պարսատիկը միայն գոյություն ունեցողի սահմանից անդին է: Ես ապրում էի ֆանտազիաների անսահման թագավորությունում, եւ ճշմարտությունն իրարից խլխլող փիլիսոփաների վեճերն ինձ մուրացկանների

կռիվ էին թվում՝ նետած պղնձադրամի համար: Խեղճերն այլ կերպ չէին էլ կարող. եթե ամեն առարկա հավասար է ինքն իրեն, եթե անցյալը չի կարող այլ կերպ լինել, եթե յուրաքանչյուր օբյեկտ մեկ օբյեկտիվ իմաստ ունի եւ մտածողությունը լծված է ճանաչողությանը, ապա չկա ուրիշ ելք. միայն դեպի ճշմարտություն: Օ՛, ինձ որքան ծիծաղելի էին թվում այդ բոլոր գիտուն գլուխները, միասնացնողներն ու ըմբռնողները. նրանք փնտրում էին (հունարեն) «միասնականը շատի մեջ» ու չէին գտնում, իսկ ես կարողացա գտնել շատը մեկի մեջ. նրանք փակում էին դռները՝ նրանց գիտակցությունը սեղմելով շեմերին, ես բացում էի դրանց փեղկերը դեպի ոչինչը, որն էլ հենց ամեն ինչն է: Ես դուրս եկա գոյության պայքարից, որը իմաստ ունի միայն նեղ ու աղքատիկ աշխարհում, որտեղ գոյը չի բավականացնում բոլորին, որպեսզի պայքարի մեջ մտնեմ գոյություն չունեցողի համար. ես արարում էի կիսարարված աշխարհներ, վառում ու մարում արեւներ, պայթեցնում հին ուղեծիրները եւ տիեզերքում գծում նոր ուղիներ. ես նոր աշխարհներ չէի բացահայտում, օ՛, ոչ, ես հնարում էի դրանք. փաստերի դեմ ֆանտազմների բարդ խաղում, որ տարվում է միջօրեականների ու երկայնությունների գծերով քառեկված շախմատի տախտակի վրա, ես սիրում էի հատկապես շախմատիստների կողմից միջակետով նշանակվող այն ակնթարթը, երբ քո քայլին սպասելով՝ ֆանտազմով խփում ես փաստին՝ չգո դառնալով գոյություն ունեցողի տեղում: Եվ ֆանտազմները միշտ եւ անփոփոխ հաղթում էին,- միշտ եւ անփոփոխ, մինչեւ չհանդիպեցի այն երկրին, որի մասին չի կարելի ստել:

Այո՛, այո՛, այդ հարթավայրային քառակուսուն՝ սեւ ու սպիտակ ջրերի միջեւ, բնակեցված իմաստների այնպիսի անհամարությամբ, իր մեջ ներդաշնակած այնքան անդաշնություններ, բացված դեպի այնպիսի հեռաստաններ, որ անհնար է այլեւս ոչնչով հեռահեղել, առաջադրած այնպիսի փաստեր, որ ֆանտազմներին մնում է միայն նահանջել: Այո՛, Երկիր, որի մասին չի կարելի ստել: Կարո՞ղ էի մտածել, որ այդ ահռելի կարմիր թագուհին, իմ զինվորների գիծը պատռելով, կշրջի ողջ խաղը. հիշում եմ՝ ինչպես էր կանգնել համարյա բոլոր խաղաքարերիս հարվածների տակ. հաղթական սրտխփոցով՝ ես թագուհուն՝ շեղակի՝ զինվորով ու՝ վերջ. բայց ժպիտը դեռ չէր հասել շրթունքներիս, երբ տեսա, որ զինվորս, անհասկանալի կերպով, փքվելով ու սաստիկ կարմրելով, վերածվեց հենց նոր տապալված կարմիր թագուհուն: Այդպիսի բան միայն երազներում է լինում. քաշվելով մղձավանջի մեջ՝ ես բռնեցի ձիուս փշաքաղված բաշը եւ, ոլորք անելով, նորից տախտակից դուրս շպրտեցի կարմիր թագու-

հուն. լսում էի՝ ինչպես էր դղրդում՝ վիթխարի ատամները գետնին խփելով, եւ դատարկ տեղից կրկին միջօրեականների ցանցին բարձրացնում արյունոտ ատամնաշարը: Ես փոխատեղում արեցի նավակի հորիզոնականով. դարձյալ տապալվող դղրդոց ու կրկին փոխակերպում: Ես լեուֆերի շեղ քայլով կատաղած խփեցի անիծյալ վանդակին. նորի՛ց: Եվ տեսա. իմ վանդակները դատարկ են, թագավորս՝ շախի տակ, իսկ անպարտելի թագուհին կանգնած է այնտեղ, որտեղ կանգնած էր՝ գծերի համաստեղության կենտրոնում: Հասել էր պահը, երբ ես ոչ մի խաղաքար չունեի. բոլոր ֆանտազմներս տանուլ էին տրված: Բայց չէի մտածում հանձնվել. այդ խաղում եւ այդ մասշտաբներով, որ մենք տեսնում ենք, եթե ոչինչ չի մնացել, ապա՝ քեզնով: Ես ժամանակին արդեն փորձել էի գլխիցս բռնած՝ ինձ դուրս քաշել ճահճից: Դե ինչ, քայլ ինձնով. պարտված խաղացողին ուրիշ ոչինչ չի մնում, եւ ես այնքան էլ ներբաններով կառչած չեմ գետնից: Բայց իմ ցայտնոտն արդեն սպառվում է: Ժամանակն է: Մենակ թողեք ինձ, բարեկա՛մս: Եթե ճշմարիտ բարեկամ եք:

Ունդինգը նախ բարձրացրեց ծանրացող կոպերը, հետո իրեն բարձրացրեց. նա հրաժեշտի բառեր էր փնտրում ու չէր գտնում: Բայց մի՞թե կարելի է այդպես լսել ու հեռանալ, իբր ոչինչ էլ չես լսել: Նա զննեց սեղանակը, գրքերի կազմերի կիպ սեղմված շարքերը, թվատախտակի սկավառակը՝ բրոնզե շրջանակում, բյուվարի փակ կափարիչը, անկյունում ծխամորճերի տակդիրը, որ առաջ չէր նկատել, տակդիրի վրա հին, ծխազերծ ծխամորճը ու հենց կողքին, բազկաթոռի թիկնակից թեւքերը կախ, այն նույն հին, Վեսթմինսթերից փախած կամզոլը: Ունդինգը կամզոլի կնճռոտած թիակներին նայելով՝ ասաց.

- Ինչպե՞ս: Մի՞թե չեք ուղարկել, ինչպես թերթերն էին գրում, Մոսկվա՝ ինչ-որ երիտասարդ գիտնականի:

- Կամզոլը դեռ կարող է ինձ էլ ծառայել,- լսվեց խուսափողական պատասխանը,- իսկ աղքատ գիտնականի համար, Երկրից, որի մասին չի կարելի ստել, մի անհանգստացեք: Նրան, որպես փոխհատուցում, ուղարկվել են իմ սեւագրերը, եթե ձեռքի տակ թեկուզ մկրատ ու սոսինձ ունի, ձեռագիրը կօգնի նրան դուրս գալ գրական ճանապարհ:

Տանտերն ու հյուրը հրաժեշտ տվեցին իրար: Ծեմից մի անգամ էլ հետ նայելով՝ Ունդինգը տեսավ. բարոնի՝ ճակատին քաշած թասակի տակից երեւում էր խնամքով հյուսած երկար ու ճերմակահեր հյուսքը:

Ճռռացող պտտասանդուղքը կրկին պտտեց հեռացողի դանդաղ քայլերը:

Գլուխ VIII
Մարդուց խույս տված ճշմարտությունը

Միխել Հեյնցը ծգեց սանձն, ու անիվները կանգ առան: Կայարանային տնակի շեմը, ապա՝ աստիճանները: Ունդինգն աչքերը բարձրացեց պատի ժամացույցի թվատախտակին ու մտածեց. «Պետք է շտկել թվատախտակի անվի մետաֆորը. որքան էլ ճաղերը պտտես, անվահեցը միշտ անշարժ է»: Եվ անմիջապես էլ մտքով անցավ պատկերների երկար շարքը: Սյունխաուզենի հետ հանդիպումները (միայն Ունդինգը չէ, որ դա զգում էր) միշտ հաճախացնում ու հստակեցնում էին գաղափարների երակազարկը ու լրիվ,- մինչեւ վերջ,- լարում ֆանտազիաների զսպանակը: Եվ վագոնի խաղաղ թխկոցի ու ճոճքի տակ Ունդինգի մատիտը չէր կտրվում մատներից, սլանում էր կապույտ գծով՝ ուրվագծելով նոր պոեմը: Գնացքն արդեն մոտենում էր Բեռլինին, երբ գտնվեց վերնագիրը. «Ուղերձ աթոռների թիկնակներին»: Բառերի նավի վրա էլ լինում են աղետալի պահեր, երբ հոգին բոլորին «սուլում է վեր», եւ բոլոր կողմերից,- ճոճվող մահճակներից, փակ դռների ետեւից եւ նույնիսկ մութ նավամբարից,- բառի ազդանշանը լսելով՝ շտապում են ճերմակ էջերի մերթ ծառս լինող, մերթ մրրիկի մեջ թաղվող տախտակամած: Ունդինգը բաց թողեց Ֆրիդրիխշտրասսե-բանգոֆը եւ իջնելով Մոաբիտում՝ կտրեց քաղաքը՝ իր բանաստեղծական տողերի զնգոցի պատճառով չլսելով ո՛չ անիվների թխկոցը, ո՛չ մարդկանց ժխորը:

Միայն հասնելով շքադռան ցուցանակին Էռնստ Ունդինգի անունը կրող սենյակի շեմին՝ պոետը հիշեց՝ ով է ինքը ու որտեղ է:

Հետո խոր քունը ինը ժամով առաջ տվեց ժամացույցի սլաքը: Ոտքերը մահճակալից կախելով՝ Ունդինգը դրանք խցկեց կոշիկների մեջ, բայց թելերը կապել չհասցրեց. հիշողության մեջ հորդած երեկը տիրեց հանգստացած գիտակցությանը: Բեղենվերդերի ուղեւորության հանկարծափոխությունները հառնեցին նրա առաջ իրենց ողջ անուղղելիությամբ: «Եթե գնում էի օգնելու,- տանջում էր միտքը,- ուրեմն ինչո՞ւ էի լռում: Մի՞թե կարելի է օգնել լռությամբ»: Կողքին նախորդ օրվա գրառումն էր. Ունդինգը հայացքը տանելով մատիտով արված խզբզանքի վրայով, դառը քմծիծաղեց. «Ահա, խոսել եմ, չէ՞, աթոռների հետ, բայց ինչո՞ւ՝ ոչ մարդու»: Սակայն ձեռագրի բառերն արդեն կառչել էին բիբերից, եւ պոետը չնկատեց, թե անավարտ բանատողերն ինչպես կրկին մատները սեղմեցին թղթին, եւ պոեմի կամքն իր կամքը դարձավ. նորից երեւաց երեւակայական դահ-

լիճը, դեպի որի հեռուն էին գնում փայտե արարածների անվերջանալի շարքերը, եւ յուրաքանչյուրը,- եւ՛ առջեւից, եւ՛ հետեւից,- միայն մեջք ունեին՝ չորս չծալվող ոտքերի վրա: Խիտ շարքերին նայելով՝ պոետը բառերով խփում էր մեռած թիկունքներին, անհուսության պաթոսին տրված՝ խոսում էր բոլոր մտքերի անլսելիության մասին, որ ցանկացել էին բառ դառնալ, խուլ Բեթհովենի կլավիկորդ նվագելու մասին, որի մուրճիկների տակից հանել են լարերը, հիանում էր իր չունկնդիրների ազնվաբարո անկեղծությամբ եւ նրանց օրինակ բերում մարդկանց, որոնք երկչոտ թաքցնում են, որ իրենք էլ, որ կողմից էլ մոտենաս, ընդամենը մեջքեր են՝ գետնի մեջ պտուտակած ոտքերի վրա. բանատնից բանատուն դառնությամբ ու զայրույթով լցվելով՝ նա գրում էր... Բայց լավ չէ նայել քնարական պոետի ուսի վրայից, երբ դիմում է ոչ թե քեզ, այլ իր աթոռի մեջքին:

Այսպես, թե այնպես, միայն մթնշաղին, երբ օդը գրաֆիտե տողերի գույնին դարձավ, պոեմի սեւագիրն ավարտված էր, ու մատիտը լքեց մատները: Ունդինգն ամբողջ օրը ոչինչ չէր կերել. վերարկուն ուսերին գցելով՝ նա դուրս եկավ իրիկնային փողոց ու բացեց մոտակա բիրխալլեի դուռը. քաղցած քնարերգուն դանակի, պատառաքաղի ու ծնոտների օգնությամբ արագ հաղթահարեց նրբերշիկները, կաղամբից միայն կաղամբի թեթեւ հոտ մնաց, իսկ շպիգելյայլերը, թողություն խնդրելով, նրան էր հառել դեղին աչքերը: Հետ մղելով քաղցի առաջին գրոհը՝ Ունդինգը պարզեց ձեռքը, մոտ քաշեց գարեջրի գավաթը, ու հանկարծ մատները հետ թռան ապակե կանթից. խմիչքի երեսին, նիստավոր եզրերին կպչելով, փքվում ու պայթում էին փրփուրի մանրիկ պղպջակները, ճիշտ նրանց պես, որ մի քանի տարի առաջ նրան ծանոթացրին Մյունխհաուզենի հետ: Հիմա, երբ անցել էր եսասիրության նոպան, որ արվեստի պատմաբանները ներշնչում են կոչում, լքված բարեկամի կերպարը հայտնվեց գիտակցության ամենակենտրոնում եւ այլեւս մշտակա էր: Ունդինգը այդ գիշեր երկար շուռումուռ էր գալիս տաքացած բարձերի վրա, մինչեւ որ քնեց: Բայց քնի մեջ երազ եղավ նրան. ցածր առաստաղ՝ հեռված գրքերի կապերին, թիկունքում՝ թեթեւ թռչնային քայլեր: Ունդինգը շրջվում է՝ գրասեղանի երեսով, բադի թաթիկները զգույշ դնելով, գաղտագողի մոտենում է պղպջակը: Ունդինգն ուզում է փախչել, բայց ոտքերը փայտից են ու պտուտակված հատակի մեջ: Չի կարելի թույլ տալ, որ օմեգան թափանցի թիկունքից,- դա հաստատ է հիշում,- բայց չէ՞ որ եւ՛ առջեւից է մեջք, եւ՛ ետեւից է մեջք, բոլոր կողմերից, եւ պղպջակը կայծկլտալով փքվում է,- էլի՛, էլի՛,- արդեն՝ սեղանը, հետո՝ գրքերը, առաստաղը,

ողջ սենյակը եւ նա՝ Ունդինգը, պղպջակի մեջ են, բարակած փքվածքը ծգվում է... պայթյուն եւ՝ մահ: Ունդինգը սեղմում է կոպերն ու տեսնում իրեն... բաց աչքերով՝ անկողնու վրա: Պատուհանի ապակեկալի միջով՝ լուսաբացը:

Ողջ օրվա ընթացքում անհանգստությունն աճում էր: Թերթն առներ ձեռքը, թե նոթատետրում գրանցեր «Վերիտասի» գրասենյակի հերթական կարգադրությունները, այդ ամենի միջով Ունդինգը տեսնում էր մագաղաթե ձեռքերի մեջ թաղած դեմքով մարդուն, գագաթից կախված հյուսքը, դանդաղ երկարելով, ասես սպառնում էր անուղղելի մի բանով: Եվ Ունդինգը կրկին Բեռլին-Հաննովեր երեկոյան գնացքի ուղեւորների թվում է:

Միխել Հեյնցը, դռան թակոցից ու կանչող ձայնից արթնացած, նորից, ինչպես մի քանի օր առաջ, բակից դուրս եկավ իր գյուղական սայլով. Ունդինգը ոտքը դրեց ոտնակին, եւ անիվները պտտվեցին Բադենվերդերի կողմը: Այս անգամ մի քիչ ավելի ցուրտ էր, ու նայելով դանդաղ շառագունող այգաբացին՝ Ունդինգը լսում էր, թե ինչպես է սմբակների տակ ժամանակ առ ժամանակ պայթում ու խշրտում ջրափոսերի սառցաթաղանթը: Երբ առավոտվա մշուշից անիվների թխկոցին ընդառաջ եկան հողմաղացների՝ երկինք նետված ձեռքերը, ուղեղը ծակեց անսպասելի միտքը. «Իսկ եթե բարոնի ողջ պատմածը մեր վերջին հանդիպման ժամանակ միստիֆիկացիա է՝ ամենից արտասովորն ու հաջողվածը բոլոր մյունխհաուզենապատումներից»: Ունդինգը պատկերացրեց բադենվերդերյան մենակյացի ծիծաղող դեմքը՝ գոհ, որ հաջողել է իրեն բռնել չարաճճիության վրա, ստիպել հավատալ անհավատալիին: Ունդինգն արդեն ցուրտը չէր զգում, սիրտն արագ էր խփում, բայց անիվներն առաջվա պես դանդաղ էին: Նա համբերահատ կռացավ սայլապանի կողմը.

- Չի՞ կարելի արթնացնել ձիերին, հերո՛ Հեյնց:

Միխելը շարժեց մտրակն ու սայլը թեքվեց դեպի կողային ճանապարհը: Բադերի վախեցած երամը կռռոցով դուրս պրծավ հաճախացած սմբակների տակից, ինչ-որ բան ճթթաց անիվների տակ: Ունդինգը հետ նայեց՝ բադերից մեկը չէր հասցրել, թեւերը փռած՝ ճանապարհին շեղակի ձգել էր անվակալի տակ անշարժացած վիզը: Թափ առնելով՝ Հեյնցի սայլը աշխույժ անցավ բլուրն ու արդեն դղրդում էր կամրջի գերանների վրա, երբ Ունդինգը գոչեց.

- Կա՛նգ առեք:

Մառախուղից զատված առավոտի մեջ լճափին մի խումբ մարդիկ

երեւացին, որոնք հետեւում էին լճի երկայնքով դանդաղ լողացող նավակին. նավակում նստած էին կարթածողերով զինված չորս մարդ. մեկ անցնելով ջրի տակ, մեկ դուրս լողալով՝ կարթածողերը տնտղում էին հատակը: Ափին հավաքվածների մեջ Ունդինգը տեսավ ծեր ծառայապետի կորամեջք կերպարանքը, անիվների աղմուկի վրա շրջվելով՝ ըստ երեւույթին նա էլ ճանաչեց հյուրին եւ, որքան թույլ էր տալիս ծերությունը, շտապեց դեպի կամուրջը: Այլեւս ուժ չունենալով սպասելու՝ Ունդինգը ցած թռավ սայլից ու շտապեց ծառայապետին ընդառաջ:

- Վատ բա՞ն է պատահել: Ասե՛ք:

Ծերունին կախեց գլուխը.

- Արդեն երկրորդ օրն է, որ պարոն բարոնն անհետացել է: Ոտքի եմ հանել բոլոր ծառաներին: Տակնուվրա ենք արել տունը, այգին, անտառը, հիմա էլ լճի հատակն ենք ստուգում: Ոչ մի տեղ չկա:

Էռնստ Ունդինգը մի պահ լուռ էր: Հետո.

- Դադարեցրեք որոնումները: Պետք չէ: Գնա՛նք:

Հյուրի ձայնի մեջ վստահություն էր հնչում: Ծերունին ենթարկվեց, մանավանդ, որ երկու օր առանց տիրոջ մնալով՝ գոնե ինչ-որ մեկի կարգադրությունների պահանջ էր զգում: Նավակը մոտեցավ ափին, կարթածողերը թափվեցին գետնին, իսկ սայլը շարժվեց տան կողմը: Ճանապարհին Ունդինգը հասցրեց իմանալ մանրամասները.

- Ձեր մեկնելուց հետո,- զեկուցեց սենեկապանը,- ամեն ինչ սովորականի պես էր: Չնայած՝ ոչ. բարոնը հրաժարվեց ճաշից ու խնդրեց առանց անհրաժեշտության չանհանգստացնել իրեն: Ժամը վեցին, ինչպես միշտ, բարձրացավ աշխատասենյակ: Բարոնը սովորություն ունի այդ ժամին մի բաժակ կյումմել խմել: Ես սկուտեղը դրեցի սեղանին, բարոնը, ինչպես միշտ, գիրքը ձեռքին նստած էր բազկաթոռի մեջ. ուզում էի հարցնել՝ ճաշը չտաքացնե՞մ, բայց նա ինձ դուրս գալու նշան արեց...

- Ընդհատեմ ձեզ. չե՞ք հիշում՝ այդ երեկո ի՞նչ գիրք էր բարոնի ձեռքին:

- Կազմը կարմիր էր, կարծես՝ սեկապատ, ոսկե եզրահատվածքով: Հիմա էլ սեղանին է, ինչպես թողել է բարոնը: Բանն այն է, որ...

- Շնորհակալ եմ: Շարունակե՛ք:

- Իջնելով ներքեւ՝ այնտեղ էլ մնացի, մտածելով, որ բարոնը հիվանդ է եւ ամեն րոպե կարող է կանչել: Տանն այնպիսի լռություն էր, որ հստակ լսում էի գրադարանից եկող ոտնաձայները: Հետո դրանք դադարեցին: Ես կանչեցի Ֆրիցին (թոռս է) ու պատվիրեցի կանգնել սանդուղքի տակ ու ոչ մի քայլ չանել, ականջ դնել՝ բարոնը չի՞ կանչում: Իսկ ինքս գնացի

տնտեսության գործերով, անելիք շատ կար, երբ վերադարձա, արդեն գիշեր էր: «Բարոնը դուրս չի՞ եկել»,- հարցնում եմ Ֆրիցին: «Ո՛չ»: «Չի՞ կանչել»: «Ո՛չ»: Սա ի՛նչ բան է: Ֆրիցի աչքերը փակվում էին, ես բաց թողեցի նրան եւ աթոռը մոտեցնելով վերեւ տանող աստիճաններին՝ նստեցի ու սկսեցի ականջ դնել: Ոտնաձայն չկար: Հո հիվանդ չի՞: Վերեւից՝ ոչ մի շրշյուն: Այդպես՝ մի ժամ, ու էլի մի ժամ: Հետո, կեսգիշերից մի քիչ առաջ, վերեւում ասես զանգակ շարժեցին. լեզվակը խփվեց եզրին, ու՝ լռեց: Գուցե թվաց, մտածում եմ, իսկ գուցե եւ ոչ: Բարձրացա գրադարան: Դուռը ծեծեցի, սպասում եմ: Կիսաբաց արեցի ու հարցնում եմ. «Պարո՛ն բարոն, բարեհաճեցիք կանչե՞լ»: Չի պատասխանում: Արդեն այստեղ համարձակություն առա ու մտա ներս. տեսնեմ՝ սենյակում մարդ չկա, բազկաթոռները դատարկ են, սեղանի ծայրին՝ փակ գիրք, այն նույնը՝ սեկե կազմով, դատարկ բաժակն ընկել ու գլորվել է սեղանի տակ, ու միայն սփռոցի ծայրն է թեթեւ շարժվում, ասես հենց նոր դիպած լինեն ծնկով: Մոտենում եմ պատուհանին. փակ է: Սո՛ւրբ Կույս, սա ի՞նչ բան է: Նայեցի դարակները. գրքեր ու գրքեր: Գուցե բարոնը թաքնվե՞լ է. բայց որտե՞ղ: Ու նաեւ ծեր ենք արդեն, երեխա չենք երկուսս էլ, որ պահմտոցի խաղանք: Կանչեցի Ֆրիցին. ամեն տեղ նայեցինք: Հետո պահակին՝ դուրս չի՞ եկել: Ո՛չ: Ջահերով իջանք այգին ստուգելու: Ու սկսվե՛ց. երկու օր է փնտրում ենք: Ասացեք, պարո՛ն, կարելի՞ բան է, որ մարդը սենյակից դուրս չգալով՝ դուրս գա այնտեղից, հը՞:

Բայց այդ ժամանակ սայլը կանգ առավ կալվածատան դարպասի մոտ, ինչը Ունդինգին ազատեց պատասխանելու անհրաժեշտությունից: Ցած թռավ սայլից ու ծառայապետին չսպասելով՝ քայլեց տան կողմը: Գզգզված ու քնատ Ֆրիցը բացեց դուռը, եւ Ունդինգը, շրջանցելով դիմանկարների շրջանակների խունացած ոսկին, գրադարան տանող սանդուղքի պարույրով՝ վերեւ: Ափի հարված դռանը, եւ պոետը, գլխարկը ձեռքին, հատեց շեմը: Ամեն ինչ այնպես, ինչպես այն ժամանակ: Չնայած՝ ո՛չ. ժամացույցը, որ հավանաբար մոռացել էին լարել, լուռ էր, իսկ բազկաթոռի թիկնակը, որից անցած անգամ դատարկ թեւերն էր կախել բարոնի հին կամզոլը՝ դատարկ: Սեկապատ հատորյա՞կը: Այո՛, ծառան ճիշտ էր նկարագրել. սեղանի ծայրին, բազկաթոռից՝ պարզած ձեռքի հեռավորության վրա: Ունդինգը մոտեցավ ու դիպավ կարմիր սեկապատ կազմի անկյունակապին: Այո՛: Նույն գիրքն է: Մատները մի պահ կարկամեցին հուզմունքից, բայց հապաղել չէր կարելի. ներքեւում շխկաց դուռն ու մոտեցող քայլերի ձայն լսվեց: Ունդինգը քաշեց անկյունակապից ու

հետ գցեց կազմը. էջ երեք, հետո՝ երեսունհինը, ապա վաթսունհինգ, վաթսունյոթ: Հիմա՛: Մատները փոքր-ինչ դողալով շրջեցին էջը. տպագրական եզրանախշով շրջանակված դատարկ քառանկյունն արդեն դատարկ չէր. բարոն Մյունխհաուզենը, ուսերը կորացրած, կանգնել էր այնտեղ:

Հագին նույն ավանդական կամզոլն էր ու հյուսքը՝ կախված թիակների արանքում: Ճիշտ է, ինչպես 1783 թվականի հրատարակությունում է, սուսերը կախված չէր աջ ազդրին, մազերն էլ զգալի ճերմակել էին: Բայց կողմնակի դիտողը, որ տեսել էր այլ հրատարակությունների օրինակներ, կասեր. «Ցնջվում է ներկը ժամանակից ու խունանում»: Ամեն դեպքում, ողջ աշխարհում չէր գտնվի մեկ այլ այդպիսի խենթ, որը կմտածեր այն, ինչ մտածեց Էռնստ Ունդինգը. «Ահա այն, վերջին ելքը՝ ինքն իրեն»: Եվ կզգար, որ մի կսկծացնող արցունք է խճճվել թարթիչներում: Միայն սա՛ էր պակաս: Պոետը զայրացած կիտեց հոնքերն ու ծեռքը պարզեց մատիտին. բայց դամբանագրի բառերը չէին հայտնվում: Մի որպեի չափ նստել էր, արմունկները՝ բազկաթոռի արմնկակալներին, աչքը՝ վերջապես իր հին գրքի մեջ վերադարձած բարեկամի աղոտ ու փոքրացած ուրվապատկերին: Թվաց՝ էջերը բուրում են, հավերժությունն է բուրում:

Բայց ծառայապետի քայլերը, որ, թվում էր, մոլորվել էին միջանցքի խառնաշփոթում, հանկարծ շատ մոտ հնչեցին: Պետք էր շտապել: Ունդինգը, խնամքով ու երկյուղածությամբ, մատների ծայրերով կաշվե անկյունակապերին դիպչելով, փակեց կազմի սեկապատ կափարիչը: Հետո, գիրքը ծեռքին, մոտեցավ դարակներից նայող կռնակների շարքին՝ նայելով, թե որտեղ դնի սեկապատ դագաղը: Այ այստե՛ղ. եւ ալ կարմիր կաշվին ու մագաղաթին քսվելով՝ գիրքը կանգնեց բարեպատշաճ Ադամ Սմիթի եւ «Հազար ու մի գիշերների» արանքում: Թիկունքում դուռը ճռռաց: Ծրջվելով՝ Ունդինգը տեսավ ծառայապետին.

- Բարոնը չի վերադառնա,- կողքով անցնելիս նետեց նա,- որովհետեւ չի հեռացել:

Եվ ծերունուն, որը պատրաստվում էր կաղին տալ նրա ետեւից՝ ավելի հստակ պատասխան ստանալու, չհաջողվեց հասնել ո՛չ պատասխանի, ո՛չ Ունդինգին: Հինգ րոպե էլ չէր անցել, եւ պոետն արդեն նստած էր սայլի մեջ՝ նայելով Միխել Հեյնցի թիկունքին, որը երկար ու երգեցիկ սուլոցով ժամանակ առ ժամանակ արագացնում էր սմբակների դոփյունը: Անիվները, բարակ սառույցը խշրտացնելով, արդեն գլորվում էին դեպի կամուրջը, երբ պոետն անսպասելի կռանալով՝ դիպավ Հեյնցի մեջքին:

Հեյնցը շրջվելով՝ ուղեւորի ծնկներին տեսավ բացված նոթատետրը:

Սիգիզմունդ ԿՐԺԻԺԱՆՈՎՍԿԻ

Չզարմացավ, ծխախոտ վառեց, շտկեց շրջափոկն ու սպասեց: Իսկ թռչ-կոտող գորշ տառերից կազմվող տեքստն ասում էր.

Այստեղ, սեկե ծածկոցի տակ
ողջերի դատին է սպասում
երկչափության մեջ ճզմված
խախտողը չափերի աշխարհի՝
բարոն Հիերոնիմուս
ֆոն Այունխհաուզենը:
Մարդն այդ, որպես ճշմարիտ մարտիկ,
ճշմարտությունից երբեք չշեղվեց՝
ողջ կյանքը տալով նրա հետ սուսերամարտին,
հետ մղելով փաստերը ֆանտազմներով,
եւ երբ ի պատասխան հարվածների
վճռական հարձակում գործեց,- վկայում եմ,-
Ճշմարտությունն ինքը
խույս տվեց մարդուց:
Աղոթեք նրա հոգու համար սուրբ Ոչմեկին:

Էռնստ Ունդինգը ծալեց թերթիկներն ու նշան արեց սայլապանին. գնացի՛նք: Եվ ջրափոսերի բարակ սառցաշերտերը նորից ծլնգացին ան-վակալների տակ:

ՏԱՌԱՍՊԱՆՆԵՐԻ ԱԿՈՒՄԲԸ

1

- Պղպջակներ ջրահեղձի գլխավերեւում:

- Ինչպե՞ս:

Եռանկյուն եղունգը արագ գլիսանդոյով սահեց գրադարակից մեզ վրա չռված գրքերի կռնակներով:

- Ասում եմ. պղպջակներ ջրահեղձի գլխավերեւում: Չէ՞ որ բավական է գլխով՝ լճափոսը, եւ շունչն անմիջապես՝ պղպջակներով վեր. ուռչում ու պայթում է:

Խոսողը նորից հայեց պատերի երկարությամբ իրար սեղմված լռակյաց գրքերի շարքերը:

- Կասեք, որ պղպջակը կարողանում է իր մեջ պահել արեւը, երկնքի կապույտը, ափամերձ կանաչ ծփանքը: Թող որ այդպես: Բայց դա պե՞տք է նրան, ով արդեն՝ բերանով հատակին:

Եվ հանկարծ, ասես բախվելով ինչ-որ բառի, նա վեր կացավ ու մատներով բռնելով մեջքին ծալած արմունկները, սկսեց հետ ու առաջ անել գրադարակից պատուհանը՝ միայն երբեմն աչքերով տնտղելով իմ աչքերը:

- Այո՛, հիշեք, բարեկա՛մս. եթե գրադարակին մի գիրք է ավելացել, ուրեմն կյանքում մի մարդ պակասել է: Եվ եթե ընտրելու լինենք դարակի եւ աշխարհի միջեւ, ապա ես նախընտրում եմ աշխարհը: Պղպջակները դեպի հատակը, ուրեմն՝ դեմքով դեպի հատա՞կը: Ո՛չ, խոնարհաբար շնորհակալ եմ:

- Բայց չէ՞ որ դուք,- համաձայնելու երկչոտ փորձ արեցի ես,- չէ՞ որ դուք եք մարդկանց այդքան գիրք տվել: Բոլորս վարժվել ենք կարդալ ձեր...

- Տվել եմ: Բայց չեմ տալիս: Ահա արդեն երկու տարի՝ ոչ մի տառ:

- Դուք, ինչպես գրում ու խոսում են, պատրաստում եք մի նոր ու մեծ գործ:

Նա մինչեւ վերջ չլսելու սովորություն ուներ:

- Մե՞ծ՝ չգիտեմ: Նոր՝ այո: Միայն թե նրանք, ովքեր դրա մասին գրում ու խոսում են,- դա հաստատ գիտեմ,- այլեւս ոչ մի տպագրական տառ չեն ստանա ինձնից: Հասկացա՞ք:

Իմ տեսքն, ըստ երեւույթին, ըմբռնում չէր արտահայտում: Մի որպե տատանվելով՝ նա հանկարծ մոտեցավ իր դատարկ բազկաթոռին, քաշեց իմ կողմը, նստեց համարյա ծունկ ծնկան ու քննախույզ նայեց ինձ: Տառապագին ծգվում էին լռության վայրկյանները:

Նա աչքերով ինչ-որ բան էր փնտրում իմ մեջ, ինչպես սենյակում փնտրում են մոռացված իրը: Ես կտրուկ վեր կացա:

- Ձեր շաբաթ երեկոները,- նկատեցի ես,- միշտ զբաղված են: Իրիկնանում է: Ես գնամ:

Կոշտ մատները, արմունկս բռնելով, չթողեցին վեր կենամ.

- Ճիշտ է: Իմ շաբաթ օրերը ես... այսինքն մենք թաքցնում ենք մարդկանցից: Բայց այսօր ձեզ ցույց կտամ շաբաթը: Մնացե՛ք: Բայց այն, ինչ ձեզ կներկայացվի, որոշ նախաբան է պահանջում: Քանի դեռ մենակ ենք՝ կոնսպեկտավորեմ: Դժվար թե ձեզ հայտնի լինի, որ երիտասարդ տարիներիս չքավորության աշակերտ եմ եղել: Առաջին ձեռագրերս, ծանրոցներ կազմելով, ինձնից խլում էին վերջին պղնձադրամները, եւ անփոփոխ վերադառնում սեղանի գզրոցը՝ քրքրված, թքոտած ու ծեծված դրոշմակնիքներով: Բացի սեղանից, որ մտահղացումների գերեզմանոց էր դարձել, իմ սենյակում էին նաեւ մահճակալը, աթոռն ու պատերի երկայնքով ձգված չորս երկար, տառերի բեռան տակ ճկված դարակները: Սովորաբար վառարանը փայտ չուներ, իսկ ես՝ ուտելիք: Բայց գրքերին համարյա կրոնական երկյուղածությամբ էի վերաբերվում, ինչպես ոմանք՝ սրբապատկերներին. վաճառել գրքե՛րը... նույնիսկ այդպիսի միտք չէր անցնում գլխովս, մինչեւ, մինչեւ... չխթանեց հեռաագիրը. «Մայրիկը երեկոյան մահացավ: Ներկայությունը պարտադիր է: Եկեք»: Հեռագիրը գրքերիս վրա հարձակվեց առավոտյան, երեկոյան կողմ գրադարակները դատարկ էին, եւ ես կարող էի երկու-երեք թղթադրամի վերածված գրադարանս խցկել գրպանս: Քեզ կյանք տվածի մահը շատ լուրջ է: Միշտ եւ ամեն ինչում. սեւ սեպով՝ կյանքի մեջ: Սգո օրերն անցկացնելով՝ վերադարձա,- հազարավոր վերստերով,- ու կանգնեցի իմ չքավոր կացարանի շեմին: Մեկնելու օրը անջատված էի իրավիճակից, ու միայն հիմա դատարկ գրադարակների տպավորությունն ընկալվեց եւ իմաստ առավ: Հիշում եմ, որ հագուստս փոխելով, նստեցի սեղանի մոտ ու հայացքս դարձրի չորս սեւ տախտակների դատարկությանը: Տախտակները, թեեւ գրքերի բեռը հանված էր, դեռ չէին շտկվել, ասես դատարկությունը սեղմում էր նրանց ուղղահայացներով ներքեւ: Փորձեցի աչքերս ուրիշ բանի դարձնել, բայց ինչպես արդեն ասել եմ, սենյակում ընդամենը այդքանն

էր՝ դարակներ ու մահճակալ: Հանվեցի ու պառկեցի՝ փորձելով քնով հաղթահարել ընկճվածությունը: Ո՛չ, զգացողությունը, միայն կարճ հանգիստ տալով, արթնացրեց. դեմքով դարակներին էի պառկած ու տեսա լուսնի շողքն ինչպես է դողդոջուն սահում մերկ գրադարակների վրայով: Թվում էր՝ երկչոտ քայլերով ինչ-որ համարյա անզգալի կյանք է ծնունդ առնում այնտեղ՝ անգրքության մեջ:

Իհարկե այդ ամենը լարված նյարդերի խաղ էր, եւ երբ առավոտը դադարեց ծակծկել, արդեն հանգիստ զննեցի դարակների՝ արեւով ողողված դատարկությունը, նստեցի սեղանի մոտ եւ անցա սովորական գործիս: Մի տեղեկության կարիք եղավ. ձախ ձեռքս ինքնաբեր շարժումով ձգվեց գրքերի կռնակներին. դրանց փոխարեն օդ էր: Նորից ու նորից: Սրտնեղած նայեցի արեւաբծերի պարսերով լեցուն անգրքությանը՝ փորձելով հիշողության լարումով տեսնել էջն ու տողը: Բայց երեւակայական տառերը երեւակայական կազմերի տակ դեսուդեն էին փախչում, եւ անհրաժեշտ տողի փոխարեն ստացվում էր բառերի խայտաբղետ ցրոնք, տողերի ուղիղը ջարդվում ու բաժանվում էր տասնյակ տարբերակների: Ես վերցրի դրանցից մեկն ու զգույշ ներգրեցի տեքստիս մեջ:

Երեկոյան կողմ, աշխատանքից հանգստանալիս, սիրում էի մահճակալին պառկած, Սերվանտեսի հատորը ձեռքիս, աչքերով դրվագից դրվագ ցատկել: Գիրքը չկար, բայց լավ էի հիշում՝ ներքեւի դարակի ձախ անկյունում՝ դեղին անկյունակապերով ու սեւ կաշվով սեղմված կալդերոնյան առտոներին կարմիր սեկին: Աչքերս փակելով՝ փորձեցի գիրքը պատկերացնել ափիս ու աչքերիս արանքում (այդպես սիրելիներից լքվածներն են շարունակում հանդիպել նրանց հետ՝ սեղմված կոպերի ու կենտրոնացած կամքի օգնությամբ): Հաջողվեց: Մտովի թերթեցի մի քանի էջ, հետո հիշողությունը թափեց տառերը. նրանք խառնվում ու դուրս էին ընկնում տեսադաշտից: Փորձում էի հետ կանչել. որոշ բառեր վերադառնում էին, մյուսները՝ ոչ. այդ ժամանակ սկսեցի լցնել բացուտները՝ բառերի միջեւ դնելով իմ բառերը: Երբ այդ խաղից հոգնած՝ բացեցի աչքերս, սենյակը համարյա լցված էր գիշերով, որ պիրկ սեւով թաթախել էր սենյակի ու դարակների անկյունները:

Այդ օրերին ազատ ժամանակ շատ ունեի եւ սկսեցի ավելի ու ավելի հաճախ կրկնել խաղը իմ գրքազրկված դարակների դատարկության հետ: Օրեցօր դրանք ծանրանում էին տառերից կազմած ֆանտազմներով: Հիմա ոչ փող ունեի, ոչ տառերի ետեւից գրախանութներ ու հնագրավաճառների կրպակներ գնալու ցանկություն: Ես բուռ-բուռ տառեր, բա-

ռեր, դարձվածքներ էի հանում ինձնից, վերցնում էի մտահղացումներս, մտովի տպում ու ձեւավորում, մանրամասն մտածված կազմեր հագցնում եւ կոկիկ կցում հղացումը հղացմանը, ֆանտազմը ֆանտազմին՝ լցնելով հնազանդ դատարկությունը, որ իր սեւ փայտե տախտակներին էր առնում ինչ տալիս էի: Եվ մի անգամ, երբ մի պատահական հյուր, որ եկել էր վերադարձնելու վերցրած գիրքը, փորձեց մոտենալ դարակին, կանգնեցրի նրան.

- Տեղ չկա:

Հյուրս նույնպիսի աղքատ էր, ինչպես ես. նա գիտեր, որ խենթության իրավունքը կիսաքաղց պոետների միակ իրավունքն է, եւ անխռով նայելով ինձ՝ գիրքը դրեց սեղանին ու հարցրեց՝ համածա՞յն եմ լսել իր պոեմը:

Նրա եւ պոեմի ետեւից փակելով դուռը՝ անմիջապես փորձեցի գիրքը աչքից հեռու մի տեղ պահել. ուռուցիկ կազմին դաջված գռեհիկ ոսկե տառերը խաթարում էին նոր-նոր կարգի ընկած մտահղացումների խաղը:

Ցուգահեռ շարունակում էի զբաղվել նաեւ ձեռագրերով: Դրանց նոր տրցակը, որ ուղարկվել էր հին հասցեներով, ի անկեղծ զարմանս ինձ, չվերադարձավ. գործերն ընդունվեցին ու տպագրվեցին: Պարզվեց՝ ինչ ինձ չէին կարող սովորեցնել թղթից ու ներկից կազմված գրքերը, հաղթահարվել էր երեք խորանարդ մետր օդի օգնությամբ: Հիմա գիտեի ինչ անել. իրար ետեւից հանում էի իմ երեւակայած գրքերը, հին գրադարակի սեւ տախտակների դատարկությունը լցրած ֆանտազմները, եւ դրանց անտեսանելի տառերը թաթախելով թանաքի մեջ՝ դարձնում ձեռագրեր, ձեռագրերն էլ՝ փող: Ու կամաց-կամաց, տարեցտարի, իմ անունն ուռչում էր, փողն ավելի ու ավելի էր շատանում, բայց ֆանտազմների իմ գրադարանն աստիճանաբար սպառվում էր. շատ արագ ու անխնա էի ծախսում իմ դարակների դատարկությունը, եւ դատարկությունը, ես կասեի, ավելի էր գրգռվում ու վերածվում սովորական օդի:

Հիմա արդեն իմ աղքատ սենյակն էլ վերածվել էր պատկառելի կահավորանքով բնակարանի: Իր դարն ապրած գրադարակի հարեւանությամբ, որի գործածված դատարկությունը նորից լցրել էի գրքերով, կանգնել էին ընդարձակ ապակեպատ պահարաններ. ահա դրանք: Իներցիան աշխատում էր իմ օգտին. անուսս նորանոր հոնորարներ էր բերում: Բայց ես գիտեի՝ վաճառված դատարկությունը վաղ թե ուշ վրեժ է լուծելու: Ըստ էության, գրողները պրոֆեսիոնալ բառավարժներ են, եւ մեկ տո-

ղով քայլող բառերը, եթե կենդանի արարածներ լինեին, հաստատ կվախենային ու կատեին գրչածայրի ճեղվածքը, ինչպես գազաններն իրենց վրա բարձրացրած մտրակն են ատում: Կամ ավելի ճշգրիտ: Լսե՞լ եք, այսպես կոչված, կարակուլագործության մասին: Այդ կարգի մատակարարներն իրենց եզրաբանությունն ունեն. խորամանկ հնարքներով հետեւելով չծնված գառան մորթու նախշերին ու գանգուրներին, սպասելով գանգուրների անհրաժեշտ համակցության՝ չծնվածին սպանում են մինչեւ ծնվելը. դա նրանց մոտ կոչվում է «ամրապնդել նախշը»: Այդպես էլ մենք ենք վարվում մտահղացումների հետ. արդյունահանողներ ու սպանիչներ:

Ես, իհարկե, այն ժամանակ էլ միամիտ մարդ չէի ու գիտեի, որ վերածվում եմ պրոֆեսիոնալ մտասպանի: Բայց ի՞նչ անեի: Ծուրջս ինձ պարզված ափեր էին: Ես դրանց մեջ բուռ-բուռ բառեր էի նետում: Բայց նրանք պահանջում էին նորից ու նորից: Թանաքից հարբած՝ ես պատրաստ էի,- ամեն գնով,- գրոհել նորանոր թեմաներ: Բայց չարչրկված երեւակայությունն այլեւս չէր տալիս. ոչ մի թեմա: Հենց այդ ժամանակ էլ որոշեցի արհեստականորեն արթնացնել՝ դիմելով հին ու փորձված միջոցին: Ես հրամայեցի ազատել իմ բնակարանի սենյակներից մեկը... բայց գնանք, ավելի լավ է ցույց տամ:

Նա վեր կացավ: Ես՝ հետեւից: Մենք անցանք սենյակների շարքով: Ծեմ, էլի շեմ, միջանցք. նա ինձ հասցրեց փակ դռան մոտ, որ ծածկված էր պատի գույնի վարագույրով: Ուժեղ չխկաց բանալին, հետո՝ անջատիչը: Ես ինձ գտա մի քառակուսի սենյակում. խորքում, շեմի դիմաց, բուխարի, բուխարու դիմաց կիսաշրջանով շարած յոթ ծանր, դրվագազարդ բազկաթոռ, մուգ մահուդով պաստառած պատերի երկայնքով՝ սեւ, կատարելապես դատարկ գրադարակներ: Բուխարու ճաղավանդակին բռնակով հենված թուջե ունելի: Ու վերջ: Ձայները կլանող, աննախշ գորգի վրայով մոտեցանք բազկաթոռների կիսաշրջանին: Տանտերը ձեռքով նշան արեց.

- Նստե՛ք: Ձեզ զարմացնո՞ւմ է, թե ինչու է յոթ հատ: Սկզբում ընդամենը մի բազկաթոռ էր: Ես գալիս էի այստեղ, որ զրուցեմ գրադարակների դատարկության հետ: Ես թեմա էի խնդրում այդ սեւ փայտե խոռոչներից: Ես ամեն երեկո համբերատար փակվում էի այստեղ լռության ու դատարկության հետ ու սպասում էի: Սեւ սնդուսը շողացնելով, մեռած եւ օտար՝ նրանք չէին ուզում պատասխանել: Եվ ես՝ ինձ հմտազերծած բառավարժս, վերադառնում էի թանաքամանիս մոտ: Հենց այդ ժամանակ մո-

տենում էր երկու-երեք գրական պայմանագրերի վերջնաժամկետը. գրելիք չկար:

Օ՛, ինչ ատելի էին թվում ինձ այդ բոլոր մարդիկ, որ տասնյակ հազարավոր աչքերով իմ ծեծված ու հալածված անունը շրջապատած՝ դանակներով կտրատում էին թարմ ամսագիրը: Հենց հիմա հիշեցի մի չնչին դեպք. փողոց, սառած մայթին մի փոքրիկ տղեկ, որ տառեր է ճչում կրկնակոշիկների մասին, եւ անմիջապես միտքը՝ բայց չէ՞ որ եւ՛ իմ, եւ՛ նրա տառերի ուղին նույնն է՝ «ներբանի տակ»:

Այո՛, ես եւ՛ ինձ, եւ՛ իմ գրականությունը ոտնատակ արված ու իմաստազրկված էի զգում, եւ եթե օգնության չհասներ հիվանդությունը, առողջ ելք դժվար թե գտնվեր: Անսպասելի ու ծանր՝ այն երկար ժամանակով ինձ կտրեց գրողությունից. իմ անգիտակցականը հասցրեց հանգստանալ, ժամանակ շահել ու իմաստներ կուտակել: Եվ հիշում եմ, երբ դեռ ֆիզիկապես թույլ էի ու կիսով կապված աշխարհին, տեւական ընդմիջումից հետո բացեցի այս սեւ սենյակի դուռը ու հասնելով այ այս բազկաթոռին, մի անգամ էլ հայեցի անգրքության դատարկությունը, որը, թող որ անհասկանալի ու կամացուկ, բայց համենայնդեպս,- համենայնդե՛պս,- խոսեց, համաձայնեց նորից խոսել ինձ հետ, ինչպես այն, թվում է՝ ընդմիշտ հեռացած օրերին: Հասկանո՞ւմ եք դա ինչ էր ինձ համար...

Խոսողի մատները դիպան ուսիս ու անմիջապես հետ քաշվեցին:

- Ասենք, քնարական զեղումների ժամանակ չունենք: Ծուտով մարդիկ են գալու: Եվ այսպես, հետ՝ փաստերին: Հիմա արդեն գիտեի, որ մտահղացումները սեր ու լռություն են պահանջում: Նախկինում ֆանտազմների վատնիչ՝ ես սկսեցի կուտակել դրանք ու թաքցնել հետաքրքրասեր աչքերից: Ես նրանց բոլորին կողպեցի այ այստեղ, եւ իմ անտեսանելի գրադարանը վերածնվեց. ֆանտազմը ֆանտազմի կողքին, օպուսն օպուսի, օրինակն օրինակի,- սկսեցին լցնել այս դարակները: Այստեղ նայեք, ո՛չ, ա՛ջ, միջին դարակին. ոչինչ չեք տեսնում, այնպես չէ՞, իսկ ես...

Ես ակամա հետ քաշվեցի. խոսողի ծակող բիբերում թրթռում էր կոշտ, կենտրոնացած ուրախությունը:

- Այո՛, եւ այդ ժամանակ հաստատ որոշեցի փակել թանաքամանի կափարիչը ու վերադառնալ հետ՝ մաքուր, չնյութականացած, ազատ մտահղացումներին: Երբեմն հին, արմատացած սովորությամբ ինձ ձգում էր թուղթը, որոշ բառերի այնուամենայնիվ հաջողվում էր ընկնել մատիտի տակ, բայց ես անմիջապես սպանում էի այդ այլանդակներին եւ անխնա հաշիվ տեսնում հին գրողական սովորությունների հետ: Լսե՞լ եք, այսպես

կոչված, Giardinetti di S. Francesco-ի՝ սուրբ Ֆրանցիսկոսի այգիների մասին: Իտալիայում ինձ մի անգամ չէ, որ հաջողվել է այցելել այդ այգիները. համարյա բոլոր ֆրանցիսկյան մենաստաններում՝ մեկ-երկու մարգով պստլիկ ծաղկանոցներ, մետրը՝ մետրին, բարձր ու խուլ պատերի ետեւում: Հիմա, խախտելով սուրբ Ֆրանցիսկոսի ավանդույթը, թույլ են տալիս արծաթե սոլդիներով տեսնել դրանք, թեկուզ եւ հաճախ՝ այգու դռնակով, դրսից: Առաջ դա էլ չէր թույլատրվում. Ֆրանցիսկոսի կտակի համաձայն, ծաղիկներն այդտեղ կարող էին աճել ոչ թե ուրիշների, այլ միայն իր համար, դրանք չէր կարելի քաղել ու տնկել ցանկապատից այն կողմ, կուսակրոնություն չընդունածներին արգելվում էր ոտք դնել եւ նույնիսկ հայացքով դիպչել ծաղիկներին շնորհված հողին: Ձերծ բոլոր հպումներից, պաշտպանված բիբերից ու մկրատներից՝ նրանց տրված էր ծաղկել ու բուրել զուտ իրենց համար:

Եվ ես որոշեցի,- թեկուզեւ դա ձեզ տարօրինակ թվա,- տնկել իմ՝ լռությամբ ու գաղտնիքով պաշտպանված մեկուսի այգին, բոլոր մտահղացումները, բոլոր նրբին ֆանտազմներն ու հրեշավոր հորինվածքները կկարողանային աչքից հեռու աճել ու ծաղկել՝ զուտ իրենց համար: Ես ատում եմ ծանր կախված եւ ճյուղերը չարչարող, չորացնող պտուղների կոպիտ կեղեւը, ես ուզում եմ, որ իմաստների ու ձեւերի հավերժ չմեռնող ու չծնվող ծաղկում լինի իմ փոքրիկ այգում: Մի՛ մտածեք, թե եսասեր մեկն եմ, որը չի կարողանում դուրս գալ իր «ես»-ից, որն ատում է մարդկանց եւ օտար, «ոչ իմ» մտքերը: Ո՛չ, մի իսկապես ատելի բան ունեմ աշխարհում՝ տառերը: Եվ բոլորը, ով կարող է եւ ուզում է, գաղտնիքի միջով անցնելով, ապրել ու աշխատել այստեղ, մաքուր մտահղացումների մարգերում, թող գան եւ եղբայր լինեն:

Նա մի պահ լռեց՝ սեւռուն նայելով բազկաթոռների կաղնեփայտե թիկնակներին, որոնք խոսողի շուրջը կիսաշրջան կազմած, կարծես ուշադիր լսում էին նրա խոսքը:

- Գրող եւ ընթերցող աշխարհից աստիճանաբար այստեղ՝ տառազերծություն սկսեցին հավաքվել ընտրյալները: Մտահղացումների այգին բոլորի համար չէ: Մենք քիչ ենք եւ ավելի քիչ ենք լինելու: Որովհետեւ ծանր է դատարկ դարակների բեռը: Բայց եւ այնպես...

Ես փորձեցի առարկել.

- Բայց չէ՞ որ դուք, ինչպես ասում եք, տառերը խլում եք ոչ միայն ձեզնից, այլեւ ուրիշներից: Ուզում եմ հիշեցնել պարզված ափերի մասին:

- Դե՛, դա... գիտե՞ք, Գյոթեն իր Էքերմանին բացատրում էր, որ Ծեքս-

պիրը ճյուղերը չափից դուրս տարածած ծառ է, որը երկու հարյուր տարի շարունակ խեղդում է անգլիական գրականությունը, իսկ իր՝ Գյոթեի մասին,- երեսուն տարի անց,- Բեռնեն գրում էր. «Քաղցկեղ, որ հրեշավոր տարածվել էր գերմանական գրականության մարմնով»: Եվ երկուսն էլ իրավացի էին. չէ՞ որ եթե մեր տառակերպումները խեղդում են իրար, եթե գրողները խանգարում են մեկմեկու, ապա ընթերցողներին թույլ չեն տալիս նույնիսկ մտորել: Ընթերցողը, ես կասեի, չի հասցնում մտահղացումներ ունենալ. դրա իրավունքը նրանից խլել են բառի պրոֆեսիոնալները, որոնք ավելի ուժեղ ու փորձառու են այդ գործում: Գրադարանները ճզմել են գրողի երեւակայությունը, գրողների մի փոքրիկ խմբի խզբզոցը պռնկեպռունկ լցրել է եւ՛ գրադարակները, եւ՛ գլուխները: Տառային ավելցուկները պետք է ոչնչացնել՝ եւ՛ գրադարակներին, եւ՛ գլուխներում: Պետք է օտարից գոնե մի քիչ տեղ ազատել սեփականի համար՝ եւ՛ պրոֆեսիոնալին, եւ՛ ինքնուսին: Ես ձեզ կբերեմ ութերորդ բազկաթոռը:

Եվ պատասխանի չսպասելով՝ նա դուրս եկավ սենյակից:

Մնալով մենակ՝ ես նորից հայեցի սեւ, դատարկության տակ դրված դարակներով, քայլերն ու բառերը խլացնող մեկուսարանը: Տարակուսանքի ու լարվածության զգացումը վայրկյան առ վայրկյան աճում էր. երեւի իրեն այդպես է զգում հերձվող կենդանին: «Ես նրա կամ նրանց ինչի՞ն եմ պետք, ի՞նչ է պետք նրանց մտահղացումներին ինձնից»: Ու հաստատ որոշեցի անհապաղ պարզել իրավիճակը: Բայց երբ դուռը բացվեց, շեմին արդեն երկուսն էին՝ տանտերն ու ակնոցավոր, կարճ խուզած մազերով կլոր գլխով մեկը. հույլ, ասես անոսկոր մարմնով ձեռնափայտին ընկած՝ նա կլոր ապակիների միջով շեմից զննում էր ինձ:

- Դյա՛ժ,- ներկայացրեց տանտերը:

Ես տվեցի անունս:

Ներս մտածի ետեւից շեմին հայտնվեց երրորդը. դա մի կարճահասակ չորչորուկ մարդուկ էր՝ աչքերի տակ խաղացող այտամկաններով, բերանի չոր ու նեղ ճեղքով: Տանտերը շրջվեց երրորդի կողմը.

- Հա՛, Թյո՛ւդ:

- Այո՛, ես եմ, Զե՛զ:

Տարակուսանք տեսնելով իմ աչքերում՝ նա, ում Զեզ էին կոչել, ուրախ ծիծաղեց.

- Մեր զրույցից հետո ձեզ համար դժվար չի լինի հասկանալ, որ գրողական անունները,- նա ընդգծեց վերջին բառը,- այստեղ անելիք չունեն: Դրա փոխարեն եղբայրության յուրաքանչյուր անդամի տրվել է մեկական,

ասպես կոչված, «անիմաստ վանկ»: Գիտե՞ք ինչ, մի խիստ ուսյալ պրոֆեսոր Էբբինգհաուզ կար, որն ուսումնասիրելով մտապահման օրենքները՝ դիմում էր «անիմաստ վանկերի» համակարգին, ինչպես դրանք կոչում էր. այսինքն պարզապես վերցնում էր ցանկացած ձայնավոր եւ աջից ու ձախից կցում մեկական բաղաձայն. այդ կերպով կառուցված վանկերի շարքից դուրս էին նետվում նրանք, որոնց մեջ իմաստի թեկուզ հետք կար, մնացածը մնեմոլոգ Էբբինգհաուզին պետք էր մտապահման գործընթացը ուսումնասիրելու համար, իսկ մեզ համար, ավելի շուտ... բայց դա մեկնաբանություն չի պահանջում: Իսկ ո՞ւր են մեր մտահղացողները: Ժամանակն է:

Ասես ի պատասխան՝ դուռը ծեծեցին: Մտան երկու հոգի՝ Հիցն ու Ծոգը: Մի քիչ հետո, ասթմատիկ շնչելով ու քրտինքը սրբելով, հայտնվեց եւս մեկը. մականունը Ֆէվ էր: Դատարկ էր մնում միայն մեկ բազկաթոռ: Վերջապես մտավ նաեւ վերջինը. մեղմ գծագրված կիսադեմով ու թեք ճակատով մարդ էր:

- Ուշանում եք, Ռա՛ր,- նրան դիմավորեց նախագահը: Մարդը բարձրացրեց աչքերը, որ ինքնամփոփ ու կարծես հեռվից էին նայում:

2

Մի որպեի չափ լռություն էր: Բոլորս նայում էինք՝ Ծոգն ինչպես է պպզած վառում վառարանը: Հետեւելով Ծոգի դանդաղ, ասես ինչ-որ ծես կատարող շարժումներին, հասցրի ուսումնասիրել նրան. զգալիորեն երիտասարդ էր բոլոր հավաքվածներից, դեմքին ընկած կրակի ցոլքերը կտրուկ ընդգծում էին բերանի քմահաճ գիծը եւ զգայուն, թրթռացող, փքված ռունգերը: Երբ փայտերը բուխարու մեջ կայծկլտացին, նախագահը վերցրեց թուջե ունելին ու խփեց ճաղավանդակի ծողիկներին:

- Ուշադրությո՛ւն: Տառասպանների ակումբի Յոթանասուներեքերորդ շաբաթօրյան բացված է:

Հետո նույն ծիսական կարգով անշտապ մոտեցավ դռանն ու երկու անգամ չխկացրեց փականը: Ջեզի պարզված ձեռքի մեջ շողաց մորուքավոր պողպատը:

- Ռա՛ր. բանալին ու բառը:

Դադար տալով՝ Ռարը խոսեց.

- Իմ մտահղացումը քառատակտ է: Վերնագիրը. «Actus morbi»:

Նախագահը լարվեց:

- Կներե՛ք: Պիե՞ս է:

- Այո՛:

Զեզի հոնքերը նյարդային ցնցվեցին:

- Այդպես էլ գիտեի: Դուք միշտ ասես դիտմամբ խախտում եք Ակումբի ավանդույթները: Բեմականացնել՝ նշանակում է գռեհկացնել: Եթե մտահղացումը պրոյեկտվում է թատրոնի վրա, ուրեմն աղոտ է, անբավարար... բեղմնավորված: Դուք անընդհատ փորձում եք անցնել բանալու անցքով: Եվ դուրս՝ բուխարու ածուխներից դեպի բեմեզրի լույսերը: Զգուշացե՛ք բեմեզրերից: Ասենք, մենք ձեր ունկնդիրն ենք:

Պատմությունը սկսած մարդու դեմքը շփոթմունք չէր արտահայտում: Ընդհատվելով՝ նա հանգիստ լսեց երկարաշունչ ճառն ու շարունակեց.

- Շեքսպիրի աշխարհահռչակ կերպարը, որը հարց է բարձրացնում՝ արդյո՞ք նույնքան հեշտ է նվագել հոգու վրա, որքան սրնգի, հետո դեն է նետում սրինգը, բայց հոգին թողնում է: Ի՛նձ: Ամեն դեպքում այստեղ ինչ-որ նմանություն կա. սրնգի առավելագույն հնչողության հասնելու համար պետք է փակել նրա բոլոր անցքերը, բոլոր պատուհանները՝ աշխարհին. հոգուց նրա խորքը հանելու համար պետք է նույնը՝ իրար ետեւից փակել բոլոր անցքերը, բոլոր ելքերը դեպի աշխարհ: Հենց այդ էլ փորձում է անել իմ պիեսը. ու հետեւելով Համլետի ընտրած եզրաբանությանը, պետք է ասել, որ իմ «Actus morbi»-ն ոչ թե գործողությունների, այլ «դիրքերի» թվի մեջ է:

Հիմա՝ իմ կերպարների մասին: Նույն «Համլետ»-ում ինձ վաղուց հետաքրքրող մի երկակի կերպար կա. հիշեցնում է օրգանական բջիջը, որը, ինչպես կենսաբաններն են անվանում, բաժանվել է երկու՝ ոչ ամբողջությամբ բաժանված բջիջների: Խոսքը Գիլդենշտեռնի ու Ռոզենկրանցի մասին է, որոնց անհնար է պատկերացնել անջատ-անջատ, իրարից բաժան եւ, ըստ էության, նույն դերն են՝ պատկերված երկու տետրերում... ընդամենը այդքանը: Ես կփորձեմ առաջ մղել երեք հարյուր տարի առաջ սկսված տրոհման գործընթացը: Նմանակելով գավառական ողբերգակին, որը ազդեցություն գործելու համար երկու կես է անում Համլետի սրինգը, ես վերցնում եմ, ասենք, Գիլդենշտեռնին եւ այդ կիսարարածին կրկին երկու կես անում՝ Գիլդեն եւ Շտեռն. ահա արդեն եւս երկու կերպար: Օֆելյա անունն ու դրա իմաստը ես վերցնում եմ մեկ ողբերգության առումով՝ Ֆելիա, մեկ կատակերգության՝ Ֆելյա: Հասկանո՞ւմ եք, ծամերի մեջ մերթ դառը սատապ, մերթ թղթե խոպոպաթղթեր հյուսելով՝ կարելի է նաեւ սա երկուս անել:

Եվ այսպես, խաղը սկսելու, պիեսի առաջին դիրքի համար արդեն չորս

խաղանիշ ունենք. դրանք կույր խաղացող շախմատիստի պես երեւակայական բեմով շարժելով՝ ես ստանում եմ հետեւյալը...

Ռարը մի պահ ընդհատեց խոսքը: Երկար ու ճերմակ, համարյա թափանցիկ մատներն օդի միջով ինչ-որ բան էին շոշափում, ասես ստուգելով նյութի կպչունությունը:

- Ինչպես ասում են՝ բեմը ներկայացնում է... Մի խոսքով...

Երիտասարդ դերասան Շտեռնը մեկուսացել է իր դերի հետ: Դերը գուշակվում է նաեւ առանց մենախոսությունների. բազկաթոռի թիկնակին՝ սեւ անձրեւաթիկնոց. սեղանին՝ գրքերի կույտերի եւ էլսինորի արքայազնի դիմանկարների արանքում՝ սեւ բերետ՝ կոտրված փետուրով: Նույն տեղում՝ պիջակ ու տաբատակալներ: Շտեռնը, չսափրված, դեմքին՝ անքնության հետքեր, սուսերի ծայրով շարժում է պատուհանի իջեցված վարագույրը:

Շտեռն: Սուկ:

Դռան թակոց: Դողացող վարագույրը սուսերով պահած՝ նա ձախ ձեռքով հանում է դռան հեղույսը: Շեմին Ֆելյան է: Մենք տեսնում ենք նրան. սիրունիկ դեմք՝ թռչկոտող փոսիկներով. մի արարած, որին պիեսներում միշտ սիրում են երկուսը, եւ որի հոգեբանությունից պահանջվում է մեկ բան. երկուսից ընտրել մեկին: Բայց Շտեռնը չի տեսնում ներս մտածին ու նորից իր գործին է:

Շտեռն: Սուկ:

Ֆելյան վախեցած բարձրացնում է փեշը: Երկխոսություն:

Շտեռն (Ֆելյայի ճիչին ուշադրություն չդարձնելով): Ճչալն անիմաստ է: Լռիր: Ու ձեռքերը կոտրատել էլ պետք չէ:

Տես. հիմա կկոտրեմ սիրտդ:

Հետ է քաշում վարագույրը: Լուսամուտագոգին Պոլոնիուսի փոխարեն՝ պրիմուս ու մի քանի դատարկ շիշ:

Թագավոր՝ սարքած փալասներից ու ծվեններից:

Տխմար, որ ամբողջ կյանքում անդադար ճամարտակել է:

Գնանք: Չէ՞ որ պետք է լուծել քո հարցը:

Դռան մեջ բախվում է Ֆելյային:

Ֆելյա: Ո՞ւր ես գնում: Առանց պիջակի՝ փողոց: Արթնացի՛ր:

Շտեռն: Դո՞ւ ես: Օ՛, Ֆելյա, թե իմանայիր...

Ֆելյա: Ես անգիր գիտեմ իմ դերը: Իսկ ահա դու ծիծաղելի շփոթաբան ես: Թո՛ղ քո յամբերը. չէ՞ որ բեմի վրա չենք:

Շտեռն: Վստա՞հ ես:

Ֆելյա: Միայն, խնդրում եմ, չսկսես ինձ հակառակը համոզել: Եթե այստեղ հանդիսատեսներ լինեին, ես այ այսպես չէի անի *(կանգնում է ոտնաձայրերին ու համբուրում նրան):* Եվ ի՞նչ, սա քեզ չարթնացրե՞ց:

Շտեռն: Սիրելի՛ս:

Ֆելյա: Վերջապե՛ս. առաջին բառը՝ ոչ դերից...

- Սույնով դադարում եմ պտտել սիրային շարմանկան. դուք պետք է իմանաք, որ հիմա Ֆելիան ավելի մոտ է Շտեռնին, քան Գիլդենին՝ նրա մրցակցին ու փոխարինողին, եւ հաղթանակ է ցանկանում նրան դերի համար պայքարում: Այսպես, թե այնպես, երկխոսությունից առաջ անցնելով՝ հավաստում եմ. զարգանալով՝ այն խաղանիշը մոտեցնում է խաղանիշին, Շտեռնին՝ Ֆելյային: Այստեղից՝ նշագրում. փակագիծ, համբույր, փակագիծը փակ, վերջակետ: Այս անգամ՝ նաեւ Շտեռնի համար, ոչ դերով, այլ կատարյալ իրականությամբ: Ուշադիր նայեք: Իսկ հիմա հայացքը դարձրեք մի քիչ ձախ:

Կիսաբաց դուռը բացվում է. շեմին՝ Գիլդենը:

Գիլդեն *(չափավոր չարությամբ ժպտալով):* Հանդիսատեսներն ավելորդ են: Հեռանում եմ:

Բայց սիրահարները, բնականաբար, կանգնեցնում են Գիլդենին: Շփոթված լռության րոպե:

Գիլդեն *(հավաքում է թափթփած գրքերը):* Տեսնում եմ՝ դերն այնքան էլ հեշտ չի տրվում, ինչպես... *(հայացք՝ Ֆելիային):* «Շեքսպիր»: «Շեքսպիրի մասին»: Հը՛մ, նորից Շեքսպիր: Ի դեպ, հենց նոր տրամվայում պարզունակ մեկը, նկատելով գրպանիցս ցցված դերը ու ցանկանալով հաճույք պատճառել ինձ, հարցրեց. «Ասում են ոչ մի Շեքսպիր էլ չի եղել, բայց, մտածեք հապա, քանի՛ պիես է մնացել նրանից հետո. իսկ այ եթե գոյություն ունենար Շեքսպիրը, պետք է որ այդ պիեսներն էլ...»: Եվ այսպես ապուշ-հետաքրքրված նայում է ինձ:

Ֆելյան քրքջում է: Շտեռնը լուրջ է մնում:

Շտեռն: Պարզունակը՝ պարզունակ, բայց... ի՞նչ պատասխանեցիր:

Գիլդեն: Ոչինչ: Տրամվայը կանգ առավ: Պետք է իջնեի:

Շտեռն: Գիտե՞ս ինչ, Գի՛լդեն, դեռ բոլորովին վերջերս ինձ այդ ամենը միայն ծիծաղելի կթվար: Բայց երբ արդեն երեք շաբաթ տանջվում եմ

անիրականը իրականացնելու վրա, ինչպես ասեմ, դերի մեջ մտնելու համար, որը, կասեք, չունի իր կյանքը, զգույշ եմ վերաբերվում այդ բոլոր «լինել»-ներին ու «չլինել»-ներին: Չէ՞ որ նրանց արանքում միայն մի «թե» է: Բոլորին տրված է ընտրել: Իսկ ոմանք արդեն նաեւ ընտրել են. մեկը՝ պայքար գոյատեւման համար, մյուսը՝ պայքար չգոյության համար. չէ՞ որ բեմեզրի գիծը մաքսային գծի պես է. անցնելու համար, որպեսզի այնտեղ, լույսերից այն կողմ լինելու իրավունք ստանաս, պետք է որոշակի մաքսատուրք վճարել:

Գիլդեն: Չեմ հասկանում:

Շտեռն: Ի դեպ, հասկանալն ամբողջը չէ: Պետք է նաեւ որոշում կայացնել:

Ֆելիա: Եվ դո՞ւ...

Շտեռն: Այո՛: Ես որոշել եմ:

Գիլդեն: Խե՜նթ: Թայմերին պատմեինք՝ ա՛յ թե կծիծաղեր: Չնայած մեր պատրոնն առայժմ առանձնակի ուրախություն չի դրսեւորում: Երեկ, երբ նորից բաց էիր թողել փորձը, մի ամբողջ փոթորիկ բարձրացրեց: Ես հետո մտա քեզ մոտ, որ զգուշացնեմ՝ եթե այսօր էլ «չլինես» դերափորձին, Թայմերը սպառնում է, որ...

Շտեռն: Գիտե՛մ: Թող որ այդպես: Ես ոչինչ, հասկանո՞ւմ ես, ոչինչ, ավելի ճիշտ՝ ոչ մեկը չունեմ ձեր այդ փորձին գալու: Մինչեւ դերը չգա ինձ մոտ, մինչեւ ես նրան չտեսնեմ այ այստեղ, ինչպես ձեզ եմ տեսնում, անելիք չունեմ ձեր այդ հավաքույթներին:

Ֆելիան նայում է աղերսանքով, բայց Շտեռնը, ասես ինքն իր մեջ փլված, չի տեսնում ու չի լսում:

Գիլդեն: Բայց չէ՞ որ պետք է ստուգվի դրսից. նախ՝ բեմադրիչի աչքերը, հետո՝ հանդիսատեսի...

Շտեռն: Անհեթեթությո՛ւն: Հանդիսատե՛ս... Ախր, եթե դրանց մուշտակները հանես կախիչներից ու նստեցնես աթոռներին, իսկ հանդիսատեսներին կախես հանդերձարանի կեռիկներից, արվեստը դրանից չի տուժի: Բեմադրիչ, բեմադրիչի ա՛չք,- կարծեմ այդպե՛ս ասացիր,- ես այն կհանեի. թատրոնից: Գրողի ծո՛ցը: Դերասանին պետք են իր կերպարի աչքերը: Միա՛յն: Այ եթե հիմա Համլետն ինքը գար այստեղ եւ բիբերով բիբերս փնտրելով՝ ասեր ինձ... Գիտե՞ք ինչ, բարեկամնե՛ր, չբարկանաք, բայց ես պետք է աշխատեմ: վաղ թե ուշ կանչս կհասնի նրան, եւ այդ ժամանակ... Գնացե՛ք:

Գիլդեն: Բայց, Ֆե՛լյա, նա մեզ հետ իսկապես արքայազնի տոնով խո-

սեց: Մնում է միայն հեռանալ: Մանավանդ, որ քառորդ ժամից կսկսվի:

Ֆելիա: Շտե՛ռն, սիրելի՛ս, արի մեզ հետ:

Շտեռն: Հանգիստ թողեք ինձ: Խնդրում եմ: Եվ ինձ համար հիմա... կսկսվի:

Շտեռնը մնում է մենակ: Որոշ ժամանակ անշարժ նստած է, ինչպես ես հիմա: Հետո (Ռարը կտրուկ շարժումով ձեռքը պարզեց գրադարակների ստվերված դատարկությանը. լսողների աչքերը նույն կողմը դարձան)... հետո... վերցնում է մի գիրք. առաջին պատահածը: Կոնսպեկտում եմ մենախոսությունը:

Շտեռն: Եվ այսպես, փորձենք: Գործողություն երկրորդ, տեսարան երկրորդ: «Նորից խոսեմ նրա հետ *(Ինձ)*»: «Ի՞նչ եք կարծում, իշխա՛ն»:- «Բառե՛ր, բառե՛ր, բառե՛ր»: Օ՛, եթե տրված լիներ իմանալ, թե ինչ բառեր կան այդ գրքում: Եթե միայն. չէ՞ որ այդտեղ է իմաստների հանգույցը: «Բայց ինչի՞ մասին են խոսում նրանք»: - «Ո՞ւմ հետ»:

Այդ ժամանակ,- նկատո՞ւմ եք նրան,- այնտեղ, շեմին, իրիկնացող սենյակի աղջամուղջում անձայն հայտնվում է դերը. ասես մշուշի միջով, ինչպես էժանագին հայելու արտացոլումը, իրենով կրկնում է դերասանին: Թիկունքով դռանը նստած Շտեռնը չի նկատում Դերին, մինչեւ նա, հետեւից մոտենալով, ձեռքով չի դիպչում նրա ուսին:

Դեր: Լսե՛ք, դուք ուզում էիք իմանալ բառերն այն գրքի, որ արդեն երեք հարյուր քսաներորդ տարին թերթում եմ երկրորդ գործողության երկրորդ տեսարանում: Դե ինչ, այդ բառերը կարելի է փոխ տալ ձեզ, բնականաբար, ոչ ձրի:

Սեւ ուրուն արդեն հասցրել է անձայն տեղավորվել Շտեռնի դիմացի բազկաթոռում. Դերասանն ու Դերը մի րոպե սեւեռուն նայում են իրար:

Շտեռն: Ո՛չ: Այն չէ: Ես իմ Համլետին այլ կերպ եմ պատկերացնում: Կներեք՝ գունատ ու թոշնած: Ես այսպես չեմ ուզում:

Դեր *(ֆլեգմատիկ):* Բայց եւ այնպես, կխաղաք հենց այսպես:

Շտեռն *(տառապագին գնահատելով իր կրկնակին):* Բայց ես չեմ ուզում, հասկանո՞ւմ եք, չեմ ուզում ձեզ նման լինել:

Դեր: Գուցե ես էլ չեմ ուզում լինել ձեզ նման: Եվ վերջապես, ես ընդամենը քաղաքավարի եմ. կանչում են՝ գալիս եմ: Գալով՝ հարցնում եմ. ինչի՞ համար...

Ռարի մատները տնտղում էին օդը, ասես այնտեղ պտտվում էր անտեսանելի վերջնաբառը: Թվաց արդեն բռնել են, բայց մատները հանկարծ բացվեցին: Ռարն ուշադիր նայեց դուրս թռած բառի ետեւից:

- Այ հենց այստեղ էլ, մտահղացողնե՛ր, կփորձեմ փակել սրնգի առաջին կափույրը: Շտեռնի ինչի՞ն է պետք այն սեղմել: Նա՝ դերասանը, այսինքն օտար բառերը պրոֆեսիոնալ արտաբերող արարածը, երեւի չի էլ կարող բառեր գտնել, որպեսզի իր արտացոլմանը բացատրի իրեն՝ արտացոլվածին:

Իմ կարծիքով այստեղ ամեն ինչ բավական պարզ է. յուրաքանչյուր եռաչափ արարած կրկնակի կրկնապատկում է իրեն՝ արտացոլվելով դեպի դուրս ու դեպի ներս: Երկու արտացոլումներն էլ ճիշտ չեն. սառն ու տափակ նմանություն, որ վերադարձնում է սովորական ապակե հայելին: Արտացոլումներն անստույգ են թեկուզ այն պատճառով, որ առավել քան անեռաչափ են, տարածված: Դեմքի մյուս արտացոլումը, որ դեպի ներս է ու հոսում է ինքնազգացողությունների բարդ համալիրից կազմված ուղեղի կենտրոնածիգ նյարդերով, նույնպես անստույգ է, որովհետեւ ավելի քան եռաչափ է:

Եվ ահա խեղճ Շտեռնն ուզում էր առարկայացնել, հոգու խորքերից բարձրացնել, խաբել խաղով, դերի կանչել իր ներքին նմանակին, բայց կանչին ուրիշ արտացոլում եկավ՝ ապակենման, մեռյալ, դրսից արտացոլված մակերեւույթների տակ պահված: Չի ուզում նրան, անընդհատ հրաժարվում է կպչուն ուրուից եւ դրանով իսկ նրա համար իրենից դուրս գոյության օբյեկտիվություն ստեղծում: Ինչի մասին խոսում եմ, կա նաեւ պիեսներից դուրս, եղել է եւ կլինի: Վերցնենք թեկուզ Էռնեստո Ռոսսիին. նա իր «Հուշերում» պատմում է Էլսինորի ավերակներն այցելելու մասին: Մոտավորապես այսպես: Դղյակից որոշ հեռավորության վրա Ռոսսին կանգնեցնում է կառքն ու ոտքով՝ դեպի ավերակները: Խտացող աղջամուղջում դանդաղաքայլ մոտենում է դղյակին: Դանմարկի արքայազնի մասին անմահ պատմությունը համակում է նրան: Ընդառաջ գնալով կամրջի սեւ ուրվապատկերին,- սկզբում անձայն, հետո՝ ավելի ու ավելի բարձր,- նա հիշում է «Համլետի» առաջին գործողությունն ու սկսում է արտասանել դիմումը հոր ստվերին: Եվ երբ աստիճանաբար ներքաշվում է սովոր դերի մեջ, արտասանում է մինչեւ Ստվերի վերջնաբառն ու նույնքան սովոր շարժումով բարձրացնում գլուխը, տեսնում է նրան. Ստվերը, դարպասից դուրս գալով, անձայն քայլում էր դեպի խանդակի վրայով գցված կամուրջը. վերջնաբառը նրանն էր: Հետո Ռոսսին հայտնում է միայն, որ մեջքով դառնալով խաղընկերոջը՝ արագ վերադարձել է, հասել կառքին ու կառապանին կարգադրել ողջ ուժով քշել ձիերը: Եվ այսպես, դերասանը տվյալ դեպքում փախչում էր իր մոտ եկած դերից: Բայց չէ՞ որ

կարող էր նաեւ մնալ այնտեղ, կամրջի մոտ. դրա համար տաղանդ պետք չէր, ընդամենը՝ կամք: Բայց եկեք գործի դնենք պիեսը: Մեր կերպարը վաղուց սպասում է, ես չափից երկար ձգեցի նրա դադարը: Եվ այսպես...

Շտեռն: Ուրեմն ինձ այսպիսի՞ն կտեսնեն: Ինչպես դո՞ւ ես:

Դեր: Այո՛:

Շտեռն *(մտախոհ):* Այդպե՛ս: Էլի մի հարց. որտեղի՞ց ես դու: Ու նաեւ՝ որտեղից էլ լինես, ստիպված ես հեռանալ: Ես հրաժարվում եմ դերից:

Դեր *(վեր կենալով):* Ինչպես կուզեք:

Շտեռն *(հետեւելով նրան):* Սպասի՛ր: Վախենում եմ, որ քեզ կարող են տեսնել: Չէի ուզի որեւէ մեկը, բացի ինձնից... հասկանում ես:

Դեր: Մի շտապեք ինձ առնել տարածության մեջ: Բանն այն է, որ ձեզ տեսնելը... այսպես ասենք, պարտադիր չէ: Մենք գոյություն ունենք, բայց՝ պայմանական: Ով ուզի կտեսնի, իսկ եթե ընդհանրապես չցանկանա, դա բռնություն է ու վատ ճաշակ. Հարկադրաբար իրական լինելը: Եվ եթե ձեզ մոտ, ձեր աշխարհում, դա դեռ չի վերացել, ապա...

Շտեռն: Սպասի՛ր, սպասի՛ր: Բայց չէ՞ որ ես ուզում էի ուրիշին տեսնել...

Դեր: Չգիտեմ: Հնարավոր է, որ խառնել են ուղեգրերը: Աշխարհից աշխարհ անցնելիս դա պատահում է: Հիմա մենք Համլետների հսկա պահանջարկ ունենք: Համլետբուրգը համարյա դատարկվել է:

Շտեռն: Չեմ հասկանում:

Դեր: Շատ պարզ է: Դուք արխիվներից եք պահանջել, իսկ ձեզ ուղարկել են կիսահումքից:

Շտեռն: Բայց ինչպե՞ս... լուծենք հանգույցը:

Դեր: Նույնպես պարզ է: Ես ձեզ կուղեկցեմ մինչեւ Համլետբուրգ, իսկ այնտեղ փնտրեք նրան, ով ձեզ պետք է:

Շտեռն *(շփոթված):* Բայց որտե՞ղ է դա: Եվ ինչպե՞ս հասնել:

Դեր: Որտե՛ղ: Դերերի երկրում: Այդպիսի երկիր էլ կա: Իսկ թե ինչպես՝ հնարավոր չէ ո՛չ պատմել, ո՛չ ցույց տալ: Կարծում եմ հանդիսատեսները կներեն, եթե մենք... փակ վարագույրի ետեւում...

Ռարը անխռով հայացքը պտտեց բոլորիս վրայով.

- Դերն, ըստ էության, իրավացի է: Ձեր թույլտվությամբ՝ վարագույր: Իսկ հիմա, երկրորդ դիրքը. փորձեք տեսնել աչքերից հեռացող հեռանկարը՝ բոլոր կողմերից սահմանափակված խիստ մոտեցած պատերով ու գոթական կամարների դեպի վեր սրված կոշտ հիմնակմախքներով: Այդ ֆանտաստիկ թունելի մակերեւույթը վերից վար պատված է խայտաբղետ

թղթերի գույնզգույն քառակուսիներով, որոնց վրա տարբեր տառատեսակներով ու լեզուներով գրված է նույն բառը. Համլետ, Համլետ, Համլետ: Ներսում, խորքը փախչող բազմալեզու ազդագրերի տառերի տակ՝ բազկաթոռների՝ հեռվում կորչող երկու շարք: Բազկաթոռներում, սեւ թիկնոցներում փաթաթված, երկար շարանով՝ Համլետներ: Յուրաքանչյուրի ձեռքին՝ գիրք: Բոլորը կռացել են բացված էջերի վրա, գունատ դեմքերը կենտրոնացած են, աչքերը տողերից չեն կտրվում: Մեկ այստեղ, մեկ այնտեղ շրշում է թերթվող էջն ու կամացուկ, բայց չդադարող լսվում է.

- Բառեր, բառեր, բառեր:

- Բառեր - բառեր:

- Բառեր:

Կրկին հրավիրում եմ ձեզ, մտահղացողնե՛ր, ուշադիր զննել ուրուների շարքը: Տխրաված արքայազնների սեւ բերետների տակ դուք կտեսնեք նրանց, ով ձեզ մտցրել է Համլետի հիմնախնդրի մեջ, այդ երկար ու նեղ, ողջ աշխարհով ձգվող խուլ միջանցքը: Ես, օրինակ, հիմա պարզ կարող եմ տեսնել,- ձախ երրորդ բազկաթոռը,- Սալվինիի Համլետի ընդգծված ուրվապատկերը, որ խոժոռել է հոնքերը միայն իրեն տեսանելի տեքստի վրա: Դեպի աջ ու հետո՝ ծանր հագուստի ծալքերի տակ՝ Սառա Բեռնարին հիշեցնող փխրուն ուրվագիծ. արձակած բրոնզե ճարմանդներով ծանր ֆոլիանտը ձգում է նուրբ ու թույլ մատները, բայց աչքերը կառչել են գրքում թաքնված նշաններից ու իմաստներից: Ավելի մոտ, ազդագրի կարմիր բծի տակ՝ Ոոսսիի փքված, անհանգիստ ծալքերով դեմքն է. թարշամած այտը հենվել է ափին, արմունկը՝ բազկաթոռի դրվագազարդ արմնկակալին. ծնկածալերի մկանները լարված են, իսկ քունքին տրոփում է զարկերակը: Եվ հետո, հեռանկարի խորքում, տեսնում եմ կանացի Քեմբելի նուրբ գծագրված դեմքը, Քինի սուր այտոսկրերն ու ամուր սեղմված բերանը, եւ ապա, տեսիլքի ծայրին, հետ ընկած, քամահրական ժպիտը շրթունքներին, կիսափակ աչքերով, մերթ հայտնվող, մերթ ցոլքերի ու ստվերների դողի մեջ անհետացող՝ Ռիչարդ Բերբեջի հեգնոտ դիմակը: Ինձ համար դժվար է այստեղից տեսնել,- հեռու է, - բայց կարծես փակեց ծայրեծայր կարդացած գիրքը. թերթերը գոցած՝ հիմա նրա ծնկներին է: Հայացքս վերադառնում է. որոշ դեմքեր ստվերի մեջ են, մյուսները շրջվել են ինձնից: Այո՛, վերադառնում եմ ժամանակին ու գործողությանը:

Խորքի դուռը, փեղկը վարագույրի պես բացելով, կտրուկ լույս ու երկու կերպարանք է նետում դուրս. դիմացից, չիչերոնեի տեսքով, հանդի-

սավոր քայլում է Դերը, ետեւից՝ շուրջը նայող Շտեռնը: Ոտքերը սեւ տրիկոյի մեջ են, կոշիկների արձակված կապերը տարուբերվում են, ուսերին հապճեպ հագած կարճափեշ պիջակ է: Դանդաղ,- քայլ առ քայլ,- նրանք անցնում են ընթերցանության մեջ խորասուզված Համլետների շարքերի միջով:

Դեր: Ձեր բախտը բերեց: Հենց ձեզ անհրաժեշտ տեսարանին ենք հասել: Ընտրե՛ք. Ծեքսպիրից մինչեւ մեր օրերը:

Շտեռն *(ցույց է տալիս մի քանի դատարկ բազկաթոռ):* Իսկ սրանք ինչո՞ւ զբաղված չեն:

Դեր: Գիտե՞ք, դա գալիք Համլետների համար է: Այ եթե ինձ խաղայիք, ձեզ համար էլ տեղ կճարվեր, եթե ոչ այստեղ, ապա, ասենք, կողքից, աթոռակի վրա, ծայրին: Թե չէ, ի՛նչ վերջաբան փչացրինք՝ աշխարհից աշխարհ, դե ուրեմն ոտքի վրա մնացեք: Գիտե՞ք ինչ, եկեք նվաճումների երկրից տեղափոխվենք մտահղացումների երկիր. այնտեղ ինչքան ուզես տեղ կա:

Շտեռն: Ո՛չ: Պետք է այստեղ փնտրել: Սա ի՞նչ է:

Կամարների աղեղների վրայով, բարձունքում, ծափահարության ձայներ են լսվում ու լռում:

Դեր: Ծափահարությունների երամն է: Երբեմն թռչում-հասնում են այստեղ, չվող թռչունների պես, աշխարհից աշխարհ: Բայց ավելի չեմ կարող մնալ: Մտահղացարանում կարող են նկատել բացակայությունս: Միասին գնանք, հա՞:

Շտեռնը բացասական օրորում է գլուխը. ուղեկիցը հեռանում է. մենակ՝ բառերի միջեւ, բառերի մեջ: Ագահաբար, ինչպես մուրացկանը ցուցափեղկի ապակիների միջով, նայում է դերերի շարքերին: Քայլ, մյուսը: Տատանվում է: Աչքերը, աստիճանաբար թափանցելով մթության միջով, սկսում են տարբերել խորքում քարացած Ռիչարդ Բերբեջի հոյակապ կերպարանքը:

Շտեռն: Սա՛:

Բայց այդտեղ Համլետներից մեկը, որ գիրքը մի կողմ դրած՝ վաղուց ուշադիր հետեւում էր եկվորին, բազկաթոռից վեր կենալով՝ հանկարծ փակում է նրա ճանապարհը: Շտեռնը շփոթված հետ է քաշվում, բայց Դերն ինքը մոլոր ու համարյա վախեցած է. կիսախավարից լույսի մեջ մտնելով՝ նա ի ցույց է դրել իր վատ կարած, ուրիշի հագից հանած թիկնոցի բոլոր անցքերն ու կարկատանները. Դերի վատ սափրած դեմքին շողոքորթ ժպիտ է:

Դեր: Դուք այնտղի՞ց եք: (Շտեռնը գլխով է անում): Այդպես էլ գիտեի: Կարելի՞ է հետաքրքրվել՝ ինչո՞ւ ինձ այլեւս չեն խաղում: Չգիտե՞ք: Իհարկե, բոլորին հայտնի է, որ ողբերգակ Զամտուտըրսկին անուղղելի հարբեցող ու սրիկա է: Բայց այդպես չի կարելի, չէ՞: Նախեւառաջ՝ նա ինձ չի սերտել: Պատկերացնում եք ինչ հաճելի է չսերտված լինել. Ոչ այն է կաս, ոչ այն է չկաս: Եվ այդ լինելչլինելության մեջ, երրորդ արարում, գիտե՞ք, այնպես խճճվեցինք, որ եթե հուշարարը չլիներ... եւ ահա դրանից հետո՝ ոչ մի անգամ դեպի բեմեզր: Ոչ մի կրկնականչ: Ասացեք խնդրեմ, ի՞նչ է պատահել Զամուտըտրսկիին, խումհարի մե՞ջ է, զբաղմո՞ւնքն է փոխել: Եթե վերադառնաք, խնդրում եմ, ի ցույց դրեք նրան: Չի կարելի, չէ՞, այդպես. ինձ ծնել ես, ուրեմն խաղա ինձ: Թե չէ... (Շտեռնը, դեն հրելով նմանակմանը, փորձում է առաջ անցնել. բայց նա չի հանդարտվում): Իմ կողմից, եթե կարող եմ որեւէ բանով օգտակար լինել...

Շտեռն: Երրորդ գործողության գիրքն եմ փնտրում: Նրա իմաստի ետեւից եմ եկել:

Դեր: Այդպես էլ կասեիք: Միայն թե շատ չտարվեք: Զամտուտըրսկին էլ ձեզ նման այդ գրքի վրա էր կառուցում ամբողջ խաղը. Ինձ բանի տեղ չի դնում, քայլում է բեմի վրա ու՝ նորից գրքի մեջ: «Եթե, ասում է, Համլետին երրորդ գործողության մեջ թույլատրվում է նայել գիրքը, ապա ինչու չի կարելի երկրորդում կամ, ասենք, հինգերորդում: հենց դրա համար էլ, ասում է, վրեժ չի լուծում, որովհետեւ ժամանակ չունի. գրքամոլ, խորագիտակ, զբաղված մարդ, ինտելիգենտ՝ կարդո՛ւմ է, կարդո՛ւմ, կարդո՛ւմ, կտրվել չի կարող, սպանելու ժամանակ էլ չունի»: Այնպես որ, եթե հետաքրքրվում եք, խնդրեմ՝ Պոլեւոյի թարգմանությունը, Պավլենկովի հրատարակությամբ:

Շտեռնը, մի կողմ հրելով կպչուն զամտուտըրյան դերը, ուղղվում է հեռանկարի խորքը, դեպի Բերբեջի հպարտ ուրվապատկերը: Կանգնում է՝ չհամարձակվելով խոսել: Բերբեջը սկզբում չի նկատում, հետո կոպերը դանդաղ բարձրանում են:

Բերբեջ: Ի՞նչ է անում այստեղ ստվեր նետող այս արարածը:

Շտեռն: Որ նրան առնես քո ստվերի մեջ:

Բերբեջ: Ի՞նչ ես ուզում ասել, օտարակա՛ն:

Շտեռն: Ուզում եմ ասել՝ մարդ եմ, որը նախանձում է իր ստվերին. նա գիտի եւ՛ նսեմանալ, եւ՛ փառաբանվել,- իսկ ես միշտ հավասար եմ ինձ, նույնը՝ նույն դյուրմերով, օրերով, մտքերով: Ինձ վաղուց արդեն պետք չէ արեւի լույսը, ես հեռացել եմ դեպի բեմեզրի լույսերը, ու ողջ կյանքում

փնտրում եմ Դերերի երկիրը, բայց այն չի ուզում ինձ ընդունել, չէ՞ որ ընդամենը մտահղացող եմ ու չեմ կարողանում կյանքի կոչել քո գրքի ճարմանդերի տակ պահված տառերը, օ՛ մեծն կերպար, դրանք հավետ չընթերցված կմնան ինձ համար:

Բերբեջ: Ի՞նչ իմանաս: Ես երեսուն տարի է՝ ապրում եմ այստեղ, մարած բեմեզրերից հեռու: Ժամանակը բավարար է բոլոր իմաստներն իմաստավորելու համար: Եվ գիտե՞ս, ավելի լավ է անխոս դերակատար լինել այնտեղ՝ երկրի վրա, քան գլխավոր այստեղ՝ խաղացված խաղերի աշխարհում: Ավելի լավ է լինել բութ ու ժանգոտած դաշույն, քան թանկարժեք, բայց դատարկ պատյան, եւ ընդհանրապես՝ ավելի լավ է թեկուզ ինչ-որ կերպ լինել, քան հրաշալի՝ չլինել: Ես հիմա չէի փորձի մտորել այդ երկընտրանքի մասին: Եվ եթե դու իրոք ուզում ես...

Շտեռն: Այո՛, ուզում եմ:

Բերբեջ: Այդ դեպքում տեղփոխ լինենք: Իսկ ինչո՞ւ Դերը չխաղա դերը խաղացող դերասանին:

(Փոխանակում են թիկնոցները: Ընթերցանության մեջ թաղված Համլետները չեն նկատում, թե ինչպես է Բերբեջը վայրկենապես ընդունում Շտեռնի քայլվածքն ու շարժումները ու դեմքը թաքցնելով իջեցրած բերետի տակ՝ ուղղվում է դեպի ելքը):

Շտեռն: Կսպասեմ ձեզ *(Շրջվում է Բերբեջի դատարկ բազկաթոռի կողմը, որի վրա առկայծում են գրքի մետաղյա ճարմանդները):* Գիրքը մոռացավ: Ուշ է, գնաց: *(Նստելով բազկաթոռի եզրին՝ հետաքրքրությամբ զննում է գրքի փակ ճարմանդները: Բոլոր կողմերից կրկին էջերի շրշյուն ու կամացուկ «Բառեր-բառեր-բառեր»):* Կսպասեմ:

Հիմա երրորդ դիրքը. հետնաբեմ: Մուտքի մոտ, ցածրիկ աթոռակին նստած է Ֆելյան: Ծնկներին իր տետրն է: Ափերով ականջները փակած ու համաչափ ճոճվելով՝ սերտում է դերը:

Ֆելյա:Կար էի անում իմ սենյակում, երբ հանկարծ

Ներս վազեց...

Ներս է վազում Գիլդենը:

Գիլդեն: Շտեռնը չկա՞:

Ֆելյա: Ոչ:

Գիլդեն: Զգուշացրե՞լ ես նրան: Եթե այսօր էլ բաց թողնի փորձը, դերը կանցնի ինձ:

Բերբեջ *(որը հայտնվել է շեմին, խոսողների թիկունքում, ինքն իրեն):* Դերն անցել է, ճիշտ է, բայց ոչ նրանից եւ ոչ քեզ:

Գիլդենը դուրս է գալիս կողային դռնից: Ֆելյան նորից խոնարհվում է տետրի վրա:

Կար էի անում իմ սենյակում, երբ հանկարծ
Ներս վազեց Համլետը, թիկնոցը պատռված է,
Գլխարկ չկա գլխին, կեղտոտ գուլպաներն
Արձակված իջել են կրունկներին,
Գունատ է, ինչպես պատը, ծնկները ճկվում են,
Աչքերը փայլում են մի տարօրինակ լույսով,
Ասես եկել է մի ուրիշ աշխարհից,
Որ մեզ պատմի նրա սարսափների մասին:
Այդպիսին...

Բերբեջ *(ավարտում է):* «Այդպիսին հայտնվեց նա»: Ադպես չէ՞: Ծնկները ճկվում են... հարկավ՝ գալ այդքան հեռվից: Բայց պատմելը շատ երկար կտեւեր:

Ֆելիա *(ապշած նայում է եկվորին):* Ինչ լավ ես մտել դերի մեջ, սիրելի՛ս:

Բերբեջ: Ձեր սիրելին ուրիշ դերի մեջ է մտել:

Ֆելիա: Եվ այն քեզնից ուզում էին խլել. ես երեկ նամակ ուղարկեցի: Ստացե՛լ են:

Բերբեջ: Վախենամ, որ նամակները չեն հասնում անտեղ: Ու նաեւ՝ ինչպե՞ս խլել դերը խլված դերասանից:

Ֆելիա: Տարօրինակ ես խոսում:

- «Տարօրինակ, հանց
Օտար ճամփորդին պահես տանդ մեջ»:

Ներս մտած Թայմերը, Գիլդենն ու մի քանի դերասաններ ընդհատում են երկխոսությունը:

- Բեմադրիչ Թայմերի արտաքինը չհորինենք, թող նման լինի թեկուզ ինձ. ցանկացողներին խնդրվում է նայել,- լսողներին նայելով՝ Ժպտաց Ռարը:

Բացի ինձնից, կարծես ոչ ոք չվերադարձրեց նրա ժպիտը. մտահղացողները, լռակյաց շրջանակը սեղմելով, ոչնչով ու ոչ մի կերպ չարտահայ-

տեցին իրենց վերաբերմունքը պատմության հանդեպ:

- Թայմերին տեսնում եմ որպես փորձարար, համառ հաշվարկու, որը հետեւում է տեղադրման մեթոդներին. Բեմադրական սխեմաներում տեղադրված մարդիկ նրան պետք են, ինչպես մաթեմատիկոսին՝ թվերը. երբ գալիս է այս կամ այն թվի ժամանակը, գրանցում է, երբ թվի հերթն անցնում է, ջնջում է իր գործն արած նշանը: Հիմա տեսնելով նրան, ում Շտեռնի տեղն է ընդունում, Թայմերը զարմացած եւ նույնիսկ զայրացած չէ:

Թայմեր: Ըհը՛: Եկանք: Իսկ դերը գնացել է: Ուշ է. Համլետ խաղում է Գիլդենը:

Բերբեջ: Սխալվում եք. դերասանն է գնացել, ոչ թե դերը: Պատրաստ եմ ծառայել:

Թայմեր: Չեմ ճանաչում ձեզ, Շտե՛ռն: Կարծես թե միշտ խուսափել եք խաղալուց, այդ թվում՝ բառերով: Դե ինչ: Երկու դերասան՝ նույն դերի՞ն: Ուշադրություն. վերցնում եմ դերն ու կիսում: Դա դժվար չէ. ընդամենը պետք է գուշակել խզման գիծը: Չէ՞ որ Համլետն, ըստ էության, այո-ի ու ոչ-ի գոտեմարտ է. հենց դրանք էլ կլինեն մեր ցենտրոզոմները, որոնք բջիջը բաժանում են երկու նոր բջիջների: Եվ այսպես, փորձե՛նք. երկու թիկնոց տվեք՝ սեւ ու սպիտակ *(Արագ նշումներ է անում դերերով տետրերին, մեկը, թիկնոցի հետ, տալիս է Բերբեջին, մյուսը, սեւի հետ՝ Գիլդենին):* Գործողություն երրորդ, տեսարան առաջին: Պատրաստվե՛ք: Մե՛կ, երկո՛ւ, երե՛ք, վարագույրը գնա՛ց:

Համլետ I (սպիտակ թիկնոց): Լինե՞լ:

Համլետ II (սեւ թիկնոց): Թե՞ չլինել: Այս է խնդիրը:

Համլետ I: Ո՞րն է ճիշտ:

Համլետ II: Ո՞րն է ավելի ազնիվ:

Համլետ I: Տանել չար բախտի

Սլաքնե՞րն ահեղ: Օ՛, ոչ:

Համլետ II: Թե ոտքի ելնել փորձությունների

Ահեղ ծովի դեմ:

Համլետ I: Ու կյանքն ավարտել:

Համլետ II: Ոչ, քուն մտնել զուտ:

Համլետ I: Ոչի՞նչ ավելի:

Համլետ II: Այո՛, եւ գիտնալ, թե քունն այդ իսպառ

Վերջ կտա բոլոր վիշտ ու ցավերին...

Համլետ I: Բայց չէ՞ ողջերի վիճակն է տխուր...

Համլետ II: Վախճանն այդպիսի արժանի է շոգ ցանկություններին:

Համլետ I: Մեռնե՞լ:
Համլետ II: Քուն մտնել:
Համլետ I: Իսկ եթե մահվան քնի ժամանակ
Կրկին տեսիլքներ գան, երբ թոթափած
Լինենք երկրային ունայնությունը:
Համլետ II: Այո՛, գոցում է դա հեռվի ճամփան,
Ու տառապանքը հավերժ է դառնում:
Ո՞վ կդիմանա դարի ծաղրանքին ու խարազանին,
Հալածանքներին բռնակալի եւ
Անզորությանը օրենքների խեղճ,
Հպարտի անկման, սիրուն մոռացված...
Համլետ I: Արհամարհանքին մեծամիտների...
Համլետ II: Այո՛, ու եթե հանգիստ պարգեւեր
Մի հարվածը մեզ:
Բայց հետմահուի վա՛խը մշտական -
Անհայտի երկիր, որտեղից ոչ մի ճամփորդ
Երբեւէ չի վերդարձել...
Համլետ I: Ճիշտ չէ, դարձել է...

Բոլորը զարմացած նայում են Բերբեջին, որը մենախոսությունն ընդհատելով՝ արդեն սկսում էր տրոհվել երկխոսության մեջ:

Թայմեր: Սա դերից չէ:

Բերբեջ: Այո՛, սա Դերերի թագավորությունից է: *(Նա ընդունել է նախկին կեցվածքը՝ պատանի պես ճերմակ թիկնոցից վեր՝ հետ գցած քամահրոտ կավճաճերմակ դիմակ. աչքերը փակ են, շրթունքներին՝ խեղկատակի ժպիտ):* Երեք հարյուր տարի առաջ էր: Վիլլին Ստվեր էր խաղում, ես՝ իշխան: Առավոտից հեղեղի պես անձրեւ էր թափվում, ու պարտերն ամբողջովին ջրափոսերի մեջ էր: Բայց ամեն դեպքում շատ ժողովուրդ էր հավաքվել: Տեսարանի վերջում, երբ ես արտասանեցի «շավղից սայթաքած աշխարհի» մասին, հասարակության մեջ բռնեցին մի գողի, որ ուրիշի փենսեր էր թոցրել: Գործողությունն ավարտեցի ջրափոսերն անցնող ոտքերի չփչփոցի ու խուլ «գո՛ղ-գո՛ղ-գո՛ղ» բացականչությունների տակ: Թշվառականին անմիջապես, ինչպես մեզ մոտ ընդունված էր, բարձրացրին բեմ ու կապեցին սյանը: Երկրորդ ակտում գողը շփոթված էր ու դեմքը փախցնում էր վրան պարզված մատներից: Բայց տեսարան տեսարանի ետեւից հարմարվեց եւ, իրեն համարյա խաղի մեջ զգալով, ավելի ու ավելի լկտիանալով՝ սկսեց ծամածռություններ, դիտողությունները

ներ անել ու խորհուրդներ տալ, մինչեւ որ նրան սյունից արձակելով՝ ցած շպրտեցինք բեմից: *(Հանկարծ դառնալով Թայմերի կողմը):* Չգիտեմ ինչը կամ ով է քեզ կապել խաղին, բայց եթե կարծում ես, որ քո գողացած չնչին մտքերը,- հատը՝ մեկ փենս,- կարող են ինձ ավելի հարուստ դարձնել, ինձ, ում համար գրված են այս տողերը,- ստացիր քո գրոշներն ու դո՛ւրս խաղից:

Դերը նետում է Թայմերի դեմքին: Իրարանցում:

Ֆելիա: Ուշքի արի, Շտե՛ռն:

Բերբեջ: Իմ անունը Ռիչարդ Բերբեջ է: Եվ ես արձակում եմ քեզ, մանր գո՛ղ: Դո՛ւրս Դերերի թագավորությունից:

Թայմեր *(գունատ, բայց հանգիստ):* Ճնորհակալ եմ, կօգտվեմ արձակված ձեռքերից, որպեսզի... ախր, կապե՛ք դրան, տեսնում եք՝ խելագարվել է:

Բերբեջ: Այո՛, ես իջա ձեր աստիճանին, մարդի՛կ, այնտեղից, որ վեր է բոլորիդ խելքից, եւ դուք չընդունեցիք...

Նետվում են Բերբեջի վրա՝ փորձելով կապել: Նա, պայքարի տենդում բղավում է, հասկանո՞ւմ եք, բղավում է բոլորի վրա.. այ այստեղ, ես հիմա...

Եվ անհասկանալի բառեր քրթմնջալով՝ պատմողը ձեռքն արագ տարավ գրպանը. ինչ-որ բան շրշաց սերթուկի սեւ դարձածալի տակ: Եվ անմիջապես էլ ընդհատեց խոսքը՝ չռված բիբերով նայելով լսողներին: Պարանոցներն անհանգիստ ձգվեցին: Աթոռները տեղաշարժ եղան: Նախագահը վեր թռավ ու տիրական ձայնով դադարեցրեց աղմուկը.

- Ռա՛ր,- գոչեց նա,- դուք տառե՞ր եք բերել այստեղ: Մեզնից թաքո՞ւն: Տվեք ձեռագիրը: Անմիջապե՛ս:

Ռարը կարծես տատանվում է: Հետո քար լռության մեջ նրա ձեռքերը դուրս են լողում սերթուկի դարձածալի տակից. մատների արանքում, թեթեւակի դողալով, ճերմակին է տալիս քառածալ տետրը: Նախագահը, ձեռագիրը խլելով՝ աչքերն արագ սահեցնում է նշանների վրայով. տետրը համարյա զզվանքով է բռնել, անկյունից, ասես վախենում է կեղտոտվել թանաքագիր տողերին դիպչելուց: Հետ Ջեզը դառնում է բուխարու կողմը, փայտը համարյա ամբողջովին վառվել-վերջացել է, ու միայն մի քանի ածուխ, կարմրին տալով, շարունակում են մլմլալ ցանցի վրա:

- Կանոնադրության հինգերերդ կետով՝ ձեռագիրը դատապարտվում է մահվան, առանց թանաք հեղելու: Առարկությունն՞ր:

Ոչ ոք տեղից չշարժվեց:

Նախագահը ձեռքի կարճ շարժումով տետրը նետեց ածուխների վրա: Ասես կենդանի՝ այն տառապագին գալարեց էջերը, կամացուկ ու բարակ թշշաց. կապտին տվեց ծխի գալարը, հանկարծ ներքեւից բարձրացավ բոցը, եւ երեք րոպե անց նախագահ Զեզը, բուխարու ունելու կտրուկ հարվածներով մոխրացնելով այն, ինչ վերջերս դեռ պիես էր, մի կողմ դրեց ունելին, դարձավ պատմողին եւ ատամների արանքից նետեց.

- Շարունակե՛ք:

Սովորական արտահայտությունը անմիջապես չվերադարձավ Ռարի դեմքին. երեւում էր, որ դժվարությամբ է տիրապետում իրեն, բայց եւ այնպես նորից խոսեց.

- Դուք ինձ հետ վարվեցիք, ինչպես իմ կերպարները՝ Բերբեջի հետ: Դե ինչ, տեղն է եւ՛ նրան, եւ՛ ինձ: Շարունակում եմ. այսինքն, քանի որ բառերը, որ ուզում էի կարդալ, այլեւս անհնար է կարդալ,- նա արագ նայեց բուխարու ցանցին. վերջին ածուխները կայծկլտում ու մարում էին,- բաց եմ թողնում տեսարանի վերջը: Բոլորին պարզ է, որ կատարվողից վախեցած՝ Ֆելիան դերի հետ անցնում է Գիլդենին: Վերջին եւ չորրորդ դիրքը մեզ ստիպում է վերադառնալ Շտեռնին:

Մնալով Դերերի թագավորությունում՝ Շտեռնը սպասում է Բերբեջի վերադարձին: Անհամբերությունը վայրկյան առ վայրկյան աճում է: Այնտեղ, երկրի վրա գուցե արդեն գնում է ներկայացումը, եւ հանճարեղ դերն իր փոխարեն խաղում է իրեն: Սլաքածեւ կամարների տակ ճախրում է ծափերի երամը:

- Ի՞նձ:

Հուզված Շտեռնը փորձում է դիմել իրեն շրջապատող՝ իրենց գրքերի մեջ խորացած Համլետներին: Նրան տանջում են հարցերը. կռանալով հարեւանի ականջին՝ ասում է.

- Դուք պետք է հասկանաք ինձ: Չէ՞ որ գիտեք՝ ինչ է փառքը:

Ի պատասխան.

- Բառեր-բառեր-բառեր...

Եվ հարցվածը, գիրքը փակելով, հեռանում է: Շտեռնը՝ մյուսին.

- Ես օտար եմ բոլորին: Բայց ինձ սովորեցրեք բոլոր լինել:

Եվ մյուս Համլետն էլ, խիստ նայելով, փակում է գիրքը.

- Բառեր-բառեր:

Երրորդին.

- Այնտեղ, երկրի վրա ես թողել եմ աղջկան, որ սիրում է ինձ: Նա ինձ ասում էր...

- Բառեր:

Եվ ամեն հարցի հետ, ասես ի պատասխան, Համլետները վեր են կենում՝ու փակելով գրքերը՝ իրար ետեւից հեռանում:

- Իսկ եթե Բերբեջը... Հանկարծ չցանկանա վերադառնալ: Այդ դեպքում ինչպե՞ս գտնեմ ճանապարհը դեպի այնտեղ, հետ: Եվ դուք, ինչո՞ւ եք դուք լքում ինձ: Բոլորը մոռացել են. եւ գուցե նա էլ՝ բոլորի պես: Բայց չէ՞ որ երդվում էր...

Ու կրկին.

- Բառեր-բառեր:

- Ո՛չ, բառեր չեն: Բառերը վառվել են: Նրանց,- տեսել եմ,- ծեծում էին բուխարու ունելիով,- լսո՞ւմ եք...

Ռարը ձեռքը տարավ ճակատին:

- Ներեցե՛ք, ամեն ինչ խառնվել է. ատամն ընդ ատաման: Երբեմն պատահում է: Թույլ տվեք՝ կրճատումներով:

Եվ այսպես, Համլետների շարանը լքեց Շտեռնին, նրանց ետեւից սողում են նաեւ ազդագրերի խայտաբղետ բծերը, նույնիսկ դրանց վրայի տառերը, տողերից դուրս թռչելով, փախչում են հեռու: Դերերի թագավորության ֆանտաստիկ հեռապատկերը վայրկյան առ վայրկյան փոխում է տեսքը: Սակայն Բերբեջի մոռացած գիրքը մնացել է Շտեռնի ձեռքին: Հիմա արդեն հապաղելն իմաստ չունի. եկել է իմաստն ուժով խլելու, գաղտնիքը բացելու ժամանակը: Բայց գիրքն ամուր մետաղյա ճարմանդներ ունի: Շտեռնը փորձում է բացել կազմը: Գիրքը դիմադրում է՝ թերթերն ամուր սեղմելով իրար: Կատաղությամբ բռնված, մատներն արնոտելով՝ Շտեռնը համենայնդեպս կոտրում է բառերի գաղտնարանը: Բացված էջերին.

- Actus morbi: Հիվանդության պատմություն: Հիվանդ համար... Այսպես: Շիզոֆրենիա: Ընթացքը՝ նորմալ: Նոպա: Ցերմություն: Կրկնական: Ցառանցական գաղափար. ինչ-որ «Բերբեջ»: Ստամոքսը՝ նորմալ: Ընթացքը տեւական է դառնում: Անբուժ...

Շտեռնը բարձրացնում է աչքերը. կամարակապ, երկար հիվանդանոցային միջանցք: Համարակալված դռների երկարությամբ, աջից ու ձախից՝ բազկաթոռներ հիվանդասենյակի հերթապահի եւ այցելուների համար: Միջանցքի խորքում՝ գրքի մեջ թաղված, սպիտակ լայն խալաթի մեջ փաթաթված սանիտարը: Նա չի նկատում, որ հեռապատկերի խորքում դուռը բացվում է, եւ արագ ներս են մտնում երկու հոգի. տղամարդ ու կին: Տղամարդը դառնում է ուղեկցուհուն.

- Որքան էլ վատ է զգում, ինձ պետք էր ժամանակ տալ դիմահարդարման ու կոստյումս հանելու համար:

Ձայնին դառնալով՝ սանիտարն ապշում է. այցելուների հագին՝ հանված վերնազգեստների տակ, Համլետի եւ Օֆելիայի թատերական հագուստներն են:

- Դե, ահա, տեսնո՞ւմ ես, այդպես էլ գիտեի, որ աչքները չռելու են մեզ վրա: Ինչի՞ համար էր այս շտապողականությունը:

- Սիրելի՛ս, իսկ եթե հանկարծ չհասցնեի՞նք: Չէ՞ որ եթե նա ինձ չների...

- Քմահաճություններ՛ը:

Սանիտարը միանգամայն շփոթված է: Բայց Շտեռնը պայծառացած դեմքով վեր է կենում այցելուներին ընդառաջ.

- Բերբե՛ջ, վերջապե՛ս: Եվ դու, միա՛կս: Օ՛, ինչպես էի սպասում քեզ եւ քեզ: Բերբե՛ջ, մտածում էի, որ ինձնից գողացել ես եւ՛ նրան, եւ՛ դերը, ուզում էի քեզնից խլել քո բառերը. նրանք վրեժ լուծեցին՝ ինձ խելագար կոչելով: Բայց չէ՞ որ դրանք ընդամենը բառեր են, դերի բառեր,- եթե պետք է խելագար խաղալ, թող այդպես լինի, ես կխաղամ: Միայն թե ինչո՞ւ այդպես անսպասելի փոխեցին բեմահարդարանքը: Սա ինչ-որ ուրիշ պիեսից է: Բայց ոչի՛նչ. մենք դերից դեր կանցնենք, պիեսների շարքով, ավելի ու ավելի հեռուն, Դերերի անսահման թագավորության խորքը: Իսկ ինչո՞ւ գլխիդ պսակ չկա, Օֆելիա: Չէ՞ որ խելագարության տեսարանում քեզ սուսամբար ու փեգենա է հարկավոր: Ո՞ւր են:

- Հանել եմ, Շտե՛ռն:

- Այո՞: Իսկ գուցե ջրահեղձ ես եղել ու չգիտես, որ արդեն չկաս եւ քո ծաղկեպսակն էլ հիմա լողում է եղեգների ու ջրաշուշանների մեռյալ ծփանքի վրա, ու ոչ ոք չի լսում ինչպես...

- Այստեղ թերեւս ընդհատեմ: Առանց ավելորդ հավելազարդերի,- Ռարը վեր կացավ:

- Բայց թույլ տվեք,- նրա վրա սեւեռվեցին Դյաժի կլոր ակնապակիները,- եւ ի՞նչ, նա մեռնո՞ւմ է, թե՞ ոչ: Ու նաեւ ինձ պարզ չէ...

- Քի՞չ բան կա, որ ձեզ պարզ չէ: Ես փակել եմ սրնգի բոլոր անցքերը: Վե՛րջ: Մնացածի մասին սրնգահարը չի հարցնի. ինքը պիտի իմանա: Եվ ընդհանրապես, յուրաքանչյուր հիմնականից հետո որոշակի մնացած է մնում: Այդ կետում համամիտ եմ Համլետին. «Մնացյալը լռություն է»: Վարագո՛ւյր:

Ռարը մոտեցավ դռանը, երկու անգամ ձախ պտտեց բանալին ու շե-

մից խոնարհում անելով՝ անհետացավ: Ստահղացողները լուռ ցրվեցին: Տանտերը, ձեռքս բռնելով, սկսեց ներողություն խնդրել, որ ցավալի անակնկալը փչացրեց երեկոն, եւ հիշեցրեց գալիք շաբաթ օրվա մասին:

Փողոց դուրս գալով՝ հեռվում տեսա Ռարի թիկունքը. նա անմեջապես էլ անհետացավ նրբանցքներից մեկում: Ես արագ էի քայլում՝ նրբանցքից նրբանցք, փորձելով բացել զգացողություններիս կծիկը: Ինձ թվում էր՝ այդ երեկոն սեւ դաշույնի պես խրվել է կյանքիս մեջ: Պետք է դուրս քաշել: Բայց ինչպե՞ս:

3

Հաջորդ շաբաթ օրը, մթնշաղին, նորից Տառասպանների ակումբում էի: Երբ ներս մտա, բոլորն արդեն հավաքվել էին: Աչքերով գտա Ռարին. նստած էր նույն տեղում, ինչ նախորդ անգամ, դեմքը մի փոքր սրված էր թվում, աչքերը խոր թաղվել էին ակնախոռոչներում:

Այս անգամ բանալին ու բառը Թյուդինն էին: Դրանք ստանալով՝ Թյուդն ուշադիր զննեց բանալու ակոսը, ասես այնտեղ փնտրելով թեման, հետո, հայացքը դարձնելով բառերին, սկսեց իրար հետեւից զգուշորեն հանել դրանք՝ նույնքան խնամքով էլ զննելով ու ծանրութեթեւ անելով: Սկզբում դանդաղ՝ հետո ավելի ու ավելի արագ շարժվեցին բառերը, համարյա իրար առաջկտրուկ անելով, պատմողի սրված այտամկաններին պուտ-պուտ կարմիր հայտնվեց: Բոլորը դարձան նրա կողմը:

- Ավանակի տոն: Սա վերնագիրն է: Պատկերացնում եմ, ասենք, նովելի տեսքով: Իմ թեման հայտնվում է մեր ժամանակներից շուրջ հինգ դար առաջ: Վա՞յրը: Թեկուզ մի փոքրիկ գյուղակ՝ Ֆրանսիայի հարավում: Քառասուն-հիսուն տուն, կենտրոնում՝ հին եկեղեցի, շուրջը՝ խաղողի այգիներ ու բերրի դաշտեր: Հիշեցնեմ. հենց այդ դարաշրջանում եւ այդ վայրերում է ծագել Ավանակի տոների ավանդույթը, այսպես կոչված՝ Festa asinorum-ը. այս վերջին լատինական անվանումը եկեղեցունն է, որի թույլտվությամբ ու օրհնանքով ավանակի տոնն անցնում էր քաղաքից քաղաք եւ գյուղից գյուղ: Իսկ ծագել է այսպես. առավել խրատականության համար ծաղկազարդի շաբաթ օրը բեմականացնելով Քրիստոսի նախամահու օրերը՝ անտիֆոնների երգեցողության տակ ներս էին բերում մի ավանակ՝ սովորական, որեւէ գյուղացուց վերցված ավանակ, որը պետք է հիշեցներ Ավետարաններում փառաբանված կենդանուն, որն իր բոլոր նշաններով օրենքից ու մարգարեներից արված մեջբերումների ստուգումն անցած՝ ընտրվել էր իր նախախնամական դերի համար: Սկզբում,

կարելի է ենթադրել, տարօրինակ կերպով պատարագի մեջ ընդգրկված գյուղական իշուկը ոչինչ չէր արտահայտում, բացի շփոթմունքից ու հետ՝ ախոռ վերադառնալու ցանկությունից: Բայց շատ շուտով Ավանակի տոնը վերածվեց յուրատեսակ հակառակ պատարագի, ծանրացավ հազարավոր սրբապղծություններով, մոլեգնությամբ ու շվայտությամբ. հռհռացող գեղջուկներով շրջապատված, աղմուկ-աղաղակի ու մահակի հարվածների կարկտի տակ, վախից խելագարված ավանակը զռում ու քացի էր տալիս: Եկեղեցու սպասավորները ավետարանական կենդանու ականջներն ու պոչը բռնած՝ քաշում էին դեպի բեմասեղանը: Ետեւից ոռնում էր ամբոխը՝ անպարկեշտ երգեր երգելով ու հայհոյանքներ բղավելով եկեղեցական թեմաներով: Ամեն կարգի նողկանքով լցված բուրվառները, կատաղի ճոճվելով, տաճարը լցնում էին ծխով ու գարշահոտությամբ: Սրբազան թասերից սիդր ու գինի էր հորդում, կռվում էին, աստվածանարգություն անում ու քրքջում, երբ մեծարված ավանակը վախից թրքում էր խորանի սալերին: Հետո այդ ամենը ընդհատվում էր: Տոնն առաջ էր անցնում, իսկ պղծության տրված գեղջուկները կրկին, աստվածավախ խաչակնքելով, երկար պատարագների էին կանգնում, զոհաբերում վերջին պղնձադրամները տաճարի բարեզարդության համար, մոմեր էին վառում սրբապատկերների առաջ, հնազանդ կրում ապաշխարանքն ու կյանքը: Մինչեւ նոր ավանակապաշտություն:

Կտավը նախաներկված է: Անցնենք առաջ:

Ֆրանսուազան ու Պիեռը սիրում էին իրար: Պարզ ու պինդ: Պիեռը շրջակա խաղողի այգիներում աշխատող հաղթանդամ տղա էր: Ֆրանսուազան ավելի նման էր տաճարի պատերին ոսկե լուսապսակով շրջանակված կանանց, քան հարեւանությամբ ապրող աղջիկներին: Բայց նուրբ գծագրված գլխի շուրջը, հասկանալի է, ոսկե պսակ չկար, քանի որ մոր միակ օգնականն էր, եւ այդ հավելվածը միայն կարող էր խանգարել աշխատելիս: Ֆրանսուազային սիրում էին բոլորը, եւ նույնիսկ զառամյալ հայր Պաուլինը նրան հանդիպելիս ամեն անգամ ժպտում ու ասում էր. «Ահա Աստծո առաջ վառվող մի հոգի»: Եվ միայն մի անգամ հայր Պաուլինը չասաց իր «ահա մի հոգի»-ն. երբ Ֆրանսուազան ու Պիեռը եկել էին նրա մոտ, հայտնելու, որ ուզում են ամուսնանալ:

Առաջին հայտարարությունը կիրակնօրյա պատարագից հետո էր. Ֆրանսուազան ու Պիեռը, գավիթում կողք կողքի կանգնած, սրտի դողով սպասում էին. ծեր քահանան դանդաղ բարձրացավ ամբիոնի աստիճաններով, բացեց պատարագամատույցը, երկար փնտրեց ակնոցը, եւ այդ

ժամանակ միայն հնչեցին կողք կողքի կանգնածների անունները՝ իրար ետեւից, խնկի ու արեւի միջով:

Երկրորդ հայտարարությունն ընկավ երեկոյան ժամերգությանը, չորեքշաբթի: Պիեռը չկար. չէր կարող բացակայել աշխատանքից: Բայց Ֆրանսուազան եկավ: Տաճարի կիսախավարը դատարկ էր. միայն երկուերեք մուրացկան կին մուտքի մոտ, ու դարձյալ զառամ հայր Պաուլինը ամբիոնի կտրուկ աստիճանները ճռռացնելով բարձրացավ կամարներին ընդառաջ, հանեց պատարագամատույցը, փարաջայի գրպաններում գտավ ակնոցն ու միացրեց անունները. Պիեռ-Ֆրանսուազա:

Երրորդը նշանակված էր շաբաթ օրը: Բայց հենց այդ օրը,- անսպասելի ու մոլեգին,- հորդեց Ավանակի տոնը: Եկեղեցուն մոտենալով՝ Ֆրանսուազան դեռ հեռվից լսեց ընդառաջ եկող աղաղակներն ու վայրի ոռնոցը: Կանգ առավ գավթի աստիճանների առաջ՝ տատանվելով, ինչպես բոցը քամու տակ: Բաց դռներից գազանի ու մարդու ձայներով ոռնում ու մոլեգնում էր Ավանակի տոնը: Ֆրանսուազան ցանկանում էր հետ դառնալ, բայց այդ պահին վրա հասավ Պիեռը. երիտասարդն այլեւս չէր կարող սպասել. բահ ու բրիչին սովոր ձեռքերը Ֆրանսուազային էին ուզում: Նա գտավ մոլեգնող տաճարից փակ փեղկերով մեկուսացած հայր Պաուլինին ու շփոթված, բայց համառ խնդրեց չհետաձգել վերջին հայտարարությունը: Ծեր քահանան լուռ լսեց, նայեց մի կողմ քաշված Ֆրանսուազային, միայն աչքերով ժպտաց եւ նույն կերպ, առանց մի բառ ասելու, արագ դիմեց դեպի տաճարի բաց դուռը. փեսան ու հարսը՝ ետեւից: Ծեմին Ֆրանսուզան փորձեց ձեռքը խլել Պիեռի ձեռքից, բայց նա բաց չթողեց: Իրար գլխի թափված մարդկանց ոռնոցը, հարյուրավոր կոկորդների քրքիջն ու ավանակի համարյա մարդկային տառապալի զռոցը խլացրին Ֆրանսուազային: Լայնացած բիբերը գարշահոտ բուրվառների ծխի միջով նախ տեսան միայն ամբոխի վեր պարզած ձեռքերը, բաց բերաններն ու չռված, արնակոխ աչքերը: Հետո՝ աստիճան-աստիճան բարձրացող քահանայի խաղաղ եւ իմաստուն դեմքը: Նրան տեսնելով՝ բոլորը մի պահ լռեցին. հայր Պաուլինը, գլուխների ծովի վերեւում կանգնած, բացեց պատարագամատույցն ու անշտապ դրեց ակնոցը: Լռությունը երկարեց:

- Հռչակում երրորդ: Հանուն Հոր...,- խուլ գվվոցը, ինչպես եռացող կաթսայի կափարիչի տակից, կռիվ էր տալիս քահանայի թույլ, բայց հստակ ձայնի դեմ,- պսակադրվում են Աստծո ծառա Ֆրանսուազան...

- Ու ե՛ս:

- Ու ե՛ս: Ու ե՛ս:

- Ու ե՛ս... Ու ե՛ս.. Ու ե՛ս,- մռնչում էր բազմակոկորդ ամբոխը: Կաթսան թռցրեց կափարիչը: Եվ պարունակությունը, խլթխլթալով ու պղպջակները չռած, ճչում, ծղրտում ու գվվում էր:

- Ու ե՛ս... Ու ե՛ս...

Եվ նույնիսկ ավանակը, փրփրակալած մռութը հարսնացուին դարձնելով, հանկարծ բացեց բերանն ու գռաց.

- Ուե՛ե՛ե՛ե՛ս:

Կիսամեռ Ֆրանսուազային հանեցին գավիթ: Վախեցած ու շփոթված Պիեռն իրար էր անցել նրա մոտ՝ փորձելով ուշքի բերել:

Իսկ հետո ամեն ինչ իր կարգով գնաց. սիրահարները պսակվեցին: Այստեղ, թվում է, վերջ պատմությանը: Բայց իրականում՝ սա միայն սկիզբն է:

Նորապսակները մի քանի ամիս ապրում էին սիրտ սրտի, մարմին մարմնի: Ցերեկը նրանց բաժանում էր աշխատանքը, գիշերը նրանց վերադարձնում էր իրար: Նույնիսկ երազները, որ առավոտյան պատմում էին իրար նույնական էին:

Բայց ահա մի անգամ, կեսգիշերից հետո, երկրորդ աքլորականչից առաջ, Ֆրանսուազային,- նա ավելի զգոն էր քնում,- արթնացրեց ինչ-որ անսպասելի աղմուկ: Ափերով բարձին հենվելով՝ սկսեց ականջ դնել. աղմուկը, սկզբում խուլ ու հեռու, աստիճանաբար աճում ու մոտենում էր, գիշերվա միջով, ասես քամուց քշված, ձայների աղոտ գվվոց լիներ, որ ընդհատվում էր գազանի ոռնոցով, էլի մի րոպե՝ եւ արդեն հնարավոր էր տարբերել առանձին, մերթընդմեջ ճչացող ձայները, եւս մի րոպե, ու բառերը լսելի դարձան. «Ու ե՛ս - ու ե՛ս...»: Կարկամած Ֆրանսուազան զգույշ վեր կացավ մահճակալից, մոտեցավ դռանը եւ ոտաբոբիկ, միտակ գիշերանոցով, ականջը հպեց դռանը. այո՛, նա՛ էր՝ Ավանակի տոնը. Ֆրանսուազան գիտեր: Գիշերագողերի պես հայտնված հարյուրավոր ու հազարավոր փեսացուներ, իրար հերթ չտալով, խնդրելով ու պահանջելով՝ կրկնում էին իրենցը. «Ու ե՛ս - ու ե՛ս»: Բյուր ու բյուրավոր կատաղի ավանակային հարսանիքներ էին պտտվում տան շուրջը, հարյուրավոր ձեռքեր անհամբեր թակում էին պատերը, դռան ճեղքերից արբեցնող ծուխ էր խփում, եւ ինչ-որ մեկը ընդհուպ մոտենալով շեմին՝ տառապագին-կամաց կանչեց. «Ֆրանսուա՛զա, ու ե՛ս...»:

Ֆրանսուազան չէր հասկանում՝ ինչպե՞ս կարող է այդպես խոր քնել Պիեռը: Մահացու սարսափը պատեց նրան. հանկարծ ու զարթնի եւ ամեն ինչ իմանա: Նա դեռ չէր հասկանում այդ ամենի տառապանքն ու

մեղքը. ծանր սողնակը տեղի տվեց, դուռը բացվեց, եւ նա, համարյա մերկ, ընդառաջ ելավ Ավանակի տոնին: Եվ անմիջապես էլ շուրջը ամեն ինչ լռեց, բայց՝ ոչ նրա ներսում: Ֆրանսուազան քայլում էր, բոբիկ ոտքերով՝ խոտին, չհասկանալով՝ ուր եւ ում մոտ: Ոչ հեռու դոփեցին սմբակները, զնգացին ասպանդակները, ինչ-որ մեկը կամացուկ կանչեց նրան. գուցե թափառիկ ասպետ է, որ անլուսին գիշերով շեղվել է ճանապարհից, գուցե անցվոր վաճառական, որ մութ գիշերն է ընտրել մաքսանենգ ապրանքը տեղափոխելու համար: Գիշերային փեսացուն անանուն է, մութ գիշերով նա վերցնում է այն, ինչ մթին է բոլոր գիշերներից՝ գողի պես հափշտակելով հոգին, գողի պես հայտնվելով ու չքանալով: Կարճ ասած. նորից զնգացին ասպանդակները, դոփեցին սմբակները,- իսկ առավոտյան, ամուսնուն գործի ճանապարհելիս Ֆրանսուազան այնպես քնքուշ նայեց աչքերի մեջ եւ այնքան երկար բաց չէր թողնում վիզը, որ Պիեռը, շեմն անցնելով, դեռ երկար ժպտում ու բիհրը ուսին ճոճելով՝ մի ուրախ երգ էր սուլում:

Եվ նորից կյանքը կարծես գնաց առաջվա պես: Ցերեկ-գիշեր-ցերեկ: Մինչեւ որ նորից եկավ նույնը: Ֆրանսուազան երդվում էր չտրվել կախարդանքին: Երկար չոքում էր սառը սալերին, սեւադեմ սրբապատկերների առաջ, աղոթք աղոթքի ետեւից էր անում՝ համրիչի հատիկները գցելով: Բայց երբ կրկին լռությունը պատռելով, օղակն ավելի ու ավելի սեղմելով, շուրջը պար բռնեց Ավանակի տոնը, նորից կորցրեց կամքը, վեր կացավ ու գնաց՝ չիմանալով՝ ուր եւ ում մոտ: Գիշերային սեւ խաչմերուկում նրան մի մուրացկան հանդիպեց, տեղից վեր կացավ ու ընդառաջ եկավ գիշերվա մեջ հայտնված ճերմակ տեսիլքի պես. ափերը խորդուբորդ էին, իսկ նեխած քրջերից նողկալի կծվահոտ էր փչում. չհասկանալով ու չհավատալով, այնուամենայնիվ ագահորեն տիրեց նրան, հետո՝ պարկում զնգացին պղնձադրամները, թխկթխկաց հենակը, ու գողի պես թաքնվելով, սահելով պատերի երկայնքով՝ գիշերային փեսացուն վախեցած ու տարակուսած չքացավ խավարում: Իսկ Ֆրանսուազան, վերադառնալով տուն, ականջը երկար պահել էր ամուսնու համաչափ շնչառությանը ու վրան կռանալով, ատամները սեղմած, անձայն լաց էր լինում. նողկանքից ու երջանկությունից:

Անցան ամիսներ, գուցե եւ տարիներ. մարդ ու կին ավելի ուժեղ էին սիրում իրար: Եվ կրկին, ամեն անգամվա պես անսպասելի, եկավ նույնը: Պիեռն այդ գիշեր տանը չէր՝ գյուղից մի տասը լյո հեռու: Ձայներից կանչված Ֆրանսուազան անցավ շեմը. ծառերի աղոտ ուրվագծերի միջեւ փռ-

ված խավարում լողում էր գետնահուպ կրակի մեծ դեղին աչքը, եւ Ֆրանսուազան, աչքը աչքից չկտրելով, ընդառաջ գնաց ճակատագրին: Հաջորդ պահին դեղին աչքը վերածվեց սովորական՝ ապակուց ու երկաթից սարքած լապտերի, կանթին՝ սուտանի թեւքից դուրս պրծած չոր մատներ, իսկ մի քիչ վերեւ, աղոտ լույսի մեջ՝ հայր Պաուլինի թարշամած, նուրբ ծալքերով դեմքը. կեսգիշերին կանչել էին մահամերձի մոտ, եւ հոգուն երկինք խոստանալով՝ նա վերադառնում էր տուն: Գիշերվա կեսին Ֆրանսուազային մերկ ու մենակ տեսնելով՝ հայր Պաուլինը չզարմացավ: Լապտերը բարձրացնելով՝ լուսավորեց նրա դեմքը եւ ուշադիր նայեց շրթունքների դողին ու մշուշված աչքերին: Հետո փչեց ճրագն, ու կույր խավարում Ֆրանսուազան լսեց.

- Վերադարձիր տուն: Պատշաճ հագնվիր ու սպասիր:

Ծեր քահանան դանդաղ էր քայլում, ընդհատուն քստքստան քայլքով, կանգ առնելով ու տեղը բերելով ծանրացած շունչը: Մտնելով կնոջ տուն՝ նրան տեսավ պատի տակի նստարանին անշարժ կծկված. կինը կցել էր ձեռքերը, եւ ուսերը, ասես մրսելուց, երբեմն ցնցվում էին շորի տակ: Հայր Պաուլինը թողեց, որ լացի-հանգստանա, հետո միայն ասաց.

- Հնազանդվիր, հոգի՛ս, քեզ պատած կրակին: Սուրբ գիրքն ու մարգարեները նախագուշակել են. միայն ավանակ՝ անմիտք ու գարշահոտ անասուն հեծած կարելի է հասնել Երուսաղեմ: Ասում եմ քեզ. միայն այդպես ու դրանով են մտնում Արքայությանց Արքայություն:

Երիտասարդ կինը ապշահար բարձրացրեց արտասվաթաց աչքերը:

- Այո՛: Քո ժամանակն էլ է հասել, զավա՛կս, իմանալու այն, ինչ բոլորին չի տրված իմանալ. Ավանակի գաղտնիքը: Ծաղիկներն այդքան մաքուր ու բուրավետ են ծաղկում, որովհետեւ արմատները գոմաղբի, կեղտի ու գարշանքի մեջ են: Փոքր աղոթքից դեպի մեծ աղոթքը՝ միայն աստվածանարգության միջով: Ամենավեհն ու ամենամաքուրը թեկուզ մի վայրկյան պետք է աղտոտվի եւ ընկնի, որովհետեւ այլ կերպ ինչպե՞ս իմանաս, որ մաքուրը մաքուր է ու վեհը՝ վեհ: Եթե աստված, թող որ հավերժի մեջ մեկ անգամ, մարմին ու մարդկային օրենք է ընդունել, ապա կարո՞ղ է մարդը խորշել ավանակի օրենքից ու մարմնից: Միայն սիրելիներից սիրելիին, սրտի թանկից ամենաթանկին անարգելով ու վիրավորելով արժանի կդառնաս նրան, որովհետեւ այստեղ, երկրի վրա չկան անտրտմության ուղիներ:

Ծերունին վեր կացավ ու փորձեց վառել լապտերը:

- Մեր եկեղեցին բացել է տաճարները Ավանակի տոնի առաջ. նա ինքն

է ուզում, որ ծիծաղեն ու անարգեն իրեն՝ Քրիստոսի հարսնացուին, որովհետեւ նրան հասու է մեծ գաղտնիքը: Տոնին, ուրախությանը, ծափ ու ծիծաղին բոլորն են գալիս, բայց հետոն միայն ընտրյալներինն է: Ճշմարիտ ասում եմ քեզ. չկան ուղիներ անտրտմության:

Պատրույգը շտկելով՝ ծերունին շրջվեց դեպի շեմը: Շրթունքները հպելով նրա չոր մատներին կինը հարցրեց.

- Ուրեմն՝ լռե՞լ:

- Այո՛, զավա՛կս: Որովհետեւ՝ ինչպե՞ս Ավանակի գաղտնիքը բացես... ավանակներին:

Ժպտալով, ինչպես երրորդ հայտարարության օրը, հայր Պաուլինը դուրս եկավ ու ետեւից ամուր փակեց դուռը...

Թյուդը լռեց ու բանալու պողպատը բազկաթոռի արմնկակալին թխկացնելով՝ դեմքը դարձրեց շեմին:

- Ենթադրենք, որ այդպես է,- դադարն ընդհատեց նախագահ Զեզը,- մտքերի շարվածք մի տասնյակ աղյուսներով: Մենք վարժվել ենք աշխատել առանց ցեմենտի: Ուստի, քանի որ դեռ բավարար ժամանակ ունենք, չէի՞ք համաձայնի նովելի տարրերը որեւէ այլ կարգով դասավորել: Ասենք, առաջին աղյուսը՝ դարաշրջանը, թող լինի այնտեղ, որտեղ կար, եկեք գործողության կենտրոն բերենք ոչ թե կնոջը, այլ քահանային, հետո կենտրոնական գործողին նշանակալի դարձրեք Ավանակի տոնի նշանակալիության հաշվին. դրանք կարելի է, այսպես ասած, կտրել արմատից՝ վերցնելով միայն ցողունը, իսկ հետո...

- Իսկ հետո,- միջամտեց հաստլիկ Ֆէվը՝ աչքերը հեգնոտ կկոցելով պատմողի վրա,- ամեն ինչ ավարտել ոչ թե ի կյանք, այլ՝ ի մահ:

- Կխնդրեի նորացնել նաեւ վերնագիրը,- անկյունից խնդմնդաց Հիցը:

Այտամկանները դողացին ու լարվեցին Թյուդի դեմքին տարածված կարմիր ցանի տակ, նա առաջ եկավ, ասես պատրաստվելով ցատկի, ամբողջ կերպարանքը,- կարճ ու չոր, շարժուն ու ընդգծված,- հիշեցնում էր հակիրճությունը, շարժունությունն ու հստակությունը նովելների, որոնց մեջ էլ նա ըստ երեւույթին ապրում էր: Անսպասելի վեր կենալով՝ Թյուդը անցավ սեւ դարակների երկարությամբ եւ նույնքան էլ անսպասելի, կրունկների վրա կտրուկ շրջադարձ անելով, վերադարձավ վեցի շրջանը.

- Լա՛վ: Սկսո՛ւմ եմ: Վերնագիր. «Գոլիարդի պարկը»: Արդեն միայն դա ինձ թույլ կտա մնալ նույն դարաշրջանում: Գոլիարդները կամ «ուրախ կղերը», ինչպես նրանց այդ ժամանակ կոչում էին,- կարծում եմ դա բոլորիդ հայտնի է,- թափառիկ տերտերներ էին, այսպես ասած՝ մոլորված

եկեղեցու ու բալագանի արանքում: Ծաղրածուի ու կապելանի այդ տարօրինակ խառնուրդի հայտնվելու պատճառները մինչ օրս հետազոտված ու բացատրված չեն. ամենահավանականն այն է, որ աղքատացած ծխերի քահանաներ էին, ու քանի որ փարաջան չէր կերակրում նրանց կամ կիսով չափ էր կերակրում, ստիպված էին վաստակել ինչով կարող էին եւ գլխավորապես՝ բալագանային դերասանի արհեստով: Իմ պատմության հերոս հայր Ֆրանսուազը (թույլ տվեք անունների հետ էլ վարվել այնպես, ինչպես մնացածի, այսինքն փոխատեղել) նրանցից մեկն էր: Դաբաղած կաշվից բարձր ճտքակոշիկներով, ծանր գավազանը ձեռքին՝ նա չափում էր միջգյուղյա ճանապարհների փոշոտ ոլորանները, տնից տուն անցնում՝ սաղմոսները փոխարինելով երգերով, գալիական զվարճախոսությունները՝ գիտական լատիներենով, իրիկնային զանգահարության ղողանջը՝ հիմարի գլխարկի զանգուլակների ծնգոցով: Թոկով մեջքին կախած նրա ուղեպարկում կողք կողքի, ինչպես ամուսինն ու կինը, խնամքով դասավորված՝ իրար էին սեղմվել գունավոր լաթերից կարած ու չխկչխկաներով զարդարված ծաղրածուի թիկնոցն ու սեւ, մաշված կարատեղերով փարաջան: Գոտուց կախ ճոճվում էր գինով տափաշիշը, աջ դաստակին սեւին էր տալիս երեք շարք փաթաթված համրիչը: Հայր Ֆրանսուազն ուրախ բնավորության տեր մարդ էր. անձրեւին ու տապին, ծփացող արտերով թե ձյունածածկ ճամփաներով անցնելիս միշտ որեւէ պարզունակ երգ էր շվշվացնում ու ժամանակ առ ժամանակ ձեռքը տանում տափաշշին, որ համբուրի նրա, ինչպես ինքն էր ասում, ապակե շուրթերը. ոչ մեկը տեսած չկար, որ հայր Ֆրանսուազն ուրիշ որեւէ մեկի հետ համբուրվեր:

Իմ թափառիկ գոլիարդը խիստ պիտանի մարդ էր. եկեղեցական արարողությո՞ւն էր հարկավոր՝ կբացեր պարկը, կտեղավորվեր նեղ փարաջայի մեջ, կարձակեր համրիչը, պարկը քրքրելով՝ կհաներ խաչն ու հոնքերը խիստ կիտելով՝ կկապեր կամ կքանդեր. պետք էր տոնական ուրախ զվարճա՞նք կազմակերպել՝ ինտերմեդիա խաղալ կամ սերտել սատանայի դերը՝ չափազանց խճճված ու դժվար որեւէ սիրողական համքարության համար, եւ ահա նույն պարկից զանգուլակներով ու փայլերով նույն խեղկատակային թիկնոցը սովոր փաթաթվում էր հայր Ֆրանսուազի լայն ուսերին. այստեղ արդեն դժվար էր գտնել որեւէ ճարպկորդի, որն ավելի լավ կարողանար արցունքոտվելու աստիճան ծիծաղեցնել եւ այնքան զվարճախոսություններ հորինել, որքան կարողանում էր գոլիարդ Ֆրանսուազը:

Ոչ ոք չգիտեր՝ ծե՞ր է, թե՞ երիտասարդ. ածիլված դեմքը միշտ արեւայրուքի բրոնզի տակ էր, իսկ գագաթի մերկ մաշկը կարող էր եւ՛ ճաղատություն լինել, եւ՛ տոնզուրա: Ինտերմեդիայի ընթացքում լացելու աստիճան ծիծաղող կամ ժամերգությանը ժպտալու չափ արտասված աղջիկները երբեմն առանձնակի սեւեռուն էին նայում Ֆրանսուազին, բայց գոլիարդը մենակյաց էր. սպասավորելուց ու խաղալուց հետո տեղն էր դնում փարաջան ու զանգուլակներով թիկնոցը, կապում պարկի բերանը ու շարունակում ճանապարհը, ձեռքերը սեղմում էին միայն ճամփորդական գավազանը, շրթունքները դիպչում էին միայն ապակե շուրթերին: Ճիշտ է, դաշտերով անցնելիս սիրում էր զուգասուլել ճախրող թռչունների հետ, բայց չէ՞ որ թռչունները նույնպես շրջմոլիկներ են, եւ մարդկանց հետ խոսելու համար նրանց կբավականացներ միայն մեկ բառ՝ «միմո»: Հենց այդտեղ էլ՝ դաշտերում, քամու եւ թռչունների միջեւ գոլիարդը սիրում էր երբեմն զրուցել իր ուղեպարկի հետ. բացում էր թոկով կապած նրա բերանը, եւ արեւերես հանելով գույնզգույնն ու սեւը՝ օրինակ, այսպես էր խոսում.

- Suum cuique, amici mei *[Ամեն մեկին՝ իրենը, բարեկամնե՛ր - լատ.].* հիշո՞ւմ եք, սեւո՛ւկ ու գույնզգո՛ւյն: Եվ, ըստ էության, եթե երկրի վրա լինեին գույնզգույն պատարագներ ու սեւ ծիծաղ, դուք ստիպված կլինեիք տեղփոխ լինել, բարեկամնե՛ր: Իսկ մինչ այդ՝ դու խունկ հոտոտիր, իսկ դու գինու բծեր հագիր:

Եվ սեւից ու գույնզգույնից փոշին թափ տալով՝ գոլիարդը դրանք նորից դնում էր պարկը ու վեր կենալով՝ լորերի հետ զուգասուլելով՝ քայլում ոլորապտույտ ճանապարհներով:

Մի անգամ, երեկոյան կողմ, փոշեպատ ու հոգնած, հայր Ֆրանսուազը հասավ մի գյուղի լույսերին: Փոքրիկ բնակավայր էր՝ քառասուն-հիսուն ծուխ, կենտրոնում՝ եկեղեցի, շուրջը՝ խաղողի այգիների քառանկյունները: Արդեն ցանկապարսպի մոտ նրան հանդիպեց մի մարդ, որը հարցուփորձ փոխանակեց ճամփորդի հետ. ով-որտեղից-ինչու-ուր: Եվ հայր Ֆրանսուազը դեռ չէր հասցրել նստել «Տուզը խփում է բոլորին» ցուցանակի տակ, երբ կանչեցին մահամերձի մոտ: Արագ մի երկու բաժակ խմելով՝ գոլիարդը ձեռքերը խցկեց փարաջայի գրպաններն ու, ճանապարհին կոճկվելով, շտապեց հրաժեշտի աղոթքների սպասող հոգու մոտ:

Հոգուն թողություն տալով՝ վերադարձավ կիսատված տափաշշի մոտ: Այդ ընթացքում եկվորի մասին լուրը հասցրել էր լինել բոլոր քառասուն բակերում, եւ մի քանի տարեց գեղջուկներ, որ նրան սպասում էին «Տու-

զը խփում է բոլորին» հաստատությունում, եկվորին խնդրեցին հաջորդ օրը,- տոնավաճառի օր էր լինելու,- որեւէ ուրախ ու թունդ բանով զվարճացնել թե՛ տեղացիներին, թե՛ եկվորներին: Բաժակները շխկացին բաժակներին, ու գոլիարդը ասաց՝ լա՛վ:

Արդեն ուշ գիշերով, գիշերակացի տեղ գտնելով, գոլիարդը հանդիպեց լապտերը ձեռքին անցնող մի մարդու. դեղին աչքը սահեց նրա դեմքով, կուրացուցիչ լույսի միջով գոլիարդը նախ տեսավ լապտերի կանթը բռնած պինդ, լայնաթաթ ձեռքը, ապա եւ՝ ջահել տղայի ատամներն ու ժպիտը շողացնող դեմքը:

- Հայր Ֆրանսուազին չե՞ք տեսել,- հարցրեց տղան:- Նրան եմ փնտրում:

- Ինչ կա որ: Արի միասին փնտրենք: Մոտդ հայելի կա՞:

- Իսկ ինչի՞ համար է հայելին:

- Ո՞նց թե. առանց հայելու հայր Ֆրանսուազին ոչ մի կերպ չենք տեսնի: Անունդ ի՞նչ է:

- Պիեռ:

- Իսկ հարսնացուի՞դ անունը:

- Պաուլինա: Ի՞նչ գիտեք, որ հարսնացու ունեմ:

- Լա՛վ: Վաղը՝ երեկոյան ժամերգությունից առաջ: Եթե ուզում եք կպչել իրար ու մեկ մարմին դառնալ, ավելի լավ սոսինձ, քան պարկիս միջինն է, չեք գտնի: Բարի գիշեր:

Գոլիարդը փչեց-հանգցրեց ապշած տղայի լապտերը եւ նրան խավարով ու զարմանքով պարուրված թողնելով՝ հեռացավ:

Հայր Ֆրանսուազն առավոտից տենդագին գործի անցավ. նախ սուրբ ջրով օծեց հիվանդ նորածիններին ու քավության աղոթքներ մրմնջաց ծնունդկանի սնարի մոտ, հետո, արագ զգեստափոխվելով ծաղրածուի գույնզգույնին, ճանապարհի ու հոգեւորական հագուստը խնամքով դրեց պարկը եւ պանդոկի սպասավորի՝ լայնաբերան ու լոլոզ մի տղայի հսկողությանը թողնելով՝ դիմեց շուկայի հրապարակ՝ զվարճացնելու հարեւան գյուղերից եկած գեղջուկներին: Երգը երգի ետեւից, զվարճախոսությունը՝ զվարճախոսության. ժամանակն անցնում էր, բայց գյուղացիները ոչ մի կերպ չէին կշտանում ուրախությունից ու բաց չէին թողնում զվարճարարին: Հանկարծ եկեղեցու զանգերը խփեցին. գեղջուկները հանեցին գլխարկները, իսկ հայր Ֆրանսուազը, վերցնելով զանգուլակները զնգացնող թիկնոցը, համարյա վազքով նետվեց հետ՝ շտապելով զգեստափոխվել, որ բաց չթողնի հարսանիքը:

«Տուզի» դռների մեջ հանդիպեց շփոթված սպասավորին. ձեռքին գոլիարդի պարկն էր, բայց տարօրինակ կերպով սմքած, կիպ կպած կողերով:

- Տե՛ր իմ,- հիմար բերանը կախելով՝ կմկմաց լոլոզը,- ես էլ էի ուզում լսել ձեզ, իսկ այդ ընթացքում պարկը թափ են տվել: Ո՛ւմ մտքով կանցներ:

Գոլիարդը ձեռքը տարավ պարկը:

- Դատա՛րկ է, դատա՛րկ,- հուսահատ գոռաց նա:- Գլխիդ պես դատարկ է, բերանբա՛ց: Հիմա ո՞նց սպասավորեմ հարսանիքը, երբ իմ լատիներենից բացի ուրիշ ոչինչ չունեմ:

Պանդոկի սպասավորի պարզունակ դեմքին դժվար էր պատասխան կարդալ: Պարկը խցկելով թեւի տակ՝ հայր Ֆրանսուազը, զանգուլակները զնգացնելով, այդպես էլ հագուստը չփոխած, նետվեց եկեղեցի: Ճանապարհին կրկին խուզարկեց պարկի դատարկությունը. ամենատակը մատները դիպան գողի թողած խաչին, որն արագ կախելով ծաղրածուի ապուշ փալասների վրայից՝ հայր Ֆրանսուազը բացեց թեւին փաթաթած համրիչն ու ներս վազելով եկեղեցի՝ սկսեց.

- In nomine... *[Հանուն - լատ.]*

- Cum spirito Tuo *[Քո Հոգով - լատ.]*,- ուր որ է միանում էր տիրացուն, բայց հանկարծ սսկվեց ու վախեցած աչքերը չռեց խորանի աստիճաններով բարձրացող ծաղրածուի վրա: Իրարանցում սկսվեց. հարսանքապետերը նահանջեցին դեպի դուռը, մի պառավ գեղջկուհի ձեռքից գցեց վառվող մոմը, հարսնացուն, դեմքն ափերի մեջ առած, վիրավորանքից ու վախից լաց եղավ, իսկ փեսացուն երկու-երեք տղաների հետ սրբապիղծին դուրս քաշեցին եկեղեցուց ու դուրս շպրտեցին գավիթից:

Գիշերվա սառնությունն ուշքի բերեց գոլիարդին: Վեր կենալով՝ հայր Ֆրանսուազը նախ տնտղեց քերծվածքներն ու կապտուկները, հետո նորից ստուգեց կողքին ընկած պարկը. պարկում ոչինչ չկար, բացի դատարկությունից, բայց դա էլ խնամքով կապեց կրկնակի հանգույցով, սովոր շարժումով գցեց ուսին ու խոտերի մեջ գտնելով իր գավազանը՝ լքեց քնած գյուղը: Պղնձե զանգուլակները զնգացնելով՝ գնում էր գիշերվա միջով: Առավոտվա դեմ դաշտում հանդիպեց մարդկանց, որոնք, տեսնելով խեղկատակի հագուստը, վախեցած դուրս եկան ճանապարհից ու ապշած նայում էին խայտաբղետ ուրվականի ետեւից, որի տեղը ոչ թե դաշտերի սեւ ակոսներում էր, այլ բալագանի ճոճռան հարթակին: Հասնելով մոտակա գյուղը՝ գոլիարդը որոշեց շրջանցել այն. հետնաբակերով ու բանջարանոցներով անցնելիս փորձում էր հնարավորինս անաղմուկ

քայլել, որ զանգուլակների զնգոցով չգրավի որեւէ մեկի ուշադրությունը: Բայց մի մազաթափ շուն, ընդառաջ թռչելով, տեսավ շարժվող խայտաբղետությունն ու աղիողորմ ոռնաց, ոռնոցի վրա դուրս եկան մարդիկ, եւ շուտով դաշտերով անցնող խեղկատակի ետեւից ծգվեց սուլող ու հայհույ անող տղեկների շարանը:

Ցանկապատը նորոգող գեղջուկը չպատասխանեց բալագանային ուրվականի բարեւին, իսկ կժերը ուսին՝ ճանապարհով անցնող կանայք չժպտացին ուրախ ծամածռությանն ի պատասխան ու, հայացքները խոնարհելով, կողքից անցան. աշխատանքային օր էր, ծանր օր, զբաղված ու սթափ մարդիկ ոչ ժամանակ ունեին, ոչ ծիծաղելու ցանկություն, նրանք արդեն կատակել էին իրենց կատակները, տոնի հագուստները պահել սնդուկներում, ամենօրյա աշխատանքային շորեր հագել եւ անցել վեց միանման, գորշադեմ, աշխատանքային օրերի շարքին: Անհասկանալի եկվորը տոն էր, որ անհեթեթ սխալմունքով մոլորվել էր առօրյայում ու խառնում էր նրանց պարզունակ օրացույցը, աչքերը փախչում էին գոլիարդից, նա կամ արհամարհական ժպիտներ, կամ անտարբեր թիկունքներ էր տեսնում: Եվ հասկացավ, թե որքան միայնակ ու անօթեւան է ծիծաղը՝ հրեշտակային- մաքուր, նուրբ թելերով ու սուր ասեղներով կարված փոփոխվող-գույնզգույն ծվեններից: Այդ ծիծաղը կարող էր բարձրանալ-հասնել արեւին, բայց նույնիսկ թառերից վեր չթռավ. հոգին արծվի էր, իսկ թեւերը՝ տնական կչկչան հավի, բոլոր ժպիտները համրած ու փակված էին տոնի մեջ, ինչպես վանդակում: Չէ՛: Հեռո՛ւ: Գոլիարդը, քայլերն արագացնելով, արդեն գնում էր այն կածանով, որ որկրից է ու երկրային, եւ սեւ ու ծանր հողը կպչում էր ներբաններին, խոտերով ու ոստերով կառչում հագուստից, իսկ քրտնքոտ ու թրքահոտ քամին ողջ ուժով զնգացնում էր մթնշաղում մարող թիկնոցի զանգուլակներն ու կախազարդերը: Ճանապարհը փակեց գետը: Գոլիարդը ուսից իջեցրեց պարկը, արձակեց կապն ու վերջին անգամ խոսեց նրա հետ:

- Հիերոնիմ երանելին գրում է, որ մեր մարմինն էլ ընդամենը զգեստ է: Եթե այդպես է, տանք լվանալու:

Պարկը բացել էր կտավե բերանն ու նմանվել «Տուզը խփում է բոլորին» պանդոկի բերանբաց ծառային: Զառիվայր ափից կախված՝ ուրախ կղերականը փորձեց գավազանի ծայրը հասցնել հատակին: Չհաջողվեց: Քիչ հեռվում, հողի մեջ թաղված մի մամռոտ քար կար: Գետնից կտրելով՝ Ֆրանսուազը քարը խցկեց պարկը: Քարի ետեւից՝ գլուխը, ու թոկն ամուր փաթաթեց վզին: Ափի գիծը մի քայլի վրա էր: Համարձակվում եմ

պնդել, որ այդ քայլը հայր Ֆրանսուազի համար վերջինն էր...

Թյուրը ավարտեց: Կանգել էր՝ մեջքով դռանը հենված. թվում էր՝ նրա սեւ փեղկերը, գերմանական մեխանիկական խաղալիքի ծողիկների պես, զսպանակը շխկացնելով, հանկարծ կբացվեն եւ Թյուրի կարճ, խաղալիքային-նուրբ մարմինը կուլ տալով՝ ինքնաբեր կփակվեն նրա ու նրա նովելների վրա:

Բայց նախագահը թույլ չտվեց, որ լռությունը երկարի.

- Հոսանքն ամեն ինչ քշեց-տարավ: Պատահում է:

- Այդ դեպքում ես նախապես տրված հանգրվան չէի փնտրի, վախճանն ի մահ է կանխորոշված,- հակադարձեց Թյուրը:

- Ֆէվը չի էլ առարկում. վերջը վճռված է: Բայց մեջտեղում խառնել եք խորանարդիկները. իմ կարծիքով՝ անհմուտ լինելու պատճառով: Այնպես չէ՞: Թույլ տվեք ձեր ժպիտը համարել պատասխան: Դա նկատի ունենալով՝ պետք է տուգանային պատմվածք ստանանք ձեզնից: Ավելի հստակ ու ավելի կարճ: Կարծում եմ՝ ընդմիջման կարիք չկա: Սպասում ենք:

Թյուրը դառնացած ցնցեց ուսերը: Երեւում էր, որ հոգնել է. սեմից կտրվելով՝ վերադարձավ ու նստեց բուխարու մոտի իր բազկաթոռում եւ մի որպեի չափ բիբերով քրքրում էր կայծերի ու մոխրակապույտ կրակների շեղջերը:

- Դե ինչ: Քանի որ հանպատրաստից դժվար է մարդկանց մասին, քանզի նրանք կենդանի են,- նույնիսկ՝ ոչ հորինված,- ու երբեմն գործում են հեղինակային սխեմայից դուրս, իսկ երբեմն՝ նաեւ հակառակ, ստիպված եմ դիմել հաստատուն հերոսների. կարճ ասած՝ ձեզ կպատմեմ երկու գրքերի եւ մի մարդու մասին, ընդամենը մեկի. մեկին կկարողանամ կառավարել:

Վերնագիրը միասին կհորինենք վերջում, իսկ ինչ վերաբերում է իմ գիրք-կերպարների տիտղոսաթերթին, ահա դրանք. «Նոտկեր Կակազը» եւ «Քառավետարան»: Երրորդ՝ մարդկային կերպարը ոչ թե մարդ-ֆաբուլաներինն է, այլ մարդ-թեմաներինը. մարդ-ֆաբուլաները խիստ հոգսատար են հորինողի համար, նրանց կյանքում շատ են հանդիպումները, գործողություններն ու պատահականությունները, պատմվածքի մեջ ընկնելով՝ ձգում-դարձնում են վիպակ, իսկ հետո՝ նաեւ վեպ: Մարդ-թեմաները ներակա գոյություն են, նրանց անսյուժե կյանքերը հեռու են տրորված ճանապարհներից, նրանք ներառված են այս կամ այն գաղափարի մեջ, սակավախոս ու անգործունյա են. դրանցից մեկն էր իմ հերոսը, որի ողջ կյանքը ճզմվել էր երկու գրքերի արանքում, որոնց մասին հիմա կպատմեմ:

Այդ մարդը (անունը կարեւոր չէ) նույնիսկ ծնողների կենդանության օրոք որբի տպավորություն էր թողնում ու խենթի համարում ուներ: Վաղ տարիներից նվիրվեց դաշնամուրի ստեղնաշարին եւ օրեր շարունակ նոր հնչկապակցություններ ու ռիթմական քայլեր էր փնտրում: Բայց եթե որեւէ մեկին հաջողվում էլ էր լսել նրան, ապա միայն պատի ու փակ դռան ետեւից: Մի երաժշտական հրատարակիչ մի անգամ խիստ զարմացել էր, երբ ընդունելության եկավ մի նիհար պատանի ու նրան չնայելով՝ թղթապանակից հանեց նոտատետրը, որը վերնագրված էր «Լռության մեկնություններ»: Հրատարակիչը, կրծած եղունգները տետրի մեջ թաղելով՝ թերթեց, հոգոց հանեց, մի անգամ էլ նայեց վերնագիրն ու վերադարձրեց ձեռագիրը:

Այդ դեպքից շատ չանցած պատանին բանալիով փակեց իր ստեղնաշարը եւ փորձեց նոտանշանները փոխել տառերով. բայց այստեղ էլ խոչընդոտի հանդիպեց, պակաս հաղթահարելի. չէ՞ որ նա,- նորից եմ կրկնում,- մարդ-թեմա էր, իսկ մեր գրականությունն ամբողջովին հիմնված է ֆաբուլային կառուցվածքների վրա. նա չէր կարողանում կոտորակվել ու գաղափարներ ճյուղավորել, ինչպես եւ վայել է մարդ-թեմային, նա կենդանի մղում էր ոչ թե մեկից բազումը, այլ բազումից՝ մեկ: Երբեմն գրչածայրերի տուփերում հանդիպում է նաեւ չճեղքված գրչածայր. այն բոլորի պես է ու մյուսներից վատ չի սրված, բայց գրել չի կարող:

Սակայն իմ պատանին, որն, ի դեպ, այդ ժամանակ արդեն քսանհինգամյա երիտասարդ էր դարձել, չճեղքված, ամբողջական խառնվածքի համառությամբ որոշեց ուժով տիրել այդ բազմությանը. իհարկե, նա այդ ամենը այլ կերպ էր անվանում, բայց անվրեպ բնազդը մղեց ճամփորդության՝ շատերին վերափոխած բազմաբղեսացման ու բազմապատկման համընդգրկուն փորձի այդ մեթոդին: Այդ ընթացքում երիտասարդը ժառանգություն էր ստացել, եւ գնացքները նրան տարան կայրանից կայարան՝ տարալեզու եւ լաթակար աշխարհով մեկ: Գրողի թեկնածուի նոթատետրերը ուռչում էին նշումներից ու սխեմաներից, իսկ իսկական, մինչեւ վերջ տառերի մեջ թաղված գործ այդպես էլ չէր գտնվում: Բոլոր սյուժեներում, որոնց հետապնդում էր մատիտը, նա իրեն այնպես էր զգում, ինչպես զգում է մեզնից յուրաքանչյուրը հյուրանոցի համարում, որտեղ ամեն ինչ օտար ու անհոգի է՝ եւ՛ քեզ համար եւ՛ ուրիշների:

Եվ վերջապես. դա տեղի ունեցավ դեգերումների բազում ամիսներից հետո՝ նրանք հանդիպեցին. մարդը եւ թեման: Հանդիպումը տեղի ունեցավ շվեյցարական բլուրների միջեւ գտնվող Սանկտ-Հալլենի վանական

գրադարանում: Կարծես թե անձրեւոտ օր էր, ձանձրույթն իմ հերոսին բերեց սակավայցելու գրադարանի դարակների մոտ, եւ այդտեղ, անհանգստացրած գրքափոշու մեջ հայտնաբերվեց Նոտկեր Կակազը. չնայած եւ Նոտկերը ոչ մեկի հորինածը չէր, բայց հասցրել էր գոյություն ունենալ ուղիղ հազար տարի առաջ: Բացի անունից, որ անմիջապես հետաքրքրեց մեր ֆաբուլաներ հավաքողին, նրանից համարյա ոչինչ չէր մնացել, միայն մի քանի կիսապարականոն տվյալներ, որոնք դիմացել էին հազարամյակի փորձությանը. հենց դրանք էլ նրան հնարավորություն էին տալիս մոխրացածը կրկին վերածել ծաղկողի: Եվ մեր ձախորդ,- մինչ այդ,- գրողը եռանդով ձեռնամուխ եղավ Նոտկերի վերաստեղծմանը: Վանական գրքերն ու ձեռագրերը նրան պատմեցին սանկտհալլենյան երաժիշտների հնամենի, այդ ժամանակ արդեն մոռացված դպրոցի մասին: Նիդեռլանդական ձայնակարգիչներից շատ առաջ բազմաձայնության խորհրդավոր փորձեր էին անում մեկուսի, լեռների արանքում սեղմված Սանկտ-Գալլենի աբեղաները, եւ Նոտկեր Կակազը նրանցից մեկն էր. ավանդույթը նրա մասին պատմում է, թե ինչպես մի անգամ, լեռնաշուրթով զբոսնելիս սղոցի ծղրտոց, մուրճի թխկոց ու մարդկանց ձայներ է լսում, շրջվելով աղմուկի կողմը՝ երաժիշտը հասնում է կածանի ոլորանին ու տեսնում արհեստավորների, որոնք ամրացնում էին անդունդի վրա գցվելիք կամրջի գերանները: Շատ չմոտենալով եւ աննկատ մնալով աշխատողների համար՝ նա նայում ու լսում էր,- այդպես է պնդում ավանդությունը,- թե ինչպես են մարդիկ, անդունդի վրա կախված, թխկթխկացնում կացիններն ու ուրախ երգում, իսկ հետո, վերադառնալով իր վանական խուցը, նստեց գրելու "In media vita - mors"-ը *[«Մահը կյանքի մեջ» - լատ.]* խորալը: Մեր հերոսը սկսեց քրքրել գրադարանի դեղնած նոտատետրերը՝ ջանալով գտնել քառակուսի նոտանշանները, որոնք պատմում են կյանքի մեջ խրված մահվան մասին, բայց խորալը չկար ու չկար. վանահոր թույլտվությամբ նա հյուրանոցի սենյակ տարավ մի ամբողջ կույտ կիսափտած նոտաթերթեր եւ ամբողջ գիշեր փակված, իջեցված կարգավորիչի տակ, ստեղների մեջ էր խցկում սանկտհալլենցիների հնամենի երգեցողությունները: Երբ բոլոր էջերը նվագված էին, նա լարեց երեւակայությունը՝ փորձելով պատկերացնել չհայտնաբերված խորալի հնչումը: Եվ այն գիշերը երազ եկավ նրան՝ վեհաշունչ ու վշտալի դանդաղ անցում էր անում միքսոլիդիական տոնայնություններով: Իսկ առավոտյան, երբ վերադառնալով ստեղնաշարին, երաժիշտը փորձեց կրկնել երազին եկած խորալը, իր իսկ «Լռության մեկնություններ»-ում անսպասելի նմանություն գտավ

Նոտկերի «In media»-ի հետ: Ծարունակելով քրքրել Սանկտ-Հալլենի ձեռագիր տրցակները՝ մեր հետազոտողը պարզեց, որ Կակազ կամ Balbulus տարօրինակ մականունով տարեց երաժշտություն հորինողը ողջ կյանքում ջանասիրաբար բառեր ու վանկեր է ընտրել՝ երաժշտությունը տեքստավորելու համար: Ուշագրավ է, որ ակնածանք ունենալով հնչակապակցությունների հանդեպ՝ նա ըստ երեւույթին կատարյալ անտարբերությամբ էր վերաբերվում այսպես կոչված հողաբաշխ մարդկային խոսքին: Ստուգապես Նոտկեր Կակազին պատկանող գրառումներից մեկում նշվում էր. «Երբեմն ինքս ինձ մտածում էի, թե ինչպես ամրագրեմ հնչյունների իմ կապակցությունները, որպեսզի դրանք, թեկուզեւ բառերի գնով, խուսափեն մոռացությունից»: Ըստ երեւույթին, բառերը նրա համար ընդամենը գույնզգույն դրոշակներ էին, մտապահման խորհրդանշաններ, որոնք հիշողության մեջ ամրագրում են երաժշտական քայլերը. երբեմն նրան ձանձրացնում էր բառեր ու վանկեր ընտրելը, եւ այդ ժամանակ, հապաղելով որեւէ le alliluja-ի վրա, այն անց էր կացնում տասնյակ միջնադադարներով՝ իմաստազրկելով ոճը հանուն այլ մթին իմաստների: Այդ վարժությունները, այսպես կոչված՝ ատեկստալիսի ոլորտում, հատկապես էին հետաքրքրում մեր հետազոտողին. Մեծն Կակազի նոտանշանների հետապնդումը նրան նախ հասցրեց Բրիտանական թանգարանի գրադարան, ապա՝ Միլանի սբ. Ամբրոսիոսի գրապահոց: Հենց այդտեղ էլ տեղի ունեցավ երկրորդ հանդիպումը՝ երկու գրքերի հանդիպումը, որոնց համար քիչ էր սեփական ճակատագիր ունենալը,- ինչպես նրանց թույլ է տալիս ասացվածքը,- որոնք իրենք էին ցանկացել դառնալ ճակատագիր: Սանկտհալլենցու մասին իր գրքի համար նյութերի անխոնջ որոնումների ընթացքում մեր հերոսը մի անգամ մտավ միլանցի հնագրավաճառներից մեկի կրպակը. հետաքրքիր ոչինչ չկար, անպետքություն, սակայն ցանկանալով փոխհատուցել մի ամբողջ ժամ իր շուրջը պտտվող կրպակատիրոջից խլած ժամանակը, ցույց տվեց առաջին իսկ պատահած գիրքը. այ սա՛: Ու բախտաբերի գնված գիրքն անմիջապես հայտնվեց նույն պայուսակում՝ նրա աշխատանքի հետ, որի տարանջատ սեւագիր էջերը դանդաղ գիրք էին դառնում: Այնտեղ, խլափակ պարկում, նրանք պառկել էին միասին, ինչպես ամուսինն ու կինը, թերթը թերթին՝ «Նոտկեր Կակազն» ու «Քառավետարանը» (բախտաբերի գնված տեքստը, պարզվեց, չորս ավետարանիչների հնամենի լատինական տառեր հագած հնագույն պատմությունն էր): Մի անգամ, ինչ-որ ազատ պահի, ցրված նայելով նոր առած գիրքը, ատեկստալիսի իմ հետազոտողը ար-

դեն ուզում էր մի կողմ դնել այն, բայց ուշադրությունը գրավեց թանաքով նշումը, որ տասնյոթերորդ դարի ձեռագրով արվել էր գրքի լուսանցքում. «Տ - սm»:

- Անհեթեթություն,- իր անկյունից քրթմնջաց Ֆեվը:

Ավետարանը թերթող մարդը սկզբում մոտավորապես նույն կերպ էր մտածում: Բայց նրան հետաքրքրեց «Տ»-և «սm»-ից բաժանող գծիկը: Հայացքը սահեցնելով վուլգատայի լուսանցքներով՝ նկատեց թանաքով արված էլի մի գծիկ, որը կոնտեքստից բաժանում էր եւս երկու տուն. «Դա է իմ սիրելի Որդին, որին հավանեցի» եւ այլն, եւ այլն «...նա ոչ պիտի հակառակի եւ ո՛չ էլ պիտի աղաղակի. հրապարակներում նրա ձայնը ոչ մեկը չպիտի լսի»: Ասես ինչ-որ տեղ աղոտ մի բան էր կանխատեսվում. կարդացողը լարվեց՝ էջ էջի ետեւից ուշադիր խուզարկելով լուսանցքները. երկու գլուխ անց եղունգով արված աննկատելի նշում կար՝ «Տե՛ր, Դավթի Որդի, աղջիկս չարաչար դիվահարվում է»: Հետո կարծես մաքուր լուսանցքներ էին: Բայց «Լռության մեկնությունների» հեղինակը խիստ հետաքրքրված էր, որպեսզի հրաժարվեր հետագա որոնումներից. գրքի էջերը պահելով լույսի տակ՝ նա ինչ-որ մեկի եղունգով արված մի քանի արդեն կիսահարթված նշաններ էլ գտավ, եւ ամեն անգամ դրանց դիմաց գրված էր. «Իսկ երբ նա ամբաստանվում էր քահանայապետների ու ծերերի կողմից, ոչինչ չպատասխանեց: Այն ժամանակ Պիղատոսը նրան ասաց. «Չե՞ս լսում, ինչքան դրանք քո դեմ են վկայում»: Եվ նրան չպատասխանեց եւ ոչ մի բան, այնպես որ կուսակալը շատ զարմացավ» կամ՝ «Իսկ Յիսուս, ցած նայելով, մատով գետնի վրա գրում էր՝ նրանց ուշադրություն չդարձնելով», երբեմն գծիկները միայն խոշորացույցով էին երեւում, երբեմն կտրուկ ընդգծում էին տունը: Դրանք սովորական գծիկից կարճ էին ու ընդգրկում էին միայն երեք-չորս բառ, օրինակ, «Նա հեռանում էր անապատ տեղեր...» կամ «Հիսուսը լուռ էր», կամ էլ երկարում էին տների ողջ շղթայով՝ առանձնացնելով ամբողջ դրվագներ ու պատմություններ, եւ ամեն անգամ դա պատմություն էր անպատասխան մնացած հարցերի մասին, լռող Հիսուսի մասին: Այն, ինչի մասին Սանկտ-Հալլենի նոտանշաններն ասես կակազելով ու ընդհանրական էին խոսում, այստեղ նշված ու ընդգծված էր՝ բառերի տակով՝ մինչեւ վերջ: Հիմա արդեն պարզ էր. հնավանդ գրքի դեղին լուսանցքներում իրենց ասած չորսի կողքին, բաց ու մաքուր գրքային լուսանցքներից ավետում էր բառերի կարիք չունեցող հինգերորդ Ավետարանը. ըստ լռության: Հիմա հասկանալի էր նաեւ թանաքով գրված Տ-սm-ը. դա ընդամենը սեղմված Silentium-ն էր *[լռություն -*

լատ.]: Կարելի՞ է, արդյոք, խոսել լռության մասին՝ դրանով իսկ չխախտելով այն, կարելի՞ է մեկնաբանել այն, ինչը... մի խոսքով, գիրքը սպանեց գրքին, մի հարվածով, ու ես չեմ սկսի նկարագրել, թե ինչպես էր վառվում իմ մարդ-թեմայի ձեռագիրը: Ասենք, ճիշտ այնպես, ինչպես որ...

Թյուդը կտրուկ շրջվեց Ռարի կողմը: Բայց նա չընդունեց հայացքը. ափով աչքերին հովանի արած՝ կատարելապես անշարժ նստել էր եւ ասես ոչ լսում էր, ոչ ընկալում:

- Իսկ ինչ վերաբերում է վերնագրին,- վեր կացավ Թյուդը,- ապա կարծում եմ այստեղ հարմար կլիներ, թերեւս...

- «Ինքնակենսագրություն» բառը,- հարվածը վերադարձնելով՝ կտրեց Ռարը: Թյուդը աքլորացած տնկեց գլուխը եւ արդեն ուզում էր բացել բերանը, բայց ձայնը խլացավ խնդմնդոցից, խեղդվող խռխռոցից, կչկչոցից ու ծվծվոցից բաղկացած սուր ծիծաղի մեջ: Միայն երեքը չէին ծիծաղում՝ Ռարը, Թյուդը եւ ես:

Մտահղացողներն իրար ետեւից ցրվում էին: Առաջիններից մեկը դուրս եկավ Ռարը: Ես ուզում էի հետեւել նրան, բայց ծանոթ սեղմումը, արմունկս բռնելով, կանգնեցրեց ինձ.

- Երկու-երեք հարց,- եւ ինձ մի կողմ քաշելով՝ շաբաթ օրերի տերը սկսեց մանրամասն հարցուփորձ անել իմ տպավորությունների մասին. առանց մտածելու ու կտրուկ էի պատասխանում՝ ավելի շատ փորձելով ազատվել, որ հասնեմ Ռարի ետեւից: Վերջապես մատներն ու հարցերը հետ քաշվեցին, ու ես նետվեցի հասնելու հեռացածին: Լապտերների դեղին ծածկի տակ տեսա ինձնից հարյուր քայլ առաջ շարժվող թիկունքը: Ինչակտուր հասնելով ետեւից՝ չէի նկատել գնացողի առջեւից մայթին խփվող ձեռնափայտը.

- Կներեք, որ անհանգստացնում եմ...

Մարդը, որին Ռարի տեղն էի դրել, ինձ դարձրեց դեմքն ու ու լուռ վրաս հառեց անսպասելի շողացրած կլոր ապակիներով հայացքը:

Շփոթվելով՝ ինչ-որ անկապ բան մրմնջացի ու հետ թռա: Այդ ամբողջ շաբաթվա ընթացքում ինձ տանջող հարցը ստիպված էր սպասել մոտակա շաբաթ օրվան:

4

Հաջորդ շաբաթ օրը մտահղացումների բացահայտման հերթը Դյաժինն էր: Ես դատարկ գրադարակների սենյակ մտա հենց այն պահին, երբ պատմությունը պետք է սկսվեր: Ցանալով թաքնվել ընդառաջ ելած

կլոր ակնոցից՝ բազկաթոռս քաշեցի քարացած մարդկանց սեւ ստվերները քաշքշող բուխարու մոտ, եւ անմիջապես անձայն ու անշարժում դարձա, ինչպես բոլորը:

Դյաժը, շեկ մազերի ստեւը դողացնելով, կզակը հենած ձեռնափայտի գլխիկին, որով երբեմն կետ-գծիկներ էր թխկացնում, սկսեց պատմությունը:

- Էքսեր. այդպես էին կոչում կամ երբեւէ կկոչեն մեքենաները, որոնց մասին այսօր կփորձեմ պատմել: Ճիշտ է, դրանք գիտության մեջ հայտնի էին ավելի բարդ ու երկար անվանումներով՝ դիֆերենցիալ գաղափարաշարժիչներ, էթիկական մեքենասարքավորումներ, էքստերիորիզատորներ ու չեմ հիշում էլ ինչպես. բայց ամբոխը, սեղմելով ու կրճատելով անունները, դրանց պարզապես ասում էր էքս: Բայց ամեն ինչ՝ հերթով:

Ամսաթիվը, երբ էքսերի մասին գաղափարը առաջին անգամ հայտնվեց մարդու գլխում, կարելի է կորսված համարել: Կարծես թե քսաներորդ դարի կեսերին էր կամ դրանից էլ շուտ: Մեծ եւ բավական աղմկոտ ու եռուզեռով լի քաղաքի երկու փողոցների հատվածքում մի արեւոտ ու քամոտ առավոտ խանութի ցուցափեղկի առաջ իրար ձայնախեղդ անելով իրենց ապրանքն էին գովում կրծկալ վաճառող մի քանի կին: Քամին ապրանքը խլում էր նրանց ձեռքից, քաշքշում կապիչներն ու գնդաձեւ փքում ժանեկազարդ բատիստը: Մարդիկ հրմշտվելով արագ անցնում էին նրանց կողքով՝ ուշադրություն չդարձնելով ո՛չ քամու չարություններին, ո՛չ վաճառողների պնդերեսությանը: Միայն մեկը, որ հենց այդ ժամանակ կտրում էր դղրդացող փողոցը, հանկարծ կանգ առավ ու սեւեռվեց օդում փողփողացող գնդակերպերին: Վաճառող կանայք, նրա հայացքը նկատելով, գոռգոռացին ու կանչեցին մայթից՝ իմ մո՛տ - նրա մո՛տ չէ - իմ մո՛տ - նրանից չվերցնե՛ք - իմը էժա՛ն է: Մի ավտոմոբիլ, համարյա տակը գցելով սեւեռված հետիոտնին, կտրուկ կանգ առավ, ու վարորդը սկսեց գոռալ ապակու միջով՝ սպառնալով, որ կտրորի: Բայց մարդը աչքերն արագ կտրեց բատիստից ու կրունկները՝ ասֆալտից, եւ ոչ տրորվելով, ոչ էլ բլիթ դառնալով՝շարունակեց ճանապարհը: Եվ եթե մեր անցորդին ուրիշի տեղ դրած եւ արագ մոտեցած ու նույնքան արագ էլ հետ թռած ոմն խենթ պատանի կարողանար աչքերի միջով տեսնել այն, ինչ դրանցից այն կողմ էր, ողջ կյանքի համար մեկընդմիշտ կհասկանար՝ բոլորը միշտ բոլորին ուրիշի տեղ են դնում:

Բայց ո՛չ պատանին, ո՛չ վարորդը, ո՛չ էլ վաճառող կանայք, իհարկե, չտեսան ու չկասկածեցին, որ հենց այդ վայրկյանին ու հենց այդ գլխի մեջ

է ցատկել էքսերի մասին գաղափարը: Խորհրդավոր անցորդի գլխում զուգորդումները, ցրիվ ու անանուն սեւագիր թերթիկների պես, անցնում էին այսպիսի շարքով. «Քամի - արտաքին ծեւերի խզում ու լցարկում - եթերային քամի - ներքին ծեւերի խզում, առարկայացում, լցարկում. մտքեր - վիբրացիաներ, վիբրագրեր գանգատուփում. Եթե եթերային քամու հարվածի տակ, ապա ամբողջ «ես»-ը՝ դեպի դուրս, աշխարհ,- ու գրողի ծոցը երիզակապերը»: Հետո զուգորդումների թռիչքը հայտնվեց ամրակապերի մեջ. գործեցին տրամաբանությունն ու տարիներով կուտակված փորձը.

«Պետք է համայնացնել հոգեկերտվածքները. Եթե օդի հարվածը կարող է գլխարկը թռցնել գլխից ու քշել ինձնից առաջ, ինչո՞ւ եթերի կառավարվող հոսքով գանգատուփից չթռցնել գլուխներում պահված այդ բոլոր հոգեկան բովանդակությունները. Ինչո՞ւ, գրողը տանի, մեր բոլոր in-երը *[ներսում - լատ.]* չշրջել ex-ի *[դեպի դուրս - լատ.]»:*

Էքսերի գաղափարով հանկարծակիի բերված մարդը իդեալիստ էր, երազող. նրա փոքր-ինչ խայտաբղետ ու անկազմակերպ խորագիտությունն անկարող էր իրացնել գաղափարները, երազանքն առնել լծի տակ: Լեգենդն ասում է, որ իր հանճարեղ ուրվագծերը մարդկանց թողած այդ անանունը մահացել է կիսաքաղց ու անհայտության մեջ, եւ նրա բոլոր բանաձեւերն ու գծագրերը, մեծամասամբ միամիտ ու գործնականում անճարակ, երկար ձեռքից ձեռք են անցել, մինչեւ որ վերջապես հայտնվել են ինժեներ Թուտուսի մոտ: Թուտուսի համար մտածողությունը նույնանում էր մոդելավորման հետ, դեմ առնում իրերին, ինչպես քամին՝ առագաստներին. Դեռ պատանության տարիներին, հետաքրքրվելով գաղափարաշարժման հին սկզբունքով, այն միանգամից կոնկրետացրել էր գաղափարաշարժիչի մոդելում, այսինքն մեքենայի մեջ, որը մկանի բնախոսական լարումը փոխարինում է դրսից՝ մեքենայից ստացված մեքենայական ազդեցությամբ: Դեռեւս Անանունի սեւագրերին ծանոթանալուց առաջ Թուտուսը համարձակ ու ճշգրիտ փորձերով մշակել ու ավարտին էր հասցրել գորտի մկանների կծկման հնագույն փորձերը եւ աչքն ընդգրկող թույլ մկանային ցանցը ներառել իր գաղափարաշարժիչի շղթայի մեջ: Թուտուսն աչքին ստիպում էր շարժվել այս կամ այն կողմը, նույն մեքենայի օգնությամբ սեւեռում ցանկացած առարկայի վրա, արցունքների հոսք էր առաջացնում, կոպերի բարձրացում եւ իջեցում: Սակայն «արհեստական դիտողի», ինչպես արտահայտվում էր Թուտուսը, ստեղծման այդ բավական պարզունակ փորձերը սակավ արդյունավետ էին ու վատ էին ամրագրում երեւույթը. Բանն այն է, որ նյարդային կենտ-

րոններից եկող բնախոսական նյարդավորումը շարունակում էր գործել՝ մի տեսակ նստելով մեքենայից ստացվող արհեստական նյարդավորման վրա: Անանունի մտահղացումների հետ ծանոթանալը միանգամից ընդլայնեց Թուտուսի աշխարհայացքն ու փորձերի թափը. նա հասկացավ, որ պետք է մեքենայով ընդգրկել մարդու հենց այն շարժումներն ու մկանային կծկումները, որոնք հստակ սոցիալական նշանակություն ունեն: Անանունի գրառումները խոսում էին այն մասին, որ գործողություններից բաղադրվող իրականությունը «չափազանց շատ բաղադրիչներ ունի ու չափազանց քիչ է որպես միագումար»: Միայն տարանջատ գործող նյարդային համակարգերից նյարդավորումն առնելով ու տալով միակ՝ կենտրոնական նյարդավորիչին,- սովորեցնում էր Անանունը,- կարելի է ծրագրված կազմակերպել իրականությունը՝ մեկընդմիշտ վերջ տալով «ես»-ի տնայնագործությանը: Կամքի ազդակները փոխարինելով բարոյականության ու տեխնիկայի վերջին նվաճումների վրա կառուցված, այսպես կոչված, էթիկական մեքենաներից որեւէ մեկի ազդակներով՝ կարելի է հասնել նրան, որ բոլորը տան ամեն ինչ, այսինքն հասնել լիակատար «ex»-ի: Թուտուսն առաջ էլ, կատարելագործելով իր գաղափարաշարժիչը, որի կանխագուշակված լինելու մասին ոչինչ չգիտեր, հասցրել էր նրա գործառնության շրջանակի մեջ առնել հիմնական՝ ուղեղի կենտրոնախույս համակարգի հետ կապված մկանները: Բայց մի բավական տհաճ դիպված երկար ժամանակով կանգնեցրեց ու խճճեց նրա աշխատանքը: Այսպես պատահեց: Թուտուսին վիճակվել էր ծանոթանալ մի երեւելի հասարակական գործչի, մեծ կամքի եւ իշխանատենչության տեր մարդու հետ, որը, սակայն, տառապում էր մի տարօրինակ ու բարդացած հիվանդությամբ. սկզբում դա սովորական տեղային կաթված էր, որը հետո տարածվեց ամբողջ մարմնում եւ անշարժացրեց կմախքի կողմից կառավարվող մկանային համակարգը: Հիվանդությունն աստիճանաբար մկանազերծում էր այդ մարդուն. ձեռքի տարրական շարժումը, քայլը, բառը օրեցօր ավելի ու ավելի մեծ ջանքեր էր պահանջում: Մարմինը թուլանում էր, մինչեւ որ այդ մարդու ոգին կաշվի ու ճարպի՝ ներսից կապված պարկի պես մի բան դարձավ՝ թարշամած ու համարյա անշարժ: Ելք փնտրելով՝ դժբախտը դիմեց Թուտուսի օգնությանը, եւ նա ձեռնամուխ եղավ շարժունակությունն արթնացնելուն: Նյարդավորիչի ստեղնաշարն ամեն օր ձգելով ու թուլացնելով հիվանդի մկանները՝ մարմնին ստիպում էր քայլել պատից մինչեւ շեմն ու հետ, շարժել ձեռքերն ու արտասանել իր տկտկացրած բառերը: Բայց հիվանդին տրված գործունակությունը խիստ

սահմանափակ էր. քարշ տալով հաղորդալարերի գալարները՝ քաղգործչի մարմինը շարժվում էր ասես սանձապարանով կապված, հրումներով ու մեռած՝ հետեւելով մեքենայի ստեղներին թխկոցին: Ճիշտ է, հիվանդը առանց մեքենայի օգնության կարողանում էր նաեւ դանդաղ ու դժվար գրել, եւ այդ խզբզոցը հիմք էր դառնում հաջորդ սեանսները ծրագրելու համար: Մի անգամ, կյանք վերադառնալու երեքշաբաթյա փորձերից հետո, կաշվի ու ճարպի պարկի վերածված մարմինը, կախկխված մատները շարժելով, դրանց արանքը խցկած գրաֆիտով թղթին խզմզեց. «Ինքնասպանե՛ք»: Օրվա ծրագիրը մտմտալով՝ Թուտուսը որոշեց այն դարձնել յուրատեսակ experimentum crucis *[փորձություն խաչով - լատ.]*,- նույնիսկ այդ, թվում է՝ կատարելապես մկանազրկված օբյեկտի՝ մեխանիկական նյարդավորիչով արած աշխատանքը համենայնդեպս փչացնում էին հաշվարկման չտրվող կամքի խզբզանքները, որոնք խճճվում էին մեքենայի ճշգրիտ պարտիտուրայի մեջ: Դժվար էր գուշակել կամային դիմադրության բոլոր հնարավորությունները, եւ ինքնասպանության գիտափորձում հարկ էր սպասել մեքենայի ու մարդու կամքերի առավել կտրուկ, ծայրահեղ բախման պահին: Փորձարարն այսպես արեց. ատրճանակի փամփուշտից դատարկելով վառոդը եւ մտնելով իր կենդանի օբյեկտի տեսադաշտ, ցույց տվեց փամփուշտն ու հենց այդտեղ, նրա աչքի առաջ, դրեց պողպատե թմբուկի բնիկում, բարձրացրեց հրահանն ու մահվան գործիքը դրեց անշարժ ցցված մատների արանքը: Հետո սկսեց աշխատել մեքենան. ինքնասպանվողի մատները, ցնցվելով, բռնեցին ատրճանակի կոթը. ցուցամատը սխալ ռեֆլեքս տվեց. Թուտուսը մոտեցավ ու շտկեց՝ համառող մատը ամուր սեղմելով ձգանի կորին: Ստեղնի եւս մեկ սեղմում, ու ձեռքը, ցնցվելով, ծալվեց, եւ,- հաջորդ շարժումով,- փողը՝ քունքին: Թուտուսը նորից մոտեցավ օբյեկտին, ուշադիր նայեց. դեմքի մկանները չէին դիմադրում, ճիշտ է, աչքերը դողացնում էին թարթիչներն ու բիբերի կետերը լայնացել, դարձել էին սեւ շրջանակներ: «Շատ լավ է»,- քրթմնջաց Թուտուսն ու շրջվեց, որ սեղմի վերջին ստեղնը, բայց՝ տարօրինակ բան. ստեղնը չէր ենթարկվում: Փորձարարն ավելի ուժեղ սեղմեց, եւ անմիջապես խուլ ճթթոց լսվեց փորձարկվողի քունքի մոտ: Թուտուսը ստուգեց մեքենան ու նորից իջեցրեց ազատ շարժվող ստեղնը: Հետո պտտեց անջատիչները, եւ հանկարծ մարդկային պարկը անհասկանալի ինքնիրավչությամբ բազկաթոռից սահեց ցած, թափահարեց վերջույթները թռիչքի պահին գնդակահարված թռչունի պես ու խփվեց գետնին: Թուտուսը նետվեց օբյեկտի կողմը. մեռած էր:

Անանունի սեւագրերը, որոնք մեր փորձարարին, ինչպես ասացի, վերադարձրել էին իր փորձերին, նախեւառաջ ստիպեցին հրաժարվել հաղորդալարերի, սեղմակների ու ամրակների հնաոճ համակարգից, որոնցից այնքա՛ն երկար էր կառչել մատերիայի պոռթկումներից վախեցած մոդելավորող միտքը՝ ձգտելով ծրագրել հաղորդիչի եւ ընդունիչի կապի անմիջականությունը: Անհայտ երազողի խունացած տողերը թերթելիս Թուտուսն առաջին անգամ զգաց այն «եթերային քամու» շունչը, որի մասին երազում էր նախակարապետը: Ես շատ վատ եմ գլուխ հանում էներգետիկայից, որպեսզի հետեւեմ Թուտուսին նրա նոր անհաղորդիչ գաղափարաշարժիչների կառուցվածքային մանրամասներում: Բայց գյուտարարն էլ շուտով մոլորվեց ողջ լայնքով ու երկայնքով ուսումնասիրած էներգետիկական տեխնիկայի ասպարեզում. բանն այն է, որ բնախոսական նյարդավորումը դիմադրում էր հաղորդալարերից հանված ու եթերում ավելի հաստատուն ցրած ազդակներին, եւ հուսահատված Թուտուսը բազմաթիվ կրկնական փորձերից հետո վերջապես հասկացավ, որ միայն մկանային համակարգը նյարդային համակարգից մեկընդմիշտ մեկուսացնելով, իրարից կտրելով է հնարավոր հասնել արարքների, այսպես կոչված՝ վարքի լիակատար ընդգրկմանը գաղափարաշարժիչում: Հենց այդ ժամանակ էլ նրան տեղեկություններ հասան իտալացի մանրէաբաններ Նետետտիների գիտափորձերի մասին: Նետետտի-ավագը, Թուտուսի փորձերից շատ առաջ, հայտնագործել էր այսպես կոչված գլխուղեղի մակաբույծներին: Մինչ այդ էլ գիտությունը կիսով չափ հաստատել էր միելոֆագերի՝ տարրերի գոյությունը, որոնք յուրացնելով ծայրամասային նյարդերի փափուկ մասը՝ նպաստում էին այսպես կոչված նեվրիտի զարգացմանը: Բայց կարելի է համարել, որ Նետետտին, որը օգտվում էր մանրադիտարկման բոլոր միջոցներից եւ հատկապես հեմոտակսիսի մեթոդներից, առաջին անգամ բախվեց չափազանց բարդ, հաճախ գերմանարադիտակի ուժեղագույն ճառագայթից խույս տվող ուղեղի կենդանական աշխարհի գոյությանը: Ավելին, նմանակելով համբերատար այգեգործներին, ինչպես ինքն էր սիրում ասել, Նետետտին արհեստականորեն ուղեղային մանրէների տարբեր տեսակներ ու տարատեսակներ էր ստանում իր հավաքածուի սովորական դոնդողանյութի խառնուրդների տեսքով: Նա չէր կարող իր ապակե մանրէագործարանում անել այն, ինչ ժամանակին անում էր Մենդելը ծաղկափոշու հետ, նախ, որովհետեւ մանրէները անհամեմատ փոքր էին ծաղկափոշու փոշեհատիկներից, երկրորդ՝ խաչասերումն այստեղ անզոր էր միկոօրգանիզմների անսեռու-

թյան պատճառով, բայց նա մի ուրիշ առավելություն ուներ. օրինակ, այսպես կոչված Ռանվյեի նեղվածքներում՝ նյարդաթելիկների առավել նուրբ հատվածներում տեղավորված մանրէները մեկ օրվա ընթացքում համարյա նույնքան սերունդ էին տալիս, որքան, ըստ համաշխարհային պատմության, մարդկությունը՝ մեր ողջ դարաշրջանի ընթացքում: Այսպիսով, ունենալով ավելի քան սեղմ ժամանակ, ինչպես արտահայտվում էր Նետետտին, փորձարարը, աստիճանաբար փոխելով ջերմային ու քիմիական ազդեցությունը մանրէների աշխարհում կարող էր հասնել այն արդյունքներին, ինչը, ասենք, վարժեցված կենդանիների հետ աշխատելիս կպահանջեր հազարամյակներ: Կարճ ասած, նրան հաջողվեց աճեցնել ուղեղի մակաբույծների հատուկ տեսակ, որը նա կոչեց վիբրոֆագեր: Հատուկ ներարկիչ ասեղով ուղեղի թաղանթների տակ մտցված վիբրոֆագերը անմիջապես ու սրընթաց բազմանալով, ինչպես որդերը մրգատու ծառերի վրա, հարձակվում էին նյարդերի ճյուղավորումների վրա, կուտակվելով գլխավորապես ուղեղի կեղեւից նրանց դուրս գալու կետերում: Վիբրոֆագերը ոչ մակաբույծներ են, այդ բառի ուղիղ իմաստով, ոչ փտամանրէներ,- թափանցելով նեյրիլեմայի մեջ, այդ փոքրիկ գիշատիչները խժռում էին ոչ թե նյութը, այլ էներգիան, այսինքն սնվում են վիբրացիաներով, նյարդային բջիջների էներգետիկ լիցքերով: Խցանելով նյարդային էներգիայի բոլոր ելքերը, փակելով ուղեղի՝ դեպի աշխարհ բացվող բոլոր պատուհանները, այդ մանրէները որսում էին ուղեղային ազդանշաններն ու լիցքերը՝ իրենց փոքրիկ մարմինների շարժման ընթացքում վերամշակելով նյարդային ալիքների վիբրացիաները: Այդ հայտնագործությունը Նետետտի-ավագին թույլ տվեց վերջապես ձեռնամուխ լինել այն փորձին, որին պատրաստվում էր ողջ կյանքում: Դուք պետք է իմանաք, որ եզան վիզ ու ներքինու ձայն ունեցող այդ մարդը ողջ կյանքում մի միտք էր փայփայում՝ փորձարարական հիմնավորում տալ, թվում է, թաղված ու մոռացված «բնածին գաղափարների» մասին փիլիսոփայական լեգենդին: «Բավական է առաջին զգացողությունները շրջանցելով՝ նորածին ուղեղին ուղարկել իմ վիբրոֆագերի բանակը,- մտածում էր Նետետտին,- եւ նրանք, չվնասելով ուղեղի նյութական սուբստանցներն ու ճյուղավորումները, ներս չեն թողնի նյարդային հաղորդակներով ուղեղ թափանցող աշխարհը. ընդսմին, պետք է միայն հնարավորինս անընկալունակ դարձնել շարժողական նյարդերը, հատկապես արտաբերման ապարատը,- եւ այդ ժամանակ հոգին մեզ կպատմի իր ideae innatae-ն *[բնածին գաղափարները - լատ.]»:*

Այդ դաժան խենթը (խենթերի մեծ մասը դաժան է), որ հայտնագործել էր աներեւութությունները, ինքը կույր էր ակնհայտի հանդեպ. հավատալով Դեկարտի զառամ ուրվականներին՝ նա վտանգավոր փորձեր սկսեց երեխաների վրա՝ իր լաբորատորիային կից պատվաստման կետում: Արդյունքը անհեթեթ ու «զարհուրելի», ինչպես գրում էին ժամանակի թերթերը, գործընթացն էր: Ծեր գիտնականին մեղադրում էին տասնյակ երեխաների մահվան մեջ. Փորձարանում սկսելով՝ նա վերջացրեց բանտում: Զոհերի արյունով լվացված ու արատավորված մանրէաբանի աշխատանքները տեւական ժամանակով ընդհատվեցին ու մոռացվեցին:

Եվ Նետետտի-կրտսերը, որը ցանկանում էր մաքրել հորից ժառանգած անունը, ակամա սկսեց փորձեր անել մի տեսակ հակառակ կողմից. հայրը ձգտում էր խցել ուղեղի մուտքերը, որդին ձգտում էր մանրէների կենդանի խցաններով փակել ուղեղի բոլոր ելքերը: Նետետտի-կրտսերը, որի վրա ճնշում էր հորը խայտառակած արարքը, ասես ցանկանում էր մեկընդմիշտ վերջ տալ բոլոր արարքներին: Թվում էր՝ չկա մեկը, որն ավելի օտար լիներ Անանունի գաղափարներին, որը ուսուցանում էր իրականությունը հարստացնել գործողություններով, բայց դրա հետ մեկտեղ, դա այն մարդն էր, որն անհրաժեշտ էր Անանունի գաղափարներն իրականացնելու համար:

Երիտասարդ Նետետտին շուտով վիբրոֆագերի նոր տարատեսակ ստացավ, որը մակաբուծություն էր անում միայն նյարդային ցանցի շարժողական համակարգի վրա՝ մի տեսակ տեղավորվելով կամքի ու մկանի միջեւ: Բայց համառ հետազոտողի համար դա քիչ էր. ուսումնասիրելով քիմիական գործընթացները շարժողական նյարդաթելերի ներսում՝ Նետետտին համարյա անորսալի տարբերություն գտավ առանձին նյարդային ցողունների հեմոտաքսիսների միջեւ: Հենց հետազոտողի համար էլ անսպասելի պարզվեց մի ապշեցուցիչ փաստ. մարդու ինքնաբեր շարժումները կառավարող թելերը մի փոքր այլ քիմիական ռեակցիաներ էին տալիս, քան սիմպատիկ համակարգի եւ ընդհանրապես կամային ջանքի ոլորտից դուրս թողնված թելերը: Ծերուկ Նետետտին, որը սիրում էր հին փիլիսոփայական սխեմաները, երեւի ջանար փորձարարական ճանապարհով հիմնավորել վաղուց մերժված կամքի ազատության մասին ուսմունքը, բայց որդին, որը օտար էր բնազանցական վերհուշերին, ավելի հեռուն գնաց՝ որեւէ սխեմայի ուշադրություն չդարձնելով, օգտվելով հեմոտաքսիսի նույն մեթոդից՝ նա վիբրոֆագերին հրապուրեց-բերեց այսպես կոչված կամայական նյարդակալման համակարգ, եւ երբ նոր ենթա-

տեսակի հատկություններն ամրագրվեցին, այդ յուրահատուկ միկրոկուլտուրան կոչեց ակցիոֆագեր կամ, ինչպես ինքն էր սահմանել հետագայում, «փաստեր խժռողներ»: Հիմա արդեն, չվախենալով բանտում փտելու հեռանկարից, կարելի էր «փաստեր խժռողների» կուլտուրաները պատվաստել նյարդային համակարգի ֆիբրիլներին: Սակայն հոր ճակատագրի մասին հիշողությունը Նետետտի-կրտսերին ավելի զգուշավոր էր դարձնում արարքների ոլորտում. Անցնելով ճագարներից ու ծովախոզուկներից homo sapiens *[մարդ բանական - լատ.]* սովորական ճանապարհը՝ նա sapiens-ի առաջ վարանեց:

Մի անգամ երեկոյան խորհրդածությունների ժամանակ մանրէաբանին զեկուցեցին հեռվից եկած մի մարդու մասին, որը հանդիպում էր խնդրում: «Ներս հրավիրեք»: Աշխատասենյակի շեմն անցնելով՝ այցելուն արագ,- երեք երկար քայլով,- հասավ կարճամարմին իտալացուն, իր բարակ ու կառչուն մատների մեջ առավ նրա թմբլիկ ձեռքը եւ ատամնալիցքերը վերեւից Նետետտիի զարմացած դեմքին շողացնելով՝ ասաց.

- Թուտո՛ւս: Ինժենե՛ր: Դուք հողմաղացի թեւերն եք, իսկ ես՝ քամին, աղունը՝ կիսովի: Համաձա՞յն եք:

- Ի՞նչ աղուն,- ապշեց Նետետտին՝ փորձելով դուրս պրծնել ձեռքը սեղմած մատներից:

- Մարդկայի՛ն: Բնականաբա՛ր: Ես նստեմ,- եւ հյուրը երկար, ոսկրոտ մարմինը տեղավորեց բազկաթոռի մեջ:- Տվեք ինձ ձեր մանրէները, իսկ ես ձեզ՝ իմ եթերային քամին, որ ձգում ու թուլացնում է փչում մկանների մեջ, եւ մենք վերստին կկառուցենք ողջ մարդկային իրականությունը, վերից վար, հասկանո՞ւմ եք: Մենք թունել էինք փորում տարբեր ծայրերից, եւ ահա հանդիպեցինք. քլունգ՝ քլունգի: Ես վաղուց եմ հետեւում ձեր աշխատանքներին, չնայած հրապարակումների հարցում ժլատ եք: Ես էլ եմ ժլատ: Բայց համոզված եմ. եթե ձեր ամեն ինչը միացնեք իմ ամեն ինչին, նրանք շուռ կտան ամեն ինչ: Ահա սխեման,- Թուտուսը մոտ քաշեց հետը բերած պորտֆելը:- Բայց՝ ex-ը in-ի դիմաց: Դե՛, ցույց տվեք ձեր մանրէները:

- Դրանք այնքան էլ հեշտ չէ տեսնել,- փորձեց կատակով գլուխն ազատել հանկարծակիի եկած Նետետտին:

- Դրանց իմաստը տեսնելն ավելի դժվար է: Բայց, գիտե՞ք, ես տեսնում եմ՝ հստակ ու լիովին:

- Այստեղ վտանգ կա,- տատամսեց մանրէաբանը:

- Իմ վրա եմ վերցնում,- պորտֆելը սեղանին խփեց Թուտուսը,- ի գո՛րծ: Ահա այն մկանների ցանկը, որոնք պետք է ազատագրել նյարդա-

յին համակարգից: Բուսական գործընթացների նյարդավորումը, հոգեկան ինքնաբերությունների համակարգից որոշ բաներ երեւի կարելի է թողնել մարդկանց: Մնացածը՝ եթերային քամու հարվածի տակ. ես բոլոր թիակներն ու հողմաղացի թեւերը կպտտեմ որ կողմն ուզեմ: Օ՛, իմ էքսերը մաքուր աղուն են տալիս:

- Բայց փող է պետք:

- Տեղ ու դադար չի լինի: Կտեսնե՞ք:

Յուրատեսակ համաձայնություն կնքվեց:

Եվ դրանից կարճ ժամանակ անց առավել խոշոր տերությունների կառավարությունները ստացան,- շտապ ու հույժ գաղտնի,- Նետետտի-Թուտուսի հուշագիրը, որը հիմնվելով ճշգրտագույն թվերի ու սխեմաների վրա՝ առաջարկում էր էքսերի իրացում, ու թվարկում ինչպես ֆինանսական, այնպես էլ բարոյական աներեւակայելի օգուտներ, որոնք կարող էին ստացվել այդ սարքավորումների արդյունքում: Նախագիծը որոշ հասցեատերերի չհասավ՝ խրվելով մինիստրական գրասենյակներում, մի քանիսը մերժեցին, բայց որոշ երկրներում (գլխավորապես՝ որտեղ արտարժույթը երերում էր, պետական պարտքը աճում եւ փրփուրները դիտարկվում էին լրջորեն ու փրկարար էին թվում) նախագիծը փոխանցվեց հանձնաժողովին, արագ ուսումնասիրվեց ու դրվեց քննարկման: Թուտուսը միանգամից հրավեր ստացավ երկու մայրաքաղաքներից, այնպես որ, կառավարություններից մեկը նույնիսկ ստիպված էր սպասել: Մի շարք գաղտնի նիստերում, զեկույցները լսելով՝ որոշում կայացվեց մեխանիկական նյարդավորման գաղափարը կիրառել հոգեկան հիվանդությունների դեմ պայքարում: Բանն այն է, որ այն դարաշրջանում, որի մասին պատմում ենք, հոգեկան հիվանդների թիվն անասելի աճել էր: Գիտության ջանքերը չէին կարողանում հաղթահարել այդ աղետը, որը խստորեն կապված էր հոգեկան աճող ծանրաբեռնվածությունների ու կենցաղային դժվարությունների հետ: Վտանգը խորանում էր նրանով, որ հիվանդացության տոկոսը հսկա ցատկերով աճում էր առավել հակասոցիալական փսիխոզների ոլորտում. սովորաբար անբուժելի կատաղիների, կլեպտոմանիայով, էրոտիկ փսիխոզներով, սպանության մոլուցքով բռնվածների մեկուսացումը ահռելի միջոցներ էր պահանջում, որի ծանր բեռն ընկնում էր պետական բյուջեի վրա: «Պետությունը ստիպված է,- հիմնավորում էր նախագիծը,- հիվանդության պատճառով գործից կտրված միլիոնավոր աշխատող ձեռքերի խնամքի համար կտրել եւս հարյուր հազարավոր աշխատողների ձեռքեր, ընդ որում՝ տարեցտարի աճող գումարներ ծախսե-

լով նոր մեկուսարաններ կառուցելու, անձնակազմը պահելու եւ այլնի վրա: Սակայն առողջներին հիվանդներից մեկուսացնելու փոխարեն ավելի լավ չէ՞ր լինի հիվանդությունն առողջությունից մեկուսացնել հոգեկան հիվանդի օրգանիզմում. չէ՞ որ հոգեկան հիվանդության դեպքում ախտահարվում է միայն նյարդային համակարգը, իսկ մկանային համակարգն անխաթար է մնում: Եթե սոցիալական աշխատանքից անջատված հոգեկան հիվանդի օրգանիզմ պատվաստվեն պրոֆ. Նետետտիի հայտնագործած մանրէները, ապա ուղեղի հետ միասին հասարակությունից հափշտակված մկանային համակարգը կվերադառնա օրինական տիրոջը. բավական է միայն էքս պատրաստել, եւ բոլոր հոգեկան հիվանդների մկանները իրենց ակնհայտորեն անպիտան ու հասարակության համար վտանգավոր նյարդային կենտրոններից փոխարկել «Թուտուս Ա-2» տիպի միասնական կենտրոնական նյարդավորիչի վրա, եւ դրանք միանգամայն անհատույց կաշխատեն հոգուտ հասարակության ու պետության, որին համեմատաբար էժան էքսի կառուցումը ոչ միայն կօգնի բյուջեից թոթափել ֆինանսական բեռը, այլեւ միանգամից ահռելի թվով նոր աշխատանքային ուժեր կտա»:

Եվ շուտով էքսը երկար ապակե ծղոտներով տարածվեց ողջ երկրում: Թափանցիկ խողովակաշարերից մետաղապակյա պիրկ, ասես օդում լուծվող ճոպաններ ու թելեր էին ձգվում,- այնպես որ, երբ առաջին էքսի բացման ու գործարկման օրը տոնական ամբոխը խուժեց դեպի հսկայական էքստերիզատորը շրջապատած մեխանիկական պատվարները, ոչինչ չտեսան, բացի ցանկապատված մշուշոտ դատարկությունից (օրը մառախլապատ էր): Անմիջապես խոսակցություններ սկսվեցին ինժեներների գողացած փողերի, շինծու ձեռնարկների եւ ուռճացված բյուջեի մասին: Ամբիոն բարձրացավ վարչապետը, ճաղատից հանեց ցիլինդրը եւ ձեռքը դեպի դատարկությունը պարզած՝ ծանր ու երկար խոսեց ինչ-որ լուսավոր դարաշրջանի մասին, իրենից թափ տալով բառերը, ինչպես փոշին՝ հին ու մաշված գորգից: Վարչապետը կարճատես աչքերը կկոցում էր շրջափակված դատարկության վրա, ու հանկարծ մի տեսակ բառերին հակառակ մտածեց. «Իսկ եթե իսկապե՞ս չկա»: Հետագայում էքսը վրեժ լուծեց վարչապետից՝ իրադարձությունների ընթացքում նրան վերածելով էքս-վարչապետի:

Ամբոխը մինչեւ վերջ լսեց ճառը եւ հիասթափված ու ծաղրելով արդեն սկսել էր ցրվել, երբ օդում անսպասելիորեն ինչ-որ ձայն հայտնվեց. մեղմ ու նուրբ, ասես ապակյա դզզոց լիներ, որ բարձրանում էր վեր ու վեր, ինչ-

պես անընդհատ ծգվող լարի ձայնը. էքսը սկսել էր իր աշխատանքը:

Հաջորդ օրը, արդեն առավոտից, ծառայության շտապողները նկատեցին, որ քաղաքի փողոցներում ինչ-որ անհասկանալի անցորդներ են հայտնվել. բոլորի պես հագնված այդ անցորդները մի տեսակ հրումներով ու դրա հետ միասին՝ ամանակաչափով էին քայլում՝ ասես վայրկյանում երկու քայլ անելով. արմունկներն անշարժ սեղմված էին մարմնին, գլուխներն ասես ընդմիշտ գամած ուսերի արանքում, եւ ճակատների տակից նայում էին նույնպիսի անշարժ, ասես ներպտուտակած կլոր բիբերը: Իրենց գործերով շտապող մարդիկ միանգամից չհասկացան, որ դա մեկուսարաններից արձակված խելագարների առաջին խմբաքանակն է, Նետետտիի մեթոդով անջատված մկաններով մարդկանց, որոնք ընդգրկվել էին No1 էքսի գործողությունների դաշտում:

Այդ առաջին խմբաքանակի օրգանիզմները նախապես մշակվել էին վիբրոֆագերում. նոր մարդկանց՝ ուղեղից ու տրամադրությունից համապատասխան եղանակով, բացարձակ առանց ցավի անջատված մկանային ցանցը յուրատեսակ բնական ալեհավաք էր, որն ընդունելով հսկայական նյարդավորիչի եթերային կամքը՝ մեքենայական, բոլորի համար միասնական գործունեություն էր իրականացնում:

Եթերային քամու ուժով շարժվող մարդկանց մասին լուրը երեկոյան կողմ արդեն տարածվել էր ողջ քաղաքում. խաչմերուկներում խմբված մարդիկ ուրախ իրարանցման մեջ բղավոցներով ողջունում էին աշխատանքից վերադարձող էքսային մարդկանց, բայց նրանք, որեւէ կերպ չարձագանքելով, անցնում էին նույն հրումներ հիշեցնող,- վայրկյանում երկու հարված,- քայլքով, արմունկները մարմնին սեղմած: Կանայք նրանցից թաքցնում էին երեխաներին. չէ՞ որ դրանք խելագարներ էին, իսկ եթե՞... Բայց կանանց հանգստացնում էին՝ մաքո՛ւր աշխատանք է:

Խաչմերուկներից մեկում մի անսպասելի տեսարան եղավ. մի պառավ կին անցնող նոր մարդկանցից մեկի մեջ ճանաչել էր որդուն, որին երկու տարի առաջ, զսպաշապիկի թեւքերով կապկպած, տարել էին մեկուսարան: Մայրը ուրախության աղաղակով նետվեց որդու կողմը: Բայց էքսի մեջ առնվածը, կրունկներով ասֆալտը համաչափ ծեծելով, անցավ կողքով. ոչ մի մկան չդողաց դեմքին, ոչ մի հնչյուն չբացեց ամուր սեղմած շրթունքները. եթերային քամին փչում էր ուր ուզեր: Հիստերիայի մեջ ընկած պառավին տարան:

Էքս-մարդկանց,- ինչպես ծաղրանքով նրանց կոչել էր մեկը,- առաջին խմբաքանակը կարողանում էր միայն քայլքի չափազանց պարզ շար-

ժումներ անել, որեւէ լծակ իջեցնել-բարձրացնել ու՝ վերջ: Բայց արդեն երկու-երեք շաբաթից, այսպես կոչված «դիֆերենցիալ սարքի» տեղադրումով, խելագարների մեկուսարանների պարունակությունը սկսեց ավելի բարդ մշակում անցնել. Նետետտի-Թուտուսի համակարգով կազմակերպված կյանքը ընդլայնվում ու բարդանում էր: Այդպես հայտնվեցին կոշիկ մաքրողներ, որոնք առանձնահատուկ էքսային հետեւողականությամբ խոզանակները տանում բերում էին կաղապարին դրված սապոգի վրայով՝ վերեւ-ներքեւ, վերեւ-ներքեւ. պերճաշուք հյուրանոցներից մեկում ընդհանուր հետաքրքրության առարկա դարձավ եւ շքամուտքի առաջ բազմություններ էր հավաքում էքսի կողմից շարժման մեջ դրվող բարապանը, որը առավոտից գիշեր ձեռքը մուտքի դռան բռնակին, մեկ բացում, մեկ փակում էր այն ուժեղ ու կարճ հրումներով: Բայց նյարդավորիչների առաջին նախագծողները բոլոր պատահականությունները չէ, որ հաշվի էին առել: Համենայնդեպս մի անգամ տեղի ունեցավ հետեւյալը: Հայտնի հրապարակախոս Թումմինսը, դուրս գալով հյուրանոցի իր համարից, իջնում էր սանդուղքով. դանդաղ էր քայլում, աչքերով իրերից ու դեմքերից կառչելով՝ համառորեն թեմա էր փնտրում ամսագրքի հերթական թողարկման համար: Բիբերը պատահմամբ որսացին մուտքի դուռը մեքենայական շարժումով բացած բարապանի բիբերը, եւ այդ բիբերը Թումմինսին ստիպեցին հետ քաշվել, նա մեջքով խփվեց պատին եւ աչքը չկտրելով՝ մտախոհ մրմնջաց. «Թեմա»:

Եվ շուտով հայտնվեց հռչակավոր գրողի ստորագրությամբ հոդվածը, որ վերնագրված էր «Ի պաշտպանություն in-ի»: Հոդվածում ազդեցիկ տաղանդով նկարագրվում էր երկու զույգ բիբերի հանդիպումը. այստեղից եւ այնտեղից: Թումմինսը բոլոր քաղաքացիներին եւ էքսեր կառուցողներին հրավիրում էր նախ եւ առաջ նայել մեքենայացված մարդկանց աչքերին, եւ այդ ժամանակ, գրում էր նա, բոլորը կհասկանան, որ չի կարելի ոտնձգել նրա դեմ, ինչին ոտնձգում են էքսերը: Չի կարելի բռնությամբ օտար, արհեստական կյանք մղել մարդու մեջ: Մարդը ազատ արարած է: Նույնիսկ խելագարները իրենց խելագարության իրավունքն ունեն: Վտանգավոր է կամքի գործառույթները փոխանցել մեքենային. մենք դեռ չգիտենք ինչ կցանկանա այդ մեքենայական կամքը: Ոգեշունչ հոդվածն ավարտվում էր կարգախոսով՝ in-ն ընդդեմ ex-ի:

Ի պատասխան Թումմինսի ելույթի՝ պաշտոնաթերթի հաջորդ համարում հայտնվեց մի առաջնորդող, որը մարդիկ վերագրում էին Թուտուսին: Առաջնորդող հոդվածում նշվում էր, որ ժամանակավրեպ են հիստերիկ

բղավոցներն ինչ-որ բիբերի կապակցությամբ, երբ խոսքը ողջ սոցիալական օրգանիզմի փրկության մասին է: Առաջնորդողն «ազատ կամքի» մասին ճառերը մի քանի դարով ուշացած եւ նույնիսկ փոքր-ինչ ծիծաղելի էր համարում գիտականորեն հիմնավորված ու ստուգված դետերմինիզմի դարաշրջանում. քանի որ խոսքը հասարակության համար վտանգավոր՝ հոգեկան հիվանդների կամքի մասին է, կենսականորեն կարեւոր է ոչ թե կամքի ազատություն տալ նրանց (որը նույնպես հարկ կլիներ արհեստականորեն ստեղծել, բնության մեջ դրա բացակայության պատճառով), այլ ազատություն՝ հակասոցիալական ուղղվածություն ունեցող կամքից: Կառավարությունը որոշել է անշեղ եւ անխոնջ գնալ այդ ճանապարհով՝ նորանոր մարդկային ներառումներ անելով էքսի մեջ:

Բայց Թումմինսը չէր հանդրտվում. փաստարկներին պատասխանում էր փաստարկներով եւ, չբավարարվելով ամսագրային բանավեճով, սկսեց կազմակերպել «Հին բարի ուղեղի ընկերությունը», ինչպես կոչել էր մի անգամ համախոհների խումբը, որոնք հավաքվելով բողոքի միտինգի՝ մերակների մեջ հագցրել էին ուղեղի երկու կիսագնդերի մետաղյա պատկերը՝ «In contra *[Ընդդեմ - լատ.]* ex» մակագրությամբ: Եվ երբ կառավարությունը սկսեց N 1 էքսի հարեւանությամբ կառուցել N 2 նոր հզոր էքստերիզատորը, «հին բարի ուղեղի» կողմնակիցները որոշեցին ողջ բազմությամբ գնալ կառուցման վայրը՝ սպառնալով ոչնչացնել մեքենաները: Զորքեր շարժվեցին դեպքի վայր եւ ի պաշտպանություն սարքավորումների, ասես ապացուցելու համար, որ էքսերն ունակ են ինքնապաշտպանության, փողոցներով, իրենց վայրկյանում երկու քայլը համաչափ թխկացնելով, անցան մեքենայի կողմից նյարդավորված «էքս-մարդկանց» ջոկատները:

Սպասում էին նոր բռնաճնշումների եւ առաջին հերթին՝ Թումմինսի կազմակերպության անդամների հանդեպ, բայց բռնաճնշումներ չհետեւեցին: Աստիճանաբար ավելի ու ավելի մեծ իշխանություն ստացող Թուտուսի զեկույցին նվիրված մինիստրների գաղտնի նիստում որոշում ընդունվեց, որի իրականացումը դրվում էր էքսերի վրա: Թումմինսը հանկարծ ինչ-որ տեղ կորավ,- ոչ երկար, երեք օրով,- ինչից հետո ապշեցուցիչ արագ իր contra-ն փոխեց pro-ի *[Կողմ - լատ.]:* Ասում էին, որ Թումմինսը ծախվել է, որ գործում է մահվան սպառնալիքի տակ եւ այլն: Ու սխալվում էին: Թումմինսը պարզապես առնվել էր էքսի մեջ: Կատարելագործված սարքը, տիրելով նշանավոր հռետորի արտասանությանն ու գրչի շարժումներին, նրա բոլոր բառերը շրջել էր հակառակին: Թումմինսը հո-

գու խորքում առաջվա պես ատում ու նզովում էր էքսերին, բայց հոգեկերտվածքից անջատված մկանները հստակ ու ոգեշունչ քարոզչություն էին անում հօգուտ նոր էթիկական մեքենաների կառուցման արշավի: Մեծն գաղափարախոսի երկրպագուները սկզբում, չհավատալով իրենց առաջնորդի դավաճանությանը, խոսում էին բնագրերը կեղծելու ու փոխելու մասին, բայց Թումմինսի ձեռագրերը, որ լուսանկարվել ու նույնիսկ ցուցադրվում էին քաղաքապետարանի ցուցափեղկի ապակու տակ, ստիպեցին լռել անգամ ամենամոլի կասկածողներին: Գլխատված կուսակցությունն աստիճանաբար քայքայվեց, մանավանդ՝ նորանոր մեքենաների կառուցման հեռանկարը շատերին գայթակղիչ էր թվում: Այսպես. կառավարությունը խոստանում էր զինապարտությունը առողջ բնակչությունից դնել էքսի մեջ առնված հոգեկան հիվանդների վրա. սոցիալական էթիկայի ու հիգիենայի տեսանկյունից՝ ավելի ռացիոնալ է զոհաբերել ոչ պիտանիներին, քան պիտանիներին: Այդպիսով, շատ ու շատ առողջների համար մեքենաներին վերաբերող «էթիկական» անվանումը, որ սկզբում անբնական ու ծիծաղելի էր թվում, հիմա որոշակի արդարացում էր ստանում ու ձեռք բերում բնավ ոչ ծիծաղելի իմաստ:

Էքսերի փոքրիկ քաղաքն աճում ու աճում էր: Թվում էր՝ ժամանակն է հարցնել. ինչո՞ւ են դրանք այդքան շատ, չափից դուրս շատ չե՞ն, եթե նկատի են առնվում միայն խելագարները: Բայց ոգեւորությունը պատել էր բոլորին: Թվում էր՝ եթերային քամին, անցնելով իր համար սահմանված գիծը, քշել-տարել էր աշխարհի բոլոր կրիտիցիզմներն ու սկեպտիցիզմները: Վախենամ, որ իմ բառերն էլ քշի-տանի...

Դյաժը, որ ձեռնափայտով հատակին կետ-գծեր էր թխկացնում, հանկարծ դադարեց ու ապակիների շրջանակների միջով անհանգիստ նայեց մեզ.

- Այո՛, քիչ էր մնում անցնեի ուղեսլաքները. այստեղ, ինչպես տեսնում եմ, թեման բաժանվում է երկու տարբերակի: Կարելի է էքսերին կատարելագործելով՝ նրանց եթերային զեփյուռը վերածել հողմի, որի դեմ անզոր կլինեն բոլոր բնական բնախոսական նյարդավորումները, եւ այդ ժամանակ... Բայց այդ դեպքում ստիպված կլինեմ շարադրել «փաստեր խժռողների» կողմնակի թեման: Այդպես չի կարելի. մեկ անգամ ներմուծվելով՝ թեման պետք է գոյատեւի մինչեւ վերջ: Սյուժեի կառուցվածքն էքսի կառուցվածքի պես է. միացնել կարելի է, անջատել՝ ոչ: Ուստի կփորձեմ անցնել թեմայի միջով՝ եռանկյուն առագաստով: Եվ այսպես...

Նետետտիի մանրէաբանական փորձարանի աշխատանքները չէին

դադարում: Օգնականներին վստահելով վիբրոֆագերի հնարավորինս կայուն տարատեսակ ստանալը՝ գիտնականը սկսեց զբաղվել հետեւյալ հիմնահարցով՝ հնարավո՞ր է, արդյոք, անընկալունակությունն ընդդեմ փաստեր խժռողների: Շուտով երկու առաջադրանքներն էլ փոքրիշատե կատարված էին: Մի կողմից՝ ստացվեց արտակարգ դիմադրունակությամբ մի տարատեսակ, որը կարողանում էր դիմանալ ջրազկրմանը, ջերմաստիճանի տատանումներին, ցանկացած միջավայրում, ճիշտ է՝ ոչ տեւական, պահպանել կենսունակությունը: Մյուս կողմից, Նետոտտին ինքը հայտնագործեց մի նոր քիմիական միացություն, որը ինիտ անվանեց: Միացությունը, ներարկվելով արյան մեջ, թափանցում էր ուղեղ եւ նրա համար միանգամայն անվնաս մնալով՝ սպանում վիբրոֆագերին: Բուն օրգանիզմը ինիտի ներարկումից հետո ընդմիշտ անընկալունակ էր դառնում վիբրոֆագերի նկատմամբ: Ինիտի փորձարկումներ արվեցին. նյութը էքսի մեջ առնված մի քանի մոլի խելագարների արյան մեջ մտցնելուց հետո հիվանդությունը կրկին ուղեղից հորդեց մկանները. փրփուրը բերանին՝ գետնին ջղաձգվող փորձարկվողներն անհապաղ ոչնչացվեցին, իսկ գիտափորձի արդյունքները հաջողված հայտարարվեցին: Թուտուսի պնդումով Նետետտին սկսեց զբաղվել ինիտի պատրաստմամբ: Գերագույն կառավարական Խորհրդի հերթական գաղտնի նիստում Թուտուսը, ատամնալիցքերը շողացնելով, զեկուցում էր.

- Ես ինձ խելագար կհամարեի, եթե սահմանափակվեի եթերային քամին միայն հոգեկան հիվանդների վրա օգտագործելով: Էքսերի անտեսանելի անտառը օրեցօր աճում է: Ես վաղուց եմ հրաժարվել մկանային համակարգի արհեստական կարգավորումից: Ըստ էության, ցանկացած մկանային ցանց, եթե մեկուսացնես ուղեղից, կարող է ներառվել համապատասխան հաճախականության նյարդավորման մեջ: Պատրաստի էքսերից յուրաքանչյուրը նախատեսված է այս կամ այն հաճախականության ալիքների համար եւ գործի դրվելով՝ ընդգրկելու է տվյալ հաճախականության մեջ այսպես ասած ինքնաներառվող մարդկանց խմբաքանակ: Բնականաբար, միայն նրանց մկանային ընդունիչների՝ ներքին նյարդավորումից անջատված լինելու, այսինքն, գրո՛ղը տանի դրան, այդ նույն «հին բարի ուղեղի» պայմաններում, որի պատճառով մենք բազում խնդիրներ ենք ունեցել ու վախենամ՝ ունենալու ենք: Ամփոփեմ: Մեր երկիրը, ինչպես բոլորը գիտեն, համաշխարհային շուկա է հանում տարբեր պահածոներ՝ հյութեր, չրեր ու մամլած սննդարար նյութեր: Վիբրոֆագի նոր տեսակը բավականաչափ կենսունակ է, որպեսզի մամլում, չորացում

եւ այլն, եւ այլն անցնելով՝ հասնի մեր համաշխարհային սպառողների օրգանիզմներին, ապա եւ արյան հոսքերով՝ ուղեղին եւ... Ինիտը, բնականաբար, կպահենք միայն մեզ համար: Այն բոլոր առավելությունների մասին, որ կստանանք դրանից, այն նոր համաշխարհային իրավիճակի մասին, որ պետք է հայտնվի ինիտի եւ էքսի միջեւ, ձեզ՝ պետական այրերիդ, բացատրելն ավելորդ է:

Եվ շուտով՝ վիբրոֆագերի անհամար խառնուրդներ՝ մամլված արգանակի խորանարդիկներում, չորացված ու սառեցված կերակրատեսակներում, զոդված միլիոնավոր պահածոյի տուփերում, ուղեւորվեցին միլիոնավոր բերաններին ընդառաջ, որոնք դյուրահավատորեն կլլում էին իրենք իրենց, եթե կթույլատրվի այդպես արտահայտվել: Ինիտի առաջին իսկ գրամները, որ շատ դանդաղ պատրաստում էր անձամբ Նետետտին, առանց որեւէ օգնականի մասնակցություն թույլատրելու, դուրս չեկավ իշխանավորների ու նրանց մերձավորների նեղ շրջանակից: Բանն այն է, որ բոլոր խելագարներին էքսին հանձնած այդ մարդիկ որոշել էին մեքենայի մեջ առնվելու վտանգից զերծ պահել առաջին հերթին առավել ողջամիտներին, այսինքն՝ իրենց: Բնականաբար, հետագայում, նոր գրամներ ու պատիճներ ստանալուն զուգահեռ, որոշված էր դրանք բաշխել կենտրոնից դեպի ծայրամասերը՝ պետության բոլոր լիազոր քաղաքացիների միջեւ, որոնց փողերով էլ, ըստ էության, կառուցվում էին այդ բոլոր էքսերը, բայց... Բայց անսպասելի մահացավ Նետետտին. նրան, փքված պարանոցով ու չռված, ճերմակած աչքերով, գտան իր գաղտնի փորձարանի քիմիական սապակե փորձանոթների արանքում: Ինիտի պատրաստման վերաբերյալ որեւէ գրառում ու բանաձեւ չհայտնաբերվեց: Մի քանի գրամ ինիտով ապակյա սրվակը, որը գիտնականը միշտ մոտն էր պահում, թաքցնելով օտար աչքերից (դրա մասին գիտեին միայն Թուտուսն ու գաղտնի Խորհրդի անդամները) նույնպես չհայտնաբերվեց: Նույնիսկ Թուտուսն անհանգստացած ու շփոթված էր: Նա, որ սովոր էր միայն պատասխանել կամ չպատասխանել, Խորհրդի արտակարգ նիստում առաջին անգամ հարցրեց.

- Ի՞նչ անել:

Այդ ժամանակ վեր կացավ կոլեգիայի ամենաերիտասարդ անդամը՝ Զես անունով...

- Ինչո՞ւ ոչ Զեզ,- վեր թռավ նախագահը եւ տարակուսած ժպիտով նայեց մեզ: Մտահոգացողներն իրար նայեցին:

Բայց Դյաժը շարունակում էր թխկթխկացնել իր կետիկները:

- Այսպես ուրեմն: Վեր կացավ, ասում եմ, ոմն Զես, որը մինչ այդ առանձնապես ոչնչով աչքի չէր ընկել: Խելացի մարդ էր, բայց՝ դաժան,- այսպես ասենք, այն ավանդական չարագործը, առանց որի չի կարող ոչ մի ֆանտաստիկա, որը ստիպված է բնավորությունները փոխարինել պատումի սխեմաներով: Այո՛: Եվ պատասխանը տրվեց.

- Գործի դնել էքսերին: Վե՛րջ: Եվ անհապա՛ղ:

Կոլեգիայի անդամներն իրար անցան: Թուտուսը առարկեց.

- Բայց չէ՞ որ անընկանության պլան չի իրականացվել: Հետեւաբար էքսի մեջ կարող են առնվել նաեւ...

- Ավելի լավ: Որքան քիչ են կառավարիչները, այնքան մեծ է կառավարելիությունը: Նաեւ. խորհուրդը հաշվի առե՞լ է ինիտի անհետանալը: Մեր մտահղացումները, ինիտի գաղտնիքի հետ մեկտեղ, կարող են հայտնվել,- եթե արդեն չեն հայտնվել,- օտար ձեռքերում: Քանի դեռ հապաղում ենք, մեր մտահղացումների մասին լուրերը կհատնեն սահմանը, բայց մինչ այդ էլ, մեր համաքաղաքացիները, եթե թեկուզ մի կաթիլ ողջամտություն ունեն, կհասցնեն հաշիվ տեսնել եւ՛ էքսերի, եւ՛ մեզ հետ. թե՞ մտածում եք մեզ կներեն մեր անընկալունակությունը:

- Այո՛,- տատանվեց Թուտուսը,- բայց էքսերի գործարկումն ամեն դեպքում վաղաժամ է: Չէ՞ որ մանրէները դեռ չեն հասել բոլոր ուղեղներին ու՝ ողջ մոլորակում: Նաեւ. ես վստահ չեմ, որ մեր ամենահզոր էքսերը, նույնիսկ միանգամից բոլորը գործարկելու դեպքում, իրենց գործողության ոլորտը կառնեն,- կլորացնելով ասեմ,- մարդկության երկու երրորդից ավելին: Հնարավոր են մկանունքի անհատական շեղումներ. բոլորին չես խմբավորի:

- Շատ լավ է,- պատասխանեց Զեսը,- ողջ աշխարհի մկանունքի երկու երրորդը ավելի քան բավական է չներառվածներին նաեւ կյանքից անջատելու համար. Ամբողջովի՞ն: Առաջարկում եմ կոնկրետ լուծում. մանրէակիր պահածոները թողնել նաեւ ներքին շուկա: Ամենաէժան գներով: Երկրորդ. ինչ գնով էլ լինի, առաջիկա օրերին պատրաստել վերջին գերհզոր էքսը: Երրորդ. կառուցումն ավարտելուն պես, այսպես ասած, գիտությունից անցնել քաղաքականությանը:

Բայց իրադարձություններն ավելի արագ էին զարգանում, քան հաշվարկել էր Զեսը՝ համաձայնելով Թուտուսի հետ, որ մանրէները մտքերից արագ կթափանցեն ուղեղի մեջ: Արդեն արտակարգ նիստի հաջորդ առավոտյան բանվորները դուրս չեկան էքսի շինարարությանը. փողոցներում ինչ-որ չար աշխուժություն էր նկատվում, ձեռքից ձեռք էին անցնում

թարմ ընդհատակյա թռուցիկներ, քաղաքից դուրս գվվում էր հանրահավաքը, որը շրջապատելու ուղարկված զորամասը չկատարեց հրամանը: Զեսը հասկացավ, որ նույնիսկ բոպեներն են հաշվի մեջ ու չփորձեց դրանք ծախսել Խորհրդի նիստ հրավիրելու վրա, այլ մեկ տասնյակ համախոհների հետ նետվեց անտեսանելի ավանը, որտեղ կանգնած էին նյարդավորիչների թափանցիկ կայմերը: Ոչ ոք չկանգնեցրեց նրանց. մեքենաները սպասարկող ողջ անձնակազմը հանրահավաքի էր:

Թռուցիկների կոչով հավաքված ամբոխը գլուխ գլխի խմբվել էր քաղաքային գծից անմիջապես այն կողմ գտնվող մեծ ծորակում: Թռչնաձայն ծղրտում էին ծառերին թառած հռետորները. մեկը՝ իբր արդեն կիսով բացահայտված դավադրության մասին, մյուսը՝ հայտնի չէ ինչի վրա ծախսված ժողովրդական փողերի, երրորդը՝ ժողովրդին դավաճանելու, չորրորդը՝ հատուցման ու հաշվեհարդարի: Շարժվող մրջնանոցից բռունցքներ ու մահակներ էին ցցվում, լսվում էր հիմների դղրդոցն ու անեծքների ոռնոցը: Աղմուկի պատճառով ոչ ոք չլսեց մեղմ, ապակենուրբ հնչյունները, որոնք անսպասելի տարածվեցին օդում: Հանկարծ սկսեց ինչ-որ տարօրինակ բան կատարվել. ամբոխի մի մասը անսպասելի պոկվեց հանրահավաքից ու շարժվեց հետ՝ դեպի փողոցները: Ծառերին թառած հռետորները սկզբում մտածեցին, թե իրենց խոսքն է մղում գործողությունների, բայց սխալվում էին. դա գործի դրված էքսերի ազդեցությունն էր: Ամբոխը սսկվեց: Հիմա արդեն պարզ լսվում էին նյարդավորիչների միահյուսվող ղողանջները. ահա մեկն էլ հնչեց, սուր ու թրթռուն, եւ նոր թափորը, ինչպես մագնիսը՝ մետաղի տաշեղները, հավաքելով մարդկանց՝ հետեւեց առաջինին՝ վերջնականապես քայքայելով հանրահավաքը: Նույնիսկ կաղնու ոստին նստած ոմն ջահել քարոզիչ հիմա արդեն պարզ տեսնում էր, որ այդպես չեն գնում վրեժի ու ավերածության. թափորի մեջ առնվածները տարօրինակ էին քայլում՝ արմունկները մարմնին սեղմած ու հստակ դրոշմելով քայլքը: Մինչ ջահել քարոզիչը, վիրավորանքից ու զայրույթից համարյա լաց լինելով, փորձում էր ճչալ տարվողների ետեւից, մի անտեսանելի բան հանկարծ բռնեց նրա մկանները, բացեց բռունցքներն եւ արմունկները սեղմեց մարմնին: Հավասարակշռությունը կորցնելով՝ տղան ոստից շմփաց գետնին, բայց նույնիսկ չհասցրեց ճչալ. անտեսանելի մի բան սեղմեց ծնոտները, խեղդեց ճիչն ու անսպասելիորեն շարժելով ծանրացած ոտքերը, ծալելով ու բացելով ծնկները՝ քարոզչին ստիպեց միանալ թափորին: Տղայի հոգու խորքում եռում էին ատելությունն ու անզոր կատաղությունը: «Միայն թե հասնեմ տուն, զենք վերց-

նեմ, այդ ժամանակ կտեսնենք»,- ապստամբում էր ուղեղը, բայց մկանները տանում էին հակառակ կողմը: «Ո՞ւր եմ գնում»,- խենթանում էր մեկուսացված միտքը, իսկ այդ ընթացքում քայլերը, ասես հարցին պատասխանելով, դանդաղ,- երկու քայլ՝ վայրկյանում,- մտքերի տիրոջը մոտեցնում էր անտեսանելի ավանի մետաղյա ցանկապատին: «Ավելի լավ,- ուրախացավ քարոզիչը,- հենց ձեզ էլ փնտրում էի»,- եւ համարյա հեշտանքով պատկերացրեց ինչպես է ձեռքն ընկածով խփելու թափանցիկ թելերին, ինչպես է քանդելու ապակե կայմի հիմքն ու կտրելու ստորգետնյա ռոտորների հաղորդալարերը: Քայլերը, ասես համաձայնելով, նրան հասցրին ամենամեծ, դեռեւս անավարտ գերիզոր էքսի հյուսակներին. տղան լարեց բոլոր ուժերը,- թվում էր՝ ինչ-որ խորհրդավոր բան օգնում է նրան,- կառչեց ապակյա, կիսով պտուտակած խողովակից, եւ այդ պահին ձեռքերը ասես սահելով ողորկ մակերեւույթից, սկսեցին դանդաղ, բայց համառորեն պտուտակել կայմը: Միայն հիմա դժբախտը հասկացավ, որ ավտոմատ ավանի հրապարակում տեղաբաշխված մյուս մարդկանց հետ աշխատում է էքսերի կառուցումն ավարտելու վրա:

Եթերային քամին, որ սկսել էր փչել անտեսանելի ավանից, արագ ցիրուցան արեց Նետետտի-Թուտուսի գաղափարին ապաստան տված երկիրը շրջապատող պետությունների սահմանադրությունները: Եթերի մի քանի պոռթկումով մի քանի հեղափոխություն արվեց. Զեսը դրանք անվանում էր «հեղափոխություններ՝ մեքենայից»: Ամեն ինչ շատ պարզ էր արվում. քաշելով մարդկանց մկաններից, ինչպես շարժական տիկնիկների թելերը՝ որոշակի շառավղով գործող էքսը նրանց հավաքում էր մայրաքաղաքների կենտրոնում, տիկնիկներով շրջապատում պետական հաստատություններն ու պալատները, ամբոխներին ստիպում արտաբերել,- բոլորին, մի մարդու պես,- որեւէ ոչ բարդ, երկու-երեք բառից բաղկացած կարգախոս: Նյարդավորիչից խույս տված մարդկանց մնում էր միայն փախչել՝ հեռու մեքենայի եթերային շոշափուկներից: Բայց շուտով գործարկվեց նաեւ գերիզոր էքսը, որը մկաններին էր հասնում նույնիսկ օվկիանոսների վրայով: Փախստականներն անկարգ բազմություններով փորձում էին դիմադրություն կազմակերպել, նրանք որոշ առավելություն ունեին՝ շարժումների ճկունությունն ու բարդությունը, ինչից զուրկ էին հրումներով եւ ուղիղ գծով քայլողները: Եվ այդ ժամանակ հետեւողականորեն, քառակուսի առ քառակուսի սկսեցին ոչնչացնել չներառվածներին: «Նորերի» կատարելապես կանոնավոր շարասյուները, ինչպես հնձվորները հասուն արտերով, միջնակից միջնակ էին անցնում՝ ճանապար-

հին հնձելով կենդանի ամեն ինչ: Մահվան սարսափով բռնված մարդիկ թաքնվում էին թավուտներում, թաղվում հողի մեջ, ոմանք էլ նորերի ինքնաբեր շարժումները նմանակելով՝ միանում են շարասյուներին, միայն թե չսպանվեն: Մարդկային աղբը մաքրելու աշխատանքը, ինչպես մի անգամ արտահայտվեց Զեսը, ճշգրտվում էր տեղերում՝ երկու-երեք հարյուր նյարդավորված հատուկ դիտորդների կողմից, որոնց վրա աշխատել էր էքսը: Երբ եթերային ցախավելը դադարեց ավլել, բոլոր տարածքները միավորվեցին մեկ պետության մեջ, որին մեքենայի եւ ռեակտիվի միակցումից կազմված անուն տրվեց՝ Էքսինիա:

Դրանից հետո դիկտատոր Զեսը հայտարարեց խաղաղ շինարարության անցնելու մասին: Նախեւառաջ պետք էր հոգալ մարդկային սարք ստեղծելու մասին, որը կկարողանար բավականաչափ ճշգրիտ, որակյալ ինքնաբերությամբ սպասարկել Թուտուսի համակարգի սարքերը: Բանն այն է, որ հեղաշրջման ու պայքարի շրջանում մեքենաները ստիպված էին բանեցնել նույն մի բուռ անընկալունացվածներ. էքսերի կառավարումը պահանջում էր շարժումների բարդ համակարգ եւ նույնքան բարդ ազդանշանում: Թուտուսի վերջին ստեղծագործությունը՝ բոլոր էքսերի կառավարման էքսը, վերջապես պատրաստ էր եւ օլիգարխներին մեծապես ազատեց նյարդավորման նյարդային ու բարդ աշխատանքից: Երկրորդ բարեփոխումն էքսինիայում ժողովրդական կրթության վերացումն էր. միանգամայն ավելորդ էր թվում որեւէ բան սովորեցնել մարդկանց, եթե այդ որեւէ բանը կարող էին անել նյարդավորիչները. Բյուջեի՝ զանգվածների լուսավորությանն ուղղված ծախսային տողը փոխարինվեց անտեսանելի ավանում կենտրոնացված միասնական կենտրոնական նյարդային համակարգի կատարելագործման ծախսերի տողով: Հետո հաշվառման վերցվեց յուրաքանչյուր մարդու ex-ը՝ նրա մկանային ներուժը, եւ կենտրոնական էքսի ստեղնաշարի առաջ նստած Զեսը ամենայն ճշգրտությամբ գիտեր եւ ուզածին պես կարող էր բաշխել ու վերաբաշխել մկանային ուժի միագումարն ու աշխատանքի ծավալը, որը ցանկացած պահի կարելի էր ուղղել այս կամ այն առաջադրանքի կատարմանը: Շուտով Էքսինիայի քաղաքները զարդարվեցին ահռելի, կիկլոպյան հզորության կառույցներով: Շինարարությունը կատարվում էր միասնական պլանով՝ ուղղորդված եթերային ալիքների գծերով. կեգելբանի ուղղակների պես ձիգ փողոցները,- բնակելի զանգվածներից դեպի ֆաբրիկաներն ու՝ հետ,- ձգվում էին ամենուր՝ միջօրեականների ու երկայնությունների գծերին զուգահեռ: Իրենք՝ աշխատողները, որոնցից նյարդավորիչները խլել

էին բոլոր ուժերը, սկսեցին ապրել ընդարձակ ու լուսավոր պալատներում եւ առատ կերակուր էին ստանում. բայց արդյո՞ք դա ուրախացնում էր նրանց, անհայտ է: Նրանց հոգեկերտվածքը՝ կտրված արտաքին աշխարհից, մեկուսացած անջատված մկաններով ուղեղներում, կեցության մասին որեւէ ազդանշան չէր տալիս:

Կառավարությունը, անշեղորեն իրականացնելով լիակատար էքսիֆիկացիայի պլանը, հոգում էր նաեւ այն տեւական դարձնելու մասին: Սիրո պլանային կազմակերպումը պահանջում էր եւս մեկ, այսպես կոչված Զուգավորման էքսի կառուցում, որը, պարբերաբար գործելով, եթերի կարճ, բայց ուժեղ հարվածներով տղամարդուն նետում էր կանանց վրա, զուգավորում ու բաժանում նրանց այն հաշվարկով, որ ժամանակի առավելագույնս նվազ ծախսը տա բեղմնավորման առավելագույն քանակ: Ի դեպ, անընկալունացվածներից էր նաեւ Զեսի անձնական քարտուղարը, մի երիտասարդ, այ այսպիսի մազափնջով, ինչպիսին մեր Ծոգինն է, դե, երկար անուն չփնտրելու համար նրան կոչենք Ծագգ...

- Բավական անհրբանկատ եք անուններ հորինելու հարցում,- բազկաթոռի մեջ առաջ եկավ Ծոգը,- եւ ես խորհուրդ կտայի...

- Կարգի եմ հրավիրում: Այստեղ դիտողությունների իրավունքը միայն իմն է,- ձայնը բարձրացրեց նախագահը:- Շարունակեք պատմությունը:

- Այսպես ուրեմն, Ծագգը այդ բոլոր էքսիֆիկացիաներից դեռ շատ առաջ տոչորվում էր մի տիկնոջ համար, որը, չնայած հիշյալ Ծագգի բոլոր հաճելի հատկություններին, բանի տեղ չէր դնում նրան, ահա այդ Ծագգը որոշեց դիմել հաջորդ քայլին՝ էքսի օգնությանը: Մեքենայի համար միեւնույն էր: Երիտասարդի նշանակած ժամին նա կնոջը բերեց նշված վայրը, բայց ինքը, այսպես ասած, չհեռացավ, այսինքն նյարդային ու կասկածամիտ տղան նրան զգում էր նաեւ սիրո մեջ, համարյա զգայախաբության հստակությամբ լսում էր՝ պտտվում էին պողպատե ռոտորները, միանում ու անջատվում էին թրթռացող հոսանքները, ծգվում էր բարակ ու ձանձրալի սուլոցը: Այո՛, բարեկամնե՛ր, քամին, որ այն, հիշո՞ւմ եք, առաջին օրը քաշքշում էր թեթեւ կիսաշրջանների երիզները, դրանք կարող էր լցնել, ըստ էության, միայն օդով, եւ ահա, էքսերն էլ կարող էին սարքել ամեն ինչ, բացի հույզերից: Մի խոսքով, առավոտյան մեր խեղճ Ծոգը... կներեք, Ծագգը տխուր ու քչախոս էր, եւ երբ նրա պատրոնը, որ բարեհաճ էր տղայի հանդեպ, պարծեցավ, թե աշխարհի վերակառուցումը կարելի է սեւագիր տեսքով ավարտված համարել, հանդիպեց լռության ու աչքերի մռայլ փայլին:

Եկան հաշվիչներով հաշվվող, ճշգրիտ բաժիններով չափվող ու բաշխվող իրականության ամիսներ ու տարիներ. նախկինում համարյա աստղաբաշխական հաշվարկ պահանջող պատմությունը վերածվեց յուրատեսակ բնագիտության, որն իրականացվում էր երկու դասերի միջոցով՝ կառավարող ինիտների եւ կառավարվող էքսոնների: Թվում էր Pax Exiniae *[Էքսոնների աշխարհը - լատ.]* ոչնչով չի կարող խաթարվել, բայց եւ այնպես...

Առաջին «շեղումները պլանից», ինչպես արձանագրվեց Գերագույն Խորհրդի նիստում, պատահական բացառություններ էին թվում: Այդպես, օրինակ, կամուրջները երկարությամբ անցնելու փոխարեն որոշ,- ըստ երեւույթին, սխալ նյարդավորված,- էքսոններ սկսեցին լայնքով անցնել, ուստի ստիպված եղան մկանային պաշարներից դուրս գրել շեղված առանձնյակների զգալի քանակ, եւ էքսերի ամորտիզացիան փոքր-ինչ բարձր գործակից ստացավ: Ի հայտ եկան ընդհատումներ զուգավորման մեքենայի աշխատանքում. մարդկային բերքի կանխատեսումները չէին հաստատվում. ծնելիությունը բավական ցածր ցուցանիշ էր տալիս: Այդ ամենը դեռ ոչինչ, բայց վիճակը տագնապալի դարձավ, երբ չնախատեսված շեղումներ ու անճշտություններ հայտնաբերվեցին Էքսինիայի «ապարատը» գործի դնող նյարդավորիչի աշխատանքում: Թուտուսը, որին շուրջկալել էին հարցերով, մտախոհ օրորում էր գլուխը եւ ի վերջո հայտարարեց.

- Մեքենան կարգաբերելու մի միջոց կա՝ կանգնեցնել աշխտանքը:

Երկար խորհրդակցելուց հետո որոշվեց փորձի կարգով կանգնեցնել էքս N 1-ը, նախ, որովհետեւ այն, առավել երկար աշխատելու հետեւանքով ավելի շատ խանգարումներ էր ունենում, երկրորդ, որովհետեւ, նրա մեջ, ինչպես հիշում եք, առնված էին հոգեկան հիվանդներ, եւ ավելի մարդասիրական համարվեց զոհաբերել հենց նրանց:

Նշանակված օրն ու ժամին N 1-ը դադարեցրեց նյարդավորման մատակարարումը, եւ մի քանի միլիոն մարդ, քամին կորցրած առագաստների պես, թարշամած կռացան ու հենց տեղում թափվեցին գետնին: Որոշ ինիտներ դուրս գրված էքսերի կողքով անցնելիս տեսնում էին անշարժ մարմինների շարժվող աչքերը, թրթռացող թարթիչներն ու շնչող ռունգերը (որոշ մանր մկաններ, որպես սոցիոսի համար վտանգ չներկայացնող, թողնվել էին մարդկանց տնօրինության տակ). երեք-չորս օրից անհնար էր առանց քիթը փակելու անցնել անշարժացած մարդկային մսի կողքով, քանի որ արդեն սկսել էր նեխել. մեքենայի ստուգումն ավարտված չէր,

ուստի, սոցիալական հիգիենայի նկատառումներով, թրթռացող թարթիչ-ներով այդ ամբողջ լեշը ստիպված էին լցնել փոսերն ու հավասարեցնել հողին:

Իսկ այդ ընթացքում մանրագույն բաղկացուցիչների բաժանված էքս No 1-ի տեւական ու մանրակրկիտ հետազոտությունը միանգամայն անսպասելի արդյունքներ տվեց:

- Նյարդավորիչը միանգամայն սարքին է ու միշտ սարքին է եղել,- հպարտությամբ հայտարարեց գլխավոր փորձագետ նշանակված Թուտուսը:- Մեքենային ներկայացված մեղադրանքը համարում եմ սխալ: Բայց եթե էքսցեսների պատճառը էքսերը չեն, ապա... այն պետք է փնտրել էքսոնների, նրանց մեկուսացված լինելու եւ հոգեկերտվածքների ապաշնորհության մեջ: Վերջերս դիտարկում էի մի շատ տարրական, ուստի եւ օրինակելի դեպք. սարքի մոտ կանգնեցված եւ բռնակի աջից ձախ պտույտով նյարդավորվող էքսոնը լծակը մեկ աջ, մեկ ձախ էր դարձնում, ասես մկաններում գործում էին երկու հակընդդեմ նյարդավորումներ: Այո՛, կտրելով նրանց ուղեղների ելքը դեպի աշխարհ, ինքներս մեզ կտրել ենք նրանց հոգեբանությանը հետեւելու հնարավորությունից: Բանալիով կողպած սենյակի շեմն անհնար է հատել եւ՛ ներսից, եւ՛ դրսից: Ինձ, բնականաբար, բացարձակ չեն հետաքրքրում այդ բոլոր հոգենմանակ հավելվածները, որոնք նախկին բարբարոս ժամանակներում հավակնում էին «ներաշխարհի» կարգի անհեթեթագույն անվանումների...

- Բայց դա ձեզ էլ չի հետաքրքրում, Դյա՛ժ,- պատմությանը խփվեց Շոգի զնգուն ձայնը: Վառվող դեմքը դարձնելով լռեցված պատմողին, ուշադրություն չդարձնելով նախագահի նախազգուշացնող շարժմանը, շուտասելուկով, համարյա բառերը կուլ տալով՝ Շոգը դրանք նետեց պատմվածքի վրա:- Այո՛, ձեզ, ինչպես եւ ձեր Թուտուսներին ու Զեսերին, չի հետաքրքրում այս ֆանտասմագորիայի միակ հետաքրքիր բանը՝ մկանազրկված հոգեբանության հիմնախնդիրը, ոգու, որից խլել են նրա գործունակությունը. դուք փաստերի մեջ մտնում եք դրսից, ոչ թե ներսից, դուք ձեր մանրէներից վատն եք. նրանք խժռում են փաստերը, իսկ դուք՝ փաստերի իմաստները: Մեզ ոչ թե էքսերի, այլ էքսոնների մասին պատմեք, եւ այդ ժամանակ...

- Պատկերացրեք, որ իմ Շագգն էլ նույն կարծիքին էր: Իմ նկարագրած նիստին, Թուտուսի ելույթից հետո,- պատրոնի համար փոքր-ինչ անսպասելի,- նա վեր թռավ եւ աչքերը շողացնելով՝ սկսեց խոսել այն մասին, որ... բայց Շոգն ինձ ազատեց այդ «որ»-ի կրկնությունից: Գնամ

առաջ: Այսպես ուրեմն, դուք պետք է իմանաք, որ այդ նույն Ծագգը, որի կեցության մասին արդեն զեկուցել եմ ձեզ, իր ազատ ժամանակը տալիս էր խղճուկ պատմվածքներ հորինելուն: Բնականաբար՝ թաքուն, եւ նույնքան բնականաբար՝ «իր համար», քանի որ էքսերի դարում ամբողջովին ու մեկընդմիշտ «ներքին աշխարհներից» կտրված գրականությունը,- կրկնում եմ,- ուրիշ աշխարհներ գտնել չէր կարող: Ծագգի մի նովելը, որ կարծեմ կոչվում էր «Անջատվածը», պատմում էր ոմն իբր հանճարեղ մտածողի մասին, որը անտեսանելի փոքրիկ քաղաքի իրականացրած հեղաշրջման պահին վերստեղծում էր նոր, մեծ իմաստներներ բացահայտող իր համակարգը: Անսպասելիորեն առնվելով նոր սարքերի շարքը՝ նա սկսում է ինչ-որ տարրական, հինգ-վեց շարժումից բաղկացած, օրը-տօրե կրկնվող աշխատանք կատարել եւ անզոր է մարդկությանը հղել իր ամենահաս միտքը. նա, իբր, անջատված է մի աշխարհում, որտեղ գործելն ու մտածելը, մտահղացումն ու հանրահռչակումը տարանջատված են:

Մյուս էտյուդում պատմվում էր հոգու խորքից մինչեւ եղունգների ծայրերը չնաշխարհիկ ոմն տիկնոջ մասին (կենսագրությունը հաճախ սողոսկում է այնտեղ, ուր չեն խնդրում), տիկնոջ, որին մեքենան տալիս է հենց նրան, ում տրված է նրա սիրտը, բայց «ընտրյալը», հասկանո՞ւմ եք, չգիտի դրա մասին ու երբեք չի իմանա: Այդ ստեղծագործության մեջ շատ ջնջված տողեր ու թանաքաբծեր կային, այնպես որ, չեմ փորձի ավելի մանարամասն վերլուծել:

Վերջապես, մեր հեղինակի «առինքնող շնորհը» կանգ է առնում կյանքի մասին թեմայի վրա, որը միաժամանակ հայտնվում է եւ՛ կեցության, եւ՛ հայելու մեջ, այսինքն մի երեխայի պատմություն էր արվում, որը մեծանում-դառնում է պարմանի, եւ որին գիտակցության արթնացումն արդեն էքսի մեջ առնված է գտնում: Այդ արարածի համար էքսի սահմաններից դուրս աշխարհ չկա. էքսը նրա համար տրանսցենդենտալ է, իսկ սեփական արարքները ներկայանում են արտաքո իրերով, ինչպես մեզ համար՝ շրջապատող աշխարհի առարկաներն ու մարմինները. սեփական մարմինը երեխային տեսնվում է գիտակցությունից կտրված եւ իր հետ որեւէ կապ չունեցող,- կարճ ասած, մեքենայի ընթացքը, որը պայմանավորում է ողջ օբյեկտիվորեն կատարվողը, նրան տեսնվում է զգայականության Կանտի երրորդ կերպի նման, հավասար իրավունքներով՝ ժամանակի ու տարածության հետ: Ընդսմին, այդ արարածի էքսային մտածողությունը, որը չգիտի կամարտահայտումից արարքի անցնելու հնարավորության

մասին, բնականաբար հանգում է ինքն իր մեջ մտահղացումների ու կամարտահայտության աշխարհի գոյությունն ընդունելուն, այսինքն՝ ծայրահեղ սպիրիտուալիզմի: Բայց եւ այնպես, Շագգը իր հերոսին քայլ առ քայլ հանում է փակ շրջանից՝ ստիպելով որոնել ու գտնել ինչ-որ ex, որն անցնում է էքսային տրամաբանության սահմանը: Դրա համար հեղինակն օգտվում է, ինչպես նշվել է նաեւ նախորդ պատմվածքում, հոգու մեջ ծագող ցանկության եւ դրսից բերված արարքի պատահական զուգադիպումներից (թող որ խիստ հազվագյուտ). ներդաշնակության այդ պատահական պահերի դիտարկումները էքսոնին հանգեցնում են այլ մտարկելի աշխարհի մասին երազանքին, որտեղ այդ բացառությունները դարձել են կանոն եւ... բայց չավարտեմ, որովհետեւ Շագգն էլ չի ավարտել. Զեսի ռադիոգիրը պահանջում էր անհապաղ ներկայանալ:

Ներկայանալով պատրոնին՝ Շագգը նրան գտավ հասարակության մեջ,- թեեւ «հասարակություն» բառը դժվար այստեղ հարմար լինի,- բազկաթոռների մեջ թաղված երկու էքսոնների առաջ կանգնած:

- Դուք ուզում էիք քայլ անել անդին, եթե ձեզ ճիշտ եմ հասկացել վերջին նիստի ժամանակ: Փակեք դուռը: Այսպե՛ս: Իսկ հիմա ձեր առաջ կբացեմ այս երկուսի հոգիները: Նստեք ու նայեք:

- Բայց ես չեմ հասկանում...,- քրթմնջաց Շագգը:

- Հիմա կհասկանաք: Երկու ժամ քառասուն րոպե առաջ նրանց արյան մեջ համարյա մեկական գրամ ինիտ եմ ներարկել: Այս սրվակի պարունակությունը կբավականացնի եւս երկու-երեք փորձի: Ինիտը սկսում է գործել երրորդ ժամի վերջին: Ուշադրությո՛ւն:

- Բայց նշանակում է Նետետտին... նրա մահը,- եւ Շագգը զգաց, որ աչքերը մոլորվեցին մանեկենների, Զեսի ու սեղանին դրված փոքրիկ սրվակի արանքում:

- Վե՛րջ տվեք դատարկ բաների մասին խոսելուն: Տեսե՛ք. մեկը սկսում է շարժվել: Մի քանի րոպե առաջ հրամայել եմ նրանց անջատել էքսից: Ուրեմն, հասկանում եք...

Եվ իսկապես, մանեկեններից մեկը հանկարծ տարօրինակ ցնցվեց, փքեց կուրծքն ու սեղմեց բռունցքները: Աչքերը դեռ փակ էին: Հետո շրթունքների արանքում պղպջակվող փրփուր հայտնվեց, նա հանկարծ բացեց անթարթ աչքերն ու պղտոր նայեց դիմացը կանգնած մարդկանց: Թվում էր՝ երկար տարիներ մկաններից բաժանված ուղեղը շոշափելով փնտրում է նրանց ճանապարհը,- ու հանկարծ՝ միացո՛ւմ. տեղից պոկվելով՝ էքսոնը գազանային մռնչյունով նետվեց երկու քայլի վրա կանգնած

Զեսի վրա: Մի ակնթարթ, եւ նրանք գլորվեցին գետնին՝ խփվելով սեղանի ոտքերին ու շուռ տալով կահույքը: Շագգը նետվեց կծիկ դարձած մարմինների կողմը եւ ձեռքի մեջ սեղմած բանալու գլխիկով ողջ ուժով հարվածեց էքսոնի քունքին: Մամլակից ազատված Զեսը վեր կացավ ու ջարդված շրթունքներով սկսեց դժվարությամբ որսալ օդը: Նրա առաջին բառերն էին.

- Վերջացրե՛ք սրան: Ու կապեք մյուսին: Անմիջապե՛ս:

Երբ Շագգը պարանի հանգույցը ձգում էր կենդանի էքսի դաստակներին, նա շարժվեց, ինչպես շարժվում է երկար ու խոր քնից արթնացող մարդը:

- Ոտքերը կապեք,- շտապեցնում էր Զեսը՝ արյունը թքելով հատակին,- մի գոտեմարտն էլ հերիք է ինձ:

Կապկպված ձեռքերով ու ոտքերով մարդը վերջապես բացեց աչքերը: Մարմինը կծկող ջղաձգումները նման չէին մոլեգին խելագարի շարժումների. նա չէր բղավում, միայն կամացուկ ու խղճալի, համարյա շան պես վնգվնգում ու հեծեծում էր, կապույտ, դատարկ աչքերից հոսում էին արցունքները: Զեսը, աստիճանաբար ուշքի գալով, բազկաթոռով հանդերձ մոտեցավ ու փոքր-ինչ տխուր ժպիտով սկսեց զննել կապկպված մարդուն:

- Երկուսին էլ ճանաչում էի, Շա՛գգ, նրանց նախկին՝ նախէքսյան կյանքում: Այ սրան, որ դեռ ողջ է, համարյա սիրում էի, ու համարյա ինչպես ձեզ: Հրաշալի պատանի էր, փիլիսոփա ու մի քիչ պոետ: Խոստովանեմ. ազատագրման փորձի համար ընտրությունն աչառու եմ արել՝ ցանկանում էի ինձ մտերիմ մարդկանց վերադարձնել իրենց նախկին չմեքենայացված կյանքը, վերադարձնել ազատությունը: Եվ ահա, ինքներդ եք տեսնում: Բայց հերիք է դրա մասին: Եզրակացություններ անենք. եթե այս երկուսը, որ նյարդավորիչը միացնելուց առաջ միանգամայն առողջ հոգեբանությամբ ու ողջամիտ մարդիկ էին, չդիմացան իրականությունից անջատվելուն, ապա հիմք ունենք մտածելու, որ մյուս հոգեկերտվածքներն էլ չեն դիմացել էքսիֆիկացիային: Կարճ. մենք շրջապատված ենք խելահեղությամբ, միլիոնավոր խելագարներով, ընկնավորներով, մոլագարներով, ապուշներով ու թուլամիտներով: Մեքենաները նրանց հնազանդության մեջ են պահում, բայց հերիք է ազատես, բոլորը կհարձակվեն ու կտրորեն եւ՛ մեզ, եւ՛ մեր մշակույթը: Այդ ժամանակ՝ վերջ Էքսիհիային: Միեւնույն ժամանակ, ասեմ ձեզ, իմ ռոմանտի՛կ Շագգ. ձեռնամուխ լինելով այդ փորձերին, ես հույս ունեի մոտեցնել այլ դարաշրջան՝ ինիտի

դարաշրջանը: Ես մտածում էի՝ արդյոք չե՞մ սխալվել՝ անջատելով Նետետտիին ու մյուսներին, ոմանց՝ կյանքից, մյուսներին՝ ազատությունից: Բայց հիմա տեսնում եմ... մի խոսքով, ճիշտ էր, որ ինիտի վերջին գրամներով սրվակը մեր գոտեմարտում ջարդվեց:

Դուրս գալով փողոց՝ Շագգը քայլեց փողոցի երկարությամբ ու գնում էր, ինքն էլ չգիտեր՝ ուր: Այն ժամն էր, երբ մարդկանց խմբաքանակները վերադառնում էին աշխատանքից: Հայտնվելով դանդաղ ու միալար,- երկու քայլ՝ վայրկյանում,- անցնող շարքի մեջ՝ մեր պոետը չնկատեց էլ, թե ինչ արագությամբ ենթարկվեց շարասյուների հստակ ու ճշգրիտ հաճախականությանը: Նրան նույնիսկ դուր էր գալիս այդ թեթեւ, անհոգի դատարկությունը, որ բերում էր մեքենաների մեռած հրումներին առնչվելը: Զեսի աշխատասենյակում կատարվածից հետո ուզում էր հնարավորինս երկար չմտածել, ժամանակ կորզել մտքից, ու դիտմամբ, ասես ինչ-որ խաղի մեջ մտնելով, շրջապատողների պես արմունկները սեղմեց մարմնին, եւ աչքերը հառելով առջեւից գնացող էքսոնի կլոր ծոծրակին՝ մտածեց. «Պետք է նրա պես, ամեն ինչ՝ նրա պես. այդպես ավելի հեշտ է»: Դիմացի ծոծրակը, համաչափ ճոճվելով, խաչմերուկից թեքվեց ձախ: Շագգը՝ ետեւից: Ծոծրակը պողոտայի ուղիղ գծով գնում էր դեպի կամրջի պողպատե կուզը: Շագգը՝ ետեւից: Արդեն անցնում էին խուլ արձագանքող բազրիքների քարե զուգահեռների արանքով: Հանկարծ ծոծրակը խաղագնդի պես խփվեց աջ բազրիքին, հետո,- անկյան տակ,- ուղիղ՝ ձախ բազրիքին: Շագգը՝ ետեւից: Ծոծրակը, կլորանալով ու կարմրելով, կառչեց բազրիքից ու՝ ներքեւ: Ճողփյունով: Եվ Շագգն էլ՝ ճողփյունով:

Երբ նյարդակալիչների հերթապահի զեկույցն ընդունող Զեսին հայտնեցին քարտուղարի մահվան մասին, միայն մի վայրկյան ջղաձիգ խոժոռեց հոնքերը եւ անմիջապես էլ նայեց զեկույցն ընդհատած ինիտին.

- Շարունակե՛ք:

«Շարունակությունը» խիստ տագնապալի էր. նյարդավորման չենթարկվելու դեպքերը ժամ առ ժամ աճում ու սկսում էին զանգվածային բնույթ ստանալ: Էքսոն-սարքավարներին, որոնք սպասարկում էին կենտրոնական էքսը, որը խիստ ճշգրիտ ու բարդ մկանային լիցքեր էր պահանջում, ստիպված էին հանել աշխատանքից ու ոչնչացնել. չափազանց վտանգավոր էին դառնում: Բոլոր սարքերի ստեղնաշարների առաջ, ինչպես Էքսինիայի համար պայքարի շրջանում, նորից կանգնեցին ինիտները: Վրա հասան դժվար ու սեւ օրեր. աշխատանքից հետ սովորած, փափկակենցաղ օլիգարխները կրկին ստիպված էին, համարյա առանց հեր-

թափոխի, արհեստական կյանքը կտկտացնել ահռելի գործիքի ստեղներին: Բայց նախկին, ճշգրիտ հաշվարկված ներդաշնակությունն այլեւս չկար. ստեղները ցատկոտում էին, նյարդավորիչների հրումները՝ լուծվում եթերում՝ չհասնելով մկաններին. անսպասելիորեն հնազանդությունից դուրս եկած փաստային զուգորդումների պարտիտուրան հրաժարվում էր ենթարկվել նվագողին: Անտեսանելի քաղաքի թափանցիկ կայմերը շարունակում էին զնգալ նրբաձայն բոռերի պարսի պես, բայց նրանց իմաստուն ներդաշնակությունը բզկտվել-վերածվել էր իրար խփվող եթերային ալիքների կույտերի, եւ հանրահայտ Pax Exiniae խախտվել ու աղճատվել էր:

Հիմա արդեն բոլոր ինիտներին իր մեջ առած փոքրիկ քաղաքը պատող փշալարարին ամեն օր էքսոնների դիակներ էին գտնում. փորձում էին պատռել պողպատե օղակը: Տեղերում աշխատող դիտորդների մեծ մասը,- ինիտների թվից,- զոհվել էին բռնի մահով, մնացածը փախել էին կենտրոն: Անհնար էր որեւէ մեկով փոխարինել նրանց. քաղաքը մեկուսացված ու շրջապատված էր՝ փշալարով, խելահեղությամբ, անհայտությամբ:

Ինքնանջատվածների դիակները հերձում էին. մանրակրկիտ հետազոտվում էր նրանց ուղեղն ու շարժողական նյարդերի համակարգը: Ծուտով ուղեղներում գիտությանն անհայտ նյութի առկայություն գտան, որը չնչին քանակությամբ արտադրվում էր նյարդային հյուսվածքներում. ըստ երեւույթին դա ինչ-որ պաշտպանական ներքին արտազատում էր, որն աստիճանաբար կուտակվում էր ինքնանջատվածների օրգանիզմներում եւ կապված էր էքսից դուրս ընկնելու հետ: Զեսը հրավիրեց քիմիական փորձարանի վարիչին, խնդրեց ճշգրիտ նկարագրել այդ երեւույթը եւ լսելով բոլոր կետերը՝ հանեց ճնշածծանի տակ սպասող դեղնած թերթիկներն ու ցույց տվեց քիմիկոսին: «Նետետտիի ձեռագիրն է»,- աչքերով տողերի վրայով ցատկոտելով՝ մոլորված քրթմնջաց նա:

- Ինձ ասել են, որ դուք քիմիկոս եք, ոչ թե ձեռագրագետ: Ի գործ: Նույնակա՞ն է բանաձեւի հետ այս նորահայտ արտազատումը:

- Նույնակա՞ն:

- Ծնորհակալ եմ: Այդ դեպքում կհամարենք, որ դուք վերստին հայտնագործել եք նյութը, իսկ ես՝ անունը՝ ինիտ:

Կոլեգիայի վերջին նիստում լսելով կարծիքները՝ Զեսը անփոփեց.

- Եվ այսպես, in-ը ապստամբել է ex-ի դեմ: Վիբրոֆագերի դեմ ինիտի պայքարի ելքը պարզ է: Բայց քանի դեռ վիբրոֆագերը ճակատ չեն բա-

ցել, քանի դեռ միլիոնավոր խելագարություններ չեն հորդել դեպի մկանները, մենք կարող ենք ոչ ոքի ավարտել խաղը: Ես առաջարկում եմ կանգնեցնել էքսերին: Անհապաղ՝ միանգամից եւ բոլորին:

Քվեարկության ժամանակ բոլորը ձեռնպահ մնացին: Բացի Զեսից: Նրա միակ ձայնը բավական եղավ անտեսանելի քաղաքի բոլոր ձայները դադարեցնելու համար: Օդում տատանվող էքսերի դզզոցը սկսեց դանդաղ մարել, սահեց վեր եւ անհետացավ ծխից քշված բոռերի պարսի պես: Եվ նույն վայրկյանին տասնյակ միլիոնավոր մարդիկ անշարժ կամ թույլ ցնցվող մարմիններով թափվեցին գետնին:

Ինիտների ջոկատը դուրս եկավ իր փշալարե բանտարկությունից: Ճանապարհին բաժանվելով խմբերի՝ նրանք անցնում էին անշունչ խմբերի արանքով: Ելքի երրորդ օրը որոշ խմբեր դեռ ստիպված էին քայլել դիակային գարշահոտի միջով, մյուսներն արդեն հասցրել էին դուրս գալ մարդազուրկ, ավելի ստույգ՝ դիակազուրկ տարածքներ: Բայց անտառներն ու քարածավները, որտեղ թաքնվել էին ինիտները, լրիվ ամայի չէին. անմատչելի տեղերում ու թավուտներում արդեն ապրողներ կային՝ կիսավայրենացած կլաններով ու հորդներով, մշակույթից վտարված, առաջին եթերային քամով օծված մարդկային առանձնյակներ: Ծվարել էին անտառների խորքում, թաղվել հողի մեջ՝ սարսափած անտեսանելի նյարդավորիչների կամքի մեջ առնվելու հեռանկարից: Նրանք իրենց քաղաքային հագուստը վաղուց արդեն փոխարինել էին գազանի մորթով ու կերպարով եւ անտառներում մեծացած իրենց ձագերին վախեցնում էին էքս չար աստծո անունով: Փոքրաթիվ ինիտների մի մասը մահացավ, մյուսները ստիպված էին ձուլվել անտառների այդ մարդակենդանական աշխարհին: Եվ պատմության անիվը, մի լրիվ շրջան անելով, նորից պտտեց իր ճանր ճաղերը: Բայց եթե «Անանուն» անվան տակ թաքնված մարդը, որը,- հիշո՞ւմ եք, իմ պատմած առաջին օրը,- քիչ էր մնում ընկներ ամենասովորական ավտոմոբիլի ամենասովորական անիվների տակ, համենայնդեպս ընկներ ու ճզմվեր իր գաղափարի հետ միասին, ի՞նչ իմանաս, գուցե եւ ամեն ինչ ուրիշ կողմ պտտվեր: Չնայած...

Դյաժը, պողպատե բեղիկներից բռնած՝ ապակիները քաշեց աչքերից ու դրանց վրա կռանալով սկսեց տրորել դարչնագույն մետաքսի կտորով: Անսպասելիորեն կարկամած, կարմիր ու անթարթ կոպերի արանքում կկոցված բիբերը, թվում էր, դադարել են տեսնել թեման:

Լռությունը երկարեց: Հետո շարժվեցին բազկաթոռները: Առաջինը դեպի շեմը դիմեց Ռարը: Ես վախեցա, որ նախագահն այս անգամ էլ հար-

ցերով կփակի ճանապարհս, բայց Զեզը նստել ու նայում էր մարած բուխարուն, ու թվում էր ամբողջովին ամփոփված է ինչ-որ դժվար մտքի մեջ: Ես աննկատ ու անհրավեր՝ դուրս եկա Ռարի ետեւից:

Միջանցքում հասա նրան: Միասին իջանք կեսգիշերային, համարյա ամայի փողոց:

- Վախենում եմ խճճվեմ բառերի մեջ: Դուք կարող եք չպատասխանել, բայց ես չեմ կարող չհարցնել: Ու հատկապես ձեզ: Դուք միակն եք նրանց մեջ, ում մասին մտածում եմ՝ մարդ է: Կարելի՞ է:

- Լսում եմ,- առանց ինձ նայելու նետեց Ռարը: Մենք արմունկ արմնկի շարունակում էինք քայլել դատարկ մայթով:

- Ինձ համար մի տեսակ անսովոր ու դժվար է տեղակալներիդ, ինչպես ձեզ կոչում եք, շրջապատում: Ես պարզապես, իսկ դուք... մի խոսքով, ես չեմ ուզում էքսոն լինել ինիտների մեջ: Ձեր ինչի՞ն եմ պետք: Սպանեք ձեր տառերը, բայց ես տառեր չունեմ. Ո՛չ մտահղացումներ, ո՛չ տառեր: Կրկնում եմ, ես չեմ ուզում էքսոն լինել:

- Դիպուկ բնազդ ունեք. «Էքսոն», վատ չի: Ես իրավունք չունեմ պատասխանելու, բայց համենայնդեպս կպատասխանեմ: Ամեն ինչում մեղադրեք ինձ՝ ինիտիս,- ու կիսաշրջվելով՝ Ռարը փաղաքուշ կիսաժպիտի միջով նայեց ինձ:

- Ձե՞զ:

- Այո՛: Եթե ես վեճ չբացեի Զեզի հետ ասեղ ու թելի մասին, դժվար թե մեր բուխարու առաջ հայտնվեր ութերորդ բազկաթոռը:

- Ասեղի ու թելի մասի՞ն:

- Իհարկե: Հերթական շաբաթօրյա հավաքին ձեր հայտնվելուց մի շաբաթ առաջ ես սկսեցի ապացուցել, որ մենք մտահղացողներ չենք, այլ պարզապես խենթեր, որոնք անվնաս են միայն մեկուսացման շնորհիվ: Առանց տողի մտահղացումը, պնդում էի ես, նույնն է, ինչ ասեղն առանց թելի. ծակում է, բայց չի կարում: Ես եւ՛ նրանց, եւ՛ ինձ մեղադրում էի նյութի հանդեպ վախի մեջ: Հիշում եմ՝ հենց այդպես էլ ասացի. նյութավախություն: Նրանք հարձակվեցին ինձ վրա, եւ բոլորից ավելի՝ Զեզը: Պաշտպանվելով՝ ես հայտարարեցի, որ կասկածում եմ, թե մեր բոլոր մտահղացումները մտահղացում են, դրանք չեն ստուգվել արեւով: «Ե՛վ մտահղացումները, եւ՛ բույսերը աճում են մթության մեջ, բուսաբանությունն ու պոետիկան տվյալ դեպքում գործում են առանց լույսի»,- Զեզին պաշտպանելով՝ փորձեց հիմնավորել Թյուդը: Այդ դեպքում, եթե կամենում եք համանմանություններով խփել, պատասխանեցի ես, անարեւ այգին կարող է մի-

այն լուսազուրկ բուսականություն աճեցնել: Ու նրանց պատմեցի առանց լույսի ծաղիկներ աճեցնելու փորձի մասին. Միշտ,- եւ դա ուշագրավ է,- շատ երկար ճյուղերով բույս է ստացվում, բայց հերիք է այդպիսի լուսազրկված նմուշը դնես արեւի տակ, գիշերների ու ցերեկների հերթափոխությամբ ապրող սովորական ծաղիկների կողքին, անմիջպես թուլանում, թոշնում ու թառամում է, կորցնում խավարում ստացած գունավորումը: Մի խոսքով, մեր վեճը հերթի դրեց հետեւյալ հարցը. ընդունա՞կ են մեր մտահղացումները դիմանալու լույսով փորձությանը, կապրե՞ն նաեւ մեր մութ սենյակից դուրս: Որոշվեց ժամանակավորապես մի զույգ ականջ ընդգրկել դրսից՝ տառերով դաստիարակված միջին ընթերցողի: Բավարա՞ր տեսանելի կլինի մեր գրադարակների դատարկությունը: Բայց այստեղ տագնապեց Ֆէվը: «Մութը,- ասաց նա,- մարդկանց գող է դարձնում, դա միանգամայն բնական է: Իսկ եթե այդ ներմուծվածը, որի գլուխը, ընդհուպ մինչեւ գագաթը, հենց մենք ենք լցնելու մտահղացումներով, կարողանա դրանք հանել գլխից եւ փոխանակի փողով ու փառքով»: - «Դատարկ բան է,- հանգստացնում էր նրան Զեսը,- ես գիտեմ մեկին, որը հարմար է այդ գործին: Նրա առաջ հանգիստ կարելի է բացել բոլոր շաբաթների բոլոր թեմաները: Ոչ մեկին ձեռք չի տա»: - «Բայց ինչո՞ւ»: - «Պարզապես ձեռքեր չունի. մի արարած, որին Ֆիխտեն կոչել է «մաքուր ընթերցող». Մաքուր մտահղացումների համար ավելի լավին հնարավոր չէ գտնել: Ահա, կարծես այսքանը: Կներե՛ք:

Նա սեղմեց ձեռքս եւ անհետացավ փողոցի անկյունադարձին: Մի րոպեի չափ կանգնած էի ապշահար ու մոլոր: Ռարը գնաց, բայց նրա բառերը դեռ պտտվում էին շուրջս, ու չգիտեի ինչպես ազատվեմ նրանցից: Երբ ուշքի եկա, հասկացա, թե ինչ սխալ եմ գործել՝ մինչեւ վերջ չխոսելով ու չհարցնելով գլխավորի մասին. սեւ, նեղ փողոցը ձգվում էր իմ առաջ, ասեղի անցքից դուրս պրծած թելի պես:

5

Սկզբում որոշեցի այլեւս չգնալ Տառասպանների ակումբի շաբաթօրյա նիստերին: Բայց Ռարի մասին միտքը շաբաթվա վերջին ստիպեց փոխել որոշումս: Առաջին իսկ երեկոյից էր այդ անկրկնելի ինքնահատուկ մարդն ինձ կարեւոր ու անհրաժեշտ էր թվացել. հենց անունը, որքան էլ անիմաստ վանկ ձեւանար, միակն էր նրանց անունների մեջ, որը հիշեցնում էր ինչ-որ իմաստի մասին: Բայց հասցեների սեղանն այն հասցեով չէր փոխանակի, իսկ ես անպայման պետք է տեսնեի Ռարին, թեկուզ մի

անգամ, եւ ամեն ինչ ասել մինչեւ վերջ. Չէ՞ որ Ռարը նրանցը չէ, այլ մերը, ինչո՞ւ մնա սպանողների ու խեղողների մեջ: Սկզբում ծեռագիրը, հետո նաեւ... ինձ հանդիպում էր պետք Ռարի հետ: Ու քանի որ դա հնարավոր էր միայն դատարկ գրադարակների սեւ կառեի մեջ, երբ եկավ շաբաթը, որոշեցի,- վերջին անգամ,- ասում էի ինձ,- մասնակցել ակումբի նիստին:

Երբ մտա հավաքվածների շրջանը, արդեն իր սովորական տեղը նստած Ռարը զարմացած նայեց ինձ: Փորձեցի պահել հայացքը, բայց նա անմիջապես շրջվեց՝ կատարյալ անջատվածության ու անտարբերության տեսքով:

Սովորական ծեսից հետո խոսքը տրվեց Ֆէվին: Նրա մանր, Ճարպի միջով դժվարությամբ թափանցող աչքերում ինչ-որ խորամանկ փայլ առկայծեց: Ֆէվը շրջվեց ճարպի ու մկանների բեռան տակ ճռնչացող բազկաթոռում:

- Իմ ասթման,- օդը դժվարությամբ կուլ տալով՝ սկսեց նա,- չի սիրում, որ տրվում եմ երկար խոսակցությունների: Դրա համար էլ կփորձեմ ընդամենը ուրվագծել մտածածս Երեք բերանների պատմությունը:

Ներածությունն այսպիսին է: «Երեք թագավորների» պանդոկում, խմելով վերջին թալերը, զվարճանում էին երեք հոգի: Նրանց անունների համար ինձ բավական է երեք տառ. Ինգ, Նիգ եւ Գնի: Արդեն կեսգիշերն անց էր. այն ժամը, երբ շշերը դատարկվում են, իսկ հոգիները պռնկեպռունկ լցվում,- եւ ընկերները բաժակների նվագի տակ զվարճանում էին՝ ամեն մեկն իր ձեւով: Ինգը խոսելու վարպետ էր. բաժակը բաժակին խփելով՝ բաժակաճառեր ու պարզապես ճառեր էր ասում, մեջբերում սուրբ հայրերին ու հույժ գույնզգույն զրույցներ անում: Նիգը համբուրվելու սիրահար ու դրա մասնագետն էր (ինչպես ոչ ոք) ու հիմա հագիվ էր հասցնում պատասխանել հարցերին ու բաժակաճառերին. նրա ծնկներին նստած չաղ աղջիկը, եթե համբույրների քանակով վճարեին, մի երեկոյի ընթացքում հարուստ հարսնացու կդառնար: Գնին ո՛չ բառերի կարիք ուներ, ո՛չ համբույրների. փքված թշերը փայլում էին յուղից, իսկ բերանը չէր պոկվում հսկայական ոչխարի ոսկորից, որից ջանասիրաբար ու համբերատար ատամներով պոճոկում էր միսը:

Հանկարծ աղջիկը Նիգի երկու համբույրների արանքում ասաց.

- Ինչո՞ւ մարդիկ երեք բերան չունեն:

- Որ միանգամից երեք հոգու հե՞տ համբուրվեն,- նորից շրթունքները շրթունքներին մոտեցնելով՝ քրքջաց Նիգը:

- Սպասի՛ր,- նրան կանգնեցրեց Ինգը՝ զգալով նոր թեման, որ արժա-

նի էր ճիշտ հռետորական մշակման:- Համբույրներով մի խցկվիր բառերի արանքը:

- Հենց էդ էլ ասում եմ,- Ինգին դարձավ Նիգի ընկերուհին,- եթե ձեզնից յուրաքանչյուրը երեք բերան ունենար, որ միաժամանակ եւ՛ խոսեր, եւ՛ ուտեր, եւ՛ համբուրվեր, այդ դեպքում...

- Ցնդաբանությո՛ւն,- կտրեց Ինգն ու տնկեց մատը,- փեշի տակից սիլոգիզմներ չեն հանում: Ասկվի՛ր: Ավելի լավ է դիմենք սուրբ ավանդություններին ու ֆորմալ տրամաբանությանը: Երիցս երանելի Ավգուստինն ուսուցանում է, որ մարդը, ի տարբերություն անմիտ գազանի, ընտրողական արարած է: Դրա վրա չի՞, արդյոք, հիմնվում liberum arbitrium-ը *[Ազատ կամք, ընտրության իրավունք - լատ.]*, շատից լավագույնն ընտրելու ունակությունը: Իսկ Արիստոտելը մեզ սովորեցնում է առաջնային նպատակը՝ էնտելեքիան, տարբերել պատահական կամ ստորադաս հարակից նպատակներից. իսկ Թովմաս Ակվինացին լրացնում է նրանց՝ սուբստանցային իմաստը անջատելով պատահականից, ներմուծվողը՝ արտածվողից: Բերանը, կասեր նա, հաղորդակից է եւ՛ ուտելիքին, եւ՛ համբույրին, եւ՛ բառին. Բայց ո՞րն է նրա գլխավոր հատկությունը: Ի՞նչ ես կարծում, սիրելի բարեկամ Գնի՛: Հանիր ոսկորը բերանից դուրս ու պատասխանիր:

Ոսկորը մի քիչ դեն քաշվեց, որ ճանապարհ տա բառերին.

- Ինձ թվում է,- խոսեց Գնին,- փաստարկների համար պետք չէ քրքրել գրքերը: Դրանք այ այստեղ են, իմ ափսեի մեջ. Պարզ է. բերանը ուտելու համար է: Իսկ մնացածը դրան կպած բան է:

- Իմ բարի բարեկա՛մ,- գլուխն օրորեց Ինգը,- պետք չէ փաստարկներ փնտրել կոճոնների մեջ: Իսկ ինչո՞ւ է կպած:

- Որովհետեւ,- պատասխանեց Գնին՝ նախապես մի ամբողջ պինտ գինի լցնելով իր համար,- եթե ես ու դու չխմեինք ու չուտեինք, ապա մահը վաղուց բաժանած կլիներ մեզ, ինձ՝ դրախտ, քեզ՝ դժոխք, ու համաձայնիր, այդպիսի հեռվից քեզ համար դժվար կլիներ հարցնել, իսկ ինձ համար՝ պատասխանել:

- Խղճում եմ հրեշտակներին,- քաշքշելով թմփլիկ ու կարմիր շրթունքին թառած բեղը քշքշելով՝ միջամտեց Նիգը,- որ երբեւէ ստիպված են լինելու այսպիսի մսագունդը քաշել լեռնային բարձունքներով վեր: Հասկացիր, միամի՛տ, որ եթե երկրի վրա համբույրներ չլինեն, չեն լինի նաեւ ծնունդներ: Իսկ եթե ոչ մեկը չծնվի, ապա մեռնող էլ չի լինի: Հասկացա՞ր:

Բայց Ինգը, խղճահարության ժպիտը չթաքցնելով, ընդհատեց նրանց.

- Դու, Նի՛գ, ճիշտ ես միայն նրանում, որ սխալ ես համարում Գնիին: Որեւէ պոռնիկի շրթունքներն ինչո՞վ են լավ կոճոնևերով ափսեից: Ջուտ տրամաբանորեն դատենք. քանի որ համբուրելիս բերանին ուրիշ բերան է հարկավոր, ապա դրանով իսկ մտցվում է ուրիշի կատեգորիան (հունարեն), ինչպես ասել է Պլատոնը, որը լուծելու փոխարեն հետաձգում է խնդիրը: Հիմա՝ հերթով. եթե չլինի ճաշակելը, կյանք էլ չի լինի, այդպես է, բայց եթե չլինեն համբույրները, չի լինի նաեւ ողջերի ծնունդը, դա էլ է այդպես, բայց,- ուշադի՛ր լսեք,- եթե Աստված չասեր «եղիցի», չէր ծնվի եւ բուն ծնունդը, չէին ծագի ո՛չ կյանքը, ո՛չ մահը, եւ աշխարհն էլ սատանան գիտի որտեղ կլիներ: Ես պնդում եմ (հռետորը նույնիսկ բռունցքը խփեց սեղանին), որ բերանի իրական նշանակությունը ոչ շրթունքները չփչփացնելն է, ոչ էլ ուտելիք ու խմելիք խժռելը, այլ ի վերուստ տրված բառեր բարբառելը:

- Բայց եթե այդպես է,- չէր հանդարտվում Գնին,- ինչո՞ւ է Սուրբ գրքում ասվում, որ ոչ թե բերանը մտնողը, այլ բերանից ելնողն է ապականում մարդուն: Ի՞նչ կպատասխանես սրան:

Միանգամից, իրար հերթ չտալով, սկսեցին պատասխանել եւ՛ Ինգը, եւ՛ Նիգը, ու վեճը կձգվեր մինչեւ լույս, եթե վրա չհասներ քունը, որ վիճողների աչքերը փակեց երազով, իսկ բերանները՝ խոմփոցով:

Երազում Ինգին հայտնվեց մի հրեշավոր եռաբերան արարած, որն անընդհատ շարժում էր վեց շրթունքները: Ինգը փորձում էր այդ արարածին ապացուցել, որ նա գոյություն չունի, բայց նողկալի եռաբերանը, խոսելով միանգամից բոլոր բերաններով, թույլ չէր տալիս համոզել իրեն: Ինգը արթնացավ սառը քրտինքի մեջ կորած: Պատուհանից այն կողմ կարմրին էր տալիս արշալույսի բարակ պատռվածքը: Սկսեց արթնացնել ընկերներին: Նիգը աչքերը բացելուն պես հարցրեց՝ ո՞ւր է Իգնոտան: Գնին, մտածելով, որ դա ուտելիքի անուն է, մռայլ քրթմնջաց. «կերանք»: Նիգը քրքջաց ու բացատրելով, որ դա նախորդ օրվա ընկերուհու անունն է՝ ավելացրեց.

- Ավելի ճիշտ՝ ինքն է մեզ կերել: Վատ չէ՛ր: Չէ, իսկապես, ո՞ւր է չքացել...

- Ուրվականի պես,- ավարտեց Ինգը:- Եթե հավատանք երազին, ապա քո Իգնոտան չափից դուրս շատ բան գիտեր. հնարավոր է, որ աղջիկ էլ չէր, այլ՝ սուկկուբուս՝ տեսիլք, ստվեր:

- Սատանա՛ն տանի,- քմծիծաղեց Նիգը,- այդ ստվերը ճզմել է ծնկներս: Պատմիր երազդ:

Ու վեճը երազից դարձավ իրականությանը, ասես ինքն էլ էր քնել ու

հանգստացել: Երեք բերաններն իրար հերթ չտալով բղավում էին բերանի գլխավոր նշանակության մասին.

- Որ ուտի:

- Սուտ ես,- որ համբուրի:

- Երկուսդ էլ սուտ եք: Որ խոսի...

Եվ այստեղ ես թողնում եմ թիերն ու հանձնվում հոսանքին. ինքներդ մտածեք՝ ինչո՞ւ հորինեմ, ճռճռացնեմ թիակալները, եթե հասել եմ այդ հզոր հոսանքին, որն ինքը կտանի ստի ու ճշտի, «Պանչատանտրայի» թափառիկ բրահմինների եւ այլ ընթերցումների մասին իմ սյուժեն: Այսինքն ուզում եմ ասել, որ Ինգը, Նիգն ու Գնին վեճի մեջ ոչնչի չհասնելով, ի փառս սյուժեստեղծման կանոնների, մեկնեցին շրջելու աշխարհում՝ բոլոր հանդիպողներից խնդրելով լուծել իրենց վեճը: Այդ թափառիկ վեճերի անտրամաբանականությունը, կենսական անհիմնությունը պետք է որ շփոթեցնեին նրան, ով գիտի, որ կենսաստեղծումն ու սյուժեստեղծումը ընդամենը խաչվում են, բայց չեն համընկնում: Սյուժեն ցրում է այդ վեճերը, ինչպես բույսն է իր սերմերը ցրում՝ տարածության մեջ, որտեղ դրանք ծիլ են տալիս: Եվ այսպես, լողում եմ...

- Այո՛, լողում եք,- Զեզը բուխարու ունելիով վրդովված ծեծում էր ածուխները, կայծերը ձգվում էին հարվածներին ընդառաջ,- բայց ո՞չ, արդյոք, տառերի շեղջերով լեցուն գրապահարանին հեծած: Պետք է ասեմ ձեզ, բարեկամնե՛ր, որ վերջին ժամանակներս ձեր բոլոր մտահղացումներից տպագրական ներկի հոտ է փչում. մեկը տառերով լի գրքերն է դարձնում իր նովելների «կերպար», մյուսը, ինքներդ տեսեք, «բաց է թողնում թիերը» (ի դեպ, դժվար է տպագրական հաստոցներով ավելի ծեծված մետաֆոր հորինել) եւ անմիջապես ընկնում սյուժե մրոտելու թանաքային հոսքի մեջ: Այսպես մենք շուտով...

Ֆէվի երակներն ուռան.

- Դուք չափից դուրս եք վախենում գրքի կազմից: Ես նրա մեջ ընկնել չեմ կարող, որովհետեւ... մուկ չեմ: Ես ոմանց պես նշանավոր գրող չեմ եղել, եւ այբուբենն ինձ համար խայծ չէ, իսկ այ...

Բայց այստեղ Զեսը լռելու նշան արեց ու կտրուկ դարձավ իմ կողմը.

- Վեճն առաջարկում եմ մեր հյուրի դատին. նրա համար կողքից ավելի տեսանելի է ու հեշտ կլինի արդար լինել:

Բոլոր աչքերը հառվեցին վրաս: Եվ ես պատասխանեցի.

- Դրանով ձեր վեճը կվերածեք «թափառիկ վեճի», ինչի թույլատրելիության դեմ հենց նոր առարկում էիք:

- Մերժված գամբիտ, վարպետորեն խաղացվեց: Դեն քաշվիր ճանապարհից, Զե՛զ, եւ թույլ տուր իմ երեք հերոսները հասնեն այնտեղ, ուր վաղուց պիտի լինեին: Լույսը բացվում է: Մեկ էլ տեսար պանդոկապանն արթնացավ եւ փող պահանջեց գիշերակացի ու ջարդված ամանեղենի համար: Իսկ գրպաններում դատարկություն է: Ինգը, Նիգն ու Գնին ոտքերի ծայրերին դուրս եկան «Երեք թագավորից»: Փոքրիկ քաղաքը դեռ քնած էր՝ լուսամուտների փեղկերը կկոցած, իսկ դիմացից, պարկը ձեռքին ու զանգակը մահակի ծայրին զնգացնելով, արդեն ընդառաջ էր գալիս ողորմություն հավաքող վանականը: Նա պարզեց զնգզնգացող պարկը, բայց ողորմության փոխարեն հարց ստացավ.

- Աստված ինչո՞ւ է քեզ բերան տվել. ուտելիքի՞, համբույրների՞, թե՞ խոսելու համար:

Վանականը հանգիստ թողեց պարկը, զանգակը լռեց, ինքն էլ լուռ էր: Նիգը նայեց կնգուղի տակ.

- Կամեդո՛լ է,- սուլեց նա,- միանգամից լռության ուխտի հանդիպեցինք: Վատ են գործերդ, Ի՛նգ: Չէ՞ որ սա համարյա պատասխան է. սրբությունը բառերի կարիք չունի:

- Այո՛, բայց նա պահքով էլ է ապաշխարում: Բացի այդ, կարծում եմ պոռնիկներին համբուրելը նույնպես քիչ է օգնում հոգու փրկությանը: Ստացվում է, որ բերանն ընդհանրապես անիմաստ ճեղք է դեմքի վրա, որը պետք է արագ կարել ու ապրել անբերան կյանքով: Ո՛չ, այստեղ ինչոր բան այն չէ: Գնում ենք առաջ:

Կրկին հնչած զանգակն ու երեք վիճողները բաժանվեցին: Քաղաքի դարպասների մոտ Ինգին, Նիգին ու Գնիին հանդիպեց մի խուլ պառավ. որքան էլ բերանի մասին հարցը գոռացին ականջին, նախ՝ մեկ, հետո՝ մյուս, վերջապես՝ եռածայն, սա անընդհատ իրենն էր պնդում.

- ճակատին սեւ նշան: Կո՛վ: Չե՞ք տեսել: Ճակատին սեւ նշան: Կո՛վ:

- Ամեն մեկը իր հոգսին,- հոգոց հանեց Ինգը:

Այդ պահին ժանգոտ ճռնչոցով բացվեցին քաղաքային դարպասի փեղկերը: Իմ երեքը սկսեցին ճամփորդությունը:

Մի քանի լյո անցնելով՝ նրանք հանդիպեցին մի դղրդացող սայլի, որի վրա, ոտքերը կողից կախ ու հացի կողը՝ շրթունքների արանքում, ճոճվում էր մի լոլոզ ջահել: Ինգը պատրաստվում էր նրան էլ գոռալ հարցը, բայց անիվների դղրդոցի միջով ջահելը հազիվ թե լսեր, իսկ եթե լսեր էլ, բերանը խիստ զբաղված էր, որպեսզի լուծեր բերանի խնդիրը: Գնացին առաջ:

Կեսօրին, քամուց օրորվող հասկերի մեջ մի ճամփորդի տեսան. ուսին պարկ էր, ձեռքին՝ գավազան, դեմքը ժպտում էր փոշու եւ արեւայրուքի տակից, քայլում էր լորերի հետ զուգասուլելով. գուցե թափառիկ կղերականներից էր (դեմքը խնամքով ածիլված էր), հնարավոր է նույնիսկ՝ ձեր հայր Ֆրանսուազը...

Պատմողը հանկարծ դարձավ Թյուդին ու ողջույնի նշանով բարձրացրեց աջ ձեռքը: Թյուդը ժպտալով պատասխան շարժում արեց. երկու թեմա, նավերի պես, որոնց երթուղիները խաչվել էին, ողջունեցին իրար, ու Ֆէվը շարունակեց:

- Ինչո՞ւ մարդը մի բերան ունի, ոչ թե երեք,- քահանային խոնարհվելով՝ հարցրեց Նիգը:

Հարցվածը կանգ առավ ու նայեց ճամփորդներին: Սկզբում կոկորդը ողողեց գոտուց կախ գինու տափաշշից, հետո աչքով արեց եւ ասաց.

- Իսկ դուք համոզվա՞ծ եք, զավակնե՛րս, թող Աստծո օրհնությունը ձեզ հետ լինի, որ իսկապես մեկ բերան ունեք: Երբ գնամ, իջեցրեք շալվարներդ ու ստուգեք՝ երկուսը չի՞: Եվ եթե հասնեք մոտակա ուրախության տուն, ուզածդ աղջիկ կապացուցի ձեզ, որ երեքն է: Բարի ճանապարհ:

Եվ ճանապարհի կաշվե կոշիկներով ոտքերը տարան նրան. առաջ անցնելով՝ հայր Ֆրանսուազը արագ անհետացավ եւ՛ երեքի տեսադաշտից, եւ՛ պատմվածքից:

- Բայց ախր տերտերն ուզում էր հիմարացնել մեզ,- ծոծրակը քորեց Գնին:

- Ու լավ էլ արեց իր գործը,- զայրացած թքեց Նիգը:

- Հիմարացնելը,- պատասխանեց Ինգը,- միայն հիմարներին է ուրախացնում: Մարդկային մտքերը կոպիտ ու տափակ են դարձել, այ այս դաշտի պես. հռհռալն ավելի հեշտ է, քան մտածելը: Ո՞ւր են մեծն Ստագիրիտի լոգիզմները, ո՞ւր են Աբերոյեսի դեֆինիցիաները եւ Էրիգենցի Յոհաննեսի գաղափարների հիերարխիան: Մարդիկ մոռացել են գաղափարների հետ վարվելու ձեւը. գաղափարի աչքերին նայելու փոխարեն շտապում են նայել պոչի տակ:

Ու երեքը լուռ շարունակեցին ճանապարհը:

Երբեմն ընդառաջ էին գալիս աշխատանքից տուն դարձող գեղջուկներ, իրենց ջորիների զանգակների ղողանջի տակ ննջող վաճառականներ: Գոլիարդի հետ հանդիպումից հետո որոշեցին զգուշանալ ու հարց չտալ ամեն պատահածի: Մեկ օր քայլելուց հետո, հեռվում, գետնին խո-

նարիված ձիթենիների վրայից երեւացին քաղաքի ատամնավոր պարիսպները: Փոշին ու շոգը նստում էին: Ճպուռներն ավելի բարձր էին երգում խոտերի մեջ, իսկ արեւն ավելի թույլ էր լուսավորում: Քաղաքի դարպասին չհասած, ճամփեզրի կանաչ մարգագետնում խոտերին նստած մի կնոջ տեսան՝ շրջապատված ճպուռների շշնջոցով, բարուրած երեխան գրկին: Կինը միանգամից չպատասխանեց ճամփորդների բարեւին, քանի որ զբաղված էր. Կուրծքը բացելով՝ վարդագույն պտուկը մոտեցրեց մանկան բերանին, որը անմիջապես սկսեց ագահաբար շարժել շրթունքները, իսկ մայրը, խոնարհված, ժպտալով նայում էր ծծկերի կլորացած դեմքին:

- Երդվում եմ սագով,- գոչեց Գնին,- բարուրեք ինձ, որովհետեւ ես էլ կաթ ուզեցի:

Նիգը միայն շրթունքները լպստեց: Իսկ Ինգը գլուխն օրորելով՝ ասաց.

- Եթե ոչ ամբողջ ճշմարտությունը, ապա նրա երկու երրորդը բացահայտել են մանուկները. նայեք այս պստլիկ անատամ բերանին,- նրան տրված է այն, ինչ տրված չէ մեզ՝ միեւնույն ժամանակ ուտել ու համբուրել: Այս անգետիկը, բարեկամնե՛րս, ստիպում է ինձ աղքատիկ ու փոշոտ բառերից մտովի վերադառնալ դրախտային այգու պերճ թավուտները, որտեղ ամեն ինչ տրված էր մարդուն ոչ թե մաս-մաս ու ցիրուցան, այլ ամբողջական ու լիարժեք: Բայց դրախտային այգին թոշնեց, եւ երեք իմաստների համար, ավաղ, նեղ է մեկ բերանում: Ասեք, սիրելի՛ս, սա ո՞ւմ երեխան է:

- Ես ծառայում եմ տեղիս դատավորի տիկնոջը: Տիրուհուս անունը Ֆելիցիա է,- պատասխանեց ստնտուն:

Վեր կենալով՝ նա խոնարհում արեց օտարերկրացիներին ու քայլեց հետ՝ քաղաք: Նիգը օդային համբույր ուղարկեց նրա ետեւից: Ընկերները որոշեցին քաղաք մտնելուց առաջ մի քիչ հանգստանալ հենց այդտեղ՝ մարգագետնում: Նստոտեցին: Գնին բուրավետ խոտի շյուղ էր ծամում: Նիգը փչում-թոցնում էր խատուտիկների գորշ գլխարկները: Ինգը, ձեռքերով նիհար ծնկները գրկած, ինչ-որ բան էր մռթմռթում քթի տակ:

- Ինչ էիր ասո՞ւմ,- վերջապես հարցրեց Գնին, որին արդեն սկսել էր տանջել քաղցը:

- Ա՛խ,- հառաչեց Ինգը,- հիշում էի նրան ասած բառերը:

- Ստնտուի՞ն,- հորանջեց Նիգը:

- Չէ՛, նրա տիկնոջը: Նավահանգիստ գտած երջանիկ մարդիկ են: Գուցե ես էլ ձեզ հետ չթափառեի մի խարույկից մյուսը, այլ տաքանայի իմ

օջախի մոտ, գրպաններումս թալերներ վխտային, իսկ շուրջս չոչ անեին այ այսպիսի տզզաններ... Այո՛, այո՛, մի ծիծաղեք, եւ լսեք լավագույն պատմությունը, որ հիմա կպատմեմ:

Այդ ժամանակ երկուսս էլ ջահել էինք՝ ես ու Ֆելիցիան: Նա այստեղից ոչ հեռու, ծովափնյա քաղաքներից մեկում ապրող հարուստ վաճառականի դուստրն էր: Ծնողները բազում պարկերով ոսկի ունեին, դուստրը՝ բազում երկրպագուներ: Տոներին, ճոխ զգեստներ հագած, նրանք նստում էին սքանչելի Ֆելիցիայի շուրջն ու լուռումունջ վրան չռում ոչնչով լեցուն պարկերի պես անշարժ ու ապուշ աչքերը: Այդ բոլոր տղաների իմացածը միայն բերանբացությունն էր, իսկ ես բերանի օգտագործման այլ ձեւեր էլ գիտեի: Ես պարմանի աղջկան պատմում էի երկրների մասին, որտեղ չէի եղել, գրքերի մասին, որ չէի տեսել, աստղերի ու լուսատտիկների, դրախտի եւ դժոխքի, ժողովուրդների անցյալի եւ երկուսիս՝ իմ ու Ֆելիցիայի ապագայի մասին: Աղջիկը սիրում էր լսել՝ ինձ պարզած թափանցիկ-վարդագույն փոքրիկ ականջն ու ալ կարմիր շուրթերը՝ կիսաբաց: Մի անգամ, շառագունելով, առաջարկեց խոսել ծնողների հետ: Երբ բառերս Հորացիոսի ու Կատուլոսի մեջբերումներով ամրապնդելով՝ փորձեցի գծուծ մեծահարուստին բացատրել կրքի հավերժական իրավունքները, նա շվացրեց ու ցույց տվեց մեջքը: Այդ ժամանակ, խորհրդակցելով Ֆելիցիայի հետ, որոշեցի շրջանցիկ ճանապարհով հասնել երջանկությանը: Ֆելիցիան մի ծեր դայակ ուներ. երկար համոզելուց հետո կարողացանք համոզել, որ մասնակցի մեր ծրագրին: Այսպես որոշեցինք: Նշանակված գիշերը Ֆելիցիան դայակի հետ գալիս է ինձ մոտ: Դայակը կմնա դրսում՝ հսկելու, իսկ Ֆելիցիան... մի խոսքով, առավոտյան ծեր հիմարներին կդնենք կատարված փաստի առաջ, ինչից հետո քահանան ստիպված կլինի շատ արագ մեզ միավորել նաեւ երկնքում, իսկ դստերն աչքաթող արած գծուծները ստիպված կբացեն ոսկու պարկերը: Նշանակված երեկոյան դռան թակոց լսեցի, ու հաջորդ պահին Ֆելիցիայի հետ մենակ մնացինք կիսախավարում, փակված դռնից այս կողմ:

- Հետո՞, հետո՞,- շտապեցրեց Նիգը՝ արմունկին հենված մոտ գալով պատմողին:

- Հետո սկսեցի նրան շշնջալ այդ գիշերվա վեհության ու նշանակության մասին, այն մասին, որ վերջապես մենակ ենք, որ նույնիսկ աստղերը պատուհանից այն կողմ խոնարհել են աչքերն ու որ միայն Աստված...

- Հիմա՛ր,- ասաց Նիգն ու արմունկին հենված՝ հետ քաշվեց նախկին տեղը:

- Նրան պատմում էի հին աշխարհի հռչակավոր սիրահարների՝ Լեանդրոսի ու Հերոյի, Պիրամոսի ու Թիսբայի, Լեոնի ու Սաֆոյի մասին: Սթափվեցի՝ զգալով նրա ձեռքի հպումը շրթունքներիս. դե ինչ, եթե հեթանոսների օրինակները նրան անհամոզիչ կամ հոգու համար վտանգավոր են թվում, ապա կարելի է դիմել նաեւ Հին Կտակարանի վկայություններին,- ու սկսեցի հիշել գիրք գրքի հետեւից՝ Հռութի ու Բոոսի մասին... Հիշում եմ, հենց Բոոսի վրա ինձ ընդհատեց դռան ետեւից եկող աղմուկը: Դուռը բացելով՝ տեսա, որ ականջը բանալու անցքին սեղմած դայակը քնով է անցել ու խռմփացնում է: Արթնացրի նրան ու վերադառնալով Ֆելիցիայի մոտ՝ շարունակեցի ընդհատված պատմությունը:

- Հիմա՛ր,- տնքաց Նիգն ու մատներն ականջները խցկելով՝ բերանքսիվայր ընկավ գետնին, իսկ Գնին իր խոտի ցողունը ծամելով՝ հարցրեց.

- Իսկ չէի՞ք սովածացել:

- Չէ՛: Այնքան պերճախոս սիրային բանաստեղծություններ, ընտիր մետաֆորներ ու հիպերբոլներ էին կուտակվել իմ մեջ, որ չէի նկատում ինչպես է անցնում ժամանակը: Պատուհանից այն կողմ երկինքն արդեն սկսել էր գորշանալ, երբ անցա Նազոնի խիստ գրավիչ «Ars amanti»-ին *[«Սիրո արվեստ» - լատ.]*՝ փորձելով փոխանցել Օվիդիոսի էրոտիկայի շքեղ նրբությունները, ակնթարթներ որսալու, երջանկություն գողանալու այդ ապշեցուցիչ արվեստը, պայքարը համբույրների համար, գրկախառնությունը... Ֆելիցիան, որ տեսանելի էր դարձել լուսաբացի աղջամուղջում, մռայլված սեղմել էր շրթունքներն ու համարյա երես դարձրել ինձնից: Հարցրի՝ ի՞նչ է պատահել: Չպատասխանելով՝ մոտեցավ դռանը եւ ուժեղ թակեց:

- Գնա՛նք,- ասաց դայակին, ու ձայնը դողում էր ինձ անհասկանալի զայրույթից,- գնա՛նք, գուցե հնարավոր լինի աննկատ վերադառնալ: Արա՛գ:

- Սպասե՛ք,- ճչացի ես՝ բացարձակապես ոչինչ չհասկանալով,- իսկ ինչպե՞ս կապացուցեք, որ ինձ մոտ եք եղել:

Բայց Ֆելիցիան չէր նկատում ինձ, ասես բառերը կորցրած լինեին ցանկացած հնչում ու իմաստ:

- Արա՛գ,- գոչեց նա,- եւ եթե ինձ հաջողվի աննկատ անկողին վերադառնալ, երդվում եմ՝ ամուսին ընտրել ամենալռակյացին, բոլոր նրանցից, ով ինձ կցանկանա:

Եվ նրանք անհետացան լուսադեմի մեգում՝ ուշադրություն չդարձնելով իմ կանչերին: Դրանից հետո այլեւս երբեք չհանդիպեցինք:

- Դե, ահա, տեսնո՞ւմ ես,- չարախնդաց Նիգը:- Եթե հասկանայիր բերանի իսկական նշանակությունը, քո պատմությունն էլ այսպիսի տխուր ավարտ չէր ունենա:

- Այն դեռ չի ավարտվել,- վեր կենալով՝ առարկեց Ինգը,- նրա ավարտն ինձ սպասում է այ այս դարպասից այն կողմ:

Ու երեքը մտան քաղաք:

Գիշերը ստիպված էին անցկացնել բաց երկնքի տակ: Հյուրանոցները լեփ-լեցուն էին հարեւան քաղաքներից հավաքված ուխտավորներով, որոնք եկել էին խոնարհվելու հրաշագործ սրբապատկերին, որով հռչակված էր փոքրիկ քաղաքը: Ընդ որում, ընկերների գրպանները դատարկ էին, ու գիշերը նրանց տանջում էին քաղցած երազները:

Առավոտյան նրանց կողքով ձգվեց ուխտավորների շղթան. Ինգը փորձեց նրանց ճանապարհը փակել բերանների մասին հարցով, բայց մարդիկ անցնում էին՝ սուզված աղոթքների մեջ, համրիչները փաթաթած մատներին: Այդ ժամանակ երեքը միացան թափորին եւ շուտով հայտնվեցին շողշողուն ոսկով ու թանկարժեք քարերի փայլով շրջանակված սրբապատկերի առաջ: Նիգը համբուրեց պատկերը, Գնին, խոնարհվելով, արագ կծեց-պոկեց շրջանակի ամենախոշոր քարը, իսկ Ինգը, ծուռ նայելով նրան, կուրծքը ծեծելով՝ գոչեց. «Mea culpa, mea culpa, mea maxima culpa» *[Իմն է մեղքը, իմն է մեղքը, իմն է ծանրագույն մեղքը - լատ.]:* Երկու-երեք ժամից Ինգի, Նիգի եւ Գնիի գրպաններում հրաշքով զնգում էին ոսկեդրամները:

Խմել սկսելը հեշտ է, ավարտելն է դժվար: Ծուտով երեք եկվորների շուրջը պայթեցին խցաններն ու կլկլաց գինին: Սկզբում իրենք էին խմում, հետո հյուրասիրում էին, հետո՝ հյուրասիրություն ընդունում, նորից հյուրասիրում եւ այդպես՝ մինչեւ աստղերի հայտնվելն ու պահակի թակիչի գիշերային թխկոցը: Երբ նստարանների տակ ավելի մարդաշատ դարձավ, քան նստարաններին, Գնին չորեքթաթ սողաց՝ փորձելով գինի լցնել ծագարների պես բացված, խռմփացող բերանները, Նիգը խցկվեց համբուրվելու վառարանի կափարիչի ու բանալու անցքի հետ, իսկ Ինգը, խորամանկ աչքով անելով ու պարծենալով, պատմում էր քարը ոսկի դարձնելու հրաշագործության հետ: Պատմությունը հաջողություն ունեցավ, այն սկսեցին կրկնել նաեւ պանդոկի շեմից անդին: Իսկ առավոտյան Ինգը, Նիգն ու Գնին, արթնանալով, չկարողացան նույնիսկ աչքերը տրորել, քանի որ ձեռքերը կալանակոճղերի մեջ էին:

Դատավորը, որի մոտ նրանց բերեցին թանկարժեք քարի գողության

գործով, ամենալռակյաց մարդն էր ողջ շրջանում. Ուշադիր նայեց բերվածներին, քիթը խոթեց թղթերի մեջ ու նորից աչքերը լուռ հառեց նրանց: Այդ ժամանակ Ինգը, հարցեր չլսելով, հայացքներ փոխանակեց ընկերների հետ եւ ինքը հարցրեց.

- Մեծարգո պարոն դատավո՛ր, որքան էլ ձեզ հետաքրքրեն մեզ դատարան բերած հանգամանքները, երեքիս առավել հետաքրքրում է հարցը, թե ինչի համար է ստեղծվել բերանը: Մեզնից մեկը պնդում է՝ համբույրների համար: Մյուսը՝ ուտելիքի: Իսկ ես ասում եմ՝ բառեր արտաբերելու: Մենք եկել ենք հեռվից՝ պատասխան փնտրելով: Մեր ազատությունն ու կյանքը ձեր ձեռքում են, բայց մինչեւ մեռնելը կուզեինք իմանալ՝ մարդկանց ինչի՞ համար են բերաններ տրված:

Դատավորը շարժեց շրթունքները, գրիչով քորեց քիթն ու նորից թաղվեց թղթերի մեջ: Իսկ մեկ րոպե անց հնչեց մունետիկի շեփորն, ու դատարանի քարտուղարը, հանդիսավոր ոտքի կանգնելով, կարդաց դատավճիռը.

Մեղավոր ճանաչելով՝ արձակել կալանքից, դնելով բոլոր տեսնողների ու լսողների հսկողության տակ: Ինգ անունով դատապարտյալին արգելվում է խոսել, Նիգ անունով դատապարտյալին արգելվում է համբուրել, Գնի անունով դատապարտյալին արգելվում է ուտել: Վերոհիշյալ արգելքների ցանկացած խախտում նկատողները պարտավորվում են անմիջապես հայտնել դրա մասին, ինչից հետո արգելքը խախտողը պետք է անմիջապես բռնվի ու տրվի մահվան: Վճիռն ուժի մեջ է հրապարակման պահից: Բողոքարկման ենթակա չէ»:

Թշվառականների շղթաները հանեցին ու բաց թողեցին: Հարյուրավոր չարախինդ ժպիտներ անմիջապես բոլոր կողմերից շրջապատեցին նրանց: Երեքը կողք կողքի էին քայլում, ասես սոսնձված բերաններով, չպատասխանելով ծաղրուծանակին ու քաղաքացիների հայհոյանքներին:

- Ի՞նչ կասես սրան,- վերջապես հարցրեց Նիգը՝ դառնալով արտասովոր լուռ Ինգին ու լեզուն կծեց:

Ինգը վախեցած նայեց շուրջը, շրթունքները դողացին, բայց նա ավելի ամուր սեղմեց շրթունքներն ու հնազանդ կախեց գլուխը: Մտան պանդոկ: Գնին նշան արեց, ու նրանց մի մեծ ափսե գոլորշին վրան միս բերեցին: Ինգն ու Նիգը վերցրին գդալներն ու անմիջապես էլ ցած դրին. խեղճ Գնին շրջված կծկվել էր նստարանի ծայրին ու ագահաբար կուլ էր տալիս թուքը: Նա մի պահ բարձրացրեց աչքերը, որոնց մեջ արցունքներ էին փայլում:

Սիգիզմունդ ԿՐԺԻԺԱՆՈՎՍԿԻ

Սկսվեց մի կյանք, որ քիչ էր նման կյանքի: Քաղաքում բավականաչափ բարետես ու գթասիրտ աղջիկներ կային, որ հառաչանքով ու կարեկցությամբ էին նայում բարեկազմ Նիգին. նրա շրթունքները ճաքճքել էին սիրո պապակից, այտերը փոս էին ընկել, աչքերը՝ պղտորվել. անցնում էր՝ անեծքներ ու տրտունջներ մրմնջալով, ջանալով չտեսնել աղջկական շուրթերի ալ կոկոնները: Իսկ շատախոս Ինգը նույնիսկ տրտնջալ չէր կարող, լեզուն խտղտացնում էին հազարավոր չասված բառեր, որոնք ստիպված էր կուլ տալ աղքատիկ ուտելիքով հանդերձ, որը կիսում էր Նիգի հետ: Նրանք ամաչում էին ուտել սովահար Գնիի ներկայությամբ: Չորահացի կտորը կիսելու համար Նիգն ու Ինգը դուրս էին գալիս բակ կամ թաքնվում մի անկյունում, որ չտեսնեն Գնիին: Իսկ նա օրեցօր ավելի էր վատանում. թուլությունից ու հյուծումից չէր կարողանում քայլել, եւ երկու ընկերները նրան թեւանցուկ էին ման տալիս՝ օգնելով շարժել ոտքերը: Ծուտով դժբախտը կիսանինջ-կիսարթմնի վիճակի մեջ ընկավ ու զառանցական երազներում յուղոտ ապխտած ազդրեր, թշշացող երշիկներ, լցոնած բտահավեր ու տարատեսակ այլ ուտեստներ էր տեսնում, որ անուշ բուրելով ու սվվալով շամփուրների վրա՝ անվերջ պտտվում էին նրա հոգեւոր աչքերի առաջ:

Իսկ Ինգը նույնիսկ զառանցել չէր կարող. քնի մեջ խոսելու վախից համարյա աչք չէր փակում:

Ամենից լավ դիմանում էր Նիգը: Հուսահատության չտրվելով՝ նա երկու անգամ հարմար պահ գտավ ու կարողացավ զրույցի բռնվել քաղաքի դարպասների մոտ կանգնած ժամապահների հետ: Երկրորդ զրույցից հետո, մի կողմ քաշելով Ինգին, Նիգն այսպես ասաց.

- Լսի՛ր, շատախո՛ս, քաղաքի դարպասները հնարավոր է բացել, բայց՝ ոսկե բանալիով: Պետք է շտապել: Գնիի վիճակը վատ է. ուղեկցից վերածվել է ուղեբեռի, բայց ամեն դեպքում պետք է փրկել նրան, ասենք, մեզ նույնպես: Դու ողջ կյանքում միայն լեզվիդ ես տվել, հիմա ստիպված ես աշխատել, բարեկա՛մս: Խոսքս դատավորի կնոջ մասին է: Ավարտիր սիրավեպը, հակառակ դեպքում բոլորս կորած ենք: Լռությունը համաձայնության նշան է: Արդեն մութն ընկնում է: Նայել եմ. դատավորի կնոջ պատուհաններն այս ժամին միշտ բաց են լինում: Մոտակայքում ոչ ոք չկա: Գնանք, ու կապացուցեմ քեզ, հենց քո բերանի օգնությամբ, տարօրինակ մարդ, որ նրա նշանակության հարցում սխալվել ես:

Ինգը տառապագին մնչաց, ինչպես խուլուհամրը կամ լեզուն կտրած մարդը, ու հնազանդ առաջ անցավ՝ քաջալերված ընկերոջ քացիներով:

Վերջին հրահանգները նրան տրվեցին արդեն կրնկի վրա բաց պատուհանի տակ:

- Եվ այսպես, հիշի՛ր. գործիր համբույրով: Ու նաեւ. եթե թեկուզ մի բառ ասես, ինքս կմատնեմ, ու վայրկենապես գլուխդ կթռցնեն: Ես այստեղ, պատուհանի տակ, ականջ կդնեմ ու կհսկեմ. ես պառավ դայակը չեմ ու չեմ քնի, հույս չունենաս: Բարձրացիր ուսերիս: Դե՛:

Ու դատապարտվածի կրունկները, գետնից կտրվելով, նախ հենվեցին Նիգի ուսերին, հետո, ձգվելով դեպի լուսամուտագոգը՝ ուժգին թխկացին հատակին: Պատուհանից նախ կնոջ ճիչ լսվեց, հետո վախեցած շշուկ: Նիգը, ձգվելով ոտքերի ծայրերին, ականջը պատին սեղմած, ագահաբար լսում էր: Կնոջ շշուկը զայրանում էր՝ հասնելով պահանջկոտ բարձր նոտաների. ոչ ոք նրան չէր պատասխանում: Կարճ լռություն: Հետո բարձրաձայն հանդիմանանք՝ խառնված լացի հետ: Ավելի երկար լռություն: Ու հանկարծ՝ կամացուկ, խլածայն համբույր: Նիգը հանեց գլխարկն ու խաչակնքեց: Համբույրներն ավելի ու ավելի լսելի ու հաճախակի էին դառնում: Նիգը ափերով փակեց ականջներն ու լպստեց չորացած շրթունքները:

Սկզբում վերեւից մի պարկ ընկավ, փափուկ զնգաց՝ խփվելով հողին: Հետո լուսամուտագոգից, օդը տագնապած տնտղելով, կախվեցին Ինգի կրունկները: Նիգը արագ դեմ տվեց ուսերը, ու հաջորդ պահին նրանք արդեն պատերի երկարությամբ գաղտագողի քայլում էին դեպի քաղաքի դարպասների աշտարակը, որտեղ նրանց էր սպասում վաղօրոք բերված կենդանի գանձը՝ Գնին:

Ե՛վ Գնին, եւ՛ ոսկեդրամներով պարկը իրենց կեսը թողել էին քաղաքի պատերի ներսում, այնպես որ, փախստականները այնքան էլ չէին տնքում իրենց բեռի տակ: Դեռ մինչեւ լույսը բացվելը հաջողվեց հասնել մի խուլ անտառային պահատնակի, որտեղ մի քանի ոսկի կլորակ նրանց համար հարաբերական անվտանգություն ու հանգիստ ապահովեցին: Նիգը արագ աչքով արեց կարմրաթուշ պահակ կնոջը, ու սկսեցին կերակրել Գնիին՝ լցոնելով նրան ուտելիքով, ինչպես ներքնակը՝ խոտով, իսկ չարչարված Ինգին ոչ մի կերպ հնարավոր չէր համոզել, որ դադարի խոսել ու հանգստանա. ուռած լեզուն չի կարող տեղավորվել բերանում, չէ՞ որ լռությունը ամենաանսպառ թեման է հերյուրանքների համար:

Բայց հենց երեքը մի քիչ կազդուրվեցին, շունչ առավ նաեւ չորրորդը՝ վեճը: Հիշելով վերջին իրադարձությունները՝ ամեն մեկը ջանում էր դրանք մեկնաբանել իր օգտին. կարծիքները մեխի պես են, ինչքան ուժեղ ես խփում, այնքան խորն են խրվում: Եվ այն բանից հետո, երբ երեք բե-

ռանները ժամանակավորապես օտարվել էին,- մեկը՝ համբույրներից, մյուսը՝ բառերից, ու երրորդը՝ ուտելիքից,- այդ երեք գլուխներից ոչ մեկը այլեւս չէր ուզում հրաժարվել իր՝ մինչեւ գլխիկը խրված իմաստից: Եվ քանի որ անտառային անմարդաբնակությունը պատասխանում էր միայն արձագանքով, որոշեցին շարժվել առաջ...

Եվ թող գնան, իսկ մեր վերադառնալու ժամանակն է, մտահղացող բարեկամնե՛ր: Բանն այն է, որ ճանապարհի գիծն այդ կետից ինձ համար մի տեսակ կետգծի պես է դառնում. Չէ՞ որ հանդիպումների շարքը կարելի է երկարացնել ու կարճացնել, թափառիկ վեճը ենթադրում է ազատ զարգացում. թող,- սկզբից դեպի վերջ,- բացվի լաստոյի պարանի պես,- գլխավորը մեկն է՝ հասնել դուրս պրծնող վերջին ու նրան առնել օդակի մեջ: Եվ վերջն այստեղ, կարծում եմ, պիտի այդպիսին լինի: Բնականաբար՝ սեւագիր ու մոտավոր:

Վեճով տարված՝ երեքը գնում ու գնում են, մինչեւ նրանց ճանապարհը փակում է ծովը: Շրջվում են ափի երկարությամբ ու շուտով հայտնվում նավահանգիստներից մեկում, որտեղից ու որտեղ դուրս ու ներս են լողում նավերը: Բայց ծովը անհողմ էր, ու թափառիկ վեճը ստիպված էր սպասել ուղեկից քամու:

Ինգին նվիրած պարկում դեռ տասնյակի չափ ոսկեդրամներ էին զնգում: Ստան պանդոկ: Երբ գինին բացեց լեզուները, Ինգը, դիմելով իրենց բաժակակցող հաղթահասակ, ծովային աղով ներծծված նավաստիներին, հարցրեց.

- Ձեր կարծիքով ո՞րն է բերանի իմաստը,- եւ առաջարկեց ընտրել երեք պատասխաններից մեկը: Տղաները քորեցին ծոծրակներն ու շփոթված իրար նայեցին:

- Բայց մի՞թե այդ երեք, ոնց էր... իմաստը մի բերանում չեն տեղավորվի,- վերջապես պատասխանեց նավաստիներից մեկը՝ վախվորած նայելով եկվորներին:

Եվ Ինգը ներողամիտ ժպիտով սկսեց բացատրել.

- Իմաստ էլ կա, իմաստ էլ: Պատճառները,- սովորեցնում է Դունս Սկոտուսը,- լինում են լիարժեք կամ սպառիչ, եւ անլիարժեք... դե՛, պարզության համար ասենք՝ դատարկ: Ահա երկու շիշ. երկուսը դատարկ ու մեկը՝ լիքը: Տեսնո՞ւմ ես:

- Տեսնում եմ,- ճակատը կնճռոտեց տղան:

- Ահա՛: Սրանք դիր տեսնող մարդու առաջ եւ ասա՝ ընտրի՛ր: Պարզ է, տեսնողը ձեռքը կպարզի նրան, որը լիքն է գինով: Ճի՞շտ է:

- Ճի՛շտ է,- արծագանքի պես կրկնեց տղան, ու ճակատը քրտնեց:

- Իսկ հիմա փակիր աչքերդ:

Տղան իջեցրեց կոպերը, եւ Ինգը արագ ու անձայն փոխեց շշերի տեղերը.

- Մեկը վերցրու: Արա՛գ:

Տղան պարզեց ձեռքն ու բռնեց դատարկ շշի վիզը: Ծիծաղ պայթեց: Եվ Ինգը, նայելով նավաստու մեղավոր թարթող աչքերին, ամփոփեց.

- Հենց այսպես է իմաստների դեպքում: Մարդիկ կույր են. դրա համար էլ նրանց իմաստները դատարկ են: Եվ քչերն են, որ չեն խմում դատարկ շշից:

Հարգալից լռություն տիրեց, մինչեւ որ նավաստիներից ավագը տրտում հոգոցով ասաց.

- Մենք հասարակ ու անգրագետ մարդիկ ենք. Մեր ի՞նչ խելքի բանն են այդպիսի հարցերը: Բայց քամիները փչում են դեպի աշխարհի բոլոր ծայրերը: Անհողմությունը կավարտվի, ու ես ճանապարհ կընկնեմ. Աղ դրած ձկան իմ բեռը մյուս ափին կփոխեն չամիչով ու պիստակով: Եկեք ինձ հետ, գուցե այնտեղ, ծովից այն կողմ, ձեր հարցերն էլ փոխանակեն պատասխաններով:

Այդ ընթացքում այգաբացը խունացրեց սեւ ապակիները, ու երեքը, վճարելով, դուրս եկան: Պանդոկի շեմից ոչ հեռու, նիհար մեջքը պատին հենած՝ նստել էր մի կին. այտերը ներկված էին լուսաբացի գույնով, բայց ոչ ոք նրան չէր տարել այդ գիշեր, ու միայն առավոտվա ցուրտը, առանց մի գրոշ վճարելու, սարցասառը մատներով պրպտելով, ավելի ու ավելի էր խորանում պոռնիկի խայտաբղետ փալասների տակ:

- Խեղճը դողում է,- ուշադիր նայելով՝ ասաց Նիգը,- բայց դեռ ոչ կրքից: Ինչի՞ է սպասում:

- Քո համբույրներին, Նի՛գ,- արմունկով նրան հրեց Ինգը,- շրթունքների խոցը կարոտել է քեզ:

- Չէ՛: Ավելի լավ է մի քանի սփոփիչ խոսք ասես:

Ինգը կարեկցանքով կռացավ կնոջ վրա.

- Դո՛ւստր իմ, չփտելով երկրի վրա, չես ծաղկի երկնքում:

Բայց Գնին թույլ չտվեց շարունակել: Ոտքով հասցնելով նրան՝ մոտեցավ սառած արարածին ու գրպանները քրքրելով, առանց մի բառի, մի կտոր հաց հանեց ու դրեց նրա բերանը: Կնոջ նիհար ձեռքերը անմիջապես կառչեցին հացի կտորից ու սկսեցին ընդառաջ մղել արագ ծամող ատամներին:

- Ասա, փոքրի՛կս,- ժպտաց Գնին՝ խանդաղատանքով նայելով նրա ծնոտի աշխատանքին,- Աստված նրա համար չի, չէ՞, անցք բացել դեմքին, որ դրանից անիմաստ բառեր թափվեն կամ սոսնձվեն համբույրներով, այլ որպեսզի մարդը դրա միջոցով ճանաչի կերակրվելու ուրախությունը:

Հացի կտորը կնոջը երկար ժամանակ թույլ չէր տալիս պատասխանել: Վերջապես երեքը լսեցին.

- Ճիշտն ասած, չգիտեմ... մեր գործում՝ ով չի համբուրում, նա չի ուտում: Եվ ինձ չէ, որ պետք է հարցնել, գնացեք այ այս կածանով, ափի երկարությամբ: Կածանը ձեզ կհասցնի մի քարայրի: Քարայրը դատարկ չի. մի իմաստուն է ապրում այնտեղ, ճգնավոր, նա ամեն ինչ գիտի, դրա համար էլ ամեն ինչից հեռացել է:

- Դեռ ճգնավորներին չենք փորձել: Գնանք, հա՞:- Ու թափառիկ վեճը շարունակեց իր ճամփան կածանի ոլորաններով: Եվ օրվա վերջին ուղեկիցներից առաջ ընկած Գնին գլուխը խցկեց քարայրի խավարն ու հարցրեց.

- Ի՞նչն է բերանի համար ավելի կարեւոր՝ համբո՞ւյրը, բա՞ռը, թե՞ ուտելիքը:

Ի պատասխան խավարից լսվեց.

- Որտեղի՞ց է ցողը՝ երկրի՞ց, թե՞ երկնքից:

- Ասում են՝ երկնքից:

Մոտեցան Ինգն ու Նիգը:

- Երկնքից,- հաստատեցին նրանք:

Տարակուսած Գնին նորից գլուխը խցկեց խավարի մեջ, եւ անմիջապես ինչ-որ ծանր բան խփվեց ճակատին, տապալեց նրան, ու քարայրից դուրս պրծածը պառկեց շեմին. սովորական թուջե կճուճ էր: Ընկերները զննեցին կճուճը եւ՛ դրսից, եւ՛ ներսից, բայց կճուճի մեջ պատասխան չգտան:

- Հիմա էլ դուք հարցրեք,- վնասված ճակատը տրորելով՝ ասաց Գնին,- ես իմն արեցի:

Քարայրի մուտքից մի կողմ քաշվեցին ու որոշեցին այդտեղ գիշերել, որ վաղ առավոտյան շարունակեն ճանապարհը: Կճուճը, ինչպես բերանքսիվար ընկել էր խոտերին, այդպես էլ մնաց:

Առաջինը արթնացավ Գնին. ճակատին բուսած ելունդն էր արթնացրել: Լուսաբացի փայլի մեջ տեսավ կողքին նստած մի անծանոթ մարդու: Անծանոթը բարեհամբույր ժպտալով՝ հարցրեց.

- Ճգնավորի մո՞տ:

- Հա՛: Դուք է՞լ:

Անծանոթը չպատասխանեց ու ժպիտը պահելով ճերմակ, քրքրված մորուքի մեջ՝ զնում էր արշալույսի գունավորած ցողի կաթիլները, որոնք կայծկլտում էին խոտերի ցցունքներին:

- Եթե դուք էլ եք ճգնավորի մոտ գնում, ավելի լավ է չգնաք:

- Ինչո՞ւ:

- Որովհետեւ պատասխանի փոխարեն կստանաք այ սա, ավելի ճիշտ՝ սրանով,- ու Գնին դառնացած քացով տվեց թուջե կճուճին. կճուճը գլորվեց, եւ նրա տակ մնացած խոտերի վրա Գնին զարմանքով գունգունող խոշոր ցողակաթիլներ տեսավ:

- Գրո՛ղը տանի,- գոչեց Գնին,- սրանք ո՞նց են երկնքից հայտնվել կճուճի տակ:

- Որ բացատրեն,- խոսեց անծանոթը,- պետք չի վառարանի կճուճով մագլցել երկինք. պատասխանն այստեղ է, կճուճի տակ, գետնին: Իսկ գլխում ծնվածը բացատրելու համար պետք չէ փնտրել աշխարհով մեկ. պատասխանը հենց այստեղ է, գագաթի տակ, հարցի հարեւանությամբ: Հանելուկը միշտ լուծումից են սարքում եւ պատասխանները,- այդպես եղել է ու կլինի,- միշտ ծեր են հարցերից: Մի արթնացրու ուղեկիցներիդ, թող քնեն. ձեզ երկար ու դժվար վերադարձ է սպասում:

Եվ վերցնելով կճուճը՝ ծերունին անհետացավ քարայրի խավարում:

Նույն օրը երեքը բռնեցին վերադարձի ճանապարհը:

Սյուժեստեղծման բարի ավանդույթը պահանջում է, որ դեպի-ն երկար պատմվի, իսկ հետ-ը՝ ձիափոխ կառքի արագությամբ: Եվ այսպես, ենթադրենք իմ երեքը, մի դյուժին կոշկատակ մաշելով, մոտենում են ելքին. նրանց դիմավորում է հարազատ քաղաքը. Ինգին հանդիսավոր գլուխ է տալիս փարաջան քշտած՝ ջրափոսերն անցնող եկեղեցու մոնթը. մի փքված փորով աղջկա ձեռքից դույլերն ընկնում են ցեխի մեջ. «Երեք թագավորների» մշտայցելուները, գլուխները պատուհաններից հանած, կանչում ու ձեռքով են անում Գնիին,- կողքով ու հեռուն, առջեւից՝ Նիգը. նա ընկերներին առաջնորդում է Իգնոտայի մոտ:

Տեղ հասան: Բակում ոչ ոք չկա. միայն թարմ անվահետքը՝ ցեխի մեջ ու փշատերեւ ճյուղեր՝ դարպասից մինչեւ շեմը: Թակում են դուռը. ոչ ոք: Նիգը հրում է. դուռը հետ թռավ: Մտնում են նախասենյակ: «Այստե՛ղ»: Բայց Իգնոտայի փոքրիկ սենյակի դուռն էլ է բաց. մահճակի վրա տրորված հարդ է, օդում՝ խնկի հոտ, ու՝ ոչ ոք: Նիգը հանեց գլխարկը: Մյուս եր-

կուսը՝ նրա ետեւից: Եվ լուռումունջ դուրս գալով՝ ճամփորդները,- փշատերեւի կանաչ ասեղների հետքով,- դեպի գերեզմանատան ցանկապատը: Խաչերի արանքում էլ՝ ոչ ոք: Միայն հեռվից՝ հողին չմփացող բահի ձայն: Դեպի ձայնը: Հուղարկավորներ, եթե եղել էլ են, արդեն չկան: Միայն գերեզմանափորն է ուշացել. հողը պինդ էր ու դիմադրում էր բահին:

- Իգնոտան այստե՞ղ է,- հարցրեց Նիգը:

- Այստեղ է: Բայց եթե գործ ունեք նրա հետ, ավելի ուշ եկեք, երբ ավարտվի հավերժությունը:

- Մեզ նրանից ոչինչ պետք չի, բացի մի հարցի պատասխանից:

- Մեր գործը մեռել թաղելն է, ոչ թե հարցեր փորել-հանելը: Իսկ մեռելները, ինչպես գիտեք, քչախոս են. ինչ էլ հարցնես, բերան չեն բացի: Չնայած, ճիշտ չեմ,- քմծիծաղեց գերեզմանափորն ու խորամանկ աչքով արեց,- բացելը՝ բացում են, ասես ուզում են ինչ-որ վերջին բառ ասել, բայց չեն թողնում. սկզբում պինդ կապում են՝ ատամն ատամին, հետո բերանը լցնում հողով, եւ թե ինչ բառ է մեռյալների այդ բառը, այդպես էլ ոչ ոք երբեք չի լսել: Բայց հետաքրքիր կլիներ:

- Անկի՛րթ,- ատամների արանքից նետեց Ինգը:

- Ինչո՞ւ վրան խաչ չկա,- հետաքրքրվեց Գնին:

- Այսպիսիններին չեն դնում,- գռմռաց գերեզմանափորն ու նորից ձեռքն առավ քլունգը:

Այդ ժամանակ երեքը, գավազանները կապեցին խաչի տեսքով, ու երբ խաչն իր ուղիղ փայտե թեւերը տարածեց Իգնոտայի վրա, Ինգը ասաց.

- Այո՛, հարցերի երկիրը ծավալվում ու ծավալվում է եւ բազմապատկում իր հարստությունները, հարցերի երկիրն ավելի ու ավելի գույնզգույն է ծաղկում, ավելի վառ ու փարթամ, բայց պատասխանների երկիրն ամայի, սնանկ ու տրտում է, ինչպես այս գերեզմանոցը: Դրա համար էլ...

- Խմե՛նք: Ամե՛ն,- հուշեց Գնին:

Բոլոր երեքն էլ պատմությունն ավարտեցին այնտեղ, որտեղ սկսել էին՝ «Երեք թագավորներում»: Օ՛ֆ, վերջ...

Ֆէվը անկանոն ու ծանր էր շնչում: Աչքերը հետ էին գնացել ու թաղվել ճարպի մեջ: Նախագահը միանգամից չխախտեց լռությունը.- Դե ինչ, ձեր պատմության համար էլ տեղ կգտնվի մեր չգո գրադարանում,- նա մատները թաղեց դարակների սեւ մթության մեջ՝ ասես տեղ փնտրելով դեռ չգրված գրքի համար:- Ձեր թեման, իմ կարծիքով, ինչ-որ ուրախ դիակառք է. պայծառ թարթող ջահերի տակ ճաղերն արագ պտտելով՝ պարում է դարուփոսերում, ճոճում թաղման խայտաբղետ ծոպերն ու փայլե-

որը. բայց եւ այնպես, դիակառք է եւ նրա ճանապարհը՝ դեպի գերեզմանոց: Կարող եք ինձ փնթփնթան համարել, բայց դուք բոլորդ, հարգելի մտահղացողնե՛ր, ամեն ինչ անում եք սյուժետային ավարտները նույն գերեզմանափոսը գցելու համար: Այդպես չի լինի: Գրական էնդշպիլի արվեստը ավելի նուրբ ու բազմազան մշակում է պահանջում: Փոսն ընկնելը հեշտ է, դուրս գալն է դժվար, մանավանդ եթե խոր է: Չէ՞ որ նրա համար չենք դեն նետել գրիչները, որ գերեզմանափորի բահեր վերցնենք:

- Գուցե եւ իրավացի եք,- գլխով արեց Ֆէվը:- Մենք իսկապես, չգիտեմ ինչո՞ւ, ավելի հաճախ քայլ ենք անում սպիտակ խաղադաշտից սեւը, քան սեւից՝ սպիտակը: Մեր թեմատիկ լուծումները լավը չեն, որովհետեւ... վատն են: Բայց եթե դրան գնաց, կփորձեմ ցույց տալ, որ կարողանում եմ լողալ նաեւ քամուն հակառակ: Դա երկար չի տեւի. իմ ներածությունը կգցեմ գերեզմանի փոսը, ամենահատակը, իսկ հետո խնդրում եմ հետեւեք ինչպես պիտի դուրս գա այնտեղից՝ դեպի կյանք:

- Հապա՛, հապա՛, լսե՛նք,- բազկաթոռով հանդերձ պատմողին մոտենալով՝ ժպտաց Զեզը:- Խիզախե՛ք:

Ֆէվը, ջանալով ինչ-որ բան հիշել, նայեց վերեւ. մանուշակագույն լուսաբծերը առաստաղից ցատկեցին նրա այտերի փքված պղպջակներին:

- Այս մտահղացումը իմ մեջ զեռում էր շատ տարիներ առաջ: Ես այն ժամանակ եւ՛ ավելի շարժունակ, եւ՛ ավելի հետաքրքրասեր էի, դեռ տարածության ձգտում ունեի ու հաճախ էի ճամփորդում: Այսպես պատահեց: Վենետիկ կատարած իմ այցերից մեկի ժամանակ, նախակեսօրյա շիկացած փողոցներով շրջելիս կարիքի բերումով մոտեցա այն մարմարե հարմարանքներից մեկին, որ այնտեղ դուրս են ցցված համարյա բոլոր պատերից ու ամոնիակ են բուրում: Փողրակի շուրջը, պատը պատելով գույնզգույն քառանկյուններով, աչքի էին զարնում վեներոլոգների հասցեները: Իսկ մի քիչ այն կողմ, նեղ սեւ շրջանակում, իր բոլոր պատկառելի, սեւով սպիտակին տառերով մի տեսակ կտրվելով ամոնիակային ընկերախմբից՝ սեւ փոքրիկ խաչի տակ քառանկյուն ծանուցումն էր. «Չե՞ք մոռացել այն 100000-ի մասին, որոնք պետք է մեռնեն այսօր»:

Իհարկե, դատարկ բան էր, չոր վիճակագրական տեղեկանք, հմտորեն առնված սեւ քառակուսու մեջ, որը քաղաքավարի հիշեցնում էր, ընդամենը՝ հիշեցնում:

Ես չաղոթեցի հարյուր հազար հոգիների համար, բայց երբ պատի ստվերից դուրս եկա պայծառ արեւի տակ, հազարավոր ու հազարավոր հոգեվարքներ փակեցին ճանապարհս. օրվա ընթացքում զոհված հազա-

ռավորներ շրջապատեցին ինձ, հազարավոր արեւներ էին թափվում խավարի մեջ, տեսա բազմաթիվ մոմագույն, սրված դեմքեր, դուրս պրծած սպիտակ աչքեր. քաղցրավուն նեխահոտը, քթանցքներով թափանցելով ուղեղս, չէր թողնում ո՛չ մտածել, ո՛չ ապրել: Հիշում եմ, որ համարյա ֆիզիկական զգացողություն էր: Մտա ռեստորաններից մեկը, նստեցի աթոռին, սպասք դրեցին իմ առաջ, եւ նույն պահին տեսա այդ հազարներին՝ սեղանների վրա, փոս ընկած բերաններով, դանդաղ սառչող, անօգնական ու սարսափելի, այսօրվանից անջատված դեպի երբեք: Ձեռք չտվի դանդաղ սառչող միներստրոնեին, ու միտքս տենդագին ջանքեր էր անում ամեն գնով դուրս պրծնելու անիծյալ սեւ քառակուսուց: Հենց այդ ժամանակ էլ օգնության հասավ իմ թեման: Մի տեսակ միանգամից դուրս հորդեց ինձնից: Հիշում եմ՝ մեքենայաբար վեր կացա եւ արագ վճարելով...

Այստեղ պատմողը,- նրա ետեւից նաեւ մյուսները,- դարձան կտրուկ հետ քաշված բազկաթոռի ձայնի կողմը: Ինձ համար անսպասելի տեսա Ռարին, որը դուրս եկավ մտահղացողների շրջանակից. ձեռքին բանալին էր, որ մի վայրկյան առաջ դրված էր բուխարու ելուստին:

- Հեռանում եմ,- կարճ նետեց նա: Բանալին մետաղածայն շխկաց, դուռը հետ ընկավ, եւ Ռարի քայլերը լռեցին ներքեւներում խուլ շխկոցով փակված փեղկի ետեւում:

Բոլորը տարակուսած իրար նայեցին:

- Ի՞նչ եղավ նրան,- վեր կացավ Շոգը, ասես ուզում էր հասնել հեռացածին:

- Կարգի եմ հրավիրում,- լսվեց Զեզի չոր ձայնը,- նստե՛ք: Կամ էլ, եթե արդեն վեր եք կացել, փակեք դուռը: Անցա՛նք: Ֆէվը շարունակում է:

- Ո՛չ, Ֆէվն ավարտեց,- այտերը կատաղի փքելով՝ կտրեց Ֆէվը:

- Որովհետեւ գնա՞ց այդ...,- կակազեց Զեզը:

- Ո՛չ: Որովհետեւ այդի հետ գնաց նաեւ,- պատկերացրե՛ք միայն,- գնաց նաեւ այնը՝ թեմա՛ն:

- Դուք, ըստ երեւույթին, ուզում եք Ռարից խենթ լինել: Թող որ այդպես: Նիստը համարենք փակված: Բայց եկեք պայմանավորվենք հաջորդ շաբաթվա ծրագրի մասին: Հերթը Շոգինն է: Նրան առաջարկում եմ թռչել Ֆէվի դրած ցատկահարթակից: Թող նա,- լսո՞ւմ եք, Շո՛գ,- իրեն տեսնի պատի տակ, սեւ շրջանակով ծանուցման առաջ, թող մտահղանա,- Ֆէվին հաջորդելով,- հոգեվարքերի բույլեր՝ մեկ հոգեվարքի մեջ, իսկ հետո ձեզ մաղթում եմ, որ սեւից թռչեք սպիտակին:

Շոգը ճակատից հետ գցեց համառ մազափունջը.

- Կարվի՞: Ավելին, թափավազքը դեպի ցատկահարթակ, ինչպես դուք անվանեցիք, կսկսեմ այսօրվա հավաքին պատմած առաջին թեմայով: Թող որ դա պարկի մեջ վազք է: Բայց դեռ մի շաբաթ ժամանակ ունեմ: Գուցե եւ թռչեմ:

6

Ինձ հաջորդ շաբաթվան մոտեցնող ամեն օրվա հետ ավելի ու ավելի էի խճճվում վարկածների ու ենթադրությունների մեջ: Ինչպե՞ս հասկանալ Ռարի «հեռանում եմ»-ը: Շարքային խռովությո՞ւն Ֆէբի դեմ, թե՞ ըմբոստություն, որ ավելի ուժեղ ու հեռուն է խփում. գուցե վերջնական որոշո՞ւմ էր, գուցե եւ րոպեական քմահաճույք. ինչի՞ց էր մեկուսանում՝ հարյուր հազարի՞ց, թե՞ վեցից: Հիշում էի գունատ, իր ներսը նայող դեմքը, անհաստատուն հեռացող քայլերը: Գուցե նրան իմ օգնությո՞ւնն է պետք: Եվ ես արդեն չէի մտածում՝ գնա՞լ, թե՞ չգնալ: Բացի այդ, շաբաթ օրերի ձգողականությունը, դատարկ դարակների քաշող ուժը, անգրքության սեւ գայթակղությունը ակնհայտորեն սկսում էին ազդել նաեւ ինձ վրա:

Պայմանավորված օրն ու ժամին գնացի Տառասպանների ակումբ: Տրորված ձյան վրա արդեն փռվել էր նախագարնան ջերմության առաջին մեզը, սառցալուլաները, կախվելով տանիքներից, լալիս էին, եւ արցունքները զնգուն կտկտում էին մայթին: Երբ դուռն ինձ նիստերի սենյակ թողեց, առաջինը, որ տեսա՝ Ռարի դատարկ բազկաթոռն էր: Եկել էին բոլորը. բացի նրանից:

Ինչպես միշտ՝ երկու անգամ շխկաց բանալին, ասես սեւ դարակներով սենյակը բաժանելով աշխարհից,- եւ ես կարճ ու տաք հրում զգացի ուղեղիս մեջ:

Ծոգը, որը պետք է խոսեր, նույնպես մի քանի անգամ անհանգիստ նայեց մարդուն չգտած տեղին: Նախագահը նշան արեց, եւ միայն այդ ժամանակ, դեմքով դառնալով դեպի բուխարու սեւ բերանը (մոտեցող գարունը հանգցրել էր կրակը), նա կենտրոնանալու ջանք արեց ու սկսեց:

- Մարկոս Լիցինիուս Սեպտին գտան կիսամութ տաբլինումի շեմին. մեռած, պառկած էր բաց գալարափաթեթների արանքում:

Հանգուցյալ Սեպտի ստրուկները՝ Մանլիուսն ու ծեր, կաղ Էզիդիուսը, մարմինը տեղափոխեցին տաբլինումի քարե նստարանին, հապճեպ հագցրին նուրբ կարմիր եզրաշերտով լավագույն պարեգոտը, լվացան դեմքն ու բերանը, բացեցին մահվան ջղաձգումով սեղմված ատամներն ու, դրանց արանքում մի պղնձե օբոլ դնելով՝ անցան թաղման հոգսերին:

Երկու ծեր եղերամայր, հոտառությամբ զգալով մեռյալին, արդեն բրոնզե մուրճիկով թակում էին հետնաբակի դուռը. այնտեղ, թլվատ շատրվանի մոտ Էզիդիուսն արդեն վիճում էր պառավական ծվծվան ձայների հետ՝ ջանալով գոնե մի տասը սեստերց սակարկել. հանգուցյալ Մարկուս Սեպտը աղքատ էր. ստիպված էին խնայել:

Մանլիուսը վազեց թաղման պատգարակ պատվիրելու, անուշաբույր խոտեր գնելու, պայմանավորվելու ջահակիրների հետ եւ լուր տալու հանգուցյալի երկու-երեք բարեկամներին: Մարկուս Սեպտը աղքատ ու մենակ ապրում էր պապիրուսների ու մոմած տախտակների շրջապատում՝ խուսափելով մարդկանց մերձությունից: Մանլիուսը մտածում էր, որ մինչեւ մայրամուտ կավարտի բոլոր գործերը:

Բայց դիակը առանց հսկողության թողնել չէր կարելի. դրանից կարող էին օգտվել չար ոգիներն ու թափառիկ ստվերները:

- Ֆա՛բա, հե՛յ, Ֆա՛բա, ո՞ւր ես... Էլի՞ փողոցում, չարաճճի՛: Արի այստեղ: Ահա աթոռակը. նստիր տիրոջ ոտքերի տակ: Մի վախեցիր, որ սփրթնած է ու չի շարժվում. պարոնը մեռել է: Դու դեռ չես հասկանա. նստիր այստեղ, մինչեւ Էզիդիուսը կվերջացնի գործը պառավների հետ: Այդ ընթացքում ես էլ կվերդառնամ:

Փոքրիկ վեցամյա Ֆաբան իր կարեւոր գործն ուներ, ու եթե հայրը այդպես խիստ չկարգադրեր, ոչ մի դեպքում չէր մնա կիսամութ սենյակում. տան ետեւը, խաչմերուկում իր վաճառատախտակով տեղավորվել էր շաքարած արմավ, չամիչ ու թուզ վաճառողը. նայելն իսկ հաճելի էր: Իսկ այստե՛ղ...

Ֆաբան նստեց աթոռակին, ոտքերը ծալեց տակն ու սկսեց ականջ դնել. տաբլինումում լուռ էր, մի մեծ կապույտ ճանճ տզզաց ու լռեց, բայց պատի ետեւից հասնում էր վաճառողի ձայնը. «Արմա՛վ, արմա՛վ, կապը՝ մի օբոլ: Քաղցր արմավ գնեք՝ մի օբոլով, միայն մի օբոլով...»:

«Ա՛խ, եթե...»,- խփեց փոքրիկ սիրտը, ու Ֆաբան լպստեց կարմիր շրթունքները:

Մարկոս Լիցինիոս Սեպտը պառկել էր՝ օբոլը քարացող ծնոտներով սեղմած, ու նույնպես լսում էր. մահով ստվերված լսողությամբ անցնելով եղերամայրերի ձայների, վաճառողի բղավոցների, ապա՝ փողոցների աղմուկի ու կանչերի, հետո երկրի գնդի խոսակցությունների միջով՝ նա հստակ տարբերում էր նաեւ Քարոնի թիակի հեռավոր ճողփյունն ու տխուր շշուկը ստվերների, որոնք իրեն կանչում էին դեպի Աքերոնի սեւ ջրերը: Մեռած Սեպտին լսելի էին եւ՛ դեպի հեռավոր ուղեծիրներ դիմող

աստղերի քայլը, եւ՛ այդպես էլ հատակին թափված ծեռագրերում շուռումուռ եկող տառերի շրշյունը, հստակ լսելի էին Ամդի խորհրդածություններն ու հենց այդտեղ, գլխավերեւում նստած փոքրիկ Ֆաբայի՝ ստրուկի դստեր մտքերը: Ապակիացող աչքերում,- մեգի միջով,- կապույտին էին տալիս երեխայի՝ թարթիչների թրթռոցից կայծկլտող աչքերը. կյա՛նք: Եվ անմիջապես էլ բիբերը սկսեցին պատվել մշուշով:

Քարոնի թիակն ավելի մոտ ճողփաց:

- Քաղցր արմա՛վ, արմավի չի՛ր, մի օբոլով, միայն մի օբոլով:

- Օ՛, տիրուհի՛ Յունո, եթե միայն ես...,- շշնջաց Ֆաբան:

Եվ կարկամող մկանների զարհուրելի վերջին ճիգով Լիցինիուս Սեպտը բացեց ծնոտները (ջանքից աչքերի շղարշը թանձրացավ՝ ծածկելով Ֆաբային, պատերն ու ողջ երկրի ողջ գունդը), ու նոփ-նոր պղնձե օբոլը, շրթունքների արանքից սահելով՝ գլորվեց ու թեթեւ զնգոցով ընկավ ապշած Ֆաբայի ոտքերի տակ: Նա ոտքերն իրեն քաշեց ու պահեց շունչը: Ծուրջը լուռ էր: Անշարժ տերը փաղաքուշ ժպտում էր նրան թափանցիկ-ճերմակ դեմքով: Ֆաբան ձեռքը պարզեց օբոլին:

Արմավները շատ համով էին: Եվ Մարկոս Լիցինիուս Սեպտին թաղեցին առանց օբոլի. Չէին նկատել:

Սեպտի ժամանակը լրացավ: Երկրից կտրված՝ նա խղճալի մրմնջացող ստվերների միջով սահում էր դեպի մեռյալների կացարանը: Ետեւում հաջող սակարկած եղերամայրերի սուր ճիչերն ու համաչափ ծղրտոցներն էին, առջեւում՝ Աքերոնի սեւ ալիքների ծփանքը:

Ահա եւ ափը: Թիակների ճողփյուն: Սո՛ւս: Ավելի մոտ: Ավելի՛: Նավակը կողով քսվեց ափին: Երերուն ստվերները շտապեցին ձայնի վրա. նրանց հետ եւ Սեպտը: Ծերունի Քարոնը ոտք դրեց ափին: Դեմքը հայտնվում ու անհետանում էր արյունոտ փայլատակումների մեջ. առաջ մղված, զզզզված ալեւոր մորուքով ծնոտ, աչքերի գիշատիչ փայլ: Ցնցվող ոսկրոտ ձեռքի արագ, վարժ շարժումով Քարոնը շոշափում էր մեռածների բերանները, եւ օբոլները զնգացող շիթով թափվում էին ծերունու ազդրակապին ամրացրած կաշվե տոպրակի մեջ: Մատները դիպան Սեպտի շրթունքներին:

- Օբո՛լը,- հարցրեց նավավարը:- Ո՞ւր է գետանցի օբոլը:

Սեպտը լուռ էր: Եվ այդ ժամանակ Քարոնը թիակով հրվեց ափից. ստվերներով լի նավակը լողաց հեռու: Սեպտը մենակ մնաց Մահվան ամայացած ափին:

Երկրի վրա՝ ցերեկ-գիշեր-ցերեկ-գիշեր-ցերեկ: Իսկ Աքերոնի սեւ ջրե-

րի եզրին՝ գիշեր-գիշեր-գիշեր: Անառավոտ, անկեսօր, անաղջամուղջ: Հազարավոր անգամներ ափին մոտեցավ ու մեկնեց Նավավարի մակույկը, ու Մարկոս Սեպտը մենակ էր մնում կյանքի ու մահվան միջեւ: Ամեն անգամ նավակի ճողփյունը լսելով՝ մոտենում էր ջրերի աղմուկին, եւ ամեն անգամ գծուծ Քարոնը օբոլը չբերածին վանում էր նավակողից: Այդպես դեգերում էր օբոլը չբերած Սեպտը սեւ ջրերի եզրին՝ կյանքը լքած ու մահվան մեջ չառնված:

Հավաքված ստվերներից էր օբոլ խնդրում, բայց նրանք, Ադին տրվելիք Երկրի վարձը սառած շրթունքների արանքում ավելի ամուր սեղմելով՝ թռչում էին կողքով: Խավարը փակվում էր նրանց ետեւից: Ու հասկացավ Սեպտը՝ աղաչանքն անիմաստ է, ու դեմքը դարձնելով երկրին՝ սկսեց սպասել, տարիներ ու տարիներ, թե երբ Աքերոնի ափ կիջնի նա, որին տվել էր մեռյալների օբոլը:

Արմավները քաղցր էին, այդպես է, բայց կյանքը դառն է ու տխուր: Ֆաբիա աղջնակին՝ ստրուկի դստերը, տիրոջ անսպասելի մահից հետո չորս անգամ վերավաճառեցին: Երբ Ֆաբիան գեղեցիկ կապտաչյա աղջիկ դարձավ, համբույրներով մաշեցին շուրթերն ու շոյանքներով՝ մարմինը: Այդպես ձեռքերից թաթերին անցավ, թաթերից՝ շոշափուկներին: Թախիծը խորացավ կապույտ աչքերի մեջ ու չէր հեռանում նրա չվերավաճառված հոգուց: Ժամանակը տարուց տարի էր գլորվում գետնին ընկած մաշված օբոլի նման: Մարմնի վերջին տերը՝ ծեր պրոկոնսուլ Կայոս Ռիգիդիոս Պրիսկը, շռայլ էր հարճի հանդեպ. Ֆաբիան քնում էր մարմարե մահճին, բուրավետ ծխով ու ճոճվող հովհարներով շրջապատված, բայց մի տարօրինակ սեւեռուն երազ երեք անգամ այցելեց նրան. սեւ գետի ծփանք էր տեսնում, ինչ-որ մեկի ծանոթ, սիրելի՛, սիրելի՛ դեմքը՝ քարացած, տառապագին բացված բերանով, ինչ-որ թախծոտ, հեռուներից կանչող շշուկ էր լսում. «Օբոլը, ինձ տուր օբոլը՝ մեռյալների իմ օբոլը»:

Բուռ-բուռ օբոլ բաժանեց Ֆաբիան մուրացկաններին ու տաճարներում, բայց տեսիլքը չէր անհետանում:

Պրոկոնսուլ Ռիգիդիոսը մահացավ: Ֆաբիան ապրանքացանկով պետք է անցներ նրա ժառանգորդին: Բայց երբ ժառանգորդի ծառաները կանգնեցին նրա շեմին, ոչ ոք չարձագանքեց ծիրանագույն վարագույրի ետեւից:

Մտան ներս. Ֆաբիան պառկած էր մարմարե մահճին, ձեռքերն անշարժ տարածած՝ ասես գրկախառնության համար: Ապրանքացանկում հինգերորդ համարը կրող իրը, համապատասխան կարգը պահելով,

ստիպված էին ջնջել. ինքնասպանների գերեզմանոցը նոր դիակ ընդունեց:

Մարկոս Սեպտը ճանաչեց մոտեցող ստվերը. սահում էր մեռյալների շարանում, գլուխը հետ գցած, թափանցիկ-ճերմակ թեւերը բաց՝ ասես գրկախառնության համար, գունատ շրթունքների արանքում առկայծում էր օբոլի կիսաշրջանը: Նավակը մոտ լողաց: Սեպտը փակեց Ֆաբիայի ճանապարհը:

- Ճանաչեցի՞ր:

- Այո՛:

- Այստեղ, մահվան ու կյանքի միջեւ,- տարիներ ու տարիներ,- սպասում եմ: Տո՛ւր օբոլը, տո՛ւր ինձ մեռյալների օբոլը:

Եվ այդ ժամանակ...

Ու պատմությունը հանկարծ ընդհատվեց, ասես ճանապարհը փակած լինեին:

- Եվ այդ ժամանակ,- կրկնեց Ծոգը՝ աչքերը դանդաղ պտտելով ուլկնդիրների վրայով,- ինչպե՞ս կվարվեիք այդ «եւ այդ ժամանակի» հետ, թեկուզ դուք, Հի՛ց:

Հարցվածը զարմացավ վայրկյանից ոչ ավելի. կզակի եւ արմունկների սուր ծայրերով հարցին ընդառաջ գալով, սկսեց բառը կցել բառին.

- Ձեր «այդ ժամանակ»-ի համար պետք չէ «երբ» փնտրել: Անօգուտ է: Դուք պատմությունն այնպիսի միստիկական մշուշի մեջ եք մղել, որտեղ ավելի հեշտ է կորցնել սկիզբը, քան գտնել վերջը: Ոնց կուզեք դուրս եկեք: Ես Աքերոնի խնդրարկու չեմ:

- Իսկ դո՞ւք, Դյա՛ժ,- շարունակեց Ծոգը, եւ անհնար էր հասկանալ՝ կատակո՞ւմ է, թե՞ լուրջ է հարցնում:

Կլոր ապակիները խուճապով դեսուդեն ընկան:

- Սիրելի Ծա՛գգ, այսինքն, մեղավոր եմ, Ծո՛գ, ես այսպես կվարվեի ձեր ստվերների հետ. մի օբոլը՝ երկուսին: Համենայնդեպս ավելին է, քան ոչինչը: Օբոլը ստանալով՝ Քարոնը նավակ է թողնում եւ՛ Ֆաբիային, եւ՛ Սեպտին: Բայց հասնելով Աքերոնի մեջտեղը, երկու ափերի՝ մահվան ու կյանքի արանքում, աստվածային գծուծն ասում է. «Դուք ինձ կես ճանապարհի համար եք վճարել»: Եվ ձեր հերոսները, որոնց գլխին արդեն կախված է դժոխային նավավարի ահեղ թիակը, ստիպված են իջնել գետի մեջտեղում, ուղիղ Եվրիպիդեսի ու Արիստոփանեսի գովերգած աստվածային ձայներով կռկռացող նշանավոր աքերոնյան գորտերի մոտ: Տեղն է դրանց:

Գլխի շարժումով շնորհակալություն հայտնելով՝ Ծոգը դարձավ հաջորդին.

- Ֆէ՞բ:

- Մահը շրջհոսող գետի հատակը միշտ չէ, որ ծիծաղելի է թվում նրան, ում թոքերում այդպիսի աքերոնյան գորտ է նստած: Մի բան կասեմ. ձեր պատմությունից պղնձահամ եմ զգում շրթունքներիս: Հաջորդին հարցրեք:

Բայց հաջորդը՝ Թյուդը, չսպասեց, որ անունը տան: Մոտենալով Ծոգին,- ծունկ ծնկան,- արագ ասաց.

- Ինձ թվում է կռահում եմ ձեր, ավելի ճիշտ՝ մեր վերջաբանը, Ծո՛գ. եւ այդ ժամանակ... սպասե՛ք... եւ այդ ժամանակ Ֆաբիան շրթունքներով Սեպտին մոտեցրեց փայլող օբոլը: Սեպտը ձգվեց տոչորված բերանով: Սկզբում շրթունքները ձուլվեցին, հետո՝ հոգիները: Իսկ օբոլը գլորվեց միջնաշխարհի սեւ ջրերի մեջ: Նավակը մեկնեց առանց նրանց: Երկուսը մնացին մահվան ու կյանքի միջեւ, որովհետեւ սերը հենց այդ է... Հիշո՞ւմ եք: Այ ինձ հետաքրքիր է՝ ինչ կասի Զեզը:

- Ես կասեմ,- խուլ արձագանքեց նա,- որ վերջաբան հորինելու փոխարեն ավելի լավ է նորից հորինել սկիզբը. ես այն ուրիշ կերպ կկառուցեի...

- Ինչո՞ւ:

- Չգիտեմ: Գուցե այն պատճառով, որ... իր օբոլը ատամների արանքում ամուր սեղմած մարդ եմ: Հաջորդ շաբաթ օրը իմ պատմությունը կպարզի ասածս բառերը՝ բոլորի համար ու մինչեւ վերջ:

7

Վերադառնալով տուն՝ երկար չէի կարողանում քնել ու հիշում էի երեկոյի բոլոր մանրամասները: Ժամանակ առ ժամանակ կերպարների շարանի մեջ էր հայտնվում Ռարի դատարկ, լուռ բազկաթոռը: Ինչպե՞ս կվարվեր նա մեռյալների օբոլի հետ: Հետո սկսեցի մտածել պատճառների մասին, որ նրան ստիպել էին խուսափել հավաքներից: Եվ տարօրինակ է. ողջ անցած շաբաթ ինձ տանջող անհանգստությունը մի տեսակ խաղաղվեց ու մարեց: Պատահականությունը բացառվում էր: Պարզ էր, որ Ռարը կապերը խզել է խմբակի հետ: Ավելի լավ: Իմ պլանն այսպիսին էր. գնալ մտահղացողների եւս մեկ հավաքի, վերջնականապես համոզվել, որ հենց այդ էր Ռարի որոշումը ու զգուշորեն պարզել նրա իսկական անունը, իսկ եթե հնարավոր լինի՝ նաեւ հասցեն:

Այդ ամբողջ շաբաթ մի քիչ անառողջ էի: Տնից դուրս չէի գալիս: Սենյակիս պատուհաններից այն կողմ հոգեվարում էր ծմեռը. ծյունը սեւացել ու սմքել էր, նեխահոտ ջրափոսերից դուրս էին նայում հողի կեղտոտ գուղձերը, մերկ ծառերի վրա, ասես մահվան սպասելով՝ կորացել էին ագռավների թեւերը, սաղմոսերգուի համաչափությամբ մրմնջում էին լուսամուտի գոգին խփվող կաթիլները:

Վեց անգամ թիվ փոխեց իմ պոկովի օրացույցը, մինչեւ որ տեսա շաբաթ բառը:

Իրիկնադեմին, սովորական ժամին գնացի հավաքին: Դանդաղ էի գնում, քայլ առ քայլ մտմտալով, թե ում եւ ինչպես եմ հարցուփորձ անելու Ռարի մասին: Մոտենալով տանը, որտեղ անցնում էին մեր հավաքույթները, տեսա շքամուտքից արագ դուրս վազող մի մարդու: Ծածանվող թիկնոցի ու աչքերին քաշած գլխարկի եզրերի տակ կռահվում էր Թյուդի կերպարանքը, արդեն ուզում էի ձայն տալ նրան, բայց չգիտեի՝ ինչպես: Տարակուսած բարձրացա առմուտք ու զանգը տվի: Դուռն անմիջապես բացվեց, եւ զգույշ շուրջը նայելով՝ ինձ ընդառաջ ելավ անձամբ Զեզի դեմքը: Ուզում էի ներս մտնել, բայց նա փակեց ճանապարհս.

- Հավաքույթ չի լինի: Գիտե՞ք Ռարի մասին:

- Ո՛չ:

- Ինչպե՛ս: Հրափողն ատամների արանքն ու... Վաղը՝ բահի տակ:

Ապշած քարացել էի, ոչ հարցնելու ուժ ունեի, ոչ պատասխանելու: Զեզի դեմքը մոտեցավ.

- Ոչի՛նչ: Ստիպված ենք ընդհատել հավաքույթները, մի երկու շաբաթով, ոչ ավելի: Հնարավոր է ոստիկանություն գա: Ոչի՛նչ. դեռ ոչ մեկին չի հաջողվել գտնել՝ խուզարկելով դատարկությունը: Դուք կարծես հուզվա՞ծ եք: Թողե՛ք: Ինչ էլ պատահի, պետք է կարողանալ մի բան. ատամների արանքում ամուր սեղմել սեփական օբոլը: Ու վե՛րջ:

Դուռը փակվեց:

Ուզում էի նորից զանգը տալ: Հետո միտքս փոխեցի: Ու վերադառնալով տուն՝ երկար ժամանակ չէի կարողանում հաղթահարել ինձ պատած ընդարմացումը: Բազկաթոռը սեղանի մոտ քաշած՝ նստել ու նայում էի պատուհանից դուրս սեւացող գիշերին. բութ ու անիմաստ: Պատին համաչափ թիկթակում էր ճոճանակը:

Ես նրանց չէի սպասում,- իրենք եկան,- իրար ետեւից, հինգ շաբաթ օր: Ես նրանց քշում էի հիշողությունից. բայց չէին գնում: Այդ ժամանակ ձեռքս պարզեցի թանաքամանին ու բացեցի կափարիչը: Շաբաթ օրերը

գլխով արեցին,- այդպե՛ս, այդպե՛ս,- նրանց շրթունքները շարժվեցին, ու սկսվեց թելադրությունը: Հազիվ էի հասցնում գրի առնել. հինգ բերաններից անսպասելի հորդած բառերը իրար հերթ չտալով խցկվում էին գրչածայրի տակ: Սովատանջ ու հապճեպ՝ նրանք ագահորեն կլլում էին թանաքն ու իրարից առաջ ընկնելով՝ ինձ մղում տողից տող: Սեւ դարակների դատարկությունը հանկարծ խլրտաց. հազիվ էի հասցնում կառավարել շուրջս հեղեղված ստվերներին:

Ահա արդեն չորրորդ գիշերն է մոտենում ավարտին: Ավարտվում են նաեւ բառերը: Ինձ համար այդպես անսպասելի սկսված գրողությունս նոր-նոր ծնված էլ կմեռնի: Առանց հարության հեռանկարի: Չէ՞ որ կռնատ եմ գրելու գործում, այդպես է՝ բառերին չեմ տիրում. նրանք էին տիրել ինձ, վարձույթով առել, որպես վրիժառության գործիք: Հիմա, երբ նրանց կամքը կատարված է, կարող են ինձ դեն նետել:

Այո՛, այդ կիսաչոր թերթիկները շատ բան սովորեցրին ինձ. բառերը չար ու կենսունակ են, եւ ամեն ոք, ով կոտնձգի նրանց դեմ, ավելի շուտ կսպանվի նրանց ձեռքով, քան կսպանի նրանց:

Դե, ահա եւ վերջ, ահա եւ հասա հատակին: Դարձյալ առանց բառերի. Ընդմի՛շտ: Չորս գիշերների էքստազն ինձնից խլեց ամեն ինչ. Իսպա՛ռ: Բայց, թեկուզ եւ ոչ տեւական, մի քանի ժլատ ակնթարթ, ինձ համենայնդեպս հաջողվեց ճեղքել ուղեծիրն ու քայլ անել «ես»-ից անդին:

Ահա - վերադարձնում եմ բառերը, բոլորը, բացի մեկից. կյանք:

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱԳԱՅԻ ՄԱՍԻՆ

I

Չորս տարեկան Մաքսի ամենասիրելի հեքիաթը Թիկի ու Թակի մասին հեքիաթն էր: Հեծնելով հոր ծնկին, ափերը՝ ծխախոտ բուրող պիջակի խավին հպած, փոքրիկը հրամայում էր.

- Թակի մասի՛ն:

Ծունկը օրորվում էր պատից թիկթակող ճոճանակի տակտով, ու հայրը սկսում էր.

- Այդ հեքիաթն այսպես են պատմում. եղել է, չի եղել մի ժամացույց (ժամացույցի մեջ՝ զսպանակ), ժամացույցին՝ երկու որդի՝ Թիկն ու Թակը: Թիկին ու Թակին քայլել սովորեցնելու համար ժամացույցը, թեկուզեւ դժվարությամբ, թույլ էր տալիս լարել իրեն: Ու սեւ սլաքը,- առանձին վարձատրությամբ,- Թիկ-Թակի հետ զբոսնում էր թվատախտակով: Բայց Թիկն ու Թակը մեծացան. մեկ այս չեն ուզում, մեկ այն չեն ուզում: Հեռացան-գնացին, թողեցին թիվն էլ, տախտակն էլ,- ու հետ չեն գալիս: Իսկ ժամացույցը փնտրում է սլաքներով, տնքում ու կանչում է «Թիկ-Թակ, Թիկ-Թակ»: Այդպե՞ս է պատմվում, թե չէ:

Ու փոքրիկ Մաքսը, գլուխը պիջակի փեշի տակ թաքցնելով, մերակների մահուդե կոպերից նայում դուրս ու ամեն անգամ նույնն էր պատասխանում.

- Թե չէ:

Հոր տաք ժիլետը, տղայի ականջին շրշալով, ցնցվում էր ծիծաղից, մերակի բացվածքից երեւում էր ծխամորճը թափ տվող ձեռքը.

- Իսկ ինչպե՞ս է պատմվում: Լսում եմ ձեզ, պարոն Մաքս Շտերե՛ր:

Մաքս Շտերերն ի վերջո պատասխանեց. բայց երեսուն տարի անց:

Բառերից ի գործ առաջին քայլի փորձը Մաքսի կյանքի վեցերորդ տարում էր:

Տունը, որտեղ ապրում էր Շտերերների ընտանիքը, հարում էր մինչեւ Վոլգայի հեռավոր ոլորանը ձգվող մանանեխի դաշտերին: Մի անգամ,- հուլիսյան երեկո էր,- տղան ընթրիքի չեկավ: Ծառան կորածի անունը կանչելով՝ երկար պտտվեց տան շուրջը: Մաքսի սպասքը ընթրիքի ողջ ընթացքում այդպես էլ պարապ մնաց: Հայրը ծառայի հետ գնաց ավելի հեռվում որոնումները շարունակելու: Ողջ գիշեր տան լույսերը վառվում

էին: Միայն առավոտվա կողմ փախստակը հայտնաբերվեց գետանցի մոտ, տնից տասնյակ վերստեր հեռու: Փորձառու ճամփորդի տեսք ուներ. մեջքին՝ ուսապարկ, ձեռքին՝ ցուպ, գրպանում՝ հացի մի մեծ կտոր ու չորս հատ հինգկոպեկանոց: Անկեղծ խոստովանություն պահանջող հոր զայրացած բղավոցին փախստակը հանգիստ պատասխանեց.

- Ես չեմ փախել, Թիկն ու Թակն են փախել: Իսկ ես գնացի նրանց փնտրելու:

Հայր Շտերերը եւ՛ իրեն, եւ՛ որդուն կուշտ ուտելու ու քնելու հնարավորություն տալով՝ որոշեց կտրուկ փոխել դաստիարակության եղանակը: Իր մոտ կանչելով փոքրիկ Մաքսին՝ հայտարարեց, որ հեքիաթները անհեթեթություն ու չեղած բաներ են, իսկ Թիկն ու Թակը՝ ընդամենը մի երկաթե ձողիկով մյուսին խփելու ձայն, թխկոցն էլ ոչ մի տեղ փախչել չի կարող: Տղայի չռված աչքերում տարակուսանք տեսնելով՝ նա բացեց պատի ժամացույցի ապակե դռնակը, հանեց սլաքները, հետո՝ թվատախտակը ու մատը մեխանիզմի ատամնավոր ուրվագծերով սահեցնելով՝ բացատրեց. ծանրաքարերը, որովհետեւ ծանր են, ձգում են ատամները, հետո՝ ատամն ատամին, ատամն ատամին. եւ այդ ամենը՝ *ժամանակը* չափելու համար:

«Ժամանակ» բառը դուր եկավ Մաքսին: Եվ երբ երկու-երեք ամսից նրան նստեցրին այբբենարանի առաջ, ժ, ա, մ, ն, կ - ն առաջին նշաններն էին, որոնցով փորձեց բառ կառուցել՝ գրիչով ծուռտիկ տողեր գծելով:

Սովորելով պտտվող անվակներին տանող ճանապարհը՝ տղան որոշեց կրկնել հոր փորձը: Մի անգամ, սպասելով, որ տանը մարդ չլինի, աթոռակը հենեց պատին, բարձրացավ վրան ու բացեց ժամացույցի դռնակը: Ուղիղ աչքի առաջ համաչափ օրորվում էր ճոճանակի դեղին սկավառակը, ծանրաքարերի ձգած շղթան բարձրանում էր վեր՝ դեպի ատամնանիվների մութն ու շրշյունը: Հետո սկսեց ինչ-որ տարօրինակ բան կատարվել ժամացույցի հետ. երբ նստեցին ճաշելու, Շտերեր-ավագը ժամացույցին նայելով՝ տեսավ, որ երեքն անց է երկու րոպե: «Կարծես ուշացել ենք»,- քրթմնջաց նա եւ արագ վերցրեց գդալը: Առաջին ու երկրորդ ճաշատեսակների արանքում նրա հայացքին ժամացույցը պատասխանեց՝ հինգն անց երկու րոպե: «Սա ի՞նչ ցում թայֆել է: [Zum Teufel *(աղճատված գերմ.- շվեյց. բարբառ) սատանայություն]:* Ի՞նչ է, երկու ժամ ապո՞ւր էինք ուտում»: Շտերեր-կրտսերը լուռ էր եւ աչքերը սեղանից չէր կտրում: Երբ վեր կացան, սլաքներն արդեն հասել էին ութն անց հինգին, ու մինչ ծառան կվազեր մոտակայքում ապրող ժամագործի ետեւից, ժա-

մացույցը հայտարարեց, որ կեսգիշերը մոտ է, չնայած պատուհանից դուրս շողում էր արեւը:

Հրավիրված վարպետը նախ հանեց սլաքներն ու տվեց փոքրիկ Մաքսին՝ խնդրելով, որ պահի: Մինչ նա, մեխանիզմը բացելով, տանտիրոջ հետ զննում էր պտուտակներն ու անվակները, չարություն արած տղան բավական ժամանակ ուներ, որ պոկի ժամացույցի կարճաթեւ սլաքից թելով կախած փոքրիկ ծանրությունը: Ամեն ինչ մանրակրկիտ զննելով ու ստուգելով՝ վարպետը հայտարարեց, որ ժամացույցը միանգամայն սարքին է եւ պետք չէր իրեն՝ զբաղված մարդուն անտեղի անհանգստություն պատճառել:

Ափերից ելած Շտերեր-ավագը գոռաց, որ սեփական աչքերին ավելի է վստահում, քան ուրիշի գիտելիքներին, ու պահանջեց նորոգել կատաղած ժամացույցը: Վարպետը, իր հերթին նեղանալով, հայտարարեց, որ եթե որեւէ մեկը կատաղել էլ է, ապա, համենայնդեպս, ոչ ժամացույցը, եւ ինքը չի պատրաստվում ժամանակ վատնել ու փող վերցնել չփչացածը նորոգելու համար: Եվ, սլաքները տեղը դնելով, շխկացրեց նախ ժամացույցի դռնակը, ապա եւ դուռը: Եվ ժամացույցը, ասես տանտիրոջ հանդեպ ծաղրուծանակն ավարտին հասցնելով, հանկարծ կտրուկ փոխեց ընթացքն ու սկսեց գերագույն ճշտությամբ հաշվել րոպեները:

Օրվա մնացած մասը հայր ու որդի ոչ մի բառ չփոխանակեցին: Երբեմն մեկը կամ մյուսը անհանգիստ նայում էին թվատախտակին: Պատուհանից այն կողմ մգանում էր գիշերը, երբ Մաքսը, շփոթմունքը հաղթահարելով, մոտեցավ հորն ու ծնկին հպվելով՝ ասաց.

- Թակի մասին:

Եվ Թիկի ու Թակի լեգենդը, որ թվում էր արտաքսվել է Շտերերների տնից, վերադարձավ: Շտերեր-կրտսերը առաջին իսկ փորձից սլաքներին ստիպել էր փոխանակել առանցքները. րոպեինը՝ ժամի, ժամինը՝ րոպեների: Եվ նա կարող էր համոզվել, որ նույնիսկ նման պարզ փոխատեղումը խախտում է հոգեկան մեխանիզմների ընթացքը:

Ձեռքը պարզելով՝ փորձարարը դիպավ սլաքներից մեկին,- որը կարճ էր: Մյուս սլաքն իր երկար սեւ ծայրը քաշեց վեր: Պետք էր նրան էլ ուսումնասիրել: Տղան ոտքերի ծայրերին ձգվելով՝ հասավ երկար սլաքին: Գլխավերեւում ինչ-որ բան ճռթաց, իսկ մատների արանքում սեւին տվեց սլաքի սեւ ծայրը: Ի՞նչ անել: Բաճկոնի կարատեղից դուրս էր պրծել մի սեւ թել: Հաջորդ պահին ջարդված ծայրն արդեն խնամքով կապված էր մոտակա սուր ծայրին: Ճիշտ է, կարճ սլաքը դրանից երկարեց, իսկ երկարը

կարճացավ, բայց ի՞նչ տարբերություն: Այդ պահին միջանցքում ոտնաձայներ լսվեցին: Տղան փակեց ժամացույցի դռնակը, ցած թռավ ու աթոռակը քաշեց տեղը:

Ծեր ու համբերատար ցյուրիխյան ժամացույցը չբարկացավ իր սեւ մատը վնասած հետաքրքրասեր տղեկի վրա: Երկար ոտքի վրա անվերջ անկյունից անկյուն քայլելով իր նեղ-բանտային ապակյա վանդակում՝ նեղողամտորեն թույլ էր տալիս, որ երեխայի աչքերն այցելեն իրեն պատից կախված մենության մեջ: Համաչափ դրոշմելով վայրկյանները՝ ցյուրիխցի ուսուցիչը, բոլոր ուսուցիչների պես, լարված էր, ճշգրիտ ու հետեւողական: Բայց հանճարը կարիք չունի, որ իրեն երեւակայել սովորեցնեն. իր չափազանցությունից տառապելով՝ նա մարդկանց մեջ միայն մի բան է փնտրում՝ չափի զգացում: Այսպիսով, ուսուցիչն ու աշակերտը միանգամայն արժեին իրար: Ամեն անգամ, երբ պատից այն կողմ հայրն իր հետճաշյա խռմփոցն էր խռմփացնում, Ծտերեր-կրտսերը, աթոռակը մոտ քաշելով ժամանակի հիմնախնդրին, սկսում էր հարցուփորձը: Ձգում էր ուսուցչի ծանրաքարերը, շոշափում կլոր սպիտակ դեմքը, հարցասեր մատիկներով թափանցում կոշտ ու փշոտ ուղեղի մեջ: Եվ մի անգամ այնպես պատահեց, որ մեխանիկական ուսուցիչը,- ըստ երեւույթին, ինչ-որ բարդ հարցով մտահոգ,- հանկարծ կախեց ոտքն ու դադարեց պատմել դասը: Մաքսը որոշեց, որ ժամացույցը պատասխանն է մտմտում, եւ աթոռակին կանգնած՝ համբերատար սպասում էր: Լռությունը երկարեց: Սլաքները քարացել էին սպիտակ սկավառակի վրա: Ատամնանիվներից՝ ո՛չ ձայն, ո՛չ հնչյուն: Վախեցած երեխան ցած թռավ աթոռակից, վազեց քնած հոր մոտ ու կախված թեւքը քաշքշելով՝ հեծկլտոցի միջով մրմնջաց.

- Հայրի՛կ, ժամացույցը մեռել է: Բայց ես մեղավոր չեմ:

Հայրը, քունը թոթափելով, հորանջեց եւ ասաց.

- Ի՜նչ անհեթեթություն: Մեռնելն այնքան էլ հեշտ չէ, հանգստացիր, տղա՛ս. Ժամացույցը փչացել է: Ընդամենը: Ու մենք կնորոգենք: Իսկ լաց են լինում միայն աղջիկները:

Եվ այդ ժամանակ տեւողությունների ապագա վարպետը, փոքրիկ բռունցքներով աչքերը տրորելով, հարցրեց.

- Իսկ եթե ժամանա՞կը փչանա, նույնպե՞ս կնորոգենք:

Հայրը, հետեւելով ծեր ժամացույցի օրինակին, ստիպված էր լռել եւ անհանգիստ նայում էր իր ստեղծագործությանը:

II

Մաքս Շտերերի մանկական տարիների իրադարձությունները,- դրանք դժվար չէր բազմապատկել,- վկայում են միայն մի բանի՝ վաղ հաստատված հոգեբանական դոմինանտի, ասես օբյեկտի հետ սերտաճած սեւեռման, մտքի միասիրության, ավելի ճիշտ՝ դրա սաղմերի մասին, ինչի մեջ որոշ հետազոտողներ տեսնում են տաղանդավորության հիմքը: Երեխան, ապա եւ պատանին կարծես փորձում էր տեսնել իր առջեւ ձգվող ուղին՝ դեռեւս դրանով ոչ մի քայլ չարած: Որդու հակումը հայեցողականության, իր ներսի խոսքը լսելուն, դժկամությունը շարժունակության ու խաղերի հանդեպ՝ հորը սովորական ֆլեգմա էին թվում: Նրա կարծիքով կյանքը դեղի պես էր. պետք է թափ տալ, հակառակ դեպքում անհրաժեշտ ազդեցություն չի ունենա: Մաքսին տասը տարեկանում թափ տվեցին՝ ուղարկելով Մոսկվա՝ ռեալական ուսումնարանի առաջին նախապատրաստական դասարան: Հայր Շտերերը, մնալով մենակ, զրույցի պակասը փոխհատուցում էր ծխամորճները կրկնապատկելով. ծխում ու կարոտում էր: Մի անգամ, մի հերթական ձմեռային երկար երեկո նույնիսկ ստիպված եղավ օգնություն խնդրել գրադարակից: Տասնյակ խառնիխուռն թափված գրքերի մեջ գտավ Դալի ասացվածքների հատորը (Շտերերը, որ ռուսացած գերմանացի-գաղութաբնակ էր, պատշաճ էր համարում ռուս ժողովրդի հետ բացատրվել նրա ասացվածքներով, Sprichworter՝ ջանադրաբար սերտած այբբենական կարգով): Հատորը թերթելիս Շտերերը հանկարծ լուսանցքներից մեկում նկատեց որդու ձեռագիրը. «Ժամանակը սրնգի ձայնին չի գալիս» ասացվածքի կողքին մանկական դժվարընթեռնելի խզմզոցով գրված էր.

«Իսկ ես կստիպեմ նրան շուրջպար բռնել»:

Հայր Շտերերը այդպես էլ չհասկացավ՝ ինչ «նրա»-ի մասին է խոսքը, բայց Մաքս Շտերերի կենսագիր Իոսիֆ Ստընսկին այդ գրառումը կոչում է «առաջին սպառնալիք» եւ ընդգծում շրջանի պատկերը, որից էլ հետագայում, ի տարբերություն սովորաբար ժամանակը խորհրդանշող ուղղաձիգի, իր պլանն իրականացնելիս օգտվում էր գյուտարարը: Ուսման առաջին երկու-երեք տարիներին հայր ու որդի կանոնավոր հանդիպում էին արձակուրդների սկզբում ու վերջին: Ամեն տուն գալուն որդին ավելի երկար ու նիհար էր դառնում, թեւքերն ու փողքերը հազիվ էին հասնում ետեւից, նույնիսկ մազերը, որ առաջ բացգույն փնջերով թափված էին ուսերին, հիմա, ինչքան էլ խուզում էին, ոզնու փշերի պես ցցվում էին վերեւ: Սակայն վրա հասած 1905-ը երկար ժամանակով բաժանեց Շտերերնե-

րին: Նախ հայրը, վախենալով ագրարային անկարգություններից, որդուն խնդրեց հետաձգել այցելությունը, հետո որդին էլ, ինչ-որ աշխատանք վկայակոչելով, հետաձգեց հանդիպումը: Խորհրդավոր «աշխատանքը» կլանեց նաեւ հաջորդ արձակուրդները: Հայրը հեռագիր ու փող ուղարկեց ճանապարհի համար, բայց որդին հեռագրին հեռագրով պատասխանեց. «Ժամանակը խլել է ժամանակը: Մի սպասիր», իսկ փողն անհապաղ վերածվեց ինչ-որ գրքերի ու ռեակտիվների: Գիշերօթիկի սան Մաքսիմիլիան Շտերերի մահճակալի տակ, ի սարսափ տանտիրուհու եւ ի հետաքրքրություն ընկերների, վաղուց մի հանպատրաստի ֆիզիկա-քիմիական փորձարան էր ձեւավորվել: Տերը ջերմեռանդորեն պահպանում էր փորձանոթներով, էլեկտրաստատիկայի սարքերով եւ այլեւայլ գիտական պիտույքներով լի իր արկղը: Ամռանը իր զոդած խողովակները, ռեակտիվներով սրվակներն ու սպիրտայրոցը տեղափոխում էր բակի անկյունում գտնվող մարագի ետեւը. Ձմռանը աշխատում էր միայն տոներին ու կիրակի օրերը՝ ջանալով օգտվել գիշերօթիկի ընկերների բացակայությունից: Իր մտքերով տարված՝ չորրորդ դասարանի աշակերտ Շտերերը չէր կարող երկար ժամանակ հատկացնել դասերը պատրաստելուն: Ուսուցիչների ու հասակակիցների շրջանում նա ծույլ ու միջակ աշակերտի համարում ուներ: Ասենք, դեպքեր էին լինում, որ մի քիչ խճճում էին ձեւավորված կարծիքը. Այսպես, մի անգամ, երկու այլ աշակերտների հետ գրատախտակի մոտ կանչված Շտերերը, տեսնելով, որ գրատախտակի մեկ երրորդի վրա տեղ չի մնացել նախագծի լուծմանն անհրաժեշտ երկրաչափական նշանների համար, զայրացավ, սպունգով արագ ջնջեց հավասարման երկար նշանն ու կավճի մի քանի հարվածով խնդրի լուծումը տվեց վերլուծական երկրաչափության մեթոդով: Ֆիզիկայի ուսուցիչը, որը հինգերորդ դասարանցիներին Նյուտոնի համաշխարհային օրենքների հետ մեջընդմեջ մազականություն ու բատավյան կաթիլներ էր դասավանդում, մի քիչ վախենում էր նորագույն հայտնագործությունների բնագավառում տհաճ իրազեկություն դրսեւորող իր աշակերտից, չնայած, Մաքսը, որը բացարձակ ուշադրություն չէր դարձնում գերազանց գնահատականներին, որոնցով փորձում էին գլուխներն ազատել նրանից, դեմ չէր հարկ եղած դեպքում նույնիսկ օգնել ուսուցչին մտահորիզոնն ընդլայնելու հարցում: Մի անգամ նա էլիպսային ֆունկցիաների մասին մի գերմանական գիտական աշխատանք տվեց մաթեմատիկայի ուսուցչին: Ուսուցիչը, որը երեւի այդպես էլ ոչինչ չէր հասկանա, եթե նույնիսկ գերմաներեն իմանար, մի շաբաթ անց վերադարձրեց գիրքը, խրախուսական ներողամտու-

թյամբ թփթփացրեց աշակերտի ուսին ու, հետնափեշերը թափահարելով, անհետացավ ուսուցչանոցում: Հինգերորդ դասարանցի Շտերերին, որը անքուն գիշերներից մեկի ընթացքում գտել էր աշխատության հիմնական թեզերի հերքումը, այդպես էլ չհաջողվեց զրուցակից գտնել:

Նա ընդհանրապես մենակ էր արդեն վաղ պատանության տարիներին: Գիշերօթիկի ննջարանում շարք էին կանգնել մեկ տասնյակ մահճակալներ, մահճակալների կողքին՝ սեղանիկներ, սեղանիկներին՝ կանաչ լուսամփոփով լամպեր: Ննջարանի ավագ բնակչությունը խոսում էր բասից դիսկանտի անցնող ձայներով, գրչահատ դանակներով քերում կզակների աղվամազը եւ կոպեկներ խնայելով՝ քսանհինգ կոպեկանոցներ կուտակում ապահովիչ առնելու համար: Կրտսեր աբորիգենները, որոնց քամահրանքով «վխտացողներ» էին ասում, երեկոները ակնածանքով ականջ էին դնում մեծերին, որոնք բերանբաց վառարանի առաջ պպզած՝ ծխախոտի ծուխը դռնակից ներս էին փչում ու քննարկում, թե ինչ է կինը եւ որ տիպի կռփազենքը կարող է լավագույնը համարվել:

Միայն երկու հոգի չէին մասնակցում քննարկումներին ու ականջ դնելուն. գրքերով ու մտքերով անջրպետված Մաքս Շտերերն ու Իխիլ Տապչանը, կարճ՝ Իխյան, բարակոտն ու ներս ընկած կրծքով մի պատանի, որի դեմքին նայելիս հասկանում էիր՝ երկար չի ապրի: Իխյան սովորաբար կուզիկացած, աչքերը՝ ներս, դեղին ձեռքերով ծունկը գրկած՝ նստում էր իր մահճակալին, կապույտ կոպերը ցնցվում էին թռչունի թարթաթաղանթի պես, իսկ թափանցիկ, ցցված ականջախեցու միջով, աչքը լարելով կարելի էր տեսնել լամպի կանաչ ուրվագիծը:

Գիմնազիստները մեկ-մեկ փորձում էին գրգռել Տապչանին.

- Ի՛խյա, իսկ քեզ շո՞ւտ արաբայով կտանեն գերեզմանոց:

- Գրիր մայրիկիդ, Գոմել, Ի՛խյա, որ քեզ թալես ուղարկի:

Բայց Իխյան լռում էր, եւ միայն նրա թռչնային թաղանթներն էին դողում, իսկ սրված այտոսկրերի վրայով վազում էին կարմիր բծեր: Մաքս Շտերերը, որ մյուսներից հաճախ էր ուշադրություն դարձնում Իխյային, չէր ծաղրում նրան, բայց չէր էլ կարեկցում, պարզապես հետեւում ու մտածում էր քայքայման ընթացքի մասին, որն արագ էր վերականգնումից: Դա արագությունների տարբերության մասին խնդիր էր, ինչպես ապրանքատարին հասնող ճեպընթաց գնացքի մասին հանրահաշվական խնդիրը: Պետք էր, պայմանները բարդացնելով, լուծել խնդիրն ու, պատասխանը ստուգելով, անցնել խնդրագրքի հաջորդ էջին: Ժամանակը հետազոտողի միտքը Գոմելից եկած հիվանդոտ հրեա տղային ըստ երեւույթին

տեսնում էր որպես մի անոթ, որը ժամանակի մեծ հոսակորուստ ունի եւ արագ իջնում է հատակը, մեխանիզմ, որի խախտված կարգավորիչը չափազանց արագ է թուլացնում զսպանակի լարումը: Շտերերը սովորել էր Իխյայի ընդհատուն, դադարներով նշագծված բարձր հազի մեջ տարբերակել յուրահատուկ երանգների հերթափոխումը. թվում էր՝ հիվանդը զրուցում է ինչ-որ մեկի հետ միայն շչական ու կոկորդային հնչյուններից կազմված կարճ հագագներով, սուլող ու խռպացող բողոքող բառերի պոռթկումով: Եվ ականջ դնելով այդ զրույցին՝ հետազոտողը երբեմն,- այդպես էր թվում նրան,- կարողանում էր գուշակել, թե ով է երկրորդ զրուցակիցը. չէ՞ որ այդ անունով էին լեցուն նրա բոլոր մտքերը:

Կիրակի օրերը առավոտից գիշերօթիկի սաները ցրվում էին, ննջասրահը դատարկվում էր, մնում էին միայն երկուսը. Իխյան կորացած նստում էր իր մահճակալին, իսկ Շտերերի անկողնու տակից մետաղի եւ ապակու զնգոցով դուրս էր սողում փորձարան-արկղը: Մեկը, թռչնային թաղանթները կկոցելով, իր ներսում ընդարձակվող մահվանն էր հետեւում: Մյուսը լարերի խառնաշփոթում, միացումների ու փոխարկիչների համակարգի, թորանոթների ապակյա կոկորդների եւ ատոմից ատոմ ցատկող թվերի վրա կռացած՝ երազում էր թակարդի մասին, որով բռնելու է ժամանակը: Իրար հետ չէին խոսում: Միայն մի անգամ, զգալով, որ կարելի է, Իխյան երկչոտ հարցրեց.

- Դուք երբեք չե՞ք զբոսնում:

- Ես ոչ մի գործ չունեմ տարածության հետ,- կտրեց Շտերերն ու նորից կռացավ իր արկղի վրա:

- Այդպես էլ կարծում էի,- գլուխն օրորեց Իխյան ու սպասեց:

- Մարդիկ տեղաշարժվում են տարածության մեջ: Ցանկացած կետից դեպի ցանկացած կետ: Պետք է, որ ժամանակի միջով էլ այդպես անցնեն՝ ցանկացած կետից ցանկացածը: Այ դա, ասեմ քեզ, զբոսա՛նք կլինի:

Իխյան հիացած ժպտաց. այո՛, այո՛, այնպիսի զբոսանք, ինչպիսին երբեւէ չի եղել:

Ու հազաց թաշկինակի մեջ: Մաքսը, հազի ցնցումներից անձայն, բայց իրեն հասկանալի բառեր կազմելով՝ լսում էր. «Դու գնա ու հասիր, իսկ ես կվերջանամ, ու՝ վերջ»:

Նա արդեն ուզում էր քայլ անել ու ձեռքը տանել Տապչանի սուր, ցցված թիակներին: Բայց այդ պահին նախասենյակից ձայներ լսվեցին: Փորձարան-արկղը արագ սողաց մահճակալի տակ:

Մի քանի շաբաթ անցավ: Մի անգամ, մթնշաղին, մոտենալով իր մահ-

ճակալին՝ Շտերերը բարձի վրա մի գիրք տեսավ: Վառեց լույսը. դեղին կազմին գրված էր. «Ժամանակի մեքենա»: Իխյայի խորամանկ ժպիտից կարելի էր կռահել, թե ում թաքուն նվերն է: Շտերերը երախտագիտություն չէր զգում. արագորեն էջերի մեջ թաղված ձեռքերն ավելի շուտ զայրույթ էին արտահայտում: Ինչ-որ մեկը, ինչ-որ վեպեր հորինող համարձակվել էր խուժել իր՝ զուտ շտերերյան մտքի մեջ, որը ուղեղից կարելի էր խլել միայն ուղեղով հանդերձ:

Ամբողջ երեկոյի ընթացքում աչքերն ու գիրքը իրարից չբաժանվեցին: Իխիլ Տապչանը իր անկյունից հետեւելով էջերի շարժմանը՝ սկզբում նրանց վրա խոժոռված ճակատն էր տեսնում, հետո՝ իրարից հանգիստ հեռացող հոնքերը, ապա՝ փոքր-ինչ քամահարական ժպիտը՝ ամուր սեղմված բերանի շուրջը:

Մեկ օրից կիրակի էր: Իխիլը, որ առավոտից ջերմություն ուներ, պառկել էր դեմքով դեպի պատը: Հանկարծ՝ հպում ուսին: Աչքերը բարձրացնելով՝ տեսավ վրան կռացած Շտերերի դեմքը.

- Ավելի տաք պիտի ծածկվես: Թող՝ ե՛ս: Ա՛յ այսպես: Ու վերցրու գիրքդ. ինձ պետք չի:

- Դուրըդ չեկա՞վ,- շփոթված մրմնջաց Իխյան:

Հյուրը նստեց նրա մահճակալին.

- Գիտե՞ս, խնդիրը մարդկանց դուր գալը չի, այլ այն, որ հարձակվես ժամանակի վրա, խփես ու տապալես: Հրաձգարանում կրակելը դեռ պատերազմ չէ: Ու նաեւ, իմ հիմնախնդրում՝ ինչպես երաժշտության մեջ՝ հինգ տոնի սխալն ավելի փոքր դիսոնանս է տալիս, քան կիսատոնի սխալը: Վերցնենք, թեկուզ, մեքենայի արտաքին տեսքը. Ի՞նչ լարեր կամ այդ անհեթեթ հեծանվի թամբը: Չկա նման բան. ժամանակի միջով անցնող մեքենայի ուրվապատկերն անգամ միանգամայն այլ է լինելու: Օ՜, ինչ հստակ եմ տեսնում:

Խոսողն ափերով սեղմեց քունքերն ու լռեց, եւ Իխիլն ընդառաջ մղվեց չասվածին.

- Իսկ ինչպիսի՞ն է լինելու:

- Ժամանակային փոխարկիչը, ինչպես հիմա տեսնում եմ, ճակատի ու ծոծրակի ոսկրերն ամուր գրկող սրածայր գագաթով գլխարկի տեսք կունենա: Ժամանակի արագարարի առավելագույնս նրբացված օպտիկական ապակիներն իրենց ֆոկուսները կխաչաձեւեն այնպես, որպեսզի սարքը արդեն իսկ գործարկումից առաջ դուրս բերվի տեսանելիությունից: Դիտողականորեն դա միանգամայն հնարավոր է: Հետագայում, մե-

քենայի առաջին իսկ քայլից, անտեսանելիությունը ներառողից աստիճանաբար պետք է տարածվի ներառվածի վրա, այսինքն՝ թափանցիկ մամլակների մեջ առնված ուղեղի, գանգի, պարանոցի, ուսերի եւ այլն: Այդպես փամփուշտի նիկելե գլխիկն է իր թռիչքով կորցնում տեսանելիությունը, չնայած եւ գտնվում է տարածության մեջ: Բայց խնդիրն այդ չէ. գանգի տակ պահված ժամանակը պետք է ծածկել գլխարկով, ինչպես թիթեռը՝ ցանցով: Բայց այն միլիարդ ու միլիարդաթեւ է ու շատ վախկոտ, հակառակ դեպքում անտեսանելի գլխարկի տակ չես առնի: Եվ ես չեմ հասկանում, թե հեքիաթասացների հորինած անտեսանելի գլխարկն ինչպես է... անտեսանելի մնացել գիտնականների համար: Ես իմը գտնում եմ ամենուր: Տեսնո՞ւմ ես, հեքիաթներն էլ կարող են պիտանի լինել:

- Բայց ինչպե՞ս...

- Հարցնում ես՝ ինչպե՞ս է աշխատելու: Ծատ պարզ: Ասենք՝ չէ՛. շատ բարդ: Դե, թեկուզ սա. ամենապարզի մասին եմ ասում: Բնախոսական հոգեբանության ցանկացած դասագիրք ընդունում է այսպես կոչված էներգիայի յուրահատկության սկզբունքը: Այսպես, եթե հնարավոր լիներ լսողական նյարդի ստորին վերջավորությունն անջատելով՝ պատվաստել ուղեղի տեսողական կենտրոնին, ապա *կտեսնեինք հնչյունները* եւ հակառակ գործողության դեպքում *կլսեինք ուրվագծերն ու գույները:* Հիմա ուշադիր լսիր. մեր բոլոր ընկալումները, որոնք բազմաթիվ նյարդային հաղորդիչներով ներհոսում են ուղեղ, կամ տարածական, կամ ժամանակային բնույթ ունեն: Բնականաբար, տեւողություններն ու տարածականությունները այնպես են սերտաճած, որ վիրաբուժական ոչ մի նշտարով չես բաժանի: Ասենք, իմ միտքն էլ, ըստ երեւույթին, պողպատե շեղբից սուր չէ, նրա համար էլ դժվար է ցոլքերը բաժանել ակնթարթներից, բայց հիմա արդեն ճիշտ ճանապարհի վրա եմ, թեկուզ եւ աղոտ, բայց կռահում եմ ընկալման այդ երկու տիպերի լարման տարբերությունը: Եվ երբ սովորեմ ուղեղում վայրկյանները տարանջատել խորանարդ միլիմետրերից, ինչպես յուղի մոլեկուլները՝ ջրի մոլեկուլներից, ինձ կմնա միայն ավարտին հասցնել իմ նեյրոմագնիսի գաղափարը: Գիտե՞ն, սովորական մագնիսը էլեկտրոնները շեղում է իրենց ճանապարհից. իմ նեյրոմագնիսը, որ գլխարկի տեսքով գրկում է գլուխը, նույնն է անելու, բայց ոչ թե էլեկտրոնների հոսքի, այլ տեւողությունների, դեպի իրենց կենտրոնը ձգտող ժամանակային կետերի հոսքի հետ: Կեսճանապարհին որսալով հոսքը՝ հզոր նեյրոմագնիսը ժամանակային ընկալումների թռիչքը կուղղորդի դեպի տարածական կենտրոններ: Այդպես երկրաչափը, ցանկանալով գիծը վերածել հարթության, ստիպված է այն հենց

իրենից ուղիղ անկյունով շեղել դեպի սովորական տեւողություն: Եվ այն պահին, երբ այն, այսպես ասած, թռչելով ցոլքի մեջ, դառնա եռաչափ, անցյալին, ներկային ու ապագային հնարավոր կլինի ստիպել ձեր ուզածով փոխել տեղերը, դոմինոյի խաղաքարերի պես, որոնցով խաղալը պահանջում է առնվազն երկու չափում: Երրորդ չափումը պարտադիր շահելու համար է: Չէ՞ որ թիերը կորցրած մակույկը միայն մեկ ճանապարհ ունի՝ հոսանքով ներքեւ, անցյալից ապագա: Ընդամենը այդքան: Մինչ որ չփշրվի՝ քարերին խփվելով, կամ հոսանքով չքշվի: Այնպես որ, ես մարդկանց տալիս եմ այդ հասարակ թիակը, պտտաթեւը, որ կասեցնում է վայրկյանների վազքը: Ընդամենը այդքան: Դրանով եւ՛ դու, եւ՛ ամեն ոք կկարողանաք թիավարել նաեւ օրերին հակառակ, եւ նրանցից առաջ անցնելով, եւ վերջապես, ժամանակի լայնքով... դեպի ափ: Բայց վառվում ես, Ի՛խյա: Վա՞տ ես զգում:

Խոնավ, տաք մատները սեղմեցին Շտերերի ձեռքը.

- Լավ եմ: Այնքան լավ, որ երբեք այլեւս այսքան լավ չի լինի:

Շտերերը ժպտաց.

- Ճիշտ չէ. երբ կառուցեմ իմ մեքենան,- թեկուզ տասը, քսան տարի անց, մեկ է,- խոստանում եմ քեզ, կվերադառնամ այս օրը, մեր հիման, նորից այ այսպես կնստենք, մատներդ խոնավ ու տաք կլինեն, եւ դու կասես. «Լա՛վ: Այնքան լավ, որ...»: Բայց ես կշարժեմ լծակն ու...

- Դեպի ափը:

- Ո՛չ, Ի՛խյա, մոտով եւ առաջ: Տարիների թռիչքի միջով:

Շտերերի պատմությունը, սակայն, շարունակություն չունեցավ: Իխիլի վիճակը օրեցօր վատանում էր: Գիշերօթիկի կառավարչի կանչով հայրենի քաղաքից եկան Տապչանի ետեւից: Մի առավոտ, ասես ի հաստատումն թալեսի մասին կատակով արված կանխատեսման, շերտավոր ծածկոցի մեջ փաթաթված Իխյան նստել էր կառեթում՝ գլուխը կաշվե բարձին գցած: Մաքս Շտերերը, կանգնելով ոտնակին, զգույշ սեղմեց Իխյայի փխրուն մատները: Մանուշակագույն թռչնային թաղանթները երախտագիտությամբ թրթռացին: Շտերերն իջավ ոտնակից:

Նրանք երկու նամակ փոխանակեցին: Երրորդ՝ Մոսկվայից ուղարկված նամակը վերադարձավ չբացված ու նշումով՝ հասցեատիրոջ մահվան պատճառով:

Ստընսկին, որը, ի թիվս այլ նյութերի, օգտվել էր Տապչանի պահպանված օրագրից եւ առաջին մոսկովյան նամակի պատճենից, որը մահվանից մեկ օր առաջ նա սիրաբար արտագրել էր տետրում, պնդում է, որ հետագայում Շտերերի կողմից ընկերության փորձեր չեն նկատվել:

III

Շտերերի առաջին երկու ուսանողական տարիների մասին չափազանց քիչ է հայտնի: Ֆակուլտետի ընկերները, որ Շտերերի հետ իրենց մատրիկուլներն էին տալիս պրոֆեսորներին՝ ստորագրելու, հիշում էին, որ նրա փոքրիկ մորուքը շիկավուն էր, եւ ամառ, թե ձմեռ՝ հագին նույն կարճափեշ, ցրտից չպաշտպանող վերարկուն, բայց թե ինչ էր խոսում, ում հետ եւ ընդհանրապես խոսո՞ւմ էր՝ հարցվածներից ոչ մեկը չկարողացավ պատասխանել: Ավելի հավանական է վերջին տարբերակը. ոչ մեկի հետ, երբեք, ոչ մի բանի մասին: Կարելի է հաստատված համարել, որ Մաքսիմիլիան Շտերերը, ինչպես որ շատ ուրիշ ոչ շարքային մտածողներ, այդ տարիներին հիվանդացել էր շոպենհաուերականության փիլիսոփայական սեւ ծաղկախտով: Համենայնդեպս, որոշ աղոտ գրառումներ նրա դասախոսությունների տետրերում շարադրում են անցյալի ծագումը բացատրող մի բավական տարօրինակ տեսություն: Ըստ այդ գրառումների՝ անցյալը A ընկալման *դուրսմղումն է* B ընկալման կողմից: Բայց եթե ուժեղացվի A-ի *դիմադրողականությունը,* B-ն ստիպված կկանգնի ոչ թե A-ի տեղում, այլ *կողքին:* Այսպես, նոտայի նշանը նախորդին կարող է միանալ եւ՛ հորիզոնական, եւ՛ ուղղահայաց. առաջին դեպքում գործ կունենանք մեղեդային ժամանակի, երկրորդ դեպքում՝ նրա հարմոնիկ ձեւի հետ: Եթե ընդունենք գիտակցության այնպիսի ընդարձակ դաշտ, որ ընկալումները, այնտեղ կուտակվելով, չճնշեին իրար, ապա ներկան կբավականացներ բոլորին: Չէ՞ որ աչքից հավասար հեռավորության վրա գտնվող երկու առարկաներից մեկը մոտիկ է թվում, մյուսը՝ հեռու, կախված գույնի պայծառությունից, լույսից եւ ուրվագծերի հստակությունից: Ի՞նչն է գիտակցությանը ստիպում կուտակվող ներկայի այս կամ այն տարրերը մղել անցյալ, կամ գրառումների եզրաբանությամբ՝ ի՞նչն է գիտակցությանը ստիպում կառուցել մի անցյալ, ուր կարելի է *մղել:* «Ցավը»,- պատասխանում է «այն ժամանակվա» Շտերերը (ինչպես հետահայաց նշում է Ստընսկին): Չէ՞ որ տարածության մեջ ցանկացած օրգանիզմ բնական կերպով հետ է մղում օբյեկտը կամ հետ է մղվում օբյեկտից, որը խթանում է ցավը. քանի որ մատները վառող լուցկին կարելի է դեն նետել, ռեֆլեքսն էլ հենց նետում է. բայց քանի որ վառող արեւն անհնար է դեն նետել, ապա ինքս եմ նրանից թաքնվում ստվերի մեջ: Եվ քանի որ,- փաստարկմանը միջամտում էր հոռետեսությունը,- բոլոր ընկալումները ցավ են ու տարբերվում են միայն ցավոտության աստիճանով, ապա ժամանակի եւ տարածության մեջ էլ գիտակցությանը մնում է միայն հեռացնել

նրանց կամ հեռանալ նրանցից՝ այսպես կոչված հեռանկարի եւ անցյալի միջոցով: Մեկնաբանելով Շտերերի սուղ ձեռագիր ժառանգության այս կետը՝ Ստընսկին նշում է Սփենսերի տեսության ազդեցությունը, որը ցավային ընկալումները մեկնաբանում է որպես ազդանշաններ, որոնք նյարդային ծայրամասը տալիս է կենտրոնին արտաքին վտանգների մասին: Շտերերը (ըստ Ստընսկու) անգլիական էվոլյուցիոնիստի հետ հասնելով անդունդի եզրին՝ նաեւ անդունդն է ընկնում. գիտակցությունը, որը վտանգի մասին ցավով չի զգուշացնում, ավելորդ է, հետեւաբար, նրա բոլոր ընկալումները ազդանշաններ են եւ բոլոր ազդանշանները՝ աղետի ազդանշաններ՝ sum-SOS. հեռացնել կործանումը, հետեւաբար՝ ապրել:

Այդ շրջանի Շտերերը ժամանակի եւ ցավի իր սահմանումներում ձգտում է դրանք մի տեսակ դնել իրար վրա: «Ժամանակը,- սահմանում է նա,- իր աղբյուրից փախչող ճառագայթի պես, հեռացում է ինքն իրենից, մաքուր ամենուրեքություն, մինուս մինուսից. ցավը փորձություն է՝ տոգորված անփորձարկելիության միտումով, ցավն ըմբռնելի է իր վերահասությամբ - եւ միայն այդպես»:

Հիմա դժվար է նկատի ունենալ բոլոր պատճառներն ու կիսապատճառները, որ փակում են ճանապարհը մետաֆիզիկայով, ընդ որում, մետաֆիզիկայով, որն իր «մետան» խավարի միջով նետում է դեպի մշուշը: Անկասկած է որոշ հիասթափությունը սեփական պարսատիկի ուժի հանդեպ եւ վերջնական թերագնահատումը հակառակորդի հասակի ու հզորության: Բնական է, որ Շտերերի խաղալիք փորձարան-արկղը չդիմացավ համալսարանական փորձարանների հետ բախմանը, նոր, ավելի ճշգրիտ ու ծավալուն փորձերը չհաստատեցին նախկին տնայնագործական կիսափորձերի արդյունքները, շատ ու շատ բաներ ստիպված էր ջնջել ու սկսել սկզբից: Շտերերն իր տետրերից մեկում դառնությամբ նշում է. «Այսօր դարձա 22 տարեկան: Ես հապաղում ու ներամփոփվում եմ, իսկ այդ ընթացքում ժամանակի թեմայի համար պայքարում հաղթում է տեմպը»: Եվ մի քանի տող ներքեւ. «Ժամանակը միշտ հաղթում է նրանով, որ *անցնում է:* Կամ նա ինձնից կխլի կյանքս, նախքան ես իրենից կխլեմ իմաստը, կամ...»: Այստեղ գրառումն ընդհատվում է: Ասենք, շուտով բուն հոռետեսությունն էլ, քամուց քշվող ամպի ստվերի պես, լքում է Շտերերի գիտակցությունը: Գուցե եւ այդպես է պետք. հետ ձգել աղեղնալարը, որպեսզի նետը թռչի առաջ, դանդաղեցնել միտքը, որպեսզի սահմանվի իմաստը: Ընդմիջմանը հաջորդած մեկուկես տարին առավելագույնն են տալիս Շտերերի մտահղացման կոնկրետացման հարցում: Եվ շատ ցա-

վալի է, որ այդ շրջանի նյութերի մեծ մասը մասամբ ոչնչացվել հենց հեղինակի ձեռքով, մասամբ՝ քաղաքացիական պատերազմի հանգամանքներով, եւ կարող են վերականգնվել միայն տարանջատ հատվածներ, որոնք էլ գաղտնազերծում են պահանջում:

Այդ շրջանի առաջին աշխատանքը Շտերերի հոդվածն է, որտեղ քննվում էր, այսպես կոչված, *ժամանակի տրամագծի* հարցը: Հոգեբան-պրոֆեսորին ստուգարքային աշխատանքի կարգով ներկայացված հոդվածի հեղինակը երկու-երեք տարով առաջ է ընկնում «ներկայի տեւականության մասին» ամերիկյան գիտնականների աշխատանքներից, փորձում է հերքել ներկայի մասին պատկերացումները՝ որպես ինչ-որ կետի, որ զբաղեցնում է «զրո տեւականությունը»: Ժամանակը գծային չէ, դա «անաքրոնիզմ է քրոնոսի մասին»,- այն ունի իր տրամագիծը, որը «ժամանակի սպառողներին» հայտնի է «ներկա» անունով: Քանի որ մենք մեր «ոսոc»-ը *[հիմա - լատ.]* նախագծում ենք տեւողությունների լայնքով, ապա պրոյեկցիան փոխելով՝ ոսոc-ը կարելի է տեղակայել տեւողությունների երկայնքով. այսպիսով, կարելի է հաշվարկել, թե ինչքան ներկա է տեղավորվում ասենք ոոպեի տեւողության մեջ: Ռեֆերատին կցված, այսպես կոչված, տեմպոգրամները ներկացնում էին «ժամանակի տրամագիծը», ավելի ճիշտ՝ տալիս էին դրանց բնութագիրը, որը տատանվում է վայրկյանների տասնորդականներից մինչեւ 3 վայրկյանի սահմաններում (հետագայում ամերիկացիների ավելի ճշգրիտ չափումները թույլ տվեցին դիտարկել ներկայի՝ մինչեւ հինգ վայրկյանի հասնող տեւողությունը): Այսպես, թե այնպես, երկրորդ կուրսեցու՝ «անցյալի վերջը ապագայի սկզբից» (մեջբերում եմ ձեռագրից) բաժանող ժամանակահատվածը չափելու փորձը պրոֆեսորի համակրական հանձնարարականին չարժանացավ: Համալսարանական ամբիոնը, ինչպես եւ պետք էր սպասել, ներուստ անտարբեր ու փուչ էր:

Հայտնի չէ՝ այդ հանգամանքը ստիպեց Շտերերին երես դարձնել պաշտոնական գիտությունից: Գիտենք միայն, որ մոտակա կիսամյակին «խրատաբանության համար» հոր ուղարկած գումարը որդին նախընտրեց ծախսել իրեն անհրաժեշտ պատրաստուկներ գնելու համար եւ սահմանված ժամկետը լրանալուն պես, ուսման վարձը չվճարելու պատճառով հեռացվեց ուսումնական հաստատությունից:

Ընդունված է նրա կարճատեւ համալսարանական շրջանին վերագրել *խիէմսետատորի* գյուտը եւ «յոթնուրբաթ շաբաթվա» նախագիծը:

Խիէմսետատորը, ինչպես հայտնում է Ստընսկին, յուրահատուկ գիտական խաղալիք էր: Շտերերը գտնում էր, որ բազմամյա ժամանակա-

միջոցներով իրար փոխարինող ձմեռն ու ամառը նյարդային համակարգը կարող է ընկալել այսպես ասած «փոշենման տեսքով»: Տարին, որի ընթացքում տեղի է ունենում աչքի ցանցաթաղանթի վրա ազդող կանաչ սաղարթի դանդաղ փոխարինումը ձմռան սպիտակ ձյան ծածկոցով, կարող է խիէմսետատորում աղացվել, ինչպես սուրճի հատիկը՝ ձեռքի սրճաղացում, աղացվածքի յուրաքանչյուր մասնիկում պահպանելով բոլոր հատկությունները: Սկզբունքն այն է, որ փորձարկվողի՝ մնացած բոլոր լուսային ներգործություններից մեկուսացված աչքերին մոտեցվում է այս կամ այն արագությամբ պտտվող սկավառակ՝ բաժանված երկու հատվածի՝ կանաչ ու սպիտակ: Հերթականությամբ ներառվելով տեսողական դաշտում՝ կանաչն ու սպիտակը փոխարինում են իրար, ինչպես սաղարթն ու ձյունը՝ եղանակների շրջպտույտում: Սկավառակների ընտրությունը՝ սպիտակի ու կանաչի տարածքների հարաբերակցության բազմազանության հաշվարկով, ինչպես օպտիկայի մասնագետն է ընտրում ապակիները, թույլ է տալիս գտնել հատվածների՝ աչքին առավել հարմար հարաբերակցություն: Ռուսաստանի տարբեր եղանակային գոտիների բնակիչների վրա արված մոտ հարյուր հիսուն փորձերը,- նույն Ստընսկու պնդմամբ,- տվեցին հետեւյալ արդյունքը. այն երկրամասի բնակիչներին, որտեղ, ըստ վիճակագրական տվյալների, ձյունառատ ամիսների հարաբերակցությունը կանաչ ծածկոցով ամիսներին 2:1-ին է, առավել հարմար, «աչքին հարմարեցված» սկավառակին սպիտակի ու կանաչի տարածքները հարաբերակցվում էին նույն կերպ՝ 2:1-ին: Հարավցիների աչքերն ավելի քիչ էր հոգնեցնում այն սկավառակի պտույտը, որի վրա կանաչն ու սպիտակը հարաբերակցվում էին ինչպես 3:2-ին, եւ այլն: Քանի որ գյուտարարն ինքը լուրջ նշանակություն չէր տալիս այդ պտտանին, որը, բնականաբար՝ շատ կոպիտ, նմանակում էր տարվա եղանակների պտույտը, այլեւս հարկ չկա անդրադառնալ խիէմսետատոր:

«Յոթնուրբաթ շաբաթվա», ինչպես այն կատակով կոչում էր Ճտերերը, նախագիծը ըստ էության հանգում էր *արհեստական օրվա* կառուցման հիմնախնդրին: «Օրերը,- կարդում ենք նրա անավարտ ձեռագրում,- դրվում են ապերցեպցիոն սարքում, ինչպես գլանիկները՝ երգեհոնիկի մեջ: Օրերը գլանիկներից կտրուկ տարբերվում են նրանով, որ նրանց գամերը, այսինքն հոգեֆիզիկայի վրա ազդելու խթանները, անընդհատ տեղաշարժվում են: Բայց եթե խթանները ամրացնենք բնիկներում, օրերը վերածենք միօրինակ համաչափությունների, պտտենք ընկալումները, ինչպես սլաքը թվատախտակի վրա, ապա ժամանակի, ավելի ճիշտ՝ նրա

բովանդակության, շրջանաձեւ ընթացքը,- պտույտների այս կամ այն քանակից հետո,- պետք է փոխանցվի նաեւ հոգեբանությանը՝ այն նույնպես դարձնելով շրջանաձեւ»: Արհեստական օր պատրաստող մեկուսարանը խորանարդաձեւ սենյակ էր լինելու՝ բոլոր կողմերից խցանի կրկնակի շերտով մեկուսացված աղմուկներից եւ խուլ ու հերմետիկ պաշտպանված արտաքին որեւէ ազդեցությունից: Առաստաղը (բավական բարձր, որպեզի պաշտպանված լինի փորձարկվողի ցանկացած ոտնձգությունից) լուսային ու ձայնային ազդանշանիչներով պետք է ազդեր մեկուսարանում գտնվող մարդու վրա: Խցանից այն կողմ ժամացույցի մեխանիզմը խիստ հաջորդականությամբ հերթափոխում է հնչյուններն ու ճառագայթները, որոնց շրջափուլը, ավարտվելով 24-րդ թվի վերջին, նորից ու նորից վերսկսվում է նույն հաջորդականությամբ եւ նույն դադարներով: Ուշագրավ է ջանադրությունը, որով նախագիծը կազմողը մշակել էր ոչ միայն խցանե պատյանի մեքենայացումը, այլեւ, որքան հնարավոր է, փորձարկվողի մարմնի շարժումները՝ բռնված ճկուն ծանրությունների համակարգով, որոնք պետք է կառավարեին մարդուն ու նրա գործողությունները:

Ստընսկին իրավացի է, ընդունելով, որ այդ ամենը ավելի շատ նման է խոշտանգման, քան գիտափորձի, եւ ավելի շուտ զնդան, քան փորձարան է հիշեցնում: Թեեւ հենց ինքն էլ անմիջապես վերապահություն է անում, որ դաժանացած երիտասարդ մտքից բացի, այդ նախագծում արտահայտվել է նաեւ «ժամանակը պարեցնելու» վաղեմի երազանքը: Վերջապես, յոթ ուրբաթով շաբաթ արարելու տարօրինակ մտահղացումը, որոնք բոլորը... Չարչարանաց են (Ստընսկու բառերն են), գուցե եւ անընդհատ շուրջը պտտվող գաղափարի մեջ քշված, իր բոլոր օրերը օրերի հիմնախնդրին տված մարդու քնարական պոռթկումն է:

Այսպես, թե այնպես, ազատվելով ազդանշանիչներով առաստաղից, կերպարը լիցքաթափելով գծագրերի ու թվերի մեջ՝ Ծտերերը մտածողության լուսային թափանցումներից հասնում է մի անխռովության, որը կարելի է համեմատել անդորր ու վճիտ օրվա հետ, երբ արեւով ընդարձակված հորիզոնը բացում է կղզիների ու լեռների սովորաբար անտեսանելի հեռավոր ուրվագծերը: Նրան մտահղացման նյութականացման արահետ հանած առաջին միտքը *ժամանակի մոդելավորման* գաղափարն էր:

Ելնելով այն կանխադրույթից, որ չափը միշտ համապատասխան է չափվողին (մի շարք համեմատություններ հաստատում էին այդ ենթադրությունը), Ծտերերը հիպոթեզի տեսքով ընդունում էր, որ եւ՛ ժամացույցը (ավելի ճիշտ, դրա կառուցվածքի սխեման), եւ՛ նրանով չափվող ժամանակը,

պետք է ինչ-որ բանում համապատասխան լինեն, ինչպես արշինն ու տախտակը, շերեփն ու ծովը եւ այլն: Ժամանակը հաշվող բոլոր մեխանիզմները,- ավազահատիկների, թե ատամնանիվների միջոցով,- կառուցված են վերադարձի, երեւակայական կամ նյութական առանցքի շուրջը պտտվելու սկզբունքով: Ի՞նչ է դա՝ դիպվա՞ծ, թե՞ նպատակահարմարություն: Եթե թոփը չափող արշինը, ձեռքի մեջ պտտվելով՝ իր պողպատե ծայրերին է փաթաթում կտորը, ապա նրա շարժումները խստորեն սահմանված են չափվող նյութի հատկություններով եւ ինչ-որ առումով պատահական չեն: Ուրեմն ինչո՞ւ չընդունել, որ Ժամանակը չափող արշինների (այլ կերպ՝ ժամացույցի) պտտական ընթացքը սահմանվում է չափվող նյութի, այսինքն՝ ժամանակի, հատկություններով: Եվ գրչածայրը երեք-չորս անգամից ոչ ավելի թաթախելով թանաքամանի մեջ՝ Ծտերերը ժամանակի մասին հնագույն պյութագորյան պատկերացումը վերակերպում էր ահռելի բյուրեղյա գնդի, որն իր անդադար պտույտով ընդգրկում է աշխարհի բոլոր իրերը: Իհարկե, այդ տարրական պատկերը ժամանակի բազմառանցքության՝ Ծտերերի պատկերացմանը նման էր, ոչ ավելի, քան սաղմնային ծլանյութը՝ ավարտուն օրգանիզմին, կամ հեռավոր նախնիների հայտնագործած տասնյակ երկրաչափական թեորեմները՝ նուրբ մաթեմատիկական խթանիչների այն բարդ ցանցին, որ առաջ էր մղում ժառանգորդի միտքը: Ներքնաձիգների եւ էջերի հարաբերությունները կարգավորող հանճարին դժվար թե հաջողվեր միանգամից գլուխ հանել բանաձեւերի խաչասերումից, չնայած՝ Ստընսկու վիճակն էլ, որը փորձում է հետ չմնալ իր ժամանակակցի մտքի ընթացքից, չափազանց ծանր էր: Ցանալով հետ չընկնել՝ նա ժամանակ առ ժամանակ օգտվում է գրադարանային սանդուղքի ծառայություններից: Այսպես, ժամանակի բազմառանցքության հիպոթեզի կապակցությամբ նա հիշում է Լեյբնիցին. մոնադոլոգիայի հիմնադիրը, պատասխանելով հարցին, թե ողջ տարածությունը լցնող մատերիայի անընդհատության, բոլոր տեղերի զբաղվածության պարագայում ինչպե՞ս է հնարավոր տեղերի փոփոխությունը, այսինքն՝ շարժումը, պնդում էր. միակ շարժումը, որ հնարավոր է այդպիսի անընդհատ աշխարհի ներսում, գնդերի պտույտն է իրենց առանցքների շուրջը: Եթե պատկերացնենք, շարունակում է Ստընսկին, որ այս աշխարհի անընդհատության պատճառը ոչ թե մատերիան է, այլ շարժումը (ժամանակն էլ հենց մաքուր շարժումն է), ապա այն անհնար է պատկերացնել այլ կերպ, քան իրենից իրեն ձգտող շրջապտույտի համակարգ: Ինչպես ժամացույցի մեխանիզմում իրար պտտող շրջաններն են,- որոշակի տարածական *հետեւողականությամբ,*- ատամից ատամին փո-

խանցում զսպանակի հրումը, այդպես էլ ժամանակի մեխանիզմում նրան ներհատուկ հետեւողականությունը «պտտական ակնթարթը» նետում է առանցքից առանցք՝ դեպի երկարող *հետոն.* բայց առանցքները, պտտվելով, մնում են այնտեղ, որտեղ կային,- կարճ ասած, ժամանակը տրված է *միանգամից* եւ ամբողջովին, բայց մենք այն կտցում ենք, այսպես ասած, հատիկ-հատիկ, վայրկյանների ցնցումներով:

Ստընսկու շարադրանքին կարելի է կասկածել, որ տպավորիչ լինելու փորձ է արվել: Իսկ Ծտերերը փաստարկում է առանց տպավորության կամ բնազանցության տրվելու, ինչի օրինակ կարող է ծառայել թեկուզ այս կտորը.

Միագիծ ճանապարհին հնարավոր չէ *շրջանցել* առանց մի կողմ չքաշվելու: Քանի դեռ ժամանակը մեզ գծային էր թվում, կետերը փակում էին կետերի ճանապարհը: *Ժամանակի տրամագծի* հայտնագործումը ինձ հնարավորություն է տալիս բացել *երկրորդ գիծը:* Կետերը ստիպված կլինեն մի կողմ քաշվել, երբ հասնեմ նրանց ետեւից:

Ժամերի թվատախտակ: Դրա ներսում որպեների թվատախտակն է, որով սլաքն անցնում է 60 քայլ-վայրկյանում. բայց ժամային թվատախտակին տեղ կա նաեւ վայրկյանների համար (դա դժվար չէ պատրաստել), նրա սլաքը պետք է վազի 60 բաժանում/վայրկյանում. Բայց եթե ժամագործը ցանկանա սլաքը բաց թողնել շրջանագծով, որը պահանջում է 60 շարժում 1/60 վայրկյանում, մենք 60 շարժումը կընկալենք որպես *մեկ,* քանի որ այդ հաջորդական շարժումների ընկալման համար մեզ տրված ժամանակը տեւողությամբ չի գերազանցում մեր *ներկան,* որը ոչ մի հաջորդականություն չի ընդունում: Եթե սլաքի շարժման արագությունը մեր սարքին հարմարեցնենք այնպես, որ սլաքը բաժանումներով շրջանը, որն անբաժանելի ենք ընկալում, վազի մեկ վայրկյանում, եթե ուշադրությունը կենտրոնացնենք մեկ, ասենք՝ կարմիր գույնով նշված բաժանման վրա, ապա գիտակցությունը սլաքի մեկնելու եւ նույն կետին վերադառնալու ժամանակները կմիածուլի մեկ *ներկայի* մեջ. Սլաքը կհասցնի, այսպես ասած, բացակայել, վազել շրջանը՝ կանգ առնելով տասնյակ բաժանումների վրա, ու վերադառնալ՝ լրիվ «աննկատ»: Անկասկած, յուրաքանչյուր վայրկյանի մեջ ինչ-որ բարդություն կա, ինչ-որ, ինձ թույլ կտամ ասել, ժամանակավրեպ ժամանակ. կարելի է կտրել-անցնել ժամանակը, ինչպես փողոցն են կտրում, կարելի է արագ անցնել վայրկյանների հոսքի միջով, ինչպես սլացող անիվների՝ ոչ մեկի տակ չընկնելով»:

Մի քանի տող ներքեւ. «Անիվը պետք է պտտվի առանցքից առանցք:

Դա մի քիչ բարդ կլինի երկու շառավիղների մասին հանրահայտ արիստոտելյան գլուխկոտրուկից: Այո, իմ անվահեցը առանցքի շուրջը չէ, այլ՝ առանցքից՝ առանցքին: Սրա մեջ է տրանստեմպորային ճամփորդությունների յուրահատկությունը»:

Եվ ավելի ներքեւում. «Մեր ուղեղը *տեմպերացնում է ժամանակը:* Եթե ապատեմպերացնենք անենք tempus-ը *[ժամանակ - լատ.],* ապա...»: Եվ հաջորդում է բանաձեւը, որը սկսվում է ինտեգրալի կորով, բայց նրա բոլոր նշանների վրա խաչ է քաշված ու վրայից՝ մատիտով. «Այստեղ ժամանակի միջով անցնելը վտանգավոր է»:

Բայց թերթիկի հակառակ երեսին ճեղքման նոր փորձ է. «Ժամանակի էներգիան իրեն ի հայտ է բերում որպես պոտենցիալների տարբերություն՝ T - T = t, մինուսով, ինչպես կամրջակով, կարելի է մեծ T-ից անցնել փոքրին եւ՝ հակառակը: Եթե ընդունենք...»: Ու նորից բանաձեւ, որի նշանների մեջ շատ ավելի հեշտ է մոլորվել, քան անտառում: Վիպասանության մեջ կարելի է՝ միայն բացատից բացատ:

Շտերերի սակավաթիվ պահպանված տետրերից արված այս մեջբերումներն անհնար է թվագրել: Հեղինակը, որը ձգտում էր տապալել ամսաթվերի իշխանությունը, բնականաբար չի նշել ամիսներն ու տարիները: Կարելի է միայն որոշակի մոտավորությամբ ենթադրել, որ մտքերի այս բոլոր պատառիկները, որ պատահմամբ թողնվել են եղել թղթին, վերաբերում են 1912-1913 թվականներին, երբ համալսարանից հեռացված Շտերերը դեռ շարունակում էր ապրել ուսանողական բնակարանի փոքրիկ սենյակում, պատուհանները Կոզիխային հառած հսկա տուփի հենց տանիքի տակ: Տնից ստացվող գումարները բավական սուղ էին, Շտերերը ստիպված էր լրացուցիչ աշխատանք փնտրել: Եվ հենց այդ ժամանակին են վերաբերում դասերը, որ ամենամսյա 20 ռուբլու դիմաց խլում էին ամենօրյա 10000 քայլ: Շտերերը, ձեռքերը գրպաններում, համբերատար կտրում էր Կոզիխա - Զամոսկվորեչյե - Կոզիխա երթուղին եւ երբ կես տարվա պարապմունքներից հետո, փողոցով անցնելիս, պատահմամբ հանդիպեց սիրալիր գլխով անող մի տիկնոջ ու գիմնազիստի, այդպես էլ չկարողացավ հիշել ովքեր են, չնայած իր աշակերտն ու նրա մայրն էին:

Ընդսմին, զամոսկվորեցյան տիկինը առաջին անգամ չէր փորձում թափանցել մռայլ երիտասարդի կախված կոպերի տակ: Ամեն օր, կրկնուսույցի գալուց մի ժամ առաջ, նստում էր հայելու դիմաց եւ իր արտաքինը պատրաստում շատ ավելի մեծ ջանասիրությամբ, քան որդին՝ դասերը: Հայելուց անդրադառնում էին ունելին, շրթունքներին քսվող կարմիր մատիտը, բայց

կրկնուսույցի մեջ ոչինչ չէր անդրադառնում: Սակայն փոքր նպատակի առավելությունը մեծի հանդեպ նրա հասանելիությունն է: Մի անգամ Շտերները, առաջին 5000 քայլն անելով, պարզեց, որ դաս չի լինելու, քանի որ «երեխան խնդրել է, կներեք, այսօր բաց թողնել իրեն, որ...»: Մինչեւ վերջ չլսելով՝ նա շրջվեց դեպի դուռը, բայց հպում զգաց արմունկին. նրան խնդրում էին հանգստանալ, հապալասով թեյ խմել. «Ի՞նչն է ձեզ շտապեցնում»: Շտերները համաձայնեց, ավելի ճիշտ՝ համաձայնեց հոգնածությունը... Պատին մի դատարկ վանդակ էր կախված: Նայելով շնչառությունից տատանվող գիշերազգեստի քնեած-կապույտ վարդերին՝ հյուրը հարցրեց. ինչո՞ւ է դատարկ: Հետեւեց մի վշտալի պատմություն կերկոխ եղած դեղձանիկի մասին, որն աննկատ փոխարկվեց վաղաժամ այրիության, միայնակ, առանց տղամարդու ձեռքի տղա երեխայի չարաճճիությունները հաղթահարելու թեմային: Հետո մի քանի անհասցե հառաչանք, որոնց հյուրը պատասխանում էր գդալով թեյի տաքությանը դիմադրող շաքարը խթելով:

- Քիչ է մնում տակը ծակեք: Եվ ի՞նչ եք աչքերդ բաժակում թաքցնում: Հապալասով է պետք խմել, ոչ թե աչքերով: Ինչի՞ մասին եք այդպես մտածում. տարբեր բաների՞:

Զրուցակիցը պատասխանում էր. ո՛չ, ո՛չ տարբեր:

- Ուրեմն մի՛ բանի մասին: Թե՞ մեկի:

Ժպիտի միջով՝ երկու արծաթե ատամնալիցք: Կապույտ վարդերը լեղակ էին բուրում: Շտերները, բիբերը բաժակից կտրելով, ասաց, որ շաշկի խաղալիս հնարավոր է մի վիճակ, երբ երկու խաղացողներն էլ հաղթում են. երբ մեկը իսկապես է խաղում, մյուսը՝ սուտ տարվում: Ընդսմին, տեսաբանը չնկատեց, որ խաղաքարերից մեկն արդեն շարժել են:

Առաջին աֆորիզմից քառորդ ժամ անց կողմնակի դիտորդը կարող էր ծանոթանալ *ժամանակի կրճատման* տեսությանը, որը շարադրվում էր ուղիղ զամոսկվորեցյան տիկնոջ ճպճպացող աչքերին:

Սիրո վերաբերմամբ կիրառելի այդ տեսությունը կառուցվում էր այսպես. եւ՛ իր երկար գալարափաթեթը պտտող հիշողությունը, եւ՛ կոճից արձակվող կինոժպավենը կարող են ենթարկվել *մոնտաժի:* Ե՛վ ժապավենից, եւ՛ ժամանակից կարելի է հատվածներ կտրել, հանել տեւողությունները: Բայց եթե իր առաջինի հետ կնոջ առաջին ժամադրության եւ երկրորդի, երրորդի հետ առաջին ժամադրության արանքում կրճատումներ անենք, այսինքն թողնենք առավել մաքուրն ու անկեղծը, հիշողության մեջ խորապես դաջվածը, ապա կինոժապավենը, որին կհանձնենք առաջին ժամադրությունների սեղմ շարքը, կնոջը մեզ ցույց կտա պտտախա-

ղի գնդիկի արագությամբ, որ համարից համար է ցատկում, գրկախառնությունից անցնում գրկախառնություն ու ծերանում մեր աչքի առաջ: Դա, իհարկե, իրավաբանին կհիշեցներ քրեական օրենսգրքի այն հոդվածը, որը խոսում է զանգվածային բռնության մասին: Փորձեք կրճատել ավելորդը, թողեք միայն ամենակարեւորը, եւ կտեսնեք, որ այն ձեզ չի...

Եվ այդ վերջին աֆորիզմից մեկ ժամ անց Շտերերը կարող էր համոզվել, որ այն դաժանորեն իրավացի էր: Իսկ կողմնակի դիտորդը... ասենք, նման իրավիճակում այդպիսիք ավելորդ են:

Հաջորդ օրը կրկնուսույցը առաջին անգամ ուշադիր նայեց իր աշակերտին. անհոնք ճակատը Եվտուշեւսկու վրա կախած՝ գիմնազիստիկը քաշքշում էր գագաթին բիզ-բիզ կանգնած մազերը, ասես փորձելով գլխից դուրս քաշել որոշելի թիվը: Տղայի կարմրած ականջի միջով թափանցում էր լամպի լույսը:

«Իխյայի նման»,- մտածեց Շտերերը:

Եվ՝ «ես»-ի մեջ՝ ինչպես չջեռուցվող սենյակում:

IV

Դա պատահեց 1914 թվականի փետրվարին: Շտերերը, իր սովորական երթուղին անցնելով, չնկատեց զամոսկվորեցյան նրբանցքներից մեկի մայթին լայնքով իջնող առմուտքը, ու ներբանները շարունակեցին ճռճռացնել ձյունը: Նա նման էր ինչ-ր մեկի հետքերով գնացող մարդու: Երկու-երեք կանացի մորթեգլխարկ գլուխ շրջվեցին նրա կողմը: Սակայն հետապնդողը պետք է հասներ իր գլխի, ավելի ճիշտ՝ իր մտքերից մեկի ետեւից, որը ձյան վրայով սահող իրիկնային թեթեւ ստվեր էր թվում: Նրբանցքներն ամայանում էին. Ոտնաձայները, դուրս գալով խճճված խաչմերուկներից, կապույտ օդը ճռճռացնելով՝ հետեւում էին սիլլոգիզմին: Ուղեկալի սառած սյուները մնացին ետեւում: Ձյունը հասնում էր կոճերին, խառնում գտնված ռիթմը, մեծ եւ փոքր կանխադրույթները ձնակույտի դադարը որսալով՝ բացվեցին, եւ այդ ժամանակ, նրանց ճանապարհը կտրելով, պողպատե զուգահեռներով, վազող անվաշրջանների ետեւից դղրդաց ծխի գալարը: Շտերերը ծանր շնչելով կանգ առավ. դեմքը վառվում էր կատաղի ուրախությամբ. Վերջին բանաձեւի վերջին նշանը, օ՛, վերջապես, առնված էր ճակատոսկրի տակ:

Ծնկահար ձյան մեջ կանգնած՝ նա քաշեց ձյանը սառած-կպած առաջին իսկ ցիցն ու բաց դաշտում գրի առավ իր բանաձեւը: Հաջորդ օրը սկսվեց ձնհալը, եւ արեւի շողերը ջնջեցին Շտերերի մեքենայի գաղտնիքը

բացահայտող փաստաթուղթը: Հետագայում գյուտարարն աշխատանքի մեջ ո՛չ մարդկանց էր վստահում, ո՛չ թղթին:

Ասենք, գրառումներն արդեն նրան պետք էլ չէին. եկել էր ծուղակն ընկած մեքենան կառուցելու ժամանակը: Դրա համար փող էր պետք: Շտերերը հաշվեց. թիվը տատանվում էր հնգանիշների սահմաններում: Հայր ու որդի նամակներ փոխանակեցին, որոնցով որդին խնդրում էր, հայրը՝ մերժում: Կառուցողը նախահաշիվը սեղմեց նվազագույնի. քառանիշ թիվը գորշին էր տալիս հեռագրի թերթիկի ծալվածքին: Հայրը ակնոցը քաշեց քթից ու նետեց հատակին: Պատասխան նամակի առաջին էջով նա սպառնում էր զրկել ժառանգությունից, երրորդով՝ հորդորում սպասել իր մահվանը եւ այդ ժամանակ ամեն ինչ վերցնել, իսկ հետգրությամբ խոստացավ ուղարկել կեսը:

Փոխանցումը ստանալով՝ Շտերեր-կրտսերը չսպասեց անհրաժեշտ գումարի երկրորդ բաղադրիչին ու որոշեց սկսել մեքենայի կառուցումը: Շտերերին թվում էր, թե սենյակը շրջապատած հարյուրավոր դռներ սպառնում են իր գաղտնիքին: Պետք էր փախչել մարդկային հետաքրքրասիրությունից, ենթադրություններից ու ծիկրակումներից: Շտերերը ծայրամասային Խապիլովկան հատող նրբանցքներից մեկում բավական մեկուսացված ու խաղաղ մի բնակարան գտավ: Փայտաշեն, երեք փոքրիկ պատուհանով կիսավերնահարկ էր, ցածր առաստաղով երկու սենյակ, բակ տանող աստիճաններ: Դրսային սենյակում՝ մահճակալ ու գրքերի կույտեր (այստեղ Շտերերն ընդունում էր իր խիստ հազվադեպ այցելուներին): Ներսի սենյակը, ուր ոչ մեկին չէր թույլատրվում մտնել, մեքենայի կացարանն էր դառնալու:

Խապիլովկայի նոր բնակիչը հազվադեպ էր երեւում վերնահարկից իջնող աստիճաններին: Մի թեւի տակ միշտ ինչ-որ շշաձեւ ու գլանաձեւ փաթեթներ էին, մյուսը սահում էր կտրուկ բազրիքով: Վերնահարկի պատուհաններին՝ երբեք չբացվող վարագույրներ, եւ նույնիսկ գարունը՝ բոլոր ապակիները բացելով, փակ թողեց վերնահարկի այդ երեք շրջանակները:

Շտերերի կացարանից ոչ հեռու, սառույցի տակ կծկված վտիտ Յաուզան պատռեց ափերն ու մեկ-երկու շաբաթ փորձում էր հիշել՝ ինչպիսին է եղել ինքը այն հեռավոր դարերում, երբ դեմքով,- դարերի ետեւից,- ոչ թե նավթի գույնզգույն բծեր ու թրիք էր լողում, այլ՝ նավակներ ու առագաստներ: Արեգակը նայեց ջրափոսերին, ինչպես հարբածն է խմելուց առաջ նայում իր առջեւ դրված գինու գավաթների մեջ, ու դատարկեց բոլորը:

Խապիլովկայի առմուտքներին արեւածաղիկ չրթող բերանները մեկ-

երկու քննարկեցին տարօրինակ կենվորին: Սկզբում որոշվեց, որ երեք պատուհաններից այն կողմ մենակ ու անդադար խմում է՝ դատարկելով իր շշերն ու գլանները: Բայց մի անգամ սանդուղքով բարձրացող կնոջ կերպարանք նկատվեց: Վերնահարկում ամբողջ գիշեր լույս էր վառվում: Իջեցված վարագույրներն այլաբար մեկնաբանելով՝ բերանները գոհացած քմծիծաղեցին:

Մայիսի վերջին փողը վերջանալու վրա էր: Շտերերը մտովի շառավիղ գծեց. ոչմիտեղից, ոչ մի կետից: Պատահմամբ աչքին ընկան մի անկյունում մոռացված երկու-երեք փակ ծրար: Շտերերը բացեց. կարմիր թափանցիկ ականջ, օճառ բուրող տաք կապույտ վարդեր, դատարկ վանդակ ու նորից՝ թվերի վրա կռացած ականջի բլթակ: Մեքենայի կառուցումը պետք է ավարտել: Ինչ էլ որ լինի: Զզվանքով կկոցվելով՝ Շտերերը չորացած թանաքի խյուսից մի քանի տող քչփորեց, ինչի հետեւանքով էլ հարեւանները տեսան աստիճաններով բարձրացող կանացի կերպարանքը: Հանդիպումը շաշկու խաղի պես մի բան էր, որտեղ երկու խաղացողներն էլ պարտվեցին. Պատճառն այն էր, որ մինչեւ վերջին քայլը իսկապես էին խաղում, բայց հետո սկսեցին սուտ տանուլ տալ, որն էլ, ի վերջո, դեմ առավ վաճառականական կոշտ դիմադրության: Կարճ ասած. տեղեկանալով, որ ինչ-որ մեքենայի համար այդքան փող է պահանջվում, զամոսկվորեցյան տիկինը մեծ կասկածով վերաբերվեց Շտերերի փաստարկներին՝ հայտարարելով, որ հրաշալի գիտի այդ մեքենայի կառուցվածքը, որի միջոցով երիտասարդ մարդիկ վատնում են իրենց եւ ուրիշների փողերը: Երբ գյուտարարը, ներսի սենյակի դուռը բացելով՝ առաջարկեց համոզվել, Զամոսկվորեչյեն, պայուսակը կրծքին սեղմած, հետաքրքրվեց՝ ինչո՞ւ է այդպես վառվում այդ գաղափարով: Շտերերը համբերատար բացատրեց. մեքենան պետք է, որպեսզի ինքը՝ Շտերերը, իրեն տեղափոխի այլ դարեր ու հազարամյակներ:

- Իսկ ե՞ս,- հարցրեց Զամոսկվորեչյեն:

Գյուտարարը շփոթվեց.

- Մեքանան մեկտեղանի է: Դուք կսպասեք, մինչեւ վերադառնամ...

- Հազարամյակերի՞ց:

- Այո՛:

Պայուսակը չբացեց իր նեղլիկ, երկաթյա ճարմանդներով սեղմված բերանը. Դրան համաձայն չէր: Մի կողմը անհամբույր մնաց, մյուս կողմը՝ անփող: Չնայած, մի շաբաթ էլ չանցած, Զամոսկվորեցկի նրբանցքներում սկսեցին բուրել ակացիաների շեղջերը, երեկոները շոգ էին ու շիկնած: Պայուսակը, ձվադրման ժամանակ ափ նետված ձկան պես, խելա-

հեղ բացուխուփ էր անում բերանը՝ տալով հարյուրանոցը հարյուրանոցի ետեւից: Շտերերը կարող էր շարունակել աշխատանքը: Հուլիսի հետ վրա հասած տոթը վերջապես բացեց վերնահարկի վեց ապակյա փեղկերը, եւ ուշ գիշերով պատուհանների տակ պատահական անցորդը կարող էր հրումներով օդը ծակող ձայն լսել, որը կոտորակվող կետագծով կարում էր լռությունը: Ավելի ուշադիր ականջ դնելով՝ ուշ մնացած անցորդը ձայնային խայթոցների հերթափոխման մեջ կկատեր, որ... բայց Խապիլովկայի ուշ մնացած անցորդը միշտ հարբած է ու նախընտրում է թնդացնել լռությունը՝ իր գվվացող ականջները նրա տակ դնելու փոխարեն:

Աշխատանքով տարված՝ Շտերերը իր միակ իրականացող իրից այն կողմ ոչ մի իր չէր տեսնում, ապրում էր իր երեք պատուհանների տակ կուտակվող փաստերին անհաղորդ: «Պատերազմ» բառը, որ սկզբում աննկատելի էր թերթերի մանրատառերում, աստիճանաբար տառատեսակը մեծացնելով՝ դուրս ցցվեց բոլոր թերթերի բոլոր վերնագրերից: Այդ բառը Շտերերի հայացքը 2-3 վայրկյանով գրավեց զուտ այն պատճառով, որ եռավանկ էր մեկ այլ՝ «ժամանակ» բառի պես: Տառանիշերը, սահեցին ակնաթաղանթի վրայով եւ անհետացան, ինչպես հայտնվել էին, ու կառուցողը շարունակեց հյուսել իր նրբագույն թակարդը, որով որսալու էր ժամանակը:

Շտերերը վարժվել էր նրան, որ երեկոյան կողմ փողոցի աղմուկը նվազում է, ինչը թույլ էր տալիս առավելագույնս կենտրոնանալ: Սարքի կարգաբերման առավել բարդ գործընթացները գյուտարարը թողնում էր գիշերային ժամերին: Բայց մի անգամ այսպես պատահեց. վրա հասավ մթնշաղը, ետեւից՝ մութը, իսկ պատուհանների տակ աղմուկը չէր պակասում: Քայլերն անընդհատ կոտորակվում ու ձայները խժդժում էին: Շտերերը սկզբում դժգոհ կնճռոտվում էր, հետո,- չնայած շոգին,- անսովոր աղմկոտ գիշերից մեկուսացավ ապակիներով ու շարունակեց տքնաջան աշխատել:

Պատերից այն կողմ անհեթեթ աղմուկն ու անկարգությունն աստիճանաբար լռեցին: Բայց գիշերը դեռ չէր նահանջել, երբ ապակիները զնգացնելով՝ թխթխկացին իրար ետեւից գլորվող անվակալները: Շտերերը խոժոռվելով կտրվեց գործից ու սպասեց: Բայց անվակալների աղմուկը չէր դադարում: Գետինը ցնցվում էր՝ դողացնելով սեղանին շարված սարքերը, տատանելով թորանոթների ու սրվակների պարունակությունը: Աշխատանքը շարունակելն անհնար էր: Շտերերը մոտեցավ պատուհանին ու հետ քաշեց վարագույրը: Փողոցը լեփ-լեցուն էր երկար, հարթատաշ արկղեր բարձած սայլերով: Մեկի կիսով պոկված կափարիչի տակից երեւում էին խրձված սվիններ կատարները:

Կեսօրին անվակալները լռեցին: Կարելի էր շարունակել աշխատանքը: Բայց մի պղտոր ու կպչուն զգացում ընդարմացնում էր մատներն ու մտքերը: Շտերերը պառկեց մահճակալին. Նախ՝ թվերի ու նշանների աստիճանաբար դանդաղող պտույտ, հետո՝ աչքերը փակող անթափանց վիրակապի պես՝ քունը:

Գիշերային հսկումների երկար շարանում կուտակված հոգնածությունը հաստատ կնգեր անզգայությունը, եթե դռան թակոցը չխանգարեր: Ձայնից արթնացած Շտերերը բարձրացրեց գլուխը. սենյակը լի էր աղջամուղջով, սանդուղքի աստիճաններով դանդաղ իջնում էր ճռռոցը: Շտերերը մոտեցավ դռանը, բացեց ու դուրս նայեց: Ճռռոցը սկսեց վեր բարձրանալ, ու պղտոր աղջամուղջում ինչ-որ մեկի ուրվապատկերը մի սպիտակ թերթիկ պարզեց նրան: Մնում էր վերադառնալ սենյակ, վառել լույսն ու կարդալ. ձախ անկյունում զինվորական պետի դրոշմակնիքն էր, երեք տողանոց տեքստ, որն առաջարկում էր «ներկայանալ», անունը՝ «Շտերեր»:

Դա թիկունքից հարված էր: Հանկարծակիի եկած բիբերը չէին կտրվում քառակուսի թերթիկից. թեւքից դուրս քաշած խաղաթուղթ, խաղախարդախի քայլ, նենգանշած մահ, որի շահումը նրա մեքենան էր: Չնայած...

Շտերերը բացեց ներսի սենյակի դուռը. ապակյա ամրակալի վրա, թափանցիկ պարույրների միկրոմետրիկ պտուտակների մամլակով բռնված՝ ժամանակի դեմ, ինչպես սուրը թշնամու վահանի, հառնում էր թեթեւ ու հզոր կառույցը:

Նստելով սեղանի մոտ՝ Շտերերը մատիտը ձեռքին հաշվեց օրերը: Օրը 19 ժամ աշխատելու դեպքում երկու-երկուսուկես շաբաթում ժամանակի մեքենան պատրաստ կլինի. Ընթացքի ստուգումից, պահեստամասերից, կրկնակի արգելակման համակարգից հարկ կլինի հրաժարվել: Ավելի լավ է ջարդուփշուր լինել՝ ապագային խփվելով, շպրտվելով դարերի անհայտության մեջ, քան դավաճանել մտահղացմանը, թույլ տալ, որ ճզմեն քեզ պոկովի օրացույցի թերթիկով՝ պատահական գնդակի թռիչքով ջնջելով գաղափարը, օրվա ամսաթվով՝ հավերժությունը:

Դա արագության յուրօրինակ խաղ էր, որ մարդն ու ժամանակը խաղում էին անքուն ու ջղածիգ շաբաթվա ընթացքում. ժամանակը քայլ էր անում իրադարձություններով, մարդը՝ իր մեքենայի աճով: Մարդու համար պարզ էր. եթե առաջ անցնի ժամանակը՝ ժամանակի մեքենան տանուլ կտրվի. եթե ինքը՝ ժամանակը տանուլ կտա ինքն իրեն:

Գոտեմարտի երրորդ օրվա վերջին եկավ երկրորդ ծանուցագիրը: Ջո-

ռակոչվողը մտածեց՝ լավ կլիներ փոխել մեքենայի կառուցման վայրը:

Անհնար էր. մեքենան չափազանց փխրուն էր ու անկատար, որպեսզի դիմանար տեղափոխությանը: Ինքը որոշ ժամանակ թաքնվի: Բայց կարող են գալ, ջարդել դուռը, ու մեքենան կհայտնաբերվի: Ո՛չ, սեղմել ատամներն ու շարունակել պայքարը:

Շտերերի տանջահար գիտակցությանը հստակ պատկերվում էր այն պահը, երբ, վերջին ամրակապը դնելով, տեղադրելով մեքենայի վերջին մասը՝ կպտտի լծակն ու,- պոկվելով հետապնդող օրերից, թիկունքում թողնելով պատերազմի հեռացող դղրդոցը, հաղթահարելով տեւողությունները,- կատաղի պտույտ սկսած ժամացույցի սլաքների վրա առաջ ու առաջ՝ դեպի ապագան:

Յոթերորդ օրվա առավոտյան Շտերերը նկատեց, որ մի ռեակտիվ պակասում է: Պետք էր գնել: Հավաքելով վերջին ռուբլիները՝ հագավ վերարկուն ու բացեց մուտքի դուռը. շեմին՝ երկու հոգի՝ զինված ու զինվորական գորշ մահուդի մեջ: Ժանապարհը փակած երկտողում՝ բերմա՛ն ենթարկել: Շտերերը պիտանի ճանաչվեց ու ներառվեց պատերազմի մեջ: Ուսերը համարակալեցին, ճակատին գլխարկանշան դրին ու սափրեցին գլուխը: «Անձնական գործերը կարգի բերելուն» թողնված մի քանի ժամը Շտերերը տվեց համարյա պատրաստի մեքենան քանդելուն: Տենդագին շտապողականության մեջ որոշ առավել նուրբ մասեր ոչնչացվեցին, մյուսները թափվեցին խոր արկղի հատակին, ու մասնատված մեքենայի վրա՝ կափարիչի մեջ՝ սուր մեխեր: Այդպես ժամանակին Ռոնսեվալի կիրճերում շրջապատված Ռոլանդն էր քարերին խփելով ջարդում իր սուրը:

V

Շարքային Շտերերը, բոլոր շարքայինների պես, նախատեսված թվով շաբաթներ երթաքայլում էր «մեկ-երկուսի» տակ, «կանգ առ» հրամանով ոտքը ոտքին խփում, «հետ դարձ» հրամանով, ձախ կրունկը պտտելով, մարմինը դարձնում 180^0, հրացանը գրոհի բռնած՝ նետվում էր ծղոտե խրտվիլակի վրա, իսկ կեսօրին ատամներով պոկոտում փայտե ձողիկին քաշած «բաժինը»: Կարելի է ավելացնել, որ սովորաբար վերջինը մոտենալով ճաշը բաժանողի արկղիկին՝ շարքային Շտերերը ստանում էր դասակի բոլոր քառասուն ափերով շոշափված ու բոլոր ափերից մերժված ջիլն ու ոսկորը, որի համը քիչ էր տարբերվում նրանց խոցած փայտիկի համից:

Համարակալված մահուդը պահեստային գումարտակից մեքենայա-

բար փոխանցվում էր երթային վաշտեր: Եվ մի աշնանային ջինջ առավոտ Շտերերն արդեն,- ուսերն ուսերի արանքում,- քայլում էր բազմաշար սվինային ցողունների ներքո, որ ծփում էին, ինչպես արտը քամուց: Դեպի կայարան շարժվող շարասյան ետեւից գլխարկներ ու գլխաշորեր էին թափահարում, ու շարքային Շտերերը մտածեց, որ սվինի վրա բարձրացրած սպիտակ թաշկինակն իր վերջին հնարավորությունն է:

Զինվորության առաջին օրերին Շտերերը ճնշված ու մի տեսակ ճզմված էր կատարվածից: Բայց շուտով հաջողվեց վերադարձնել հանգստությունն ու պայքարի կամքը. թող որ ժամանակը կես գլուխ առաջ էր անցել, թող որ մեքենան ջարդված ու մեխված էր արկղում, բայց իր գաղափարը դեռ իր ձեռքով չի նետել եղբայրական գերեզման, թող որ ժամանակին ներկայացված մարդու հայցը առժամանակ գորշ մահուդի տակ է, թո՛ղ. կսպասի հրադադարի ու նորից կներկայացնի:

Դիրքերը Շտերերին դիմավորեցին խլուրդային անցումների խառնաշփոթով ու հրթիռների կապույտ կորերով: Դիմացը, դաշտային ուղեկալների գծի վրա, չթչթում էին կրակոցները: Բայց ուշադիր լսելու դեպքում կարելի էր լսել ծղրիդի ճթճթոցն ու քամու հպումը խոտերին: Շտերերը, որ զգույշ, բայց վճռական էր գործում, գնդակներին թույլ չէր տալիս կտցել իր գաղափարը, որ բավական ծանրակշիռ պահված էր գանգոսկրերի տակ, այնքան ծանրակշիռ, որ պետք չէր եւս վեց գրամ արճիճ հավելել: Եվ նա օգտվեց առաջին իսկ մարտական գործողությունից, որպեսզի, ինչպես ինքն էր հետո ասում, «իրեն պահպանության հանձնի գերմանացիներին»:

Գյուտարարի կյանքի հաջորդ 2 տարիները պատված են համակենտրոնացման ճամբարի փշալարով: Գերությունը նրան ավելի քիչ էր նեղում, քան բարաքի հարեւաններից ցանկացածին: Նույնիսկ աստղածեւ փշերը՝ փշալարի զուգահեռների երկարությամբ, որոնց արանքով սիրում էր իրեն ու իր գաղափարը զբոսանքի հանել Շտերերը, նրան ավելի չէին գրգռում, քան Երկրի շուրջը փակվող ուղեծրերում փայլող իսկական աստղերը: Ընդհանրապես, տարածությանն ու նրա բովանդակություններին Շտերերը վերաբերվում էր ոչ մասնագետի պես, անտարբեր ու կցկտուր էր՝ ընդարձակը խառնելով նեղվածքի հետ, երբեք չէր կարողանում հիշել՝ բարձր, թե ցածր է իր կացարանի առաստաղը ու միշտ խառնում էր հարկերի հաշիվը: Ասենք, համակենտրոնացման ճամբարում ոչ մի հարկ էլ չկար, միայն մասնաշենքերի ցածր ու երկար տանիքներն էին, ներսում՝ քառաշար թարեքներ: Երկար ամիսների ընթացքում Շտերերն այդպես էլ չսովորեց իրարից տարբերել աջ, ձախ ու դիմացի թարեքները զբաղեց-

նող մարդկանց. Դա նրան նույնքան անկարեւոր էր թվում, որքան այդ թարեքների տախտակներն իրարից տարբերելը. Տեւական վարժանքով կարելի է, բայց՝ ինչի՞ համար: Փոխարենը՝ հարեւանները երկար ժամանակ չէին մոռանալու հոնքամիջի կնճիռները ինչ-որ սեւեռուն մտքի վրա խոնարհած ճակատը, անխնամ պղնձաթել մորուքի մեջ խճճված մատները եւ մարդկանց, ինչպես ապակու միջով կկոցվող աչքերը:

Գերության երկար պարապ ժամերը թույլ էին տալիս անշտապ մտարկել բոլոր նախկին մտքերը. Գլխում մոդելավորվում, քանդվում ու նորից հայտնվում էր երեւակայած կառույցը: Շտերերը միայն հիմա էր տեսնում, թե որքան անկատար է եղել պատերազմի խլած այն անավարտ մեքենան. Նրանով ժամանակի միջով անցնելը նույնքան վտանգավոր էր, որքան փոքրիկ գետանավով օվկիանոսը կտրելը: Հապճեպ, էժանագին նյութերից կառուցված նավը չէր դիմանա վրա վազող վայրկյաններին ու մեքենայի պարույրների բարձրացրած հավերժության ահեղ ափակոծությանը: Շատ խախուտ էր այդ ամենը, առանց տեւողություններին նյութի դիմադրության, տարածության ու ժամանակի շփման հստակ հաշվարկի: Վերջին սկզբունքը Շտերերը բացահայտել էր այդտեղ՝ փշալարե պատի երկայնքով տեւական զբոսանքների ժամանակ, երկար մեդիտացիաների ընթացքում: Գուցե հենց պատերազմն էր, երկիրը ռազմաճակատներով տողելով, ստիպել նրան հայտնագործել ժամանակի ու տարածության հակընդդեմության, ինչ-որ թշնամանքի այդ փաստը: «Ես հետազոտեցի,- հետագայում հայտնում է նա դասական "Raum und Zeit"-ում *[«Տարածություն եւ ժամանակ» - գերմ.],* նրա սոմ-ը եւ տեսա, որ ժամանակը, քանզի տրված է որպես հավելված, մշտապես *ուշանում է,* վայրկյանների ու դյույմերի յուրատեսակ շփման պատճառով չի հասցնում ներդաշնակորեն համապատասխանել, համարժեք լինել իր տարածությանը»: Դա, Շտերերի եզրաբանությամբ, բերում էր «իրադարձություններից իրերի հետ մնալուն, հետեւաբար նաեւ աշխարհակարգի ընդհանուր աններդաշնակության, որն, ի դեպ, արտահայտվում է այսպես կոչված երջանկության անհասանելիությամբ, ինչը հնարավոր է միայն իդեալական եւ իրական ժամանակների համընկնելու դեպքում: Պատերազմներն ու այլ կատակլիզմները, այդ տեսության համաձայն, բացատրվում էին ժամանակի եւ տարածության շփման ուժգնացումով...

Այդ ամբողջ, փոքր-ինչ տարօրինակ եզրաբանությունը թաքցնում է կատարելագործումների այդպես էլ չբացահայտված ինչ-որ համակարգ՝ ուղղված ժամանակի մեջ ճամփորդելու համար նախատեսված սարքի հավասարակշռության կենտրոնը գտնելուն: Շտերերի մեքենայի նոր, պար-

զեցված տարբերակը խոստանում էր ոչ թե կարճ ցատկ, որը պատռում է մի քանի հարյուր օր, այլ տեւական ու համաչափ թռիչք: Գյուտարարի մատները, կրկին բռնված արարելու ծարավով, զիգզագներ ու անկյուններ էին գծում օդում, բայց համակենտրոնացման ճամբարի փշալարե ցանկապատը փակում էր դեպի մատերիան ճանապարհը: Օրերը կուտակվում՝ դառնում էին շաբաթներ, շաբաթներն՝ ամիսներ, բայց օդը՝ անկյուններն ու զիգզագները կուլ տալով, թափուր էր մնում: Ժամանակ առ ժամանակ, ջանալով կարճել պարապությունը, Շտերերը փորձում էր վերանալ ուղեղին քսվող գաղափարագրից: Այդպես պարետության թույլտվությամբ երկուերեք օրում վերակառուցեց ճամբարին լույս տվող փոքրիկ էլեկտրակայանի ռեոստատը, ինչը հոսանքի ծախսը կրճատեց 30%-ով, հետո զբաղվեց ավտոմատ ազդանշանման համակարգով, ինչը լիովին բացառեց փախուստի հնարավորությունը: Գերության ընկերները լռում էին, երբ նա մոտենում էր, պարետը վեր էր քաշում բերանի անկյուններն ու աջ ձեռքի երկու մատը տանում հովարին: Սակայն բիբերով մտքերին շրջված մարդը դուրս էր ամեն կարգի կենսական ձգտումներից: Օտար միտքը ներկայանում էր զուտ արտաքին բազմաբղետ միալարությամբ (Ռուսաստան-Գերմանիա, օտարներ-յուրայիններ), իսկ ցանկացած աշխատանք, որ կապված չէր նրա գաղափարի հետ, պասյանս բացելու պես բան էր թվում, իսկ մի պասյանսի հանդեպ մյուսի առավելության մասին վեճը անիմաստ էր:

Շտերերն ազատ խոսում էր գերմաներեն: Ճամբարի գծից դուրս ունեցած մի քանի ծանոթություններ (ղեկավարությունը, որը բարեհաճ էր նրա հանդեպ, ճիշտ է, ոչ հաճախ՝ թույլ էր տալիս բացակայել) նրան հնարավորություն տվեցին,- պատերազմից հետո,- հիմնավորվել ճամբարի հարեւան փոքրիկ քաղաքում եւ այդտեղ, ավելի խաղաղ ու քաղաքակիրթ իրավիճակում, շարունակել աշխատանքը: Շտերերը, որը ավելորդ տեղափոխություններ չէր սիրում եւ ընդհանրապես չէր սիրում տեղափոխվել տարածության մեջ, հակված էր հենց այդպես էլ շարունակել, բայց երկու տեղեկություն, որ իրար ետեւից ստացվեցին ռազմաճակատի մյուս կողմից, ստիպեցին փոխել որոշումը:

Առաջինը, որը ստացվեց 1917 թվականի մարտին, հայտնում էր Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխության մասին: Երկրորդը, երկու ամիս անց, հոր մահվան մասին էր:

«Հեղափոխությունը», ինչպես եւ «պատերազմը» կոնստրուկտորը պատկերացնում էր դղրդացող անվակալների, արկերի ու հողը դոփող միլիոնավոր ոտքերի տեսքով, ինչից հատակը սկսում է ճռճվել, սարքերը

թռչկոտում են, աշխատանքը խճճված, անհստակ է դառնում, երբեմն՝ նաեւ անհնար: Բյուրեղը պատած անոթը ցնցումներ չի հանդուրժում. նիստերի աճը պահպանելով՝ այն պետք է հեռու լինի հրումներից ու թափահարումներից. Բնական է, որ Շտերերի գլուխը հետ էր քաշվում հեղափոխություններից, զանգվածային ցնցումներից, պատերազմներից:

Բայց հոր մահվան մասին լուրը բերած ծրարն արտակարգ բարդացնում էր հարցը: Կտակարարը Շտերերին հայտնում էր ժառանգության մասին, որը նրան սպասում էր Մոսկվայի բանկերից մեկում: Պաշտոնական ձեւակերպումների համար անհրաժեշտ էր ժառանգորդի անձնական ներկայությունը: Նամակում նշված գումարը խաչ էր քաշում կյանքի գործն իրականություն դարձնելու բոլոր նյութական դժվարությունների վրա: Ժառանգությանը տիրանալով՝ կարելի էր սկսել եւ ավարտել աշխատանքը՝ առանց նախահաշիվը կրճատելու, լավագույն ու ամուր նյութերով կառուցելով վաղուց ուղեղի բոլոր բջիջներով զտած մեքենան՝ վայրկյանների վրայով թեթեւ սահող, սրընթաց, ժամանակի մեծ պաշարով օժտված ժամանակահատը:

Այո՛, փողերն իրենն են, համարյա գրպանում, մնում է ձեռքը պարզել... Սովորական զբոսաշրջանով պտտվող խռովված գիտնականը պարզեց մատները, ու մատները դիպան լարի պողպատե փշերին. անմիջապես վերեւից բոռի բվվոցով հնչեց զանգը, թնդացող մթնշաղի միջով՝ ճառագայթների անսպասելի շեղբեր ու վրան վազող գինվորների կապույտ բծեր,- Շտերերը միանգամից չհասկացավ, որ գործի է դրել իր իսկ հորինած ազդանշանումը:

Միջադեպը, որն ավարտվեց ընդամենը պարետատանը անցկացված հարցումով, մեղավորին բերեց իրավիճակի ավելի արագ ու հստակ գիտակցման: Ծուրջը փակված փշալարի գիծ, հետո՝ խրամատների կոտրտված գիծ, ապա՝ հեռացող գծերի քառսային խաչաձեւումներ ու գալարքներ՝ հեղափոխություն: Այդ բոլոր գծերն իրար ետեւից պետք է կտրել, հակառակ դեպքում պարզած ափը առաջին իսկ պատվարին հանդիպելով՝ դատարկ կմնա, իսկ գյուտը՝ չիրականացված:

Մեկօրյա մտորումներից հետո Շտերերը գրեց կտակարարին՝ խնդրելով ձեռք առնել բոլոր միջոցները ժառանգությունն իր անունով ամրագրելու, այն դեպքի համար, եթե գերությունը երկարածգի բացակայությունը: Կտակարարի նոր նամակը հայտնում էր գործը մոսկովյան հավատարմատարներից մեկին փոխանցելու մասին: Շտերերը կապ հաստատեց նաեւ հավատարմատարի հետ եւ շուտով դրոշմակնքված անկյունով

մի թերթիկ ստացավ. կտակը դատարանով հաստատված է, վաղեմության ժամկետները՝ սառեցված:

Թվում էր՝ ճանապարհը փակող գծերի խառնաշփոթը բացվել ու վերածվել է զուգահեռների՝ հստակ ու հասկանալի, ինչ-որ տեղ նման դրոշմակնքված թերթիկի տողերին:

Բայց ռազմաճակատից այն կողմ կատարվող իրադարձությունների մասին լուրերը Շտերերին ստիպեցին հրաժարվել պասիվ սպասման համակարգից. հայտնի չէր՝ ուր կտանեն մոտակա շաբաթների իրողությունները, իսկ անհայտի դեմ կարելի է պայքարել միայն նրանից առաջ ընկնելով. եթե առաջ խելամիտ էր թշնամիների պահպանության հանձնվելը, ապա հիմա պետք է հետ ստանար իրեն, ու երաշխավոր կարող էր լինել, համենայնդեպս այդպես էր մտածում Շտերերը, տիրոջը սպասող ժառանգության մասին նամակը:

Կտակարարին, ճամբարի պարետին, Մոսկվայի հավատարմատարին, գերիների փոխանակման Բեռլինի տնօրինությանը, Կարմիր խաչին, բժշկական հանձնաժողովին ուղղված բազում պաշտոնական ու ոչ պաշտոնական գրություններով, խնդրագրերով, նամակներով գերին խնդրում, պահանջում ու նորից խնդրում էր փոխանակել իրեն, օգնել վերադարձին, ճնշում գործադրել, ընդհանրապես վերացնել իրեն՝ Շտերերին, իրավունքով պատկանող կապիտալից բաժանող տարածությունը: Նրա նկրտումների կեսը խրվում-մնում էր գրաքննության մեջ, մյուս մասը դեգերում էր գործավարություններով: Եվ երկու ամիս անցավ, եւ երեք: Շտերերը շարունակում էր ուժասպառ անել իր գրիչը՝ խնդրագրից խնդրագիր: Հիմա արդեն հիշեցնում էր, խնդրում էր կցել նախկինում շարադրածին, լրացուցիչ հայտնում եւ այլն, եւ այլն: Սկզբում՝ ոչինչ, բացի երկու-երեք խուսագրությունից ու իրազեկումից առ այն, որ «ձեր այսինչ ամսաթվով դիմումը... ստացվել է»: Հետո,- արդեն աշնան կողմ էր,- Շտերերին մի առավոտ կանչեցին ճամբարի գրասենյակ: Մի անծանոթ, նոսր բեղերով, վրան փոնթ տված զգեստով մարդ թերթեց հաստ թղթապանակը, մի քանի անանշան հարց տվեց ու, ժպիտով բեղերը շարժելով, ասաց.

- Ես դեռ չեմ հանդիպել մի երիտասարդի mein Kerl *[Այստեղ. իմ երիտասարդ բարեկամ - գերմ.],* որն իր հարսնացուին սիրահարված լիներ այնպես, ինչպե դուք՝ ձեր ժառանգությանը:

Ինչին ռազմագերին, աչքերը գետին գցած, պատասխանեց.

- Այո՛, բայց եթե նա ուզում է դավաճանել ինձ...

Բեղերը ծիծաղից ցնցվեցին. վիտցը *[կատակ, կալամբուր - գերմ.]* վա-

տը չէր: Պաշտոնյան ինչ-որ բան ընդգծեց թղթապանակում: Եվ մեկ ամիս անց «ռազմագերի շարքային Շտերեր Մաքսիմիլիանն» ընդգրկվեց փոխանակման կարգով Ռուսաստան ուղարկվող խմբակազմում:

Տարրական թվաբանական խնդիր կա, որը սկսվում է այսպես. «Քանի՞ պտույտ կանի անիվը, եթե տարածությունը...». թվում էր՝ սռնիները մտախոհ ճռռացնող, թափարգելները ճակատ ճակատի ճոճող գնացքը տարածությունը դանդաղ բաժանում է անիվների շրջագծերի վրա, գումարումը ստուգում հանումով եւ դանդաղ սողում առաջ ու հետ. չկար մի փակուղի ու ժանգոտած պահեստային գիծ, որտեղ չկանգներ՝ լուծելով իր խնդիրը: Սկզբում կայարանների տանիքները կլորանում էին, հետո նրանց երկանիստը սկսեց բացվել՝ սուր անկյունը փոխելով բութի. երկաթգիծը հատող մայրուղու ուղիղ թափավազքերի փոխարեն՝ ուղեփակոցի տակ սուզվող միջգյուղային վերամբարձ ոլորաններ. Ռուսաստան: Շտերերի ապրանքատար վագոնի բովանդակությունը պարբերաբար հաշվառվում ու անվանականչվում էր. Շտերերն իրար ետեւից տասնվեց անգամ իր անվանն արձագանքեց «Ես եմ», տասնյոթերորդ անգամը չպատասխանեց: Դեռ նախօրեին, երկար փակուղում տեւական կայանումից հետո, փայտացած ձեռքերը երկինք պարզելով՝ Շտերերը գվվոց էր զգացել ականջներում, ասեղի պես մարմնով անցնող դողէրոցք ու դառը համ՝ բերանում, աչքերում՝ մութ բծեր, իսկ հաջորդ օրվա երեկոյան շիկացած տապով բռնված մարմինը վագոնից պատգարակով տեղափոխեցին սանիտարական բարաք: Ախտորոշումն արագ ու սովորական էր. տիֆ:

VI

Հիվանդությունը կուզեր ավելի հեռուն գնալ՝ բարաքից՝ գերեզմանոց: Բայց ամուր սիրտը համառորեն դիմադրում էր՝ մարմինը փոսին չզիջելով: Տիֆի թույնը բարձրացավ ուղեղ. բծավոր տիֆի վեց շաբաթից հետո՝ հոգեվիճակի գործառնական խանգարման եւս մի քանի շաբաթ: Երբ վերջապես գիտակցությունը պարզվեց, եւ Շտերերը, նիհար ու մոմագույն, հավաքեց իրապարկը, որ շարունակի ճանապարհը, որը, նրան թվաց՝ չէր էլ սկսվել. կառամատույցի մոտով ձգվում էին գերմանական շարժակազմերը եւ ամենուր զեռում էր կապտագորշ մահուդը: Գերմանական ռեյխսվերը տեղաբաշխում էր իր գումարտակները՝ Ուկրաինայի՝ ձյան տակ քնած աշնանացանը կտրելով Ռուսաստանից:

Էլի օրեր ու օրեր պետք եղան, մինչեւ Շտերերը, վագոնի աստիճաններից իջնելով, գլխավերեւում կտեսներ Բրյանսկի կայարանի երկար, կի-

սագլանածեւ ծածկը, որն ասես հսկա բարաքի տանիք լիներ: Իրապայուսակն ուսին գցելով՝ նա պարկերի ու թիկունքների ետեւից քայլեց դեպի քաղաք: Փողոցները դժգույն ու կեղտոտ էին, միայն տեղ-տեղ՝ դրոշների կարմիր կարկատաններ: Մայթերի երկայնքով կորացած անցնող մարդկանց գլխավերեւում՝ պաստառների ու կարգախոսների արշիւնանոց տառերը: Շտերերը, ոչ վաղուցվա հիվանդությունը ետեւից քարշ տալով, քայլում էր, դժվարությամբ բացելով կարկամած ծնկներն ու կնճռոտվում թոքերին իջնող օդի հարվածներից:

Ամենից առաջ՝ գտնել երդվյալ հավատարմատարին: Շտերերը բարձրացրեց աչքերն ու նայեց կապույտ թվանշաններին. աջից՝ կենտ, ձախից՝ զույգ: Նրբանցք. աջից՝ կենտ, ձախից՝ զույգ: Այստեղ է: Երկար շենք: Ու շքամուտքում, զանգի մերկ լարի կողքին՝ ուռուցիկ քառակուսի՝ սոսնձած թղթով: Շտերերը քերեց թուղթն, ու եղունգի տակից նախ հայտվեց՝ «երդվ», հետո՝ «հավատարմ»՝ ազգանունը թողնելով սոսնձի տակ: Շտերերը քաշեց ազգանվան տիրոջ մոտ տանող դռան բռնակը: Բայց դուռը չէր բացվում: Մուտքը փակ էր: Պետք էր՝ բակի կողմից: Թակոցին սկզբում հարցով պատասխանեցին դռան միջով, հետո, շղթայիկը չհանելով, դուրս նայեցին: Ոտքերը կաճյակների մեջ թաղած, ոսկե ակնոցը վարդագույն քթին մարդը նույնիսկ չառաջարկեց վերարկուն հանել: Բանալու երկու զնգուն պտույտով բացելով գրասեղանի դարակը՝ հանեց կտակի նոտարական քաղվածքն ու պարզեց ժառանգորդին:

- Թղթի մաքուր թերթը,- քաղաքավարի ժպտալով՝ ասաց նա,- մեր ժամանակներում ավելի թանկ արժի:

Եվ զրոների պես կլոր արտահայտություններով հավատարմատարը բացատրեց, որ Հոկտեմբերի իրադարձությունները, որոնք բերել են բանկերի ազգայնացման, Շտերերին զրկում են ժառանգված գումարի իրավունքից, եւ, որ, իրավաբանորեն ասած, բոլոր ժառանգությունների միակ ժառանգորդը, այսպես ասած, ժողովուրդն է:

Տեսնելով հաճախորդի աղճատված դեմքը՝ հավատարմատարը կարեկցաբար տարածեց ձեռքերը. մի ամիս առաջ գուցե եւ հնարավոր լիներ հասցնել, այսպես ասած, դրամարկղի փակվող պատուհանիկի տակից, իսկ հիմա...

Եվ փաստաբանը, ճակատագրին հնազանդություն արտահայտելով, թե այցելուին հրաժեշտ տալով, կախեց գլուխը:

Շեմը հատելով՝ Շտերերը մի րոպեի չափ կանգնեց՝ թիկունքով դեպի սանդղահարթակը, կողք քաշվեց՝ առաջ թողնելով աղբի դույլը, հետո

ափը բազրիքով սահեցնելով, աստիճանների կտրուկ շրջադարձերով՝ ներքեւ, փողոց:

Նա հասկանում էր իրեն ասված բոլոր բառերն ու չէր հասկանում իմաստները. ինչպե՞ս կարող է փոքրը ճանապարհը գիջել մեծին, ինչպե՞ս կարող է նրանց փոքրիկ հեղափոխությունը խանգարել իր մեծին, որը կրում է քունքերի արանքում, որը ամեն ինչից *վեր* է. ի՞նչ կարող են դրոշներ կախկխած այդ մարդիկ, միայն վրեժ լուծել երեք-չորս հարյուրամյակներից ու կանչել ապագան. միայն կանչե՞լ: Իսկ ինքը - իր մեքենան - մարդկությունը կնետի դարեր ու դարեր առաջ:

Կողքից, նեղ մայթով, մեջքը կարտոֆիլի պարկի տակ կորած, քարշ էր գալիս մի պառավ կին: Ընդառաջ, բաժան-բաժան՝ գորշ փափախներ՝ աստղանշված կարմիրով, փոկերից կախ ընկած հրացաններն ու կարճափողերը քսվում էին ձյանը:

Շտերերը դանդաղ գնում էր պատերի երկայնքով: Օդը քարի եւ ապակու միջով դուրս ցցված խողովակների հարյուրավոր ծխաքուլաներով փակում էր ճանապարհը: Թվում էր՝ տները դժվարությամբ ծուխ են շնչում բազմաթիվ շնչափողերով: Ժամանակ առ ժամանակ այսուայնտեղ պատերին կպած տառեր էին երեւում: Կանգ առնելով այդպիսի տեքստերից մեկի առաջ՝ տեսավ, որ տողավերջերը կարճած ու ծածկված են բացականչական նշաններով.

ԿԵՑՑԵ ՍՈՎԵՏՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԿԵՑՑԵ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Պաստառի խայտաբղետությունից հանկարծ ծուռտիկ տառերով դուրս նայեց «ավանգարդ» բառը: Շտերերի կարկամած միտքը, կառչելով տառանշաններից, նորից սկսեց շարժվել: Իր համար էլ աննկատ հայտնվեց տան առաջ, որտեղ ապրում էր այն մարդը, որին վստահվել էին մեքենայի որոշ մասեր: Բայց պարզվեց՝ մարդն արդեն չի ապրում այդտեղ եւ ընդհանրապես չի ապրում: Շտերերը գտավ դռնապանին ու պահանջեց իրեն հանձնել պահպանության տրված իրերը: Դռնապանը աղոտ հիշում էր ինչ-որ երկու արկղերի մասին, որոնք կարծես ձեղնահարկ էր տարել: Սակայն բանալու ետեւից Շտերերին ուղարկեց տնային կոմիտե: Շտերերը չէր հասկանում դա ինչ է: Եվ վերջապես միայն երեկոյան նրան հաջողվեց տանիքի տակ, փոշոտ հնոտու կույտում գտնել իր արկղերը: Երեւում էր, որ դրանք երկար շուռումուռ էին տվել՝ ծանր, երկաթակոփ սնդուկի տակ խցկելուց առաջ. շերտածողերը ճզմված ու կիսով պոկոտված էին, իսկ մտահղացման պարույրների նրբագույն հյուսվածքի մեջ առնված փխրուն մասերը՝ ջարդված ու սպանված:

Շտերերը շինելին քսելով մաքրեց փոշոտ ափն ու լուռ իջավ սանդուղքի կորով: Գիշերն արդեն մտել էր ներս: Եվ ո՛չ պատուհանները, ո՛չ լապտերների աղեղները լույսերով չէին պաշտպանվում նրանից: Միայն տեղ-տեղ, ապակիների պղտորությունից այն կողմ՝ նավթի ճրագների թույլ, գարշահոտ լույս: Շտերերը ճանապարհին ժամանակ առ ժամանակ պարեկախմբերի էր հանդիպում: Ոմանք բաց էին թողնում, մյուսները մախորկայի կրակը սահեցնում էին «փաստաթղթի» տողերով: Գիշերն անցկացրեց ինչ-որ փայտե առմուտքի տակ՝ ոտքերը տակը քաշած ու գլուխը հենած թաղքապատ դռանը: Նոր օրվա առավոտից Շտերերն ու իր փատաթուղթը սկսեցին պտտվել երկար հերթերում, իսկ էլի երկու-երեք օր անց, փաստաթղթին փաստաթուղթ կցելով, նա տասնչորս արշին ստացավ Զաչատյեվյան երկու նրբանցքների խաչմերուկի շենքի չորրորդ հարկում:

Քառակուսի սենյակի բնակիչը չէր խոսում: Միակ բանը, որ հարեւանները լսում էին նրանից, ոտնաձայներն էին: Քառակուսի սենյակում ոտնաձայներն անսպասելի էին հայտնվում, ավելի հաճախ՝ գիշերվա կեսին, ու ժամեր շարունակ անհամաչափ թխկոցով շարժվում ասես ակյունագծով:

Գուցե խորհրդավոր քառակուսու մարդը կարողանում էր ապրել նաեւ առանց... բայց ամեն կարգի *առանց*-ների ցանկը օրեցօր երկարում էր՝ դառնալով հարեւանների կյանքը, բայց ոչ ոք իր *ես եմ* ու *կամ*-ից այն կողմ չէր նայում: Մարդիկ ծավարի հատիկներն էին հաշվում, եւ տառեխի նույն պոչը, ապուրից ապուր լող տալով, ոչ մի կերպ չէր կարողանում լողալ մինչեւ չգոյություն:

Մի անգամ,- արդեն գարնան կողմ էր, երբ քարերից արեւին ընդառաջ են սողում խոնավության աստղաձեւ բծերը,- Շտերերի նիհար, բայց լայնոսկր, մորուքի շեկ փերթերով կերպարանքը հայտնվեց մայրաքաղաքի ընդարձակ, երկշարք լուսամուտներով գրասենյակներից մեկում: Անկյուն անկյունի գրասեղանների արանքում կանգնած՝ նայում էր՝ ասես պատահական անձրեւից հետո աճած տարօրինակ, բազմոտիկ ու քառակուսի գլխիկներով սունկ լիներ: Հետո քայլ արեց դատարկ մահուդի ետեւում նստածներից մեկի կողմը: Շտերերի ձեռքին ընդամենը քառածալ թուղթ էր: Բայց սեղանի ետեւում նստած մարդը ձեռքն առավ երկականջ հեռախոսափողը, ասես ուզում էր պաշտպանվել նրանից.

- Կա՛րճ:

Շտերերը սկսեց.

- Ես առաջարկում եմ արշավանք դեպի ապագան: Օրերը շրջանցելով: Իմ գերգճշգրիտ բանաձեւերը...

- Այդպե՛ս-այդպե՛ս: Ալո՛: Տեսակավորո՞ւմ: Ընկեր Զադյա՛պային:

- Ժամանակի հետախուզման արդյունքներից կախված՝ դուք կարող եք կամ զբաղեցնել ապագայի մատույցները, կամ...

- Զադյա՛պա, դո՞ւ ես: Լսի՛ր, այսպիսի մի հարց կա: Անհապա՛ղ... այդ ո՞ր գրողի տարածն է անջատում: Ալո՛:

Խոսողը աչքերը բարձրացրեց խնդրարկուի վրա, բայց տեսավ միայն դանդաղ հեռացող մեջքը:

Շտերերը նախասրահում մի անգամ էլ նայեց շուրջը: Ցեխոտ ոտնամաններով տրորված մարմարե սանդուղք: Սանդղահարթակին՝ ժամապահ՝ սվինին հագցրած անցաթղթերով եւ չսափրված ու հոգնած, ազդրերին սեղմված կոլտերով մի խումբ մարդիկ: Աստիճանագլխից փողոց նայող գնդացիր:

Սպասե՛լ: Նորի՛ց սպասել:

Շտերերը ատամները սեղմած քայլում էր նույն հնազանդ, միլիոնավոր անիվներից ու կրունկներից ծեծկված փողոցների երկարությամբ: Օրացուցային օրերը,- նա հստակ տեսնում էր,- իրար ետեւից, երկար ու տաղտկալի շարանով հագնում էին սվինի եռանկյունուն:

Հետագայում Շտերերը չէր սիրում հիշել անցումը Սովյալ տափաստանի 700 օրերով, ինչպես անվանում էր այդ շրջանը: Կենսագիրը լռում է դրա մասին, եթե չհաշվենք մի քանի ենթադրություններն այն մասին, թե Շտերերն ինչպես էր կարողանում շրջանցել գերեզմանի փոսը: Կարծես թե որոշ ժամանակ պահակ էր աշխատել Մոսկվայի արվարձանային պահեստներից մեկում՝ բարեխղճորեն հսկելով տարատեսակ կողպեքներով պահպանվող դատարկությունը: Հետո... բայց կարեւոր է մեկ բան. ուղեղում նստած գաղափարն ու գանգատուփում նստած ուղեղը պահպանվել էին, եւ միայն մտքատուփի վրա պրկված մաշկն էր տեղ-տեղ կնճռոտվել ու կպել ոսկորներին:

VII

Դա տեղի ունեցավ Մոսկվայի համար հազվագյուտ օրերից մի օր, երբ երկինքը կլոր կապույտ առաստաղ է՝ սպիտակ ամպերի զարդանախշով: Չնայած՝ մայթով քայլող անցորդին երկնքի գունավորումը հետաքրքրում էր ոչ ավելի, քան հենց նոր ետեւում թողած իր սենյակի քառակուսի առաստաղի փոշին ու սարդոստայնը: Քայլում էր գլխովին իր մտքերի մեջ թաղված, մեկ հանկարծ կանգ էր առնում նրանց հետ միասին, մեկ շարունակում ճանապարհը տեղից պոկված սիլլոգիզմի ետեւից: Խնդիրն ակն-

հայտորեն ծանր ու կպչուն էր, որովհետեւ քայլերը դանդաղ էին, եւ ներբանները ավելի շատ ժամանակ էին տալիս քարին, քան օդին: Հանդիպողներից ոմանք գուցե եւ ժպտային քայլքի այդ տարօրինակ եղանակի վրա, բայց ջինջ կապտաճերմակ օրն արդեն խլել էր բոլոր ժպիտները:

Այնպես պատահեց, որ տախտակի թեթեւ հրումը ծնկին համընկավ ինչ-որ տրամաբանական պատի, որին իր շարժման ընթացքում բախվել էր միտքը: Ներբաններն ակնթարթորեն կանգ առան, եւ խորհողը միանգամից չընկալեց թե՞ տախտակը, թե՞ ինչ-որ մեկի բղավոցը. «Ո՞ւր: Ո՞ւր ես խցկվում»: Քանի որ բղավոցը խանգարում էր ավարտել միտքը, պետք էր հեռանալ նրանից: Անցորդը քայլ արեց, բայց քայլն անհաջող էր. հողը, կառչելով ներբանից, առաջ չէր թողնում նրան: Շտերերը նայեց ու տեսավ, որ աջ ոտքը մինչեւ կոճը թաղվել է դեռ չսառած ասֆալտի մեջ: Ավելի ուժեղ քաշեց ոտքը, որը քայլ արեց՝ հետը տանելով անհեթեթ ասֆալտե ոտնամանը:

Բանվորների հայհոյանքի ու միջադեպով հրապուրված տղեկների ուրախ սուլոցի ուղեկցությամբ Շտերերը շարունակեց ճանապարհը, բայց ոտքերի անհավասարակշռության զգացողությունը խախտում էր մտքերի հավասարակշռությունը: Դրա հետ մեկտեղ, գետնից կարելի էր նաեւ այլ նենգություններ սպասել: Շտերերը հիմա քայլում էր ուշադիր մայթին նայելով: Եվ եթե այդ հանգամանքը չլիներ, ապա երեւի չէր կայանա նաեւ զույգ աչքերի ու լաքած բութքիթ նոփ-նոր կոշիկների հանդիպումը: Կոշիկները, սեւ լաքը գործնական շողացնելով, հայտնվեցին Շտերերի տեսադաշտում, եւ զուգորդումն անմիջապես լաքը ջնջելով՝ ի ցույց դրեց գորշ թաղիքը: Շտերերը կոշիկներից աչքերը տարավ գլխին ու տեսավ դեմքին թառած կլոր ոսկեշրջանակ ակնոցը. նրա նախկին հավատարմատարն էր, որի կաճյակները փափուկ հետուառաջ անելով, Մոսկվա վերադառնալու առաջին օրը դատավճիռ էին կարդացել Շտերերին: Հայտնի չէ՝ ճանաչե՞ց իր հաճախորդին լաքած կոշիկների տերը, հայտնի է միայն, որ լաքած կոշիկները, որ համարյա դեմ էին առել ոտնաթաթի շուրջը այլանդակ ասֆալտե գուղձին թոկով կապկպած կաշվե ցնցոտուն, հետ քաշեցին իրենց քթերն ու արագացրին քայլը:

Ասենք, Շտերերը բարեւի կարիք չուներ: Նրան ընդամենը պետք էր գաղտնազերծել փաստը, ավելի ճիշտ՝ ամբողջացնել փաստերի շղթան. կաճյակներ - երեք տարի կոշկափոխությանը - եւ ահա... կոշիկներին կպած ասֆալտի գուղձը, որ դեռ չէր քարացել, համառորեն վերադարձնում էր հանդիպման արկածին: Եվ Շտերերն ակնթարթորեն ձգեց ամ-

բողջացվող շարքը. եթե ներբանի տակ թաղիք չէ, այլ կաշի, ինչպես առաջ, ուրեմն կաշվի տակ էլ ոչ թե ցեխ ու փոսեր են, այլ հարթ ասֆալտ. բայց եթե այդպես է, նշանակում է՝ ոչ միայն մայթերին, այլեւ մայթերից վեր, հնարավոր է նույնիսկ գլուխների բարձրության վրա, գուցե եւ անգամ գլուխներում... եւ Շտերերը, բիբերը բարձրացնելով, ուշադիր ու զգույշ՝ այդ տարիների ընթացքում երեւի առաջին անգամ նայեց շուրջը:

Կարկատած ապակիներից վեր գլխարկագործն ու ժամագործը կարմիր գծով կիսել էին ցուցանակի թիթեղը: Խաչմերուկում՝ ժանգոտած կաթսայում, պտտաձեւ բարձացող գոլորշու տակ, եփվում էր նոր մայթը: Լուսանկարիչը վտիտ ակացիային էր կապել կապտաձերմակ լեռնաշղթան: Սլաքով հատված սկավառակի գլխին՝ սեւ տառերով՝ «Ուժը մարդու գեղեցկությունն է»: Քարե խորշի տակից, թղթի կույտ կազմած, նորից կռնակներով դեպի կյանքն էին մղվում գրքերը: Ասես կեղանքի տակից, այս ու այնտեղ, նշմարներով՝ քաղաքի նորացած վերնամաշկը:

Վերադառնալով տուն՝ Շտերերը փնտրեց-գտավ քառածալ թուղթը: Տառերը հասցրել էին խունանալ, տեքստը նույնպես հեղինակին բավականաչափ հիմնավոր ու հստակ չէր թվում: Նորից սկսեց գրել: Հաջորդ օրը նախագիծն ու նախահաշիվը՝ եզրույթների ու թվերի չոր հյուսք, պատրաստ էին: Եվ Շտերերը դրանք նորից մարմարե սանդուղքներով բարձրացրեց երկշարք պատուհաններով բազմասեղան սրահը: Բայց հիմա արդեն աստիճանները շրջանցելով վերեւ էր սողում անաղմուկ վերելակը, իսկ սեղանները դասավորված էին կանոնավոր եռագիծ շարքով ու ծանրացած՝ թղթապանակների տրցակներով: Դռներից այն կողմ խոտերի մեջ թաքնված ծղրիդների պես ճթճթում էին գրամեքենաները: Հաստ գրանցամատյանի առաջ ձգվել էր հերթը:

Շտերերը կանգնեց վերջին մեջքի ետեւում: Մեջքը տարիներից մի փոքր կանաչած սեւ էր հագել, օձիքին՝ խունացած եզրաշերտ: Հաջորդ վայրկյանին տեսավ նաեւ մաշված մորթե երիզը, քանի որ օձիքն աշխույժ դարձավ նորեկի կողմը:

- Մինչեւ հերթդ հասնի՛,- հոգոց հանեց եզրաշերտը՝ արծաթե բեղերի արանքով ժպիտ քամելով:- Ես, ահա, վեցերորդ անգամն եմ: Ուզում եմ տնտեսական զոդիչ արտոնագրել: Իսկ ձե՞ռն ինչ է:

- Ժամանակահատ,- կտրեց Շտերերը:

- Դա ինչպե՞ս հասկանալ:

- Ձեզ համար հասկանալը պարտադիր չէ:

Հերթը մի արշին էլ առաջացավ:

- Ժամանակ-ժամադակիչ-սառցահատ-ժամանակահատ,- քրթմնջում էր կանաչած օձիքը, ու Շտերերը հանկարծ աչքերից մի ֆուտի վրա նորից տեսավ արծաթե բեղերը, որոնց տակ արդեն ժպիտ չկար:- դա ի՞նչ է: Տրանզիտ ժամանակի միջո՞վ: Թե՞...

Շտերերը չէր պատասխանում: Բայց կանաչածը հասցրեց նայել նրա ճակատի տակ.

- Իսկ ձեր մեքենան, չգիտեմ էլ ինչպես անվանեմ, հետընթաց ունի՞:

- Այո՛:

- Շա՛տ հետարքիր է: Եթե միայն դա...,- ու հարեւանի աչքերը համարյա կիպ մոտեցան,- լսե՛ք, մի կողմ քաշվենք, թե չէ, որեւէ ավելորդ ականջ եւ...

Շտերերը տեղից չշարժվեց:

- Ձեզ ինչքա՞ն է հարկավոր: Գումարն ասեք: Այստեղ, մեկ է, ոչնչի չեք հասնի, իսկ եթե հասնեք էլ... թե՞ շատ ավելորդ ժամանակ ունեք:

Վերջին փաստարկն ազդեց: Անսպասելի մեկենասի առաջ սանդղահարթակին կանգնած՝ Շտերերը բացեց իր թերթիկները: Կանաչածի աչքերը հասցրին սահել միայն մինչեւ տեքստի կեսը, երբ Շտերերը հավաքեց թերթիկներն ու աստիճաններով իջավ ներքեւ: Բայց խունացած եզրաշերտը կրնկակոխ հետեւում էր նրան.

- Ես ամեն ինչ չեմ հասկանում, բայց... զգում եմ, որ իմաստի հոտ է գալիս: Կարճ ասած, ինձ՝ երկաթուղային ինժեներիս, որը միայն իր փայտակոճերն ու գծերը գիտի... ձեր վերժամանակային երթուղիները, ինչպես, ահա, բարեհաճում եք գրել, անհաղթահարելի են իմ փոքրիկ խելքի համար: Բայց, եթե ոչ մտքով, ապա՝ հոտառությամբ: Այ ձեզ կծանոթացնեմ Պավել Ելպիդիֆորովիչի հետ... Խորհրդակցեք, եւ եթե այդ ամենը փուչիկ չի, ապա... Գիտե՞ք, ձեր ճակատը զարմանալի ձեւ ունի: Միանգամից նկատեցի:

Չորս օր անց, հանպատրաստի նիստի պես մի բան տեղի ունեցավ: Երկաթուղային ինժեները Շտերերին հետնասանդուղով բարձրացրեց մի նեղ ու երկար սենյակ: Շտերերի ափը հանդիպեց վեց ձեռքսեղմման: Դեմքերը միանգամից չտեսավ. սենյակում գաղտնապահական աղջամուղջ էր: Առաջինը խոսեց լուսամուտագոգին նստած եւ ասես դեղին մայրամուտին թիկնած մարդը.

- Պարո՛ն Շտերեր, դուք գաղափարի միայն մի մասն եք հայտնել, մենք հավաքել ենք գումարի միայն մի մասը: Բայց եթե մինչեւ վերջ ապացուցեք սխեմայի ճշտությունը, մեզ համար, այսինքն՝ ինձ համար բացեք բոլոր իքսերը, ապա մենք էլ մեր հերթին...

Շտերերը աչքերը հառեց բառերն արտաբերող մութ ծվածիրին.

- Ես ավելի հեշտ կապացուցեմ մտքերիս ճշտությունը, քան դուք՝ որ չեք գողանա դրանք: Առաջարկում եմ սկսել դժվարինից:

- Պարոնա՛յք, պարոնա՛յք,- իրար անցավ աղջամուղջում ամբողջովին լուծված խուն եզրաշերտը,- ինչո՞ւ այդպես միանգամից ճակատ ճակատի: Պա՛վել Ելպիդիֆորովիչ, թույլ տվեք՝ ես: Այստեղ հավաքվել են բաժնետիրական ընկերության առաջին փայատերերը... այսպես ասած՝ ձեր հանդեպ հավատի հիմքի վրա: Խնդրեմ, նկատի ունենալով գաղտնիքի հանդեպ գյուտարարի իրավունքը՝ մենք պատրաստ ենք գնել, այսպես ասած, ձեռնարկի ուրվագիծը: Մեկ էլ տեսար՝ ստացվեց: Ձե՛րդ գերազանցություն, պտտեք անջատիչն, ու եկեք քննարկենք նախահաշիվը:

Լուսամփոփը կանաչ լույս նետեց: Լուսամուտագոգի ծվածիր դեմքը, բերանի անկյունը դողացնելով, նորից խոսեց.

- Մեզ պետք է հնարավորինս էժան ու դրա հետ միասին, երկու կամ երեք տեղանոց մեքենա, որը մեզ կկարողանար հասցնել, դե, ասենք...

- Առավելագույնը՝ մինչեւ 1861 թվականը, գուցե էլի մի տասը տարի ու վերջ: Կամ էլ չի՞ հասցնի, շունչը կփչի՞, հը՞,- լամպի լարի ծայրին, պատի տակ պոռթկաց ինչ-որ ձայն:

Շտերերը գլուխը դարձրեց ձայնի կողմը. երկու ուրախ, բզի նման սուր բիբեր՝ կախված ակնապարկերի միջով. օձիքով պրկված կարմիր դեմքին՝ բութ, բայց ջանադիր ածելու հետքեր:

- Մի ընդհատեք, գեներա՛լ,- եւ լուսամուտագոգի մարդը փորձեց շարունակել:

- Դուք ինձ վարձում եք, ինչպես կառապան կվարձեիք,- նետեց Շտերերը:

Մի որպեի չափ լռություն տիրեց: Հետո երկաթուղային ինժեները, աչքը չկտրելով Շտերերի հոնքերն իրար բերած կնճիռից՝ մի հարյուրի չափ բառ ծախսեց այդ լռությունը հարթելու վրա: Դա նրան այնքան էլ չէր հաջողվում: Նախահաշվի մասին հարցերին Շտերերը պատասխանում էր չոր թվերով. երկտեղանի ժամանակահատը ծախսերի 50% բարձրացում կպահանջի: Հանկարծ լսողության մեջ խրվելով՝ հնչեց սուր ձայնը.

- Ես ոչ մի գրոշ ավել չեմ տա ձեզ: Ես ձեզ տվել եմ ամեն ինչ. արծաթյա սպասքս, ժանյակներս, կախազարդս, ադամանդե ականջօղերս: Այլեւս՝ ոչ մի կարատ: Լա՛վ, ասենք ինձ հասցրիք անցյալ, այնտեղ ի՞նչ եմ հագնելու, սեփական մա՞շկս:

- Կնկան դրախտ թողիր, կովն էլ հետը կբերի: Հասկացե՛ք, ախր, տի-

կի՞ն, որ բավական է հետ գնալ ընդամենը մի տասը տարի, եւ ձեզ կվերադարձնեն ձեր բոլոր...

- Իսկ այնտեղ,- գեներալական բասի մեջ մխրճվեց երկաթուղային ինժեների ձայնը,- անշարժ գույքը դարձնել փող, փողը՝ արտասահման, ու մենք էլ՝ ետեւից: Եվ այնտեղից, «Մատէնաներով» ու «Թայմսերով», այս ամբողջ գրողի տարած հեղափոխությունը՝ հանգիստ՝ հեռադիտակով. ինչպես ասում էր Լուկրեցիոս Կարոսը. «Հաճելի է ափին նստած հետեւել ուրիշի կործանմանը կատաղի ալիքների մեջ»:

Ի վերջո հաջողվեց համոզել կամակոր փայատիրոջը:

- Լա՛վ: Բայց մի պայմանով. ես առաջինն եմ:

- Ինչո՞ւ:

- Շատ պարզ. իմ անցյալն ինձ իրավունք է տալիս...

- Եթե այդպես է,- անկյունում իրար անցավ աչքերը կապույտ ապակիների տակ թաքցրած ճաղատ մարդը,- եթե դրան գնաց, իմ անցյալն ավելի անցյալ է:

Խոսքը խաչվեց խոսքին: Բայց այդ պահին Շտերերը կտրուկ հետ քաշեց աթոռն ու շտկվեց: Վեճը լռեց: Շտերերը դուրս եկավ նախասենյակ՝ մթան մեջ մուտքի դուռը փնտրելով: Բայց անմիջապես նրա կողքին հայտնվեց երկաթուղային ինժեները, բռնեց աղմուկն ու արմունկն ու սկսեց ականջին բացատրող-հայցող բառեր շշնջալ: Միասին իջան նեղ սանդուղքով: Հարցերն ավելի շատ էին, քան աստիճանները: Պատասխաններ չէին հետեւում: Եվ միայն վերջին աստիճանին, ձեռքը՝ երկու քրտնած ափերի արանքում, Շտերերը վերջապես ասաց.

- Մեկ է:

Ափերը թողեցին ձեռքը:

Հայտնվելով իրիկնային մայթին՝ Շտերերը խոր շունչ քաշեց՝ մինչեւ ամենախոր թոքաբշտիկները, ու հետ գցեց գլուխը. Երկնքից հազարավոր կկոցված զմրուխտյա բիբեր ուշադիր նայում էին երկրին:

VIII

Զաչատյեյան նրբանցքի քառակուսու մեջ առնված ու քառակուսու շուրջը նկարագրված կյանքերը ոչ մի կերպ չէին խաչվում: Միակ բանը, որ նկատել էին պատկից հարեւանները, ոտնաձայների փոփոխությունն էր քառակուսու ներսում. ավելի կամացուկ ու խուլ էին դարձել: Եթե դրան գումարենք նաեւ եզրաշերտը վզին, ինչ-որ տոպրակներ թեւի տակ, հապճեպ քառակուսու ներսն անցնող ինչ-որ մարդու անկանոն այցերը, ապա

դա այն ամենն էր, որ իրենց հիշողություններից կարող էին թափ տալ, նույնիսկ հիշողությանն ուժեղագույն հարվածներ ստանալու դեպքում, չորրորդ հարկի բնականի կենվորները:

Ասենք, հիշողություններն էլ դրա ժամանակը չունեին. անձնական թերթիկների հետ կռիվ տալով՝ տուփերում դասավորում էին՝ 1905-թվականից մինչեւ 1914, 1914-ից մինչեւ 1917, 1917-ից մինչեւ, ու դարձյալ՝ ից ու մինչեւ, հե՞շտ է ասել, իրենց կյանքը. հապճեպ հիշողության մեջ էին խցկում, մոռանում, վերասերտում իրենց անցյալն ու թերթերի թարմ համարներով ամրագրում ներկան:

Իսկ այդ ընթացքում հենց նրանց կողքին նախապատրաստվում էր մեքենայի մեկնարկը, որի ընթացքի առաջին տակտի հետ մինչ ու հետոյի բոլոր տուփերը դեսուդեն էին թռչելու, եւ անցյալն ու ներկան վերածվելու էին նույն փողոցի երկու մայթերի, որոնցով կարելի էր քայլել եւ՛ անցյալով, եւ՛ ներկայով. ում ինչպես հարմար է:

Հիմա ոչինչ չէր խանգարում Ծտերերի աշխատանքին: Բազում անգամներ մտքով զտված մեքենան այնքան տրամաբանական ու ավարտուն տեսք էր ստացել, որ նրա իրականացումը շատ ավելի փոքր ջանքեր էր պահանջում, քան մատերիայի հետ Ծտերերի սխեմայի առաջին հանդիպմանը: Թվում էր՝ իրականացումից այդքան տեւական ժամանակ բաժանված գաղափարն ինքն է մատներից թռչում էլեկտրոնային ուղեծիրների հյուսվածքների մեջ, փոխարկում միջուկային կցվածքները՝ գաղտնուղի բացելով հարյուրամյակից հարյուրամյակ: Նյութերի հարցը դժվար էր: Բայց ճարպիկ ու փորձառու եզրաշերտը, չգիտես ինչպես, ամեն ինչ ճարում էր: Ծտերերը պահանջել էր, որ մինչեւ ավարտելը ոչ ոք քիթը չխոթի աշխատանքի մեջ: Նրա յուրաքանչյուր բառին հնազանդ՝ կանաչածը միայն երկու քայլ էր անում շեմից ներս, այն էլ՝ ոտքերի ծայրերին. «Չէ՛, չէ՛, միայն աչք ածեմ, սրբազան հո՛ւր, նույնիսկ սարսափելի է, չէ՛, չէ՛, գնացի՛, գնացի՛, այլեւս ոչ մի վայրկյան չեմ համարձակվի»,- ու ձեռքերը թռիչքի պատրաստվող թռչունի պես թափահարելով՝ անհետանում էր կամացուկ փակվող դռան ետեւում: Բայց մի անգամ այցելուն խախտեց քայլերի ու վայրկյանների հաշիվը: Կռանալով դժկամությամբ գործից կտրված Ծտերերի ականջին՝ շշնջաց. «Իվան Ելպիդիֆորովիչի գործերը վատ են: Փնտրում են նրան: Այլեւս ոչ մի կերպ չի կարելի մնալ ներկայում: Հնարավո՞ր է ինչ-որ կերպ անավարտ մեքենայով: Կկործանվի՛ մարդը: Իսկ հետո էլ, թել առ թել, հասկանո՞ւմ եք»: Այս անգամ այցելուն աչք ածելու խնդրանքի պետք չուներ, Ծտերերն ինքը նայեց նրան: Եվ կանաչածը հետ-

հետ գնալով՝ մեջքով բացեց դուռն ու անհետացավ անծայն պատին սեղմված փեղկից այն կողմ: Ծտերերն անմիջապես մոռանալով հյուրի եւ՛ դեմքը, եւ՛ բառերը՝ շարունակեց աշխատանքը:

Դրանից հետո բավական երկար օրեր անցան, եւ ոչ մի բառ չէր խուժում կենդանություն առնող կառույցի ցածր, խուլ, ապակյա շրշյունների մեջ: Ծտերերը ստուգում էր կարգավորիչները եւ ուշադիր լսում պարապ ընթացքով աշխատող մեքենայի զարկերակը: Այդ ամբողջ օրը անձրեւի կաթիլները կտկտում էին ապակուն, երեկոյան կողմ տանիքի վրայով կորացավ գույնզգույն ծիածանը, իսկ երբ իջավ գիշերը, ցրտեց, եւ պատուհանները, լռելով, այդպես էլ չբացեցին ապակիները:

Քառակուսուն հարող քառանկյան բնակչի կոկորդը խոնավությունից հիվանդացավ, ու սուր գալարներ գծվեցին ատամնաշապիկի տակ: Բնակիչը, ծանր շնչելով բարձի մեջ, լսում էր պատի ետեւից եկող քայլերի ձայնն ու կուլ տալիս թթվահամ թուքը: Հետո քայլերը դադարեցին: Ցավը շարունակում էր գծել իր գալարները: Եվ հանկարծ պատի միջով չոր ու կարճ քամի անցավ թեթեւ, բայց զնգուն ծփանք ու փախչող կոտորկված ծակոցներ. ասես հարյուրավոր կարկիններ սրածայր ոտիկներով սահելով ապակու վրայով՝ շառավիղներով հեռանում էին իրարից: Հետո ամեն ինչ լռեց, ու միայն քունքի մեջ հստակ կտկտում էր ինչ-որ բան՝ փափուկ արձագանքելով ականջներում: Ցավն անհետացավ: Բնակիչը գլխին քաշեց ծածկոցը, ու հաջորդ պահին ուղեղի բջիջները քուն մտան:

Առավոտյան քառակուսի սենյակը տարօրինակ կերպով լուռ էր: Կեսօրվա կողմ հնչեց դռան զանգը. մի երկար ու երկու կարճ: Քառակուսի սենյակը, որին վերաբերում էր այդ զանգահարությունը, չարձագանքեց: Եվ նորից. երկար ու երկու կարճ: Դադար: Եվ նորից. գվվացող գծիկ ու երկու կետ: Քառակուսին լուռ էր: Այտը կապած հարեւանը, ոտքերից ընկնող ոտնամանները քստքստացնելով հասավ դռանն ու հանեց շղթայիկը. դիմացը հարգալիր օրորվող եզրաշերտը ծանոթ էր, բայց ծանրամարմին, սպայական ձեւվածքի գորշ մահուդով կերպարանքը, որ դեմքը թաքցնում էր բարձրացրած օձիքի տակ, նրան այնքան էլ հասկանալի չթվաց: Քառակուսու հարեւանը հապաղեց՝ ուշադիր զննելով այցելուին: Ձույգը, կիսամութ նախասենյակը կտրելով, կանգ առավ Ծտերերի դռան առաջ: Սկզբում եզրաշերտը ցուցամատի կռճիկով մանրիկ թխկթխկացրեց դռանը. սենյակը լռում էր, ցուցամատի թխկոցին միացավ միջնամատի ծալվածքը, մի վայրկյան սպասում, ու հանկարծ դռան վրա իջավ երկրորդ այցելուի բռունցքը, դուռը վնգաց, բայց ներսից ոչ ոք չարձագանքեց: Եզ-

ռաշերտված վիզը կռացավ բանալու անցքի վրա, հետ քաշվեց ու շրշաց. «Բանալին այնտեղ, ուրեմն...»,- ու մեղմ քերծելով դուռը, կամացուկ, ասես եթե ուզենար ձայնը տեղավորել անցքի մեջ. «Մաքսիմիլի՛ան Ֆյոդորովիչ, ախր մենք ենք, մերոնքական, ինչպես պայմանավորվել էինք...»:

Դուռը շարունակում էր փակ պահել մուտքը: Փոխարենը բացվեցին հարեւան երկու փեղկերը: Հետաքրքրասեր քթեր նայեցին դուրս, եւ ինչ-որ մեկը արտաբերեց «միլիցիա» բառը: Եզրաշերտի ուղեկիցը օձիքը քաշեց մինչեւ աչքերն ու բութ կոշկաքթերը դարձրեց դեպի ելքը: Բայց մաշված եզրաշերտը, դռան խուլ տախտակներն ափլփելով, շարունակում էր քսվել բանալու անցքին: Հինգ րոպե էլ չէր անցել, երբ կողպեքը շխկաց, ու դուռը, բացվելով, մեկ դյուժին աչքերին ի ցույց դրեց սենյակի քառակուսին: Ձախ պատի տակ՝ հատակի տախտակների երկայնքով ձգված ներքնակ, աջ անկյունում՝ գրքերի տրցակ՝ վրան ծանր արկղ, որից դուրս էին ցցվել սրվակների դատարկ կոկորդները, հենց պատուհանի տակ՝ չներկված սեղան՝ ծածկված ինչ-որ հեղուկների խայտաբղետ բծերով: Բծերից բացի մի բան էլ կար սեղանին, որն իրեն ձգեց բիբերի ողջ դյուժինը. մոմակալ էր, որի ակնախոռոչը կուրացուցից դեղին կրակ էր թարթում: Ներս մտածները նորից աչքերով խուզարկեցին դատարկությունը. մոմը վառած մարդը չկար: Կապած ծնոտով հարեւանը մատներով դիպավ ջարդված կողպեքից ցցված բանալուն. ներսում փակված մարդու հետքն անգամ չկար: Միլիցիոները, մատիտի ծայրը թքոտելով, անցավ արձանագրություն կազմելուն, բայց չգիտեր՝ ինչից սկսել: Այդ ընթացքում դեղին կրակը թարթեց վերջին անգամ ու մարեց:

Չկայացած ճամփորդության ուղեւորների հանդիպումը կարճ ու անարդյունք էր: Նրանք նման էին մարդկանց, որոնց կողով սլացել-անցել էին ճեպընթաց գնացքի լուսավորված պատուհանները՝ խավարից խավար: Մաշված եզրաշերտը կատարելապես ոչնչացած էր թվում. կանաչը վերարկուից անցել էր դեմքին, բեղերը ջղածգորեն ցնցվում էին. «Ո՞վ կմտածեր, ո՞վ...»:

- Դո՛ւք,- կոշտ ստեւով ճռնչաց օձիք-գեներալը,- դո՛ւք էիք հորինել՝ «գյուտարա՛ր, հանճա՛ր», վերցնել փողերն ու փախչել՝ շա՛տ հին գյուտ է:

- Թող վերադարձնե՛ն իմ ադամանդները:

- Իհարկե, ադամանդներն էլ: Պետք է բռնել այդ խարդախին: Գնացեք ՄՈՒՌ ու...

- Ողորմա՛ծ տեր: Ես ՄՈՒՌ գնացող չեմ: Ինքներդ գնացեք ու նայեք, որ...

Ու խոսակցությունը մարեց: Ճիշտ է, դեռ շատ չար, իրար նեղացնող բառեր եղան, բայց արդեն ոչ մի ուժ չունեին:

Ձաչատյեյան նրբանցի դատարկ քառակուսին, բնականաբար, շուտով զրկվեց իր դատարկությունից: Անհասկանալի մոմակալը դեռ լրիվ չէր սառել, երբ արդեն ոտքերը ճզճզացնելով սենյակ մտավ ինչ-որ մեկի մահճակալը, մեխերից կառչած՝ պատին բարձրացավ դարակը: Մոսկվան՝ այդ հսկա, տափակած մարդանոցը, անմիջապես խցկվեց այդ դատարկ արշինների մեջ՝ հանձին հանդարտաքայլ ու սափրադեմ, կորված մեջքով ու արմունկին սերտաճած պորտֆելով մարդու:

Նոր կենվորը, որը օրդերը փոխանակել էր քառակուսով, քիչ էր հետաքրքրվում իր կացարանով: Առավոտից ու մինչեւ մթին գիշեր պորտֆելը նրան տանում էր նիստից նիստ, թղթապանակից թղթապանակ, «համարակալած գործերից»՝ «գործերի»: Երեկոյան պորտֆելը փքվում էր, իսկ պորտֆելակիրը տափակում ու դժվարությամբ հաղթահարելով չորս հարկը՝ աջակցություն էր խնդրում իր մահճակալի չորս ոտքերից: Նրա ժամանակը այնքան ճշգրիտ էր բաշխված ներկայությունների բացակայության ու բացակա ներկայության միջեւ, եթե միայն այդպես կարելի է կոչել խոր, լրիվ անջատող քունը, որ կենվորը միանգամից չնկատեց մի աննշան, բայց համենայնդեպս տարօրինակ երեւույթ, որը որոշակի լռություն ու լսողության լարում էր պահանջում: Նոր կենվորն այդ երեւույթը հայտնաբերեց նոյեմբերի 7-ից 8-ի գիշերը: Այդ օրը պորտֆելը,- որքան էլ տարօրինակ է,- մենակ էր թողել մարդուն: Մարդը վերադարձավ մթնշաղին ու ծոծրակն ափերին՝ պառկեց անկողնուն: Պատերից այն կողմ լռություն էր. տոնը մարդկանց տարել էր ակումբներ ու թատրոններ: Կենվորը, աչքերը փակելով, շարունակում էր տեսնել դրոշների հորդող գետը, բազմահազարանոց ամբոխի ծփանքը, ու հանկարծ զգաց, որ ցածր, արտակարգ ցածր, բայց համաչափ ու հստակ ձայն է լսում: Սկզբում ձայնը թույլ էր եւ ասես սահում էր դեռ ուղեղում աղմկող օրվա եզրով, անցքերի կետագծով բացվող ժապավենի երկարությամբ, բայց հետո, առարկայանալով, ձայնը կտրուկ ու հստակ դարձավ, եւ մարդը, նստելով անկողնում, պարզորոշ տեղայնացրեց այն. մեքենայական համաչափ, օդը ծակող ապակյա հնչյունները գալիս էին թե սենյակի խորանարդը լցրած աղջամուղջի կենտրոնից, թե սեղանի գլխից, թե մի արշին աջից: Կենվորը ոտքերը կախեց մահճակալից եւ արդեն ուզում էր քայլ անել երեւույթի կողմը, երբ մուտքի դուռը շխկաց, հարեւանների ոտքերը թփթփացին միջանցքում, ու փխ-

ռուն, լսելիության սահմանին գտնվող ձայնը սկսվեց: Սակայն քառակուսու բնակիչը, չգիտես ինչու տագնապած այդ, թվում է, դատարկ բանից, որոշեց համենայնդեպս հսկել այդ դատարկ բանն ու կրկին ստուգեց զգացողությունը: Այդ նույն գիշեր, երբ տունը խաղաղվեց ու լռությունը փակվեց քառակուսու շուրջը, մարդը ականջը կտրեց բարձից ու սկսեց ականջ դնել. ականջներում հնչող մահճակալի ճռռոցը սկզբում խանգարում էր, սակայն աստիճանաբար խաղաղվող արյան միջով սկսեց կետագծվել կամացուկ, բայց հստակ հաշվարկը: Բնակիչը տառապեց ողջ գիշեր եւ էլի մի գիշեր: Հետո դիմեց բժշկի: Սեւ փողը լսեց սիրտն ու շնչառությունը, բժշկական ափի կողը ստուգեց ծնկային ռեֆլեքսը, եւ այցելուին առաջարկվեց հիշել հոր, պապի ու նախապապի հիվանդությունները: Ափը, մատնեորը կեռելով գրչակոթի վրա, բրոմ նշանակեց, գնաց ձեռքսեղմման ու թղթադրամը դրեց գրպանը:

Բրոմը չհաղթեց երեւույթին: Կետգծային ծակող ձայնը, սպասելով, որ լռություն տիրի, անմիջապես հայտնվում էր նույն միալար մեքենայական հստակությամբ: Բնակիչը սկսեց խուսափել լռության հաշվիչի հետ հանդիպումներից: Անընդմեջ երկու-երեք գիշեր, պատրվակներ գտնելով, անցկացրեց ծառայակցի մոտ եւ, վերջապես, այլեւս չկարողանալով որեւէ նոր բան հորինել, պատմեց լռության հաշվիչի մասին: Ծառայակիցը սկզբում ձգեց հոնքերը, հետո ձգեց բերանը.

- Է՛, տեսնում եմ դուք միստիկ եք, իսկ եթե հրավիրեմ նիստի՞: Չե՞ք ամաչում. մի դատարկ որդից խուճապի եք մատնվում:

- Ինչպե՞ս թե՝ որդից:

- Հենց այդպես. այդպիսի մի փոքրիկ որդ կա, ծակում-մտնում է պատի կամ, ասենք, պահարանի, սեղանի տախտակների մեջն ու՝ կը՛տ, կը՛տ, կը՛տ: Սովորական փայտաթրթուր, միայն չեմ հիշում լատիներեն ոնց էր: Ֆրանսիայում Ճակատագիր են ասում, դեսթին կամ թե ոնց էր նրանց լեզվով: Եվ դուք հենց այդ փոքրիկ որդից՝ դեսթինից էլ վախեցել եք: Պարզից էլ պարզ է:

Ձաչատյեյան գիշերակյացը թերահավատ կրկնեց հարցուփորձը, մանրամասներ պահանջեց, առավոտյան թաղվեց միջատաբանության տեղեկատուներում, գտավ, կարդաց, վերընթերցեց ու հանկարծ իրենց ազատագրված զգաց հոգեբանական ճնշումից:

Նույն օրվա երեկոյան նա հանգիստ զետեղվեց իր սենյակի քառանկյան մեջ ու քնեց առանց երազների, եւ նրան այլեւս չարթնացրին ո՛չ լռությունը, ո՛չ էլ նրա հաշվիչը:

IX

Օրերի մակընթացություններն ու տեղատվությունները, արեւի գրոհներն ու նահանջները ամեն անգամ ինչ-որ բան էին բերում ու տանում: Ծիրիմների շարասյունը Կրեմլի պատի տակ աստիճանաբար երկարում էր: Հնգագլուխ եկեղեցիները ծանրադարպաս թաղվում էին ցոլքերի մեջ, իսկ հողը նրանց տակ պատվում էր սալաքարերով: Բեռնատարները դադարել էին սպիրտ խմել ու հարբած օդեհոտ արտաշնչել: Ռադիոձայնը թեք տանիքներին հաղորդալարերի իր ոստայնն էր հյուսում, բարձրախոսների կլոր բերաններն իրենց շուրջն էին հավաքում հազարավոր անհագ ականջախեցիներ: Ավտոբուսների տուփերը, զսպակները ճռռացնելով, ճոճվում էին դարուփոսերում: Հին Պետրովյան պալատի ետեւում էլիպսաձեւ ձգվել էր հսկա մարզադաշտը՝ քառասուն հազար աչքի համար: Քառասուն նահատակների նրբանցքը վերանվանեցին Դինամոյի փողոցի: Նովոբլագոսլավնիում սկսեցին ծխալ առաջին օղու գործարանի ծխնելույզները: Այցելուի քիթը քրտինքի ու ռուբլանոց օդեկոլոնի հոտերի մեջ երբեմն հանդիպում էր արտասահմանյան «Ծիպրի» բույրին: Զաչատյեյան քառակուսու բնակիչը ուսերի կորին արդեն ոչ թե ֆրենչ, այլ պիջակ էր հագցնում: Սեղանի խայտաբղետ բծերի վրա աճուրդի մուրճի երեք հարվածով որպես սեփականություն ամրագրված սփռոց էր գցվել: Պորտֆելը, թեկուզ խիստ ծերացած ու մաշված, շարունակում էր նրան մահճակալի չորս ոտքերից առաջնորդել դեպի գրասենյակային սեղանի չորս ոտքերն ու՝ հետ: Բանալին՝ անցքից գրպանը ու նորից՝ անցքի մեջ: Եվ միայն մի անգամ բանալու առաջ ոչ անցքը ու ոչ էլ գրպանը, այլ, այսպես ասենք, անդունդ բացվեց: Կարելի է, իհարկե, բանալին մտցնելն անդունդն ու երկու անգամ պտտել ձախից աջ, բնակիչն այդպես էլ արեց, բայց... պետք չէ խախտել քրոնոսի տրամաբանությունը կամ, ինչպես ընդունված է ասել, քրոնոլոգիական կարգը:

Բնակիչը սովորականի պես իր սենյակի դռանը մոտեցավ երեկոյան տասնմեկն անց: Միջանցքում մութ էր, քանի որ բնակարանն արդեն քնել էր, բայց կենվորը, որ անգիր գիտեր այդ մթությունը, լույսի օգնության կարիք չուներ: Կանգ առնելով դռան փեղկից կես քայլի վրա, նա պորտֆելը աջ ձեռքից տեղափոխեց ձախը ու բանալու ետեւից մտավ գրպանը: Եվ այդ պահին պարզորոշ լսեց. Սենյակում՝ տրամագծով, ոչ բարձր, բայց հստակ ոտնաձայն էր լսվում: Քայլքը անհամաչափ եւ ընդհատուն էր: Հասնելով սենյակի անկյունը՝ կանգ էր առնում ու երկու-երեք վայրկյան դադարից հետո վերադառնում: Գո՞ղ է: Պետք է արթնացնել հարեւաններին: Իսկ

եթե այն հին հիվանդությո՞ւնն է, դեստինը՝ դարձած հայլուցինացիա, որ միայն իրեն է լսելի: Ու նաեւ. գողը կարիք չունի ճոճանակի պես անկյունից անկյուն քայլելու: Ու նաեւ. եթե գող է, ուրեմն դուռը բաց պիտի լիներ: Մտքի ետեւից՝ ձեռքը դռանը: Փակ է: Հետեւաբար... Բնակիչը կանգնել էր խավարում՝ զգալով սրտի տառապագին խփոցը: Հայլուցինացիան, սրվելով, բազմապատկում ու բազմապատկում էր կեղծաքայլերը: Բացե՛լ, բացե՛լ դուռը դեպի երեւակայականն ու մերկացնել նյարդերը: Կտրուկ շարժում՝ ու պորտֆելը, թեւի տակից սահելով, ծանր շմփաց հատակին: Քայլերը դադարեցին: Մեկ րոպեի չափ բնակիչը ականջը պահել էր լռությանը: Ոչ մի ձայն: «Վերջացա՛վ»: Սիրտը կրճատեց զարկերը: Նա համարյա հանգիստ տնտղեց բանալու անցքն ու երկու անգամ պտտեց պողպատը: Եվ անմիջապես էլ, դռան խաղաղ շրշյունից հետո՝ կարճ, բայց բարձր ճիչ. ուղիղ դիմացը, սուր ուսերն առաջ բերած, գիշերային փողոցից կապտալույս առած պատուհանի ֆոնին սեւ ուրվագծով կանգնած էր մի մարդ:

Բոլոր պատերին շխկացին անջատիչները: Տասնյակ բոբիկ ոտքեր օգնության վազեցին բղավոցին: Մարդն արդեն լուսավորված քառակուսու մեջ էր՝ ուսերը կոր, հանդարտ անխռովության դիրքով. կիսով քայքայված հագուստ, երկարուկ ու նիհար դեմք՝ մազերի շեկ հրդեհի շրջանակում, իսկ հսկա ճակատին շեղակի, ասես խազելով, ձգվել էր ֆոսֆորակապույտ սպին: Մազերի մեջ սնդիկաորդի պես խճճվել էր ջղածիգ կծկված պարույրը: Նա շարժեց ձեռքն, ու պարույրը մոխրացավ-հալվեց օդում: Զաչատյեւյան բնակարանի կենվորները, որոնց այդ ուշ ժամին անսպասելի դուրս էին քաշել անկողիններից ու երազներից, տարակուսած ոտնեոտ էին անում հատակին: Նրանց նայելով՝ խազած ճակատով մարդն ասաց.

- Հեռո՞ւ է տասնութից: Ինձ պետք է...

Ու մի անգամ էլ աչքերը պտտելով՝ հասկացավ՝ հեռու է: Ու լռեց: Փոխարենը՝ մյուսների ձայները, որ մինչ այդ արթնանալու ապարդյուն ջանքեր էին անում, իրար հերթ չտալով բարձրացան: Դեռ առավոտը չէր հասցրել բարձրանալ Կրեստովսկի ուղեկալի աշտարակների վրա, երբ զնգուն շխկաց մուտքի դուռը, եւ Շտերերը, ուսերը սառն ու սեւ օդից կծկելով, քայլեց ամայի Զաչատյեյան նրբանցքի քարե գալարքների երկարությամբ:

Մկաններով պատռվող տարածությունը պիրկ ու դժվար էր թվում: Տեւական բացակայությունից հետո օդը թանձր ու անթափանց էր: Ոչ մի տերեւ չէր շարժվում զբոսայգում, ուր, ջանքերից թուլանալով, մի կերպ հասավ Շտերերը, օդն ամբողջովին բաղկացած էր անշարժ քամուց, որի արագությունը հավասար էր անսահմանության ձգտող զրոյի: Տեւողու-

թյուններից տարածություն վերադարձված՝ նա իրեն զգում էր մշտախռով ու առողջարար ծովը հատող լողորդի պես, որին հանկարծ գցել են կանաչ փառով պատած եւ ափերի քառանկյուն մամլակի մեջ սեղմված ծանծաղուտը:

Հանդիպած առաջին իսկ նստարանը ծալեց նրա ծնկները: Ծտերերը նստեց, սրբեց քրտինքը: Միանգամից չնկատեց, որ նստարանի մյուս ծայրն ազատ չէ: Բայց անազատ ծայրից նրան վաղուց էին նկատել: Կինը, որ միշտ արթուն էր մարած պատուհաններով երկու պատի արանքում, պրոֆեսիոնալ-ուշադիր էր գիշերային անցորդների հանդեպ: Տարօրինակ, ասես հրումներով ու ճոճվելով մոտեցած տղամարդու ուրվապատկերը դեռ կարող էր գիշերվա մնացորդը վերածել ռուբլիների: Նորի՛ց ճոճվեց, նորի՛ց. ավելի լավ՝ հարբածները հազվադեպ են անտարբեր անցնում:

Կինը մի րոպեի չափ ճոճում էր ոտքին գցած ոտքը: Նստարանի հակառակ ծայրին տեղավորված հյուրը չէր մոտենում ու լուռ էր: Այդ ժամանակ կինը գլուխը դարձրեց նրա կողմն ու ասաց.

- Ձբոսնո՞ւմ եք:

Պատասխան չհետեւեց: Ավելին. գինու հոտ չկար: Փորձառու հայացքն ընդգրկեց անծանոթի բարձրահասակ, մթանը հենված կերպարանքը: Ոչ մի կասկած՝ անփող-անտունի մեկն է: Կինը փեշը քաշեց ծնկին ու՝ հորանջի միջով.

- Եկվո՞ր ես:

Կերպարանքը թեթեւ խոնարհեց գլուխը: Կինը շվացրեց.

- Եվ ի՞նչ եք լցվում այստեղ: Ի՞նչ եք անելու. հետույքով նստարաննե՞ր սրբեք: Ի՞նչ ես ուզում Մոսկվայից: Անցած օ՞րը, հա՞:

Կերպարանքը ուսով դարձավ հարցին.

- Այո՛,- ու մի վայրկյան դադար տալուց հետո՝ ասածի ետեւից:- Անցած տարիները: Եթե չեմ հասկացել, ուրեմն պետք է նորից ու նորից անցնել նրանց միջով, մինչեւ...

Ձայնն ու վանկերի շեշտային հարվածը առավելագույնս լուրջ ու կենտրոնացած էին: Կինը վախվորած նայեց հարեւանին. հո Կանատչիկովոյից չի՞:

Օդը մի քիչ շարժվեց քամուց: Փորձելով փոխել խոսակցության ուղղությունը՝ կինը ասաց.

- Գիշերվանից էլ համարյա բան չմնաց:

Լուսաբացի մեջ աստիճանաբար հստակվող ուրվագծով հարեւանը ավելի խոնարհվեց գետնին.

- Ես գիշեր գիտեմ, որի մասին չի կարելի այդպես ասել:

Դա քիչ էր նման միասին քնելու առաջարկի: Հետն էլ՝ հարեւանը կարճ ծիծաղեց ու շրջեց գլուխը: Կինը վեր կացավ, թափ տվեց փեշն ու հեռացավ: Մի հիսուն քայլ անցնելով՝ շրջվեց. վաղորդայնից լուսավորված բարձրահասակ ու սրանկյուն կերպարանքը դեռ նստարանին էր՝ ուսերը գետնին խոնարհած, ու չգիտես ինչու՝ կինը մտածեց վերջին գիշերվա վերջին հյուրի մասին, որը կգա, վերեւից կփլվի վրան ու կճզմի հողի մեջ:

Այդ ընթացքում արշալույսը, որ կարմիր թթխմորի պես բարձրացել էր տների քարե կույտերից անդին, օդը կարմրասեւ ներկելով՝ ցրիվ եկավ տանիքների վրայով: Շտերերը չէր լքում անշարժությունը: Զբոսայգու ցանկապատից այն կողմ դղրդաց աղբահանի դատարկ սայլը: Ծառերի արանքում հողն էր քերծմրծում ցախավելը: Խուլ զանգահարությամբ կողքով անցան իրար խփվող կաթի բիդոնները: Հեռվում ինչ-որ տեղ ռելսերի անկյունադարձին կրճտացրեց տրամվայը: Երկու գինովցած հարբեցող, չորս ոտքով բարդ պարափորձ անելով, խառնելով ապլիկատուրան՝ իրենց զիգզագն էին գծում զբոսայգու երկարությամբ: Ոմանք շտապում էին քնելու, մյուսները դեռ չէին թոթափել քնի մնացորդները, ու ոչ մեկի քայլերը երկար չէին հապաղում հողին խոնարհված, բաց ճակատը մտքերի ափակոծությանը պարզած կերպարանքի մոտ: Եվ ափսոս, որ այլեւս անցորդների, եւ ընդհանրապես ողջերի մեջ չէր ուրվականների գծով մասնագիտացած գրողը, որն ընդամենը մի քանի տարի առաջ սիրում էր լուսաբացներն անցկացնել մոսկովյան այգիների ավազե ուղեծրերում. Շտերերի անքուն կերպարանքի հետ հանդիպումը նրան կստիպեր զգալիորեն խմբագրել Եղիազարի մասին պատմությունը: Քաղաքն աստիճանաբար թոթափվում էր կողպեքի մեջ պտտվող բանալիների շխկոցից: Երբեմն զբոսայգու քայլուղով շտապող որեւէ անցորդ հայացք էր գցում Շտերերի նստարանին: Երկու պստիկ մարդուկների առավոտվա թթվածնի չափաբաժնի հանած դայակը, Շտերերի ստվերը շրջանցելով, արդեն ուզում էր նստել կողքին, բայց աչքերի շյուղերով հանդիպելով քարացած կերպարանքին, երեխաներին քաշեց-տարավ առաջ: Մարդուկներից մեկը, որին սեղմել էին չոր ու ամուր մատները, ծվաց.

- Օտա՛ր քեռի:

Ցահել գնչուհին, կեղտոտ մետաքսի մեջ ազդրերը խաղացնելով՝ ոտքը դրեց ավազին գծված անշարժ ստվերի վրա, ու խաղաթղթերի մաշված կապուկն ափերին խփելով՝ սկսեց.

- Լա՛վ մարդ, բախտդ բացե՞մ: Բախտավոր կլինես: Շատ փող կստա-

նաս: Մի փոսիկի թագուհի սիրում է քեզ: Պետական տան մեջ եմ տեսնում: Ու կգնաս արտասահման:

Եվ հանկարծ աչքերը հանդիպեցին անշարժ ստվերի տիրոջ աչքերին: Գնչուհու ռունգերը վախեցած թրթռացին, բիբերը հոնքերի սեւ աղեղների տակ բորբոքվեցին, ինչպես կայծերը քամուց: Կապուկը պահելով թեւքի մեջ՝ նա արագ ու անձայն հետ քաշվեց՝ ծածանելով ճկուն ոտքերին փակչող ու բացվող մետաքսները:

Օրը ավելի ու ավելի արագ էր անցնում կողքով: Օդն էին սղոցում ավտոմոբիլների շչակները: Ջբոսայգու ծառաբների մոտով սահում էին թերթերի ճչան անունները: Ավազի վրայով, լցվելով սեւ ստվերի մեջ՝ դողում էին հապճեպ կողքով անցնողների ստվերները: Ինչ-որ մեկի հինգ կոպեկանոցն արդեն ուզում էր խցկվել դեպի կարկամած կերպարանքը, բայց վախենալով՝ հետ քաշվեց ու գլորվեց գրպանի ճեղքը: Հարեւան նստարանի մոտ թռչկոտեցին կոշիկ մաքրողի արմունկներն ու խոզանակները: Փոշու բյուրավոր գորշ կետեր ապաստարան փնտրելով՝ նստում էին փայլերի, ապակիների, պարկերի վրա:

Շտերերը հանկարծ լսեց իր ազգանունը: Կանչը կրկնվեց նորից ու նորից՝ ստիպելով, որ ստվերն ու տերը մի փոքր շարժվեն: Շտերերի բացված կոպերի առաջ պարզվել էր մի 3/5-երորդանոց ձեռք: Այնքան համառ էր պարզվել, որ Շտերերը զուտ բնազդով պատասխան շարժում արեց ու սեղմեց երեք մատնանի ափը:

- Չճանաչեցիք: Բա ո՞նց: Իսկ ես, ահա, մատներս, ինչպես տեսնում եք, կորցրել եմ, բայց հիշողությունս՝ ոչ: Իհարկե, իհարկե, ձեզնից չորս մահճակ այն կողմ, համակենտրոնացման ճամբարում, գերության մեջ: Թե՞ դա էլ եք մոռացել:

Շտերերը նայում ու չէր ճանաչում: Ութ մատնանի մարդը, երկուսը տանելով ձախ կողմին սեղմած ծանր, թելակար գրքի տակ, եռանդում սեղմում ու բացում էր մնացած մատները:

- Ես դեռ այն ժամանակ էի նկատել՝ խելքով մարդ է, մեր թայը չի: Կարծես թե գերմանացիներից եք, մի գլուխ բարձր: Մեզ համար, իհարկե, դժվար է դատել դրա մասին, ո՛վ ենք մենք՝ բոլորով մի մոծակի չափ խելք ունենք, բայց եթե ոչ խելքով, ապա՝ հոտառությամբ. խելքը թափվում է ձեր աչքերից, սոթ տվիր վրան, էլ վեր չես կենա:

Խոսողը, արձագանքի չհանդիպելով, շփոթվեց ու եռամատով բռնեց գլխարկի հովարը: Բայց գլխարկը հրաժեշտի շարժում անելու փոխարեն, ձախ հոնքից դարձավ աջին, հետո՝ աջից ձախին.

- Ժո՛ւժելեւ: Պրով Ժո՛ւժելեւ: Ձեր շորերը, տեսնում եմ... պարզ ասած, հեչ հագնելու բան չի: Ու գլուխն էլ դնելու տեղ պիտի ունենա: Ցութակը որ ջութակ է, էլի պատյանի մեջ է կենում: Գնա՛նք:

Ու մինչ արեւը կգլորվեր զենիթից, Շտերերը հայտնվեց բնակարան հիշեցնող ինչ-որ տեղ: Եռանդուն Ժուժելեւը, որը, պարզվեց, Կրուտիցկի վալի համայնքատիրություններից մեկի դռնապանն էր, երկար չմտածեց տարածք գտնելու վրա: Սանդուղքի տակ, աստիճանների թեք գծով ծածկված, մի փոքրիկ եռանկյունացող անպատուհան խցիկ կար, որտեղ կախովի կողպեքի պահպանության տակ վառելափայտ էին դարսում: Ժուժելեւի ութ մատները դուրս արին փայտակոճղերն ու ներս արին Շտերերին: Եռանկյունին լցրած կեչու փայտի տեղում հիմքի երկարությամբ մի կարկատած խոտկիր ներքնակ փռվեց, ներքնածիգից կախվեց կարճատես լամպը, իսկ էջերի կցակետին հենվեց փոխսեղան կարճոտն աթոռակը:

- Ահա ձեզ եւ պատյանը,- ցցված եռամատով բեղերն ու ժպիտը սղալելով՝ քմծիծաղեց Ժուժելեւը,- էստեղ որ ուզես չաղանաս էլ, պատերը չեն թողի:

Դրանից հետո մնում էր միայն կենվորի անունը բնակեցնել թելակար գրանցամատյանում: Տնային կառավարչությունում սկզբում հակառակվեցին, հետո դրեցին կնիքը:

Երկար ճանապարհից հոգնած Շտերերը ձգվեց ներքնակին ու մոտեցող քնի միջով լսում էր գլխավերեւը, սանդուղքներով վեր ու վար անող ներբանների ելեւէջներն ու ձայնանցումները: Քարե ստեղնաշարին թխկթխկացող տասնյակ զույգ ներբաններից արթուն լսողությունը կարող էր առանձնացնել վերեւի հարկ՝ տուն շտապող մարդու կտրուկ ստակատոն. դա Իոսիֆ Ստընսկին էր, որի հանդիպումը Շտերերի հետ, ինչպես պարզ կդառնա հետագայում, երկուսի համար էլ բախտորոշ էր:

X

Գրող Իոսիֆ Ստընսկու գրիչը աչքի էր ընկնում արտակարգ անդադրում բնավորությամբ. մեկ ձեռուտ էր ընկնում կարճաժամկետ ֆելիետոնում, մեկ թաղվում էր տնտեսա-սոցիոլոգիական տրակտատի դանդաղ իմաստներում ու փուլերում, չկայացած դարձվածքի հետ սուզվում էր թանաքամանի մեջ, որ երբեք չէր չորանում, գիտեր սահելու, բայց չսայթաքելու արվեստը, հմտորեն հառնում էր յուրաքանչյուր նոր փաստի ու գաղափարի առաջ: Ստընսկու երկու գորշ, ասիմետրիկ կտրվածքով, քմահաճ նեղ շեղությամբ աչքերը ագահաբար իրենց նետում էին ստվերի ու լույսի

տակ. այսօր լույսի պահանջարկ կար, վաղը ստվերի գներն էին բարձրանում, եւ Ստընսկին, թեման կիսատոնի տանելով՝ մաժորից իջեցնում էր մինորի: Նրա գրադարակին դեղնակազմ փարիզյան գրքույկների կողքին կանգնած էր Գուսսերլի ու Մարքսի «Փիլիսոփայության աղքատությունը» չորչորուկ հատորը: Կարճ ասած, Ստընսկին գիտեր ինչպես վարվել այբուբենի հետ: Բարե ու չարակամների ասելով՝ նա օժտված էր անուրանալի գրական շնորհով ու երեւի կարողանար, եթե... բայց արդեն երկու տարի նրա գրիչը, կառչելով այդ ցավալի *եթե*-ից, հայտնվել էր առաջին կարգի ցուցափեղկային գրականության գծից անդին եւ այլեւս մուտք չուներ թմբլիկ հանդեսներն ու անձնական թերթահաշիվ դրույքը: Թափի սովոր՝ նա, որքան էլ տարօրինակ է, համենայնդեպս սայթաքեց կարծես թե անմեղ հոդվածի վրա, որը վերնագրված էր «Հեղափոխական մուրճն ու աճուրդային մուրճիկը»: Խմբագրության պատվերով գրված հոդվածում ապացուցվում էր, որ հենց վերջին զարկն է տալիս ապակին փշրող ու մետաղը կռող հեղափոխության մուրճը, սկսվում է աճուրդային մուրճիկների մանրահատ ու գործնական թխկթխկոցը՝ դուրս կանչելով տարբեր դրվագազարդ տուփերի ու պահարանների պահուստը, շրջանակված կտավները եւ ընդհանրապես կյանքից դուրս նետված բոլոր հարմարավետությունները: Խմբագրական պորտֆելը հյուրընկալություն դրսեւորեց երկու մուրճերի մասին հոդվածի հանդեպ, բայց դիպվածի կամոք սովորականից մի քիչ ավելի այնտեղ մնացած եւ ուշացումով տպագրված հոդվածը հայտնվեց անհրատապության դաշտում, ու դրանից հետո հեղինակին արդեն ոչ մի կերպ չհաջողվեց բռնել տակտը: Որակազրկումն, ինչպես հայտնի է, բերում է եկամուտների քանակազրկման: Ի վերջո, Ստընսկին ստիպված էր կերակրվել «Մեծ մարդկանցով». այդպես էր կոչվում թերթոնների էժանագին շարքը, որը մեկ-երկու տասնյակ էջով լուծում էր ցանկացած հանճարի հարցը: Ստընսկին արագ հմտացավ, ու «մեծերը» պարզապես հորդում էին նրա գրչի տակից՝ վերածվելով դրամանիշերի: Շարքի հեղինակը չէր գերագնահատում իր աշխատանքը: «Այստեղ ողջ է միայն,- ասում էր նա,- այն կենդանի թելը, որով այդ ամենը կարվում է»: Իսկ մաղձոտ պահերին ավելի կտրուկ էր արտահայտվում. «Սատանան տանի, զզվել եմ, թող ճանճերն ուտեն էդ մեծերին, մեծ ծեւացողներին թիվ ու համար չկա, իսկ մեծություն մանրադիտակով էլ չես գտնի»: Եվ անցնում էր հերթական թերթոնին, որը սովորաբար սկսվում էր այսպես. «Դա այն դարաշրջանում էր, երբ առեւտրական կապիտալը...» կամ «Կապիտալը, որին նեղ էր գալիս Եվրոպա մայրցամաքը, վաղ թե ուշ պետք է բացահայտեր Ամերիկան:

Իսկ վենետիկցի...» կամ «Սոկրատեսը, տատմոր որդին, որը պատկանում էր հին Աթենքի մանրբուրժուական ինտելիգենցիային...»:

Մինչեւ սանդղատակի բնակչի հետ հանդիպումը վերեւի հարկի բնակիչը լրիվ պատահական հանդիպեց տնային գրանցամատյանի գրառմանը, որը նրա հայացքը սկզբում գրավեց տարօրինակ ձեռագրով, հետո՝ նաեւ մի ուրիշ տարօրինակությամբ. սրատառ «Շտերեր Մաքսիմիլիանից» աջ սյունակում արձանագրված էր. 34 - ամուրի: «Որտեղից է ժամանել» սյունակում նշվում էր՝ Ապագայից: Ճիշտ է, ինչ-որ մեկի ջանադիր, բայց անհմուտ ձեռքը, որի պատկանելությունը Ստընսկին, ի դեպ, անմիջապես գուշակեց, «Ա»-ն մեծատառ էր դարձրել ու ձախից կպցրել մի փոքրիկ «գ». ստացվել էր գ. Ապագայից: Ստընսկին, որը վերցրել էր թելակար գիրքը գավառից եկած ու ժամանակավորապես հյուրընկալվող ընկերոջ համար, Ժուժելեւին վերադարձնելիս, զգույշ, որ չանհանգստացնի, հարցրեց.

- Ասեք, Պրո՛վ, այդ որ գավառում է Ապագա գյուղը, կարծես թե չեմ հիշում:

Ժուժելեւի աչքերը նայում էին քմծիծաղի միջով.

- Գուցե եւ գյուղ էլ չի, բայց ի՞նչ անես, կարգն է այդպես՝ որ միլիցիայում բառերից չկախվեն: Համ էլ եթե մարդու ունեցած-չունեցածից մենակ խելքն է մնացել, պետք չի նրան հարցուփորձով անհանգստացնել. էդտեղ առաջ փայտ էր, իսկ սա մարդ է, փայտը խառնշտորի, բայց մարդուն...

Բայց Ստընսկին, որը պարզաբանումներ էր ստացել տարօրինակ գրառման միայն մեկ տառի վերաբերյալ, որոշեց կռահել նաեւ մնացած նշանները: Նույն օրն ու հաջորդ առավոտյան, մտնելով շքամուտք, նա ուշադիր զննեց սանդղատակի դռան փակ, ասես շեղադիր ծալովի կեսերը: Փեղկերն անշարժ էին, ու դեղնավուն ներկած տախտակներից այն կողմ՝ ոչ մի ձայն: Երեկոյան, երբ, ինչպես ասում էր Ստընսկին, գայլերը պետք է օգտվեն նրանից, որ իրենց չեն տարբերում շներից, նա սովորություն ուներ մեկնելու սրտային գործերով (դարձյալ Ստընսկու արտահայտությունն է): Ծրթունքներից արձակվող ուրախ դայլայլով, մերակում ծաղիկ հագցրած՝ սանդուղքով սահում էր ներքեւ, երբ հանկարծ եռանկյուն սանդղատակից աղմուկ լսվեց: Բազրիքի վրայով կռանալով՝ Ստընսկին տեսավ, որ շեղադիր դուռը բացեց փեղկերն, ու ներսից, ասես զսպանակի հրումներով, առաջ եկավ ու շտկվեց ուղղահայաց, բարձրահասակ, լայն ուսերով մի կերպարանք: Գրողը ավելի ցած կախվեց՝ փորձելով աչքերով պատռել աղջամուղը, ու ծաղկի ողորկ ցողունը, նույնպես կռանալով, դուրս թռավ մերակից եւ ընկավ բացվածքը.

- Կներե՞ք: Մի անհանգստացեք, ես կվերցնեմ:

Բայց ծալովի դռնից դուրս եկած մարդը չէր էլ պատրաստվում կռանալ, որ բարձրացնի ծաղիկը: Առաջին ձայնը, որ լսեց ներքեւ վազած Ստընսկին, իր հետաքրքրասեր ծաղկի խշրտոցն էր, որը կիսախավարում հենց ինքն էլ ոտքի տակ էր տվել: Նոր կենվորի դեմքը նրա աչքերից մի արշինի վրա էր եւ այնպես ապշեցրեց Ստընսկուն, որ ձեռքը միանգամից չգտավ գլխարկի ճանապարհը, իսկ լեզուն՝ բառերի.

- Շատ ուրախ եմ հանդիպման համար: Իոսիֆ Ստընսկի: Գրող: Անհասկանալի՞ է. դա «գրողի» մեր «իզվեստնյակովյան» հապավումն է: Քաղաքացի գրող Տընյակի կամ հարգարժան մետր Սիլինսկիի փոխարեն պարզապես «հե՛յ, գրող», ու գալիս են, պատկերացրեք, «գրող» «գրող»-ի ետեւից. հինգշաբթի օրերը ամբողջ գրական «իզվեստնյակն» ինձ մոտ է: Դուք, տեսնում եմ, վաղուց չեք եղել Մոսկվայում. Ի՞նչ է, փոխվե՞լ է ծերուկը, հա՞:

- Այո՛, 1957-ից: Եթե կուզեք, փոխվել է, այո՛:

Պատասխանն այնքան տարօրինակ էր, որ Ստընսկին մի քայլ հետ քաշվեց.

- Կներեք, բայց չէ՞ որ մեզ մոտ հիմա միայն...

Դրանից հետո խոսակցությունը, աստիճանները չլքելով, շարունակվեց եւս քսան րոպե: Խնդրողաբար ափը Շտերերի ափին կցած Ստընսկու վերջին արտահայտությունն էր.

- Հաջորդ հինգշաբթի սպասում եմ: Ո՛չ: Ո՛չ: Անպայմա՛ն: Ախր մարդու ուղեղը հալվում է: Ես ինքս կգամ ձեր ետեւից եւ «կամա թե ակամա», հա՛-հա՛: Թե չէ կհարձակվեն ձեզ վրա «գրողները»:

Հասնելով ժամադրավայր՝ ալեկոծված Ստընսկին «մտածում էի, որ արդեն...»-ին ոչինչ չպատասխանեց: «Առարկան», որ այս անգամ դեղին մազերով բանաստեղծուհի-անառարկայական էր, ինչպես եւ վայել է կրքի առարկային, վաղուց էր մտածել իր հագուկապը, ռեպլիկները, աչքերի կկոցվածքն ու համբույրները: Բայց ամեն ինչ մի տեսակ համբույրների կողքով էր անցնում, եւ նա ստիպված էր աչքերը ոչ թե կկոցել, այլ, ավելի շուտ, չռել: Ստընսկին, որի ազգանունը երբեւէ վիրավորական զուգորդում չէր առաջացրել կանանց շրջանում, այս անգամ մի տեսակ հուզախռով-բացակա էր: Մերակից բռնած՝ նյարդային քաշքշում էր պիջակի դարձածալը՝ ասես փորձելով իրեն նետել առաջ կամ վեր.

- Կարծես թե հանդիպել եմ, նույնիսկ սարսափելի է ասել... նրանցից մեկին, որոնց մասին թխում եմ իմ թերթոնները: Անպատմելի է, անհնար

է բառերով: Հիմա գիտեմ, թե ինչ է նշանակում հայտնվել Գուլիվերի ափին. կսեղմի մատներն ու՝ փը՛ստ: Արտաքուստ նման է յուրատեսակ մունլայթֆլիտերի, բայց...

- Լսե՛ք, Հովսե՛փ Անսքանչելի, եթե եկել եք կնոջ մոտ, որը ձեզ թույլ է տվել tête à tête... *[դեմ առ դեմ - ֆր.]:*

- Tête à tête. ճիշտ այդպես, դա իմ առաջին tête à tête-ն էր կյանքում, գլուխ գլխի, միտք մտքի: Սովորաբար այդ բոլոր համբույրային հանդիպումները tête-ը tête-ից միլիոն վերստի վրա են:

- Երախտամո՛ռ, դեռ քմահաճությո՛ւն է անում: Մո՛տ նստեք:

- Կիսախավարում հասցրի տարբերել նրա բառերը, բայց ոչ դեմքը: Գունատ թվաց, բայց չգիտես ինչու հիշեցի...

- Իսկ հիմա գրկեք մեջքս:

- Ախ, հա՛, մեջքը, իսկ ինչու ոչ Մելպոմենեին: Ու ես համենայնդեպս հիշեցի Դանտեի դեմքի մասին լեգենդը՝ վառված եւ՛ արեւից, եւ՛ դժոխքի պարուսակների հրից: Ո՛չ, սրա նմաններին երբեք չեն խղճում ու պետք չէ խղճալ. չէ՞ որ նրանք, մեկ է չեն նկատում խղճահարությունը, երդվում եմ իմ թերթոնների շարքով ու տողացի հոնորարով: Պետք է քսի տալ «գրողներին» ու... քառատել: Մենք կնգվենք ոտնաձայրերին, այո՛, բայց թող նա էլ գոնե մի անգամ խոնարհվի, գոնե մի անգամ:

XI

Դեռեւս հինգշաբթիի նախօրեին Ժուժելեւին խստագույնս պատվիրվեց հետեւել Շտերերի կացարանին: Ստընսկին սառչում էր զուտ մտքից, որ իր երեկոյի «մեխը» կարող է որեւէ կերպ խույս տալ մեխությունից:

Իննին մոտ «իզվեստնյակը» կամաց-կամաց սկսեց հավաքվել: Վերին հարկի մեծ, սպիտակեցրած պատերով սենյակը բացել էր ոչ միայն դուռը, այլեւ երկու բարձր պատուհանները, որոնք իրենց փեղկերը հյուրընկալ պարզել էին մոսկովյան լույսերի շողշողուն կետագծերին ընդառաջ: Արդեն կես ժամից հավաքվածների գլխավերեւում լողում էր կապտագորշ ծուխն ու ականջից ականջ էր պտտվում ինչ-որ մեկի՝ ուղեղ քերծող էպիգրամը: Հյուրերի թիկունքում, պատին ծեփված, ապակու տակից՝ ածուխի ու մատիտի շրջանակված սեղմումներ ու հարվածներ: Անկյունում, իրար մոտեցած գլուխներից վեր գլուխկոնձի էր տալիս վերջին քաղաքական անեկդոտը: Ուղիղ ոտքերով նստարաններին ու աթոռակներին նստոտած մոսկովյան «իզվեստնյակի» մեջ կարելի էր տեսնել նորածեւ պոետին՝ սառը կրծքում քնարական շիկացում, գիտնական լեզվաբանին, որը բերան

չէր բացում, ու որի մասին ասում էին՝ «լռում է քսանվեց լեզուներով», նշանավոր կինոռեժիսորին, որին շարժումների փոխարկվող միտքը դարձնում էր վեցձեռնանի Վիշնու, երկարադեմ վիպասանին, զանկապանների մեջ սեղմած ոտքերով, որի այտամկաններին ցնցվում էր ջղակծկումը, իսկ դարձվածքներում՝ «ահա այսպես»-ը, մեծավաստակ քննադատի ճերմակ մազափնջերով մսոտ ճակատը, անառարկայականի խոր դեկոլտեն, հրատարակչի կլորացող, ասես աչքերը ծոծրակին կրող, խնամքով սանրած ճաղատը, ծաղրանկարչի՝ թեզանիքի տակից կորված նյարդային դաստակը: Գդալները դադարեցրին իրենց շուրջպարը բաժակներում: Քնարերգուն վեր կացավ ու սառը կրծքի վարդակապը քաշքշելով՝ սվսվացրեց.

- Ինձ այստեղ խնդրել էին կարդալ այս...

Բայց Ստընսկին, դուրս գալով սենյակի կենտրոն, ձեռքի կարճ շարժումով հյուրերի աչքերը քնարերգուից դարձրեց մարդուն, որի բարձր ու անշարժ թիկունքն ուրվագծվում էր բաց պատուհանի սեւ ուղղանկյան մեջ.

- Կներե՛ք: Այս երեկոն մենք կնվիրենք մի մարդու, որը կարողացել է հաղթել «այսօր» բառին: Թանկագին գրողնե՛ր, քաղաքացի Շտերերը՝ ժամանակահատի հեղինակը, մեզ կպատմի այն ամենը, ինչ հնարավոր կհամարի պատմել ժամանակի միջով իր առաջին վազքընթացի մասին:

Իր անունը լսելով՝ Շտերերը դեմքը դարձրեց հավաքվածների կողմը. նա դեռ կանգնած էր իր տեղում՝ ձեռքերով լուսամուտագոգի ելուստը բռնած, թիկունքում երեւում էին քաղաքի դեղին ու կապույտ լույսերը: Բոլորը լռեցին: Դադար:

Մեկի դատարկ բաժակում սրտաճմլիկ, նիկելե հեծկլտոցով զնգաց գդալը: Շտերերը սկսեց.

- Ժամանակը հատող մեքենայի ամենակոպիտ սխեման պահանջում է հատուկ գիտելիքներ, որոնք հույս չունեմ գտնել այստեղ՝ ձեր շրջապատում: Ուստի այն, ինչ կշարադրեմ, շարադրանքի առարկային նման է լինելու ոչ ավելի (օգտվելով Սպինոզայի բառերից), քան... սովորական շունը Շան համաստեղությանը: Գիտությունը, որ նախկինում ժամանակը կտրուկ բաժանել էր տարածությունից, հիմա դրանք միավորում է ինչ-որ միասնական Space-Time-ում *[Ժամանակ-տարածություն - անգլ.]:* Իմ ողջ խնդիրն, ըստ էության, այն էր, որ անցնեի դեռեւս Time-ը Space-ից բաժանող ենթամնայով, այդ կամրջով, որը հազարամյակից հազարամյակ գցված է անդունդի վրայով: Եթե Ռիման-Մինկովսկին իր աշխատանքներում գտնում է այսպես կոչված համաշխարհային կետը չորս կոորդինատների խաչվածքում՝ x + y + z + t, ապա ես ձգտում եմ կոորդինատների վերա-

կոորդինատավորման, ասենք այսպես. x + t + y + z: Չէ՞ որ սանդուղքի աստիճաններով բարձրանալով այստեղ՝ դուք տարածության մեջ էիք մտցնում աստիճանականությունը, այսինքն ժամանակի որոշակի նշան: Հակառակ ուղղությամբ գնալով, մտարկելով ժամանակի հասկացության տարածական նշանները՝ մենք...

Անկյունում, ածուխի գծերի տակ, ինչ-որ մեկի ականջը կռացավ շշուկի վրա, երկտողեր անցան ձեռքից ձեռք: Շտերերը հանգիստ շարժումով ծայրեծայր հայեց լսարանը.

- Արդեն անհասկանալի՞ է: Այո՞: Կփորձեմ՝ ավելի պարզ: Ժամանակը վայրկյանների շղթա չէ, որը ատամնանիվներով ձգում են ժամացույցի ծանրաքարերը: Ժամանակը, այսպես կասեի, վայրկյանների քամի է, որ խփվում է իրերին եւ դրանք փքելով՝ իրար ետեւից վարում դեպի ոչինչը: Ես կարծում էի, որ այդ քամու արագությունը *անհավասարաչափ* է: Դրա հետ կարելի է վիճել: Եվ առաջինը ես սկսեցի վիճել ինձ հետ (մտածողությունը հենց ինքդ քեզ հետ վեճն է), բայց ինչպե՞ս չափել ժամանակի հոսքի ժամանակը. դրա համար պետք է տեսնել *ուրիշ* ժամանակ, հինգերորդ t նշանով բարդացնել Ռիմանի քառանիշ բանաձեւը: Նորի՞ց անհասկանալի է:

Այս անգամ հարցը լուծվեց լռության մեջ: Երկտողերն անշարժացել էին:

- Բայց ինչպե՞ս ենք մենք վերաբերվում... ավելի ճիշտ, ինչպես ենք շարժվում տեւողությունների այդ չդադարող քամու մեջ: Միանգամայն պարզ է՝ ինչպես. ինչպես հողմացույցերը: Քամին մեզ որ կողմը դարձնում է, այնտեղ էլ ուղղվում է մեր գիտակցությունը: Ժամանակի ընկալումը գծային է, իսկ ինքը ժամանակը՝ շառավղաձեւ: Բայց ես կփորձեմ շրջանցել եզրույթները, ձեզ հետ կփորձեմ շրջանցել բոլոր անկյուններն ու բանաձեւերի մարդակները: Մենք ժամանակը կտրում ենք վայրկյանների քամիով, բայց չէ՞ որ կարելի է նաեւ լողալ շեղաձեւ առագաստով, t տրամագծի լայնքով, ամենակարճ ճանապարհով, ուղիղ, շրջանցելով t-չափումները: Դե, ինչպես ավելի պարզ ասեմ...

Շտերերի աչքերը, օրինակ փնտրելով, վազեցին պատերի վրայով ու փակելով շրջանը՝ վերադարձան պատուհանի խորշին: Խոսողի ձեռքը հանկարծ ապակե փեղկերի ետեւից ձգվեց դեպի գիշերը: Ինչ-որ մեկը վեր կացավ, մի քանի աթոռակ մոտ քաշվեցին այդ շարժմանը:

- Այ այնտեղ, լույսերի մեջ,- բառերի քայլն արագացնելով՝ շարունակեց Շտերերը,- սովորական, ոլորաններով քաղաքը կտրող գետն է. դուք բոլորդ գիտեք, որ այնտեղ, մեզնից մի քանի կիլոմետրի վրա այդ ոլորքը

թափվում է մի ուրիշ ոլորքի մեջ եւ այդ վերջինը՝ ծովը: Բայց եթե գետը բռնենք երկու ծայրերից (ես խոսում եմ հոսքի մասին), ձգենք-ուղղենք հունը, ապա առանց օժանդակ ոլորանի կձգվի մինչեւ ծով ու կսկսի թափվել ոչ թե ծովեզերքի, այլ անեզրության մեջ: Ուզում եմ ասել, որ ժամանակի հոսքը ոլորուն է, ինչպես գետերի հոսանքը, եւ այն ուղղելով՝ կարող ենք A կետը տեղափոխել B կետ, այսինքն այսօրից թռչել վաղը:

Ես կանգ չեմ առնի նրա վրա, թե մեքենան ինչպես էր սկզբում կառուցվում իմ գլխում, տարին տարվա ետեւից. անիմաստ է նկարագրել նաեւ, թե այն ինչպես հանեցի իմ ճակատի տակից եւ առա մատներիս մեջ: Իհարկե, դա հեշտ չէր. դիմադրում էր առարկայացմանը, տեւական պայքար եղավ, եւ ես անկարող էի տասը րոպեի մեջ տեղավորել այն, ինչ ձգվել էր երկու տասնյակ տարի: Դրա համար ստիպված կլինեի դիմել իմ մեքենային, սակայն մեքենան ջարդվել էր՝ խփվելով... բայց դրա մասին՝ հետո: Տեւողությունների ծովում նույնպես հնարավոր են նավաբեկություններ: Բայց վաղ թե ուշ ես մի անգամ էլ կփորձեմ «ուշ»-ը նետել «վաղ»-ի մեջ եւ «վաղ»-ը՝ «ուշ»-ի:

Խոսքը մի պահ ընդհատվեց: Վիպասանը կռացավ հարեւանի կողմը.

- Նկատե՞լ եք, ճակատի ոսկորը ասես լապտերի կափարիչ լինի. բարձրացրիր՝ աչքերդ կցավեն:

Հարեւանն ուզում էր պատասխանել, բայց Ճտերերն ընդհատեց դադարը.

- Առաջինը Լոբաչեւսկին է նկատել, որ AB գիծը միաժամանակ եւ BA է, այսինքն՝ երկրաչափական ճառագայթ, որը կարող է տարվել ինչպես A-ից B, այնպես էլ B-ից A: Հետեւաբար, երկու կետերի միջեւ հնարավոր է ոչ միայն մեկ ուղիղ տանել, հետեւաբար... Բայց ժամանակն է շարժվել ժամանակի մեջ, ինչպես ձեզ խոստացել է Ստընսկին:

Ես ինձ մեկնարկ տվեցի մի ամառային գիշեր: Սենյակիս պատուհանը բաց էր, ինչպես հիմա, եւ ինձ համար դարաշրջանից դարաշրջան սլացող վագոնի պատուհան պիտի դառնար: Ես չէի կարող ընտրություն անել, բայց արդեն մինչեւ մեքենայի գործարկումը հասկանում էի տարածական կոորդինատներից մեկի անբարենպաստ լինելը: Հորիզոնը համարյա հատված էր հակահրդեհային պատով, միայն փեղկի ձախ, ապակեպատ ծալվածքից էր երեւում փողոցի մի կարճ հատված ու կեղտոտ ճակատը՝ երեք անցքերով, իսկ դրանց ետեւից՝ մի քանի տանիք, ու վերջ: Պատահական չէի, այսպես ասած, գիշերային գնացքով մեկնում. մութն ու երազները մեկնարկը պաշտպանում էին անկոչ աչքերից եւ անկոչ ականջների

միջամտությունից այն ձայներին, որ անցնելիս հեշտությամբ կարող էր արձակել օդը: Զգուշության համար նույնիսկ լույսը հանգցրի ու մեկնարկի ժամանակ օգտվեցի սովորական մոմից, որը կարելի է հանգցնել շնչով, այն դեպքում, երբ անջատիչը մեքենայից վեց-յոթ քայլ հեռու էր:

Ես պայմանագրված էի, չեմ թաքցնի ձեզնից. դեպի անցյալ մի քանի երթուղի էի վաճառել: Պետք էր ոչ մեծ ցատկ անել՝ հինգ-վեց տարի հետ, ստուգել ժամանակահատի ընթացքը, կարգավորիչ մեխանիզմների ճշգրտությունն ու մեքենան նորից «մատուցել» նույն ամսաթվին: Մտածում էի առավոտյան կողմ վերադառնալ: Բայց սարքի մեջ ներառվելուց առաջ, վերջին պահին, տատանվեցի: Նյութերը, որոնցից պատրաստվել էր ժամանակահատը, բնավ բարձր որակի չէին. Որտեղի՞ց գտնեի: Չստուգված բանաձեւս միանգամից նետել անցյա՞լ, այսինքն ժամանակի ընթացքին, վայրկյանների քամուն հակառա՞կ. դա կարող էր բերել մեքենայի վնասվելուն, կամ նույնիսկ... ես ուզում էի ազնիվ լինել մարդկանց հանդեպ, բայց մեքենայի հանդեպ էլ անազնիվ չէի ուզում լինել: Կարճ երկմտանքից հետո որոշում կայացրի ու փակեցի էլեկտրական շղթան: Դուք պետք է իմանաք, որ իմ սարքի կարեւորագույն մասը սարդոստայնի պես բարակ պարույրներից հյուսված օդագույն ձագարն է: Բավական է միայն գլուխը մտցնել այդ գլխարկածեւ, վերեւն անցք ունեցող ձագարի մեջ, տվիչները՝ քունքերին եւ... Մեր ուղեղը, ինչպես հայտնի է, կաթիլահեղուկային է, եւ իմ ձագարը, որ վերալցնում է այն, ավելի ճիշտ՝ նրա մեջ տարածությունից ժամանակի փոխված մտածողությունը... դա այնքան էլ հեշտ չէր. չէ՞ որ զգացողությունների համալիրը պահված է ուղեղային երեք թաղանթների տակ, գումարած ոսկրե պատյանը. պետք էր մաքուր t-ի մեջ դատարկել այդ ամբողջը, բարձրացնել ճակատային ոսկորը սովորական լապտերի կափարիչի պես ու ճանապարհ տալ լույսին: (Զանկապաններն ավելի ամուր սեղմվեցին իրար): Ես միացրի էլեկտրոնային հողմն, ու ժամանակը սկսեց ներս քաշել ինձ՝ նախ ուղեղիցս ձգելով, ուղեղս, իր հերթին, պտտվելով ձագարի միջով, նյարդաթելերից քաշեց մարմինս: Տառապագին ճզմվելով ու տափակելով՝ մարմինս չէր ուզում անցնել. թվում էր՝ էլի մի քիչ, ու պրկված նյարդաթելերը կկտրվեն՝ բաց թողնելով ուղեղից կախված բալաստը: Ես շիթացող մատներս չէի քաշում տվիչներից ու կարգավորիչներից,- ու տեսա ինձ... այսինքն ես չտեսա ինձ: Պատուհանի քառակուսուց այն կողմ ինչ-որ ֆանտասմագորիկ բան էր կատարվում. Ասես մի հսկա լուսատու մեկ բռնկվում, մեկ մարում էր՝ պատուհանը նետելով մերթ լույսի, մերթ խավարի մեջ: Պատուհանի այս կողմում նույնպես ինչ-որ բան

էր կատարվում. ինչ-որ բան էր ճոճվում ուղղահայաց, մեկ մոտեցող, մեկ հեռացող ինչ-որ ուրվագիծ էր երեւում ու ընդհատուն ոտնաձայն էր լսվում:

Ըստ երեւույթին միանգամից սահմանային արագության էի անցել. շուրջս անձայն թրթռում էր մեքենան, ժամանակից անտեսանելի դարձած, լրիվ առաջ մղված ձախ ձեռքիս ցնցվում էր լծակը: Ձգեցի ինձ, ու պատկերը պատուհանի ետեւում հստակվեց. ես տեսա արեւը, որ դեղին հրթիռի պես վեր էր թռչում իրար վրա կիտված տանիքների ետեւից եւ ալկարմիր մայրամուտի փայլով կորածեւ իջնում հակահրդեհային պատից այն կողմ: Եվ մինչ նրա ցոլքը կհասցներ անհետանալ խավարով բռնված ցանցաթաղանթից, նորից նույն տանիքներից արեւային հրթիռի պես խոյացավ դեպի զենիթ, եւ նորից ու նորից՝ ֆոսֆորադեղին գլխով խփվելով խավարին, լուցկու պես կարճ բռնկման պես շողացնելով օրերի կրակները: Եվ անմիջապես էլ մեքենայիս մեջ օդը ծակող ճպպացող ձայն հայտնվեց: Իհարկե, սխալ էի արել՝ միանգամից առավելագույն արագություն տալով: Պետք էր զգոն լինել. մի քիչ հետ քաշեցի լծակն, եւ արեւն անմիջապես դանդաղեցրեց թռիչքը. հիմա այն նման էր թենիսի գնդակի, որը հակահրդեհային պատի ցանցի վրայով նետում էին արեւելք ու արեւմուտք: Այդ տարօրինակ տեսարանով տարված՝ մոռացել էի սենյակում կատարվողի մասին: Երբ ժամանակահատի ընթացքը կայունացավ, վերջապես ուշադրություն դարձրի նաեւ դռանն ու հատակին: Ծիծաղելի ու մի քիչ խղճուկ տեսարան էր: Չնայած սովորական խուլ ու մի փեղկանի դուռ էր, բայց հիմա շքամուտքի պտտվող դռան տպավորություն էր թողնում, համենայնդեպս, պորտֆելով մարդը կամ մարդիկ, չէ՛, մարդը, ոչ մի կերպ չէր կարող դուրս պրծնել նրա փեղկերից: Նա դուրս էր դառնում եւ անմիջապես, ասես ինչ-որ բան էր մոռացել, վերադառնում էր ներս, վրայից պոկում ամեն ինչ, մտնում ծածկոցի տակ, ու կրկին հիշելով՝ թռչում էր հագուստի մեջ ու անհետանում դռան ետեւում, որ անմիջապես էլ հայտնվի: Եվ այդ ամենը՝ անընդհատ բռնկվող արեւի ու էլեկտրական թելի ներքո: Ամսաթվերի այդ խառնաշփոթը, կրկնում եմ, անսովոր լինելու պատճառով ինձ մի քիչ ծիծաղելի էր թվում, մեքենայիս կատաղի տեմպը ընդլայնում էր սիրտս, նորից մի քիչ առաջ մղեցի արագության լծակը, եւ այստեղ կատարվեց անսպասելին. արեւը, որ ասես ուժեղ հարվածից դուրս էր թռել տանիքների ետեւից, հանկարծ հետ նետվեց (արեւմուտքը վերադարձնում էր գնդակը), եւ հորիզոնից այն կողմ ամեն ինչ, ասես ինչ-որ պատի խփվելով, կանգ առավ ու անշարժացավ. Վայրկյանների ժապավենը, որ ցնցումներով սահում էր իմ մեքենայի միջով, անշարժացավ ինչ-

որ վայրկյանի, վայրկյանի ինչ-որ տասնորդականի վրա, եւ՝ ո՛չ դեպի ապագա, ո՛չ դեպի անցյալ: Հեռվում, ինչ-որ տեղ արեւի ուղեծիրը հատվել էր հավերժության հետ: Բը՛ռռ, նողկալիագույն բառ է «հավերժությունը» նրա համար, ով այն տեսել է ոչ թե գրքերում, այլ... Օդը մոխրագորշ էր, ինչպես լինում է լուսաբացից առաջ: Տանիքների ուրվագծերը, փողոցի շեղ ընթացքը խրվել էին անշարժության մեջ, ինչպես փորագրատախտակին: Մեքենան լռում էր: Չլուսացող լուսաբացը, որ մնացել էր գիշերվա ու ցերեկվա արանքում, չէր լքում մեռյալ կետը: Միայն հիմա կարող էի տեսնել փոշոտ պատուհանին սեղմված քաղաքային խղճուկ պեյզաժի բոլոր մանրագույն մանրամասները. փորագիր շենքի պատին, սալահատակի քարե ծփանքի վրա արտացոլվել էր կապույտ, ոսկեշրջանակ ցուցանակի ծայրը. կապույտով՝ սպիտակին՝ «...ԱՐԱՆ», մնացածը կտրված էր հարեւան շենքի ելուստով. դարպասատակի խոռոչը, որն իր կիսաածկի տակ թաքցնում էր սեւ, անշարժ ուրվագծով ստվերը. խոռոչի գլխին՝ երկաթե սեղմակում՝ կարմիր դրոշը, օդում քարացած քամին քշտել էր նրա ալ փեշը, եւ կտորը, ասես գալվանապլաստիկայով օդում նկարված, անշարժացել էր փողոցի վրա: Ուղեսյունիկի կողքին՝ շան բարձրացրած ետեւի ոտքը. ժամանակի սպազմը անշարժացրել էր նրան: Փողոցը սպառելով՝ հայացքս դարձրի սենյակի ներսին: Եվ ինչ տեսա, ինձ ստիպեց... ո՛չ, ճիշտ չեմ ասում, ցնցվելու համար գոնե մեկ տասնորդական վայրկյան է հարկավոր, բայց ժամանակը, քարանալով, խլել էր ամեն ինչ՝ մինչեւ նվազագույն ակնթարթի ամենափոքր մասնիկը: Եվ այսպես, ուղիղ իմ առաջ, մահճակալին, ափերով ներքնակին հենված եւ վախից վառվող կլոր աչքերը հայացքիս ընդառաջ մղած՝ նստել էր մի մարդ:

Ես նայում էի ասես մոմից դուրս պրծած սարսափի տիկնիկին, եւ մեռյալ աշխարհի ստերեոսկոպիկ անշարժությունը թափանցում էր իմ մեջ: Երկա՞ր տեւեց՝ չեմ կարող ասել, որովհետեւ, հասկացեք, դա տեւողություններից դուրս էր: Մտքերս, որ իներցիայով շարունակում էին սահել մոմի միջով, աստիճանաբար սառչում ու կանգ էին առնում, ինչպես ամպերը՝ անհողմության ժամանակ: Թուլացող ջանքով, այն գերմարդկային լարումով, որ լինում է միայն մղձավանջներում, ես առաջ մղեցի լծակը, ձգվեցի-հասա մյուսին, ու ժամանակահատը, պատռելով վայրկյանների ավազը, պոկվեց ծանծաղուտից: Արագ պտտվող անվի ճաղերի պես միաձուլված օրերը հիմա հատ-հատ տեսանելի դարձան: Ապագան մատչելի էր դառնում դիտարկման համար: Մեր հարյուրամյակի երեսունական թվականների վրա բացվող պատուհան:

- Եվ ի՞նչ էր այնտեղ՝ պատուհանից այն կո՞ղմ,- խոսակցությանը խառնվեց հետաքրքրասիրությունից թրթռացող կանացի ձայնը:

Շտերերը շփոթված ժպտաց.

- Գիտե՞ք ինչ, ժամանակի մեքենան իմ ուշադրությունը շեղում էր բուն ժամանակից: Ինձ համար շատ տհաճ է, որ չեմ կարողանա... բայց շիկացած հնոցի առաջ կանգնած մեքենավարը ժամանակ չունի իր մեքենային քսվող բնապատկերների համար: Ու ես էլ ոչ մի վայրկյան չունեի ժամանակի համար. ներկայից տասը տարի այն կողմ, ընդհատումներով աշխատող մեքենայով, ընթացքում թերությունները վերացնելով՝ ես չէի կարող...

- Ուրեմն,- կտրուկ աթոռակի տակ քաշվեցին հետաքրքրված զանկապանները,- ուրեմն աչքերը, ձեր կարծիքով, ակնակապեր են ակնհայտի համար: Բայց եթե այն չի պատվել, կներեք, ոչ մի փաստով, եթե կարողացել եք ապագայում չտեսնել ոչինչ, բացի ամայի դաշտից, ձեր մեքենայի վագքուղուց, եթե ոչինչ չունեք առաջարկելու այստեղ հավաքված ընկերներին, ապա չեմ հասկանում, ճիշտն ասած...

Շտերերը ձեռքը տարավ ճակատին.

- Ամայի՞: Սպասե՛ք, ինչ-որ բան համենայնդեպս, հիշում եմ, այո՛, այո՛:

Լռության օղակը նորից փակվեց բառերի շուրջը.

- Ահա, օրինակ, դա տեղի ունեցավ հենց այն ժամանակ, երբ ոչինչ տեղի չէր ունենում: Նկատի ունեմ մեքենայի աշխատանքի դադարներից մեկը: Պետք չէ վերադառնալ զգացողություններին, ես դրա մասին արդեն պատմել եմ: Նկարագրեմ միայն մի փաստ: Այս անգամ վայրկյանների շղթան կտրվեց արեւոտ օրվա կեսին: Արեւի ճառագայթը, 300000 կիլոմետր թափավազքով խփվելով սյանը, վերածվեց 0-ի: Փոշու հատիկները շարժվում էին ճառագայթի մեջ. թվում էր՝ օդը լցված է ոսկե ճանճերով: Լուսաբծի տակ թերթ էր փռված (այն թողած մարդը չկար): 1951 թվականի հուլիսի 11-ի «Իզվեստիայի» համարն էր: Հավերժություն տեւած ակնթարթը, կամքիս հակառակ, վերնագրից մինչեւ վերջին տառը ուղեղիս մեջ խտացրեց աչքիս առաջ բացված էջը, եւ եթե կուզեք...

- Կրճատո՛ւմ,- բառերի ճանապարհը փակեց Ստընսկու կտրուկ գոչյունը,- մի՞թե չեք տեսնում, որ գրիչների շրջապատում եք: Այդ համարը հինգ կոպեկից շատ թանկ արժե: Հետո՞: Մեքենան աշխատեց. փոշեհատիկները նորից պտտվեցին ճառագայթի մեջ: Լսում ենք:

- Բայց թույլ տվեք...

- Ինչո՞ւ թույլ չեք տալիս...

- Հենց այն ժամանակ, երբ...

Աթոռակները զայրացած իրար անցան: Անկյունում շրշաց. «Հասկանում ենք...»:

Ստընսկին գունատվեց.

- Ոչ մի գրող էլ չեք հասկանում, գրղնե՛ր, ու ոչ մի «հենց» էլ չեք ստանա: Եվ ընդհանրապես, թանկագին հյուրե՛ր, լո՛ւռ, Ծտերերը շարունակում է:

- Եթե... կրճատումներով, ապա քիչ է մնացել: Քանի որ իմ ուղերթը փորձնական էր, ժամանակն էր վերադառնալ: Բայց մեքենան այնքան էր անսարքացել, որ վախենում էի կտրուկ շրջադարձից, որը սպառնում էր վթարով, ու շարունակում էի տեղի տալ ժամանակի հոսքին, որն ինձ ավելի ու ավելի էր տանում դեպի ապագան: Անկայուն մեքենան հավասարակշռելու մեջ խորացած՝ միանգամից չնկատեցի, որ անդրպատուհանյան տարածությունը կրճատվում է: Այսպես, մի անգամ պատահմամբ աչքս ընկավ վեր հառնող քարե եւ ապակե պատին (ըստ երեւույթին, երբ շրջվել էի, մի նոր հսկա շենք հասցրել էր ոտքի տակ տալ երեք հարկանին՝ իր «...ԱՐԱՆ»-ով ու դրոշի տակի խոռոչով): Մյուս անգամ (գնում էի արագացված ընթացքով) հակահրդեհային պատի աղյուսե վարագույրը աչքիս առաջ սկսեց արագ հեռանալ դեպի անցյալ, իսկ նրա ետեւից հայտնվեց... բայց դա էական չէ: Միայն հիմա, հեռու ետեւում թողնելով անցյալը, սկսել էի զգալ ողջ անկատարությունը, անիրացվածությունն ու անշոշափելիությունը կանխագործված ժամանակի, որի ակնթարթային ծակոտիների մեջ հոսելով՝ ավելի ու ավելի էի խորանում ապագայի ետեւից: Իմ ապագան, արհեստականորեն աճեցված ու ժամկետից առաջ վեր ձգված բույսի պես, հիվանդագին բարակ էր, հույլ ու դժգույն: Ամեն ինչ, բացարձակ ամեն ինչ... դե, օրինակ, կարմիր դրոշը, որի մասին կարծեմ արդեն ասել եմ, աստիճանաբար կարմիրից վերածվում էր...

- Ինչի՞:

- Ինչի՞,- անձայն մոտ եկան երկու-երեք աթոռակ:

- Չէ՛,- ձեռքը թափ տվեց Ծտերերը,- չէր կորցնում իր գույները, բայց նրա մեջ էլ, ինչպես ամեն ինչի, վայրկյանների հետ աստիճանաբար սկսել էր թափանցել ինչ-որ գորշություն, անիրականի գունազրկող նստվածք: Տարօրինակ տխրություն էր սողում սրտիս մեջ: Ու չնայած գիտեի, որ շրջանցված, ձեր կողմից մինչեւ վերջ չհաշվված քսան տարիների շենքերն արդեն ետեւում են, ինձ չէր լքում հետապնդման զգացումը. վայրկյանների դոփյունը վայրկյանների ետեւից: Ես մեծացրի արագությունը. օրերի գորշ ժապավենը քսվում էր աչքերիս: Ես փակեցի աչքերս եւ ատամներս սեղմելով՝ կույր սլացա առաջ մղված լծակներով: Հաստատ չգիտեմ՝ ինչքան

տեւեց, բայց երբ նորից բացեցի աչքերս, տեսա մի այնպիսի, *այնպիսի...*

Ծտերերի ձայնը ճոճվեց ու համրացավ: Ձեռքերը ամուր սեղմել էին լուսամուտագոգի ելուստը: Նույնիսկ վիպասանի դեմքի ջղակծկումը չէր շարժվում:

- Այստեղ եւ՛ մեքենան, եւ՛ պատմությունը կտրուկ, հարյուր ութսուն աստիճանի շրջադարձ են անում: Հիմա, նրանից հետո, ինչ անսպասելի խփվել էր բիբերիս, չէի վախենում տապալվել տեւողությունների լայնակի հարվածից: Աղե՞տ: Թող որ այդպես: Եվ պատկերացրեք, պատահականությունն իմ կողմն էր. շրջադարձը կայացավ, ու ես գնացի վայրկյանների քամուն հակառակ: Ընթացքը դանդաղ էր, արեւի դեղին սկավառակը գլորվում էր արեւմուտքից արեւելք, օրերի ծանոթ կողնակը ձգվում էր Futurum-ից *[Ապագայից - լատ.]* Perfektum *[Անցյալ - լատ.]:* Հիմա արդեն հաստատ գիտեի իմ ուր-ը: Անկասկած սխալ էր թույլ տրվել, եւ սխալը ոչ թե կառույցի, այլ կառուցողի մեջ էր: Ժամանակը ոչ միայն սինուսակերպ է, ոլորուն, այն կարողանում է նաեւ մերթ լայնացնել, մերթ նեղացնել իր հունը: Ես դա հաշվի չէի առել. փորձեր անելով t-արժեքներով՝ ես, պարզվեց, վատ դիտորդ էի եղել: Իմ թիկունքում բացթողում կար, երկու-երեք տարվա շղթայակցում, որ լրիվ ջնջվել էր իմ գիտակցությունից: Չի կարելի կյանք առնել կյանքում, եթե ետեւում չկյանք է, գոյության դադար: Այդ չքավոր, արյունով ու ցասումով թունավորված տարիները, երբ ոչնչանում էին ցանքսերն ու անտառները, բայց հառնում էր դրոշների անտառը, ինձ տեսնվում էին սովահար տափաստանի պես, որի միջով անցնում էի, ինչպես դատարկության միջով, չիմանալով, որ... որ մեկ այլ ներկայում ավելի ապագա կա, քան բուն ապագայում: Մարդիկ պոկում են իրենց օրերը պոկովի օրացույցի թերթիկների պես, որպեսզի թափեն աղբի հետ: Նրանք նույնիսկ իրենց աստվածներին իշխանություն չեն տալիս անցյալի վրա: Բայց իմ տեւողությունները ամբողջական գրքի էջեր էին. իմ ժամանակահատը շատ ավելի բարդ էր գրչահատից, որը բացում է չընթերցված թերթերը. այն ինձ կարող է վերադարձնել չհասկացած էջերին ու էջանիշ դառնալ ցանկացած երկուսի միջեւ, քանի դեռ վերահաշվում ու վերընթերցում եմ վերակառուցված անցյալը: Նույնիսկ կոպիտ տարածական տեխնիկայի բնագավառում մենք արդեն մոտ ենք նրան, որ հասնենք Երկրի պտույտի արագությանը. Բավական է միայն կրկնապատկել առաջ մղող պտուտակի ուժը, եւ կարելի հասնել հորիզոնից այն կողմ սահող Արեգակին: Ես հենց այդ էլ ուզում էի. լծակները մղելով լրիվ ընթացքի՝ ուղիղ գնալ դեպի բացվածքը, հասնել հեռացած անցյալին եւ վերապատրաստել իմ առա-

ջընթացքը: Ես ավելի դանդաղ սկսեցի շարժվել բայց ինձ ընդառաջ էր գալիս ինքը՝ ժամանակը, այն իրական, աստղագիտական ու համաքաղաքացիականը, որին, ինչպես կողմնացույցների սլաքները դեպի բեւեռ, ձգվում են մեր ժամացույցների սլաքները: Մեր արագությունները բախվեցին իրար, մենք խփվեցինք ճակատ ճակատի, ժամանակի մեքենան ու բուն ժամանակը, հազար արեւների վառ բռնկումը կուրացրեց աչքերս, անձայն հրումը ձեռքիցս խլեց բոլոր լծակները: Ես կանգնած էի սենյակի մեջտեղը, նորից տեսանելի ինձ՝ կիսախավարի միջով: Աղջամուղջն անշարժ էր: Բայց նրա ներսում խուլ շարժվում էր քաղաքը: Իմ մեքենան կործանվել էր կեսճանապարհին: Մատներիս ու ճակատիս այրվածքները նրա միակ հետքն էին, որ մնացել էր տարածության մեջ:

Ինչ տարօրինակ է. դեռ երեկ աստղերին ստիպում էի լուսատտիկների կարմիր երամի պես սուրալ գիշերվա միջով, իսկ հիմա, ահա, ձեզ հետ միասին նորից այս անհեթեթ ու քնկոտ լաստի վրա եմ, որը կարող է՝ միայն դեպի ցած ու հոսանքով, եւ ընդունված է կոչել ներկա: Բայց ես համաձայն չեմ: Թող որ մեքենան կործանվել է, բայց ուղեղն անկործան է: Վաղ թե ուշ ես կավարտեմ սկսածս երթուղին:

Շտերերն ընդհատեց խոսքը ու լսարանից շրջվելով՝ սկսեց նայել պատուհանի ապակու մեջ արտացոլված լույսերին: Հեռվից լսվեց գիշերային գնացքի խռպոտ սուլոցը: Աթոռակները նրա թիկունքում շարժվեցին: Ձայները՝ սկզբում խուլ, հետո՝ մի քիչ բարձր: Լուցկու թափառիկ կրակ: Ծուխը մտախոհ ներս քաշող թշեր: Կախիչի վրա երկու-երեք կեռիկ ազատվեց: Լեզվաբանը, լուցկու հաճկատար կրակը հետ մղելով, հանկարծ խախտեց քսանվեցլեզվանի լռությունը.

- Թույլ կտա՞ք... մի հարց:

Ուսի վրայից հետ նայելով՝ Շտերերը գլխով արեց. լսում եմ: Արդեն աջ ձեռքը վերարկուի թեւքի մեջ մտցրած վիպասանը, կախեց ձախն ու հապաղեց: Երկու թե երեք հոգի կանգ առան շեմին:

- Հարցս հետեւյալն է. որոշ անհամապատասխանություն կա ձեր, այսպես ասենք... վաղաժամ ժամանակի մեջ գտնվելու եւ սովորական, վուլգար, այսպես ասենք, ժամանակի քանակի միջեւ, որ անցել է, քանի դեռ դուք... Ես հասկանում եմ, t-ն ու t-ն տարալեզու են, բայց ինչպե՞ս եք հասցրել...

- Միանգամայն ճիշտ է,- Շտերերը որոշ տարակուսանքով քայլ արեց նետված բառերին ընդառաջ,- ինչպես եմ հասցրե՞լ: Այդ հարցն է ինձ տանջում այս բոլոր օրերին: Իհարկե, t-ի մեջ t-ն հաշվելը այնքան էլ հեշտ չէ:

Բայց հաշվարկներս ինձ ստիպում են մտածել, որ, հնարավոր է, *չեմ հասցրել,* որ իրական ժամանակի հետ հանդիպում չի էլ եղել (իմ մեքենան կարող էր կործանվել նաեւ պակաս լուրջ խոչընդոտի բախվելով), ու ես, կներեք, խաբուսիկ տեւողությունների ծնած ուրվականների մեջ եմ: Ես կուզեի հնարավորինս մատչելի եւ... հարգալից լինել ու բավարարվեցի t-ին բախված t-ի հիպոթեզը շարադրելով: Բայց եթե դուք... եթե այդ հիպոթեզը չի բավարարում ձեզ, ապա կարող ենք ենթադրել, որ մեքենան չի հասցրել հասնել իրականությանը ու ջախջախվել է՝ բախվելով ընդառաջ ելած t-ժամանակի ստվերին եւ... հիմա ինձ շրջապատած մարդկանց դիտարկելով՝ զգացողություն ունեմ, որ դրանք *հիմա* չունեցող, ներկան իրենցից հետ թողած մարդիկ են՝ նախագծված կամքերով, բառերով, սրանից շատ առաջ լարված ժամացույցների թիկթակի պես, աղոտ, ասես պատճենաթղթով արված կյանքերով: Ասենք, հնարավոր է նաեւ երրորդ հիպոթեզը. ես՝ Մաքսիմիլիան Շտերերս, խելագար եմ, որն արժանի չէ նույնիսկ զսպաշապիկի, իսկ ողջ պատմածս զառանցանք է, դիվագացիա: Իմ անկեղծ խորհուրդը. կանգ առեք հենց այս տեսակետի վրա. այն ձեզ համար ամենաշահավետը, կայունն ու հանգստարարն է: Եվ սույնով՝ պատիվ ունեմ...

Շտերերն անցավ իրեն դարձած գլուխների կողքով: Շեմին երկու թե երեքը այնպես էին կանգնել, ասես ներբաններով պտուտակված լինեին հատակին: Վիպասանը օդն էր ափլփում ու չէր կարողանում ընկնել փախչող ձախ թեւքի մեջ. ջղակծկումը ցնցում էր շրթունքը՝ փորձելով բառ դուրս քաշել:

- Այո՛, լա՛վ փիլիսոփայեց,- ասաց քնարերգուն ու նայեց հավաքվածներին՝ հույսով, որ գոնե հրաժեշտին կհիշեն չկարդացված բանաստեղծությունների մասին: Ոչ ոք չհիշեց:

Կինոռեժիսորը վեցձեռանի շարժումով խառնշտորեց մազերը.

- Կադրավորել եւ՝ ուղիղ ֆիլմ:

Վիպասանը վերջապես որսաց թեւքը.

- Ինչ կա որ, արե՛ք: Միայն թե այդ ամբողջ ժամանակահատությունը բլեֆ է: Շտերերականություն...

Եվ իրենց ազատագրված զգալով՝ երկու թե երեք զույգ ներբանները հետեւեցին շեմն անցած դեղին զանկապաններին:

- Իսկ այ ես,- Ստընսկու ականջին կռացավ լեզվաբանը,- այնպիսի զգացում ունեմ, ասես ուղեղիս մեջ նոր գալար եմ գծել:

Ստընսկին հոգնած ժպտաց.

- Երբեւէ պատմաբանը մեր տարիները նկարագրելով կասի. «Դա մի

ժամանակ էր, երբ անունների վերջնատառերին կպչելով, ամենուր սողում էր կույր ու լպրծուն «ությունը»: Ասենք, երեւի հենց այսպես էլ սկսեի Շտերերի կենսագրությունը, եթե...

XII

Հաջորդ առավոտ մեկը գավազանով թխկթխկացրեց սանդղատակի եռանկյունու դռանը:

- Ո՞վ է:

- Վեր կացեք: Գնանք կրճատումներ վաճառելու:

- Չեմ հասկանում:

- Առավել եւս՝ գնանք:

Շուտով երկու հոգի դուրս եկան շքամուտքից: Ստընսկին ձեռնափայտի կլորավուն գլխիկով բռնելով Շտերերի արմունկը, արջ պարացնող նմանակելով, նրան քաշում էր ետեւից:

- Բոլոր մեքենաները փողից են սարքված, այնպես չէ՞: Ուստի... հետեւեք ինձ: Խելք ունենալը քիչ է, թանկագին Շտե՛րեր. պետք է խելք ունենալ, որը կարողանում է խելոք վարվել խելքի հետ, գաղափարների հաղորդափոկ: Եվ ահա, թույլ տվեք ինձ լոցմանի նավակ լինել, որն իր ետեւից տանում է նավը: Ես արդեն զանգել ու խոսել եմ հրատարակչի հետ: Նա երեկ լսում էր ձեզ. այն սանրած ճաղատը, հիշո՞ւմ եք: Հիմա հուշագրությունները նորաձեւ են: Թագաժառանգներ, հեղափոխականներ, սիրուհիներ, էքս պրեմյերներ, կոոպերատորներ ու իմպերատորներ. Բոլորը փող են աշխատում հուշերի վրա: Արդեն վերնագիրն էլ եմ մտածել. «Հիշողություններ ապագայի մասին»: Տպաքանա՛կ է խոստանում: Ձեզ ինչքա՞ն է պետք մեքենայի համար: Օհո՛: Բայց եթե այսպիսի չորս-հինգ հրատարակություն, ապա կկարողանաք նորից պատրաստվել ճանապարհի: Այդ լպստած ճաղատի խմբագրական խորհուրդը ձեր ձեռքերում է. բայց ճաղատի տակ մտնելը քիչ է, պետք է գնալ առաջ՝ դեպի դրամարկղ:

Հենց նույն օրն էլ նախնական բանակցությունները հաջողությամբ ավարտված էին: Հրատարակչությունը, թեկուզ եւ անվստահությամբ, բայց հետաքրքրվեց: Դե ինչ, ծայրահեղ դեպքում, եթե ոչ պատմության, ապա վիպասանության գծով, se non e vero *[Եթե նույնիսկ ճիշտ չի... - իտ.]*... Եվ «ունդերվուդը» կտկտացրեց պայմանագիրը: Կանխավճա՞ր: Կարելի է եւ կանխավճար:

Վերադարձի ճանապարհին Ստընսկին, լայնեզր գլխարկի ուրախ թա-

փահարումով պատասխանելով հանդիպող ծանոթներին, խելք էր սովորեցնում ուղեկցին.

- Իսկ հիմա, մե՛ծն Շտերեր, անհապաղ՝ աշխատանքի: Թանաքամանից թղթին ու հետ եւ ուրիշ ոչ մի տեղ: Եթե աստիճանների տակ ձեզ հարմար չի, իմ մոտ գրեք: Ոչի՞նչ: Դե, ինչպես կուզեք:

Եվ Շտերերի գրիչը շարժվեց կապույտ տողով՝ գրողի բառերով կրկնելով անցած ճանապարհը: Մեջքը՝ պատին, ծնկները տողերին հենարան արած՝ ժամանակահատի հեղինակը հիշում էր իր ապագան, թույլ չէր տալիս ոչ մի վայրկյան թաքնվի ու հավաքում էր օրերը, ինչպես ճամփեզրի խոտերն են քաղում, ականջներում երակազարկի հետ մեջընդմեջ լսվում էր կործանված մեքենայի ընթացքը, իսկ հոնքամիջի կնճիռում խտացել էր համառ միտքը:

Ստընսկին, սանդուղքի զիգզագով իջնելով, Շտերերի դռան առաջ համրացնում էր քայլերը: Երբեմն,- շաբաթը մեկ կամ երկու անգամ,- բազրիքից կախվելով՝ ձեռնափայտով թխկացնում էր դռանը.

- Ալո, խոսում է քսանութը: Որտե՞ղ եք:

- Քառասուներեքում,- խուլ արձագանքում էր փեղկերի ետեւից:

- Օհո՛: Եվ չի՞ թուլացել թանաքի ուժը: Տանո՞ւմ է գրիչը, թեկուզեւ ճռռալով: Լա՛վ, մի փնթփնթացեք, գնում եմ:

Երբեմն Ստընսկին չէր բավարարվում դռանը թխկացնելով եւ եռանկյունու բնակչին դուրս էր քաշում զբոսնելու, ծանոթանալու, ինչպես ինքն էր ասում, «ապագայի խոր թիկունքի, այն է՝ այսօրվա հետ»: Բարձրանում էին Կրուտիցկու նրբանցքի կտրուկ թեքությամբ՝ Ուսպենսկի պարսպի քարաջնարակների կողքով՝ դեպի դարպասագլխի թեթեւ վերնատնակը, որը Մոսկվայի դղրդոցի վրա էր պարզել հեռավոր դարերից բերած առկայծող թեփուկները: Դարպասների բրոնզի ոլորքներից անդին՝ ճանապարհը փակող թիթեղյա վահանակ. Կարանտինային կետ: Ու վերադառնում էին:

- Եվ իրոք,- մի անգամ ժպտաց Ստընսկին, երբ արդեն մոտենում էին տանը,- ինչ հնամաշ քուրջուփալաս է այդ այսօրը, այ այս վերնամաշկը՝ ազդագրերի սյան թղթե անհեթեթությունների վրա, շրթունքները գունավորող կանայք, եւ տղամարդիկ, որ գունավորում են այն, ինչ ելնում է շրթունքներից,- եւ այդ ամենը՝ ասես հին, իրար կպած էջերով գրքից:

Երբեմն Ստընսկին սանդղատակի բնակչին ավելի հեռու զբոսանքների եւ էքսկուրսիաների էր տանում՝ ծանոթացնելով «նորությունների հնագիտության» հետ, ինչպես ինքն էր արտահայտվում: Շտերերը, խոնարհի կորացնելով ուսերը, իր չիչերոնեի ետեւից հայտնվում էր գրական

ու գիտական բազմամարդ հավաքույթներում, լսում միտինգների ճառերը, նայում թատրոնի բարձրացող վարագույրի տակ, եւ նրա աչքերից, որոնց մեջ երբեմն թաքուն նայում էր Ստընսկին, ոչ մի կերպ հնարավոր չէր գուշակել՝ վայրկյանաչափի սլաքի այդ ամբողջ պարը հիշեցնո՞ւմ է նրան ապրած ապագա տարիները, թե ոչ: Շտերերի ներկայությունը բարդություններ չէր ստեղծում, եթե չհաշվենք մանր դիպվածները, օրինակ, այնպիսին, որ պատահեց առաջիկա համաշխարհային պատերազմի մասին դասախոսության ժամանակ: Զեկուցողը, սահուն ամփոփելով արդյունքները, դժբախտ պատահականությամբ բիբերով հանդիպեց Շտերերի բիբերին, խառնեց թերթիկները, կորցրեց թելն ու ոչ մի կերպ չէր կարողանում դուրս պրծնել դադարից: Ինքնակարգավորվող այսպիսի մի քանի դրվագ էլ եղավ, բայց բուֆետի վաճառասեղանի ու հանդերձարանի արգելապատի առաջ խմբված մարդիկ չափազանց տարված էին լինում լիմոնադի պղպջակներ կուլ տալով, արծաթե մանրադրամը հաշվելով, հարեւանուհու արմունկով ու մատին պտտվող համարիկով, որպեսզի նկատեին իրենց մոտով հանգիստ անցնող բարձրահասակ մարդուն:

Ճիշտ է, գրական աշխարհում ոմանք դեռ չէին հասցրել մոռանալ ժամանակահատի մասին պատմությունը, որ խուժել էր Ստընսկու հինգշաբթօրյա ընթերցումների մեջ: «Հիշողությունների» պայմանագրի, դեռեւս չկատարվածի մասին պայմանագրի մասին լուրը ոմանց ստիպում էր զայրանալ, մյուսներին՝ զգուշորեն շոշափել հողը... ինչ արժի, այսպես ասած, ապագան եւ հնարավոր չէ՞, որ ինչ-որ կերպ մի բան էլ իրենց հասնի: Մեկը փորձեց հարցուփորձ անել Ստընսկուն, որպես սանդղատակի խցիկում կատարվող աշխատանքին առավել մոտ կանգնած մարդու, բայց Ստընսկին օրեցօր ավելի ու ավելի սակավախոս էր դառնում, պատասխանները թունոտ էին, հակիրճ, խորհրդավոր կամ ընդհանրապես չէր պատասխանում: Ծանոթների դիտարկումներով՝ հինգշաբթիների տիրոջ բնավորությունը սկսել էր փոխվել ու կարծես՝ ոչ դեպի լավը: Բուն հինգշաբթիները խախտել էին իրենց կանոնավոր ընթացքը, իսկ հետո ընդհանրապես դադարեցին: Գրողների մարդամոտ հյուրընկալը, «իզվեստնյակի» ուրախ կազմակերպիչը սկսել էր խուսափել հանդիպումներից, բամբասանքներից ու գրական կուլիսներից:

Մի անգամ, դեպի Կրուտիցկու վերնատնակ հերթական զբոսանքի ժամանակ,- արծաթագորշ սեպտեմբերյան երեկո էր,- Շտերերն ասաց.

- Հիմա հասկացա, թե ինչու այն *կլինեմ*-ը, որտեղ *եղել եմ,* ինձ այդքան մեռյալ ու ասես մշուշի միջով էր երեւում. ես միայն «կլինեմ»-ի ու «չեմ լինի»-ի տարբերությունն էի գտել. ուզում եմ ասել՝ թամբին կապված մեռ-

յալը կարող է բարձրանալ լեռնալանջով, բայց... իհարկե, դա հիմարագույն պատահականություն է, եւ եթե այն չլիներ, ապա, հասկանում եք...

Հասնելով դարպասագլխի, գորշ օդում փայլող հինավուրց ջնարակներին՝ նրանք կանգ առան՝ բրոնզե փեղկերի հյուսքի արանքից նայելով կարանտինային բակի տաղտկալի սալահատակին: Մի պահ հապաղելով՝ Շտերերը ավելացրեց.

- Վաղը կավարտեմ վերջին էջը:

Վերադարձի ճանապարհին լուռ էին:

Մի քանի օր անց՝ ապագան հիշող ձեռագիրը տեղափոխվեց խմբագրության պորտֆել: Հեղինակին առաջարկվեց «այցելել մի շաբաթից»: Բայց երկու օր էլ չէր անցել, երբ հեռախոսի զանգը սկսեց փնտրել ու կանչել Շտերերին: Շտերերը գնաց ընդունելության: Ծանոթ տետրի վրա կռացած ճաղատի շուրջը բիզ-բիզ կանգնած մազերը նյարդային վեր թռան ներս մտածին ընդառաջ.

- Գիտե՞ք ինչ, սա, ինչպես ասեմ... Մտածե՞լ եք ինչ եք գրում:

- Կուզեի դրա մասին ուրիշները մտածեն. Իմ գործը փաստերն են:

- Փաստե՛ր, փաստե՛ր: Ո՞վ է տեսել ձեր այդ փաստերը: Ո՞ւր է այն վկան, հարցնում եմ ձեզ, որ կգա ու կհաստատի:

- Արդեն գալիս է: Թե՞ չեք լսել: Ես խոսում եմ հենց ապագայի մասին: Բայց եթե կասկածում եք...

Շտերերի ձեռքը պարզվեց տետրին: Հրատարակիչը ափերով թերթերը սեղմեց սեղանին.

- Ո՛չ: Արագ միայն ոջիլ են ջարդում: Այնպիսի գործ չի, որ ձեռքդ թափ տաս ու... Արտակարգ կազուս է: Հասկացեք. այս գերհետաքրքիր ձեռագրի համար ես կարող եմ վճարել երկու անքնությամբ, բայց նրա քաշած խաչի տակ դնել այս ամե՛նը,- խոսողը դեն հրեց սեղանի երկու կողմերին թափթփված տետրերն ու թղթապանակները,- դա արդեն ավելի դժվար է, մանավանդ, քանի դեռ այնտեղ, ինչպես ասում եք, սողում է ձեր խխունջը...

Հրատարակիչը մոտեցավ Շտերերին.

- Իսկ գուցե համաձայնեիք որոշ բաներ շտկել, բաց թողնել, հը՞...

Շտերերը ժպտաց.

- Դուք ինձ առաջարկում եք խառնել դրոշակներն ու ազդանշանել՝ ճանապարհն ազատ է:

Ճաղատի շրջանակն ալ կարմիր ներկվեց.

- Ես հրաշալի հասկանում եմ, որ չի կարելի ներկել հայելու արտացոլումը, ավելի լավ գիտեմ, որ արտացոլմանը հարվածելով...

- Կջարդեք հայելին:

- Ավելի վատ, հայելու փոխարեն երես կթեքնեմ *արտացոլվողից:* Ժամանակը պետք է կռվով նվաճել, ստիպելով, որ նահանջի... ապագա: Այո՛, այո՛: Տեսնո՞ւմ եք, ես յուրացրել եմ ձեր ոճը: Օ՛, ես դա գիտեմ: Բայց ամենից ավելի ուսումնասիրել եմ,- խոսքը ոչ թե արտացոլումների, այլ դրոշմակնիքի մասին է,- այսպիսի մի նեղլիկ ուղղանկյուն՝ ներսում տասը տառ. Չտպե՛լ:

Խոսակցությունն ընդհատվեց «այո»-ի ու «ոչ»-ի արանքում: Ձեռագիրը մնաց խմբագրական թղթապանակի ձիգ կապիչների տակ: Բայց տեքստերը դիֆուզիայի ունակություն ունեն. «Հիշողությունների» որոշ պարբերություններ ու էջեր ինչ-որ կերպ թափանցեցին խավաթղթի միջով եւ բազմանալով ու տարբերակվելով՝ սկսեցին ձեռքից ձեռք, մտքից միտք անցնել: Այդ թերթիկները թաքցվում էին հագուստի գրպաններում, պորտֆելների մեջ՝ խցկվելով ծառայողական հաշվետվությունների ու արձանագրությունների արանքը, կորացնում էին իրենց քառատակ ծալված մարմինները, որ տեղավորվեն լուսամփոփի շրջանակում, թերթիկների տառաշերտը նստում էր ուղեղի գալարներում, բառերի խզվածքները պաշտոնական զեկույցների արանքում դառնալով անեկդոտ ու շրջասություն՝ կաթում էին կուլուարային զրույցների մեջ:

Մի քամոտ, աշնանային անձրեւով դեմքին խփվող առավոտ Ստընսկին ու մունջ լեզվաբանը ուսերով հանդիպեցին խաչմերուկում: Գվվացող օդի միջով Ստընսկին այնուամենայնիվ որսաց ցրիվ բառերը.

- Լեգենդի ծնունդը:

Եվ նայելով սեղմված բերանին՝ նետեց.

- Թող որ այդպես: Աչքերից վտարվածն ուղեղի ճանապարհը կգտնի նաեւ գանգի կարերով: Թող որ այդպես:

Լեզվաբանն ըստ երեւույթին ուզում էր պատասխանել, բայց սուլող քամին լցվեց բերանը, ու բառերը նորից չկայացան: Օդի հարվածների տակ կռանալով՝ նրանք բացազատեցին քայլերն ու հեռացան՝ իրենց գլխարկների եզրերը բռնած: Քամին կուրացնում էր ծակող աղափոշու պես, խփում տանիքների թմբուկները, ճչում ջրհորդանների երգեհոնային խողովակներում, պոկում հեռագրային ցիտրաների լարերը՝ առավելագույն dis-ի *[Ռե դիեզ - գերմ.]* հասցնելով քաոսի ահեղ պարտիտուրան: Թվում էր՝ էլի մի քիչ ու պոկված գլխարկների ետեւից կթռչեն պոկված գլուխները, ավելին՝ Երկիրը, քշվելով ուղեծրից, ճյուղը կորցրած տերեւի պես՝ կթռչի արեւներից արեւներ:

Կապույտ մեքենան աղեղ տվեց Կրուտիցկու հողապատնեշից ու շարունակեց առաջին ձյան վրայով: Անիվների շերտավոր հետքը շքամուտքի մոտ կանգ առավ հենց այն ժամանակ, երբ Ժուժելեը հնձվորի շարժումով քաշելով ցախավելը՝ մայթի աղյուսներից թափում էր ձմռան առաջին ցանքը: Օդը ապակյա-մեռած էր: Դրոշները շտկել էին իրենց ծալքերը ու նմանվել չգիտես ինչու կախ տված կարմիր ներքնաշորերի: Վարորդը դռնապանին մոտ կանչելով՝ հարց տվեց, հետո, դառնալով ավտոմոբիլի պատուհանին, հարգալից խոնարհվեց. Այստե՞ղ: Մեքենայի դուռը բացվեց, ու Ժուժելեը հազիվ հասցրեց հետ քաշվել՝ ճանապարհ տալով աստիճաններով շքամուտք բարձրացող այցելուի հանդարտ, զսպանակվող քայլին: Հարյուրավոր կրպակներով անցնող էջերին արտացոլված դեմքն անհնար էր չճանաչել: Շփոթմունքը հաղթահարելով՝ Ժուժելեը նետվեց բացելու շքամուտքի փեղկերը: Բայց այցելուն արդեն ներս էր մտել: Աստիճաններով վազելով վեր՝ Ժուժելեը տեսավ նրա թեթեւակի կորացած մեջքը Շտերերի վանդակի դռան առաջ: Հետո փեղկերը բացվեցին, ու բարձր այցելուի թիկունքն անհետացավ խցիկում: Ժուժելեը վազեց չորրորդ հարկ՝ հայտնելու Ստընսկուն, բայց բնակարանը չէր արձագանքում: Ժուժելեը եռամատ ձեռքով քորեց գլուխն ու ջանալով արձակել հպարտությունից ու վախից խճճված զգացումները՝ իջավ ներքեւ: Սանդղատակի վանդակում երկու ձայն անհասկանալիորեն խուլ բառեր էին փոխանակում: Հետ քաշվելով դեպի շքամուտքի դուռը՝ նա քարացավ դրոշի տակ կանգնած ժամապահի կեցվածքով: Բոլոր սանդուղքով վեր վազողներին կամ դրսից դուռը հրողներին կանգնեցնում էր տիրական շշուկը. «Սըսս... ոտների ծայրերին, մի դոփեք, կամ էլ հետնամուտքով անցեք», ու կամացուկ, սոսափյունի պես հետեւում էր անունը: Եվ այդ հնչումից բնակիչների ոտքերն իրենք իրենց էին բարձրանում ծայրերին, որ շրջանցեն հետնամուտքով:

Բարձր այցելուի խուլ, դռան փեղկերով ճզմված խոսքը լռեց. միայն Շտերերն էր խոսում: Շքամուտքի ապակե պրիզմաների միջով նայելով՝ Ժուժելեը տեսնում էր մթնշաղի մանրահատիկ մուրը, որ խտանում էր ծխախոտի կրակն ատամների արանքում սեղմած, անշարժ կանգնած վարորդի շուրջը: Հետո թիկունքում, տախտակներից այն կողմ երկար լռություն տիրեց: Ժուժելեը ձգվեց՝ ելքի սպասելով: Բայց լռությունը երկարում էր բարակող թելի պես: Այցելուի խոպոտ ու ավելի խլացած ձայնը բարձրացավ հարցական նոտայի: Պատասխան չեղավ: Փեղկերն անսպասելի բացվեցին, եւ այցելուն դուրս եկավ: Ժուժելեը փութկոտ

քաշեց մուտքի դռան բռնակն, ու բարձր հյուրը շուրջը չնայելով՝ քայլեց դեպի ավտոմոբիլը. Դեմքը անհնշմարելի էր աղջամուղջում, բայց ուսերը մի քիչ կորացած էին թվում, իսկ քայլը ծանրացել ու դանդաղել էր: Ավտոմոբիլի մեջ լույս վառվեց, ու շարժիչը, փափուկ մռնչոցով տեղից պոկեց մեքենան: Ժուժելեը մաքրեց քրտնած դեմքն ու, ջանալով անաղմուկ քայլել, մոտեցավ դռան փակված փեղկերին ու լռությանը: Մի րոպեի չափ անվճռական կանգնելով՝ զգաց, որ այդ ամենից հետո իր՝ հասարակ մարդու ճանապարհը դեպի այնտեղ փակ է:

Կեսգիշերին մոտ ձյուն եկավ: Փաթիլների փափուկ անձայնությունն իջնում էր թեթեւակի ճերմակած սալարկին: Ձյունը համաչափ շտապում էր ճենապակյա-փխրուն բնապատկեր հյուսել, քանի դեռ փողոցներն ամայի էին ու երազները չէին դարձել կյանք: Ու հետկեսգիշերի միակ կածանը, որ ավարտվում էր ծնակույտերում, խնամքով ծածկվեց փափո՛ւկ, փափո՛ւկ ձյունով:

Ստընսկին, որ շատ ուշ էր տուն եկել, կեսօրից առաջ արթնանալով՝ հաճույքով տեսավ պատուհանների շրջանակներին, ասես թառին նստած ձյունը: Արագ հագնվելով՝ մոտեցավ լուսամուտին. տանիքները կորել էին ձյան սարերի տակ, ծառերը ճերմակ ծաղկունք էին հագել, եւ նույնիսկ քաղաքի գլխին կանգնած ամպերի ֆանտաստիկ ուրվագծերը ձյունից ծեփված էին թվում: «Լավ կլիներ լսել ձյան ճռռոցը»,- մտածեց Ստընսկին եւ չսպասելով հաջորդ մտքին՝ հագավ վերարկուն ու սկսեց իջնել աստիճանների սովոր շրջադարձերով: Փեղկավոր եռանկյունու վերեւը սովորականի պես կանգ առավ ու գոչեց.

- Ալլո՛, Շտե՛րեր:

Ոչ ոք չարձագանքեց:

Ստընսկին եւս երեք-չորս աստիճան իջնելով՝ կախվեց բազրիքի վրայով ու բարձրացրեց ձայնը.

- Ալլո՛, Շտե՛րեր, վառելափայտ մի ձեւացիր: Գնացի՛նք:

Պատասխան չհետեւեց:

Ստընսկին արագ ցած վազեց ատիճաններով, հասավ խցիկի դռանն ու թակեց: Թակոցը բութ ու կցկտուր էր: Եվ ի պատասխան՝ ոչ մի հնչյուն: Այդ ժամանակ նա բացեց փեղկերը. սանդղատակի խցիկը հատակից առաստաղ լցված էր վառելափայտով, որոնց հարթ սղոցատեղերը, կիպ սեղմված իրար, պիրկ գելոցի պես դուրս էին ցցվել խցիկի կոկորդից:

Ստընսկին հետ ընկավ, բիբերը լայնացել էին, մուգ բծեր էին սահում տեսադաշտով, թվում էր տափակ փաթիլներով սեւ ձյուն է թափվում:

Մաքսիմիլիան Ծտերերի անհայտացումը միակը չէր: Ծշշուկները դարձան շրշյուններ: Բուն լռությունը վախենում էր շատ բարձր լռել: Ասենք, ո՛չ Ստընսկին, ո՛չ քսանվեց լեզուներով լռող լեզվաբանը, ո՛չ հրատարակիչը, որ «Հիշողություններ ապագայի մասին»-ի ձեռագիրը վաղաժամ արտաքսել էր Կենտրհիատի արխիվներից, զարմացած չէին. ձեռագիրն առաջիկա ժամանակի համար հենց այդ էլ կանխատեսում էր:

Կրուտիցկու նրբանցքի սենյակը երբեմն այդ երեքին հավաքում էր Ծտերերի պահպանված ձեռագրերի շուրջը: Ստընսկին, որին հաջողվել էր ժամանակահատի հեղինակի մի քանի հպանցիկ արտահայտությունների հետքերով գտնել նրա հին տետրերից ու նախամեկնարկի շրջանի գրառումներից մի քանիսը, չէր համարձակվում դրանք վստահել մասնագետների աչքերին: Դասավորելով ու կարգի բերելով խունացած թերթիկները՝ նրանք ուրախանում էին, երբ անտառում բացատ տեսնելու պես՝ բառեր էին գտնում անհասկանալի բանաձեւեր կազմող հիերոգլիֆային անհասկանալի նշաններում:

Այդպես էր նաեւ այդ երեկո: Երեքը պատուհանների ապակիներին ծեփված դեկտեմբերյան սառցե աստղերի տակ, գոց դռան ու մետաղյա կոպով փակված բանալու անցքից այս կողմ լուռ կռացել էին յուրաքանչյուրն իր թղթերի տրցակի վրա: Արդեն կեսգիշերն անց էր: Հանկարծ լեզվաբանը բարձրացրեց գլուխը.

- Ահա այստեղ բանաձեւին հենված դարձվածք կա. «Այստեղ ժամանակի միջով անցնելը վտանգավոր է»: Բայց եւ այնպես նա անցավ ու...

- Այո՛,- ակնոցի եղջրականթերը շտկելով՝ քրթմնջաց հրատարակիչը,- իսկ դուք կարդացե՞լ եք այսօրվա երեկոյան թերթիկը: Մեկը մեկին, կետը կետին:

Ստընսկին, մինչեւ վերջ չլսելով, ընդհատեց.

- Մաքսիմիլիան Ծտերերի՝ իմ հեղինակած կենսագրությանը այսպիսի բնաբան կդնեմ,- եւ նայելով *այն* կողմը՝ վանկ առ վանկ արտասանեց. «Տար ինձ հասկացողների բանակը»:

- «Մահացողների»,- ուղղեց լեզվաբանը:

- Նույնն է:

Ու երեքը շարունակեցին աշխատել:

1929

Թարգմանությունը կատարվել է՝ 03.02.-16.04.2022
Երեւան

«Գրողը պետք է լինի այնտեղ, որտեղ նրա թեման է...»

Սիգիզմունդ Կրժիժանովսկի՝ ռուս սովետական գրող, բանաստեղծ: Թատերագիր, կինոսցենարիստ եւ օպերային լիբրետիստ: Պատմաբան եւ թատրոնի տեսաբան, փիլիսոփա: Ազգությամբ լեհ էր, դավանանքով՝ կաթոլիկ: Վիպակների, բազմաթիվ պատմվածքների, պիեսների, ակնարկների հեղինակ, թարգմանություններ է արել լեհերենից: Ստեղծագործական ժառանգության մեծ մասը հրապարակվել է միայն 1990-ական թվականներին:

Սիգիզմունդն ընտանիքի ամենափոքրն էր եւ իրենից մեծ չորս քույր ուներ: Հայրը՝ Դոմինիկ Ալեքսանդրովիչը, զինվորական էր, թոշակի անցնելով՝ ընտանիքով հեռացել էր Լեհաստանից եւ Կիեւի արվարձանում տուն գնել այն գումարով, որ տրվում էր պաշտոնաթող սպաներին: Ծառայում էր որպես հաշվապահ, իսկ Սիգիզմունդի մայրը՝ Ֆաբիանա Ստանիսլավովնան իրեն նվիրել էր երեխաների դաստիարակությանը: Նա լրջորեն զբաղվում էր երաժշտությամբ, հրաշալի դաշնամուր էր նվագում եւ մշակութային լավ դաստիարակություն տվեց երեխաներին: Դրա համար էլ պատանի Սիգիզմունդը երազում էր օպերային երգիչ դառնալ եւ երգեցողության դասեր էր առնում:

Ընտանեկան կրթություն ստանալով՝ Սիգիզմունդ Կրժիժանովսկին1899 թվականին ընդունվում է Կիեւի 4-րդ գիմնազիան: 1907 թվականին ընդունվում է Կիեւի համալարանի իրավաբանական ֆակուլտետ՝ զուգահեռ հաճախելով պատմափիլիսոփայական դասախոսությունների:

Հենց այդ ժամանակ էլ սկսվում է նրա գրական գործունեությունը. 1912 թվականին հրապարակվեցին առաջին բանաստեղծությունները, իսկ Իտալիա, Ավստրիա, Ֆրանսիա, Գերմանիա կատարած ուղեւորությունից հետո «Կիեւսկի մըսլ»-ում տպագրվեցին ուղեգրությունները:

Ավարտելով համալսարանը՝ Սիգիզմունդ Կրժիժանովսկին 1913-1917 թվականներին Կիեւում ծառայում է որպես երդվյալ հավատարմատարի օգնական: Հեղափոխական 1918 թվականին թողնում է իրավաբանի աշխատանքը եւ սկսում ստեղծագործության հոգեբանության, թատրոնի պատմության ու տեսության, գրականության եւ երաժշտության վերաբեր-

յալ դասախոսություններ կարդալ Կիեւի կոնսերվատորիայում, Երաժշտա-դրամատիկական ինտիտուտում ու Հրեական ստուդիայում: Ամսագրերում տպագրվում են նրա «Բրիգանտինա» բանաստեղծությունն ու «Յակոբին եւ յակոբին» պատմվածքը:

1920 թվականին Կրժիժանովսկին մի գրական երեկույթում ծանոթանում է ապագա կնոջ՝ Աննա Բովշեկի (1889-1971 թթ.) հետ, որը ՄԽՏ-ի առաջին ստուդիայի դերասանուհի էր, Կ. Ստանիսլավսկու եւ Ե. Վախթանգովի աշակերտը: Նրանք միասին համերգային ելույթներ էին կազմակերպում, որոնք ջերմ ընդունելություն էին գտնում բանվորական ու կարմիրբանակային լսարաններում: Զույգին միացան նաեւ կոմպոզիտոր Գ. Նեյհաուզն ու օպերային երգիչներ: Բայց այդ շրջանում իրար ետեւից մահանում են նրա ծնողները, սիրելի Ելենա քույրը, ապա եւ քեռին, որի հետ Սիգիզմունդը շատ մտերիմ էր:

Կրժիժանովսկին տխուր հիշողությունները թոթափելու համար 1922 թվականին տեղափոխվում է Մոսկվա եւ սկսում է դասախոսել Կամերային թատրոնի ստուդիայում: Հենց այնտեղ էլ 1923 թվականի դեկտեմբերին տեղի ունեցավ նրա միակ բեմ հասած «Մարդը, որ Հինգշաբթի էր» պիեսի պրեմիերան, որը անգլիացի գրող Չեսթերտոնի համանուն վեպի դրամատիկական վերամշակումն էր:

1920-ական թվականների կեսին Կրժիժանովսկին ակտիվորեն մասնակցում է Գեղարվեստական գիտությունների պետական ակադեմիայի աշխատանքներին: Արագորեն լայն ճանաչում գտնելով Մոսկվայի թատերական շրջանակներում՝ նա կանոնավոր կերպով կազմակերպում էր իր նովելների, դրամատուրգիային եւ բեմի հոգեբանությանը նվիրված ակնարկների հանրային ընթերցումներ: Ադ շրջանում է գրել արձակ գործերի հիմնական մասը. 5 վիպակ եւ 6 գիրք-նովել, «Արվեստի, գրականության եւ թատրոնի շաբաթ» հանդեսում տպագրվեց «Դրոշմակնիք. Մոսկվա» ակնարկաշար-վիպակը: Գրականության եւ թատրոնի պատմությանն ու տեսությանը նվիրված հոդվածներ հրապարակվեցին «Սովետական արվեստ» թերթում, «Գրական քննադատ» եւ «Ինտերնացիոնալ գրականություն» հանդեսներում, որի համար մի քանի հոդված գրեց Բեռնարդ Շոուի մասին:

Սիգիզմունդ Կրժիժանովսկին հանդես էր գալիս նաեւ որպես կինոսցենարիստ եւ օպերային լիբրետոների հեղինակ: Նրա գրչին են պատկանում «Սուրբ Յորգենի տոնը» եւ «Նոր Գուլիվեր» ֆիլմերի սցենարները, Կաբալեւսկու «Կոլա Բրյունյոն» օպերայի լիբրետոն: 1942 թվականին տե-

ղի ունեցավ Սերգեյ Վասիլենկոյի՝ նրա լիբրետոյով գրված «Սուվորով» օպերայի պրեմիերան: Բեմադրվեց «Եվգենի Օնեգինը»՝ Սերգեյ Պրոկոֆեւի երաժշտությամբ, եւ այդ աշխատանքը սկիզբ դրեց գրողի ստեղծագործության տեւական «պուշկինյան» շրջանին: Արդյունքը գրականության տեսությանը նվիրված մի քանի աշխատանքներն էին՝ «Բնաբանի արվեստը (Պուշկին)», «Բնաբանների բառարանի» ուրվագրերը: Ուիլյամ Շեքսպիրի երկերի ժողովածուի առաջին հատորի առաջաբանից սկսվեց ստեղծագործության «շեքսպիրյան» շրջանը, որի ընթացքում գրվեցին անգլիացի թատերագրի ստեղծագործությանը նվիրված մի շարք հոդվածներ եւ ակնարկներ:

Չնայած գրական շրջանակներում ունեցած համբավին, Կրժիժանովսկուն հազվադեպ էր հաջողվում տպագրել իր ստեղծագործությունները, ինչը ստիպում էր հանապազօրյա հացը վաստակել արտագրական աշխատանքով: 1925-1931 թվականներին «Հանրագիտարան» հրատարակչության վերստուգիչ խմբագիրն էր, սցենարներ էր գրում գովազդային հոլովակների համար եւ այլն:

Կրժիժանովսկին չորս անգամ փորձել է հրատարակել իր նովելների եւ վիպակների ժողովածուները: «Մյունխհաուզենի վերադարձը» վիպակը նույնիսկ ընդունվել էր տպագրության, բայց մերժվեց հրատարակչության կողմից: Տեսական աշխատանքներից առանձին գրքույկով հրատարակվեց միայն «Վերնագրերի պոետիկան» (1931 թ.): 1939 թվականին Կրժիժանովսկին ընդունվում է Գրողների միություն, բայց նույնիսկ դա չօգնեց ստեղծագործությունների հրատարակմանը, եւ 1940 թվականից Կրժիժանովսկին այլեւս արդեն գեղարվեստական արձակ չէր գրում:

Պատերազմի ժամանակ Կրժիժանովսկին չլքեց Մոսկվան՝ համոզված, որ գրողը պետք է լինի այնտեղ, որտեղ նրա թեման է: Այդ շրջանով են թվագրվում նրա բազմաթիվ ակնարկները՝ նվիրված մայրաքաղաքին ու պատերազմին: Դրանք, ինչպես որ նախկինում, չէին հրատարակվում. Գրողը վաստակում էր բանաստեղծությունների եւ լեհական արձակի թարգմանություններով:

Սիգիզմունդն ու Աննա Բովշեկը իրարից բաժան ապրեցին մինչեւ գրողի կյանքի վերջին օրերը: Նրանք այդպես փորձում էին պահպանել ռոմանտիկան ու պաշտպանել իրենց սերը ավերիչ կենցաղից: Բայց օգնում էին իրար ամեն ինչում, քնքուշ նամակագրության մեջ էին, ճամփորդում էին միասին: Նրանց հարաբերությունները լեցուն էին ջերմությամբ, հարգանքով ու բարեկամությամբ:

Գրողի կյանքի վերջին տարիները մթագնվեցին ծանր հիվանդություններով: Անանա Բովշեկը իր հուշերում գրում է հիպերտոնիայի եւ սակավարյունության մասին: Հիվանդության հետեւանքը ուղեղի՝ հիշողության համար պատասխանատու հատվածի վնասվելն էր: Եվ Կրժիժանովսկին մոռացավ այբուբենը: Նա կարող էր գրել, իսկ կարդալ՝ ոչ: Եվ դա իսկական ողբերգություն էր մարդու համար, որն իրեն չէր պատկերացնում առանց գրքերի: Եվ կատարելապես անօգնական վիճակում գրողը տեղափոխվում է կնոջ փոքրիկ բնակարանը:

Կրժիժանովսկու գերեզմանն անհայտ է, բայց ստեղծագործական ժառանգությունը փրկվել է սիրող կնոջ ջանքերի շնորհիվ, որը ձեռագրերը խնամքով պահել էր իր տանը:

Հեղինակի պես՝ կինն էլ չապրեց մինչեւ ստեղծագործությունների լույսընծայումը: Սիգիզմունդ Կրժիժանովսկու տեքստերի հրատարակությունը, Վադիմ Պերելմուտերի շնորհիվ, սկսվեց միայն 1989 թվականին: Ռուսերեն երկերի ժողովածուն՝ վեց հատորով, տպագրվեց 2001-2012 թվականներին եւ ընդգրկում է հեղինակի ողջ ստեղծագործությունը՝ եւ՛ արձակը, եւ՛ դրամատուրգիական գործերը, եւ՛ տեսությունը, եւ՛ նույնիսկ որոշ նամակներ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔՀԱՈՒՋԵՆԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ 5

ՏԱՌԱՍՊԱՆՆԵՐԻ ԱԿՈՒՄԲԸ 111

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱԳԱՅԻ ՄԱՍԻՆ 215

«Գրողը պետք է լինի այնտեղ, որտեղ նրա թեման է...» 290

Սիգիզմունդ ԿՐԺԻԺԱՆՈՎՍԿԻ

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱԳԱՅԻ ՄԱՍԻՆ

երեք վիպակ

Ռուսերենից թարգմանեց
Ներսես ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

Ստեփանակերտ 2022

Հրատ. խմբագիր՝ Հ. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Ա. Գրիգորյան
Էջադրումը՝ Թ. Հարությունյանի
Կազմի ձեւավորումը՝ Ա.Խաչատրյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 19 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 500:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
ԼՂՀ, Ստեփանակերտ, Հ. Հակոբյան 25

«ԳԵՂarm» հանդեսի մատենաշարով լույս են տեսել

«Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից» - 2010
Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաչյունը» - 2011
Մ. Բախտին. «Դոստոեւսկու պոետիկայի խնդիրները» - 2012
«Սիրիուսի սրնգահարները»/Վ.Խլեբնիկով, Ն.Գումիլյով,
Վ.Խոդասեւիչ/ - 2012
Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը» - 2012
Յուրի Լոտման. «Մի.Անուն.Մշակույթ» - 2012
Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»- 2012
Ժարկո Միլենիչ. «Լեոնը՝ հրաշագործի աշակերտը»- 2013
Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014
Ռուս կոնցեպտուալ պոեզիա/ Դ.Պրիգով, Վ.Նեկրասով,
Լ.Ռուբինշտեյն/ - 2014
Հենրիխ Սապգիր. «Զուգահեռ մարդը» - 2014
Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014
«Կամուրջների խռովությունը.
մետամետաֆորիստներ» - 2015
Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կալվածքը»- 2015
Անդրեյ Պլատոնով. «Չեւենգուր. Գուբը.
Պատմվածքներ» - 2015
Արդի ռուսական վերլիբռ (անթոլոգիա) - 2015

Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015
Ջիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» - 2015
Մա Քայ. «Սրտի արձագանքներ» - 2015
Եվգենի Վոդոլազկին. «Լավր» - 2015
Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» - 2015
Ռուս այլախոհական պոեզիա (անթոլոգիա) - 2015
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 1) - 2016
Յու Ջիան. «Անձրեւից պատսպարվող թռչունը» - 2016
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ.
Փախուստ դրախտից» - 2016
Չժան Ցզի-յան. «Երազ ծովի մասին» - 2016
Վան Ջենչկի. «Երիտասարդ վանականի սիրո
պատմությունը» - 2016
Լյուդմիլա Պետրուշեւսկայա. «Սեր. երջանկություն.
ռեքվիեմ» - 2016
Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» - 2016
«Դիկոռոսներ. Անհայտ պոետների ապաստան»
(անթոլոգիա) - 2016
Ռուս մինիմալիստներ (անթոլոգիա) - 2016

Իձյե Թան. «Կոնֆուցիականությունը, ուղղայականությունը, դաոսիզմը, քրիստոնեությունը եւ չինական մշակույթը» - 2016

Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» - 2016

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ (հատոր 2 եւ 3) - 2016

Դոնգ Քիանգ. «Ամուսնություն» - 2017

Դոնգ Քիանգ. «Կացարաններ» - 2017

Ինգեբորգ Բախման. «30-րդ տարին» - 2017

Ջիդի Մաջիա. «Ընձառյուծից մինչեւ Մայակովսկի» - 2017

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ (հատոր 4) - 2017

Անդրեյ Վոլոս. «Վերադարձ Փանջիռուդ» - 2017

Դոնգ Քիանգ. «Թաղում» - 2017

Դոնգ Քիանգ. «Փառատոներ» - 2017

Դոնգ Քիանգ. «Ուտեստներ» - 2017

Սյաո Ցյան. «Վիշապի մորուքներն ընդդեմ նախագծերի» - 2017

Ուան Ցուոլիան. «Մերձակցության աստիճաններ» - 2017

Ֆյոդոր Սոլոգուբ. «Չնչաղեւը» - 2018

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ (հատոր 5) - 2018

Ու Չուն. «Չինական մշակույթ. փիլիսոփայություն» -2018

Ուեյսին Սյուլն, Սյուն Ճու. «Չինաստանի յուրահատկու-
թյունները: Չինաստանի համաշխարհային
ժառանգությունը»- 2018
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 6) - 2018
Աղի ձայնը (20-րդ դարի հետութսունական թվականների
սերնդի չին գրողների պատմվածքներ) -2019
20-րդ դարի ռուսական պատմվածք (անթոլոգիա) - 2019
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 7) - 2019
Գվինեթ Լյուիս. «Քառսի հրեշտակները» - 2020
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ. Ազատ մարդը» - 2020
Ցերինգ Նորբու. «Փրկված գառը» - 2020
Չժան Յավեն. «Դարերի կանչը» (Մտորումներ Հոնկոնգի
մասին. իրական պատմություն) - 2020
Կոնֆուցիոս. «Զրույցներ» - 2020
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 8) - 2021
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 9) - 2021
Մարիա Գրեչ Գանադո. «Երիզվածք» - 2021
Էլիզաբեթ Քրիստին Յոկուլսդոտիր. «Սեր, նյարդերի քայքայում.
ոչ մի պար ձուկ-քարի վրա» - 2021

Ալեքսեյ Վառլամով. «Մտագայլը» - 2021

Միխալ Այվազ. «Այլ քաղաք» - 2021

Իմանուել Միֆսուդ. «Յուտա Հայմ» - 2021

Խոսեբա Սարիոնանդիա. «Բանտեր եւ աքսորներ» - 2022

Չինական ավանդական բժշկության հիմնական հասկացությունների հանրագիտարան (հատոր 1) - 2022

Նիկոլա Դուրետիչ. «Մահվան եւ անհետացման ժամանակագրությունը» - 2022

Սլավենկա Դրակուլիչ. «Ֆրիդա կամ՝ցավի մասին» - 2022

Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

www.vogi-nairi.am
Էլ. հասցե՝ vogi.nairi@mail.ru
հեռ.: +374 97252323, +374 94259161